

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Բ. Ա. ՌԻՆՈՒԲԱԲՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ
ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Б. А. УЛУБАБЯН

ОЧЕРКИ
ИСТОРИИ ВОСТОЧНОГО КРАЯ
АРМЕНИИ
(V-VII ВВ.)



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ
ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
(V-VII ԴԴ.)




ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

Տպագրվում է ՀՍՄՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր
Ա. Ն. ՏՆՐ-ՂՆՎՈՆԴՅԱՆ

Գիրքը ճատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատ-
մական գիտությունների դոկտորներ Լ. Հ. ԲԱՐԱՅԱՆԸ և Հ. Մ. ԲԱՐ-
ԹԻԿՅԱՆԸ:

26.459



Ուլտրաբայան Բ. Ա.

ՈՒ 38 Գրվագներ Հայոց արևելից կողմանց պատմու-
թյան (V—VII դդ.) / Պատ. խմբ. Ա. Ն. ՏՆՐ-ՂՆՎՈՆԴՅԱՆ.—
Եր., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1981.—299 էջ, 1 քարտեզ:

Մենագրությունը նվիրված է վաղ-միջնադարյան Հայաստանի
հյուսիսարևելյան նահանգների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու
մշակութային գիճակի ուսումնասիրությանը: Աղբյուրագիտական հա-
րուստ նյութերի հիման վրա հեղինակը հաստատում է, որ նշված
ժամանակաշրջանում այդ նահանգները կաղձել են վարչաքաղաքա-
կան ձևի միավոր, որի ներսում հայ Առանշահիկ նախարարական-
թագավորական տոհմը զիսավորում էր երկրամասի ընդհանուր
շտիպան պայքարը ազգային ինքնուրույնության համար:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն
շրջանների համար:

0504020000

ՈՒ _____ 11—81

703 (02)—81

9 (C 43) 1

ԳՄԻ 63.3 (2 2) 1

© Հայկական ՍՄՀ ԳԱ ճատարակչություն, 1981

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի հյուսիսարևելյան մասը մարզպանության շրջանում
(V—VII դդ.) կոչվել է Հայոց արևելից կողմանք: Այս ընդհանուր տե-
ղանվան կոդքին միաժամանակ պահպանվել են և երկրամասը կազմող
նահանգների հին անունները՝ Արցախ, Ուտիք, որոնք գալիս էին վաղըն-
ջական ժամանակներից և իրենցով նշում Մեծ Հայքի միասնական պե-
տության վարչաքաղաքական բաժանումները: «Ուտիք» անվան նախնա-
կան ձևն է «էտիունին»՝ մ. թ. ա. VIII դարի բիայնական արձանագրու-
թյուններում հաճախ պատասխան մի անուն: Էտիունի երկիրն այս արձա-
նագրություններում տեղադրվում է մեծ մասամբ Սևանից արևելք,
Արաքսի ափին:

«Արցախ» տեղանվանն առաջին անգամ հանդիպում ենք դարձյալ
բիայնական արձանագրություններում: Սևանի հարավարևելյան ափին,
նեղիկայիս վարդենիսի շրջանի Մովակ գյուղի մոտ հայտնաբերված սե-
պագիր ժայռափոր արձանագրությունը, որ պատմում է Արգիշտիի որդի
Սարգուրի Երկրորդի (764—735 թթ. մ. թ. ա.) նվաճումները, հիշատա-
կում է նաև «Արցախ» անունը՝ «Ուրտեխե» (ուրտեխե) ձևով: Սևանա
լճի հարավային ափերը նվաճելուց հետո Սարգուրի Բ-ն անցել է նաև
դեպի արևելք, իր առաջարժումն արձանագրելով այսպես. «Ճեղքեցի
մինչև Ուրտեխական (աշխարհը) = («ku-tu bé pa-re ur-te-hi-l-ni»):¹

Սևանի ափի մի այլ արձանագրություն (Մովինարի ամրոցում) վկա-
յում է, որ Սարգուրին նվաճել է 23 թագավորություններ, որոնց շարքում

¹ Արձանագրության իր այս թարգմանությունը մեզ է տրամադրել հայագետ
Հ. Հ. Կարապետյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը: Մինչև այժմ հայտնի
է եղել մի այլ ընթերցում. «Գրավեցի Արկունյան երկիրը, անջատեցի մինչև Ուրտեխիին
(«Urtehiini երկիրը» (տե՛ս Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940,
էջ 186): Մոտավորապես նման ընթերցում, բիշ այլ տառադարձությամբ, ունի հայտնի
հնագետ Գ. Ա. Մելիքիշվիլին (Բ. Ա. Меликшивили, Урартские клинообразные
надписи, М., 1960, стр. 310, стр. № 161):

հիշատակվում են՝ Ադախունին, Ուելիկուխին, Լուերուխին, Արկուլիսին: Բ. Բ. Պիտրովսկին գտնում է, որ Ուելիկուխի աշխարհն զբաղեցրել է Սեվանի արևմտյան ափը, իսկ Ադախունին՝ հարավային ափի արևելյան մասը: Հետևապես Սարգուրին Սեանի հարավային ափով շարժվել է դեպի արևելք: «Լճի կողմից բնական ոչ մի արգելք չկա՝ շարժվելու համար դեպի արևելք, ընդհուպ մինչև Լեոնային Ղարաբաղը (Արցախ—Ուրտեխե— Բ. Ու.), որը կապված է եղել Հայաստանի հետ»²:

Կարևոր է նշել նաև, որ Ուրտեխե—Արցախ աշխարհը սեպագիր արձանագրություններում սովորաբար հիշատակվում է էտիունի—Ուտիքի կողքին: Այդ ապահովապես նշանակում է՝ հնագույն ժամանակներում էլ Ուրտեխե և էտիունի անուններով էին հայտնի հետագայի Մեծ Հայքի այն նահանգները, որոնք պիտի շարունակեին կոչվել այդ նույն անունների աննշան փոփոխակներով՝ Արցախ և Ուտիք:

Մեծ Հայքի մասին տեղեկություններ հաղորդող օտար առաջին աղբյուրները համարյա չեն անդրադառնում երկրի նահանգներին ու դավաններին: Նրանց տեսած ու նկարագրած Հայաստանը մի ամբողջական, միասնական երկիր է, որը չի տրոհվում ո՛չ մարզերի և ո՛չ էլ, հատկապես, սուգազավանների: Այդ է պատճառը, որ հունահռոմեական հին աշխարհագետ-պատմաբանների (Չերոդոտ, Քսենոփոն, Պոլիբիոս, Պլինիոս Ավագ, Պլուտարքոս և ուրիշներ) գրքերում Արցախի անունը չկա: Սակայն այս աղբյուրների մեջ Մեծ Հայքի սահմանները դժված են այնպես, որ աներկբայորեն իրենց մեջ են առնում Արցախ և Ուտիք աշխարհները:

Արցախի և Ուտիքի մասին խոսող առաջին օտար հեղինակը հույն մեծ աշխարհագետ Ստրաբոնն է (ծնվել է 63 թ. մ. թ. ա., մահացել է մ. թ. 23 թ.): Արժանին պետք է հատուցել. Ստրաբոնն է, որ առաջին անգամ ամենայն բարեխղճությամբ ու ճշգրտությամբ գծում է Հայաստանի սահմանները, նրանց հյուսիսարևելյան սահմանագիծը տանելով Կուր գետի երկարությամբ՝ մինչև Արաքսի հետ միախառնվելու վայրը, արեվելքից մինչև Կասպերի երկիրը, հարավից Տավրոսի լեռները³:

Ուտիքն Ստրաբոնի երկում «Շակաշեն» (Սակասին) է՝ երկրամասի հյուսիսային այն գավառի անունից, որով (նաև Կուր գետով) Հայաստանը սահմանակցվում էր Ալբանիային՝ կամ Աղվանքին:

² Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1954, стр. 92.

³ Ստրաբոն, գիրք XI, գլ. I, § 5: Stron B. B. Латышев, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, вып. 1, т. I, СПб., 1890, стр. 120.

⁴ Ստրաբոն, XI, XIV, § 4.

Ուշագրավ է, որ Ստրաբոնն արդեն խոսում է Արցախի մասին՝ որպես Մեծ Հայքի նահանգներից մեկի և այն էլ այնպիսի նահանգի, որը չի սահմանակցվում հարևան երկրների հետ, այսինքն՝ գտնվում է Հայաստան երկրի խորքում: Ըստ Ստրաբոնի՝ Արցախը կոչվում է Օրխիստինա և արտահանում է մեծաքանակ պատերազմական ձիեր⁵:

Ստրաբոնյան հետաքրքիր տեղեկություններից մեկն էլ այն է, որի համաձայն՝ մ. թ. ա. II դ. Մեծ Հայքին է կցվել Կասպիանա-Փայտակարան մարզը՝ խլլված Մարաստանից⁶: Այս դարից սկսած Փայտակարանը Հայաստանի մաս էր կազմում, դարձյալ Ստրաբոնի փոփոխությամբ, մ. թ. ա. առաջին դարից արդեն հայացած բնակչությամբ:

Մեծ Հայքի հյուսիսարևելյան մասի, նրա սահմանների և ներքին կյանքի մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում նաև Պլուտարքոսը, Կլավդիոս Պտղոմեոսը, Դիոն Կասսիոսը, Պլինիոս Ավագը կամ Սեկունդը, Ստեփան Բյուզանդացին և ուրիշներ: Մենք ղեռ առի՞ք կունենանք անդրադառնալու նրանց տեղեկություններին:

Հայոց արևելից կողմանց բազմադարյան պատմության համար ամենակարևոր նշանակություն ունեն հայկական աղբյուրները, որոնք, ըստ մեծի մասին, երկրամասը նկարագրում են ականատեսի բաշատեղյակությամբ:

Պետք է շնորհակալ, որ Ստրաբոնից մինչև հայկական գրավոր աղբյուրներն ընկած ժամանակաշրջանում (համարյա շուրս դար) Հայաստանի և նրա հարևան պետությունների ու ժողովուրդների կյանքում մեծ տեղաշարժեր էին կատարվել: Այս տեղաշարժերն, ամենայն մանրամասնությամբ ու քննական լրջությամբ, արտացոլվել են հայ պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Մովսես Խորենացու և հետագաների երկերում:

Առաջին հեղինակն Ագաթանգեղոսն է, որն իր «Հայոց պատմության» մեջ մանրակրկիտ ու բարեխիղճ տեղեկություններ է հաղորդում Հայաստանի արտաքին սահմանների, ներքին ավատական կյանքի, արքունական կարգ ու կանոնի և, որ առաձևապես կարևոր է, երկրում քրիստոնեությունից տարածման հանդամանքների մասին: Ագաթանգեղոսի երկում Արցախը հիշատակվում է «Մաղեք» կամ «Մաղէից իշխանութիւն» անու-

⁵ Անդ, Ստրաբոնի Օրխիստինան իրավացիորեն Արցախ է ձևաչված «История армянского народа» (Երևան, 1952 թ., հատ. II) գրքին Ս. Տ. Երեմյանի կողմից կցված «Армения во II—I вв. до н. э.» քարտեղում: Օրխիստինա—Արցախի նույնությունն է հաստատում նաև Ա. Մնացականյանն իր «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» գրքի (Երևան, 1966) 259—292 էջերում: Ստրաբոն, XI, XIV, § 5:

⁶ Ստրաբոն, XI, XIV, § 5:

նով, որին Արցախն այդ ժամանակներում արժանացել էր իր իշխանա- նիստ կենտրոն «Մալգի» (այժմ՝ Զոդ) պատճառով:

Փափառու Բուզանդի երկում⁷ Հայոց արևելից կողմանց պատմու- թյունն արտացոլվել է հատկապես IV դարին վերաբերող մի շարք այն- պիսի դեպքերով, որոնք լույս են սփռում երկրամասի քաղաքական-վար- շական վիճակի վրա, բացահայտում նրա ու հարևան երկրների փոխհա- րաբերությունները: Վերջին հանգամանքը մեզ իրավունք է տալիս ասե- լու, որ Բուզանդի երկն արևելյան Անդրկովկասի այդ շրջանի պատմու- թյան ու աշխարհագրության, ազգագրական ու մշակութային վիճակների լուսաբանման համար անմրցակից մի տեղեկատու է:

Համանման տեղեկություններ է պարունակում նաև V դարի մեր մյուս խոշոր պատմիչի՝ Կորյունի գիրքը⁸, որը, IV դ. վերջի ու V-ի սկզբի իրականության պատկերը տալուց բացի, ամենահավաստի սկզբնաղ- բյուրն է երկրի մշակութային ու լուսավորական հեղաբեկման մեծ երե- վույթի՝ հայերեն գրի ու դպրության տարածման և հարակից շատ հար- ցերի համար:

Մովսես Խորենացու դարակազմիկ երկը հին Հայաստանի պատմու- թյան (և ոչ միայն պատմության) հանրագիտարանն է¹⁰: Այն մինչև ինքը եղած բազմալեզու պատմագրության, նյութական մշակույթի հուշար- ձանների, ժողովրդական բանահյուսության գանձերի և շատ ու շատ՝ միայն իրեն հայտնի աղբյուրների անլուգական համադրությունն է, հայ ժողովրդի՝ վաղնջական ժամանակներից եկող պատմական ճանապարհի հանճարեղ բացահայտումը՝ հայ ազգի կազմավորման, ամբողջացման, ազգագրական երևույթի ու ներկայի (իր ժամանակի առումով) ձև ու կըշ- րույթի մեջ դնող մեծ վկայագիր: Չեն չափազանցնում, երբ Խորենացուն համարում են այն մեծը, որը «Հայ ժողովուրդին հայ ազգը ձուլից ըստ իր միտքի կաղապարին»¹¹, Սվ պատահական չէ, որ Հայոց արևելից կող- մանց (կամ պատմագրի ժամանակ արդեն «Աղվանք» կոչվող երկրա- մասին) վերաբերող խորենացիական տեղեկությունները, ամենից առաջ, ճշգրտում են այս հայաշխարհի բնակչության ազգագրական վիճակը,

7 «Ազգաբանագիտյ Պատմութիւն Հայոց», Քիֆլիս, 1914 (այսուհետև՝ Ազգաբանագի- տութ), էջ 404:

8 «Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն հայոց», Քիֆլիս, 1913 (այսուհետև՝ Բուզանդ):

9 Կորյուն, Վարք Մշտոցի, Երևան, 1940 (այսուհետև՝ Կորյուն):

10 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1913 (այսուհետև՝ Խորենացի):

11 Հրանդ Բ. Արմեն, Պատմական քննարկումներ, Պետրոս, 1968, էջ 14:

պարզում, բյուրեղացնում և կուռ մի հյուսվածքի մեջ դնում հնորյա պոլիցեններում եղած պատմական ճշմարտութունները:

Հայագիտության մեջ այն պնդումը կա, թե Խորենացին սյունեցի է¹², Սա ինքնին մի երկրորդ կողմից բացատրում է, թե ինչու՞ Սյունիքին, նրա հարևան Արցախին և Ուտիքին վերաբերող խորենացիական տեղեկու- թյուններն այնքա՛ն մանրամասն են, տեղագրական տեսակետից ճշգրիտ ու արժանահավաստ:

Պարսկական տիրապետության առաջին շրջանի, սրան նախորդող քաղաքական հարաբերությունների, ինչպես նաև մարդպանության ու նախընթացի վարչական սահմանների հարցերը պարզաբանելու տեսա- կետից արժանահավաստ վկայություններ են պարունակում Նղիշէի¹³ ու Ղազար Փարպեցու¹⁴ երկերը:

Հայոց «Աշխարհացոյցը»¹⁵, որի ստեղծման ժամանակն է համար- վում VII դարի սկիզբը և հեղինակը՝ Անանիա Շիրակացին, Հայաստանի ու Անդրկովկասի պատմական աշխարհագրության, ազգագրական պատ- կերի, այլև ուրիշ բազմաթիվ ճշգրիտ տեղեկությունների մի անլուգական աղբյուր է: Նրա արժեքը դժվար է գերազանահատել: Այն կոնկրետ հանրա- գումարն է հունահռոմեական առավել արժեքավոր աղբյուրների ու քար- տեղների և միաժամանակ տեղացի հեղինակի քաջատեղյակ մանրակրկի- տությունը տալիս է Հայաստանի ու հարևան երկրների վարչական, պատ- մական ու ազգագրական մեծարժեք նկարագրությունը:

«Աշխարհացոյցը» Հայոց արևելից կողմանց քաղաքական ու տնտե- սական աշխարհագրությունը հրաշալի ներկայացնելով հանդերձ՝ մատու- ցում է այնպիսի տեղեկություններ, որոնք չես գտնի ուրիշ ոչ մի տեղ:

Յավոք, մինչև օրս հետազոտողները չեն վերականգնել «Աշխարհա- ցոյցի» նախնական անաղարտ վիճակը, որպեսզի հնարավոր լինի ճա- նաչել հետագա խմբագրությունների ժամանակ կատարված հավելում- ները, որոնք երբեմն խաթարում են այդ երկի ընդհանուր ոգին, հակա- սում նրա բուն էությունը:

Արաբական տիրապետության շրջանի իրողություններն ամենայն

12 Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 5: Մ. Հատար- յան, Ռ՛րն է Մովսես Խորենացու ծննդավայրը. «Հայկական ՍՍՀ ԳԱ լրարժե հասարա- կական գիտություններ», 1969, № 2:

13 «Նղիշէի վասն վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957 (այսուհետև՝ Նղիշէ):

14 «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904 (այսուհետև՝ Փարպեցի):

15 Մ. Ս. Մելնյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963 (այսուհետև՝ «Աշխարհացոյց»):

Հավաստիությանը, մեծ մասամբ ականատեսի արժանահավատ պատու-
մով ներկայացնում են Սերբոսը¹⁶, Ղևոնդ Վարդապետը¹⁷, ավելի ուշ շրթ-
չանում՝ Հովհաննես կաթողիկոսը¹⁸, Թովմա Արծրունին¹⁹, Սաեհիան Տա-
րոնեցի-Ասողկեր²⁰, Վարդան Վարդապետը²¹ և մեր մյուս պատմա-
գիրները:

Սերբոսն արարական այրավանքների ու բռնագրավումների, Անդրը-
կովկասում արաբարյուզանդական մրցակցության հանգամանքները ներ-
կայացնում է մեծագույն բարեխղճությամբ: Այս շարքում Հայոց արե-
վելից կողմանց վերաբերող նրա տվյալները ոչ միայն շատ են ու ծավա-
լուն, այլև ճշգրիտ են և հաստատվում են օտար աղբյուրներով: Ավելի
լուսն, այլև ճշգրիտ են և հաստատվում են օտար աղբյուրներով: Ավելի
լուսն՝ օտար աղբյուրների կցկտուր ու շատ հաճախ վայրիվերո տեղեկու-
թյունները պետք է բնդունել միայն Սերբոսի հաղորդած հանգամանալից
տեղեկություններով սուղեկուց ու ճշգրտելուց հետո:

Վերը թվարկած բոլոր պատմիչների երկերն էլ պարունակում են
շատ արժեքավոր նյութեր Հայոց արևելից կողմանց պատմության վերա-
բերյալ: Սակայն նրանց մեջ Հովհաննես կաթողիկոս Գրասխանակերտ-
ցին առանձնանում է այն առավելություններ, որ այս երկրամասի պատմու-
թյանը վերաբերող նրա յուրաքանչյուր տեղեկությունը ներհուն ու ճշմար-
տախոս ժամանակակցի վկայություն է, տեսածի ու ապրածի արժանա-
հավատ պատում: Գրասխանակերտցի պատմիչն այս երկիրը ոտքի տակ
է տվել արևելքից արևմուտք և հարավից հյուսիս: Եվ պատահական չէ,
որ VIII դարի Արևելյան Հայաստանի բոլոր դարձարձումները, իշխա-
նական-թագավորական տների ճշգրիտ տոհմագրությունը, ժողովրդա-
կան կյանքի ուշագրավ շատ մանրամասներ դարձել են նրա երկի ճըշ-
մարտապատում ատաղձը:

Թովմա Արծրունին է գեղարվեստական հմայիչ խոսքով պատմում
Արցախի այն խիզախ իշխան Եսայի Աբու-Մուսեի հերոսական պայքարն
արարական տիրապետության դեմ, որն ըստ Լեոյի՝ «ամենախոշոր միխ-

թարական երևույթն էր կազմում Հայոց աշխարհի այդ ժամանակվա ար-
յունոտ նահատակումների մեջ»²²:

Հայոց արևելից կողմանց՝ մեզ հետաքրքրող շրջանի պատմության
համար ականատեսի, շատ հաճախ՝ դեպքերի մասնակցի քաջատեղյա-
կությանը խոսող միակ աղբյուրը Մովսես Կաղանկատվացուն վերադըր-
վող «Աղվանից աշխարհի պատմությունն» է²³, որը երեք անգամ լույս է
տեսել քննադրով (գրաքար), նաև՝ անգլերեն, ռուսերեն, հայերեն աշխար-
հաբար: Սակայն մինչև օրս չի հրատարակվել նրա համահավաք բնա-
կան բնագիրը: Թերևս այս հանգամանքն էլ հնարավորություն է տվել,
որպեսզի աղավաղված և խնդաթյուրված հասկացվեն ու բացատրվեն
Պատմության առանձին դրույթները, հաճախ նաև գրքի սկզբունքային
հարցերը: Այդ պատճառով էլ անհրաժեշտ ենք համարում քիչ ավելի
հանգամանորեն կանգ առնել «Աղվանից աշխարհի պատմության» և նրա
մի շարք մեկնարանությունների վրա:

Ահա մի հարյուրամյակից ավելի է, ինչ հրատարակի վրա է «Աղ-
վանից աշխարհի պատմությունը», միշտ վիճի ու բնութայն, տարակար-
ծիքների ու իրարամերժ բացատրությունների առարկա: Վիճում են հե-
ղինակի անձնավորության ու ժամանակի շուրջը, երկի բովանդակու-
թյան, ստեղծման հանգամանքների մասին: Իսկ վերջերս վեճի նյութ են
դարձել նաև հեղինակի ազգությունը և Պատմության բնագրի լեզուն: Էլ
չենք խոսում Պատմության առանձին գլուխների, նկարագրված և նույն-
իսկ չնկարագրված երևույթների հակասական, երբեմն արտաոտց մեկնա-
բանությունների մասին, որոնց ևս կաշխատենք անդրադառնալ:

XIX դարի առաջին կեսից կովկասագիտության ուշագրության կենտ-
րոնում է գտնվում «Աղվանից աշխարհի պատմությունը»: Սկզբից եկթ
բնութայն առարկա է դարձել Պատմության հեղինակ ճանաչված Մով-
սես Կաղանկատվացու ժամանակը: Հետազոտողների մի մասը (Կ. Շահ-
նազարյան, Ալիշան, Զարբհանալյան, Բորե, Սուքիաս Սոմալյան,
Մ. Էմին, Մ. Բարխուտարյանց, Ստ. Մալխասյանց, Առ. Առաքելյան),
կլնելով պատմության I և II գրքերի այն գլուխներից, որոնք պատմվում
են առաջին դեմքով՝ որպես ականատեսի վկայություններ, գտնում են,
որ պատմության հեղինակ Կաղանկատվացին VII դարի մատենագիր է:

22 Առ, Հայոց պատմություն, Հ. II, Երևան, 1967, էջ 446.
23 «Մովսեսի Կաղանկատվացու Պատմության Աղվանից աշխարհի», Թիֆլիս, 1912
(այսուհետ՝ Կաղանկատվացի):

16 «Սերբոսի եպիսկոպոսի Պատմութիւն», հրատ: Ստ. Մալխասյանցի, Երևան, 1939:
17 «Պատմութիւն Ղևոնդի Վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887:
18 «Հովհաննես կաթողիկոսի Արծրունայ Պատմութիւն տան Արծրունեաց», Թիֆ-
լիս, 1912:
19 «Թովմայի Վարդապետի Արծրունայ Պատմութիւն տան Արծրունեաց», Թիֆ-
լիս, 1917:
20 «Սաեհիանոսի Տարոնեցու Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետեր-
բուրգ, 1885:
21 Վարդան Վարդապետ, Հոտարումն պատմութեան, Վենետիկ, 1862:

բաղադրութեան, նույնիսկ առանց օգտագործած ձեռագրից հանելու նրա գրչի լրացումները: Օրինակ, ոմն Ազրիանն, որ վերոհիշյալ Վեհիկի հիշատակարանի արտագրողն է և ձեռագրի տակ վկայել է իր ինքնութիւնը, անփոփոխ մնացել է նաև Պատմութեան համահասակաբ տեքստում³¹:

«Աղվանից աշխարհի պատմութեան» մասին առաջին հիշատակութիւնը պատկանում է Անանիա Մոկացի կաթողիկոսին (946—968):

Աղվանից կաթողիկոսութեանը ենթակա զավատներում քաղկեդոնական վարակի առաջն առնելու նպատակով Արցախ է գալիս Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին: Նա իջևանում է հաշն գավառի Գանձասարի եկեղեցում, իշխան Գրիգորի մոտ: Այս ճանապարհորդութեան հանգամանքների մասին գրել է հենց ինքը՝ Անանիա Մոկացին, որը պատմում է, թե երբ հաշնի Գրիգոր իշխանի հրավերով Արգախ³² վայրն են հավաքվում Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդները, ինքը նրանց խորհրդում է ցույց տալ այն գիրքը («Աղվանից աշխարհի պատմութիւնը»), որով, իբր թե, հաստատվում է Աղվանից եկեղեցու առաքելական ուսման հիմն լինելը, որը հիմք ընդունելով էլ՝ հերձվածողներն ամեն անգամ փորձում են անգատվել Հայոց եկեղեցուց: Գիրքը ցույց չեն տալիս. «Եւ ոչ ետուն մեկ տեսանել... գրաւեալ գաղէկն զպատմութիւնն Աղուանից»³³: Ապա գիշերը կարդալու համար Գանձասարի եկեղեցապանն Անանիա կաթողիկոսին է տալիս մի գիրք (իբրև Հովհան Ոսկերերանի ձեռագիրը), և պարզվում է, որ դա հենց Աղվանից աշխարհի այն պատմութիւնն է, որ փնտրում էր Անանիա Մոկացին³⁴:

Մոկացին, ի լուր խոտորարների, ընթերցում է այս ճշմարտապատում գիրքը, ցույց տալիս, որ նրա տեղեկութիւնների համաձայն՝ ավանդաբար Հայոց կաթողիկոսութեանն են ենթարկվել Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդները: «Ահա զայս ամենայն ընթերցեալ և իմացեալ կաթողիկոսին Անանիայի, և այսու բանիւր լոնցուցեալ զգրաբան բերանս խոտորարիս արանց և պապանձեցուցեալ զլեզու փառորսակ և անձնահաճ մարդկան՝ յամօթ արար զամենեսեան: Եւ ծանեան իշխանքն զհաստատութիւն իրին, և ամենայնի հաւանեալ հնազանդեցան նմա»³⁵:

Աղվանից աշխարհի պատմութեան երկրորդ հիշատակութեանը հանդիպում ենք Ուխտանեսն եպիսկոպոսի գրքում: Ուխտանեսն, որ ժամանակակիցն էր հաշնի կաթողիկոսի (972—991), իր երկում օգտագործել է Կաղանկատվացու Պատմութեան առաջին գրքի 9 դուրը՝ սկսելով այսպես, «Ասելով զայս մեզ (ի) պատմագրացն Աղուանից զարդար և զբուն և զառաջին հաւատալն աշխարհին իւրեանց հաւաստի մեզ պատմեալ. զի պատմութիւն ճշմարիտ է»³⁶: Ապա համարյա բառացի արտագրել է Պատմութեան հիշյալ հատվածը³⁷:

Ինչպես երևում է այս խոսքից, Ուխտանեսն Աղվանից պատմութեան մեկ հեղինակ չի ճանաչում, այլ հեղինակներ («ի պատմագրացն Աղուանից»): Նշանակում է՝ նա գիտեր, որ դա մեկ հեղինակի գործ չէ, այլ պատմագիր-հեղինակներից քաղած հավաքածու:

Հետաքրքիր է, որ «Աղվանից աշխարհի պատմութեան» հեղինակները ոչ միայն լրացնում, այլև ուղղում են իրար: Օրինակ, Էթն երկրորդ գրքի ԺԷ գլխի հեղինակը գրել է՝ «Վարդ ծնաւ զբաշն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զբրիս ամս», ապա երրորդ գրքի ԻԳ գլխի հեղինակը, որ, հավանաբար, եղել է և վերջնական խմբագիրը, Միհրական տոհմածառը ցույց տալիս ուղղում է իր նախորդի տեղեկութիւնը. «...Քաջ Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս, և ոչ շինողն Գարդման բերդոյ»:

Այս նշանակում է՝ վերջնական խմբագրութեան ենթարկողն աշխատել է նախորդների գրածները պահել անփոփոխ, ապա թե ոչ՝ դիտողութիւն անելու փոխարեն կվերցնել ու կփոխել:

Մովսես Կաղանկատվացին, որպես «Աղվանից աշխարհի պատմութեան» հեղինակ, հիշատակվում է Կիրակոս Գանձակեցու կողմից, այն էլ Հովհաննես կաթողիկոսի և Ուխտանեսնի արանքում³⁸: Մխիթար Այրիվանեցին նրան կոչում է «Մովսէս Աղուանեցի»³⁹, նաև՝ Մովսես Կաղանկատվացի⁴⁰: Ինչպես տեսանք, Ստեփաննոս Օրբելյանն Աղվանից պատմութեան մասին խոսելիս հեղինակի անունը չի տալիս: Իսկ Մխիթար Գոշն «Աղվանից աշխարհի պատմութեան» հեղինակ է ճանաչում Մովսես Գախուրանցուն: Գոշն իր ժամանակագրութիւնը համարում է մի տեսակ

³⁶ Ուխտանէսն եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 122:

³⁷ Անդ, էջ 123—124:

³⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մխիթարեանցանցանի, Երևան, 1961 (այսուհետ՝ Գանձակեցի):

³⁹ «Մխիթար Այրիվանեցու Պատմութիւն ժամանակագրական», Ս.—Պ., 1867 (այսուհետ՝ Այրիվանեցի), էջ 37:

⁴⁰ Անդ, էջ 71:

³¹ Անդ, էջ 137:

³² Արգախի մասին տե՛ս Սա. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Քիֆիս, 1910 (այսուհետ՝ Օրբելյան), էջ 278:

³³ «Արարատ», 1897, էջ 135:

³⁴ Անդ, էջ 135—136:

³⁵ Օրբելյան, էջ 282:

շարունակութիւն «... պատմութեանն Մովսէսի Դասխուրանեցոյն, որ գրովանդակ պատմէ զտանս Աղուանից...»⁴¹:

Հետագա աղբյուրներում «Աղվանից աշխարհի պատմութեան» հեղինակն արդեն հիշվում է որպէս Մովսէս Կաղանկատվացի: Օրինակ, Ծասլի Հասան-Ջալալյան կաթողիկոսն իր Պատմութեան ներածութեան մեջ թվարկում է հայոց մատենագիրներին («իսկ ի մէջ և յազգէս Հայոց»), ու նրանց շարքում՝ «Մովսէս Աղուանից պատմագիր Կաղանկատուացի»⁴²:

Այսբանից չի կարելի շեղարկացնել, որ X դարի կեսին Պատմութիւնն արդեն պատրաստ է եղել, սակայն ոչ որպէս մեկ անհատ պատմագրի գործ, այլ որպէս տարբեր պատմագիրների ստեղծագործութիւններից բաղած ժողովածու: Այդ պատմագիրների մի մասը հայոց հայտնի գրողներն են՝ Մովսէս Խորենացուց սկսած: Մյուսները հայտնի են դառնում իրենց գրածների մեջ սեփական անվան հիշատակումով. «Ես Վեհիկ», «Ես Վիրո կաթողիկոս», «Ես Պողոսիկ» «Ես Յովսէփ անապատական...» և այլն: Մովսէս Կաղանկատվացի և Մովսէս Դասխուրանցի անուններ չկան Պատմութեան մեջ: Հավանական է, որ X դարի ձեռագրերում էլ նրանք չեն եղել, ապա թե ոչ, կհիշատակին Անանիա Մոկացիին, Ռիստանեսը, նույնիսկ հետագայում՝ Ստ. Օրբելյանը: Ամենայն հավանականութեամբ, երկու Մովսէսները հետագայում են մտել Պատմութեան և պատմագրութեան մեջ:

Պատմաբան-բանասեր Աս. Մնացականյանը, մի անգամ ևս հաստատելով նրանց կարծիքը, ովքեր «Աղվանից աշխարհի պատմութիւնը» համարում են VII—X դարերում ստեղծված և X-ում վերջնականապէս շարահարված աշխատութիւն, գրում է, որ այդ պատմութիւնը «ըստ էութեան ոչ թե մեկ կամ երկու, նույնիսկ երեք հեղինակների ստեղծագործութիւն է, այլ մի գանձարան, բազմապիսի հեղինակներից առնված քաղվածքների ու դրագրութիւնների մի իսկական «Գիրք թղթոց»՝ ուղղղված Աղվանքի պատմութիւնն ստեղծելու նպատակին: Այն, միաժամանակ, յուրահատուկ «ընթուկ» է, տոհմամատչան՝ այդ բառի լայն առումով, ուր տասնհանարար մուծվել են երկրի կյանքի հետ այս կամ այն կերպ առնչվող նյութեր ու թղթեր...»⁴³:

Գրաբարին շտիրապետող աղվանագետների համար հիմնական միակ սկզբնաղբյուր է ծառայում Կաղանկատվացու Պատմութեան ուսերին թարգմանութիւնը՝ կատարված Ք. Պատկանյանի ձեռքով⁴⁴: Բազմավաստակ բանասերն այս գրքի առաջաբանն սկսել է մի սրտաբաց խոստովանութեամբ. «Հազվադեպ է գիրք լույս տեսնում իր թերութիւններին այնպիսի լրիվ գիտակցութեամբ, ինչպէս «Աղվանից պատմութիւնը»⁴⁵: Եվ սա կեղծ համեստութիւն չէ, այլ մաքուր ճշմարտութիւն՝ պայմանավորված թարգմանչից անկախ, նաև նրանից կախված մի շարք պատճառներով: Սրանցից ամենակարևորն այն է, որ Պատկանյանը գիրքը թարգմանելիս ձեռքի տակ չի ունեցել հայերեն հրատարակութիւնները⁴⁶, որոնցում Պատմութիւնը համեմատաբար մաքրված էր գրիչների ու ժամանակի աղավաղումներից:

Ռուսերեն այս հրատարակութեան շատ թերութիւններ, սակայն, դալիս են թարգմանիչ-մեկնաբանի սխալ ելակետից: Մովսէս Կաղանկատվացու գիրքը կոչվում է «Պատմութիւն Աղուանից աշխարհի»: Գրքի առաջին էջերում բացատրվում էլ է, թե ի՞նչ պետք է հասկանալ «Աղուանից աշխարհ» ասելով: Հայոց Վաղարշակ թագավորն իր երկրի ծայրամասերի վրա կարգել էր կուսակալներ, որոնցից մեկն էր Առանը. «Ի Սիսական տոհմէ յարեթական ծննդոց կարգի հրամանաւ Վաղարշակայ Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլեբրինս Աղուանից ի գետէն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ: Եւ աշխարհն յազգս բաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանը, վասն զի աղու ձայնէին զնա վասն բաղցրութեան բարուց»⁴⁷: Այսբանը նշանակում է, որ «ի գետէն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ» (Կուրի վրա, այսինքն՝ մինչև Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ) (Կուրի վրա, այսինքն՝ մինչև Երասխայ մինչև ցամուրն) Հայաստան երկրի հյուսիսարևելյան մասն էր: Հայոց թագավոր Վաղարշակն այս մասի վրա կուսակալ կարգեց Սիսական Առանին, և նա այնքան հաճելի ու բաղքը (աղու) բարբի տեր էր, որ հենց այդ բարբի համար էլ նրա տիրապետութեան տակ եղած երկրամասը կոչեցին Աղուանը:

26.459

44 «История Агван Моисея Карапкатвади, писателя X века». Перевод с древнеармянского К. Патканова, СПб., 1861.

45 Աղ, էջ 3:


46 «Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսէսի Կաղանկատուացոյ» (Կարապետ Շահնազարյանի հրատարակութեամբ, Փարիզ, 1860, 2 հատորով), «Մովսէսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհին» (Մ. Էմիլ. Մոսկով, 1860): Երրորդ էմիլյան հրատարակութեան արտատոգութիւնն է (Թիֆլիս, 1912):

47 Կաղանկատուացի, էջ 14:

41 Ղ. Ալիշան. Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 384:

42 Ծասլի Հասան-Ջալալիանց, Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի, Երասխայէմ, 1868, էջ Թ:

43 Աս. Մնացականյան. Աղվանից աշխարհի գրականութեան շարքերի շուրջը, էջ 174—175:



Մեր պատմության շարահարողն այսպիսին գիտե և հենց այսպես էլ ներկայացնում է «Աղվանք» անունն ու այդ անվամբ կրկնված երկիրը, որ Երասխի ու Կուրի միջագետքն է, հայոց աղբյուրների և հենց իր՝ շարահարողի, ճանաչած, նկարագրած՝ Մեծ Հայք երկրի Պատիք և Արցախ աշխարհների բունած տարածքը:

Պատմության բնագրին շատ թե քիչ ծանոթ մարդը չի կարող չընդունել, որ դա հայկական աշխարհի և գերազանցապես հայ ժողովրդի պատմությունն է: Նույնիսկ Թարգմանության անկանխակալ քննության մեջ էլ գիտնականները եկել են այդպիսի համոզման: Օրինակ, խոշոր կովկասագետ Ս. Վ. Յուշկովը համոզված էր, որ Կաղանկատվացու Աղվանքը ոչ մի կերպ չի համադրվում Ալբանիա-Աղվանքի հետ. «Աղվանքը նույնիսկ գտնվում էր ոչ թե հին Ալբանիայի տարածքում, այլ Հայաստանի տարածքում» («Агвания даже находилась не на территории древней Албании, а на территории Армении»):⁴⁸

Ի՞նչը նկատի ունի Ս. Վ. Յուշկովը: Այն, որ Աղվանք-Ալբանիայի մասին խոսող հունահռոմեական բոլոր աշխարհագիրները վկայում են մի բան. «Ալբանցիները տարածված են Կովկասյան լեռներով, և նրանց երկիրը փոխված է մինչև Կուր գետը»⁴⁹: Նաև այն, որ հայ աղբյուրներն էլ նույնն են վկայում, իսկ յոթերորդ դարի հայ հանձարեղ աշխարհագետը (ի դեպ, «Աղվանից աշխարհի պատմության» հիմնական մասի հեղինակի ժամանակակիցը) ավելի է կոնկրետացնում այդ վկայությունը, թե՛ Աղվանքը (Ալբանիան) «ընդ մեջս է մեծի գետոյն Կուրայ և Կովկաս լեռինն», և թվարկում է նրա դավառները, որոնք բոլորն էլ ընկած են Կուրից հյուսիս»⁵⁰:

Հետևապես, ոչ մի հիմք չկա այս գիրքն Ալբանիա-Աղվանքի պատմությունը համարելու: Եվ «բնական է, որ Աղվանքի մասին Մովսես Կաղանկատվացու տեղեկությունները մեզ համար շեն կարող հին Ալբանիայի մասին տեղեկությունների աղբյուր լինել»⁵¹, — իրավամբ պնդում էր Ս. Վ. Յուշկովը:

Ուրեմն, «Աղվանից աշխարհի պատմության» Աղվանքը հայաաշխարհ

48 С. В. Юшков. К вопросу о границах древней Албании. «Исторические записки АН СССР», т. I, М., 1937, с. 137.

49 Անդ, նշվ. աշխ., էջ 133:

50 Անդ, էջ 137: Ս. Վ. Յուշկովն իր աշխատությունը գրել է այն ժամանակ, երբ դեռևս հորենացուն էր վերագրվում «Աշխարհացայց»-ը: Այդ պատճառով էլ նա հայկական աշխարհագրության հեղինակ է համարում հորենացուն:

51 Անդ:

է, իսկ նրա անունը ոչ մի առնչություն չունի բնակիչների ազգային պատկանելության հետ: «Աղվանից աշխարհ» կապակցության մեջ էլ «Աղվանիցը» «Աղվանք» տեղանվան սեռական հոլովն է և ոչ մի դեպքում չի նշանակում «աղվանների», այսինքն՝ զարձալ ոչ մի կապ չունի բնակիչների ազգության հետ:

Երկրան ստած, Թարգմանիչ Ք. Պատկանյանն ինքն էլ ծանոթագրություններում այս ամենը բացատրում է: Նա գիտե, որ «Ալբանիան կազմում էր այն աշխարհը, որ ընդգրկված էր Ալազանի, Կասպից ծովի, Կուրի ու Սամուրի միջև»⁵², իսկ Կուրից հարավ ընկած են եղել «Հայկական թագավորության երեք մարզերը՝ Արցախը կամ Փոքր Սյունիքը, Ուտիքը և Փայտակարանը»⁵³, և որ «հայ գրողները միշտ էլ Աղվանք ասելով հասկացել են հայկական Աղվանքը, այսինքն՝ հայկական երեք մարզերը...»⁵⁴

Սակայն հենց ինքը՝ Թարգմանիչ Ք. Պատկանյանն էլ, անտեսելով իր իսկ հասկացած ու բացատրած այս կարևոր հանգամանքը, վերցրել ու Կաղանկատվացու գրքի անունը դարձրել էր «Աղվանների պատմություն» («История Агван Моисея Каганкатваци») և ապա առաջարկում դժգոհում էր, որ Կաղանկատվացին չի խոսում աղվան ժողովրդի մասին. «Այն ավելի շուտ երկրի պատմությունն է, քան ժողովրդի», որ նրա մեջ առավել հանգամանակից «խոսվում է պարսիկների, հոների, խազարների և ուղիեկների, քան թե ալբանցիների մասին»⁵⁵: էլ շենք խոսում հայերի մասին, որովհետև գիրքն սկզբից մինչև վերջ նրանց Աղվանք աշխարհի պատմությունն է:

Ք. Պատկանյանի զարմանքը բաժանում էր նաև Լեոն, տեսնելով, որ Կաղանկատվացու գիրքը հայկական աշխարհի մասին է, հայ սրբերի ու նահատակների, հայկական ավանդությունների ու ժողովրդական կյանքի, որ «պատմագիրը չի տալիս և՛ ոչ մի տեղական (այսինքն՝ աղվանական — Բ. Ու.) բառ, արտահայտության մի առանձնահատուկ ձև»⁵⁶:

Մոտավորապես Ս. Վ. Յուշկովի աշխատության ժամանակից (1937 թ.) սկսած Մովսես Կաղանկատվացին իր պատմության մեջ հանդերձ դարձավ կովկասագետների ուշադրության կենտրոնը, ինչպես նաև խուլ, հաճախ էլ բացահայտ ու տաք վեճերի առարկան:

52 «История Агван», с. 297--298.

53 Անդ, էջ 298:

54 Անդ, էջ 297:

55 Անդ, էջ 12:

56 Լեո, Հայոց պատմություն, II, էջ 340:

Սակայն եթե նախորնթաց բաղձամյա վեճը գնացել էր Կաղանկատ-
վացի հեղինակի անվան և հատկապես ապրած ժամանակի շուրջ, ապա
այս շրջանում նախկին հարցը քաշվեց ետին պլան, և ասպարեզ եկան
ուրիշ հարցեր, որ մինչ այդ երբեք հարցեր չէին: Գրանք են՝ Աղվանից
աշխարհի պատմության հեղինակի ազգությունը, պատմության բնագրի
լեզուն, պատմության առանցք հանդիսացող երկրի ու նրա բնակչության
ազգագրական կազմը և սրանց հետ առնչվող բազմաթիվ սարքովի «հա-
նելուկներ»:

Կովկասագիտ Ս. Տ. Երեմյանը, 1939 թ. քննության առնելով Կա-
ղանկատվացու Պատմության մի մասնակի հարցը, արտահայտել է մի
այսպիսի մտահոգություն. «Յարզ հետազոտողները շունեն այժմյան Սո-
վետական Ազգային հայալեզու պատմաբան Մ. Կաղանկատվացու «Ալ-
բանիայի պատմության» գիտաքննական հրատարակությունը»⁵⁷:

Ապա մեկը մյուսի ետևից ասպարեզ եկան Տ. Ի. Տեր-Գրիգորյանի ու
Ձ. Յամպուսկու, Ձ. Բունիաթովի ու ոմն Ղուկասյանի, Գ. Կլիմովի ու
Կ. Վ. Տրևերի, Ֆ. Մամեդովայի ու այլոց աշխատությունները, որոնք
«այժմյան Սովետական Ազգային հայալեզու պատմաբան» Կաղան-
կատվացուն հայտարարում են արան, նրա պատմության բնագրի լե-
զուն՝ այրանական-գարգարերեն կամ աղվանական-ուտիերեն, պատկե-
րած երկիրը՝ Ալբանիա, սրանցից բխող ուրիշ ելակետներով ու եզրահան-
գումներով հանդերձ:

* * *

Կա մի թերևս երկրորդական, բայց, ըստ էության, հետաքրքիր պա-
րագա. Պատմության բնագրի լեզվական-ազգային առանձնահատկու-
թյունների մասին անսովոր համառությունը և նախանձելի մի համար-
ձակույթյամբ խոսում են հատկապես այն հետազոտողները, որոնք չեն
տիրապետում Պատմության բնագրի լեզվին: Նրանք իրենց բոլոր փաս-
տաթղթերը քաղում ու եզրակացություններն էլ հանում են Պատմության
միակ ու սխալաշատ թարգմանությունից, որի թարգմանիչն ազնվորեն
խոստովանել է, թե «Հաղվադեպ է գիրք լույս տեսնում իր թերություննե-
րի այնպիսի լրիվ գիտակցությամբ, ինչպես Աղվանից պատմությունը»⁵⁸,
նկատի առնելով, որ այսպիսի վարժությունները ոչ մի կապ չունեն

պատմական գիտության (հաճախ նույնիսկ սովորական տրամաբանու-
թյան) հետ, մենք ավելորդ ենք համարում նրանց քննությունը: Սակայն
չենք կարող ուշադրություն չդարձնել Ձ. Ի. Յամպուսկու առաջ քաշած մի
«կարևոր» վարկածի վրա:

Ձ. Ի. Յամպուսկին գտնում է, որ Կաղանկատվացու Պատմությունը
նախապես գրված է եղել աղվանների լեզվով՝ գարգարերեն: «Պատմա-
կան պայմանները ոչ միայն հնարավորություն են ստեղծել, այլև թե-
լադերել են, որպեսզի Պատմության նախնական լեզուն լինի ոչ թե այն
լեզուն, որով այն հասել է մեր օրերը, այլ գարգարերեն լեզուն»⁵⁹,— գրել
է Յամպուսկին: «Հենց պատմության մեջ,— շարունակել է նա,— կան մի
շարք ցուցանիշներ այն բանի, որ այն գրաբար է թարգմանել կամ VII
դարի գարգարերենը վատ իմացող մի մարդ, կամ գրաբարը վատ իմա-
ցող և թարգմանության մեջ այնպիսի բառեր պահած մի մարդ, որոնք
(պահված բառերը— Բ. Ու.) գրաբարն իմացող մարդը Պատմության ձե-
ռագրի մեջ նկատում է որպես անհասկանալի, իսկ մի գլխում ստիպված
է հայտնել. «Հնարավոր չէ այս դուրս ամբողջովին թարգմանել: Ամեն
մի արտահայտության մեջ մի բանի ավելորդաբանություններ կան,
որոնք միանգամայն մթափում են իմաստը: Բացի դրանից, հեղինակի
կողմից առատորեն շոյված անծանոթ ու անհասկանալի բառերը...»:
Գրաբարագետի համար անծանոթ ու անհասկանալի բառերի անատու-
թյունը կարող է լինել արդյունք այն բանի, որ Պատմությունը գրաբար է
թարգմանել մի մարդ, որը լավ չուրացրած չի եղել հին հայերեն լեզուն,
կամ մի մարդ, որը լավ չի իմացել VII դարի գարգարերենը, կամ էլ՝ մի
մարդ, որ կրողն է եղել և՛ մեկ, և՛ մյուս հատկանիշների»⁶⁰:

Դժվար չէ նկատել, թե ինչպես այսքանը գրում է մի մարդ, որը ո՛չ
մի տեղեկություն չունի «Աղվանից աշխարհի պատմության» բնագրից և
ուզում է սարքել պատեհապատշաճ մի տեսություն, որովհետև ուրիշ
պարագաներում անհնար կլինեի մտածել, թե որն է գրքի ավելորդաբա-
նությունները նշան են նրա թարգմանված լինելուն և այն էլ՝ անպայման
գարգարերենից: Թե՛ երբ մի գրքի ձեռագրում անհասկանալի ու անծա-
նոթ բառեր կան, դա էլ անպայման նշան է նրա թարգմանված լինելուն
և այն էլ գարգարերենից: Կարևոր չէ, որ այդ «անծանոթ ու անհասկա-
նալի» բառերի առատության մասին խոսող թարգմանիչն առաջաբանում
վզուշացրել է, թե դրանք գրիչների աղավաղումներն են, իսկ անընթե-

57 С. Т. Ереми. М. Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-
Трдата к хазарскому хакану Алп-Илитверу. «Записки института Востоковедения
АН СССР». т. VII, 1939, с. 129.

58 «История Агван», с. XII.

59 З. И. Ямпольский, К изучению летописи Кавказской Албании. «Известия
АН Аз. ССР», 1957, № 9, с. 154.

60 Անդ.

նելի տեղերն արդեն մեծ մասամբ վերացված են հայերեն մոսկովյան ու փարիզյան հրատարակությունների մեջ⁶¹։

Հայ գիտնականներից շատերը, հայագիտական գեոռևս շտուժված հարցերով զբաղվելու փոխարեն, ցավոք, ստիպված եղան բավական ժամանակ ու եռանդ վատնել հազար տարի հայ ապրած Կաղանկատվացու և նրա բախտակիցների (Դավթակ Քերթոզ, Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի և այլք) հայ լինելն ապացուցելու համար։

* * *

Հայ պատմագիտությունն իր հիմնական մասով միշտ էլ ճիշտ է ընկալել ու գնահատել Հայոց արևելից կողմանց պատմաաշխարհագրական փիճակը՝ Ուտիքն ու Արցախը համարելով հնուց սնտի հայաբնակ ու հայկական նահանգներ։ Դեռևս Միքայել Չամչյանն իր «Պատմութիւն Հայոց» ծավալուն աշխատության մեջ շատ ճիշտ բնութագրել է Հայոց Աղվանքի փիճակը և տեղագրությունը։ Չամչյանցի պատկերացրած Աղվանքն ունի իր կոնկրետ աղպարական-բազաբական սահմաններն ու պատկերը՝ «Աղուանից աշխարհ»։ կրկին առմամբ յիշատակի սա ի դիրս մեր. մի՛ փոխանակ այնք աշխարհի, որ է ընդ մէջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Գարբանդ. և սա կոշի Աղուանք Շիրուանայ կամ Շիրուան... Երկրորդ ի մասնաւորի փոխանակ այնք մասին Հայաստանի, որ պարունակէ յինքեան զիրիս աշխարհս. ալսինքն, զՈւտի, զԱրցախ, և զՓայտակարան. և զմասն ինչ յայնկոյս Կուր գետոյ և սա կոշի յատկապես Աղուանք Հայոց...»⁶²։

Չամչյանն իր եռահատր գրքում այս նահանգների հազարամյա պատմությունը ներկայացնում է որպես հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասը, նրա առանձին հարցերի բնութայն ժամանակ ցուցաբերելով մի այնպիսի քաջատեղյակություն, որը նույնիսկ հետագա հետազոտողների կողմից պիտի մնար շգրապանցված։

Արցախի և Ուտիքի պատմությունն արժարժող գիտական պրպտումներից ուշագրավ է Սարգիս Զալալյանցի աշխատանքը, որն ամփոփված է նրա ճանապարհորդական նոթերի և հավաքած արձանագրությունների երկու հատորներում⁶³։ Այստեղ հեղինակը մեղվազան բարեխղճությամբ

ի մի է հավաքել Հայոց արևելից կողմանց և անդրկուրյան հայաբնակ վայրերում պահպանվող պատմական շատ թիչ կարևորություն ունեցող արժեքները՝ վիճագրություններ ու հնագիտական զրույցներ, հիշատակարաններ ու բազմազան այլ տեղեկություններ։

Յավոք, մինչև այսօր չի հայտնարբերվել Ս. Զալալյանցի գրչին պատկանող Աղվանքի պատմության այն ձեռագիրը, որի մասին հեղինակը, Հայոց արևելից կողմանց բազմազարյան կյանքի տարուբերումների մասին խոսելիս, գրում է, թե դրանք «մանրամասնաբար գրեալ ունեմ յիմում պատմութեան Աղուանից անուանելոյ»⁶⁴։

Հայոց արևելից կողմանց վարչաքաղաքական միավորի մասին հետաքրքիր գիտողություններ կան Ղ. Ալիշանի մեծարժեք ուսումնասիրություններում⁶⁵։ Այս հայաշխարհի պատմությանը և պատմական աշխարհագրությանը վերաբերող տասնյակ ու տասնյակ հարցեր, որոնք այսօր իսկ գեոռևս աղավաղված են ըմբռնվում հետազոտողների կողմից, Ալիշանն իր հայագիտական ուսումնասիրություններում ներկայացրել է ամենայն ճշգրտությամբ։ Նա քաջ գիտեր, որ V դարից սկսած հայ պատմագրության մեջ «Աղվանք» անվան տակ հասկացվել է միայն Հայոց Աղվանքը, հաճախ նույնիսկ միայն Արցախը։ Հիմնականում հենց այս ըմբռնումով էլ Ալիշանը գրել է Աղվանից աշխարհի պատմությունը («Աղուանք»), որը միայն վերջերս հրատարակվեց «Բազմավեպում»⁶⁶։

Էփրիկյանի բնաշխարհիկ բառարանը, Ալիշանի «Հայապատում» և Մաղ. Օրմանյանի «Ազգապատում» երկերը, հայագիտական հարուստ նյութերի հետ միասին, ի մի են բերում նաև Հայոց արևելից կողմանց վերաբերող բազմազարյան պատմական ու մշակութային նյութերը։ «Ազգապատումի» առանցքն են կազմում հայ լուսավորչական եկեղեցու, ինչպես նաև նրա մի թեք հանդիսացած Աղվանից կաթողիկոսության կարևորագույն անցքերը, բազմաձևեր մատենագիրներից, հիշատակարաններից, գրավոր ու բանավոր այլևայլ աղբյուրներից։ Սակայն կրոնական զեպքերի ու երևույթների այս նկարագրությունների մեջ չի կարելի չտեսնել նաև ժողովրդի պատմությունը, նրա կյանքը և պայքարն ազգային ինքնության պահպանման համար⁶⁷։

64 Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն, մասն Բ, էջ 354։
65 Ալիշան, Միսական, Վենետիկ, 1893, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855, Հայապատում, Վենետիկ, 1901։
66 Ղ. Ալիշան, «Բազմավեպ», 1970, № № 11—12, էջ 336—353, 1972, № 2—3, էջ 343—356, № 4, էջ 507—517, 1973, № 2, էջ 280—292։
67 Մազաբխա աբեղյակ. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, նաև՝ Պեյ-յուսի, 1959։

61 «История Армян», с. XIII— XIV.
62 Պատմութիւն Հայոց, հորինեալ ի հայր Միքայել վարդապետն Չամչեանց, Վենետիկ, Դ. Գ, 1786, էջ 131։
63 Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիգրիս, 1842, մասն Բ, Տիգրիս, 1858։

Հայոց արևելից կողմանց աշխարհագրական դիրքի նկարագրությանն ու աշխարհագրական-պատմական կարևորագույն կետերի տեղագրության հարցերն առաջին անգամ հանգամանալից արտացոլում են գտել Վենետիկի միթրաբյան գիտնական Ղ. Ինճիճյանի գրքերում⁶⁸:

Մեծ Հայքի հյուսիսարևելյան նահանգների պատմական աշխարհագրության և պատմության, ինչպես նաև մշակութային հարցերի բնությունը մեծ տեղ է բռնել սփյուռքի մեր հայագետների ուսումնասիրություններում: Հիշատակության արժանի է Արշակ Ալպոյաճյանի ծավալուն երկը Մեծ Հայքի արտաքին և ներքին սահմանների մասին⁶⁹: Այս գրքի մեջ հեղինակը չի բավարարվում միայն սահմանների հարցի մանրակրկիտ բացատրությամբ, հաղորդում է նաև պատմական աղբյուրների ու վավերագրերի բազմաթիվ տեղեկություններ հին Ուտեաց ու Արցախական աշխարհների, նրանց գավառների, այս գավառներում տիրապետած իշխանական տների մասին: Գրքի ամենահետաքրքիր հատվածներից է «Հայաստան որպես հայախոս երկիր» գլուխը, որը, չնայած իր մի քանի վիճելի հարցադրումներին, հմտորեն է քննում հայոց երկրի լեզվական սահմանների և նրանց ներսում կատարված տեղաշարժերի հարցերը:

Նշելով Գուրջանի «Պատմությունը»⁷⁰ պարունակում է հետաքրքիր դատողություններ հայոց լեզվի նախագրաբարյան վիճակի, գավառաբարբառների (հատկապես՝ Արցախականի) և գրաբարի նախընթացի (նախագրական վիճակի) մասին:

Առանձնակի ուշադրության են արժանի ներսև Ակինյանի ուսումնասիրությունները՝ նվիրված հին Հայաստանի պատմության գանազան հարցերին⁷¹: Բանասերը հետազոտության է ենթարկել «Աղվանից աշխարհի պատմության» մի շարք կնճոտ հարցեր, միաժամանակ պարզելով հեղինակի անձնավորության, Աղվանից աշխարհի մշակութային պատմության մշուշոտ կողմերը: Հայոց գրերի գյուտի, Մեսրոպ Մաշ-

տոցի դործունեության և, այսպես կոչված, աղվանից գրերի հարցերը ն. Ակինյանի կողմից ենթարկվել են հանգամանալից հետազոտության⁷²:

Մարզպանական շրջանի հյուսիսարևելյան Հայաստանի պատմության հարցերը քննելիս հետազոտողները հաճախ են դիմում Մ. վ. Բարխուտարյանցի օգնությանը: Հանրահայտ «Արցախ»⁷³ ու «Աղուանից աշխարհ և դրացիք»⁷⁴ գրքերը հեղինակի հավաքած բազմազան ու հարուստ նյութերի անսխտեմ ժողովածուներ են, որոնք ցայսօր Արցախ-ուտիքյան հայաշխարհի ու Աղվանքի պատմության հարցերով զբաղվողներին հում նյութ մատակարարող աղբյուրներ են հանդիսանում: Այդ նյութը, քննական նոր պրպատումների հետ միասին, մի կանոնավոր հյուսվածքի մեջ առնելու առաջին փորձը ևս կատարել է ինքը՝ Մ. Բարխուտարյանցը, գրելով «Պատմություն Աղուանից» երկհատոր գիրքը⁷⁵:

Բարխուտարյանցը քրտնաջան հավաքող է, գիտե Աղվանից աշխարհի հայության կյանքի բոլոր մակընթացություններն ու տեղատվությունները, հարևան ցեղերի պատմության մանրամասները: Սակայն եզրակացությունների հանգելիս և հատկապես այնտեղ, ուր պատմական աղբյուրները լուծում են, կամ ինքը տեղյակ չէ գոյություն ունեցող աղբյուրներին ու պետք է տրամաբանության ուժով լրացնի պակաս-պատր, — նա սխալական է ու քմահաճ, հորինում է այնպիսի պատմություններ, որոնք ճշմարտանման լինելով հանդերձ՝ ճիշտ չեն և աղճատում են պատմական իրողությունը: Այսպես է նա վարվում աղվանական ցեղերին տեղադրելիս, սրանց տարընթացությունները ցույց տալիս: Օրինակ, սկզբնաղբյուրների վկայությամբ՝ զարգարները կովկասյան լեռնափեշերին բնակվող ցեղ էին: Իսկ Բարխուտարյանցը Կարկառ (գետի անուն) և զարգար (ցեղանուն) բառերի մոտավոր նմանությունից մի ամբողջ սխալ տեսություն է ստեղծել այն մասին, որ, իբր, «Գարգարացվոց նահապետն, Սիսական ցեղից հատվածվելով Սյունիքից Գարգարացվոց դաշտն իջնելու ժամանակ մնացած է Գարգար գետի վերնամասերում, ըստ որում մինչև ցայսօր Գարգար է կոչվում այդ տոհմի անվամբ գետն ակունքներից մինչև Կուր գետի խառնվիլն, նույնպես և դաշտն»⁷⁶:

Սա Բարխուտարյանցի հնարած պատմությունն է: Իրականում պատ-

68 Ղ. Ինճիճյան, Հնախոսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Կ. 1—111, 1835, Ստորագրություն Հին Հայաստանեայց Վենետիկ, 1822:

69 Արշակ Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950:

70 Նշելով պատրիարհ Գուրջան, Պատմություն հայ մատենագրութեան, Սրուտազէմ, 1933:

71 Ն. Ակինյան, Մոզես Գարխուտարյանցի (կոչումը Կաղանկատացի) և իր պատմություն Աղուանից («Հանդես ամսօրյա», 1953—1958 թթ., ապա և առանձին գրքով, որը լույս է տեսել 1970 թ. Վիեննայում), նրա՝ «Մատենագրական հետազոտություններ», Վիեննա, 1922, Վիրո կաթողիկոս Աղուանից («Հանդես ամսօրեայ», 1954) և:

72 Ն. Ակինյան, Մ. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949:

73 Մակար եպիսկ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895:

74 Մակար Բարխուտարեանց, Աղուանից աշխարհ և դրացիք, Քիֆլիս, 1893:

75 Մակար եպիսկ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, Կ. Ա., 1902, Վազարչապատ, Կ. Բ., Քիֆլիս, 1907:

76 Մ. Բարխուտարեանց, Պատմություն Աղուանից, Կ. Ա., էջ 18:

մական և ոչ մի աղբյուր ո՛չ Կարկառ գետն է Գարդար համարում, ո՛չ Մուղանի դաշտի արևմտյան մասը, ինչպես պնդում է Քարխուտարյանցը, և ո՛չ էլ հատկապես կարելի է գտնել որևէ վկայություն այն մասին, թե գարգարները Միսական ցեղից հատվածվել են Սյունիքում ու այնտեղից իրենց բռն առած շարժվել դեպի հյուսիս:

Եվ Քարխուտարյանցի այս մի սխալը բավական է եղել, որպեսզի սովետական պատմագիտության մեջ Կարկառ գետը կնքվի Գարդար-Մուղանի դաշտը՝ Գարգարացոց դաշտ, և երկուսն էլ կապվեն զարգար ցեղի անվան հետ:

Ստեփան Կանայանցը սույազբել է պատմաաշխարհագրական ուսումնասիրությունների մի ժողովածու, որի զգալի մասը նվիրված է Հայոց արևելից կողմանց⁷⁷: Այստեղ աղբյուրագիտական բարեխղճությամբ քննության են առնված Ռոտիքի Գարդման գավառի տեղագրությունը, Մեծ Հայքի հարևան Ալբանիայի մարզերից մեկի՝ Կինաց աշխարհի աշխարհագրական դիրքն ու սահմանները, Արցախի Սողո-Մալոկք գավառի հարցը և այլն:

Կանայանցը հմտությամբ բացատրում է «Աղվանք» տեղանվան պատմական ըմբռնումները, ելրակացնելով, որ «...կա բուն Աղվանք Կովկասից մինչև Կուր և ... Աղվանից Հայք՝ Կուրի և Սրապի միջև: Եվ կարելի է համարձակ պնդել, որ մեր բոլոր հեղինակները Աղվանք ասելով վերջին մասն են հասկանում, մանավանդ Ս դարուց սկսյալ, բացի Խորենացու (կարգալ՝ Շիրակացու) Աշխարհացուցից և Մ. Կաղանկատվացուց⁷⁸:

Նիկ նկատի առնենք, որ Կաղանկատվացին էլ բացառություն չի կազմում հայ մատենագիրների մեջ, ապա սա միանգամայն իրավացի դիտողություն է:

Մարդպանական շրջանի Հայոց արևելից կողմանց պատմության ու պատմական աշխարհագրության հարցերը տարբեր առիթներով քննել են նաև Լևոն ու Հ. Մանանդյանը: Հր. Աճառյանը քննության է ենթարկել այս երկրամասի բնակչության լեզվական վիճակը պատմական տարբեր շրջաններում: Ուսումնասիրության մեջ մենք անհրաժեշտության դեպքերում անդրադարձել ենք նրանց դրույթներին:

Երկրամասի պատմությունը չի վրիպել նաև Նիկ. Աղոնցի աչքից:

77 Ստ. Կանայանց, Անհայտ գավառներ հին Հայաստանի, էջմիածին, 1914:

78 Անդ, էջ 146—147:

Մովսես Կաղանկատվացու գրքի քննությունը⁷⁹, Արցախի և Ռոտիքի աշխարհագրական մի շարք կետերի ճշգրտումներին նվիրված նրա գաղտնաբացումներն ու դիտողություններն այսօր էլ թարմ են և մեծապես օգնում են քննված հարցերի պարզաբանմանը⁸⁰:

Հայոց արևելից կողմանց ու Ալբանիա-Աղվանքի, նրանց պատմության ու աշխարհագրության, ազգագրական ու քաղաքական վիճակները քննության նյութ են հանդիսացել Ա. Յանովսկու⁸¹, Կ. Գանթ⁸² և Ի. Շուպենի⁸³ համար:

Յանովսկին ուսա հեղինակներից առաջինն էր, որ գրազվեց բուն Աղվանքի սահմանների հարցով: Նա տեղանունների հետաքրքիր ուսումնասիրությամբ եկավ այն եզրակացության, որ Աղվանք-Ալբանիան տարածված է եղել Ալազանի հովտում, Շաքիում և Շիրվանում, իսկ նրանից հարավ ընկած է եղել Հայոց Աղվանքը:

Ահա Ա. Յանովսկու ուղղակի խոսքն այդ մասին. Հայաստանն «ամեն տեղ (բոլոր աղբյուրների վկայություններում— Մ. Ու.) Ալբանիայից բաժանվում էր Կուր գետով»⁸⁴, «Կուրից հարավ ձգված էր Հայաստանը (այժմ՝ Մուղան, Ղարաբաղ և Ելիզավետպոլի նահանգ)⁸⁵», ապա՝ «Հայաստանի հյուսիսարևելյան մասը կոչվում էր Հայոց Աղվանք»⁸⁶:

Մեր ուսումնասիրության հարցերը գիտական քննության են ենթարկվել նաև Կ. Վ. Տրևերի աշխատության մեջ, որն ընդգրկում է բուն Աղվանքի պատմությունը՝ սկսած մ. թ. ա. IV դ. մինչև մ. թ. VII դարը⁸⁷ և, բնականաբար, չէր կարող չխոսել նաև Աղվանքի մերձավորագույն

79 Նիկ. Աղոնց, Խորենացիական հարցն ու հ. Վարդան Հացունի («Անահիտ», 1938, № 1—3), «Քննություն Մովսես Կաղանկատվացու» («Անահիտ», 1939, № 3—6):

80 Նիկ. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948:

81 А. Яновский, О древней Кавказской Албании. Журнал МНП, 1846, ч. II.

82 К. Ган, Опыт объяснения географических названий, Тифлис, 1909, հատկապես՝ նրա ծանոթագրությունները հունահունական գրողների երկերի՝ Կովկասի վերաբերող տեղեկությունների առթիվ:

83 Н. Шопен, Исторический памятник состояния Армянской области. СПб., 1852; նույնի՝ Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб., 1866.

84 А. Яновский, Եղվ. աշխ., էջ 97, 127, 173—174:

85 Անդ, էջ 128:

86 Անդ, էջ 180:

87 К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, Л., 1959.

հարեանի՝ Հայոց արևելից կողմանց մասին, Տրևերի համար անժանոթ նյութ չէ այս պատմութիւնը: Նա ուսումնասիրել էր արդեն Հայաստանի ու Անգրկովկասի պատմութեան հին շրջանը, քաջատեղյակ էր այս աշխարհների հին անցուդարձերին: Եվ, այսուհանդերձ, Ալբանիայի մասին գրած նրա պատմութիւնը չի կարելի հաջողված գիրք համարել՝ թեկուզ հենց այն պարզ պատճառով, որ այստեղ հեղինակն առաջնորդվել է մի թյուրիմացութեամբ, որից ժամանակին զգուշացնում էր Ս. Վ. Յուշկովը: Կ. Վ. Տրևերը Կուրի աշափնյակի կամ Հայոց արևելից կողմանց մասին հայ հեղինակի հյուսած պատմութեան տեղեկութիւնները մեխանիկորեն փոխադրել է Կուրի ձախափնյակը կամ Ալբանիա-Աղվանքը և հիմնականում այդ տեղեկութիւնների հիմքի վրա էլ ստեղծել իր հետազոտութիւնը:

Ինչպիսիք սուտարկա հարցերին տարբեր առիթներով անդրադարձել են նաև Ս. Տ. Երեմյանը, Աս. Շ. Մնացականյանը, Աշ. Գ. Աբրահամյանը և ուրիշներ, որոնց տեսակետներին մենք բաղմիցս անդրադառնում ենք աշխատութեան մեջ:

Դ Ր Վ Ա Գ Ե Բ Կ Ը Ո Ր Դ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համոզված լինելով, որ ամեն մի պատմութեան համար առհասարակ և Հայոց արևելից կողմանց պատմութեան համար մասնավորապես՝ ճշմարիտ պատմաաշխարհագրական ակնարկը գործի հիմքն է, մենք նախ պետք է ապահովենք այդ հիմքը՝ հենվելով բացառապես պատմական աղբյուրների վրա:

Մեր հիմնական խնդիրն է ցույց տալ երկրամասի մարզպանական շրջանի աշխարհագրական պատկերը: Սակայն ավելորդ չի լինի նաև անդրադառնալ նախընթացին, քանի որ մարզպանութիւնը փաստորեն ոչինչ չի փոխել առանձին մարզերի ու գավառների ներքին աշխարհագրութեան մեջ: Ընդհակառակը, հաստատելով այն, մեծ մասամբ պահպանել է նաև հին հայկական երկրամասի արտաքին սահմանները՝ իհարկե, պարսկահպատակ մեկ մարզպանութեան ներսում:

Հայաստանից պոկված Արցախ, Ուտիք, Փայտակարան նահանգների նախամարզպանական շրջանի համար կարևոր է պարզել Մեծ Հայքի ու բուն Աղվանքի միջև եղած սահմանը, քանի որ այն հյուսիսային սահման էր նաև Ուտիքի ու Փայտակարանի համար և, առավել կարևորը, հանդիսացավ ազգագրական այն անխախտ պատնեշը, որ դիմացավ մինչև թուրք-սելջուկյան շրջանը:

Նախամարզպանական Մեծ Հայքի ու Աղվանք-Ալբանիայի միջև եղած սահմանը, պատմական աղբյուրների հիման վրա, իր գրքում ամենայն հաջողությամբ ցույց է տվել Աս. Մնացականյանը: Սակայն, թվում է, ավելորդ չի լինի այստեղ ևս վկայակոչել հին աղբյուրները, քանի որ հարցն ամբողջությամբ ներկայացնելու համար չենք կարող լիսուսել Հայոց արևելից կողմանց հյուսիսային սահմանի մասին:

Մեծ Հայքը բուն Աղվանքից բաժանող գծի առթիվ կան հետևյալ վկայութիւններ:

Սուրաբուն (I դ. մ. թ. ա., I դ. մ. թ.). «Կիրը (Կուր),— գրել է նա,—

սկիզբ է առնում Հայաստանում, նեղ գետահովտով հոսում է դեպի Ալ-բանիան՝ առատաջուր և հախուռն անցնելով նրա և Հայաստանի միջով»¹։

Պաղովնոսը (II դ. մ. թ.) վկայում է, թե «Կուրը, որ հոսում է ամբողջ Իրերիայով ու Ալբանիայով, նրանցից բաժանում է Հայաստանը»²։ Կամ «Մեծ Հայքը հյուսիսում Կոլխիդայի մի մասից, Իրերիայից ու Ալբանիայից սահմանագատվում է վերոհիշյալ գծով, որն անցնում է Կուր գետով»³։

Գրոն Կասսիուզ (մ. թ. III դար), նկարագրելով Պոմպեոսի արշավանքը, խոսում է ալբանացիների մասին, «որոնք ապրում են Կուրից վեր»⁴։

Ստեփանոս Բյուզանդացին (IV դ.—V դ. սկիզբ) Կուրի աջափնյակը համարում է հայկական, հաստատելով նաև, որ «Օտինան (Ուտիքը) Հայաստանի նահանգն է»⁵։

Կարելի է վկայակոչել հունահռոմեական ուրիշ հեղինակների ևս, օրինակ, Պլուտարքոսին, Պլինիոս Ավագին կամ Սեկունդին, Եվստաթիոսին, Աղինի Կվարատոսին, Հուլիոս Սոլինին և այլոց, որոնք նույնն են հաստատում, ինչ վերը վկայակոչված հեղինակները։

Մենք բավարարվեցինք միայն այս տեղեկություններով և միաժամանակ ցույց տվինք, որ այդ օտար աղբյուրները, սկսած Ստրաբոնից (մ. թ. I դար) մինչև Ստ. Բյուզանդացին (V դար), այսինքն՝ մինչև մարդպանական շրջանը, անհնդմեջ Հայաստանինն են համարել Կուրի աջափնյակը։ Իսկ եթե նկատի առնենք նաև, որ Ստրաբոնը ներկայացրել է ոչ միայն իր ժամանակի իրողությունները, այլև, օգտվելով նախորդ հավաստի աղբյուրներից, նկարագրել է նաև Արտաշես ու Ջարնճ թագավորների (մ. թ. ա. II դ.) դարաշրջանի վիճակը, այն ժամանակ պարզ կլինի, որ Մեծ Հայքի միասնական պետության ստեղծման ժամանակներից մինչև V դարի սկիզբը Կուրի աջափնյակը, առանց ընդմիջումի, եղել է Հայաստանի կազմում։

Այս տեղեկությունները միշտ էլ ընդունվել են որպես պատմական ամենաարժանահավատ վկայություններ եվրոպացի արևելագետների և ռուս կովկասագետների կողմից։ Նրանց ճշմարտացիության մեջ չէր կասկածում նաև Աղբրեչյանի (XIX դ. առաջին կես) խոշորագույն հասա-

րակական գործիչ ու գիտնական Աբաս-Կուլի-Աղա Բաքիխանովը, որն արևելյան Անդրկովկասի պատմությունը շարադրելիս հիմք է ընդունել հենց այդ աղբյուրները և արել հետևյալ հիմնական եզրահանգումը. «Դատելով զանազան հանգամանքներից ու աղբյուրների տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ Կուրի աջափնյակը՝ մինչև Արաքսի հետ միասնականություն տեղը կազմել է Հայաստանի մասը»⁶։

Իհարկե, Կուրից հյուսիս ևս եղել են հին հայկական բնակավայրեր։ Իսկ Ալբանիայի ու Իրերիայի միջև, Ալագան գետի ավազանում մի ամբողջ գավառ, որ դասական հեղինակների երկերում կոչվում էր Կամբիսենա, հայերեն՝ Կամբեճան, իր հայ բնակչությամբ միշտ էլ պատկանում էր Հայաստանին։

Այս գավառի և շրջակաների մասին Ստրաբոնը գրել է. «Հայաստանի նահանգներից են նաև Փավենան, ինչպես նաև Կոմիսենան և Օրխիստենան... Խորզենան ու Կամբիսենան (Կամբեճան) ամենահյուսիսայիններն են և բոլորից շատ են ծածկված ձյունով։ Նրանք սահմանակից են Կովկասյան լեռներին, Իրերիային ու Կոլխիդային»⁷։

Կամբիսենա-Կամբեճանը նույնիսկ մարդպանության ժամանակ և արաբական տիրապետության օրերում հիմնականում Հայոց արևելից կողմանց իշխանական-թագավորական տներին էր ենթարկվում։

Վերը ցույց տրված սահմանը Հայաստանի ու իր հյուսիսային հարևանների միջև նույն Կուր գետով են գծում նաև հայկական աղբյուրները։ Սակայն մենք նրանց վրա կանգ չենք առնի, նախ, քանի որ ուրիշ առիթներով պետք է անդրադառնանք նրանց վկայություններին, ապա՝ որովհետև նրանք այլ բան չեն ասում, քան զասական հույներն ու հռոմեացիները։

Արևելքից Մեծ Հայքի սահմանը Կասպից ծովն էր, քանի որ Կասպիանա-Փայտակարանը՝ մ. թ. ա. II դարից սկսած մտնում էր Հայաստանի մեջ, իսկ այս նահանգը տարածված էր Կասպից ծովի փոքի։

6 Абас-Кули-Ага Бакиханов, Гулистан-Ирам, Баку, 1926, с. 8.
1951 թ. Թարգում գրքը լույս է տեսել աղբյուրներից՝ Մ. Ասկերյու թարգմանությամբ, առանց այս հատվածի։ Սակայն պահպանվել է՝ «Ներքինը... Հայաստանի մարզերից բաժանող Կուր գետը» (տե՛ս աղբր. հրատ. էջ 13)։

7 Ստրաբոն, XI, XIV, § 4։

8 Պրոֆ. Գր. Ղափանցյանը «Փայտակարան»-ը բացատրում էր որպես «փայտ և կարան» բառերից կազմված բարդություն. «Փայտ», այսինքն՝ «փայտով առատ տեղանք», «անտառային վայր», իսկ «կարան» — «տեղ», «իշխան» (կարան-կարեմ/կարողանալ), այսինքն՝ «կարող» (տե՛ս «Хайаса—колыбель армян. Историко-лингвистические

1 Ստրաբոն, գիրք XI, գլ. III, § 2.
2 Պաղովնոս, V, XI, § 3.
3 Անգ, § 1.
4 В. В. Латышев, Известия..., т. I, с. 611.
5 Անգ, էջ 270.

Պատմաբաններից ոմանք, ելնելով Ստրաբոնի Աշխարհագրության մի վրիպակից, Փայտակարանը համարում են արանական մարզ և այն ձգում նաև Կուրի ձախ ափով, նրա մեջ առնում նույնիսկ Ապշերոնյան թերակղզին⁹:

Ճշմարտությունն այն է, որ Ստրաբոնը, թվարկելով Արտաշեսի ու Զարեհի նվաճած մարզերը, հիշատակում է նաև Կասպիանեն (Փայտակարանը)¹⁰ անշարժած ոչ թե Ալբանիայից, այլ Մարաստանից («մարբրից-մեղացիներից նրանք անշատեցին Կասպիանեն»)՝¹⁰ Եվ քանի որ սրանից հետո միշտ էլ Հայաստանի հյուսիսային սահման է ճանաչվել Կուրը, իսկ Կասպիանեն-Փայտակարանը եղել է Հայաստանի մեջ, տրամաբանական է, որ Փայտակարանը չէր կարող Կուրից հյուսիս ևս տարածված լինել: Հայկական աղբյուրները, որոնք ավելի տեղյակ են այս նահանգների աշխարհագրությանը, Փայտակարանը տեղադրում են Երասխից, ուրեմն նաև Կուրից հարավ: Ահա «Աշխարհացոյցի» տեղեկությունը. «Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխա»¹¹:

Այս նախադասությունը ճիշտ չի մեկնաբանում Ս. Տ. Երեմյանը, որը թարգմանել է. «...Փայտակարանը, Ուտիքից արևելք, Երասխ գետի վրա»¹², իսկ քարտեզում էլ տեղադրել է նաև Արաքսից հյուսիս, մինչև Կուր գետը՝ ընդգրկելով այս միջագետքի մի զգալի մասը¹³: Այս բոլորը հակասում է «Աշխարհացոյցի» աներկմիտ տեղեկությանը, այն «Աշխարհացոյցի», որի վերակազմությունն է սույն քարտեզը: Ըստ «Աշխարհացոյցի»՝ Արաքսից հյուսիս, մինչև Կուր գետը միայն Արցախը և Ուտիքն են գտնվում: Ահա Ուտիքի տեղադրությունը. «Երկոտասաներորդ Ուտիք է, առ մտից կա Երասխայ ընդ մեջ Արցախայ եւ Կուր գետոյ»¹⁴, որ ճիշտ թարգմանված է «Երասխ գետից արևմուտք, Արցախի և Կուր գետի միջև»¹⁵:

Եթե Երասխ գետից արևմուտքը (ավելի ճիշտ՝ հյուսիս-արևմուտքը) պատկանում էր Ուտիքին, նշանակում է՝ այստեղ այլևս Փայտակարան չէր կարող տեղադրվել, մանավանդ, որ Փայտակարանի համար ասված

работы, Ереван, 1956, с. 66): Մա, իհարկե, անհամադրելի մեկնաբանություն է, որովհետև «փայտ» և «կարող» բառերն ասող հայը դժվար թե չիմանար «իշխանը» կամ «տեղը»:

⁹ К. В. Тревер, Очерки, էջ 44—45 և հոդ.

¹⁰ Ստրաբոն, XI, XIV, § 5.

¹¹ «Աշխարհացոյց», էջ 109.

¹² Անդ, էջ 110.

¹³ Տե՛ս «Աշխարհացոյց»-ին կից քարտեզը.

¹⁴ «Աշխարհացոյց», էջ 109.

¹⁵ Անդ, էջ 110.

է՝ «յելիցս կայ Ուտիոյ առ Երասխա», այսինքն՝ Ուտիքից-արևելք, Երասխի մոտերքում և ոչ թե Երասխի աջ ու ձախ ափերին:

Ըստ «Աշխարհացոյցի», Երասխը հարավային սահման է Ուտիքի, Արցախի և Սյունիքի համար: Հետևապես այն միայն կարող է հանդիսանալ և հանդիսացել է Փայտակարանի հյուսիսային սահմանը: Այստեղից էլ՝ սխալ է, որ «Աշխարհացոյցի» քարտեզում Փայտակարան քաղաքը (մարզի կենտրոնը) տեղադրված է Կուրի և Երասխի միջագետքում, և պատմաբաններից ու հնագիտներից շատերի համար էլ անհիմն կերպով այն նույնական է դարձել Բալլականի հետ¹⁶:

Ուտիք.— Նահանգի «Ուտիք» անունը, ինչպես վերը նշվեց, սովորաբար կապվում է էտիոնի-ուտի ցեղանվան հետ:

Այս նահանգի աշխարհագրությանը վերաբերող հին տեղեկությունների ընդհանրացումով ու ճշգրիտ եզրակացությամբ Ղ. Ինճիճյանը պիտի օրինակ լիներ հետագա հետազոտողների համար: Գծաթառաբար, այդպես չեղավ. նորերն ազավազված են ներկայացնում երկրամասի պատմական սահմանները և աշխարհագրական այլևայլ կետեր:

Ահա Ինճիճյանի պատկերացրած Ուտիքը, որ աղբյուրներից հմտորեն քաղած տեղեկությունների միակ ճիշտ համագրությունն է. «Գիրք սորա (Ուտիքի) ըստ Պլինիոսի անկանի առ Երասխա, իսկ ըստ Գվադրատոսի՝ առ Երասխա և առ Կուր գետով, համաձայն Խորենացույն (կարգալ՝ «Աշխարհացոյց»—Մ. Ա.), որ գրէ ը՛ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ և Կուր գետոյ»: Այսինքն՝ անկանի յարևմտից Երասխայ ի հարաւոյ Կուր գետոյ և յարևելից Արցախայ. յորմէ յայտ է, թե մի ծայր նորա անկանի ի խառնումն անդ Կուր գետոյն ցԵրասխ... Ուտի նահանգ երկայնաձգեալ կայ առ աջակողմամբ Կուր գետոյն, յերկուց՝ նամանաւանդ յերից կողմանց պատեալ ջրով, ի հիւսիսոյ և յարևելից՝ Կուր գետով..., իսկ ի հարաւոյ՝ սակաւուր Երասխա»¹⁷:

Ուրեմն, հյուսիսային սահմանը Կուրն է, արևելյանը՝ Կուրի ու Երաս-

¹⁶ Ն. Աղսնց, Բազմաթեմայաց փառք. «Պատմական ուսումնասիրություններ», Պարիս, 1948, էջ 61: 2. Մանանդյան, Քննական տեսություն, հատ. Բ, մասն Ա, էջ 311: Ա. Ալպայախյան. Պատմական Հայաստանի սահմանները, էջ 170, 178: Ս. Տ. Երեմյան, Հայաստանը, էջ 88: А. А. Нессен, Новые данные по работам оренкалинской экспедиции. «МН Азербайджана», т II, Баку, 1957, с. 57: Կ. Վ. Տրեբեր կասկածով է վերաբերվում Փայտակարանի ու Բալլականի նույնացմանը (տե՛ս «Օչերկ», էջ 265):

¹⁷ Ղ. Ինճիճյանը Փայտակարան քաղաքն ու մարզը տեղադրում է Երասխից հարավ ու արևելք (տե՛ս «Ստորագրութիւն», էջ 317—333):

¹⁸ Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն, էջ 336:

խի միախառնվելու կետը, հարավարևելյանը՝ Երասխի մի սակավ մասը: Մնում է պարզել հարավային սահմանը, որ ունի Արցախի հետ. ապա՝ արևմտյան սահմանը:

Արցախն Ուտիքից բաժանող որոշակի գիծ դժվար է տանել: Աղբյուրները նման հնարավորություն չեն բնօրինում, սակայն կարելի է նշել այս մարզերից յուրաքանչյուրին պատկանող ժայռամասային կետերը, և սրանց միջև անցնող գիծն էլ կլինի մոտավոր սահման երկու նահանգների համար:

Ա. Զալալյանցն Արցախի հյուսիսային (Ուտիքի հարավային) սահմանի հայտնի կետերից է համարում Արցախի Տիգրանակերտի (այժմյան Շահբուլաղը Աղզամ քաղաքի մոտ) թիկունքի սարը¹⁸. Մա ձիշտ չէ, որովհետև այս Տիգրանակերտից հյուսիս են ընկնում Հոռեկա վանքը (այժմյան Թալիշ գյուղի մոտ. Մարտակերտի շրջանում) և շրջակաները, որոնք պատկանում էին Արցախին:

Եթե արևելքից դեպի արևմուտք շարժվելով՝ փորձենք այս կետերի միջով սահմանը գծել, կստացվի այսպես. արևելքում Բալլականը (Օրենկալա) Ուտիքին էր, Ամարասը՝ Արցախինը, Շահբուլաղի Տիգրանակերտն Արցախին էր, Պարտավը՝ Ուտիքինը, Փառխոսն Արցախինն էր, Շամքորը՝ Ուտիքինը, Արևմտյան սահմանի վրա Հնարակերտն Արցախինն էր, Խաղխաղը՝ Ուտիքինը¹⁹. Այս կետերի միջոցով տարված գիծն էլ մոտավորապես կլինի սահման Արցախի և Ուտիքի միջև:

«Աշխարհացոյցը» յոթ գավառ է հիշում Ուտիքում՝ «Առան-ոտ, Տրի, Թոտ-Պարսեան, Աղուէ, Տուս քստակ, Գարդման, Շակաշէն, Ուտի առանձնակ» յոթում Պարտաւ քաղաք»²⁰.

Այս գավառները տարբեր ժամանակներում տարբեր ընդգրկումներ են ունեցել, և այժմ դժվար է անսխալ գծել նրանց սահմանները, սակայն կարելի է նշել, թե նրանցից ո՞րը մոտավորապես ի՞նչ տարածքի վրա է տեղադրվել, քանի որ աղբյուրները մեզ այդքան հնարավորություն տալիս են:

«Ուտի առանձնակ» յոթում Պարտաւ քաղաք»-ը, պարզ է, որ Պարտավի շրջակայքն է ընդգրկել:

Շակաշէնի ստրաբոնյան տեղադրությունը, հավանաբար, համապա-

18 Ա. Զալալյանց. Ճանապարհորդութիւն, Բ մաս, էջ 350:

19 Իրավացի է Վ. Ինճիճյանը, երբ Խաղխաղը ոչ միայն տեղադրում է Կուրի աջ ափին, այլև գտնում է, որ Փարպեցին ժողովրդի երկրի Աղուանից» (Փարպեցի, էջ 65) ստեղծ հստականում էր Հայոց Աղվանից (Հայոց արևելից կողմանք), քանի որ արիճ երկիր Աղուանից ոչ ձգել յայսպէս Կուր գետին» (Ստորագրութիւն, էջ 344):

20 «Աշխարհացոյց», էջ 109:

տաստանում էր նաև հետագա ժամանակների իրողությունը. «...հարթավայրից հետո գալիս է Սակասեան (Շակաշէն), որը սահմանակցվում էր Ալբանիայի հետ Կուր գետով»²¹:

Ս. Տ. Երեմյանը տեղադրում է «Զակամ (Զեգամ) գետից մինչև Կուրակ (Քյուրակ-չայ) գետը, փոխած Կուր գետի հովտի աջակողմյան մասում»²². Այս գավառի մեջ էր մտնում Գանձակ (այժմ՝ Կիրովաբադ) քաղաքը:

Նահանգի ամենախոշոր գավառը, որ և պատմության մեջ կատարած իր մեծ դերով առանձնանում է մյուսներից, Գարդմանքն է: Այս գավառի մասին պահպանվել են պատմական շատ և հանդամանալից տեղեկություններ. Եվ, սակայն, հակառակ դրան, սա միաժամանակ և այն գավառն է, որի տեղադրության մեջ հետադոտողներն այնքան անհամերաշխ են իրար հետ, որ մեկը նրա տեղն է համարում այժմյան Ղաղախի շրջանը, մյուսը՝ Գիրդիման գետի ավազանը, երրորդը՝ սրանց միջև ընկած տարածքը:

Ըստ Ինճիճյանի՝ բուն Գարդմանքը տեղադրվում է Շամքորի ու շրջակայքի վրա, ձգվելով դեպի արևմուտք»²³:

Մ. Բարխուտարյանցը, նախ, Գարդմանքը համարում է Արցախի գավառ, ապա մի քիչ խառնում հարևանների հետ, և ստացվում է այսպիսի տեղադրություն. «Գավառն, որն ընկած է Կուրակ և Շամքոր գետակների, զաշտաբերանի և Մուսվյան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակության զաշտաբերանի և Մուսվյան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթներն են) ստրբրի կողմերը»²⁴. Այսքանն էլ քիչ համարելով, մի քանի տարի անց դրում է, թե «Աղվանից երկրում կա երկու Գարդման գավառ և երկու Գարդման բերդ: Առաջին համանուն գավառն ու բերդը գտնվում է Արցախի նահանգում... Երկրորդն է Շամախու գավառներից մին, որ այժմ կոչվում է Գիրդիման-Գարդման»²⁵:

Առաջին, երկրորդ և երրորդ դեպքերում Բարխուտարյանցն իր գրքերի էջատակերին նշում է աղբյուրներ, որոնք ո՛չ Արցախի Գարդմանքն են հաստատում, ո՛չ էլ Շամախու:

21 Ստրբոն, XI, XIV, § 4:

22 «Աշխարհացոյց», էջ 73:

23 «Ստորագրութիւն», էջ 338:

24 «Արցախ», էջ 24:

25 Անդ, էջ 258:

26 Մ. Բարխուտարյանց. Պատմություն Աղվանից, Ա, էջ 13 և հապ.

Մ. Բարխուտարյանցի «Շամախու Գարդմանի» միակ իրական հիմքն այնտեղի Գիրդիման գետի անունն է, որը դեռ չի նշանակում, թե Գարդման գավառ էլ է եղել գետի ավազանում: Ծիշտ էր Ստ. Կանայանցը, երբ գրում էր, թե «անունների նմանությունը եթե պատահական չէ, այլ կերպ պիտի բացատրել, գուցե գաղթականությանը, որ կտաներ հետը և Գարդման անունը»²⁷:

Կանայանցն իրավամբ հիշում էր նաև Բուզանդին, որի վկայությունները՝ IV դարի երկրորդ կեսին Մուշեղ Մամիկոնյանը «Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից... և թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ... Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»²⁸,

Կարող են ասել՝ այսքանը հարավի Գարդմանի մասին, իսկ Շամախունը կարող էր լինել ինքնին:

Սակայն մենք Գարդմանքի համար շունենք ավելի վստահելի ազբյուր, քան «Աշխարհացոյցը», որն այդ գավառը դնում է միայն Ուտիքի սահմանների մեջ և Ուտիքի համար էլ հյուսիսային սահման է ճանաչում Կուր գետը:

Բուն Գարդմանքը չպետք է շփոթել Միհրանյանների այն տիրույթի հետ, որին նրանք տեր դարձան դավով ու բռնություններով: Միհրանյանների իշխանության տարածքը ևս ավանդաբար Գարդմանք էր կոչվում, սակայն անպայման ընդգրկում էր բնագրաված հատվածներ հարևան գավառներից:

Մեզ ամենից ճիշտ է թվում Գարդմանքի այն տեղադրությունը, որ կատարել է Ղ. Ինճիճյանը: Շամքորն ու շրջակաները՝ տարածված դեպի արևմուտք, սակայն առանց ընդգրկելու Ղազախի շրջանը, քանի որ Ղազախն ու Շամշաղինը մտնում էին մի ուրիշ գավառի մեջ, որ էր Տուս կամ Տավուշ:

Սա «Աշխարհացոյցի» «Տուս քուստակն» է: «Քուստակ» պարսկերեն նշանակում է գավառ: Ուրեմն՝ «Տուս գավառ»: Մ. Տ. Երեմյանն այս Տուսը կամ Տուս քուստակը ենթադրաբար տեղադրում է «Տաուշ կամ Տուս (Քուվուղ) գետի ստորին հոսանքում»²⁹, Բայց ինչո՞ւ միայն ստորին

հոսանքում, երբ Տուս կամ Տաուշ բերդը (որ և գավառի կենտրոնն է եղել) գտնվում է Տավուշ գետի ափունքների վրա (այժմյան Շամշաղինի յոթկենտրոն Բերդ ավանը):

Առան-ոտար Մ. Տ. Երեմյանի կողմից ճիշտ տեղադրված է Առանոտս (այժմ՝ Գերան) գետի հովտում³⁰, Շակաշենի և Ուտի-ոտստակի արանքում:

Առան-ոտսն իր հարավային ծայրով սահմանակցվում էր Արցախի Մեծ-Առանք գավառի հետ, ենթադրել տալով, որ հին ժամանակներում հենց այս երկու գավառների տարածքն է ընդգրկել Առան կոչված երկրամասը: Հետագայում «Առան» անունը տարածվել է ամբողջ աշափրամայի վրա: Իսկ արաբական տիրապետության շրջանում Առան էր կոչվում նաև ձախափնյակը՝ բուն Աղվանքը: Սակայն արաբ հեղինակներն այս երկու Առաններն անպայման տարբերում էին իրարից:

Ուրեմն, Ուտիքի Առան-ոտսն էլ գտնվում էր Գերան գետի հովտում: Միայն թե Մ. Տ. Երեմյանի կողմից ծայրահեղ շափաղանցված է գավառի բունած տարածությունը՝ 2225 քառ. կմ:

Մնացին Ռոտ-Պարսյան և Տրի գավառները: Մ. Տ. Երեմյանը ենթադրաբար Ռոտ-Պարսյանը տեղադրում է «Խաչն և Թարթառ գետերի միջև 770 քառ. կմ տարածությամբ»³¹: Գիտնականի կարծիքով՝ Տրին էլ «շուրջ 530 քառ. կմ տարածությամբ» գտնվում էր Տրսու (այժմ՝ Թարթառ գետի միջին հոսանքում, հետագա Ջրաբերդ գավառի տեղում: Միջին դարերում այստեղ հայտնի էին Հաթերք և Զարուրերդ կամ Ջրաբերդ ամրոցները», — գրում է Երեմյանը³²:

Երկու տեղադրություններն էլ ակնհայտ սխալ են, որովհետև բռնում են Արցախի, ավելի ճիշտ՝ Միջնարցախի տարածքը... Գոնե հայտնապես Արցախին պատկանող Հաթերքն ու Ջրաբերդը պետք է դիտարկեն այս տարածքը չկապելու Ուտիքի հետ: Մեզ զարմանալի է թվում նաև ենթադրաբար տեղադրված, ուրեմն և՛ սահմաններն անհայտ գավառի, իբր թե, բռնած տարածության որոշակի չափումը՝ 770 քառ. կմ:

Մ. Բարխուտարյանցը, մեր կարծիքով, մոտավորապես ճիշտ էր տեղադրում Ռոտ-Պարսյան (Ռոտպացյան) և Տրի գավառները, դրանք

27 Ստ. Կանայանց, Անհայտ գավառներ հին Հայաստանի, էջ 174:
28 Բուզանդ, էջ 314, Ստ. Կանայանց, Նշվ. աշխ., էջ 145—146:
29 «Աշխարհացոյց», էջ 86:
Տուս քուստակը ձեռագրերում աղավաղված է «Տուշկատակ» ձևով (տե՛ս Ա. Աբրահամյան, Շիրակացու Մատենագրությունը, էջ 350): Այս աղավաղված ձևն էլ Մ. Բար-

խուտարյանցը նույնպես է Տիգրանակերտի հետ և ստեղծել մի նոր գավառ՝ Տուշկատակ: Տիգրանակերտ կամ Թառնաղոտ (տե՛ս «Արցախ», էջ 22):
30 «Աշխարհացոյց», էջ 37:
31 Անդ, էջ 79:
32 Անդ, էջ 86:

փոխելով Կուրի աչ ափին, մինչև Մուխան դաշտը³³, Իսկապես հենց այս-տեղ՝ Պարտավից արևելք (Ուտի-ոտտակից հետո) սկսվելով, այս երկու գավառները պետք է բուննին մինչև Երասխ գետը, որն Ուտիքի հարավ-արևելյան սահմանն էր: «Աղվանից աշխարհի պատմության» մի տեղեկությունները հենց այս տարածքի վրա էլ տեղադրվում է Տրի կամ Տիր գավառը. այն թվարկված է Հարանդ, Ամարաս, Պազկանք, Մուխանք գավառների կողքին³⁴, Իսկ սրանք բոլորն էլ Արցախի արևելյան գավառներն են, փոխած այժմյան Մարտունու շրջանում և նրանից արևելք, մինչև Երասխը:

Մեր տեղադրության օգտին են խոսում նաև Տրի ու Ռոտ-Պարսյան անունները: Գր. Ղափանցյանը հաստատել է, որ հայոց մեջ Տիր-Տրի անվան գործածությունը (որպես անձնանուն, տեղանուն և այլն) գալիս է պարսիկներից³⁵: Տիրը պարսից աստվածներից էր, գիտության հովանավորը և երազահան³⁶:

Եթե այդպես է, այդ ազդեցությունը պետք է փնտրել սահմանա-մերձ գավառներում: Մանավանդ, որ հարևան մյուս գավառանունն էլ (ոտտ) Պարսյան էր («պարս» — «պարսիկ» — «պարսկական» բառից), իսկ նրա հարևան Արցախական գավառը՝ «Պարսկական»³⁷ (աղավաղված ձևով՝ «Պարզկան»):

Չի կարելի կասկածել, որ այս բոլոր գավառներն էլ զբաղեցնում էին Երասխի ու Կուրի միջագետքի արևելյան ծայրը, Մյուս Հարանդից (Ամարասի շրջակայք) և Ուտիքի ոտտակից (Պարտավի շրջակայք) դեպի արևելք:

Արցախի ու նրա գավառների միջնադարյան աշխարհագրական նկարագրությունը ավել ենք մեր մի այլ աշխատության մեջ³⁸, Այդ պատճառով էլ այստեղ նույնի կրկնությունը նկատելով ավելորդ, անհրաժեշտ ենք համարում քննել մեր ուսումնասիրության առարկային վերաբերող մի շարք տեղանուններ, որոնք մինչև վերջին ժամանակները հայագիտության կողմից չէին արժանացել սպառիչ հետազոտության ու համոզիչ պատասխանների:

Նախ, հարկ ենք համարում նշելու Հայոց արևելից կողմանց պատմական աշխարհագրությանը վերաբերող երկու թյուրիմացություն մասին, որոնք շրջանառության մեջ են գտնվում տարիների շարունակ և աղավաղում են Արևելյան Անդրկովկասի հին ու միջնադարյան պատմությունը: Ս. Տ. Երեմյանը Բաղասականը նույնացնում է Փայտակարանի հետ՝ այն տեղադրելով Կուրի ու Արաքսի միջև ու Արաքսից հարավ, իսկ ողբյուրներում հիշվող Գարգարացոց դաշտն էլ տեղադրում է Արցախի՝ Մուխանք գավառում (այժմյան Մուղանի դաշտի տեղը): Հայտնի է, սակայն, որ Բաղասականը բուն Աղվանքի մարզերից մեկն է՝ աղբյուրներում (հատկապես «Աշխարհացոյցում») հիշված Կուրի ձախափնյակի տունով և, գրվելով Արաքսից հարավ, սնունդ է տալիս այն հակապատմական տեսությունը, որի համար բուն Աղվանքին են վերաբերել ինչպես Ուտիքն ու Արցախը, այնպես էլ Արաքսի աջափնյակի մի զգալի մասը: Կարգարացոց դաշտի տեղերն էլ, քնականաբար, կլինեն գարգարները, որոնց համար Մաշտոցն աղվանական գիր է ստեղծել: Եվ բացառապես Ս. Տ. Երեմյանի այս տեղադրության հիմքի վրա վերջերս ուսումնասիրողներից ոմանք համառորեն պնդում են, թե, իբր, Մաշտոցի աղվանական գիրը ծառայել է արցախի բնակչությանը:

«ԱՂՎԱՆԻԱ», «ԱՂՎԱՆՔ» ԵՎ «ԱՌԱՆ» ՏԵՎԱՆՈՒՆՆԵՐԸ.— Արևելյան Անդրկովկասի հին պատմության համար կարևոր նշանակություն ունի «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունների ճիշտ մեկնաբանությունը:

Ինչպես վերը տեսանք, մեր թվականության առաջին դարից սկսած՝ հույն և հռոմեացի պատմիչները վկայել են, որ Արևելյան Անդրկովկասում գոյություն ունի Ալբանիա երկիր-պետություն՝ ընդգրկված Կովկասյան լեռնաշղթայի և Կուր գետի արանքում:

Հասկանալի պատճառով հայկական աղբյուրներն այս Ալբանիայի մասին տեղեկություններ կարող էին հաղորդել միայն V դարի սկզբից հետո: «Ալբանիա» անունն այս աղբյուրներում կարող էր ենթարկվել հայերենի օրենքներին և դառնալ «Աղվանք»: Այդպես էլ եղավ հայ հեղինակների երկերում «Ալբանիա» անունն սկսեց գործածվել որպես «Աղբանիա» — «Աղվանք» (գրաբարում՝ «Աղուանք»):

Սակայն V դ. սկսած՝ «Աղվանք» տեղանվանը վիճակված չէր հայոց լիզվով ցույց տալ հույների ու հռոմեացիների ճանաչած երկիր-պետությունը, որովհետև բռնակալ Պարսկաստանը նախկին Ալբանիայից և Հայաստանի Ուտիք ու Արցախ նահանգներից կազմել էր մի վարչական

33 «Արցախ», էջ 22.
34 Կաղանկատացի, էջ 376.
35 Գր. Капанцян, Хеттские боги у армян. «Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ», հ. 14, Երևան, 1940, էջ 301—303.
36 Տե՛ս Ազարանգեղոս, էջ 395. «Գրկպետ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտման Տրի գից. դպրի գիտութեան քրմաց...».
37 «Աշխարհացոյց», էջ 109.
38 Բ. Ա. Ուլարսոյան, Խաչնի իշխանությունը X—XVI դարերում, էջ 80—88.

միավոր՝ մարզպանություն, որը կառավարվում էր պարսիկ մարզպանի կողմից և նույնպես կոչվում էր Աղվանք անունով:

Այսպիսով, հայ մատենագրությունն «Աղվանք» պիտի կոչեր պարսկահայատակ մարզը (որի հարավային սահմանն էր Երասխ գետը), իսկ հին իրողություններին անդրադառնալիս էլ՝ նաև հունահռոմեական աղբյուրների «Ալբանիա»-ն (որի հարավային սահմանն էր Կուրը):

Պարզ է, ուրեմն, որ հայ մատենագրության համապատասխան տրվելները քննելիս անհրաժեշտ է ուշադրության առնել, թե խոսքը ո՞ր Աղվանքին է վերաբերում՝ Բուն Աղվանք—Ալբանիային, թե՞ Աղվանք—մարզպանությանը, որի մեջ էին գտնվում նաև հայ Առանշահիկ նախարարական տան տիրույթները՝ Արցախն ու Ուտիքը:

Հայկական աղբյուրներում Առանշահիկների երկիրը, մարզպանության ժամանակներից սկսած, կոչվում էր տարբեր անուններով՝ «Արևվելք», «Արևելից կողմանք», «Հայոց արևելից կողմանք», որովհետև այն հին Հայաստան երկրի արևելյան մասն էր, «Աղուանից կողմանք», որովհետև այդ նոր վարչական միավորն իսկապես գտնվում էր նախկին Աղվանքի (Ալբանիայի) կողմերում, նրա անմիջական հարևանն էր. նաև՝ «Աղուանք», որովհետև մտնում էր պարսկահայատակ «Աղուանք» մարզի մեջ: Այս պայմաններում աստիճանաբար սովորական է դառնում «Աղուանք»—«Աղվանք» անունը, որն այլևս չպետք է անշատվեր այդ երկրամասից:

Ի հակադիմ պատմական աղբյուրների ընձեռած բաղմամբիվ արժանահավատ վկայությունների ու փաստերի, պատմագիտական զրականության մեջ իշխում է մի մտայնություն, որը նույնական է հայտարարում «Ալբանիան» և «Աղվանքը»: Այս տեսակետն ընդունող հեղինակների պնդումով Ալբանիա էր կոչվում Կովկասյան լեռնաշղթայից մինչև Արաքս գետն ընկած տարածքը, իսկ «Ալբանիա» տեղանունն էլ, իբր, բխում է այդ տարածքի վրա ապրած միասնական ալբան ժողովրդի (կամ ալբանցեղի) անունից:

Այսօրինակ մեկնաբանությունն աղավաղում է ինչպես բուն Աղվանքի (Ալբանիայի), այնպես էլ Հայաստանի հյուսիսարևելյան նահանգների պատմությունը, աշխարհագրությունը, աղագրական ու մշակութային վիճակները:

* * *

Արդ, ի՞նչ է նշանակում «Ալբանիա». օտարների զրած ան՞ունն է դա, թե՞ տեղաբնիկներն են իրենց այդպես կոչել:

Ամմիանոս Մարկելինոսի (IV դար) և Մովսես Խորենացու (V դար) ժամանակներից սկսած՝ մատենագիրներն ու պատմաբանները մեկնաբանում են «Ալբանիա» տեղանունը: Բայց և այնպես միչև այսօր պարզ ու անառարկելի պատասխան չկա:

Ամմիանոսը հարևանցիորեն հիշում է, որ «ալբաններն իրենց անունն ստացել են լեռներից»³⁹, սակայն չի բացատրում, թե ինչպե՞ս:

Մովսես Խորենացու բացատրությամբ, Աղվանք անվան հիմքում ընկած է համարվում աղու (անուշ, քաղցր) բառը⁴⁰:

1840-ական թթ. Բարխիստովը փորձեց «Ալբանիան» բացատրել «այրան» անվամբ, նկատի ունենալով լատինական «ալբի» բառը՝ «սպիտակ» իմաստով⁴¹:

Բարխիստովից շուրջ երկու տասնամյակ հետո Իվան Շոպենն էլ Ամմիանոսի նման «Ալբանիան» մեկնաբանում է որպես «լեռների երկիր»⁴², բայց չի բացատրում, թե ի՞նչ լեզվով և ինչ՞ու է այդպես կոչվել:

Կովկասագետ Կ. Վ. Տրևերի վկայությամբ՝ Ն. Յա. Մառն էլ ունի «Ալբանիա» անվան այսպիսի բացատրություն: Տրևերը երկու անգամ անդրադառնում է Մառի մեկնաբանությանը, առանց նշելու տեղը⁴³:

Որքան հայտնի է, «Ալբանիա»—«Աղվանք» տեղանվան հանգամանակից ուրիշ որևէ մեկնաբանություն չի եղել, եթե չհաշվենք Կ. Վ. Տրևերի, Վ. Ֆ. Մինորսկու և Ս. Տ. Երեմյանի հարևանցի դիտողությունները, որոնք հիմնականում զուրս չեն եկել եղած փորձերի սահմաններից: Վերջերս «Ալբանիա»—«Աղվանք»—«Առան» տեղանունների պատմագիտական քննության փորձ է կատարել նաև Յու. Բ. Յուսիֆովը:

Վկայակոչելով Վ. Ֆ. Մինորսկուն, Ս. Տ. Երեմյանին ու Կ. Վ. Տրևերին, Յուսիֆովը գտնում է, որ «Ալբանիա», «Աղվանք», «Առան», «Ռանի» նույն երկրամասի անվան տարբեր ձևերն են: Նա իրավամբ գտնում է, որ «...հայկական «Աղվանք» անունը և հունահռոմեական «Ալբանիան» կազմված են նույն արմատից»⁴⁴, «նշանակում է՝ «Աղվանք»-ը փոխառ-

³⁹ Ամմիանոս Մարկելինոս. գիրք 23. դ. 5. § 16:

⁴⁰ Մովսես Խորենացի. էջ 112—113:

⁴¹ Лобас-Кули-Ага Бакиханов, Гюлистан—и Ирам, с. 9.

⁴² И. Шопен, Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, с. 374.

⁴³ К. В. Тревер, Изд. 4-й. էջ 5: նույնի՝ К вопросу о культуре Кавказской Албании. М., 1960, с. 1.

⁴⁴ Ю. Б. Юсифов, О наименованиях «Албания» и «Арран». «Известия АН Азерб. ССР», серия общ. наук, 1961, № 10, с. 25.

ված, բայց հայացված անունն է Ալբանիա երկրի»⁴⁵, Ապա գրում է, որ «Հին հունահռոմեական ու արաբական պատմիչների հաղորդած տեղեկությունների հիման վրա կարելի է ասել, թե՛ «Ալբանիան» և «Առանը» Աղբրեջանի տարածքի կոնկրետ անուններն են եղել: Հունահռոմեական (անտիկ) պատմաբաններն այս տարածքը կոչել են «Ալբանիա», արաբ հեղինակները՝ «Առան կամ Ալբան»⁴⁶: Սակայն իր ստուգաբանական քրնոլոգիաները կատարելիս Յուսիֆովն «Ալբանիա—Աղուանը» խումբն անշատում է «Առան—Արան—Իանի» խմբից, գտնելով, որ «Առանը» կազմված է «ար»-ից (որ դադստանցի լակերի լեզվով նշանակում է հարթավայր) և դարդինների «ան» ածականակերտ ածանցից»⁴⁷: Յուսիֆովին հայտնի է նաև, որ սկզբնապես Առան է կոչվել Կուրի աջափնյակը՝ հարթ ու տաք մի վայր: Ուստի նա պատահական չի համարում, որ այժմյան աղբրեջաներենում «արան» նշանակում է «տաք ու հարթ տեղանք»⁴⁸:

Յու. Բ. Յուսիֆովն այնուհետև ստուգաբանական էքսկուրսներով փորձում է ապացուցել, որ «Ալբանիան» առաջացել է «հալոյեն», «հալբի» ցեղանունից և «Ալբանիա» նշանակում է «հալ»-երի երկիր»⁴⁹:

Սակայն, ցավոք, գիտնականը չի նկատում, որ այստեղ արդեն ստացվում է հակասություն. եթե «Ալբանիան» ու «Աղվանքը» նշանակում են «հալ»-երի երկիր», իսկ «Առանը»՝ «հարթ ու տաք տեղանք», ապա սրանք նույնական չեն կարող լինել:

«Ալբանիա»—«Աղվանք»-ի նման մեկնաբանությունը դժվար է ընդունել նաև այն պատճառով, որ այստեղ մի տեղանունը գոյացած է համարվում տեղաբնիկ տարբեր ցեղանուններից ու սրանց մնացորդներից, որ գործնականորեն անհնար է պատկերացնել:

Բայց ի՞նչ է նշանակում «Ալբանիա»:

Կելտերենին ցեղակից եվրոպական շատ լեզուներ, ինչպես անգլերենը, ֆրանսերենը և այլն, ունեն «ալպ»—«ալբ» բառը, որ նշանակում է «տաք», «գազաթ», «բարձունք»: Եվ քանի որ «իա» մասը միշտ էլ տեղանունների հիմքերին է կցվում՝ նշանակելով «երկիր», «պիտոություն», ուստի «Ալբանիա» պետք է նշանակի «լեռների երկիր»:

Հայտնի է, որ «Ալբանիա» կելտական անունը կա Շոտլանդիայում («Ալբանիան» Շոտլանդիայի հին անունն է)⁵⁰, Իտալիայում⁵¹, Բալկանյան թերակղզու վրա և, վերջապես, Անդրկովկասի հյուսիսարևելյան մասում: Հատկանշական է, որ բոլոր այս վայրերն էլ լեռնոտ են և համապատասխանում են իրենց իսկ «Ալբանիա»—«լեռների երկիր» անվանը:

Պատմական այս փաստը բացատրվում է կելտական ցեղերի կատարած ասպատակություններով, որոնց ընթացքում նրանք սեփական «Ալբանիա» անունը թողել են իրենց նվաճած շատ երկրներում:

Կելտերի հին բնակավայրերն արևելքում հասնում էին մինչև Ալպերը, և բնական է, որ այս լեռներն իրենց անունն ստացել են տեղաբնիկներից («ալպ»՝ սաք, գազաթ, բարձր):

Մ. Թ. Կ. առաջին հաղարամյակի կեսերին կելտ-գալերի ալիքները նսեկ էին Փոքր Ասիա, այնտեղ ստեղծել Գալատիա (հայկական աղբյուրներում՝ Գաղատիա) պետությունը⁵²:

Ինչ վերաբերում է Կովկասյան, ավելի ճիշտ՝ Անդրկովկասյան Ալբանիային, հավանական է ենթադրել, որ կելտական տեղաշարժերի ալիքն այստեղ է հասել մ. թ. ա. 11—1 դարերում:

Ուշագրավ է, որ, ըստ «Պատմություն Աղուանից աշխարհի» երկի, կելտերը կովկասաբնակներ են: Պատմության Ա գրքի Բ գլուխն ունի հետևյալ հետաքրքիր հիշատակությունը. «Եւ որպիք Յաբեթի՝ Գամեր և ի նմանէ Գամիրբ: Մագոց և ի նմանէն՝ Կեղոց և Գաղատացիք»⁵³, Գալերի կամ զաղատացիների մասին խոսում է նաև Խորենացին⁵⁴, հայերի և կելտ-գաղատացիների գինական համերաշխությունն ընդգծելով հետևյալ տեղեկությամբ. Անտիոքոս թագավորը «դվահան նահապետ Ամատունեաց արեւելեան զնդաւն և զԳաղատացի զորս ընդ նմա առաքեաց զկողմամբ Ատրպատականի, ունել պահ յարքայէն Պարսից»⁵⁵:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել կարևոր նշանակություն

⁵⁰ "The Enciclopedia Britannica", Cambridge, 1910, p. 487.

⁵¹ «Ալբանական լեռներ» են կոչվում Հոռից հարավ-արևելք գտնվող հանգած հարությունները: Կենտրոնում բարձրանում է «Mons Albanus»-ը (տե՛ս ԵՏՅ, Մ., 1950, լ. 161):

⁵² Անդ. Տե՛ս նաև Ю. Симонов, Гелы—потомки древних кельтов. Журнал «Наука и жизнь», 1976, № 5, с. 142—143.

⁵³ Կաղանկատացի, էջ 10:

⁵⁴ Խորենացի, էջ 103, 142, 262:

⁵⁵ Նույն տեղում, էջ 262:

⁴⁵ Անդ.

⁴⁶ Անդ, էջ 30 (տե՛ս նույնիսկ աղբրեջաներեն ամփոփումը):

⁴⁷ Անդ, էջ 25:

⁴⁸ Անդ.

⁴⁹ Անդ, Հմմտ. Н. Я. Марр. Кавказские племенные названия и их местные параллели, Пг., 1922, с. 25.

ունեցող պատմական մի վկայություն ևս, որը դարձյալ վերաբերում է կելտ-գաղատացիների ու Կովկասի աննշուխտներին:

Եղիշեն Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա ալբրոնների մասին խոսելիս գործ է ածում «խայլնդուրք» և «աշխարհ խայլանդարաց»⁵⁶ անունները, որոնք մինչև օրս հետազոտողների կողմից կամ համարվել են անբացատրելի թյուրիմացություն, կամ էլ արժանացել են «Քաղաքական ու կամայական բացատրությունների, ինչպես՝ «հոսների արքայական հորդայի անուն»-ից⁵⁷ մինչև «խայլանդուրք—ընտիր թուրք»⁵⁸, կամ՝ «եկվոր թուրք»⁵⁹:

Եղիշեի պատմության մեջ այս բառն օգտագործված է երեք անգամ, երկուսը՝ սեռական հոլովով, մեկն՝ ուղղական: Առաջին անգամ. «Դադարեցին հայլանդուրք ելանել ընդ պահակն ճորայ»: Կարծում ենք, որ «խայլանդուրքը» գրիչները չեն հասկացել և փորձել են հայերեն կարդալ: Ստացվել է «հայել ընդ ուրուք»⁶⁰, որը ոչ մի իմաստ չունի ավելի կապակցության մեջ. «ղաղարեցին հայել ընդ ուրուք ելանել ընդ պահակն ճորայ»: Հրատարակիչներն էլ այս բառն ընտրել են օգտագործած «խայլանդարաց» ձևի օգնությանը և ստացել են «խայլանդուրք»: Քանի որ մեր ունեցած ձեռագրերում գերիշխողը «Հայել ընդ ուրուք» ձևով տարբերակն է, մենք կարող ենք հավասարապես կարդալ և «խայլանդուրք», և «հայլանդուրք»: Մեր կարծիքով այս «հայլանդուրքը» կելտական բառ է (highlander,) որ նշանակում է «լեռնաբնակ»⁶¹: Այժմ էլ դեռևս այդպես

56 «Եղիշեի վասն վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1952, էջ 12, 141, 198, 57 Յ. Մարկվարտը «խայլանդուրք»-ը բացատրել է որպես «հոնաց արքայական հոր-

քա» (տե՛ս Eranschahr nach der Geographie des Ps. Moses Chorenaci, Berlin) 1901, s. 96.

58 Մ. Սերգոյի կարծիքով՝ «խայլանդուրք» նշանակում է՝ «ընտիր թուրքեր» (տե՛ս Երևան 1952 թ. «Известия АН Азерб. ССР», серия общ. наук, 1965, № 6. и сталапы нагында. «Известия АН Азерб. ССР», серия общ. наук, 1968, № 4, с. 121.

59 В. Гукасян, К освещению некоторых вопросов истории Азербайджана в монографии «Азербайджан в VII—IX вв.». «Известия АН Азерб. ССР», серия общ. наук, 1968, № 4, с. 121.

60 Մատենադարան, ձեռ. № 1890 (1174 թվականից), 4809 (1310 թ.), 1920 (1569 թ.), 1862 (1641 թ.), 1404 (1664 թ.), 2639 (ժէ դար), 1839 (1675 թ.), 1482 (1878 թ.), 4351 (1689 թ.), 4584 (1688 թ.), 573 (ժէ դար), 1458 (1705 թ.):

61 «Բառարան անգղիարէն եւ հայերէն», աշխատասիրեալ ի Տ. Յարութիւն վ. Ազե-րեան, Վենետիկ, 1868, էջ 362 ք: «Англо-русский словарь», составил В. К. Мюллер, М., 1962, с. 476; «Англо-русский словарь», под ред. О. С. Ахмановой, М., 1968, с. 257.

ևն կոչվում Ետուանդիայի (հին Ալբանիայի) լեռնային մասերի բնակիչները: Իսկ «հայլանդր», ինչպես կելտերի, այնպես էլ նրանց ժառանգորդ անգլիացիների լեզվով նշանակում է «լեռնաստան», «բարձրագիր տեղ»:

Այս ուշագրավ փաստը (եթե ճիշտ է նրան տրված մեր մեկնաբանությունը գալիս է մի անգամ ևս շեշտելու կելտ-գաղատացիների սերտ կապը Կովկասի հետ և առավել հաստատուն հիմքի վրա դնելու արևելյան Անդրկովկասի անդրկուրյան տարածքին նրանց տված «Ալբանիա» տեղանվան իսկությունը:

Հետագայում, երբ եկվոր թուրքական ցեղերն ամրացան Կուրի ավազանում և հին Ալբանիայի գաշտային մասի բնակիչ ցեղերին մասամբ ձուլեցին իրենց մեջ, մասամբ էլ մղեցին դեպի հյուսիս՝ նրանց առավել լեռնոտ բնաշխարհը, — Ալբանիան բաժանվեց երկու մասի՝ հարավային կամ հարթավայրային, որը վաղուց ի վեր կոչվում էր Շիրվան, և լեռնային, որի համար եկվորները նոր անուն չփնտրեցին, այլ թարգմանեցին հին հայտնի երկրանունը՝ «Ալբանիա» — «լեռների երկիրը»՝ «Դադասան»:

Այսպիսով, «Ալբանիա» չի նշանակել «ալբանների երկիր»: Այն, մեր կարծիքով, կելտական «լեռների երկիր» անունն է, որից էլ երկրի բնակիչները կոչվել են «ալբանցիներ»: «Ալբանիան» էթնիկական անուն էլ չէ, բանի որ ըստ Ստրաբոնի՝ ալբանցիներ էին Ալբանիա երկրում բնակվող 26 ցեղերը:

Այժմ տեսնենք, թե ի՛նչ ըմբռնումներ կային «Ալբանիա» երկրի, նրա բնիկների ու սրանց ներքին կյանքի մասին իրենց մերձավորագույն հարևանի՝ Հայաստանի մեջ:

Փավստոս Բուզանդը ճանաչում է Կուրից հյուսիս բնակվող տարալեզու խառնիճադան ջեղերին, որոնց գլխավորն էր Մաղթթաց թագավորը, և սրա երկիրը Հայաստանի հետ սահմանակից էր Կուր գետով. «Մեկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին»⁶²:

Նախամարդպանական իրականությունից խոսելիս Բուզանդն անդրկուրյան երկրի Աղվանք անունն էլ է տալիս: Պատմում է, որ Պապ թագավորը (368—374 թթ.) և ապարապետ Մուշեղ Մամիկոնյանը վերանվաճում են Արշակ Բ-ի դեմ ապստամբած գավառները «և զԿուր գետ՝ որպէս

62 Բուզանդ, էջ 24.

և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»⁶³,

IV դարի առաջին կեսին հայոց հյուսիսարեւելյան նահանգների կախկոպութեամբ Գրիգորիսը գնացել էր Մազքթից երկիրը՝ այնտեղ քրիստոնեություն տարածելու: Բարբարոսները նրան տանջամահ արին: Այն ժամանակ Գրիգորիսի հետ գնացած սարկավագները նրա մարմինը տեղափոխեցին Արցախի Հարանդ գավառը եթեպոստիան Ամարաս ավանում: Սա, իհարկե, նախամարզական շրջանի իրողությունն է: Մինչդեռ այս պատմությունն անելիս Փավստոսն արդեն օգտվում է մարզպանական ժամանակի տարբերակումներից և Արցախի Հարանդ գավառը դնում «Աղվանից կողմանց» մեջ, միաժամանակ շնորհակալ զգուշացնել, որ դա հայոց սահմանների ներսում է. սարկավագները Գրիգորիսի մարմինը «...բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հարանդ, ի գէօղն որ անուանեալ կոչի Ամարադ»⁶⁴:

«Աղվանքի» մասին հայ մատենագրության մեջ հղած տեղեկությունների հիմնական ակունքը Մովսես Խորենացու բացատրությունն է, որը հասկանալի կնշանակի շիտակ ելակետ ունենալ արևելյան Անդրկովկասի հին պատմությունը ճիշտ բացատրելու համար:

Խորենացին Մեծ Հայքի պետության արևելյան նահանգների վրա կարգված առաջին կուսակալ-իշխան է ձանաչում Առանին, որ հայկազուն Սիսակի զավակներից է, ապա գտնում է, որ Առանի սերունդներից են առաջացել այդ գավառների իշխանական տները, ինչպես նաև Ռուսիքի բնակչությունը:

Ըստ Կ. Վ. Տրեբերի բացատրության, Խորենացին ասել է՝ Առանն Ալբանիայի առասպելական-ավանդական թագավորն է, որի անուշ (աղու) բարբից առաջացել է «Ալբանիա» տեղանունը⁶⁵: Գիտնականը կարծում է, որ «Առան»-ը լույս է սփռում մինչև այժմ շրտված այն հարցի վրա, թե ինչպե՞ս են հնում իրենք իրենց կոչել արևմտեցիները. «Հնարավոր է, որ երկիրն իսկապես կրել է ավանդական նախնի Առանի անունը, իսկ հույներն ու հռոմեացիները կարող էին այդ անվանը տալ իրենց լեզուներին մոտիկ հնչողություն»⁶⁶, Ալսաքանից հետո էլ Տրեբերը գտնում է, որ Առանի ժա-

նունգներից են սերվել «հիմնականում Կուրի ձախ ափին բնակվող ցեղերը»⁶⁷, և «Առանն ավանդական նախահայրն է (родоначальник) ալբանական ցեղերի»⁶⁸:

Կ. Վ. Տրեբերն Առանի ու նրա հոր՝ Սիսակի շուրջն ստեղծած այսօրինակ տեսությունն վրա հնարավոր է համարում կառուցել մի վարկած, որով, իբր թե, «ըստ Մովսես Խորենացու «Սիսական» կամ «Սյունիք» էր կոչվում Հայաստանի ու Արցախի միջև, Սեանից հարավ գտնվող այն մարզը, որը նախապես չի մտել արևմտական ցեղային միության մեջ»⁶⁹:

Ուրեմն, պարզվում է, որ, ըստ Խորենացու, Սյունիքն ու Արցախը Հայաստան չէին. Արցախը մտնում էր արևմտական ցեղային միության մեջ, և միայն Սյունիքն էր, որ չէր մտնում, բայց չէր մտնում նաև Հայաստանի՝ մեջ, քանի որ գտնվում էր «Հայաստանի ու Արցախի միջև»: Եվ այս բոլորն էլ, իբր թե, ըստ Մովսես Խորենացու:

Իջականում, ըստ Մովսես Խորենացու, Մեծ Հայքի միասնական պետության հիմնադիր Վաղարշակ թագավորը կարգավորում է իր տերության սահմանները, ապա իշխաններ ու կուսակալներ է նշանակում երկրի բոլոր նահանգների վրա: Պատմահայրն այս ամենի մասին խոսելուց առաջ հավաստացնում է, որ ինքը պատմում է ճշմարիտ պատմություն՝ հեռու առասպելական դատարկարանությունից. «Այս դրուագ մեծ և հաւաստի պատմութեամբ լի, և արժանի բանից ողորկագունից և յուղվից... թողում զառասպելացն բազաղանս»⁷⁰: Այս հավաստիացումից հետո նա տեղեկացնում է, որ Վաղարշակի տերությունը հիմնականում ընդգրկում էր հայ ժողովրդին, որովհետև թագավորն իր երկրի համար սահման էր գծել հայոց լեզվի տարածման եզերքներով՝ «զեզերք հայկական խօսիցս»: Եվ ահա հենց այսպես. «զեզերք հայկական խօսիցս ... զարևելից հիսխսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զգաշտն մեծ, որ անուանի Կուր»⁷¹:

Այնուհետև Խորենացին նշում է, որ իր պատմության առաջին զբրքում մոռացել է հիշատակել այս տոհմը, այսինքն՝ Սիսակից սերված այն զունդը, որ ժառանգել էր Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը՝ Սրասխ դեռից մինչև Հնարակիրտ ամրոցը, որը գտնվում էր Կուրի

63 Անդ, էջ 314: Թուն Աղվանք-Ալբանիայի սահմանների բնությունը տե՛ս Ե. Ալսաքան. О границах древнего Арванка. «Թանրիք նրեանի համալսարանի», 1979, № 1, էջ 109—124:

64 Թուգանդ, էջ 23:

65 Կ. Վ. Տրեբեր. նշվ. գիրքը, էջ 4:

66 Անդ, էջ 186:

67 Անդ, էջ 66:

68 Անդ, էջ 144:

69 Անդ, էջ 146:

70 Խորենացի, էջ 109:

71 Անդ, էջ 111—113:

վրա. «Բայց զայս դիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն հոգ մեզ յառաջնումն մատենին յիշատակել զգունդն, որ ի Սիսական, որ ժառանգեաց զգաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին զաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի ազու ձայնէին զնա»⁷²:

Ուրեմն, Սիսակից սերված Առանը կուսակալ կարգվեց Երասխից մինչև Կուր գետն ընկած երկրամասի վրա (երկու անգամ շեշտվում է հյուսիսային սահմանը. մեկ՝ Կուրը. մեկ էլ՝ Հնարակերտը, որ Կուրի վրա էր)⁷³: Պատմահայրը միաժամանակ վկայում է, թե ասում են՝ Առանի սերունդներից են սերվել ուտիացիները, նաև Գարդմանքի, Մավզիից (Արցախի) և Գուգարացոց իշխանությունները. «Ե սոցա զաւակաց ասեն սերնալ զազն ուտեացոց և Գարդմանացոց և Մաւզեացոց և Գուգարացոց իշխանութիւնսն»⁷⁴:

Իհարկե, Խորենացիով «Ալբանիայի» ու «Աղվանքի» հարցը չի լուծվում, սակայն պարզվում է երկու շատ կարևոր հանգամանք. մեկ՝ որ հայկական աղբյուրների «Աղվանք» տեղանունը, որքան էլ ծագամամբ նույնանա հունահռոմեական հեղինակների «Ալբանիայի» հետ, գործածության ոլորտով, կիրառությամբ, իսկ մարդպանության շրջանի առումով՝ սկզբունքորեն, տարբերվում է նրանից:

Երկրորդ, որ «Աղվանք» տեղանունը երկրամասի բնակչության ցեղային նկարագրի հետ ոչ մի կապ չունի, որովհետև, եթե մինչև այսօր

հետազոտողները, որոշ բացառությամբ, «Աղվանք» ասելով հասկանում էին այն երկիրը, ուր, իբր, թե, աղվաններ կամ ալբաններ են բնակվել, ապա Խորենացու նշած վերահիշյալ Աղվանքը հայկական երկրամաս է, հայոց լեզվի սահմանների մեջ ընդգրկված աշխարհ: Չմոռանանք, որ Խորենացին դրան զուգահեռ, երբեմն էլ Աղվանք ասելով հասկանում էրուն Աղվանքը:

Հնարավոր է, որ պատմիչն այս անվան բացատրության մեջ օգտագործել է միայն առասպելական-ավանդական վարկածը: Սակայն միանգամայն պարզ է նաև մի այլ բան. որ նա ուրիշ ելք կամ ճշմարիտ բացատրություն չի տեսել, որովհետև, եթե երկրամասի ցեղային պատմությանը համապատասխան բացատրություն հուշեր, դժվար թե նա հրավեր այդ բացատրությունից, բանի որ «Պատմության» տասնյակ էջերում իր ժամանակ արդեն հայացած այս կամ այն զավառի բնակչության, այս կամ այն իշխանական տոհմի ոչ հայկական անցյալը ներկայացնում է ամենայն մանրամասնությամբ:

Ուշագրավ է, որ սկսած Խորենացու պատմությունից՝ հայ աղբյուրները Աղվանք ասելիս հիմնականում հասկացել են աշափնյա հայկական զավառները: Այս պարադոքս արձանագրել են ինչպես հայ պատմաբաններից ու բանասերներից շատերը, այնպես էլ այլազգի ուսումնասիրողներ Ի. Շոպենը, Կ. Գանը, Ս. Յուշկովը⁷⁵:

Ջարմանալին այն է, որ այսբանից հետո և հատկապես այն բանից հետո, երբ հենց «Աղվանից աշխարհի պատմության» առաջին իսկ էջերում կարգում են, թե Աղվանք է «ի գետէն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ» (Կուրի վրա)⁷⁶, — վերցնում ու Կուրից հյուսիս ընկած Կովկասյան Ալբանիայի, նրա թագավորության ու բնակիչ ցեղերի պատմությունն են գրում, հիմնականում քաղելով Մովսես Կաղանկատվացու գրքի տեղեկությունները՝ որպես իբր թե հին Աղվանքի մասին խոսող նյութեր:

Ընթերցողին ենք թողնում զատելու, թե ինչպիսի՞ մոլորություն է այսպիսի պատմությունը, որ գրվել է տարիներ շարունակ և դեռ ոմանց կողմից գրվում է մեր օրերում:

Զի կարելի ասել, թե հակառակը չի կատարվել: Լեոն էլ, օրինակ, Ալբանիայի մասին Ստրաբոնի ու հունահռոմեական մյուս հեղինակների

75 С. В. Юшков, К вопросу о границах..., с. 137.
76 Կաղանկատվացի, էջ 14: Ճիշտ է, «Աղվանքի պատմության» մեջ նկատվում է նաև մարդպանական Աղվանքն իր անցյալով հաշի տանելու որոշակի միտում, սակայն դա այնտեղ որակ չի կազմում:

72 Անդ, էջ 113:
73 2. Մանանդյան. Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 308—309, J. Markwart, Das itinare von Artaxata nach Artastica, Wien 1928, էջ 30—31, К. В. Тресер, Черки, էջ 145 և հա. «Աշխարհացոյց», էջ 63:

74 Խորենացի, էջ 113: Այս հրատարակության մեջ «գուգարացոց»-ի փոխ. տպված է «գարգարացոց», որ սխալ է: Խոսքը վերաբերում է Գուգարքին. տե՛ս «Մովսէսի Խորենացու Մատենագրութիւնը», Վենետիկ, 1865, էջ 193, 258. նաև՝ 2. Համբարձում, Գարգարացի՞ր. թե՞ Գուգարացիք» («Հանդես ամսօրյա», 1910, էջ 242): Մ. էմիլը այս նույն հասովածի վերջին նախադասությունը ուսերեն է թարգմանել այսպես. «Гонорят, что от потомков Арана происходят племена ути, гардманя, цодеи и княжество Гаргарское (իմա՛ Գուգարское—Բ. ՌԻ.), տե՛ն М. Хоренский, История Армения, пер. Н. О. Эмина, М., 1893, кн. II, гл. VIII. Խորենացու երկում ոչ թե «племена» է, այլ «племя» («գազգն Ուտեացոց»-«племя утийцев») և ոչ թե «княжество» է, այլ «княжества» («իշխանութիւնսն»- հոգնակի թվի հայցական հոլովը, որ վերաբերում է երեքին՝ «Գարդմանացոց, Մաւզեացոց և Գուգարացոց»):

տեղեկություններն էր տարածում աշափնյա հայկական գավառների վրա, և հետևանքը լինում էր այն, որ Արցախի բնակիչներ էին կնքվում ալբանական ցեղերն իրենց քաղաքական կյանքով ու կենցաղով:

Սակայն, եթե կեռի ժամանակի աղբյուրագիտական անբավարար մակարդակը նման թյուրիմացությունների տեղիք տալիս էր, ապա այսօր հրատարակի վրա են անհամեմատ մեծ թվով հայ ու օտար աղբյուրներ, որոնց առկայությունը ոչ մի կերպ չի կարելի հաշտվել վերոհիշյալ հակապատմական մոլորությունների հետ:

Մեր այն մատենագիրները, որոնք Աղվանք ասելիս հիմնականում հասկանում էին Կուրի աշափնյակը, ձախափնյակի համար հաճախ գործ էին ածում կփինք և Մազքթաց աշխարհ (կամ Չող) անունները: Որինակ, Կաղանկատվացու Պատմության մեջ «Ալբանիայի» փոխարեն տիրական է «կփինք», «կփնաց աշխարհ», որը բնում է անդրկուրյան Ալբանիա երկրի արևմտյան մասը և հարավից Աղվանքին սահմանակից է Կուր գետով: Աղվանքի թշնամիները Կուրն անցնում են, մտնում Ուտիք, և «ինքեանք անդրէն դարձեալ՝ բնակէին ի կողմանս գաշտին առ սահմանօքն կփնաց»⁷⁷, Աղվանքի բանագնացներն իրենց երկրի սահմանն շրջող գետն մեծ Կուր» անցնում են, ապա այդ սահմանից հետո տասներկու օր քալում կփնաց երկրով, մինչև հասնում են նրանց մայրաքաղաքը⁷⁸:

Միայն Կաղանկատվացին չէ, որ Աղվանքի հյուսիսային հարևան է ճանաչում կփնաց աշխարհը:

Կովկասագետ Շոպենն այն համոզմունքն է հայտնել, թե «կփինք-լքնիա» անվան մեջ «չի կարելի շճանաչել խաթարված վանկական «Ալպանիա», «Ալբանիա» կամ «Ալանիա» բառը»⁷⁹:

Շոպենից յոթնասուուն տարի հետո «Ալբանիա-լքնիա-կփինք» հարցին անդրադարձավ Ս. Վ. Յուզկովը և նա էլ, Շոպենի կարծիքին անտեղյակ, իր հերթին հաստատեց, որ «լքնիան (կփինքը) Ալբանիա բառի ձևափոխությունն է»⁸⁰, Իսկ Ս. Ս. Երեմյանը 1939 թ., համադրելով մի շարք տեղանուններ, վերստին հաստատեց «Ալբանիա»—«լքնիա»—«կփինք» բառերի նույնությունը⁸¹:

77 Նույն տեղում, էջ 263:

78 Նույն տեղում, էջ 270:

79 Н. Шопен, 224. աշխ., էջ 373:

80 С. В. Юшков, 224. աշխ., էջ 137—138:

81 С. Т. Еремьян, Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу, с. 148—149.

Հունահռոմեական հեղինակների Ալբանիա երկրի արևելյան մասը հայկական աղբյուրներում և հատկապես Աղվանքի պատմության մեջ կոչվում է Մազքթաց աշխարհ կամ Չող (Չող մայրաքաղաքի անունից): Այստեղ էր նստում ալբանական կոչված Արշակունի թագավորական սունը, որին հաճախ էր հաջողվում գտնել ամբողջ անդրկուրյան երկրի ալբանական ցեղերի գլխավորը⁸²:

Ուրեմն, հայկական աղբյուրները, որոնք օտարների համեմատությամբ ավելի հանգամանորեն գիտին անդրկուրյան երկիրը, այնտեղ տեսնում էին հիմնականում երկու խոշոր միավոր՝ կփինք (որն Ալբանիա անվան հայկական մի այլ ձևափոխությունն է) և Մազքթաց երկիրը՝ Չող կամ Չոր մայրաքաղաքով: Այս հանգամանքը հաստատող ամենագործավոր վիպություններից է Աղվանից կաթողիկոսության տիտղոսանիշը, որի մեջ առկա էր այդ կաթողիկոսությանը ենթակա երկրամասի վարչական բաժանման պատկերը. 551 թ. սկսած «կալան սովորութիւն գրել ի պարուակի թղթոյն «Աղուանից, կփնաց և Չողայ կաթողիկոսի»⁸³, Մա այլ բան չէր նշանակում, քան արևելյան Անդրկովկասում վարչական երեք միավոր տեսնելը: Գրանցից երկուսը վերոհիշյալ կփինքն ու Մազքութը—Չորն էին, որոնք ընդգրկում էին հունահռոմեական աղբյուրների ճանաչած Ալբանիա երկիրը: Իսկ երրորդը հայկական աղբյուրների Աղվանքն էր կամ Կուրի ու Երասխի միջագետքը:

Ինչ վերաբերում է «Առան», «Աբան», «Ռանի», «Ալ-Ռան» խմբին, պետք է հաստատապես ասել, որ այս բոլորի հիմքը հայկական «Առանն» է՝ իր ավանդական-պատմական հիմքով ու տրամաբանությամբ:

«Առան» անվամբ կոչվել է Արցախի կենտրոնական ու ամենամեծ գավառը՝ Մեծ-Առանը: «Առան»-ը մտնում էր նաև Ուտիքի Առանոտ (Առան-ոտ), Առանձակ (Առան-ձակ) գավառանունների մեջ: Հնարավոր է, որ այս երկու նահանգները միասին էլ հնուց ի վեր կոչված լինեին Առան ընդհանուր անունով, որովհետև, ինչպես վերը՝ Խորենացու վիպությունը քննելիս տեսանք, հայկական ավանդությունն Առան նախնուց սերված էր համարում այս գավառների հայ բնակչությունը, ինչպես նաև նրանց հայ իշխանական տները (Առանշահիքները):

Առան ասելով Կուրի աշափնյակն էին հասկանում նաև վրացի⁸⁴ ու պարսիկ հեղինակները: Պարսկական հինավուրց մի աղբյուր՝ Զրադաշ-

82 Բուզանդ, էջ 24, Խոսեմագի, էջ 258, 266 և հտ.:

83 Կաղանկատուացի, էջ 392:

84 Տե՛ս «Համատես պատմութիւն վրաց՝ ընծայեալ Զուանշլիի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 29, 73, 75:

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ, ԵԶՐԸ,
ԵԶԵՐԱՊԱՀ ԱՐՏԱՆԱՅԻՆ ԲԱՐՔԱՌԸ ԵՎ
ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ**

Ամեն մի լեզու արտացոլում է իրենով խոսող ժողովրդի կյանքի ու պատմության կարևորագույն երևույթները: Եվ դժվար է լիովին հասկանալ մի ժողովրդի պատմությունը, առանց նրա լեզվի (ինչպես նաև մշակութային մյուս երևույթների) խորքերը հետազոտելու:

Եթե լեզուն ազգի հոգու և պատմության կենդանի վկայությունն է, ապա բարբառն էլ ճիշտ այդպիսի նշանակություն ունի ազգի այն հատվածի համար, որը խոսում է այդ բարբառով: Հաճախ այդ բարբառն ամենայն պարզությամբ դրսևորում է ամբողջ ազգի և մասնավորապես՝ իրենով խոսող հատվածի պատմական ճակատագրի մակերևացություններն ու տեղատվությունները:

Փորձենք այս հայեցակետից նայել հայոց լեզվի արցախային-ղարաբաղյան բարբառին:

Լեզվաբանները հայոց բարբառներից կամ հին խոսքով ասած՝ եղերական լեզուներից ամենամեծն են համարում Արցախի (հունագույն Ղարաբաղի) բարբառը: Նրա «սահմանները կը փոփին հյուսիսեն մինչև Կովկասի վերջին ծայրերը, հարավեն մինչև Քավրիզ, արևելքեն մինչև Կասպից ծովին եզերքները, արևմուտքեն Սևանա լիճը և Երևանի ու Կարնո բարբառներու սահմանագիծը»¹: Այս սահմանները գծելուց հետո Հր. Աճառյանը հիշում է, որ Ղարաբաղի բարբառը զարաբաղցի արտագնաց դանդախների հետ հորդացել է նաև հիշյալ սահմաններից դուրս, տարածվել փոքրասիական Զմյուռնիայի և Ալյոքի մոտերքի հայկական

դաղթավայրերում, միջինասիական հանրապետություններում, Ռուսաստանում և այլուր: Աճառյանի վկայությամբ՝ Փոքր Ասիայի Պուրտուր և էոսեմիշ վայրերում դեռևս պահպանվում է այդ բարբառը՝ այնտեղ ապրող հին զարաբաղցիների շուրթերին²:

Հստ Հր. Աճառյանի՝ Ղարաբաղի խոսվածքը ևս պատկանում է Ղարաբաղի բարբառին: Վերջինիս շատ մոտիկ է նաև այն ենթաբարբառը, որով խոսում են «Քավրիզի մոտիկ Մուժումբար դյուղը և Քավրիզի Լիլանա թաղին հայությունը, որ ձևացած է Ղարաբաղի և Մուժումբարի հայ գաղթականներին»³: Այս վայրերը, ինչպես ճիշտ նկատում է անվանի գիտնականը, հին Փայտակարանի մասերն են և, բնականաբար, պահպանել են Մեծ Հայքի Փայտակարան գավառի հայության բեկորները, որոնք հարյուրամյակների ընթացքում չեն կորցրել իրենց ավանդական մայրենի լեզուն:

Ար. Ղարաբյանը լեզվաբանական քննությամբ ցույց է տվել, որ արցախ-ղարաբաղյան բարբառին է պատկանում նաև Զանգեզուրի ենթաբարբառը⁴, որը տարածված է հին Սյունյաց աշխարհում (Մեծ Սյունիք): Նա էլ իր հերթին մի ընդարձակ քարտեզ է գծում արցախական բարբառի տիրապետության սահմանները ցույց տալու համար: «Ղարաբառի տիրապետության սահմաններից ամենամեծն է... Այդ բարբառով խոսում են Ղարաբաղի բնակչությունը և բոլոր այն զարաբաղցիները, որ գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու ցիները, որ գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջանում, Քուրբմենաստանում, Ուղբեկստանում և Տաշկիստանում, նաև Զանգեզուրի և Կասպանի բնակիչները, Կիրովաբադի շրջանի բնակչությունը, Շամշադինի, Դիլիջանի շրջանների բնակչությունը»⁵:

Պետք է ուշադրության առնել. եթե հին ու նոր դաղթավայրերը հա-

³ Լեզվաբան Ներսես Մկրտչյանը հրատարակել է իր հետազոտությունն այս բարբառի մասին («Քուրբուրի բարբառը», Ե., 1971): Հաստատելով Հր. Աճառյանի հաղորդած բարբառի ու նրանով խոսած համայնքի մասին, նա ավելացնում է նաև, որ «Քուրբառը ու Օթեմիշը, իբրև «ղարաբաղյան» ծագում ունեցող գաղթաբնակներ, բացառություն չեն եղել Արևմտյան Անատոլիայում, և նման գաղթաբնակների թիվը շուրջ տասնհինգն է՝ Անթալյա, Բոլու, Գասաբա, Գենիզլի, Դիլիսար, Դովրեկ, Դուզլի, Զոնգուլդազ, Էլձալու, Էրեյլի, Իսփարթա, Նազիլի, Քըրք-Աղաջ» (անդ, էջ 7):

⁴ Հետազոտողի հղրակացությունն այն է, որ հիշյալ գաղթաբնակների խոսվածքները, որոշ ընդհանրություններով հանդերձ, արդեն նախքան տարբերվում էին ինչպես իրարից, այնպես էլ մայր բարբառից:

⁵ Հր. Աճառյան, նույն տեղում, էջ 61:

⁶ Ար. Ղարաբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 232—233:

⁷ Անդ, էջ 230:

¹ Գրքիս այս դրույթը լույս է տեսել որպես առանձին ուսումնասիրություն (անհ. լրագրի հաս. գիտությունների», 1968, № 1):

² Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն (սեմիոտիկական ազգագրական ժողովածու, հատ. Ը, Մոսկվա—Կախիչկան), 1911, էջ 61:

նենք, ապա արցախ-ղարաբաղյան բարբառի տարածման սահմանների մեջ կմնան Մեծ Սյունիքը, Արցախը (Փոքր Սյունիքը), Փայտակարանը և Ուտիքը (Կիրովաբադն ու շրջակա հայաբնակ վայրերը), այսինքն՝ Հայոց արևելից կողմանքը և Սյունիքը, հայկական ազգագրական անտրոհելի մի ամբողջություն, որ սկսած V դարի սկզբից՝ պարբերաբար կտրվում էր ազգային մայր միջավայրից, անջրպետվում աշխարհագրական-բաղաբաղական հազար ու մի արգելափակով, սակայն չէր կորցնում իր հայկական ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև տեղական ինքնատիպ ու անկրկնելի պատկերը:

Իսկապես ուշագրավ երևույթ է. ի հեծուկս դոժան ճակատագրի, ընդգնմ ասիմիլյատոր մեծ ու փոքր բազմաթիվ բնագրավիչների՝ բարբառը դիմացել է դարեր շարունակ և անգրավ ու անխաթար պահել իր հնամենի աշխարհագրությունը, իսկ եթե խորը նայենք, այն իր մեջ կարտացոյի նաև իրենով խոսող հայության պատմական կյանքի կարևորագույն դարձդարձումները:

Քանի որ տեսանք, թե ինչպես արցախային-ղարաբաղյան բարբառը խոսակցական լեզուն է ոչ միայն Արցախի, այլև ամբողջ Հայոց արևելից կողմանց բնակչության, ապա հետագայում արցախային բարբառի տակ պետք է հասկանանք հենց ամբողջ այդ բնակչության լեզուն, առանց նկատի առնելու նրա առանձին հատվածների խոսվածքային մասնակի տարբերությունները:

Արցախ-ղարաբաղյան բարբառը նշանավոր է ոչ միայն ընդգրկած բնակչության քանակով, այլև որ հայ ամենահարուստ ու ամենաճկուն բարբառներից մեկն է և, թերևս, ամենակենսունակն ու ամենահամար:

Հր. Աճառյանը ղարաբաղցիներին, ավելի ճիշտ՝ Ղարաբաղի բարբառով խոսողներին, համարում է «շատ աճուն, խիստ վաճառական, ճարպիկ, ընդունակ և ձեռներեց ոգիի տեր մի ժողովուրդ»⁷, նրանք հեշտությամբ տիրապետում են լեզուներին, սակայն երբեք չեն մոռանում իրենց մայրենի բարբառը, նրանով խոսելը համարելով մի սրբազան պարտականություն, որը կատարելու բերկրանքից իրենց երբեք չեն ուզում զրկել:

Իրավացի էր լեռն, երբ գրում էր, թե «Ուր կա ղարաբաղցի, նրա հեռա ապրում է իր պապենական մեծ ու հարուստ ժառանգությունը՝ ղարաբաղցու բարբառը, ուժեղ, կոպիտ՝ ինչպես լեռնական մի ստեղծագործություն, Նյութեղ, իր առանձին համ ու հոտով»⁸:

Եվ այս պատճառով է, որ Արցախային բարբառը պահպանվել է ոչ միայն բնաշխարհում, այլև ամենուր, որտեղ ոտք է դրել և իր ծուխն է երկինք հանել նրանով խոսող թեկուզև մեկ ընտանիք: Այստեղ մեր խոսքը թերևս միակողմանի է, քանի որ ոչ միայն խոսողն է պահել ու պաշտպանել իր բարբառը, այլև բարբառն է պահել ու պաշտպանել իրենով խոսողին: Այս երկու պահող-պաշտպանողներից մեկին նախապատվություն տալ՝ կնշանակի մեղանշել արդարության դեմ:

Սակայն, որքան էլ տարօրինակ լինի, մինչև օրս այդ բարբառի պատմությունը բազմակողմանի քննության չի ենթարկվել: Հայ բարբառների ուսումնասիրությանը նվիրված իր գրքում Քերովյան Պատկանյանը կատարել է Ղարաբաղի բարբառի քննության առաջին փորձը, նրան նվիրելով գրքի մի գլուխը⁹: 1883 թ. Ղարաբաղի բարբառով հրատարակած «Պըլը-Պուղի» ժողովածուի հետ Մ. Բարխուտարյանցը ներկայացրել է բարբառի «մի համառոտագույն քերականություն», նկատի առնելով, «որ դրականական ասպարիզում առաջին անգամն է, որ մեր սիրելի ընթերցողը կծանոթանան Ղարաբաղի գավառական բարբառին»¹⁰, Ապա Հր. Աճառյանն է գրել Ղարաբաղի բարբառի առաջին լուրջ ուսումնասիրությունը¹¹: Այս գրքի վրա, ինչպես ինքը՝ Հր. Աճառյանն է վկայում, «հայագետ Մեյլէ հրատարակեց ընդարձակ մատենախոսական մը... որ ի վեր կը հանն Ղարաբաղի բարբառին ցույց տված բոլոր հետաքրքիր և ընդհանուր ձայնաբանության համար կարևոր կետերը»¹²:

Աճառյանի հաջորդ գործը, որ հայոց բարբառների ընդհանուր համակարգի մեջ քննում է նաև Ղարաբաղի բարբառի վիճակը, վերջ նրշված «Հայ բարբառագիտություն» մեծարժեք ուսումնասիրությունն է:

Այնուհետև Ղարաբաղի բարբառն իր արժանի տեղն է գրավում Հր. Աճառյանի բարբառագիտական դպրոցի հետևորդ Ար. Ղարիբյանի աշխատություններում¹³, որոնք այս բարբառը քննում են լայնորեն, հայտնաբերում նրա ներքին առանձնահատկությունները, նշում են են-

9 К. Патканов, Исследования о диалектах армянского языка, СПб., 1869.

10 Մ. Վ. Բարխուտարեանց, Պըլը-Պուղի, Քիֆուս, 1883, էջ 6:

11 Հր. Աճառյան, Քննութիւն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901 (արտատպւած «Արարատ»-ի 1899—1901-ի համարներից):

12 Հր. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, էջ 71:

13 Ար. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ (Նրբանի պետական համալսարանի գիտ. աշխատություններ, հատ. 11, 1939): նրա՝ Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:

7 Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 61:

8 «Փայլակ», 1917, մարտի 23, № 20:

Քարաբրանները, որանց փոխհարաբերություններն ու օրինաչափությունները¹⁴,

Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության բնագավառում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Կ. Ս. Գավթյանի գիրքը¹⁵, որը բարբառի հնչյունաբանական ու ձևաբանական բարեխիղճ քննությունն է և, միաժամանակ, գծում է նրա ենթաբարբառների ու խոսվածքների հանգամանալից քարտեզները:

Վերջերս երիտասարդ լեզվաբան Լ. Շ. Հովհաննիսյանը հրատարակեց իր հետազոտությունների արդյունքները, որոնք բանիմացություններ են ինչպես բարբառի ու գրարարի առնչությունների ընդհանուր պատկերը, այնպես էլ բարբառի վաղնջական վիճակը բնորոշող մի շարք էական հանգամանքներ: Ընդամին այս հետազոտությունները ևս հաստատում են, որ արցախ-ղարաբաղյան բարբառը հայերեն մայր լեզվից ելած հնագույն էյուզերից մեկն է, որը բարեբախտաբար իր բառապաշարում ու քերականական կառուցվածքում անհամեմատ շատ ապացույցներ է պահել մայր լեզվի ու շրջանի մշակված վիճակից՝ գրաբարից¹⁶:

Գծաբախտաբար, այսքանով ղեռնա չեն լուծվել արցախ-ղարաբաղյան բարբառի հետ կապված բոլոր հարցերը, բանի որ մինչև օրս էլ ոչ ոք չի զբաղվել նրա պատմությամբ: Հրատարակի վրա չկա շատ թե քիչ լուրջ մի գործ, որը ցույց տար, թե որտեղից է գալիս և ո՞ր է գնում այսօրվա հայության համարյա մեկ քառորդի ամենօրյա խոսակցական լեզուն:

Ընդհակառակը, մեր պատմաբաններն ու լեզվաբանները երբեմն.

14 Ար. Ղարիբջանը Ղարաբաղի բարբառի Հազրոթի խոսվածքի քննությամբ եկել է այն եզրակացության, որ այն չի մտնում Ղարաբաղի բարբառի ընդհանուր էյուզվածքի մեջ, այլ ներկայացուցիչն է հայ բարբառների «Ա» էյուզի մեր ինգրից դուրս է այս հարցի քննությունը, սակայն չենք կարող չնշել, որ Հազրոթի խոսվածքի գոնե այժմյան վիճակը նման եզրակացության համար հիմք չի տալիս, որովհետև նրա և ամբողջ զարաբաղյան բարբառի միակ տարրերությունն այն է, որ Հազրոթի խոսվածքի անկատար դերբալը միշտ է ավարտվում «Ա» մասնիկով, իսկ բարբառում մասամբ օրինակ. Հնդրոթի խոսվածքում՝ կլիրիս րմ (գրում են), Ղարաբաղի բարբառում՝ կլլրում րմ, բայց նաև կլրրիչիս րմ... Հազրոթի խոսվածքն առանձին բարբառ է համարում նաև Ա. Պաղոսյանը (տե՛ս նրա «Հազրոթի բարբառը» մենագր., Ե., 1965):

15 Կ. Գավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:

16 Լ. Շ. Հովհաննիսյան, Գրարարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջը, «ՊՅՀ», 1977, № 1, էջ 141—152: Խույնի՝ Բառային հնարանություններ Ղարաբաղի բարբառում. «Արարիք», 1979, № 9, էջ 52—60:

առանց խորանալու իրողությունների պատմական ընթացքի մեջ, իրենց առանձին աշխատություններում Հայոց արևելից կողմանց բնակչության պատմական անցյալի էթնիկական վիճակի, լեզվի և մշակութային այլ հարցերի առթիվ արտահայտել են սխալ կարծիքներ, թույլ տվել խեղաթյուրումներ ու դիտական ասպարեզ քաշել անհիմն վարկածներ, որոնք էլ, ըստ երևույթին, իրենց հերթին հիմք են հանդիսացել ուրիշների հակադիտական «տեսությունների» համար:

Այսպես, Լեռն, առանց պատմական որևէ հիմքի ու փաստի, իր աշխատություններում այն տեսակետն է հայտնել, թե Հայոց արևելից կողմանց (Արցախ, Ուտիք) հին բնակիչները եղել են աղվաններ և հայացել են հայոց քրիստոնեական ու լուսավորական միսիոներական գործունեության շնորհիվ: Լեռնի հետևելով էլ, հետագա պատմաբաններից ոմանք փորձում են ճշգրտել այդ դավառների բնակչության հայացման ժամանակը: Ս. Տ. Երեմյանը, օրինակ, այդ սլոցները կապելով Մեծ Հայքի տիրապետության հետ, հայացումն ավարտված է համարում մեկ IV—V դարերում¹⁷, մեկ էլ՝ VIII-ի սկզբին¹⁸:

Ս. Տ. Երեմյանը մի այլ աշխատության մեջ Ուտիքի ու Արցախի բնակչության «հայացման» ընթացքը ետ է տարել շուրջ մեկ հազարամյակով (սկսած մ. թ. ա. VIII դարից)՝ միանգամայն անկախ այդ մարզերի՝ կենտրոնացված Մեծ Հայքի թագավորության մեջ գտնվելու հանգամանքից¹⁹:

Ուշագրավ է, որ այս գիտնականներն իրենց տեսակետները հայտնելիս մի զարմանալի համառությամբ խուսափում են պատմական աղ-

17 «Очерки истории СССР (III—IX вв.)», М., 1958, с. 304: «Правобережье Албании (области Утик и Арцах) находилось почти шесть столетий в составе централизованного рабовладельческого государства Великой Армении и потому включилось в общий процесс арменизации. Область Арцах была уже арменизована в IV—V вв., а значительная часть области Утик—к VI в.»

18 Հևարթթի Է, որ Ս. Տ. Երեմյանն այստեղ չի մտնում վկայակոչել նաև Ստեփանոս Սյունեցու վկայությունը արցախային բարբառի մասին:

19 Նույն տեղում, էջ 328: «Во времени утверждения арабского владычества (начало VIII столетия)... население албанских областей Арцах и значительной части области Утик уже было ассимилировано армянами...»

Ուրեմն այս մարզերն աղվանական էին և հայերի կողմից ասիմիլացիայի էին ենթարկվել նախքան արաբական տիրապետության հաստատումը:

19 Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի Հայոց «Աշխարհացոյցը», «Մառը և հայագիտության հարցերը» ժողովածու, Ե., 1968, էջ 82:

բյուրների վկայություններից, այդ աղբյուրների հաղորդած արժանահավատ տեղեկությունների ու կոնկրետ փաստերի փոխարեն շրջանառության մեջ են դնում իրենց ենթադրություններն ու անհիմն վարկածները: Եվ այսպիսի պայմաններում է, որ հնարավոր է գարձել արցախյան բարբառի մասին ոչ անհայտ Տ. Ի. Տեր-Գրիգորյանի ու նրան հետևողների անհեթեթությունների հրապարակ գալը:

Տ. Ի. Տեր-Գրիգորյանը դեռևս 1939 թ. տպագրեց արցախ-ղարաբաղյան բարբառի գոյացման իր «տեսությունը», որի էությունը կաշանում է հետևյալի մեջ. «Գերազանցապես եկեղեցու և հոգևորականության միջոցով Հայաստանն իրականացրել է իր քաղաքական ու կուլտուրական ազդեցությունը Ղարաբաղի (ուզում է ասել՝ Արցախի—Բ. Ու.) վրա, և միայն հետագայում Հայաստանից արտաքսվածներն սկսել են Ղարաբաղ մուծել հայոց լեզուն, որը տեղական զարգացման և դարբարահաբեթական լեզվի հետ միախառնվելու շնորհիվ վերջին հաշվով տվել է ժամանակակից զարաբաղյան բարբառը, որով խոսում է ՂԿԽ-ի բնակչությունը»²⁰, Տ. Ի. Տեր-Գրիգորյանն անմիջապես ճշգրտում է «միայն հետագայում»-ը և, խոսելով արաբական տիրապետության ժամանակների մասին (650—950), ասում է. Արցախում «հաճախ էր թաքնվում Հայաստանի բնակչության մի մասը, որն այստեղ նստում էր և ափելի ու ափելի էր հայոց լեզուն ներմուծում Արցախ»²¹:

Այս մի ակնարկը ճշգրտելուց առաջ նա արդեն մատնել էր իր նպատակը՝ Արցախի բարբառը «զարգարահաբեթական լեզվի» վրա պատվաստելուց հետո նշելով, որ «ազդեցության և լեզուն ևս զարգացել է այդ նույն հաբեթական հիմքի վրա»²²:

Ուրեմն, Տ. Ի. Տեր-Գրիգորյանից իմացանք, որ ինչպես արցախ-ղարաբաղյան բարբառը, այնպես էլ ազդեցության և լեզուն գոյացել և զարգացել են միևնույն հաբեթական (տվյալ դեպքում՝ զարգարենի) հիմքի վրա:

Եթե մի քիչ ավելի պարզեցնելու լինենք Տ. Ի. Տեր-Գրիգորյանի միտքը, կստացվի այսպես. արաբական տիրապետության ժամանակ Հայաստանից արտաքսված (sic!) բնակչության մի մասը փախչում, ապաստանում է Արցախին, և այստեղի զարգար բնակչությունն էլ, երևի

կարևորներից դրզված, վերցնում-հայանում է: Իհարկե, այս կարևորությունը պատահական բան չէր, նախապատրաստված էր եկեղեցու և հոգևորականության կողմից, որովհետև այս արտաքսված գաղթականներից առաջ էլ Հայաստանից այստեղ էր մուծվել բրիտանականությունը²³:

Հրապարակվել են և դեռ շարունակում են գիտական, նույնիսկ մասսայական մամուլի էջերում հրապարակ գալ համանման ուրիշ կարծիքներ ևս: Սրանց մեջ յուրահատուկ ձևով առանձնանում են Ջ. Ի. Յամպոլսկու տեսակետները: Սակայն, նրանք, ինչպես վերը տեսանք, աննշումն շունեն ո՛չ պատմության, ո՛չ էլ առհասարակ գիտության հետ:

Տ. Ի. Տեր-Գրիգորյանի ու նրան հետևողների տեսակետը Արցախի բարբառի գոյացման մասին՝ ամփոփ ու խտացված արտահայտվել է հետևյալ ձևակերպման մեջ. «Քրիստոնեական եկեղեցու զորեղ ազդեցությունը հատկապես նկատվում է Արցախում: Հնուց ի վեր աղվանական ցեղերով բնակեցված այս մարզի վրա մեր թվարկության սկզբին ժամանակ առ ժամանակ իրենց տիրապետությունն են տարածում հայ-թագավորները, որոնք վարում էին տեղական բնակչությունը հայացնելու քաղաքականություն: Սակայն Ս; Ծախի ազդեցականությունն անկասելի էր ձգտում, և Հայկական թագավորության սաղմուքաղաքական հզորության թուլացմամբ մարզում վերականգնվեց աղվանական թագավորների իշխանությունը: Այսուհանդերձ, Արցախում, գլխավորապես նրա լեռնային մասում, ուժեղացավ հայոց լեզվի ազդեցությունը՝ կապված հայերի այստեղ ներհոսելու հետ: Աստիճանաբար լեզվի ունեցավ հայոց լեզվի և տեղական լեզուների միախառնումը, որի հետևանքով էլ ժամանակի ընթացքում տիրապետեց առաջինը, և կազմվեց ժամանակակից հայոց լեզվի զարաբաղյան բարբառը»²⁴:

Այս տեսակետի հեղինակները որպես «հայերի՝ Արցախի լեռնային մասերը ներհոսելու» միակ փաստ սովորաբար վկայակոչում են Եղիշեի այն տեղեկությունը, ըստ որի՝ վարդանանց ապստամբությունից հետո հայոց նախարարական տների մի մասը թաքնվել է Արցախի մանձրախիտ անտառներում («ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ»)՝²⁵: Ըստ որում զրույթունն այնպես է ներկայացվում, թե Արցախն օտար

²³ «Очерки истории СССР III—IX вв.», с. 323: «Христианские проповедники посылались в подчиненные ей (Армении—Б. У.) Албанские области Арцах, Утик, Баласаган».

²⁴ Азэрбайчан тарихи, I Կ., Баку, 1958, с. 93.

²⁵ Կղիշե, էջ 125:

²⁰ Т. И. Тер-Григорян, Нагорно-Карабахская автономная область. «Известия Аз. ФАН СССР». 1939, № 1, с. 14—15.

²¹ Անդ, էջ 17:

²² Անդ, էջ 15:

աշխարհ էր հայերի համար, և ամենածանր վտանգի պահին այս նախարարական ընտանիքները եկան, թաքնվեցին այդ օտար աշխարհ Արցախում ու մնացին այնքան, որ հետագայում էլ հասցրին հայացնել տեղացիներին:

Հասարակ տրամաբանությունն իսկ չի հաշտվի այսպիսի դատողությունների հետ, որովհետև ա) վտանգի ծանրագույն պահին մարդիկ չէին թաքնվի օտար երկրում, բ) թաքնվողները նախարարական տներին անգամներ էին և վտանգն անցնելուց հետո պիտի վերագանային իրենց տիրույթները: Համենայն դեպս, ո՛չ մի խոսք չկա այն մասին, թե նրանք մնացել են: Իսկ եթե մնացած լինեին, դա պատմիչի ուշադրությունից չէր վրիպի: Եվ, որ ամենակարևորն է, Եղիշին շատ կոնկրետ է ասում, որ հայ մարդիկ թաքնվել էին ո՛չ թե օտար աշխարհում, այլ իրենց հայրենի երկրի ամուր վայրերում, որոնցից մեկն էր և Արցախը: Ահա այդ հատվածը. «Քանզի բազումք յազգէ ի մեծ նախարարացն էին, և եղբայրք և որդիք և դստերք, հանդերձ ամենայն սիրելիօք իւրեանց ի մեջ ամբական վայրացն, ոմանք յանլոյս երկիրն նաղտնաց, և այլ բազումք ի կողմանս հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն Տմորիաց, և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ, և այլ ոմանք ի միջոց աշխարհին բոնացան ի վերայ բազում ամբողջացն»²⁶,

(«Քանի որ շատերը մեծ նախարարների տո՛մերից էին, եղբայրներ, որդիներ ու դստեր՝ իրենց բոլոր սիրելիներով հանդերձ՝ ամուր վայրերում [էին գտնվում], ոմանք Խաղտիքի անլույս երկրում, ուրիշ շատերը հարավային կողմերում՝ Տմորիքի անմատույց ամբողջներում, մի մասն Արցախի թանձրախիտ անտառներում, և ուրիշներն էլ այնտեղ՝ միջնաշխարհում տիրել էին շատ ամբողջներին»):

Մի՞թե այստեղից պարզ չէ, որ խոսքը նույն Հայաստանի տարբեր մասերին է վերաբերում, Խաղտից աշխարհին, հարավին՝ Տմորիքին, արևելյան նահանգ Արցախին և միջնաշխարհին՝ կենտրոնական մասին: Մանավանդ այս միջնաշխարհը («ի միջոց աշխարհին») ամեն ինչ գնում է իր տեղը, հաստատելով, որ մնացածներն էլ նույն երկրի ո՛չ միջնաշխարհն են՝ ծայրամասերը, որոնք միաժամանակ և ամուր վայրեր էին հանդիսանում:

Եղիշին այստեղ ոչ թե խոսում է վերոհիշյալ վարկածի օգտին, այլ, ընդհակառակը, հաստատում է, որ հայ նախարարական տներն ամբա-

ցել էին իրենց Հայաստան երկրի տարբեր մարզերում, և այդ մարզերից մեկն էլ Արցախն էր:

Հետագա ժամանակների առումով, հատկապես արաբական տիրապետության շրջանում Արցախում գաղթականություն չի արձանագրված ո՛չ հայ, ո՛չ էլ օտար սրբէ ազգյուրի կողմից:

Սակայն մենք կարծում ենք՝ այս գաղթականությունն հարցն առհասարակ մեջտեղ է բաշված հետազոտողների ուշադրությունը կոնկրետ պատմական աղբյուրներից ու նրանց հավաստի վկայություններից շեղելու համար: Այլապես ինչո՞վ բացատրել խուլ անտեսուժը պատմական Հայաստանի ու նրա նահանգների էթնիկական վիճակի մասին ժամանակակիցների պերճախոս վկայությունների և, դրա փոխարեն, ետին թվով կատարված ենթադրություններն ու առարկայազուրկ հայտարարությունները:

Կա ամբողջ աշխարհում ճանաչված ու վստահելի Տեղիճակ, որը մ. թ. ա. I դարի և մ. թ. արշալույսի Հայաստանը նկարագրել է որպես սկանառես, իր տեսածներին ու լսածներին էլ դուժարել նախորդ պատմաբանների ու աշխարհագետների բազմահարուստ տեղեկությունները: Դա հույն Ստրաբոնն է:

Մենք ծանոթացանք Հայաստանի ու Անդրկովկասի մասին նրա հաղորդած աշխարհագրական տեղեկություններին և տեսանք, թե նա որքան ճիշտ է գծում իր տեսած Հայաստանը՝ նրա կազմի մեջ ներկայացնելով նաև Շակաշեն-Ուտիքը և Օրխիստինա-Արցախը՝ որպես այդ երկրի իսկական բուն նահանգներ և ոչ թե ուրիշներից նվաճված երկրամասեր:

Մեծ Հայքի կենտրոնական նահանգները թվարկելուց հետո նա գրում է. «Հայաստանի կազմի մեջ են մտնում նաև հետևյալ մարզերը. Փավինան, Կոմիսինան և Օրխիստինան, որը (Օրխիստինան— Ք. Ու.) հանում է մեծաքանակ հեծելազոր»²⁷:

Ստրաբոնը Հայաստանի բնիկ, իսկական նահանգների թվարկումով չի բավարարվում, նշում է նաև իրենից շուրջ երկու դար առաջ հայ թագավորներ Արտաշեսի և Զարեհի կողմից հարևաններից նվաճված, այսինքն՝ Մեծ Հայքի կազմի մեջ մտցված երկրամասերը, ապա գրում. «Այս բոլոր ժողովուրդները հիմա խոսում են մեկ լեզվով»²⁸:

27 Ստրաբոն, XI, XIV, § 4:
28 Անդ.

Ի՞նչ խոսք, որ Ստրաբոնը, «մեկ լեզու» ասելով հասկանում է հայերենը:

Արտաշեսի և Զարեհի ժամանակներից անցել էր շուրջ երկու դար: Հնարավոր է, որ հարևաններից գրավված երկրամասերի ժողովուրդներն էլ խոսելիս լինեին հայերեն: Կամ՝ թերևս միայն նրանց ազնվականությունը, որից և ստեղծվել էր միասնական լեզվի մասին այսպիսի պատկերացում: Սակայն, որ բուն Հայաստանի նահանգներում, ուրեմն և Օրիսիստինա-Արցախում, ինչպես նաև Ուտիքում, արդեն խոսում էին հայերեն, դրա մեջ կասկածելու ոչ մի հիմք չկա:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ստրաբոնի «Աշխարհագրության» տեղեկությունները Կասպիանա-Փայտակարանի և նրա բնակչության լեզվի մասին: Այստեղ մեծ աշխարհագետի խոսքը կարիք ունի որոշ ճշգրտումի: Հետադոտողներն այդ անելու փոխարեն թյուրիմացությունն ավելի են խորացրել, ստեղծելով մի խառնաշփոթություն, որից հետո անհնար է պարզել, թե ո՞ւր գնացին կասպերը:

Ստրաբոնը մի տեղ ասում է՝ Կասպիանան ալբանցիների մարզերից է, որն այդպես է կոչվել այժմ վերացած ցեղի անունից, որով կոչվում է նաև ծովը (Կասպից)²⁹, Այսինքն՝ եղել է կասպ կոչվող ցեղ, որն այժմ վերացված է: Յանկուլյան գեպրում կարելի է հենց Ստրաբոնի տեղեկություններով էլ հաստատել, թե ինչպես է վերացել: Սակայն հետազոտողները գնացել են ոչ այդ ուղղությամբ, այլ կասպերին վերանվանել են ալբանցիներ, խառնելով վերջիններիս հետ և գտնելով, որ երկուսն էլ նույն ժողովուրդն են, առաջ կոչվել են կասպեր, հետո էլ՝ ալբանցիներ, իսկ էականում ոչինչ չի փոխվել³⁰:

Կասպերի մասին վկայում են հին հույներն ու հռոմեացիները՝ մինչև մ. թ. սկիզբն ընկած ժամանակներին վերաբերող իրենց տեղեկությունների մեջ: Օրինակ, Հերոդոտի վկայությամբ՝ կասպերը Հայաստանի հարևան բնիկ ցեղերից են, որոնք ենթարկվում են Գարեհի պետությանը³¹:

Ստրաբոնը կասպերի մասին վերջին վկայության հեղինակն է:

Աղբյուրները միահամուռ հաստատում են, որ Կասպիանա—Փայտակարանը տարածված է եղել Կասպից ծովի հարավարևմտյան ափին, և արևմուտքում հասել է մինչև Կուր ու Արաքս գետերի միախառնվելու վայրը: Այստեղից արևմուտք արդեն բուն Հայաստանն է: Կուրից հյու-

սիս էլ փոխված է եղել Ալբանիան: Մենք այսքանն արդեն հաստատել ենք աղբյուրներով:

Ուրեմն, Կասպիանան Ալբանիայից հարավ է եղել և, բնականաբար, չէր կարող մտնել նրա կազմի մեջ: Ստրաբոնի այն տեղեկությունը, թե Կասպիանան մտնում է ալբանցիների երկրի մեջ, ճիշտ չէ, կամ պարզապես աղավաղված է թարգմանիչների կողմից: Դրա մեջ համոզվելու համար բավական է ծանոթանալ Կասպիանայի մասին նույն Ստրաբոնի մյուս տեղեկությանը: Խոսելով Արտաշեսի ու Զարեհի նվաճումների մասին, նա գրում է. «...գրավելով հարևան ժողովուրդների գավառներից մասեր, մեգացիներից նրանք անջատեցին Կասպիանան...»³², Ուրեմն, մ. թ. ա. II դարում Կասպիանան խլվեց Միդիա—Մարաստանից (և ո՛չ թե Ալբանիայից) ու միացվեց Մեծ Հայքին: Այս ժամանակ Կասպիանան չէր էլ կարող լինել Ալբանիայի կազմում, որովհետև Ալբանիա միասնական պետություն չկար. ըստ Ստրաբոնի՝ այդպիսի երկիր-պետություն Ալբանիա ստեղծվեց միայն իր ժամանակ (մ. թ. արշալույսին):

Որ Կասպիանան մինչև Հայաստանին միացվելը Մարաստանին է նշել, դա քիչ առաջ տեսանք նաև Հերոդոտի Պատմության տեղեկություններից, որոնց համաձայն՝ կասպերը մտնում են Պարսից արքա Գարեհի, ինչպես նաև նրա որդի Քսերքսեսի տիրապետության մեջ: Կասպերի առաջնորդն էր Արտաբանի որդի Արիոմարդը (պարսիկ): Իսկ Արտաբանն էլ Գարեհ Ա Վշտասպյանի եղբայրն էր³³:

Բայց Ստրաբոնը վերոհիշյալ տեղեկությունից անմիջապես հետո էլ ասում է՝ Հայաստանին միացված գավառների բնակիչները, բուն Հայաստանի բնակչության հետ միասին, արդեն խոսում են մեկ լեզվով³⁴, այսինքն՝ հայացել են: Ուրեմն, կասպերն այդ ժամանակ հայացած էին: Եվ պատահական չէ հեղինակի վճռական խոսքը, թե կասպերը որպես ցեղ արդեն վերացել են՝ իրենց անունը տալով մարզին ու ծովին: Պատահական չէ նաև, որ դրանից հետո այլևս պատմական ոչ մի աղբյուր չի հիշում կասպերի անունը:

Կասպիանա—Փայտակարանը Մեծ Հայքի կազմի մեջ էր մինչև 330-ական թվականները, երբ Ալբանիայի Արշակունի Սանեսան թագավորն այն նվաճեց և ուզում էր գրավել նաև ամբողջ Հայաստանը: Սակայն շուտով ջարդվեց հայոց զորքերի կողմից, և Փայտակարան մարզը

29 Անդ, § 5:

30 К. В. Тревер, 224. աշխ., էջ 50—52:

31 Հերոդոտ, Պատմություն, III, § 92:

32 Ստրաբոն, XI, XIV, § 5:

33 Հերոդոտ, Պատմություն, գիրք VIII, § 67, գ. III, § 83 կն:

34 Ստրաբոն, XI, XIV, § 5:

վերստին միացվեց Հայաստանին: Նման մի անջատման մասին էլ Փափաստուր պատմում է Արշակ Երկրորդի գահակալության վերջին տարիների առթիվ (360-ական թվականներ): Սակայն շուտով Պապ թագավորը (368—374) և սարապիստ Մուշեղ Մամիկոնյանը հպատակեցնում են ապստամբած նահանգը, այնտեղ նշանակում վերակացու պաշտոնյաներ:

Հասկանալի է, որ դարավերջին Հայաստանի բաժանումով Փայտակարանն անդարձ կորսվեց հայկական միջավայրից: Պետք է կարծել, որ 4—5 դար առաջ հայացած նրա բնակչության ճակատագիրը դասավորվեց այնպես, որ ուժացումից փրկվեցին միայն Ուտիք, Արցախ փոխադրվածները: Մնացածներին սպասվում էր նախ պարսկացում, ապա արաբական տիրապետության ժամանակների կրոնական ու քաղաքական անհաղթահարելի ազդեցությունները, բանի որ Փայտակարանը V դարից սկսած՝ հանդիսացել է Անդրկովկասն ու Հայաստանն իրենց բնի տակ պահող օտար բռնատիրությունների կարևորագույն հենակետն ու վարչաքաղաքական կենտրոններից մեկը:

* * *

Յավորք, օտար աղբյուրները Հայաստանի սահմանների, երկրի ու նրա բնակչության էթնիկական վիճակի մասին ամենայն կոնկրետությամբ խոսելով հանդերձ, շատ քիչ տեղեկություններ են հաղորդում ժողովրդի ներքին կյանքի, նրա մշակույթի և նիստ ու կացի մասին: Այդպիսի տեղեկություններ կարող էին հաղորդել միայն տեղացիները: Իսկ հայ գիրը, ինչպես հայտնի է, ստեղծվեց միայն IV դարի վերջում: Եվ հենց առաջին մեր պատմագիրներն էլ իրենց հայրենի երկիրը նկարագրեցին այնպես, որ այսօր արդեն դժվար չէ պատկերացնել նրանց ժամանակի, ինչպես նաև նախընթաց երկար դարերի Հայաստանի ազգագրական, քաղաքական ու տնտեսական վիճակը:

Խորհնացին է մեր առաջին մատենագիրը, որ խոսում է հայ ժողովրդի վաղնջական ժամանակների, նրա ազգորեն կազմավորվելու, հայոց լեզվի վիճակի մասին: Հայ ժողովրդի ամենահեռավոր նախնիներից մեկի՝ Արամի քաջագործությունները պատմելիս Խորհնացին ասում է՝ նա գրավեց հունական գավառներ, ապա սրանց բնակիչներին հրամայեց սովորել հայոց լեզուն և խոսել հայերեն («հայց հրաման տայ բնակչացն աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական»)՝³⁵,

Այս տեղեկությունն արժեքավոր է նրանով, որ հեղինակի խոստովանությամբ՝ քաղված է հնագույն աղբյուրներից և ցույց է տալիս, թե մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբին Հայաստանում խոսում էին հայերեն, և հայ թագավորն իր նվաճած երկրներում ևս ստիպում էր խոսել հայերեն:

Այս տեղեկության մեջ դեռ պատմիչը չի գծում հայոց լեզվի տարածման մասշտաբները, մի բան, որ պետք է աներ ավելի ուշ ժամանակի իրողությունների կապակցությամբ:

Պատմելով Վաղարշակ թագավորի (III դ. մ. թ. ա.)³⁶ աշխարհաշին գործերը, Խորհնացին ամենայն կոնկրետությամբ ներկայացնում է նաև հայոց լեզվի տարածման սահմանները, որոնք համապատասխանում էին Մեծ Հայքի վարչական սահմաններին: Վաղարշակը Մեծ Հայքի պետության սահմանները գծում է զեղզերք հայկական խօսիցս: Պատմահայրն այս պերճախոս արտահայտությունը կրկնում ու երեքկնում է, հատկապես այն ժամանակ, երբ խոսում է Վաղարշակի նշանակած կուսակալների մասին, որոնք պետք է տիրություն անեին երկրի ծայրագավառներում. «...ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ ... յարևմտից կուսէ» նշանակում է Բագրատունիներին³⁷: Իսկ արևելյան կողմերում դեռևս Արամի ժամանակներից նշանակված էին Սիսակյանները, արևելից-հարավային կողմերում՝ Կադմեա տունը (զարևելեանն և զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսակեանցն զարևելս, և որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին)՝³⁸:

Վերահիշյալ խոսքերը չի կարելի հասկանալ այլ կերպ, քան՝ որ Վաղարշակն իր տիրության սահմանները գծել է հայոց լեզվի տարածման եզրերով, այսինքն՝ նրա պետությունն ընդգրկում էր միայն այն գավառները, որոնց բնակիչները խոսում էին հայերեն (հայեր էին):

Մեզ հետաքրքրող տարածքի մասին Խորհնացու վկայությունները բացառիկ պարզություն ու կոնկրետություն ունեն: Պատմահայրն այստեղ վերատին հիշեցնում է, որ «յարևելից կողմանէ, զեղզերք հայկական

35 Մ. Խորհնացու ժամանակագրական ավյալների հիման վրա Գ. Խ. Սարգսյանը Վաղարշակի գահակալությունը հաշվում է մ. թ. ա. 153—157 թթ. (տե՛ս նրա՝ Մովսես Խորհնացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 69), իսկ Լ. Փ. Շահինյանը՝ 112—134 թթ. (տե՛ս նրա՝ Ո՞րն է Խորհնացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը. «Բանբեր Մատենադարանի», 1967, § 8, աղյուսակ 9):

37 Խորհնացի, էջ 105:

38 Անդ, էջ 46:

խօսիցս» կողմնակալ (կուսակալ) էր նշանակված Սիսակյան տոհմը: Ապա՝ որ Վաղարշակը «Յետ սորա մեծ և անուանի և բաղմաբեր զարե-վելից հիսխսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զգաշտն մեծ, որ անունի Կուր»³⁹,

Առանը Սիսակի տոհմից է. «ի սորա (Սիսակայ) ծննդոց այս Առան անուանի»⁴⁰, իսկ Սիսակը՝ Հայկի սերունդներից⁴¹: Ուրեմն Սիսակյաններին տրված վիթխարի (բազմաբյուր) երկրամասից Վաղարշակը կըտրուած, դնում է Առանի տնօրինության տակ: Եվ Առանը «ժառանգեաց զգաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին գաշտի, ի գետոյն Երաբայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ»⁴²: Հնարակերտը Կուրի վրա էր, և Կուրն էլ՝ եզր ու սահմանագիծ ինչպես Առանի երկրամասի, այնպես էլ հայոց լեզվի համար:

Խորենացու այս հանգամանալից տեղեկություններով ավելի է ճշգրտվում ու կոնկրետանում Ստրաբոնի վկայությունն այն մասին, որ մ. թ. ա. II դարում (Արտաշեսի ու Ջարեհի օրոք) Հայաստանի բնակչությունը խոսում էր մեկ ընդհանուր լեզվով, այսինքն՝ հայերեն:

Ուրիշ վկայություններ ու տեղեկություններ չկան հայ ժողովրդի այս շրջանի լեզվի մասին: Այսպիսով, արժանահավատ պատմական աղբյուրներով ապացուցեցինք, որ Առանի երկրամասում, որն ընդգրկում էր Կուրի ու Արաքսի միջագետքը և հետագայում պետք է կոչվեր Հայոց արևելից կողմանք, դեռևս մ. թ. ա. II դարում խոսակցական լեզուն էր հայերենը: Այլ խոսքով՝ հայ ժողովրդի կաղամվորումն այստեղ այնքան էր ավարտված, որ այլևս ոչ մի հետք չէր մնացել նախահայկական ցեղերից:

Չի կարելի մոռանալ, որ Ստրաբոնը, այս տեղեկությունների կողքին միաժամանակ հայտնում է, թե Ալքանիան, որ Հայաստանի հեռ սահմանակից էր Կուր գետով, ավելի ուշ շրջանում (Ստրաբոնի ժամանակ՝ այսինքն՝ մ. թ. արշալույսին) գեռես ուներ տարալեզու 26 ցեղեր, որոնք իրար չէին հասկանում, թեպետ արդեն 26 ցեղերի վրա գլխավոր էր մեկ թագավոր⁴³:

Այս տեղեկությունների առկայությամբ ավելի քան որոշակի է

դառնում մոլորվածությունն այն մասնագետների, որոնք Արցախի և Ուտիքի բնակչության համար հայթայթել են «հայացման» ընթացք, որի ավարտը, առանց որևէ հիմքի, տանում են ետնագույն ժամանակները՝ մեկ IV դարը, մեկ VIII դարը, մեկ էլ՝ նույնիսկ այն համարում XII դարից նոր միայն սկսված:

Հայոց արևելից կողմանց բնակչությունը հայկական էր՝ իր հայերեն լեզվով, ամենաուշը II դարից (մ. թ. ա.): Թե այդ բնակչության միաձուլումը ե՛րբ էր ավարտվել, II դարից որքա՛ն վաղ, դա արդեն լեզվի պատմության մասնագետների գործն է: Մենք այստեղ միայն քննության առանք պատմական հայտնի փաստերը, որոնք նույնիսկ ոչ մասնագետի առաջ պարզորոշ ներկայացնում են հին Հայաստանի հիշյալ երկրամասի բնակչության ազգագրական շջմարիտ պատկերը:

Վերջին ժամանակներս շատ է խոսվում Առանի կամ Հայոց արևելից կողմանց բնակչության ազգային կազմի վերաբերյալ արաբ աշխարհագետների ու պատմաբանների հայտնած կարծիքների մասին: Հր. Աճառյանը հիշում է նաև Ջաբարիա Հոստորի եկեղեցական պատմության այն տեղը, որ սլոնեցիներն ու առանցիները համարվում են առանձին ժողովուրդներ, իրենց առանձին լեզուներով ու իշխանություններով: Ըստ Աճառյանի՝ այս տեղեկությունը վերաբերում է 554/53 թվականին⁴⁴:

Որոշ հետազոտողներ Ջաբարիա Հոստորի (Միտիլենացի) ժամանակագրության մեջ Հայաստանի մասին հաղորդված տեղեկությանը վերաբերվում են շափազանցված վստահությամբ, շնայած անգն աշքով իսկ երևում է, որ այդ տեղեկությունն առհասարակ մշուշոտ է, և մանրամասներն էլ բացահայտ թյուրիմացություններ են:

Բանն այն է, որ VI դարի առաջին կեսի բյուզանդական հեղինակի ժամանակագրության բնագիրը չկա, և մեզ է հասել նրա թարգմանությունն ասորերեն՝ կատարված անանուն շարահարողի կողմից⁴⁵: Ուշագրավ է, որ ինքը՝ հույն Ջաբարիան էլ Հայաստանի ու Անդրկովկասի մասին իր տեղեկությունները բաղել է գրավոր ու բանավոր տարբեր աղբյուրներից՝ առանց հոգալու ժամանակագրության տվյալների ճշգրտությունը ու աղբյուրագիտական մյուս կարևոր հանգամանքների մասին: Այս թերությունն առանձնակի ցայտունությամբ երևում է Հայաստանի ու նրա հարևան երկրների վիճակին վերաբերող հատվածում:

39 Անդ, էջ 113:

40 Անդ:

41 Անդ, էջ 37—41:

42 Անդ, էջ 113:

43 Ստրաբոն, XI, IV, § 6:

44 Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 132:

45 Յ. Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, с. 9—10.

Այստեղ Չաքարիա Հեռտորն ասում է. «Պողոմեոսի աշխարհագրության մեջ հիշատակվող սարմաթների, սկյուֆների ու սերիկների հետ միասին, այդ հյուսիսային կողմերում կան հավատացյալ հինգ ժողովուրդներ՝ իրենց քսանչորս եպիսկոպոսներով: Նրանց կաթողիկոսը գտնվում է Դվինում՝ Պարսկահայքի մեծ քաղաքում: Գրիգոր անունն ունեւր նրանց կաթողիկոսը՝ արդարագատ և անվանի մի այր:

Գուրգանը ևս երկիր է Արմենիայում, իր լեզվով, որ նման է հունարենին. նա ունի քրիստոնյա թագավորիկ՝ ենթակա Պարսից թագավորին:

Առանն էլ երկիր է նույն Արմենիա երկրում՝ իր լեզվով, հավատավոր ու խաչապաշտ՝ ենթակա Պարսից թագավորին:

Միսգանը ևս երկիր է՝ իր լեզվով ու հավատավոր ժողովուրդով, բայց այնտեղ ապրում են նաև հեթանոսներ:

Բազզունը երկիր է իր լեզվով: Այն տարածվում ու ընդհուպ հասնում է Կասպից դռներին և այն ծովին, որ կա Հոնաց սահմանների մոտ»⁴⁶:

Այս փոքրիկ հատվածում կան մի քանի անհշտություններ ու սխալ տվյալներ, որոնք և ստիպում են զգուշությամբ վերաբերվել այն ամենին, ինչ հաղորդում է Հեռտորը: Նախ, հայտնի է, որ VI դարում թագավորներ չեն ունեցել Գուրգան-Վիրքը, Առան-Աղվանքը և Հայաստանը: Նրանք ղեկավարվել են Պարսից արքունիքի կողմից նշանակված մարզպանների կողմից: Երկրորդ, Դվինի կաթողիկոսությանը ենթակա եպիսկոպոսությունների թիվը խիստ կրճատված է: Հայտնի է, որ Գրիգոր Լուսավորչի օրոք միայն բուն Հայաստանում գոյություն են ունեցել շուրջ 400 եպիսկոպոսական թեմեր⁴⁷:

Բայց որտեղից է Հեռտորի ժամանակագրության մեջ մտել այս 24 թիվը: Այս հարցին պատասխանելու համար պետք է հիշենք հին հայկական ավանդությունը, որով Քաղեոս առաքյալը համարվում էր հայոց առաջին կաթողիկոսը, և նրանից մինչև Գրիգոր Լուսավորչիը գոյություն են ունեցել 24 կաթողիկոսներ: Նույնիսկ պահպանվել է այս կաթողիկոսաշարը՝ կոնկրետ անուններով, որոնցում քիչ չեն թյուրիմացություններն ու ակնհայտ սխալները⁴⁸: Հասկանալի է, որ այս անիրա-

կան, պատմական իրականությունից հեռու ավանդությունն էլ աղբյուր է եղել Հեռտորի տեղեկության համար:

Երրորդ, Բազզուն (հայկական աղբյուրների Բազկան-Բաղասական) աշխարհը, ճիշտ է, գտնվել է Կուրի ձախափնյակում, սակայն երբեք էլ չի տարածվել մինչև Կասպից կամ Չոզա դուրը, որովհետև Անդրկովկասի հյուսիս-արևելյան եզրը՝ Կասպից-Չոզա դռնից հարավ ընկած մարզը Չոզ-Գեյրբենդ կենտրոնով՝ կաղմել է Մազքթաց աշխարհը:

Չորրորդ, որ քննարկվող հարցի տեսակետից ունի առաջնակարգ նշանակություն, Չաքարիա Հեռտորը վրաց լեզուն համարում է նման հունարենին, սակայն հանրահայտ է, որ հունարենն ու վրացերենը ոչ միայն նման չեն, այլև չեն մտնում մեկ լեզվաընտանիքի մեջ: Առաջինը հնդեվրոպական լեզվախումբն է ներկայացնում, իսկ երկրորդը պատկանում է իբերականության ընտանիքին: Այս դեպքում, այսինքն՝ ժամանակագրի լեզվաքննական այս մակարդակի անկայությունը, օրինական հարց է առաջանում՝ նա ի վիճակի կլինե՞ր որոշելու Առանի ու Արմենիայի կամ Արմենիայի ու Սյունիքի լեզուների տարբերության աստիճանը: Մանավանդ, երբ նրա հաղորդած տվյալներն էլ հակասում են տեղացի, հետևապես առավել բաշատեղյակ հեղինակների վկայություններին: Իսկ վերջիններիս հաղորդած տեղեկություններն այնքան կոնկրետ են ու անառարկելի, որ այլևս բաց տեղ չեն թողնում օտարների՝ անտեղյակությունից սարքած տվյալները տեղադրելու կամ հարմարեցնելու համար:

Արաբ հեղինակներն էլ ասում էին՝ Պարտավի շրջակայքում խոսում են առաներեն: Նախ՝ ի՞նչ լեզու է այդ առաներենը: Մենք գիտենք, որ Առանը երկիր անուն է և ոչ թե ազգի կամ ցեղի: Եթե խոսքը վերաբերում է Արանիա երկրում ապրած ցեղերին, ապա հայտնի է նաև, որ այնտեղ ոչ այդպիսի ցեղ է եղել, ոչ այդպիսի լեզու:

Եվ այստեղ շատ իրավացի էր Ն. Ակինյանը, որ հարց էր տալիս, ինչ «Արաբ հեղինակներն ունեին՝ լեզվաքննական հմտությունը՝ զանազանելու արմանեհենք արանեհենք: Ուրիշ կողմն ծանոթ են մեզի գրականելու արմանեհենք արանեհենք: Ուրիշ կողմն ծանոթ են մեզի գրականելու արմանեհենք արանեհենք: Ուրիշ կողմն ծանոթ են մեզի գրականելու արմանեհենք արանեհենք... ուրիշ թղթեր, ճառեր, պատմական ու աստվածաբանական գրվածքներ Զ—Ք դարերն, հատկապես հիշելու արժանի են նմաններ է դարին, ամենն ալ շարադրված հայերեն»⁴⁹: Իսկ արաբ աշխարհագիրների տեսած արա-

⁴⁶ Пигулевская, էջ 165: Նույնը տե՛ս նաև՝ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»: Ասորական աղբյուրներ, Ա, Թարգմանություն լնագրից, առաջարան և ծանոթագրություններ Է. Գ. Մելքոնյանի, 1976, էջ 313—314:

⁴⁷ Ազարանգեղոս, էջ 432:

⁴⁸ Մաղաբիա արևել. Օրմանյան, Ազգապատմ., հատ. Ա, Պեյրոթ, 1959, էջ 41—43:

⁴⁹ Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, էջ 313:

Ներքին ի՞նչ պատկեր ունեւ, ո՞րն էր այդ լեզվի տարբերութունը մյուսներից:

Բայց եթէ բանն այդտեղ է հասել, ապա նույն այդ արարնն՝ որը չին, որ նաև ասում են, թե Պարտավի ու Շամբորի բնակիչները ծագումով հայեր են⁵⁰, ի՞նչ պատահեց, որ այդ ծագումով հայերը հանկարծ սկսեցին խոսել առաներեն: Ո՞չ պարսկերեն, երբ դրանից առաջ եղել են պարսիկների տիրապետության տակ, ոչ էլ արաբերեն, երբ հենց այդ տեղեկության ժամանակ արաբներն էին տեր ու տնօրեն նրանց երկրում, այլ առաներեն, մանափանդ, որ այդ ամենագետ աղբյուրները հենց որ իրենց իմացած առաներենից մի բառ են ուզում ասել, դուրս է գալիս հայերեն: Օրինակ, ալ-Իսթահրին Պարտավը նկարագրելիս տեղեկացնում է. «Բերդայի «Քրդերի դուռ» կոչվող դարպասների մոտ «ալ-Կյուրակի» անունով շուկան է՝ մեկ քառակուսի փարսախ մեծությամբ: Ժողովուրդն այնտեղ է հավաքվում ամեն կիրակի ... Շոսկայի «ալ-Կյուրակի» անունը հաղթել է (շարաթվա) այս օրվա անվանը, այնպես, որ բնակիչները շարաթվա օրերը հաշվելիս ասում են. «շարաթ, կյուրակի, երկուշաբթի, երեքշաբթի», մինչև որ հաշվում են ամբողջ շարաթը»⁵¹:

Նույն տեղեկությունն են հաղորդում նաև ալ-Մուքարասին⁵² և իրն-Հաուբարը⁵³:

Նվ սխալվում են այս արարները, երբ կարծում են, թե շուկայի անունը հաղթել է շարաթվա համապատասխան օրվա անվանը, ու Պարտավի բնակիչներն այդ շուկայի անունով են կոչում օրը: Ընդհակառակը, շուկան կոչվել է շարաթվա այդ օրվա (կյուրակի) անունով, որովհետև շուկան միայն այդ օրն է կործել: Իսկ «Կյուրակին», թեկուզ հունարենից փոխառված, ալ-Իսթահրու և մյուսների ժամանակ (X դար) արդեն յոթ դար ծառայել էր հայ ժողովրդին, որպես նրա սեփական քառը՝ շարաթվա առաջին օրվա նշանակությամբ, նվիրված Քրիստոսի հարության հիշատակին⁵⁴:

50 Բ. Խալաթյան, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիննա, 1919, էջ 25:

51 Ալ-Իսթահրի, Քաղաքների և քաղաքների մասին (տե՛ս СМОМПК, т. 29, Тифлис, 1901, с. 8—9):

52 СМОМПК, вып. 38, с. 14—15:

53 Անդ, էջ 87:

54 Հր. Անադյան, Հայ. արմ. բառ., հ. 9, էջ 1220—1221; Սո. Մախալյանց, Հայ. բաց. բառ., հատ. II, էջ 441:

Հաջորդ հարցը, որի վրա պետք է ուշադրություն դարձնենք, Հայոց արևելից կողմանց բնակչության առանձնահատուկ խոսվածքի՝ արցախային բարբառի վաղ շրջանի բնույթն է:

Բարբառի գոյացման հարցը, ինչպես նաև նրա զարգացման ընթացքը մեր խնդրից դուրս են: Այստեղ պարզապես քննության կառնենք հայանի մատենագրական ու գիտական փաստերը, որոնք, մեր կարծիքով, որոշ մասնագետների կողմից մեկնաբանվում են միակողմանի ու սխալ:

Հայոց լեզվի սահմաններում հայերեն բարբառների գոյության մասին առաջին տեղեկությունը պատկանում է Քրակացու քերականության V դարի հայ անանուն թարգմանիչ-մեկնիչին⁵⁵, որը պատմում է, թե հայոց տարբեր զավաններում նույն բառն արտասանում են տարբեր ձևերով, ինչպես, օրինակ՝ բազուկ, պազուկ, փազուկ⁵⁶:

Հաջորդ շատ կարևոր տեղեկությունն այդ բարբառի մասին պետք է հաղորդեր VII դարի վերջի մեր բազմաշնորհ Ստեփաննոս Սյունեցին, որը Հայաստանի, Սյունիքի և Արցախի մասին գրում էր «ոչ թե որպես մի օտար հեղինակ, այլ որպես այդ երկրի հարազատ զավակը, Սյունիքի երկարամյա հոգևոր առաջնորդը, Արցախի գրագետների թղթակիցը և հայոց լեզվի ու նրա բարբառների քաջատեղյակ մասնագետը»⁵⁷:

Ստեփաննոս Սյունեցին գիտեր հայոց ընդհանուր լեզվի ու նրա զավառային բարբառների և՛ ընդհանրությունը, և՛ տարբերությունները: Ընդհանուր կամ, իր խոսքով ասած, միջերկրային, լեզվի շատազույլ լինելով՝ նա խորհուրդ էր տալիս տիրապետել միջերկրային կամ օտանիկ լեզվին, գրել միայն նրանով, որովհետև նա է պետքական բանաստեղծության և առհասարակ գրելիք ամեն մի պատմության համար:

«Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեզերականս որպես զԿորճայն և զՏայեցին և զԽուֆային և զԶորորդ-Հայեցին

55 Հաստատված է, որ Գրոնիոնո Քրակացու քերականությունը հայերեն է թարգմանվել V դարի երրորդ քառորդում, այսինքն՝ հայ քերականների հունարեն դպրոցի սկզբնական շրջանում (տե՛ս Մ. Արեղյան, Հայ հին գրականության պատմություն, հ. Ա, 1944, էջ 100—102, Գ. Զահուկյան, քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, 1954, էջ 114—120, Ա. Մուրադյան, Հունարեն դպրոցը և նրա դերը հայերենի քերականության տերմինաբանության ստեղծման գործում, 1971, էջ 82—111):

56 Н. Адоны, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, с. 149:

57 Աս. Մեացականյան, նշվ. աշխ., էջ 45:

և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զմիջերկրեայսն և զոստանիկան, վասն զի պիտանիք այստքիկ են ի տաղաչափութեան, այլև ազտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գոյով լեզուացն»⁵⁸:

Չի կարելի պահանջել ավելի պարզ ու կոնկրետ տեղեկութիւն այն մասին, որ եղել է հայկական միջերկրային ու ոստանիկ լեզու (սա աներկբայորեն՝ գրաբար լեզուն է, և եղել են դարձյալ հայերեն, սակայն «բառք եզերականք» կամ բարբառներ, որոնցից էր և արցախայինը: Ստեփաննոս Սյունեցու այս վկայութիւնից չի կարելի շահել մի ուրիշ հետևութիւն եւ. որ այս եզերական բարբառները, ինչպես նաև արցախայինը, հայոց լեզուներ են, հայոց միջերկրային, ոստանիկ լեզվի տարբերակները և ոչ թե հայ ազգի հետ ձուլված ցեղերի նախկին լեզուների մնացորդ-վերապրուկներ, որովհետև այստեղ քերականի ու պատմիչի խոսքը վերաբերում է միայն հայերեն լեզվին ու նրա բարբառներին:

Սակայն Հրաշյա Աճառչանը Ստեփաննոս Սյունեցու այս խոսքը հասկանում ու բացատրում էր միանգամայն ուրիշ իմաստով:

Մեջբերելով Սյունեցու հիշյալ խոսքն իր ժամանակի հայերեն բարբառների մասին, Հր. Աճառչանը գրել է. «Սյունեցու այս խոսքերից ընդհանրապես այն են հետեցրել, թե հին հայերենը ունեցել է 7 բարբառ (Կորճայից, Տայոց, Խուֆի, Չորրորդ Հայոց, Սպերի, Սյունյաց և Արցախի): Սրանցից դուրս է բուն հայերենը, կենտրոնական կամ պետական լեզուն, որ համարում են Արարատյան բարբառը, և որ Սյունեցին կոչում է «միջերկրեայսն և զոստանիկան» խոսիվ բաժանելով նախորդներից:

Միանգամից ասենք, թե սխալ է Սյունեցու խոսքերը այսպես հասկանալ: Հիշատակված 7 անունները ներկայացնում են ոչ թե հայերենի բարբառները, այլ Հայաստանում ապրող օտար մանր ազգութիւնների (արդի բառով փոքրամասնութիւնաց) լեզուները»⁵⁹:

Քիչ առաջ մենք տեսանք, որ Ստեփաննոս Սյունեցին Կորճայից, Տայոց և այլ անունների տակ թվարկել է միայն հայերեն բարբառները, նախապես շեշտելով «զքո լեզուիդ» հատկացուցիչը: Կարող էինք ուշադրութիւն էլ շտնել, թե ով ինչպե՛ս է փորձում հասկանալ այս պարզ ու աներկվական խոսքը, եթե նույնիսկ այդ փորձը պատկաներ մի այնպիսի հեղինակութիւն, ինչպիսին Հրաշյա Աճառչանն է: Քանի որ Սյունեցուն ճիշտ հասկանալու համար միակ ու ամենամեծ հեղինակութիւնը հենց

ինքը՝ Սյունեցին է, որին ո՛ր կողմից էլ մոտենաս, պիտի ասի՝ իմ թվարկածները քո լեզվի (հայերենի) եզերական բարբառներն են:

Սակայն հանգամանքներն ստիպում են քննութիւն անել Աճառչանի մեկնաբանութիւնը և ցույց տալ, թե այն որքա՛ն հեռու է ճշմարիտ լինելուց: Մեր մեծ հայագետի այդ կամայական բացատրութիւնն ու անհիմն կարծիքի վրա ուրիշներն արգեն սաղացրել են մի անհեթեթ վարկած այն մասին, թե, իբր. «Հր. Աճառչանը հին ու միջնադարյան հեղինակների տեղեկութիւնների հիման վրա եկել է այն եզրակացութիւն, ...որ Սյունիքի ու ալբանական մարզերի (Արցախ, Ուտիք...) աարածքների տեղական բնակիչները դեռևս խոսում էին իրենց մայրենի լեզուներով, բայց հայերենը նրանց համար սկզբում միջցեղային, իսկ հետո գրավոր (ուղում է ասել «գրական» — Բ. Ու.) լեզու էր»⁶⁰:

Այս հայտարարութիւնը հեղինակը վորոշիչ Ղուկասյանն է, որն իր հակապատմական վարկածին ավելի ազդեցութիւն հաղորդելու համար վկայակոչում է նաև Հ. Հյուբշմանին, նրան էլ մասնակից դարձնելով այս տարօրինակ մեկնաբանութիւնը. իբր թե Հյուբշմանն իր «Հին հայոց տեղույ անունները» գրքում «բազմիցս նշել է, թե Ստեփաննոս Սյունեցին հաղորդել է Սյունիքի, Արցախի ու Հայաստանի մի շարք մարզերի տեղաբնիկ բնակչութիւն յոթ (ոչ հայերեն) լեզուների մասին»⁶¹:

Հր. Աճառչանն էլ ասում է՝ Հ. Հյուբշմանը «Հին հայոց տեղույ անունները» գրքում Սյունեցու թվարկածների մասին կոնկրետ կարծիք չունի. «հեղինակը «Հին հայոց տեղույ անունները» աշխատութիւն մեջ, էջ 56—59 վարանում է երկու կարծիքի մեջ»⁶²:

Որպեսզի պարզ լինի, որ այստեղ հավասարապես իրավացի չեն ո՛չ մեր խոշոր գիտնականը, ո՛չ էլ նրան ազավաղողը, դիմենք Հյուբշմանին: Ահա թե ի՛նչ է գրել պերմանացի հայագետը. «Սնդիք պետք ենք դնել, թե արդյոք այս հիշված լեզուները՝ Կորճայն և այլն՝ հայ գավառաբարբառներ էին թե՞ նույն երկիրներուն հին լեզուներուն մնացորդը: Քանի որ այս ավանդութիւնը միջերկրյա (լեզվի) և եզերական դավառաբարբառներու մեջ խնդիր կը դնէ և ոչ թե հայերենի ու օտար լեզվի մեջ, ըստ ինքյան Կորճեայ և այլն բավածով, ըստ այսմ նաև Սյունի ըսվածով՝ հայ գավառաբարբառ հասկընալու է, ինչպես որ հայերը կը հասկընան»⁶³:

⁶⁰ В. Гукасян, К освещению некоторых вопросов, с. 132.

⁶¹ Անդ.

⁶² Հր. Աճառչան, Եզվ. աշխ., էջ 131:

⁶³ Հ. Հյուբշման, Հին հայոց տեղույ անունները, էջ 59 (ընդգծուած մերն է — Բ. Ու.):

⁵⁸ Н. Адонц, Дионисий Фракийский, с. 187.

⁵⁹ Հր. Աճառչան, Հայոց լեզվի պատմութիւն, II մաս, Երևան, 1952, էջ 128—129:

2. Հյուրըմանի այս կարծիքի մեջ վարանումի հետքն անգամ չկա: Մինչդեռ Հր. Աճառյանը վերստին թյուրիմացության մեջ է, երբ հայտարարում է, թե «Վաղուց գիտենք արդեն, որ Հայաստանում ապրում էին բացի խալդիներից՝ 18 զանազան բնիկ ժողովուրդներ, ամեն մեկն իր առանձին ու սեփական լեզվով: Այս մասին հաստատ վկայություններ ապառաջ են Ստրաբոնը, Հերոդոտը և ուրիշներ»⁶⁴: Այս կարծիքը հաստատելու համար Աճառյանը հղում է իր գրքի Ա մասի էջ 203-ին, ուր ո՛չ 18 ժողովուրդների մասին կոնկրետ խոսք կա, ո՛չ նրանց առանձին ու սեփական լեզուների և ո՛չ էլ նույնիսկ Հերոդոտի անունը կա: Իսկ Ստրաբոնը միայն այն է ասում, որ «իր ժամանակ արդեն բոլոր նվաճված նահանգները հայախոս էին դարձել, այնպես որ բոլոր միալեզու եղան»⁶⁵: Աճառյանն ուզում է Մյունխիքի «օտարությունը» հաստատել, սակայն ճիշտ չի բացատրում հորինացուն. «եսր. Բ-ը պատմելով Վաղարշակի բարեկարգությունը մասին՝ Մյունիքը գնում է հայ լեզվի սահմանի վրա... Մենք էլ գիտենք, որ Մյունիքը հայ լեզվի սահմանի վրա է, բայց հարց է, թե հորինացին Մյունիքը սահմանից ա՛յս կողմ է ընդունում, թե՞ այն կողմ»⁶⁶:

Իրականում, սակայն, ըստ հորինացուն՝ ոչ թե Մյունիքն է հայոց լեզվի սահմանների վրա, այլ Հայաստան երկրի պետական սահմանը: Վաղարշակ թագավորն իր երկրի համար սահմաններ է գծել «զեզեբր հայկական խօսիցս»: Եվ եթե «չարենից կողմանէ» Միսական տունն է կողմնակալ դարձրել հայոց գավառների վրա, ապա այս գավառների վերջին սահմանն էլ է նշում՝ Կուրի ու Երասխի միախառնման կետը, իսկ «զարեվելից հիւսիսոյ կողմանն... առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր»⁶⁷, Եթե հորինացին, որպես ամենասկզբունքային խընդիր, հայտնում է, որ հայոց երկրի ու հայոց լեզվի սահմանները համընկնում էին իրար, ապա արևելքից նրանք Երասխի ու Կուրի միացման վայրն էին, հյուսիս-արևելքից՝ Կուր գետը, — ընթերցողին ենք թողնում դատելու, «թե հորինացին Մյունիքը սահմանից ա՛յս կողմն է ընդունում, թե՞ այն կողմ»:

Աճառյանն այս դեպքում Անանունի ու Դավիթ մեկնիչի քանի՛-քա-

նի՛ անգամ հիշատակած⁶⁸ Կորճայքի բարբառը մի տեղ ստիպված է լինում ընդունել. «Այս բոլորից հետևում է, որ այն ժամանակներում գոյություն ունեւր հայոց մեջ Գորդայ կամ Կորճայ կոչված մի բարբառ...»⁶⁹, եվ մեկ էլ երեք էջ հետո մոտանում է իր դրածը կամ «Կորճայքը Կորդվաց աշխարհի մի մասն է, և որովհետև գիտենք, որ կորդուացիք օտար ժողովուրդ էին (տե՛ս Ա մասի էջ 202), ուստի Կորճայք էլ օտար էին և հավանաբար քրդական մի բարբառ էին խոսում»⁷⁰:

Ա մասի էջ 202-ում կորդվաց մասին ոչ մի խոսք չկա: Չէր էլ կարող լինել, որովհետև հայ գիտնականները Կորճայքի բարբառի մասին են վկայել և քրդերի լեզվի մասին տեղեկություն շունեին, որպեսզի նրա բարբառների առիթով էլ վկայություն ապահով:

Այսքանից հետո արժե վերստին դառնալ Ստեփաննոս Մյունեցուն: Մեր քերթողն ու քերականը երևի շատ լավ է իմացել, որ գալիք ժամանակներում իրեն քարեքար գցողներ են լինելու: Դրա համար էլ իր իմաստությունն այնպիսի կապ է դրել, որ քարեքար ընկնելուց հետո անգամ ոչինչ չըթրվի ու չփոխվի:

Մյունեցին, դիմելով իր հայրենակցին (= հային), խորհուրդ է տալիս հմտանալ մայրենի (= հայոց) լեզվի գիտություն մեջ: Իսկ դրա համար նա երեք հիմնական միջոց է նշում.

ա) Հարևան ժողովուրդների (= օտարների) լեզուների իմացությունը. «Արդ լեզուս ասէ, որ շուրջ զքեւ սահմանակից աշխարհ իցեն, գիտութիւն լեզուաց նոցա, վասն զի կարի աւտակարք են այսք առ ստուգարանութիւն»⁷¹:

բ) Հին և նոր կուլտուրական լեզուներ. «Իսկ հնագէտ պատմութեան պատմութիւն ասէ զհին և զնոր, զհնթանոսաց եւ զհնէից եւ զքրիստոնէից, զի տեղեակ իցէ եւ ընդել ամենայն պատմութեանց»⁷²:

գ) «Եւ դարձեալ զԲ լեզուիդ գիտելն զբովանդակ զբառս զեզեբա-կանս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զնութայինն եւ զՊորրորդ-Հայեցին եւ զՍպերացին եւ զՄիւնիւն և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄիջ-

68 Н. АДОНИ, ДИОНИСИЙ, стр. 105 (Իսվիթ ֆիլիսոփա). «քառ որում Գորդայիցն դադափար է, զի որպէս դոքա ծագելով ի հոմանուն լեզուէ ի խաաս...», էջ 112. «Բայց յայլ վայրս, որպէս Կորճայքը, վարին կրականին ոչ հմտաբար, այլ ըստ սովորութեանն»: Նույնը՝ նաև էջ 140, 147 և այլն:

69 Հ. ԱճԱՐՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 128:

70 Անդ, էջ 131:

71 Н. АДОНИ, ДИОНИСИЙ, с. 187.

72 Անդ, «Հեթանոսաց» առիթով Մյունեցին, հավանաբար, հասկանում էր արարներին, ինչպես ընդունված էր նրա ժամանակներում:

64 Հր. ԱճԱՐՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 129:

65 Անդ, հատ. I, երևան, 1940, էջ 203: Այս հատվածը Հր. Աճառյանի թարգմանությունն է:

66 Անդ, II մաս, էջ 132:

67 Մ. ԽՈՐԵՆԱԳՅԻ, էջ 112—113:

երկրեայսն եւ զՈստիանիկան, վան զի պիտանիք, այսոքիկ են ի տաղաշա-
փութեան, այլեւ արգտակարք ի պատմութիւնսն, զի մի՛ վրիպեացի ան-
ընդել գոլով լեզուացն»⁷³:

«Այն լեզուիդ ... զբառն զեզերականս»: Սյունեցին այսպեւ է դի-
մում իր ազգակցին ու թվարկում այդ եզերական բառերը՝ Կորճալինից
մինչև Արցախային: Եվ այսբանից հետո՝ անգամ մեծ լեզվաբան
Հր. Աճառյանն ընդունում է, որ սրանք ոչ թե հայոց լեզվի բարբառներն
են, «այլ Հայաստանում ապրող օտար մանր ազգութունների (արդի
բառով փոքրամասնութիանց) լեզուները»:

Սյունեցու ասածը հակառակ ձևով հասկանալու իր իրավունքն ինչ-
պե՛ս է ուզում նվաճել Հր. Աճառյանը, Մի անտեղի հարցումով. «Եթե
դրանք հայոց բարբառներն են, ո՛ր են հապա Բարձր Հայոց, Աղձնիքի,
Մոկաց, Պարսկահայքի, Ոստիքի, Փայտակարանի, Գուգարքի և մանա-
վանդ Վասպուրականի և Տարոնի հռչակավոր բարբառները»⁷⁴:

Իսկ Սյունեցին որան՞ող է պնդել, թե իր ժամանակի Հայաստանի եզե-
րական բարբառներն այս յոթն են միայն: Նա ասում է՝ իմացիր քո լեզվի
«զբառն զեզերականս, որպէս» ... և թվարկում է հայ բարբառներից
յոթը, առանց որևէ կերպ հասկացնելու, թե թվարկումով սպառվեցին այդ
բարբառները: Ընդհակառակը, դրանց կողքին էլ դնում է «վճիռերկրի-
այսն եւ զՈստանիկան», որպեսզի հասկանանք, որ սա էլ պետական-
մայրաքաղաքային-գրական լեզուն է, որը, հավանաբար, նախապես
եղել է կենտրոնական գավառների խոսակցական լեզուն կամ բարբառը:

Եվ, վերջապես, մի՞թե Հր. Աճառյանը մտածում է, թե թվարկված
յուրաքանչյուր բարբառով խոսում էր միայն ու միայն նրա գավառի
բնակչությունը: Այդ նույն Աճառյանը չէր, որ Ղարաբաղի (արցախա-
յին) բարբառի տիրապետության սահմանները հին Փայտակարանից
հասցրել էր Թուրքիայի բնակավայրերը, Հյուսիսային Կովկաս ու մի-
ջինասիական հեռաստանները: Թե՞ կարծում էր՝ արցախային բարբա-
ռով հեռուներում կարելի է խոսել, իսկ հարեան Ոստիքում՝ ո՛չ:

Հր. Աճառյանը նույն տեղում մի այլ արտաոսց միտք էլ է ար-
տահայտում. «Հայաստանում խոսված հայերեն բարբառները Սյունե-
ցին հիշատակում է միայն մի տառով՝ որ է Ս, Հոգնակիի այս Ս վեր-
ջավորությունն է, որ նա կցելով վճիռերկրեայսն եւ զՈստանիկան բա-
ռերի ծայրին, սյարփնակում է բոլոր հայերեն բարբառները: Նա Միջ-

երկրեայ կամ Ոստանիկ ասելով չի հասկանում Արարատյան կենտրո-
նական բարբառը, ինչպես հասկանում են գիտնականները: Ո՛չ, Այդ
դեպքում ո՛չ Հոգնակի պիտի գործածեր (որովհետև Արարատյան բար-
բառը մեկ հատ է), և ո՛չ էլ Միջերկրեայ առանձին և Ոստանիկ առան-
ձին պիտի հիշեր»⁷⁵:

Ցավով պիտի նշենք, որ այստեղ ևս մեր մեծ գիտնականը թյուրի-
մացութիան մեջ է: Նշված բառերի «ս»-ն դիմորոշ հոդ է և Հոգնակի
թվի հետ կապ չունի, ինչպես կարելի է տեսնել մի այլ, առավել ցայ-
տուն օրինակից: Մովսես Խորենացին գրել է, թե. «Խոստանայր հայ-
կականացս լեզուաց առնել նշանագիր»⁷⁶: Պարզ ու հասկանալի է, որ
Պատմահայրը հայերեն մեկ լեզվի համար էր ենթադրում ստեղծել
նշանագրեր:

Ստեփաննոս Սյունեցին, Սյունիքի ու Արցախի գավառը, նրանց
մերձավոր բարեկամը, չէր կարող սխալվել իր մայրենի խոսքը բնու-
թագրելիս: Այդ է հաստատում մեր միջնադարյան կուած-կոփած քերա-
կանությունն ու արդար մտածողության մի այլ հսկա ներկայացուցիչ, ի
դեպ դարձյալ սյունեցի՝ Սասի նշեցին: Նա ևս խորհուրդ էր տալիս
իմանալ օտար հարեանների լեզուները. «որ շուրջ զքն սահմանակից
աշխարհ իցեն՝ բացորոշեալ ի քէն ազգաւ և լեզուով՝ լինել տեղեակ լե-
զուաց նոցա»: Սակայն առանձնապես շեշտում է Ստ. Սյունեցու կող-
մից նշված հայոց մայրենի լեզվի բարբառները, միաժամանակ զգու-
շացնելով՝ չլինի՞, թե դրանք օտար լեզուների տեղ դնեն. «... ոչ զաւ-
տարագգի, առէ, այլ զիւրոյ լեզուին զխաւս և որ ընդ նովա զանազան
բառք՝ զեզերականս, որպէս զԿորճեայն, զՏայեցին, զԽուբայինն»⁷⁷:

Հետազոտողները կամենան թե ոչ, պատմական ամեն մի վկայու-
թյուն կարող է հաղորդել միայն ու միայն այն, ինչով որ նրան օժտել
է իրեն ստեղծողը: Իսկ Ստեփաննոս Սյունեցին այլ բան չի գրել, քան՝
որ իր ժամանակ՝ VII և VIII դդ. սահմանադրված զոյություն ունեին
ևզերական կամ գավառային հայ բարբառներ, որոնցից էին նաև Սյու-
նիքիներն ու Արցախիները:

Աղբյրից մենք ասել էինք, որ գիտնականներն իրավամբ ժամանա-
կակից արցախային (Ղարաբաղի) բարբառի մի ճյուղն են համարում

73 Անգ.

74 Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմ., մաս II, էջ 129:

75 Անգ.

76 Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ, էջ 325:

77 Սասի նշեցի, վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրութեամբ Լ. Գ. Խա-
լիբյանի, Երևան, 1966, էջ 65:

Հանգեցուրի կամ Մյունխբի բարբառը: Մինչդեռ Մյուննիցին և նրանից հետո էլ Թսալի նշեցին Արցախայինն ու Մյուննյացը ճանաչում են տարբեր բարբառներ: Եթե նկատի առնենք ճակատագրի նույնությունը և բազմադարյան համատեղ (ոչ թե միայն հարեանությունը ապրած) կյանքը, որ ունեցել են հին Հայաստանի այս երկու սահմանակից ու բախտակից նահանգները, հասկանալի պիտի լինի, թե ինչու նրանց բարբառների տարբերություններն աստիճանաբար այնքան են շնչվել, որ այսօր այլևս անիմաստ է դրանք տարբեր բարբառներ համարելը:

Բանն այն է, որ, սկսած Մեծ Հայքի ճակատագրական բաժանումից, Մյունիքը վարչական տեսակետից համարյա միշտ էլ եղել է Հայոց արևելից կողմանց հետ, հատկապես ներազգային այն տարերային միավորումներում (վարչական, մեծ մասամբ նաև եկեղեցական), որ այդ նահանգների իշխանական տներն ու հողեր տերերն էին կազմում՝ օտար բռնազորավիշներին և ուժացնողներին դիմադրալիելու համար: Աշխարհագրությունն էլ իր լուռ դերն է կատարել, և արդյունքը եղել է այն, որ այսօր ունենք մեկ միասնական արցախային բարբառ՝ իր խոսվածքներով: Իսկ այս բարբառը, կրկնում ենք, հունգիսանալով Հայոց արևելից կողմանց բնակչության լեզուն, ինքնին ներկայանում է նաև որպես այդ աշխարհի պատմական աշխարհագրության ամենախոսուն պատկերը:

* * *

Ի՞նչ է գոյացել արցախային բարբառը, լեզվապատմական ինչպիսի՞նք՝ ճանապարհ է անցել և ի՞նչ դեր է ունեցել Հայոց արևելից կողմանց բնակչության՝ հայ ժողովրդի այդ յուրահատուկ հատվածի, պատմական ճակատագրի համար:

Կարելի է սկսել վերջից: Բնականաբար եզերական (այս բառի իսկական իմաստով, այսինքն՝ ծայրերկրային) բարբառներն ամենից շատ են ենթակա օտար ազդեցություններին, մասնավորապես, եթե այդ օտարներն այնպիսի բռնակալներ են, ինչպիսիք էին պարսիկներն ու արաբները, սելջուկ-թուրքերն ու մնացած ավարառու հորդաները, որոնք հրով ու սրով էին տարածում իրենց լեզուն, սրա հետ էլ կրոնը, կամ կրոնը՝ նրա հետ և լեզուն:

Այս, եզերական լեզուներն ամենից շատ են ենթակա օտարների հարվածներին ու ազդեցություններին: Այդ պատճառով էլ սխալված չենք լինի, եթե եզերական բարբառները համարենք ազգի ընդհանուր լեզվի եզերապահ զնդերը:

Լեռն, Հայոց արևելից կողմանց՝ բնությունից ստացած կոչումն էր համարում Հայկական բարձրավանդակի պաշտպանությունն արևելքի տափաստանների կողմից առաջացող շարժումների դեմ: «Այդ հսկայական բերդի ամբողջ նշանակությունը հասկանալու համար պետք է նկատի առնել, որ նա փակում է ազգերի տեղափոխման այն մեծամեծ ճանապարհները, որոնք Կասպից ծովի հյուսիսային և հարավային ափերով Միջին Ասիայից բերում են Կուր-արաքսյան արգավանդ տափաստանները: Պատմությունը մեզ շատ փաստերով ցույց է տալիս, որ նվաճող ազգերի ահավոր հորձանքները դալիս, ընդհարվում էին Ղաթաբաղի լեռնաստանին, փշրվում ու ետ էին դառնում»⁷⁸:

Այս «հսկայական բերդի» աշխարհագրական դիրքն, անկասկած, իր անուրանալի դերն է ունեցել: Սակայն շի կարելի մոռանալ նաև դերը պաշտպանական այն անճեղքելի պարսպի, որ կոչվում է աղգային ինքնություն, և որի կրաշաղախը լեզուն է՝ արցախային եզերական բառը: Ինչպե՞ս է առաջացել այն, ե՞րբ, հայերեն ընդհանուր լեզվի ի՞նչ տեսակ հատվածումից:

Այս հարցերը մեջտեղ են դալիս, որովհետև, եթե սխալվում են այն գիտնականները, որոնց կարծիքով բարբառներն ընդհանուր միասնական լեզվի ազդեցությամբ վերափոխված նախկին ցեղային լեզուների մնացորդներն են, ապա իրավացի են նրանք, ովքեր բարբառներից շատերի մեջ տեսնում են ընդհանուր միասնական լեզվի տարբերակները: Դեռ Ղ. Ինճիճյանն էր համոզված, թե զբաբարից են սերվել եզերական բարբառները⁷⁹: Առաջին դեպքում ընդհանուր լեզուն մերձեցրել է տարբեր ցեղերի լեզուները: Երկրորդում՝ պատմական հանգամանքները միևնույն լեզվով խոսող զանգվածներին այնպես կտրել ու հեռացրել են իրարից, որ այս զանգվածները լեզվական տեսակետից ձեռք են բերել նոր երանգներ, ստացել են նույն լեզվի տարբեր խոսվածքները կամ բարբառները:

Մի դեպքում բարբառը մայր լեզվի կրտսեր եղբայրն է, մյուս դեպքում՝ հարազատ գավաղը: Երկրորդ պարագան մեզ թվում է առավել բնորոշ Արցախ-ղարաբաղյան բարբառի համար: Ինչ էլ որ լինի, հայոց մայր լեզվի հետ ունեցած նրա կապը շափվում է հարազատության այս աստիճանով՝ գավաղի կամ կրտսեր եղբոր:

Նվաճողներն իրենց համար թեալոր խոսք են ստեղծել՝ սահման քա-

78 Լեռ, Հայոց պատմություն, Կ. Գ., 1946, էջ 493: Նույն միտքը տե՛ս նաև՝ «Հայոց պատմություն», Կ. Բ., էջ 146—247:

79 Ղ. Ինճիճյան, Հնախոսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Կ. III, Վենետիկ, 1835, էջ 7:

չաց սուր յուրջանց, Իսկ հայ պետականության ամենարուն ծաղկման շրջանում նրա վարչական սահմանները, ինչպես տեսանք, տարածվում էին «զեզեզեր հայկական խօսիցս»՝ հայկական լեզվի եզերքով:

Սակայն IV դարից հետո հանգամանքները երբեք էլ թույլ չտվեցին, որպեսզի հայոց վարչաքաղաքական և էթնիկական-լեզվական սահմանները համընկնեն:

V դարից սկսած Աղվանից հայաշխարհը պարբերաբար կտրվում էր մայր երկրից: Սակայն ամեն պարագայի՝ կտրվում էր որպես հայկական միավոր՝ իր ազգային անխաթար միջավայրով: Հայ թագավորներին ու իշխանաց իշխաններին ժամանակ առ ժամանակ հաջողվում էր վերանվաճել երկրի ծայրամասերը, այդ թվում՝ Ուտիքն ու Արցախը, որոշ ժամանակ պահել միասնական ու համազգային մի ընտանիքի սահմաններում: Սակայն մեկ էլ գալիս էր հերթական բռնակալը, և Հայաստան աշխարհի բազմատվածությունը դառնում էր անխուսափելի:

Այս պայմաններում իր բաժին ազգային լեզու «եզերական բառն» անխաթար պահելն Արևելից կողմանց հայուության համար այնքան դժվար էր, որքան պատվաբեր:

Ի դեպ, կասկածից դուրս է, որ արցախային բարբառն առաջացել է շատ ավելի վաղ, քան 387 թ. բաժանումը: Թե դրանից որքան առաջ, այդ մասին քիչ հետո: Բայց որ Ուտիքն ու Արցախը մեկուսացել են որպես հայկական նահանգներ՝ հայախոս բնակչությամբ ու հայկական միջավայրով, — դրա ապացույցները մենք տեսանք: Միամտություն կլինի կարծել, թե V դարի սկզբին Մեծ Հայքից կտրվելուց հետո որևէ ոչ հայկական զավառ, նույնիսկ ցանկության դեպքում, հնարավորություն կունենար հայանալու՝ ասիմիլյատոր պարսիկների, արաբների, ապա նրանց հաջորդած ամեն տեսակ խաժամուժի տիրապետության տակ լինելով հանդերձ: Բաժանումից շատ առաջ արդեն գոյացել էր արցախային մի «վերին աստիճանի ինքնահատուկ և կորովի լեռնային բարբառ, որ հետզհետե զարգանալով, դառնում էր ժողովրդական հոգեբանության ազդու արտահայտիչը»⁸⁰:

Կարևոր է նաև պարզել, թե արցախային բարբառն ի՞նչ է պահպանել իր նախկին վիճակից և ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել հետագա դարերի ընթացքում:

Այստեղ ևս մեզ, առաջին հերթին, հետաքրքրում է պատմական կողմը. նախ և առաջ՝ ի՞նչ առնչություններ էին հնարավոր հայոց միջերկրյա լեզվի (գրաբարի) և արցախային բարբառի միջև:

Բնական է, որ հայոց միջերկրային լեզուն, ինչպես նաև մյուս եզերական բարբառները պիտի ենթարկվեին մեծ փոփոխությունների: Ժամանակը նոր լեզուներ է ստեղծում և խորտակում է դարերի պատմություն ունեցող հին ու հայտնի լեզուներ: Այն շեր կարող իր դրոշմը չդնել նաև հայերեն լեզվի արցախային բարբառի վրա: Ինչպե՞ս և ի՞նչ շափանիշներով պարզենք, թե ո՞րն է կատարված փոփոխությունը, և ի՞նչ է մնացել նախաստեղծ անաղարտության մեջ: Կա մի ամենակայուն շափանիշ՝ գրաբարը: Այն մնացել է անփոփոխ: Եվ հայերեն լեզվի կամ նրա որևէ բարբառի կրած փոփոխությունների ու պահպանած ավանդույթների շափերը որոշելու համար պետք է այդ լեզուն կամ նրա բարբառը դնել գրաբարի կողքին, համեմատել:

Ար. Ղարիբյանն այս առիթով ճիշտ նկատել է, որ «ցեղակիցներից հեռացած և քիչ առիթներով նրանց հետ կապված այս կամ այն հայ ցեղը (պետք է հասկանալ՝ հատվածը — Բ. Ա.) աստիճանաբար իր լեզվի մեջ կմտցներ վանազան փոփոխություններ, որոնք հայերեն լեզվին կտային այս կամ այն տարրերիչ գիծը, այս կամ այն տարրերիչ երանգը»: Եվ, սակայն, «այսպիսի բարբառները շատ ավելի մոտ կլինեին հայերենին, ավելի շատ ժառանգություն կպահենին ընդհանուր լեզվից, քան թե այն բարբառները, որոնք առաջացել են օտարների կողմից հայերենը սովորելու պրոցեսում: Բարբառների ճյուղավորման այս ճանապարհն առանձնապես քիչ փոփոխություն կմտցնի արտասանության մեջ, ուստի այս ճանապարհով առաջացած բարբառները հին հայերենի հնչյունական առանձնահատկություններից շատ բան կարող են ավելի հավատարմությամբ պահպանած լինել, քան այն բարբառները, որոնք առաջացրել են օտարները»⁸¹:

Ամենայն հավանականությամբ, գրաբարը գրական լեզու դառնալուց առաջ եղել է կենդանի, խոսակցական լեզու: Նիկ. Մառը գտնում է, որ այն «վաղ միջնադարում և առավել խոր վաղնջական ժամանակներում հիմնական խոսակցական լեզու» է հանդիսացել⁸² հայ ժողովրդի

81 Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 65:

82 Н. Марр, Племенной состав населения Кавказа, Пр., 1920, с. 20. Նույնի՝ Кавказский культурный мур и Армения, с. 29.

80 Առ. Հայոց պատմություն, 5. Բ., 1967, էջ 152:

ամենալայն զանգվածների համար: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Գրական լեզու դառնալու հենց սկզբնական շրջանում ունեցած նրա բյուրեղային վիճակը մեղ հուշում է բանավոր շրջանառության մի երկար նախընթաց, որը պետք է տեսած լինեք մի քանի հարյուրամյակի: Այդ կատարելագործման ամենաբուռն ու արդյունավետ շրջանը հավանաբար եղել է IV դարը՝ քրիստոնեությանը՝ ծառայելու նրա առաջին հարյուրամյակը:

Հայագետների համոզիչ կարծիքով՝ գրերի ստեղծումից առաջ հայ եկեղեցու արարողությունների լեզուն, նրա հիմնադրության առաջին շրջանից սկսած՝ հիմնականում եղել է հայերենը:

Ճիշտ է, աղբյուրները վկայում են, որ քարոզները կարգացվել են ասորերեն և հունարեն: Այսպիսի վկայություններ են բերվում հատկապես հայերեն գրերի ծնունդը ներկայացնելու առիթով: Բայց մենք մտածում ենք, որ այստեղ պարզապես վիճակը չափազանցվում է՝ հայերեն գրերի ստեղծման առարկայական նշանակությունն առավել շեշտելու համար: Եվ, իսկապես, դժվար էլ է պատկերացնել, թե ազգային եկեղեցի ստեղծելու և պահպանելու համար այնպես ջանադրաբար հոգացող հայ գործիչները մոռացության տված լինեին այդ եկեղեցու խոսքը ժողովրդին հասկանալի անելու խնդիրը:

Յո. Մարկվարտն իրավացի է, երբ ենթադրում է, որ «...Գրիգոր Լուսավորիչը հայերեն է քարոզել... Համենայն զիպս նա բավականաչափ հասկացել է հունարեն, որպեսզի ունկնդիրների համար բերանացի թարգմաներ ընթերցածները»⁸³:

Նույն իրավացի ենթադրությունն է անում Հրանդ Ք. Արմենը, զրտնելով, որ նախագրյան շրջանում հայ եկեղեցու գործածած հունարեն գրքերն անսլայման թարգմանվել էին բանավոր. «Այդ լեզուն չգիտցողներուն համար հայերեն թարգմանություն կըլլար բերանացի: Այդպես շարունակված էր գրեթե հարյուր տարի»⁸⁴:

Գրարարի նախապատրաստումը գրական կատարյալ մի լեզվի համար, որ նախընթացի վերջին հարյուրամյակն էր ընդգրկում, անկասկած, սկսվել է հենց Գրիգոր Լուսավորչի ու Տրդատի ժամանակներից: Լուսավորիչն իր քարոզչական անխոնջ ու ծավալուն դործունեության համար չէր կարող, նախ և առաջ, նկատի չառնել ժողովրդին հասկանալի մի լեզու, տվյալ դեպքում հայերենը: Նրան մեծապես ընդառաջում էր թագավորը: Ազգախանդեղոսը պատմում է, որ «Տայր հրաման թագաւորն Տրր-

⁸³ Յ. Մարկվարտ. Պատմութիւն հայերէն նշագրերու և վարուց ս. Մաշտոցի, Վիեննա, 1913, էջ 3—4:

⁸⁴ Հրանդ Ք. Արմեն, Պատմական քննարկումներ, Պելրուս, 1968, էջ 228:

դատ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մանկտույ ածել յարուեստ դպրութեան, և կարգել ի վերայ հաւատարիմ զպրապետս»⁸⁵:

Այսքանը կատարվում էր, ամենից առաջ, Աստվածաշունչ քարոզելու համար: Իսկ անգիր ու անգրագետ ժողովրդին քարոզել, մի բան հասկացնել կարելի է միայն նրա լեզվով: Պարզ է, որ Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի հիմնած զպրանոցներն առաջին հերթին պետք է պատրաստեին թարգմանիչներ, թարգմանիչ-քարոզիչներ, որոնց լեզուն պետք է լինեք հայերենը: Ուտի «...թարգմանչաց լեզու, ի գիր առնվելէ դար մը իսկ առաջ (Տրդատի միջոցին) սկսած էր ավետարանական քարոզության մը դործիք լինել, անոնց ձեռքով, որոնց պաշտոնն էր թարգմանել ս. Գիրքը ի լուր ժողովրդյան կենդանի բարբառով, և առով՝ աներկբայապես՝ հետզհետե պիտի կատարելագործվեք լեզուն, և թարգմանությունը, մանավանդ Աստվածաշունչի հարազատությունը պահելու նախանձախնդրությամբ, ինքնին պետք է հյուրընկալեք նոր բացատրութեանց կամ նոր առումների լեզուն մը լեզվին մեջ»⁸⁶:

Գրիգոր Լուսավորչի և նրա քարոզիչների գործունեությունը խարսխված է եղել բանավոր ու կենդանի հայերեն խոսքի վրա: Նրանց ժամանակ հայոց ընդհանուր (միջերկրյա կամ ոստանիկ) լեզուն, — որ հետո պետք է դառնար ու կոչվեք զրաբար, — հասել էր զարգացման մի այնպիսի մակարդակի, որ իր ազդեցության ոլորտներում էր պահում հայոց բովանդակ երկրի բոլոր խոսվածքները, որոնց մեջ էր և արցախային բարբառը:

Այդ ազդեցության շափն ու ձևը լրիվ պարզելու համար թերևս անհրաժեշտ լինի բարբառի և զրաբարի համեմատությունը կատարել, առնչակցությունները քննել բազմակողմանիորեն, մի բան, որ մեր նպատակից դուրս է:

Այստեղ մենք ուզում ենք պարզել մի հարց. թե Արցախ-զարաբաղյան բարբառի ո՞ր առանձնահատկություններն են, որ դալիս են զրաբարի ուժեղ ազդեցության ժամանակից և զրանք ի՞նչ շափով են պահպանվել:

⁸⁵ Ազգաբնագրոս, էջ 424:

⁸⁶ Եվլյե Գուրյան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 321—322:

Բավական է ուշադրություն դարձնել Արցախ-դարբաղյան բարբառի ձևաբանական մի քանի ակնառու առանձնահատկությունների վրա՝ համոզվելու համար, որ դրանք գալիս են գրաբարից:

Ղարաբաղի բարբառում է, որ պահպանվել է գրաբարի «ն հանգը, որ շատ բառերու ծայրը այնպես սովորական է»⁸⁷: Օրինակ, մեր բոլոր բարբառները գրաբարյան կուռն, դուռն, ձուկն, մուկն, նուռն, կաթն, մատն, ոտն, սառն, գառն և այլ բառերից ջնջել են վերջին ն-ն, իսկ Ղարաբաղի բարբառը պահել է, միայն ենթարկելով իր համար շատ բնորոշ մի փոփոխության. կուռն-կուռնը, դուռն-տուռնը, ձուկն-ժուկնը, մուկն-մոկնը կամ մոկուն, նուռն-նուռնը, կաթն-կաթնը, մատն-մաննը, ոտն-վրէննը, սառն-սառնը, գառն-կյառնը: Եթե այս օրինաչափության կողքին երբեմն կա նաև օրինախախտություն, ապա դա այն է, որ հաճախ բառավերջի է-ն ընկնում է ն-ից առաջ, մօկն (կամ մօկուն), ծուկըն (կամ ծուկուն):

Հայոց նոր աշխարհաբարը և գրեթե բոլոր բարբառներն ընդունել են մի նոր հնչյուն՝ ֆ, որը գրաբարում չկար: Ղարաբաղի բարբառը մինչև օրս էլ չի ընդունել այդ հնչյունը և, գրաբարի նման, օտարազգի բառերի ֆ-ն դարձնում է փ, ինչպես, օրինակ՝ ֆուրգոն-փուրգոն, ֆարրիկա-փարրիկա, կանֆետ-կանփետ, ֆիզիկա-փիզիկա, Ֆրանսիա-Փրանսիա:

Ձայնավորով սկսվող շատ բառերի առջևից ղարաբաղյան բարբառն ավելացնում է մի «հ»։ հու-ով, հուր-ոյր, որոյ-հօր-ուր, հունց-ոնց, հինչ-ինչ, հիր-երբ, հընգեր-ընկեր, հըլեվուր-ալետր և այլն: Աճառյանն այս երևույթի մեջ տեսնում է գրաբարի վաղ շրջանի մի շատ բնորոշ առանձնահատկության պահպանումը. «Ասոնք հատկապես հետաքրքիր են անով, որ կենդանային հայերենի հնազույն ձևը, այսպես, օրինակի համար, ով, ոյր, ուր, ինչ ունեին նախապես սկզբնական K^h ձայնը, որ հետո ինկավ. Ղարաբաղի Հ ձայնը անոր շարունակությունն ըլլալու է»⁸⁸:

Գրաբարի ո(ով) ձևը պահպանվել է՝ դառնալով «հու», որ բառակապակցությունների մեջ երբեմն դառնում է «հուվ» (հո՛ւ եկավ, հո՛ւվ ա եկալ): Այս Վ-ն բարեհնչունության համար է. երկու ձայնավորների (Ու, Ա) արանքն ընկնելով՝ նրանց բաժանում է իրարից:

Ուշադրավ է, որ Ղարաբաղի բարբառում պահպանվել են նաև գրաբարյան մի շարք հոլովաձևեր: Գործիականը, համարյա մաքուր գրաբար-

յան ձևն ունի, բայց որում գրաբարյան «աւ»-ը հնչում է «ավ». սահմանազրհամանավ, գիշերաւ-քշերավ:

Գրաբարյան «զ» նախդիրը պահպանվում է մի շարք դեպքերում. զինքյս, զինքյտ, զինքյլ: Զինքյտ նըշանց տօ (ինքդ քեզ ցուցց տուր):

Նաև որոշ դերանունների հետ. զէս զէտ, զէն: Զէս տար, տիր ուրան տըէղը — «Այս տար, դիր իր տեղը»: Զէտ լըէր կալ, տէն բըցի — «Դա վերցրու, դեն ձգիր»: Զէն հի՞նչ քս ըննական — «Այն ի՞նչ ես անելու»:

Սակայն ցուցական այս դերանունների հետ սույն զ-ն հաճախ գրվում է նաև ուղղական հոլովով. (ը) Զէս եկավ, թա՛ (ը) զէն հո՞ր ա — «Սա եկավ, թե՛ նա ո՞ւր է»:

Մեկ թվում է՝ գրաբարյան աղբեցություն հետավոր վկայությունն է ցուցց տալիս «ն»-ի բացակայությունը Հաղրութի խոսվածքի հոգնակի առաջին դեմքի դերբայից — «բք»՝ փխ. «եներ»-ի». կյըրիս բք: Հավանաբար՝ այստեղ ընկել է գրաբարյան «մ»-ն:

Բավական հետաքրքիր նյութ է տալիս նաև բառապաշարը, որ Ղարաբաղի բարբառում մեծ մասամբ պահպանվել է գրաբարյան ձևով, իհարկե, միաժամանակ ենթարկվելով բարբառի հնչյունաբանական օրինաչափություններին: Դժվար չէ այդ նկատել հետևյալ օրինակներին վրա.

| Գրաբար | Ղարաբաղի բարբառ | Գրական հայերեն |
|---------------|------------------|----------------------|
| ագի | հայթի | սյուշ |
| այգուց | էքյուծ | վաղը |
| ակոս (կայտիք) | կըտերք | ատամ |
| ամանակ | ըմանակ | ժամանակ |
| ամոլք | հըմբուլ(ք) | լուծ քաշող ընկեր |
| անձաւ | անձավ | քարայր (քարանձավ) |
| աստէն | աստէն (աստէլ) | այստեղից |
| արմանամ | արմանալ, ըրմանալ | զարմանալ |
| աքացի | քացի | ոտքով, քացով |
| բիւն | պեոն | բևո |
| բծիզն | պծեզն | չունի |
| բոլորակ | պուլուր | շրջանաձև, նաև գնդաձև |

87 Շ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 66:
88 Անդ, էջ 65:

| Գրաբար | Ղարաբաղի բարբառ | Գրական հայերեն |
|---|-----------------|------------------|
| գար | կյեփ | չունի |
| գահ (բարձր տեղ իմաստով) | գլահ | չի գործածվում |
| գիշերաւ | քըշերաւ | վաղ առավոտյան |
| դալար | տիլար | դալար (բույս) |
| երկայն | երկան | երկար |
| երկոքեան | բրկօքան | երկուսն էլ |
| էւղ | էնղ | յուղ |
| զօր | զօր | ուժ, զորութիւն |
| թաթուլ (կենդանու առջևի փափուկ թաթը) | թանթուլ | չունի |
| թափուր | թափուռ | դատարկ (թափուր) |
| խոնջան | խոնջան | անդրավարտիքի կապ |
| կոյս (կողմ) | կուս | չունի |
| կարկառ (քարերի կույտ) | կարկառ | չունի |
| կոշկոռ | բըշկոռ | հանգույց |

եվ այլն, և այլն:

Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել: Մենք դիտավորյալ շնչեցիներ այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք կապված են կրոնական ծեսերի և առհասարակ եկեղեցու հետ: Այսպիսիք, հասկանալի է, գրաբարից բարբառին են անցել քրիստոնեությունից տարածումից հետո, անմիջապես, կամ էլ հետագա ժամանակներում: Բերված և համանման օրինակներ, սակայն, միայն կապված են գրաբարի՝ խոսակցական լեզու եղած շրջանի հետ, քանի որ բարբառն անգրագետ զանգվածների լեզուն է, իսկ նրանք գրաբարի բառերը կարող էին ընդունել միայն և միայն բանավոր ճանապարհով:

Երևի մասնագետ լեզվաբանները Արցախ-ղարաբաղյան բարբառի մեջ կգտնեն առավել մեծ քանակության գրաբարաբանություններ: Մենք փորձեցինք միայն ցույց տալ, թե ինչպես հին հայերենի ձևերը համարյա իրենց նախնական վիճակներով մնացել են հայ բարբառներից ամենապահպանողականի՝ Արցախ-ղարաբաղյան բարբառի մեջ, և թե ինչպես

այս փաստն ինքնին վկայում է դեռևս խոսակցական լեզու գրաբարի ուժեղ ազդեցությունը բարբառի վրա:

Բազմաշխատ գիտնական Քերովբե Պատկանյանը համոզված պնդում էր, թե Ստեփաննոս Սյունեցու (նրա կարծիքով՝ Հովհան Երզնկացի) թվարկած բարբառները համարյա անփոփոխ գոյություն են ունեցել նաև V դարից առաջ՝ որպես հայ ազգի գոյացմանը մասնակցած ցեղերի լեզուների փոփոխված ու մշակված մնացորդները⁸⁹:

Գծվար է ասել, թե մ. թ. ա. II դարից որքան տառջ արդեն հայերեն էր Արցախի բնակչության լեզուն: Բայց որ կենդանի գրաբարի կողքին այն արդեն հայերեն էր, դա աներկբայելի է, քանի որ վերը ցույց տրված փոխանցումները միայն այդ շրջանի արդյունք են:

* * *

387 թ. բաժանումից հետո Հայաստանի արևելյան մասն անցել էր պարսկական տիրապետության տակ, սակայն դեռևս ուներ իր թագավորությունը, որը պիտի վերջնականապես կորսվեր 428 թվականին: 387—428 թթ. հատվածի Հայոց արևելյան նահանգների մասին պատմագիտական գրականությունը մինչև օրս շփոթ կարծիքներ է հայտնել: Տիրապետողն այն է, որ, իբր թե, «387 թ. հետո այրանական թագավորներին հաջողվել է իրենց տիրույթներին միացնել Արցախը (Ղարաբաղը) և Ուտիքը: Այսպիսով, V դ. ալբանական թագավորության սահմաններն ընդարձակվեցին. նրա մեջ մտավ նաև Կուրի աշափնյակը, Հնարակերտից մինչև Արաքսի ու Կուրի միախառնվելու տեղը, ներառյալ Շակաշեն, Ուտիք, Արցախ հինավուրց մարզերը և Փայտակարան քաղաքի մարզը»⁹⁰:

Համանման կարծիք է հայտնել նաև Յո. Մարկվարտը⁹¹:

Զարմանալին այն է, որ այս գիտնականները գրում են, թե իրենց հայտարարությունների համար համարել են հայկական աղբյուրներում եղած տեղեկությունները⁹², երբ այդ աղբյուրներում նման տեղեկությունների հետքն անգամ չկա: Գիտնականներին մոլորության մեջ է գցել V դարի վերջին Կուրի ու Արաքսի միջադեպում ստեղծված հայկական այն փոքրիկ թագավորությունը, որը երկրամասի անվամբ կոչվում էր «Աղվանից»։ Նրանք «Աղվանիցը» թարգմանում են «ալբանական» (албанское) և ամեն ինչ խառնում իրար:

⁸⁹ К. Патканов, Исследования о диалектах, с. 9—10.

⁹⁰ К. В. Тревер, Եզվ. աշխ., էջ 201.

⁹¹ J. Margvart, Eransahr, s. 118.

⁹² К. В. Тревер, Եզվ. աշխ., էջ 201.

Այս առթիվ մեր քննական հանգամանալից խոսքը թողնելով հիշյալ թագավորական տանը վերաբերող դրվագին, սահնք, որ մինչև 428 թ. Ուտիքն ու Արցախը դեռևս հայոց թագավորության մեջ էին: Հարցական է Փայտակարանի վիճակը:

Արցախը և Ուտիքը հայկական միասնական պետության կազմավորման շրջանում արդեն իրենց հայ քնակչությանը, իսկ Փայտակարանը մ. թ. ա. II—I դդ. հայացած, Արշակունյաց հարստության վերացումով (V դարի սկիզբ) կտրվեցին համահայկական քաղաքական ու մշակութային կյանքի ոլորտից: Եկեղեցին էր մնացել միակ կենդանի երակը, որը պիտի այս մարդերին հասցնեի համազգային կյանքի համար անհրաժեշտ կենսատու հյուսիսը:

Այս ժամանակներում Հայաստանը բաժանված էր ոչ թե երկու մասի՝ բյուզանդահայատակ ու պարսկահայատակ, այլ այնքան մասերի, որքան մարդեր կամ նախարարություններ եղել էին միասնական թագավորության օրերում: Հիմա ամեն մի նախարար ինքն էր իր երկրի տերը, հարկատուն ու պատասխանատուն օտար բռնակալի առաջ: Մվառված ու բզիկ-բզիկ էր դարձել այն Հայաստանը, որ մի ժամանակ ոտք էր գցում հարևան հզոր տերությունների հետ: Վիթխարի մի դրամադուխ մանրվել ու ցրվել էր ի սփյուռս, և կտրված էր այս ցրիվ մասերը հավաքող, բռունցք դարձնող ձեռքը:

Պետք է ասել, որ տարբեր էին այս ցրված մասերի վիճակները: Նույնիսկ Արևելից կողմանց երեք նահանգները միանգամայն տարբեր պայմանների մեջ էին գտնվում բռնակալական լծի տակ: Փայտակարանը, ինչպես արդեն ասվել է, դարձավ Պարսից տերության հենակետը՝ Անդրկովկասն իր ճիրաններում պահելու համար: Բնակչությունը, բռնակալի կռապաշտական կրոնին ենթակա, ուժացման օրհասի առաջ, պիտի գաղթեր-փրկվեր կամ, հակառակ դեպքում, պարսկանար:

Ուտիքն առավել բարենպաստ պայմաններում էր գտնվում մինչև V դ. կեսերը, երբ պարսից մարզպանը նստում էր Չողում: Պարտավի կառուցումով (460-ական թթ. սկիզբ) այստեղ կենտրոնացան պարսից վարչական մարմինները, Կամաց-կամաց այստեղ էին հավաքվում տարաբնույթ և ալլադավան բնակիչներ, որոնցից նեղվում էր տեղաբնիկ հայությունը: Այստեղ արդեն վարչաքաղաքական այնպիսի վիճակ էր, որ նահանգի հայ տերերն անգամ քաշվում էին դեպի Արցախի անմատչելի բերդերն ու ամրոցները: Արցախը թիկունք էր դարձել Ուտիքի համար. և ինքն էլ իր թիկունքը դարձրած Սյունիքին ու հայոց միջնաշխարհին՝

կանգնել էր օտարամուտ հեղեղների դեմ, վաղվա օրհասին դեմահանդիման:

Գծվար չէ պատկերացնել, թե ինչպիսին կլինեի այդ վաղը, եթե հենց այդ ժամանակ էլ շատեղծվեր հայոց գիրը:

Հայերեն գրերի տարածմանը վերաբերող աղբյուրներում հանգամանորեն խոսվում է նաև Հայոց արևելից կողմանց գավառների մասին: Կորյունը վկայում է, որ Մաշտոցը Գարդմանքում (Ուտիք) ոչ միայն գիր ու դպրություն է տարածում, այլև զբաղվում է քարոզչական գործով:

Արցախի անունն այս աղբյուրներում առանձնապես չի նշված: Սակայն այստեղ կատարված լուսավորական գործը պետք է տեսնել այն տեղեկությունների մեջ, որոնք վերաբերում են Սյունյաց կողմերին: Բանն այն է, որ այս ժամանակ Արցախը կոչվում էր Փոքր Սյունիք⁹³, և կարելի է կարծել, որ նրա տնօրինությունը հանձնված էր Սյունյաց գահերեց իշխանին:

Կրոնական ու ազգային տեսակետներից Փոքր Սյունիք-Արցախը ծանրադուլն վտանգի տակ էր, որովհետև այն, Ուտիքի հետ միասին, տառացիտրեն մնացնլ էր հայ ժողովրդի արեելյան եզրը, ենթակա հայակուլ բռնակալների շնորմիջվող հարվածներին:

Կորյունի հաղորդած տեղեկություններում կա մի շատ կարևոր հանգամանք: Գրեի ստեղծելուց և նրանցով աշակերտների առաջին խմբերին գրագետ դարձնելուց հետո Մաշտոցն այս նորընծա ուսուցիչներին ուղարկում է Հայաստանի տարբեր գավառները՝ գիր և ուսում տարածելու: «Որ և սկսան իսկ սինք եկեղեցուլ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս, ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն նշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն գիտութեանն, բավականս և առ ի զայսն ղեկուցանելոյ»⁹⁴:

Այսպես, ճշմարտության աշակերտներին խումբ-խումբ Հայաստանի գավառներն է ուղարկում, իսկ Սյունիք ինքն անձամբ է գնում. «Ապա ետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր: Եւ անդ ատուածասէր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղենակ անուն: Բազում օգնականութիւն գտեալ ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն, մինչև հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առա-

93 Խոեկնացի, էջ 260:

94 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 58:

եւ զգազանամիտ զվայրենագոյն զճիւղադարոյ կողմանցն. և այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ և դայիկաբար սնուցանել և խրատել, մինչև ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել...»⁹⁵:

Նույն տեղեկությունն է հաղորդում և Սյունյաց պատմիչը, թե Մաշտոցը «Եդ դպրատունս յաշխարհին Սիւնեաց, և կարգեաց ի վերայ դաշակերտակիցն իւր զԲենիամին: Եւ փութապէս զամենեսեան ուսոյց հայերէն դպրութեամբ. և գիտողս աստուածային կտակարանաց»⁹⁶:

Եվ, ինչպես պետք էր սպասել, Սյունյաց աշխարհում (Մեծ և Փոքր Սյունիքներում) դպրութիւն տարածելուց հետո է, որ Մաշտոցը գնում է Վրաց և Աղվանից կողմերը՝ նույն առաքելութեամբ:

Փոքր Սյունիքի (Արցախի) Հաբանդ գավառի Ամարաս գյուղաքաղաքում, ըստ ավանդութեան, Մեսրոպ Մաշտոցն իր ձեռքով է բացել առաջին հայրենի դպրոցը:

Մաշտոցն անձամբ է եկել այս հայաշխարհը, որպեսզի իր ձեռքով տարածի հայրենի գիր ու դպրութիւն: Ո՞րն էր նրա մտահոգութիւնը: Գիմազբարձ կանգնել այս կողմերի հայութեան վերահաս ուժացմանը, Հայ ժողովրդի ամենալուսավոր գավառն ու մեծագոյն երախտավորը լավ էր հասկանում Սյունիքի և հատկապես Արցախի հայապաշտպան գերը: Պատահական չէր, որ առաջին դպրոցներից մեկն էլ հիմնեց Ամարասում, Գրիգոր Լուսավորչի կառուցած վանքում⁹⁷: Գրիգոր Լուսավորիչը ևս Արևելյան Հայաստանում իր գործունեութիւնն այստեղից էր սկսել՝ տեղի հայ բնակչութեանը ներգրավելով ազգային ինքնապաշտպանութեան այն ամուր շրջապարսպի մեջ, որպիսին երկար դարեր պետք է հանդիսանար հայոց ինքնուրույն քրիստոնեական կրօնը: Կարծես երկու մեծ հայրենասիրներն էլ գիտեին, թե ո՞ր կողմից է սպասվում հայութեան վրա գալիք աղետը: Եվ երիցս իրավացի է ն. Ակիկյանը, երբ գրում է. «Ե դարուն Գուգարք, Արցախ, Ուտի, Փայտակարան և Հոռմեական Հայաստան ազգագրական տեսակետով կը նկատվեին մասեր հայ ժողովրդի մեծ զանգվածին, շար բախտով միայն գատված անկե... Հայ ըմբռնումով Մեծ Հայաստան գաղափարի սահմաններուն մեջ են անոնք: Այս գիտակցութեամբ այցելած էր Մաշտոցի 415-ին Աղուանից աշ-

խարհ (Հայոց արևելից կողմանք— Բ. Ու), հաղորդակից ընելու գայն նորաստեղծ հայ գրականութեան արգասիքներուն»⁹⁸:

Լեոն դրում է. «Շարունակելով իր կրթական-քարոզական առաքելութիւնը հյուսիսի վայրենի լեռնաստաններում, Մաշտոցն անցավ Արցախ և Ուտի նահանգները, քարոզեց ու դպրոցներ բաց արավ նաև այդ կողմերում»⁹⁹:

Այսպիսով, Արցախում և Ուտիքում հայերեն խոսքն ամրապնդվում ու տարածվում է նաև հայերեն գրով: Եկեղեցիներին ու վանքերին կից դպրոցները կրթում են ոչ միայն ազատների ու մեծատունների երեխաներին, այլև աղքատներին: Մ. Կաղանկատվացին պատմում է Արցախական աշխարհում գոյութիւն ունեցող դպրոցների մասին և ապա վկայում, որ այդ աշխարհի Պարզկան գավառի գյուղերից մեկում աշխատավարձով դաս է տալիս մի աբեղա. «Ի դպրոց մտանէր և ուսանէր թոշական»¹⁰⁰: Այս տեղեկութեան համաձայն՝ մինչև աբեղայի հայտնվելն էլ գյուղում դպրոց կար, ուր «թոշակաւ» աշակերտներ էին կրթում:

Եթե գյուղը դպրոց ունէր, այն չէր կարող գործել միայն մեծատունների համար:

Գարձյալ Կաղանկատվացու հաղորդածից գիտենք, որ Հայոց Աղվանքի թագավոր Վաչագան Բարեպաշտը գյուղերում հիմնած դպրոցներ էր գնում, անձամբ հետաքրքրվում ուսման զրկածքով և շատ էր ուրախանում, երբ լսում էր մանկանց հայրենախոս ընթերցանութիւնը. «Եւ յորժամ ինքն ի գեղն գայր ի կատարել զյիշատակս սրբոցն, նստեալ ինքն ի դպրոցատանն՝ զորդիս դիւթաց և քրմաց զինքեամբ կացուցանէր՝ գուրջայարար բակ առեալ բազմութեանն յոյժ, ոմանց դիրս և ոմանց պնակիրտս ի ձեռին ունելով, և միաբան առհասարակ ամենեցուն մեծաձայն հրամայէր կարգալ և ինքն ուրախ լինէր առավել քան թէ մեծագոյն ուրուք գտեալ աւար»¹⁰¹:

Ուրեմն, արցախային բառն իր ազգային ինքնութիւնը պաշտպանելու համար բոլորանվեր ստացավ նաև ամենահոգր զենքը՝ հայերեն գիր:

Ստացավ՝ այն երբեք և ոչ մի գնով ձեռքից չտալու համար:

95 Անդ, էջ 60:

96 Ստ. Օրբելյան, էջ 55—56:

97 Բուզանդ, 1913, էջ 23—24:

98 Ն. Ակիկյան. Մ. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 315: Հետաքրքիր է, որ 387-ի բաժանումից հետո հայոց արևելյան գավառների վիճակն այսպես է գնահատում նաև Հյուսիսային (տե՛ս նրա «Հին հայոց տեղոյ անունները», էջ 26—28):

99 Լեո, Հայոց պատմութիւն, հ. Ա, էջ 510:

100 Կաղանկատուացի, էջ 83:

101 Անդ, էջ 60—61:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում երկու խոսքով անդրադառնալ ազգանից գրի շուրջը եղած տեղեկություններին ու այս տեղեկություններին մեկնաբանություններին:

Հայկական աղբյուրներից (միա՛յն նրանցից) հայտնի է, որ Մեսրոպ Մաշտոցը, հայոց գրի հանձարեղ ճեղինակը, գրեր է ստեղծել նաև Վրաց ու Աղվանից աշխարհների համար:

Առաջինի ճակատագիրը հայտնի է. վրաց գրով շուրջ 15 դարու ընթացքում ստեղծվել է մի մշակույթ, որն աշխարհի հնագույններից ու ամենազարգացածներից մեկն է համարվում:

Երկրորդը շարողացավ կատարել այն դերը, որ վերապահվում է ամեն մի ժողովրդի գրին ու դպրութանը:

Այսօր, ազգանից գրի ստեղծումից շատ դարեր հետո, գիտնականները խրախուսելի մի նախանձախնդրությամբ աշխատում են պարզել այդ գրի առեղծվածը և հաճախ են ընկնում արտառոց ծայրահեղությունների մեջ:

Ոմանք չեն հավատում հայկական աղբյուրներին, որոնց համաձայն՝ Մաշտոցը գիր է ստեղծել Աղվանից երկրի համար: Չեն հավատում և, այսուհանդերձ, աղմուկով խոսում են բարձր զարգացած մի դպրության մասին, որ, իբր թե, ունեցել են աղվանները: Այս դեպքում հարց է առաջանում՝ նրանք սրտեղի՞ց իմացան, թե աղվանները դպրություն են ունեցել և այն էլ բարձր զարգացման հասած, ծաղկում ապրած: Չէ՞ որ այդ գրի համար տեղեկատու միակ աղբյուրը հայ մատենագրությունն է, և այս մատենագրությունն էլ միայն այն է ասում, որ Մեսրոպ Մաշտոցը գիր է ստեղծել Աղվանք երկրի համար:

Յավային այն է, որ հայ հետազոտողներն իրենք էլ իրենց ուսումնասիրություններում միշտ շփազանցված ձևով են ներկայացրել եղած տեղեկությունները, նրանց շուրջն ստեղծել ավելորդ աղմուկ: Եվ հիմա արդեն այնպիսի դրություն է, երբ Աղվանքում շտեղծված, երբեք էլ գոյություն չունեցած դպրության մասին բացահայտորեն խոսելը կարող է դիտվել որպես սրբապղծություն կամ առնվազն ազգանցիների ազգային հպարտությունը ոտնահարելու փորձ:

Այո, Մեսրոպ Մաշտոցն աղվանների, ավելի ճիշտ՝ աղվանական ցեղերից մեկի՝ գարգարների համար գիր է ստեղծել: Իսկ հետո՞ ինչ է եղել: Երևի ոչի՛նչ: Որովհետև, եթե այդ գրով որևէ գիրք հորինված լիներ՝ կմնար, կպահպանվեր, կամ եթե գիրքն էլ չմնար, գոնե նրա մասին մի

տեղեկություն կմնար: Եթե ենթադրենք նույնիսկ, որ մեկ գրքով էլ է դպրություն լինում:

Բայց այդպիսի բան չկա, չի եղել: Իսկ եթե եղել է, ո՞ր է:

Ասում են՝ եղել է: Մեկի տեղ հազարն է եղել: Բայց տեսեք, որ հայ հոգևորականները յուրացրել են այդ գրականությունը, այսինքն՝ սկզբում թարգմանել, իրենցն են դարձրել, ապա բնագրերն այնպես են ոչնչացրել, որպեսզի ոչ մի հետք էլ չմնա նմուշի համար:

Սա, եթե մեզմ ասելու լինենք, զրպարտություն է: Քանի որ հայ հոգևորականներ են եղել Մեսրոպ Մաշտոցը, որ գարգարացոց համար գիր ստեղծեց, Սյունեցի Անանիան, որը Մաշտոցին օգնեց այդ երախտալից գործի մեջ: Այդ հոգևորականները նրա համար շտեղծեցին ազգանից գիրը, որ հետո էլ ոչնչացնեն, անհետ կորցնեն:

Հայ հոգևորականը Կորյունն է, որը բերկրանքով արձանագրել է, թե մեր սուրբ Մեսրոպն ստեղծեց այդ գիրը: Հայ հոգևորականներ էին Մովսես Խորենացին, Պետրոս Սյունեցին, Մովսես Դասխուրանցին, Վարդան Վարդապետը, Ստեփաննոս Ծորբելյանը և բոլոր նրանք, որոնք հղբայրական գործով ու սրբությամբ աղվանից գրի մասին այդ մի հատիկ լուրք սերնդեսերունդ հաղորդեցին, որպեսզի աշխարհն իմանա, որ իրենց հարևանն էլ մի ժամանակ գիր է ունեցել:

Եթե հայ հոգևորականները հատուկ նպատակով յուրացրին, ապա հետքերը վերացրին. էլ ինչո՞ւ իրենց գրքերում սրբության պես պահեցին ու փայփայեցին այդ գրերի ստեղծման մասին եղած վկայությունը: Ինչո՞ւ սա էլ չոչնչացրին: Ինչո՞ւ չոչնչացրին նաև այն միակ ձեռագիրը, որի մեջ դեռ մնում է ազգանից կոշված այբուբենը: Չէ՞ որ նախ և առաջ պիտի անհետ ջնջեին այս հզոր իրեղեն ապացույցները:

Անհնար է այս մեղադրանքի ու մարդկային հասարակ տրամաբանության միջև հաշտության եզրեր գտնել:

Եվ չի կարելի չհարցնել, թե ի՞նչ մեղք ունեն հայ հոգևորականները, երբ նրանց ստեղծած ու եղբայրորեն պարզևած գրով գարգարցիները շարողացան մնալուն որևէ արժեք ստեղծել: Կամ ի՞նչ մեղք ունեին գարգարցիները, որոնց լեզուն Աղվանք երկրի 26 լեզուներից մեկն էր միայն և շարողացավ դառնալ ընդհանրական մյուս բոլորի համար, որպեսզի իրավունք ունենար դառնալ նաև ամբողջ երկրի դպրության ձևն ու կաղապարը:

Սակայն այս ամենի մասին խոսելիս չի կարելի անտես անել աղբյուրները:

Կորյունը վկայում է, որ դեռևս Հայաստանի բյուզանդահայտակ

մասում Մաշտոցը գիր է ստեղծել աղվանցիների համար: Ապա գալով Հայաստանի մայրաքաղաքը, թագավորին ու կաթողիկոսին ներկայանալուց, արած-թողածի մասին ղեկուցելուց ու հետագա անելիքները որոշելուց հետո, կենտրոնական գավառներում, Սյունիքում (սրա հետ նաև Փոքր Սյունիք-Արցախում), Հունահայաստանում գիր ու դպրութուն տարածելու գործը զուգույն բերելուց հետո, նույնիսկ վրաց գրերն ստեղծելուց հետո, գնում է Աղվանքի մայրաքաղաքը՝ Չող: Պետք է կարծել, որ սա եղել է 428 թ. առաջ, քանի որ Չողում դեռևս նստած էր Աղվանքի Արշակունի թագավոր Արսվաղենը (նրա թագավորությունն ու հայ Արշակունյաց թագավորական հարստությունը միաժամանակ պիտի վերացված լինեն): Արսվաղենը (Կորյունի մոտ՝ Արսվաղ) և երկրի եպիսկոպոս Երեմիան սիրով ընդունում են Մաշտոցին, ապա իմանալով գալու նպատակը, ամեն կերպ աջակցում, որպեսզի նա երկրում դպրոցներ բացի ու դպրութուն տարածի: Հր. Աճառյանը Կորյունի այս հատվածի մեջ է մտցնում նաև այսպիսի միտք. «Հետո [Արսվաղենն ու Երեմիան] հարցրին իր [Մաշտոցի] գալու նպատակը: Մենքուր բացատրեց, թե իր նպատակն էր նորագյուտ աղվաններն գրերը տարածել ժողովրդի մեջ...»¹⁰²:

Կորյունի երկում այսպիսի բան չկա: Ահա նրա գրածը. «Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր: Եւ նոցա երկոցունց զուզակցելոց, եպիսկոպոսին և թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային ևս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել և գումարել՝ ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց, և ոռճիկս կարգել ի գարմանս»¹⁰³: [Ապա երբ հարցրին, նա բացատրեց իր գալու նպատակը: Եվ նրանք՝ երկու զուգակիցները, եպիսկոպոսն ու թագավորը, հանձն առան ընդունել դպրութունը և հրամայեցին իրենց իշխանութեան գավառներից ու տեղերից դպրութեան արվեստի համար բազմաթիվ մանուկներ բերել, ժողովել, արժանավոր ու հարմարավոր տեղերում դասատուներ-դպրոցներ (կազմել) և (նրանց) ապրուստի համար թոշակ նշանակել]:

Ո՛չ մի խոսք աղվանական գրի մասին: Կարծես այն չի էլ եղել:

• Այսքանից հետո Կորյունը գրում է. «Իսկ իբրև հրամանն այն արդեամբք և դործովք յանկ ելանէր, ապա այնուհետև երանելոյն Երեմիայի

եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յական թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարէտգէտք և առաքելածանօթք և աւետարանածառանդ լինէին...» և այլն¹⁰⁴:

[«Իսկ երբ հրամանն իսկապես գործով զուգույն եկավ, ապա այնուհետև երանելի Երեմիա եպիսկոպոսն սկսեց շուտով աստվածային գրքերի թարգմանությունն անել, որով իսկույն մի ակնթարթում Աղվանքի վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարո մարդիկ մարգարեագետ և առաքելածանոթ և ավետարանի ժառանգներ դարձան...»]:

Այսքանի կազմակերպիչն ու ակնատեսը լինելուց հետո Մաշտոցը հրաժեշտ է տալիս Աղվանքին ու անցնում Բաղասական աշխարհը:

Այս նոր աշխարհում Մաշտոցի կատարածի մասին խոսելուց առաջ տեսնենք՝ ի՞նչ է գրված Կորյունի գրքում, և գրվածն ինչպես են հասկանում ու մեկնաբանում գիտնականները:

Երեմիան շուտով թարգմանեց աստվածային գրքերը, և մի ակնթարթում Աղվանքի «վայրենամիտ» մարդիկ խելոքացան, դարձան առաքելածանոթ:

Ի՞նչ է նշանակում «թարգմանել»: Դա սուաշնորում նախ և առաջ նշանակում էր մեկնել, բացատրել¹⁰⁵, Հետևապես Երեմիան Աղվանքի մարդկանց մեկնեց, բացատրեց աստվածային գրքերը, և նրանք էլ հասկացան այդ գրքերի իմաստը, խելոքացան, աստվածասեր դարձան:

Սա արդեն Մաշտոցի ու Երեմիայի գործի երկրորդ մասն էր՝ քարոզչությունը: Առաջինը դպրոցների հիմնելն էր ու դպրութուն տարածելը: Մինչդեռ Կորյունի վկայությունն այս հատվածը ցայսօր այնպես է բացատրվել, թե Մաշտոցն Աղվանքում դպրոց է հիմնել աղվաններն գրերով առաջնորդվելու համար: Երեմիան էլ նրա ներկայությամբ այդ գրերով իսկույն թարգմանել է աստվածային գրքերը: Ահա այս թարգմանություններն էլ, իբր թե, աղվանից հարուստ, ծաղկուն դպրութեան կորիզն ու հիմքն են հանդիսացել:

Կորյունին այսպես է մեկնաբանում (= թարգմանում) նաև Հր. Աճառյանը, թե «Երեմիա եպիսկոպոսը ձեռնարկեց թարգմանելու Աստվածաշունչը աղվաններն լեզվի... Երևում է, որ ս. Գրքի ամենամեծ մասը (հատկապես հիշում է Կորյունը Մարգարեությունները, գործք առաքելոց

104 Անդ.

105 Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. Բ, էջ 1148: Սու. Մայրապետյան, ՀԹԲ, հ. Բ, էջ 8: Ժամանակակից «թարգմանել» իմաստի հետ նաև՝ «արտահայտել, բացատրել, մեկնել»:

102 Հր. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 219:

103 Կորյուն, էջ 70:

և Ավետարան) թարգմանվեցին աղվաներենի, անշուշտ, հայ թարգմանության վրայից»¹⁰⁶:

Իսկ եթե նկատի ունենանք, որ ըստ Կորյունի և հատկապես Խորենացու՝ Սահակ Պարթևը, Մաշտոցը և նրանց աշակերտները, Մեսրոպի՝ Աղվանքից վերադառնալուց հետո նոր միայն պիտի ձեռնարկեին աստվածային գրքերի թարգմանությանը, այն ժամանակ առավել հասկանալի կդառնա, թե Սրեմիայի աղվաներեն թարգմանած գրքերի փաստն ինչպիսի՞ հրաշք էր իր տեղում:

Կորյունն այսպիսի բաներ չի ասում: Եվ անհնար է պատկերացնել, թե Սրեմիան մեն-մենակ այդքան կարճ ժամանակում հասցնե՞ր վերջ թվարկած գրքերը այսօրվա առումով թարգմանել, ու Աղվանքի մարդիկ էլ մի ակնթարթում (սյուրիան թօթափել)՝ գիր սովորեին, կարդային թարգմանված գրքերը, դառնային մարգարեագետ ու աստվածասեր: Մասնավոր, երբ Կորյունը պարզ ասում է, թե Սրեմիան թարգմանեց (= բացատրեց, մեկնաբանեց), և նրանք էլ հասկացան... և այլն:

Կորյունի գրքում «թարգմանել» = «մեկնել» ու «թարգմանել» = «այլ լեզվով իմաստը շարադրել» գործածությունները կան և ցանկության դեպքում այդ տարբերությունները կարելի է նկատել: Նա Սրեմիայի կատարածը համարում է պարզապես թարգմանել. «Սրեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր»¹⁰⁷, իսկ Սահակի կատարածը «թարգմանել և դրել». «Ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն Իսահակ...»¹⁰⁸:

Կորյունը Աղվանքում աղվանից գրի գործածությունը վկայող ոչ մի բան չի ասում: Նրա պատմածից միայն մի տպավորություն է ստեղծվում, որ Մաշտոցը Աղվանքում, նրանից հետո էլ Բաղասական աշխարհում (որը գտնվում էր անմիջապես Կուրի ձախ ափին, Ոստիքի հարևանությամբ), ապա Գարգմանքում տարածել է հայոց գրերը, դպրոցներ բացել և մեկ էլ պայքարել հերձվածների, այլ աղանդների դեմ:

Այս է Մաշտոցի ժամանակակցի, նրա աշակերտի ու կատարած գործի ակնհատեսի վկայությունը:

Հետո գալիս է Խորենացին, որը ոչ թե վկայում, այլ պատմում է: Նա աշխատում է քննական հայացքով տեսնել եղածը և դա այնպես ներկայացնել, որպեսզի ընթերցողն իմանա ամբողջ ճշմարտությունը: Խորենացու տեղեկություն համաձայն ևս Եսայիանն ու Սրեմիան հոժարու-

թյամբ Մաշտոցին երեխաներ են հանձնում նոր դպրոցների համար: Եվ այսքանից հետո է, որ Սյունիքից եկած Անանիայի ու Բենիամին թարգմանելի (մեկնելի) օգնությամբ ստեղծում է աղվանագիրս կոկորդարխոս աղխաուր խժական խնցրեկազունին այնորիկ Գարգարացոց լեզուին»¹⁰⁹:

Այսքան բան: Ո՛չ թարգմանություն, ո՛չ աղվանից գրավոր դպրոցություն:

Պետք է կարծել, որ Խորենացու տեղեկությունն ավելի լրիվ է ու հավաստի, նախ՝ որ նա իր ձեռքի տակ ուներ Կորյունի գիրքը, ապա տեղյակ էր իրականությունը: Գրերի գյուտից ու տարածումից անցել էր բավական ժամանակ¹¹⁰, Հետո էլ, պարզ երևում է, որ Կորյունն Աղվանքի ցեղերի մեջ տարբերակում չէր դնում, իսկ Խորենացին ո՛չ միայն գիտե, որ աղվան ազգ չկա, և տվյալ դեպքում Կորյունի «աղուան աղալա» նշանակում է՝ «Աղվանից եկեղեցուն հարող», ինչպես որ ասում էին «հեթանոս ազգան», «ազգա քրիստոսնեայ», «հտադայում՝ աղգտով մուսուլման» և այլն: Խորենացին պարզում է, որ Աղվանից եկեղեցուն պատկանող այդ մարդը եղել է զարգարների ցեղից: Հետո էլ կոնկրետ տեղեկություն է հաղորդում այս ցեղի լեզվի մասին:

Եվ եթե գրերի ստեղծումից հետո երեք քառորդ դարի ընթացքում զարգարների լեզվով գրականություն ստեղծված լինելը, դժվար թե Խորենացին լուրջյան մասներ այդ կարևոր փաստը:

Մյուս պատմիչները (Դասխուրանցի, Վարդան Վարդապետ, Օրբելյան և այլք) այս կամ այն ձևով վերապատմում են Կորյունի ու Խորենացու տեղեկությունները, նրանց խառնելով ավանդապատում զրույցներ ու ինքնահնար պատմություններ: Եվ, այսուամենայնիվ, ոչինչ չեն ավելացնում կատարված փաստին. այսինքն՝ միայն այն գիտեն, որ Մաշտոցը գիր է ստեղծել զարգարցիների համար:

Հավանաբար ոչ մի կարևոր նորություն չպիտի հայտնե՞ր նաև Պետրոս Սյունեցու պատմությունը (որի հետ որոշակի հույսեր էր կապում Հր. Աճառյանը)¹¹¹, քանի որ Սյունեցին էլ Խորենացուց հետո եկող սերունդն էր, ժամանակով ավելի հեռու Մաշտոցից:

Հետագա ժամանակների պատմիչ Դասխուրանցին, Խորենացուց արտագրելով զարգարներին գրի մասին եղած տեղեկությունը և մեկ էլ ցույց տալով զարգարների բնակավայրը (Կովկասյան լեռների փեշերը), տա-

106 Խորենացի, էջ 329:

110 Սո. Մալխասյանցի կարծիքով՝ Խորենացու պատմությունը գրվել-ավարտվել է 483-485 թթ. (տե՛ս Մ. Խորենացի; Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 19):

111 Հր. Աճառյան, Հայոց գրերը, էջ 225:

106 Հր. Աճառյան, Հայոց գրերը, էջ 220:

107 Կորյուն, էջ 70:

108 ԱՆԳ, էջ 74:

նացիորեն ոչինչ չի ավելացնում¹¹², նրա երկում ոչ մի տեղեկություն չկա գարգարական գրի շրջանառության մասին: Եվ այն էլ մի դարում, որ, ըստ պատմաբանների, եղել է գարգարական-աղվանական գրի ծաղկման զագաթնակետը¹¹³:

Մասնագետները Մովսես Դասխուրանցու երկում են տեսնում շատ վկայություններ աղվանից գրի գոյության մասին և այդ վկայություններից են համարում «գրքեր ու տախտակներ, որոնցով կատարվում էր սրբերին հիշատակելը դպրոցում, հիշվում են Վաչագան Բարեպաշտ արքայի հրովարտակները, նշվում են գրերի հրի ճարակ դարձնելը խազարների կողմից՝ վերջիններիս ավերիչ արշավանքների ժամանակ VII դարում և այլն»¹¹⁴:

Եվ նշում են Դասխուրանցու գրքի էջերը, որոնցում, սակայն, վկայություններ չկան ու չեն էլ կարող լինել, որովհետև այդ էջերում Դասխուրանցին պատմում է Արցախի դպրոցի մասին (էջ 83), այս Դասխուրանցին աղվաններն գրքեր չէր ցույց տվել, որպեսզի վկայեր նրանց հրի ճարակ դառնալը: Նրա խոսքը հայերեն գրքերի մասին է: Աս. Մնացականյանը բավական համոզիչ փաստարկներով ապացուցում է, որ Վաչագանի թղթերը, հարց ու պատասխանները և այլն՝ բոլորն էլ հայերեն են եղել¹¹⁵: Եվ անտրամաբանական էլ է մտածել, թե աղբյուրյամբ հայ Վաչագան թագավորը («ի գարմից Հայկայ՝ յաղգականութենէն Առանայ»)՝¹¹⁶ վերցնելու ու իր երկրի դպրոցներում շրջանառության մեջ դնելու գարգարական խեցքեկագույն, խժական լեզուն:

Ստացվում է հետաքրքիր պատկեր: Աղվանից գրի ծաղկման ամենարուն շրջանում Դասխուրանցին և նրա դասակիցները հայերեն գրում

112 Անդ, էջ 132:

113 «Очерки истории СССР III—VII вв.», с. 327: «Временем расцвета албанской письменности следует считать V—VII вв.». К. В. Тревер, *Եզդ. աշխ.*, էջ 309. բառացիորեն նույնը: Իսկ պրոֆ. Ա. Գ. Արրահամյանը գրում է. «Պատմական աղբյուրներից հայտնի է նաև, որ աղվան ժողովուրդն ունեցել է իր սեփական գիրը, որը գործածության մեջ է դրվել ավելի քան ութ դար շարունակ» (տե՛ս նրա՝ «Дешифровка», էջ 70): Հարգելի գիտնականը, սակայն, ցույց չի տալիս և ոչ մեկն այն աղբյուրներից, որոնք, իբր, վկայում են, որ աղվանական գիրը գործածության մեջ է եղել «ավելի քան ութ դար շարունակ»:

114 Г. А. Климов, К состоянию дешифровки агванской (кавказско-албанской) письменности. Журнал «Вопросы языкознания», М., 1967, № 3, с. 68.

115 Աս. Մնացականյան, *Եզդ. աշխ.*, էջ 80, 118—134 և այլն:

116 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 193: Սա կրկնությունն է «Աղվանից աշխարհի պատմության» հիմնավոր տեղեկության (անդ, էջ 196):

են Աղվանից աշխարհի պատմությունը, վկայում, որ այդ աշխարհում իշխում են հայերեն լեզուն ու գիրը, նույնիսկ գտնված հին ու նոր արձանագրությունները հայերեն են, ասորերեն կամ հոտոմ. «Սև իբրև փորեցին թիզս տասն՝ գտին կողոփս արծաթեղէնս՝ կապարի կնիք ի վերա եղեալ յոր տախտակ մի ոսկէճոյլ հաստահեղոյս բեռեալ, և ի նմա գրեալ ասորերէն, և հայերէն գրով»¹¹⁷: Մի այլ տեղ. «...երևէր տապան մի արծաթի ժանգոտազոյն հնացեալ, որ առհասարակ հայ, հոտոմ և ասորի գիր...»¹¹⁸: Այս՝ նույնիսկ հոտոմ ու ասորերեն գրերի գործածության մասին է գրում, իսկ. «ավելի քան ութ դար շարունակ», իբր թե, գործածության մեջ եղած աղվանական գրի գոնե մեկ գործածությունը հաստատող և ոչ մի բառ չի ասում:

Աղվանից գրի համար չի կարող լինել ավելի արժանահավատ աղբյուր, քան Աղվանից աշխարհի միակ պատմագիր Մովսես Դասխուրանցու գիրքը: Նրանում երեք հիշատակություն կա աղվանից գրի մասին: Առաջին. գիր (դպրություն) ունեցող ժողովուրդներին (կամ երկրները) թվարկում է, նրանց շարքում էլ՝ Աղվանքը¹¹⁹:

Երկրորդ. «մի ոմն ի նախեղելոց վարդապետաց, որ ի Հոգույն Սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգաց առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց»¹²⁰:

Երրորդ. «...Եկեալ երանելին Մեսրոպ յկղուանս... առեալ յանձն զվարդապետութիւն նորա որ ըստ շնորհելոյ նմա յաստուածուստ պարգևին Հայոց և Վրաց ետ նշանագիր... Մեսրոպ... ստեղծ զնշանագիրս կոկորդախօս, աղխալուր, խժական, խեցքեկագունի լեզուին գարգարացւոց»¹²¹:

Ուրիշ ոչ մի խոսք, ոչ մի հատիկ վկայություն կամ բացատրություն: Կարծես մատենագիրը շատ էլ տեղեկություն չունի ո՛չ նշանագրերի, ո՛չ նրանց ստեղծողի և ո՛չ էլ, հատկապես, այդ գրերի գործածության մասին:

Դեռ ավելին. Դասխուրանցու գրքում Մաշտոցն առավելապես քրիստոնեության տարածող է, եկեղեցի նորոգող, սուրբ խաչի մասունք փրկող ու պահող¹²², քան թե գիր ստեղծող ու դպրություն տարածող: Ինչո՞ւ,

117 Կաղանկատացի, էջ 236:

118 Անդ, էջ 247:

119 Անդ, էջ 12:

120 Անդ, էջ 104:

121 Անդ, էջ 132:

122 Անդ, գիրք Ա. գլ. 37:

որովհետև գարգարցիները համար ստեղծած նրա գիրը օրորոցից դուրս չեկավ ու չբալլեց, երևույթի ու շատացավ, որպեսզի Ազգանից աշխարհի պատմիչը նրա լայնահուն գոյություն փաստը տեսներ ու արձանագրեր: Եղած այս կցկտուր տեղեկություններն էլ, ինչպես ասացինք, նա քաղել է հորենացուց: Այլապես ինչո՞ւ, իրականությունը թողած, պիտի միայն կրկնի իրենից մի քանի դար առաջ ապրած մատենագրի՝ դարձյալ պակասավոր վկայությունը...

Ազգանական գրի լայն շրջանառության մասին պնդող գիտնականներն ուրիշ է՞լ ինչպիսի հիմքեր ունեն: Հայկական ձեռագրերում (հիմնականում XVI դարի սկզբներից) գտնված տեղեկություններն այն մասին, որ

1. Եղել են ազգանագրեր, 52 տառ, որոնք լրիվ պահպանվել են Երևանի Մատենադարանի № 7117 ձեռագրում¹²³:

2. Գարձյալ Մատենադարանի ձեռագրերում եղած մի կրոնական հորինվածք և կողքին էլ՝ հայտարարություն այն մասին, որ դրա բնագիրն ազգաներեն է եղել, սուրբ հայրերը թարգմանել են հայերեն. «Յաղագս պատմութեան սուրբ և աստուածային իւղոյն, զոր գրեալ է ի սրբոյ հարցն յԱրևելս յԱղուանի գիրս, և թարգմանեցին ի հայ գիր»¹²⁴:

3. «Գիրք թղթոց»-ի մեջ պահպանված հայոց Բարգեն կաթողիկոսի թուղթը Պարսկաստանի ուղղափառ քրիստոնյաներին, որի «...Այսուիկ վարիմք հաւատովք, զոր և գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իւրաքանչիւր աշխարհի գրով»-ից, իբր թե, պետք է հասկանալ, որ թուղթը գրված է եղել հայերեն, վրացերեն, ազգաներեն:

4. Վերջապես՝ Հեթում Պատմիչի մի խոսքը Հայոց երկրի մասին. «Ազգք բնակեալք յաշխարհին Հայոց զանազան անուամբք կոչին ըստ զաւառաց և ըստ տեղեաց յորս կանն... Ունին նշանադիրս արամեանս, և այլս ևս՝ որ ասին Հալոյն (Հայոց կամ Աղուանից)»¹²⁵:

«Հայոց կամ Աղուանից»-ը թարգմանչի ավելացրածն է¹²⁶:

Կարելի է հավատալ Մատենադարանի № 7117 ձեռագրի ազգանական (=գարգարական) այբուբենին: Առհասարակ ոչ ոք չի կասկածում Կորյունի ու հորենացու այն վկայությունը, որի համաձայն՝ Մաշտոցը գրեր է ստեղծել գարգարների համար: Հավանաբար Մատենադարանի

ձեռագրերը հենց այն գրերն են, որովհետև 52 տառ կարող է ունենալ մի լիզու, որը նույն հորենացու վկայությամբ՝ կոկորդախոս էր, աղխալուր, խեցբեկագույն և կոշտ:

Սակայն այս ձեռագրի այբուբենն էլ ինչ-որ շափով սարքածոյի տպավորություն է թողնում: Եվ ահա թե ինչու: Ձեռագիրը բովանդակում է 7 լեզվի այբուբեն (հունարեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, ազգաներեն, խաչտերեն և արաբերեն) և 7 լեզվով աղոթքի նմուշներ (հունարեն, ասորերեն, վրացերեն, պարսկերեն, արաբերեն, քրդերեն և թուրքերեն), բոլորն էլ հայատառ: Ինչո՞ւ. ազգաներեն աղոթքի նմուշ չկա: Առավել ևս, եթե հիշյալ ձեռագիրը 1411—1448 թթ. միջում արտագրված է եղել X—XI դդ. մնացած մի ձեռագրից¹²⁷, իսկ գիտնականները գտնում են, որ ազգաներենն այսպես թե այնպես ապրել է մինչև X—XI դարերը:

Համենայն դեպս, ձեռագիրը ևս քիչ բան է ավելացնում ազգանից գրի ու դպրության մասին եղած ազոտ պատկերացումին:

Մի կողմ թողնելով այբուբենի իսկության հարցը, դարձյալ պիտի հարց տանք, թե ո՞ւր է այդ այբուբենով ստեղծված դպրությունը: Վերը հիշված երեք վկայությունները կոչված են պատասխանելու այս հարցին: Արդյոք պատասխանո՞ւմ են:

Սուրբ յուղի մասին եղած պատմության ակնարկին դժվար է հավատալ, որովհետև, ինչպես Աս. Մնացականյանն է իրավացիորեն գրում, «Այն ամբողջը, ինչ պատմվում է այստեղ սրբազան յուղի մասին, ոչ այլ ինչ է, քան հայկական սկզբնաղբյուրներում եղած բազմաթիվ դրույցների քաղածո վերաշարադրություն», որ ազգանից գրով սկզբնաղբյուր մեղտեղ քաշելիս պատմության «հորինողները կամեցել են ավելի շատ բարձրացնել նրա խորհրդավորությունը» և, վերջապես, այս «փաստարկն էլ ազգանական գրականության մասին՝ չի կարող արդարացնել իրեն»¹²⁸:

Մինչև այսօր հետազոտողները ակնհայտ նախապաշարումով են մտածեցել նաև Բարգեն կաթողիկոսի ժողովի հղած թղթերին վերաբերող տեղեկություններին՝ եզրակացնելով, թե երբ «Գիրք թղթոցում» ասվում է, որ Հայոց, Վրաց ու Ազգանից առաջնորդները Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող իրենց հավատակիցներին էին դիմել «Իւրա-

123 ՏՄ՝ Ա. Գ. Աбрамя, Дешифровка, с. 34—38.

124 Անդ, էջ 5:

125 «Հեթում Պատմիչ թաթարաց», Վենետիկ, 1951, էջ 14:

126 «Очерки истории СССР III—IX вв.», с. 329.

127 Ըր. Անտոյան, ՀԱԲ, հ. Թ, էջ 332:

128 Աս. Մնացականյան, Ազգանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 15:

քանչիւր աշխարհի գրով»¹²⁹, այդ միայն ու միայն այն է նշանակում, թե գրված է եղել նաև ազգանից գրով: Սա խոր թյուրիմացութիւնն է, քանի որ սովյալ դեպքում «գիր» նշանակում է «թուղթ», «նամակ», այսինքն՝ յուրաքանչյուր երկրի անունից գնացել է հատուկ նամակ: Իսկ բոլոր նամակների գրի (=լեզվի) մասին հենց նույն տեղն էլ պահպանվել է անհրկմիտ խոսք՝ նրանք գրվել են «հայերէն և պարսկերէն»¹³⁰:

Մնում է Հեթում Պատմիչի գրքի նախադասութիւնը, ավելի ճիշտ՝ թարգմանչի ավելացրածը:

«Անին նշանագիրս արամեանս, և այլ եւս՝ որ ասին Հալոյէն»: Այս է Հեթում Պատմիչի գրածը: Հետազոտողները շատ են ուզում այս նախադասութեան մեջ վկայութիւն տեսնել ազգանական գրերի մասին: Գրա համար էլ թարգմանիչը «Հալոյէնից» հետո կասկածով գրել է «Հայոց կամ Աղուանից», որը պատմաբանի կողմից ընդունվել է որպես աներկբա պնդում, թե դա միայն Աղուանից է¹³¹, Իսկ բանասեր Ն. Ակինյանն էլ «Արամեանսի» կողքին է ավելացրել «հայերէն» բառը, որպեսզի «հալոյէնը» հեռացնի «հայերէն» իմաստից ու նրա տակ հասկանա «Աղուանից»¹³²:

Զր. Աճառյանն էլ էր ընդունում, որ «Հալոյէնը» «Աղուանից» է, որովհետև Պատմիչի ժամանակ (XIII և XIV դարերի սահմանադրսին) Աղվանք չկար, և Հայաստանն էր ըմբռնվում ընդհուպ մինչև Գերբենդ, ուստի Աղվանքի տեղ հնդինակը «Հալոյէն» անունն է գրել¹³³:

Թերևս հնարավոր լիներ ընդունել այս բոլորը, եթե ինքը՝ Հեթում Պատմիչը, շղջապաններ չլուրջսի սխալից: Նա Աղվանքի տեղը գիտե. «Թագաւորութիւն Վրաց յարեւելից կուտ սկսանի ի մեծ լեռնէ անտի՝ որ կոչի Ալպտիս (Աղուանից). անդ բազում ազգք բնակին զանազանք. եւ վասն այսորիկ նահանգն այն կոչի Ալանք (կամ Աղուանք)»¹³⁴, Եվ, վերջապես, Հեթում Պատմիչը բացատրում է նաև իր գրած «Հալոյէնը», որ

¹²⁹ «Գիրք թղթոց», էջ 51:

¹³⁰ Անդ, էջ 47:

¹³¹ «Очерки истории СССР III—IX вв.», с. 329: «Переводчик сочинения Эту-ма на древнеармянский язык, мхитарист Мкртич Авгерян справедливо указывал, что halojon идентичен армянскому «адован»—алван, албан», Եվ նշում է գրքի էջը, որի մեջ վկայակոչված պեղումի փոխարեն կա միայն «Հայոց կամ Աղուանից» և այն էլ՝ փակագծի մեջ՝ «կամ» ենթադրականով:

¹³² Ն. Ակինյան, Ս. Մերսոպ Վարդապետ, էջ 324:

¹³³ Զր. Աճառյան, Աղվանից գիրքը. ՍՄՃՄ ԳԱ Հայկական մասնահյուսի «Տեղեկագիրք», 1941, № 3—4, էջ 4:

¹³⁴ «Հեթում Պատմիչ թարգմանք», էջ 15:

ոչ մի կապ չունի «Աղուանիցի» հետ. «բայ ի գաւառէ անտի թագաւորու-թեան Հայոց, որ ուամիտքն կոչի Հալոյէն»¹³⁵:

Ուրեմն, Հեթում Պատմիչի «Հալոյէնը» ևս հիմք չի կարող հանդի-սանալ ազգանական գրով ստեղծված գրականութեան գոյութիւնը հաս-տատելու համար, որովհետև, ինչպես տեսանք, այն նշանակում է «հայերէն»:

Նույնիսկ եթե մի պահ ենթադրենք, թե «Հալոյէնը» «աղվանից» է նշանակում, քանի որ Հեթում Պատմիչի համար Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմանը Գերբենդն է (մի բան, որ իսպառ բացառվում է XIII—XIV դդ. պայմաններում), ապա դարձյալ չի հաստատվում այդ գրով ստեղծված գրականութեան փաստը, որովհետև Հեթումը խոսում է միայն ու միայն գրերի մասին: Իսկ մենք առանց Հեթումի էլ գիտենք (և ավելի հաստատ, քան նրա մշուշոտ տեղեկութիւնը), որ Մերսոպ Մաշ-տոցը գրքը է ստեղծել աղվանական 26 ցեղերից մեկի՝ գարգարների լեզվի համար:

Գիտնականները հույս ունեն հնագիտութեան օգնութեամբ պարզել ուղվանական գրի ստեղծումը: Գանձակի (այժմ՝ Կիրովաբադ) պեղում-ներից գտնված խեցեթեկորների վրայի գրերը,— որոնց առթիվ Ա. Շանի-ձեն խանդավառութեամբ գրել էր, թե «հին Գյանջայի խեցեթեկորի արձա-նագրութիւնը, ամենայն հավանականութեամբ, առաջին ծիծեռնակն է աղվանական գրի բեկորների շարքից»¹³⁶,— Աշ. Աբրահամյանի կողմից ճանաչվեցին ու ընթերցվեցին որպես հայերեն շրջված գրեր¹³⁷:

Այս խեցեթեկորներից երկուսի վրայի արձանագրութիւններում պարզ երևում են հայերեն «Մե» տառերը, որոնք, հավանաբար, «Մխիթար» ան-վան համառոտութիւնն են¹³⁸: Ուրեմն, Ուտիթի Շակաշեն գավառում (այժմ՝ Կիրովաբադի շրջան), խեցեթեկորի արտադրութիւն կար, և վար-պետները տեղաբնիկ հայեր էին, որոնք խոսում ու գրում էին (արարնե-րի հորջորջմամբ) առաներեն, իսկ իրականում՝ հայերեն:

Աղվաններն գրի տարածման մասին վկայող փաստերի բացակայու-թիւնը չի հերքում նաև Աղվանքի Սուղազիյան (այժմյան Մինգեշաուրի տեղում, Կուրի ձախ ափին) քաղաքից գտնված վիմական արձանագրու-

¹³⁵ Անդ, էջ 25:

¹³⁶ А. Шанидзе, Новооткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938, с. 60.

¹³⁷ Ա. Աբրահամյան, Աղվաններն համարվող մի բանի արձանագրութիւնների վերծանութիւնը. «Երևանի համալսարան», 1956, մարտի 31: նաև՝ А. Абрамян, Деши-фровка, с. 12—17.

¹³⁸ Անդ, էջ 13—14:

Քյամբ, որի վերծանման փորձերից մեկը պատկանում է Ա. Գ. Աբրահամյանին: «Մեզ հաջողվեց արձանագրությունը վերծանել մեծ դժվարությամբ, իսկ տեղ-տեղ՝ կոահոմաներով» գրել է գիտնականը¹³⁹:

Ինչպես Աս. Մնացականյանն է նկատել, Ա. Գ. Աբրահամյանի վերծանության փորձի ամենախոցելի կողմն այն է, որ նա «ազվանական» արձանագրությունը կարգում է ուղիներն լեզվով¹⁴⁰: Մինչդեռ հայտնի է, որ ազվանից գիրն ստեղծված է եղել զարգարների լեզվի վրա: Այս գիրն ուղիներն կարդալուց առաջ պետք է ապացուցել, որ զարգարները և ուղիները նույն ցեղն են, մի բան, որ եղած պատմական նյութերի հիման վրա անհնար է:

Ն. Յա. Մառը ենթադրում էր, որ Ազվանից գիրն ստեղծված է եղել ներկայիս ավարներնեի վրա (ուրեմն՝ զարգարներն ավարների նախնիներն են)¹⁴¹, նույն կարծիքին գիտնականն անգրադարձել է մի քանի անգամ, կատարելով նույնիսկ պատմալեզվաբանական էքսկուրսիներ¹⁴², Դժբախտաբար, Ն. Յա. Մառի այս կարևոր դիտողություններն անտեսվում են ազվանական ցեղերի լեզուների շուրջը՝ առայժմ ապարդյուն քննություններ կատարող մեր կովկասագետների կողմից:

Իսկ Սուրգադիլանի արձանագրության առեղծվածը դեռ սպասում է իր լուծմանը:

Վերը կատարված քննական վերլուծություններից կարելի է հանգել այն եզրակացության, որ անհիմն են ազվանական գրի լայն շրջանառության և նրանով ստեղծված հարուստ գրականության մասին եղած «հավաստիացումները»: «Եթե կար ազվաններն գիր ու դպրություն, ապա պիտի լիներ նաև համապատասխան հարուստ գրականություն: Իսկ եթե լիներ այդպիսի գրականություն, ապա նրանից պիտի որ պահպանված լինեին և՛ բնագրային նմուշներ, և՛ թարգմանական: Զարմանալին այն է, որ ոչ միայն չկան այդպիսիները, այլև ո՛չ հայկական, ո՛չ վրացական և ո՛չ էլ որևէ ուրիշ ժողովրդի հին դպրության մեջ չկա գեթ մի որոշակի խոսք՝ ազվաններն գրականության և համապատասխան թարգմանությունների մասին: Ինչպե՞ս եղավ, որ հայկական հնամենի ձեռագրերի շարքում, նրանց պատարիկների ու պահպանակների մեջ տեղ

գտնելով, մեզ հասան վրացական, հունական, լատինական, հրեական, ասորական, ղփչաղական, ռուսական, արաբական, պարսկական, թուրքական և շատ ու շատ ուրիշ ժողովուրդների գրավոր հուշարձանները՝ ամբողջական հատորներով կամ մասունքներով, իսկ ազվաններից՝ ո՛չ մի պատասոկ, ո՛չ մի տող: Եվ դա՛ այն դեպքում, երբ վերոհիշյալ ժողովուրդներից և ոչ մեկն այնքան սերտորեն կապված չէր հայ եկեղեցու և դպրության հետ, որքան ազվանները՝ սկզբից մինչև վերջ»¹⁴³:

Այս քննությունից կատարելիք միակ տրամաբանական եզրակացությունն այն է, որ բուն Ազվանքի համար Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գրերը կիրառություն չստացան, քանի որ դրանք հիմք ունեին զարգարացոց՝ այնտեղ բնակվող մի քանի տասնյակ ցեղերից մեկի լեզուն, որը երբեք էլ ընդհանրական չդարձավ ամբողջ երկրի համար: Հետևապես Ազվանքում չստեղծվեց նաև տեղական-սեփական գրականություն, և անդրկուրյան քրիստոնեական թեմերը, ընդգրկված լինելով հայոց եկեղեցու մի թևի՝ Ազվանից (հետագայում՝ Գանձատարի) կաթողիկոսության ոլորտի մեջ, եկեղեցում ու դպրոցում գործ ունեին հայոց լեզվի հետ:

Ինչ վերաբերում է Հայոց արևելից կողմանց բնակչությանը, ապա նրանց համար իրենց մայրենի հայերենը եղավ փրկության խարխուռ ու պաշտպանական անառիկ բերդ բոլոր այն արհավիրքների դեմ, որ, սկսած միասնական հայկական թագավորության անկումից (V դ.), բերում էին օտար բռնակալները՝ պարսիկներն ու արաբները, բյուզանդացիներն ու սելջուկ թուրքերը, ապա վերջիններիս հետքերով եկած վրանաբնակ հորդանները:

¹⁴³ Աս. Մնացականյան, *նշվ. աշխ.*, էջ 16:

¹³⁹ Անդ. էջ 77:

¹⁴⁰ Աս. Մնացականյան, *նշվ. աշխ.*, էջ 141:

¹⁴¹ Н. Я. Марр, Кавказоведение и абхазский язык. Избранные работы, т. I, Л., 1933, с. 70—71.

¹⁴² Н. Я. Марр, Кавказские племенные названия и местные параллели, Л., 1922, с. 31.

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ՆԱԽԱՄԱՐԶՓՈՒՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

IV դարի վերջը և V դարի սկիզբը հայ ժողովրդի պատմության այն շրջաններից են, որոնք համեմատաբար բազմակողմանի նկարագիր են ստացել ժամանակի հեղինակների կողմից: Հատկապես V դարի առաջին կեսը մեր մատենագրության մեջ ներկայացված է ստուգապատում մանրակրկիտությամբ: Բավական է հիշել Կորյունի, Նղիշեի, Ղազար Փարպեցու և Պատմահայր Խորենացու երկերը, որոնք պարունակում են ոչ միայն հայ ժողովրդի տվյալ շրջանի պատմությունը, այլև ամենահավաստի տեղեկություններ հարևան երկրների ու ժողովուրդների մասին:

Սակայն մեր պատմության այս շրջանին է վերաբերում մի թյուրիմացություն, որը լայն տարածում է գտել և քանի գնում՝ այնքան խորանում է: Խոսքը հին Հայաստանի հյուսիսարևելյան նահանգների նախամարզպանական փուլի վարչաքաղաքական վիճակի մասին է:

Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Գուգարքը, Ուտիքն ու Արցախը՝ իրենց հայ բնակչությամբ՝ Մեծ Հայքի միասնական պետության կազմի մեջ են եղել նրա ստեղծման օրերից սկսած: Իսկ Փայտակարանը (հույն և հռոմեացի դասական հեղինակների երկերում կոչված Կասպիանես), որ մ. թ. ա. II դարում անջատվել էր Մարաստանից ու միացվել Մեծ Հայքին, Ստրաբոնի օրերում (մ. թ. արշալույսին) արդեն հայացած բնակչություն ուներ և դարձյալ գտնվում էր Մեծ Հայքի կազմի մեջ: Այս վիճակը, շնչին փոփոխություններով, շարունակվեց մինչև մարզպանական կարգի ստեղծումը, երբ Պարսկաստանն իր նվաճած Արևելյան Հայաստանում վերջնականապես վերացրեց տեղական թագավորությունը, երկիրը բաժան-բաժան արեց, միջնաշխարհում ստեղծե-

լով մեկ մարզպանություն, իսկ Արցախից, Ուտիքից և Աղվանքից էլ կաղմելով մեկ այլ մարզպանություն: Փայտակարանը պարզապես միացվեց Ատրպատական միավորին:

Մի կողմ թողնելով պատմական այս իրողությունները և աղբյուրադիտական կոնկրետ վկայությունները նրանց մասին, որոշ հետազոտողներ դրությունն այնպես են ներկայացնում, թե Պարսկաստանն Ուտիք ու Արցախ նահանգներից և Աղվանքից ոչ թե կազմել է մի հպատակ (իրեն հարկատու) մարզ, այլ հիշյալ նահանգները տվել է բուն Աղվանքին: Ոմանք էլ այն կարծիքին են, թե Աղվանքը, առանց Պարսկաստանի միջամտության, ուղղակի մեկընդմիջտ նվաճել է այդ նահանգները: Օրինակ, Կ. Վ. Տրեքերը գրում է. «Հայկական աղբյուրների տվյալների համադրությունից կարելի է եզրակացնել, որ 387 թ. հետո Աղվանքի թագավորներին հաջողվել է իրենց տիրույթներին միացնել Արցախ (Ղարաբաղ) և Ուտիք մարզերը»²: Սակայն Հայկական աղբյուրների տեղեկություններից «եզրակացություն» հանող պատմաբանը վկայակոչում է ոչ թե հայկական աղբյուրները, այլ Յ. Մարկվարտին, որից վկայակոչված աշխատության մեջ առհասարակ քննության չի առնված հիշյալ նահանգների 387—428 թթ. ժամանակահատվածի քաղաքական վիճակը՝ ըստ աղբյուրների: Մարկվարտն իսկապես գրում է, թե «հայկական պետության բաժանումից հետո Աղվանքի թագավորները նվաճեցին Արցախի (այժմյան Ղարաբաղի) 12 գավառները և Ուտիքի 8 գավառները»³: Բայց սա «Աշխարհացոյցի» տեղեկության խաթարված կրկնությունն է: «Աշխարհացոյցի» տեղեկության խաթարված կրկնությունն է: «Աշխարհացոյցը», ճիշտ է, տեղեկացնում է, որ Արցախի 12 գավառները և Ուտիքի 8 գավառները գտնվում են Աղվանքի մեջ, բայց չի ասում, թե Աղվանքի թագավորներն են նվաճել: Իսկ «Աշխարհացոյցը», ինչպես հայտնի է, մարզպանության վերջում ստեղծված աղբյուր է, և մինչև օրս էլ ոչ ոք չի պարզել, թե հիշյալ արտահայտությունը ե՞րբ է մուծվել նրա մեջ ու հատկապես ո՞ր ժամանակին է վերաբերում:

Մարկվարտը հիշում է նաև Փարպեցու և Նղիշեի տեղեկությունները Խաղխաղ գյուղի (Կուրի ափին, Վիրքի սահմանում) Աղվանքին պատկանելու մասին: Սակայն Խաղխաղը ընդամենը մեկ գյուղ է եղել Ուտիքի ու Վիրքի սահմանում, և այդ սահմանային գյուղի տեղը դառնալ՝ դեռևս չի նշանակում յուրացնել Ուտիք ու Արցախ նահանգները՝ միասին վերց-

² К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.—Л., 1959, с. 201.

³ J. Markwart, Herausahr nach der Geographie Moses Chorenaci, Berlin, 1901, s. 118.

բաժնի վերջապես նշխարի ու Փարպեցու տեղեկությունները վերաբերում են 450 թ. իրողություններին՝ Վարդան Մամիկոնյանի ու պարսից զորքերի միջև տեղի ունեցած պատերազմի աննշխարամբ, և շին կարող հիմք հանդիսանալ 387—428 թթ. վիճակի մասին որոշակի խոսք անելու համար:

Նիկ. Ադոնցը ևս այն համոզմանն էր, թե Հայաստանի 387 թ. բաժանումով վերոհիշյալ նահանգները կտրվել են մայր երկրից. «Երարից սահմանազատվել են այդ մարզերը նրանով, որ վերաբերում էին տարբեր վարչական միավորների. Գուգարքը՝ Վիրքին, Ուտիքն ու Արցախը՝ Աղվանքին, Փայտակարանն ու Պարսկահայքը՝ Ատրպատականին»⁴: Ադոնցը հիմք է ընդունել Փավստոս Բուզանդի պատմությունից քաղված երկու տվյալ.

ա) Գտնում էր, որ «արևելքում Հայաստանի ու Աղվանքի սահմանային գաղափար Փավստոսի մոտ Հարանդն է Ամարազ գյուղով»⁵:

բ) Կոնկրետ բովանդակություն էր վերագրում Բուզանդի այն հայտարարությանը, ըստ որի՝ 387-ի բաժանումին Հայաստանից «բազում դաւառք կրծեալք հատեալք այսր անդր, և մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսեան թագաւորսն»⁶:

Համարյա այս նույն պատկերացումն ունեն նաև մյուս հայագետներն ու պատմաբանները⁷: Մի փոքր այլ է Հ. Մանուկյանի վերաբերմունքը: Իր տեսակետները բացառապես պատմական ստույգ աղբյուրների քննական հետազոտության վրա հեցող գիտնականը գտնում էր, որ, իսկապես, Փավստոսի վկայության համաձայն՝ «բաժանման ժամանակ Հայաստանից կտրվել էին ամբողջ գավառներ, որոնք կցվել էին Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի երկրամասերին»: «Իսկ որո՞նք էին այդ գավառները» հարցին նա ստուգապես չէր պատասխանում, որովհետև աղբյուրներն այդպիսի պատասխանի համար տեղեկություններ չեն հաղորդել: Բայց քանի որ նա հանգամանորեն հետազոտել էր ժամանակաշրջանի պատկերը ներկայացնող բոլոր աղբյուրները, իրեն իրավունք էր վերապահում կատարելու հետևյալ ընդունելի ենթադրությունը. «Ավելի քան հավանական է, իմ կարծիքով, որ 387 թվին էին ան-

շատվել արևմտյան ու արևելյան Հայաստանից Բալասոսիտը, Հաշտիանը, ըստ երևույթի, նաև Հեր և Զարեանդն ու սրանց հարևան մի քանի այլ շրջանները»⁸:

Միայն այսքանը:

Սակայն, հետո երևի հեղինակության «ճնշմամբ», ընդունել է նիկ. Ադոնցի վերոհիշյալ կարծիքը, առանց քննելու այն, առանց ստուգելու նրա առաջարկած աղբյուրագիտական տվյալները:

Փավստոսի «բազում դաւառք կրծեալք հատեալք» անորոշ արտահայտությունն ավելի քան առարկայական է պատկերացնում Ս. Տ. Սրեմյանը: Նա փորձում է այդ գավառների տարածությունը հաշվել նույնիսկ նվազագույն միավորների ճշգրտությամբ և հայտնում է, որ «Այդ փոփոխությունները պաշտոնապես ճանաչվեցին 387 թվականի համաձայնագրով: Մեծ Հայքից այդ ժամանակ արդեն անշատվել էին ծայրամաս նահանգները 103857 կմ² տարածությամբ, մնացել էր միջնաշխարհը 174011 կմ² տարածությամբ»⁹: Մի այլ տեղ. Ս. Սրեմյանն այս անշատված տարածությունը հաշվում է 110 հազ. քառ. կիլոմետր¹⁰:

Այս կարծիքը տիրական է մեր պատմագիտական գրականության մեջ ու դասագրքերում և ոչ որի. կողմից առարկության չի հանդիպել ցայսօր: Ընդհակառակը, փորձ է եղել Մեծ Հայքի այս նահանգների բաժանումը և Վիրքին ու Աղվանքին կցելը ետ տանել շուրջ մեկ դարով, հասցնել Գիոկղեոսիանոս կայսեր ժամանակներին: Փորձը պատկանում է Ներսես Ակինյանին, որն այդ առթիվ գրել է, թե «297-ին, Մեծ Հայաստանի Գիոկղեոսյան բաժանումի ժամանակ, Աղվանից վերադարձվեցան Կուրի և Սրասիի ավազանին մեջ պարփակված Ուտիք, Արցախ և Փայտակարան նահանգները, որոնք 400 տարիներ հետո Հայաստանի կրպակներին: Միտժամանակ խլվեցան Հայաստանն Գուգարք նահանգը և Անդրկուրյան գավառները և միացվեցան վրաստանի: Գիոկղեոսիանոս կը հուսար, թե այս երկու ընդարձակված պետությունները պիտի կարողանան պահպանել Ալանաց և Աղվանից դուռները և ապահովել Հռոմեական վաճառականական ճանապարհները»¹¹:

Սպասում ես, որ հայ և օտար աղբյուրներին քաջատեղյակ գիտնա-

4 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 230.

5 Անդ, էջ 223.

6 Անդ, էջ 226: Բուզանդ, էջ 393:

7 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղի անունները, Վիեննա, 1907, էջ 100, 110—112, Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, 1968, էջ 253, 256—257, Թ. Հակոբյանի «Հայաստան» ուսումնական քարտեզում (1970 թ.) հիշյալ մարզերը Հայաստանի սահմաններում են մ. թ. ա. III դ.—մ. թ. V դ. ստումով:

8 Հ. Մանուկյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, 1957, էջ 239:

9 «Աշխարհացոյց», էջ 70:

10 ՏԿ՝ «Очерки истории СССР III—IX вв.», М., 1958, с. 192.

11 Հ. Ներսես վ. Ակինյան, Մովսես Գախուրյանցի (կոչված Կաղանկատվացի) և իր պատմություն Աղվանից, Վիեննա, 1970, էջ 1—2:

կանն իր այս շահագրանց կոնկրետ ու վճռական խոսքի համար աղբյուրները ցույց տաւ իսկ նա մեզ հղում է գերմանացի պատմաբան Քենոզոր Մոմմսենի մոտ. «Համեմատի՛ր Mommsen, Romische Geschichte, V, 444—445»: Սակայն Մոմմսենի գրքի նշված էջում չկա ոչ մի խոսք, որ հաստատի ն. Ակինյանի՝ վերը մեջ բերված մտքերից գոնե մեկը: Գրքի վկայակոչված էջում Ք. Մոմմսենը տալիս է հույների ու պարսիկների 296-ի պատերազմի նկարագրությունը և նրանց կնքած դաշինքի մասնաբաժանները: Հայաստանից հիշատակվում են միայն հարավային գավառները՝ Արզանենա, Կորդուենա, Զարդիկենա, Սոփենա, Ինգիլենա և այլն¹²: Մոմմսենն իր այս գրքում առհասարակ չգիտե Մեծ Հայքի այն նահանգների անունները, որոնց մասին խոսում է ն. Ակինյանը:

Նիկ. Ադոնցը դեռևս 1900-ական թվականներին է ապացուցել, որ Դիոկղետիանոսի ժամանակին վերաբերող փաստաթղթերում «Մեծ Հայք» անունը թյուրիմացաբար է հիշատակվում, քանի որ Հռոմեական կայսրությունը ենթակա արևելյան (Պոնտական) գիոցեղի մեջ է մտել միայն Փոքր Հայքը, իսկ վերջինս էլ բաղկացած է եղել երկու մասից՝ Առաջին Հայք ու Երկրորդ Հայք, Երկրորդն Առաջինից բավական մեծ, որի պատճառով էլ փաստաթղթերը նրանց հիշել են իբրև Մեծ ու Փոքր Հայքեր¹³: Հետևաբար, իսկական Մեծ Հայքի մասին խոսք չի եղել Դիոկղետիանոսի ժամանակի աղբյուրներում և, ինչպես պետք էր սպասել, չէր կարող լինել նաև այդ ժամանակի անցքերը վերլուծող Ք. Մոմմսենի աշխատության մեջ:

Թյուրիմացությունների վրա են խարսխված նաև ն. Ակինյանի կարծիքի մյուս կողմերը: Գիտնականը քննության առարկա մարզերից երկուսի՝ Արցախի և Ուտիքի մասին ասում է. «Աղվանից վերագործվեցան»: Այս արտահայտությունը ենթադրել է տալիս, թե հիշյալ մարզերն ինչ որ ժամանակ պատկանել են միասնական այն պետությունը, որ կոչվում էր Աղվանք¹⁴: Այս «ինչ-որ ժամանակը» ն. Ակինյանի խոսքի մեջ համընկնում է մ. թ. ա. II դարի վերջին: 297-ին վերագործվեցին՝ 400 տարիներ ի վեր Հայաստանին պատկանելուց հետո: Այստեղ ևս գիտնականը կրճատում է ժամկետը: Աղբյուրների վկայությամբ՝ Հայոց միասնական պետությունը հիմնել են Արտաշես ու Զարեհ թագավոր-

ները: Իսկ սա տեղի է ունեցել մ. թ. ա. II դարի սկզբին՝ 180-ական թվականներին:

Ինչևէ, Ստրաբոնի վկայությամբ՝ Աղվանքի միասնական թագավորությունն ստեղծվել էր մեր թվականության I դարի սկզբին կամ էլ դրա նախորդակին: «Առաջ նրանց յուրաքանչյուր ցեղն ուներ իր թագավորը, իսկ նրանց ցեղերը 26-ն էին: Այժմ նրանց բոլոր թագավորները ենթարկվում են մեկին», — այսպես է գրում մ. թ. սկզբին ապրած հեղինակը¹⁵:

Մ. թ. I դարում կազմավորված թագավորությունը շէր կարող իր կազմավորումից երկու դար առաջ տերը եղած լինել Արցախի և Ուտիքի, որոնք դրանից առաջ երկու դար շարունակ Հայոց պետության կազմում էին դառնվում:

Ստրաբոնի հաջորդները՝ Պտղոմեոսը II դարում¹⁶, Դիոն Կասսիոսը՝ III-ում¹⁷, Ստեփան Բյուզանդացին IV-ի վերջին ու V-ի սկզբին¹⁸ Հայաստանի ու Աղվանքի միջև սահման են համարում Կուր գետը: Սա նշանակում է, որ այս դարերի ընթացքում Կուրից հարավ գտնվող Ուտիքն ու Արցախը միշտ էլ պատկանել են Հայաստանին:

Փավստոս Բուզանդը, որ Աղվանքի ու Հայոց աշխարհի միջև հաստատուն սահման էր ճանաչում Կուրը (Սանեսանը «եկն անց ըստ իր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից գերկիրն Հայոց աշխարհին»)՝¹⁹ պատմում է, որ Արշակ Բ-ի (350—367 թթ.) դեմ ապստամբած ու նրա թագավորությունից կտրված նահանգները, այդ թվում՝ Ուտիքը և Արցախը, 3—4 տարի հետո վերագրաւվում են, «Եւ զԿուր գետ՝ որպես և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»²⁰:

15 Ստրաբոն, XI, IV, § 3, Ստրաբոնից առաջ ոչ մի աղբյուր չի հիշում «Ալբանիա» ու «արբանացի» անունները, չնայած Երկրամասի ու նրա տարալեզու բնակիչների մասին խոսում են հանգամանորեն Այս ևս ապացուցում է, որ «Ալբանիա» — «Աղվանք» աշխարհագրական ու վարչական միավորը գոյացել է Ստրաբոնի օրերում:

16 Պտղոմեոս, 5, 11, § 3, 5, 12, § 1:

17 Տե՛ս Յ. Յ. Латышев, Известия древних писателей, вып. 1, с. 611.

18 Անդ, էջ 270:

19 Բուզանդ, էջ 25:

20 Անդ, էջ 314: Այստեղ մենք քննության չենք անի Արցախի հին պատմության առթիվ Ս. Երեմյանի արտահայտած մի վարկածը, որն ակնհայտ թյուրիմացություն է՝ չիմեղած սուկ հեղինակի ենթադրության վրա նա գրել է. «...Կարելի է արձանագրել իբրև փաստ, որ մեզ անհայտ ժամանակաշրջանում, թերևս Տիգրան Մեծի օրոք, Սևանի ավազանում կազմվել է փոխարքայություն-սատրապություն, որին միացվել է Աղվանքից նվաճված Արցախը» (Ս. Երեմյան, Սուղեացուց իշխանութիւնը, ՀՄՄՀ ԳԱ «Տե-

12 Տե՛ս T. Mommsen, Römische Geschichte, V, Berlin, 1921, s. 414—445.
 13 Տե՛ս Նիկ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 85—87:
 14 Ի միջի այլոց այս կարծիքը միայն Ակինյանիինը չէ, այլ վերջին ժամանակներս լայն տարածում է գտել պատճառազուտորեն չորինված պատմագիտական գրականության մեջ:

Այս փաստերն անառարկելի խոստով են այն մասին, որ Ուտիքն ու Արցախը հիշյալ բոլոր դարերում պատկանել են Մեծ Հայքին, և Աղվանքը ոչ մի ժամանակ նրանց տերը չի եղել: Նման պարագայում այդ մարզերն Աղվանքին վերագրվելու մասին խոսելն առնվազն թյուրիմացություն է:

Անաղբյուր է նաև Ակինջյանի խոսքը՝ հայոց մարզերը հարևանների նվիրարեքելով՝ վերջիններիս զորացնելու և այդ եղանակով Ալանաց ու Աղվանից դռների պաշտպանությունն ապահովելու մասին: Ասվեց, որ Գիոկղեփոխանուսը հայկական այդ մարզերի անունները շփոթեր: Իսկ ինչպես ցույց են տալիս աղբյուրները և առանձնապես հայոց Գահնամակն ու Զորանամակը, Ալանաց ու Աղվանից դռների պահպանությունը, նույնիսկ մարզպանության օրոք, Պարսից արքունիքի հանձնարարությունները՝ իրականացնում էին Արևելյան Հայաստանի նախարարությունները: Մեծ Հայքի միասնական թագավորության ժամանակներում այդ պարտականությունն իրականացվում էր Գուգարաց բզեշխի, իսկ մարզպանության օրոք՝ Մյունյաց նախարարի գլխավորությամբ: Այս հանգամանքն ընդունված է մեր պատմագիտության կողմից և առ այսօր ոչ ոք չի ապացուցել հակառակը²¹:

Այժմ դառնանք այն հարցին, թե հետադրողներն ի՞նչ հիմքեր են առաջարկում ի հաստատումն իրենց տեսակետի. կա՞ն աղբյուրագիտական տեղեկություններ, որոնց հիման վրա հնարավոր լինեք պնդել, թե Ուտիքն ու Արցախն իսկապես 387-ին անջատվել են Արևելյան կամ պարսկահայատակ Հայաստանից և տրվել Աղվանքին: Ժամանակակից ուսումնասիրողներն այդպիսի հիմքեր ու տեղեկություններ չգիտեն: Հ. Մանանդյանն, օրինակ, նշում էր, որ «ղծբախտաբար, մեզ մանրամասն հայտնի չէ» ժամանակի իսկական պատկերը²²: Մակայն հիշյալ տեսակետի կողմնակիցներն անվերապահ կերպով ընդունում են ն. Ադոնցի կարծիքը, որի համար հիմք է դարձել երեք տվյալ Փավստոսի պատմությունից:

Առաջին տվյալն այն է, ինչ վկայակոչվել էր 3. Մարկվարտի կող-

ղեկագիր», 1960, № 7—8, էջ 48 (ընդգծումը մերն է — Ռ. Ա.): Հետաքրքիր է, որ հայտնի չէ, թե ինչպե՞ս և ե՞րբ պիտի կատարված լինի այդ հակասատմական «իրողությունը», սակայն արձանագրվում է «իրեն փաստ»:

21 ՏՊ՝ Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Բ, մասն Ա, էջ 302, 307, նիվ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 223—224, Ս. Դ. Еремян, Сюния и оборона Сасанидами Кавказских проходов, «Известия Арм. ФАН», 1941, № 7, с. 33—40.

22 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 239:

մից. Խաղխաղը, ըստ Փարպեցու, մտնում է Աղվանքի մեջ, ըստ Եղիշեի՝ այն Աղվանից թագավորների ձմերոցն է²³, իսկ, ինչպես հայտնի է, Խաղխաղը Ուտիքի կարևորագույն բնակավայրերից էր: Հետևապես, «պետք է եզրակացնել, որ այն ժամանակ Ուտիքն Աղվանքի կազմի մեջ էր համարվում»²⁴:

Շատ կարևոր է «այն ժամանակը», որ նկատի չէր առնվել ինչպես Մարկվարտի, այնպես էլ Ադոնցի կողմից: Մինչդեռ Փարպեցու և Եղիշեի տեղեկությունները վերաբերում են Վարդանանց պատերազմի նախօրեին՝ 450 թ. իրողությանը, այլ խոսքով՝ մարզպանության շրջանին: Ուրեմն և շեն կարող վճռական նշանակություն ունենալ նախամարզպանական շրջանի վիճակը որոշելու համար²⁵, Այստեղ մի կողմ ենք թողնում նաև այն հանգամանքը, որ մարզպանության շրջանում «Աղվանք» անունն արդեն ոչ թե բուն Աղվանքի թագավորությանն էր տրվում, այլ մարզպանության ընդգրկած տարածքին, իսկ V դարի երկրորդ կեսից սկսած՝ համարյա միշտ աջափնյա հայ Առանշահիկ թագավորության (Ուտիք և Արցախ) տարածքին²⁶, Եվ Եղիշեի ու Ղազար Փարպեցու երկերում արտացոլված կարող էր լինել հենց այս իրողությունը:

23 Փարպեցի, Պատմություն Հայոց, Տիգրիս, 1904, էջ 65, «ու հասեալ յԱղուանս երանելոյ զորաարին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից»՝ այդ եղև զորայլխացն Պարսից եկր Հայոց, որոց յունայ՝ փութացան անցանել ընդ պետն մեծ, զոր Կուր պետն կռչեն, և ընդ առջ եկին նոցա մինչև ի գեղն, որ կոչի Խաղխաղ, չեղիրին Աղուանից»: Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 75: Այստեղ էլ Աղվանքի մարզպանն իր զորքով անցնում է Կուր գետը և Վարդանի զորքին հանդիպում «մեր ի սահմանս Վրաց Լանդեպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից»:

24 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 223:

25 Եղիշեի տեղեկությունը կարող է ճշգրտման. մարզպանության շրջանում բուն Աղվանքը միասնաբան թագավորություն չէր կարող ունենալ: Պարզ է, որ Խաղխաղի թագավորական ձմերոց լինելու տեղեկությունը վերաբերում է անցյալ ժամանակներին: Իսկ այն ժամանակների համար էլ ունենք Աղաթանգեղոսի հայտնի վկայությունը մի հանդիպման մասին, որը տեղի ունեցավ Եյմուտի գետափ. ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցն արքայութեանն Հայոց» (Աղաթանգեղոս, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 26): Աղաթանգեղոսի տեղեկությունն ընդունվում էր նաև մեր միջնադարյան հեղինակների կողմից. օրինակ, Մեծոփեցին, խոսելով նույն տարածքի մասին, հիշում է Ղարաբաղը (Հին Արցախի և Ուտիքի տարածքը)՝ իրեն ձմերոցն առաջին թագաւորաց մերոց» (Քովմա Մեծփեցի, Պատմություն Լանկ-Քամուրայ և յաշորդաց իւրոց, Փարթև, 1860, էջ 20):

26 Խոբեկաղի, Պատմություն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 110—113, Կաղանկատացի-Պատմություն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 14: Երկու երկում էլ Աղվանք է

Հաղորդ տվյալը վերաբերում է Ամարաս ավանին: Խաղխաղի մասին խոսելուց հետո ն. Ադոնցը գրել է, թե «ղեպի արևելք, իբրև Հայաստանի ու Աղվանքի սահմանակից մարզ Փավստոսի երկում ներկայացված է Հաբանդը՝ Ամարաս գյուղով, ուր թաղվել է Աղվանից կաթողիկոս Գրիգորիսը՝ Գրիգոր Լուսավորչի թոռը: Հաբանդի տեղագրությունը ճշգրտապես հայտնի չէ: «Աշխարհացոյցը» նշում է երկու Հաբանդ՝ մեկը Մյունիքում, մյուսն Արցախում... Արցախի Հաբանդը հարում էր անմիջապես Մյունիքին, հանդիսանալով Մյունիքի Հաբանդի մասը և Արցախի մյուս գավառների հետ միասին վերաբերում էր Աղվանքին»²⁷:

Մեջբերված հատվածից պարզ երևում է, որ դարձյալ անտեսվել են պատմական աղբյուրի հաղորդած տեղեկությունն ժամանակը, մանավանդ՝ բովանդակությունը և հարակից նյութերը, որոնք անպայման լույս կսփռեն փաստի վրա, և այն չէր հասկացվի իր բովանդակության հակառակ իմաստով:

Նախ՝ Հաբանդի, ավելի ճիշտ՝ Մյուս Հաբանդի տեղը ճշգրիտ հայտնի է: Եթե Ամարաս գյուղաքաղաքն էր նրա կենտրոնը, նշանակում է՝ այն տարածված էր Ամարասի շուրջը: Իսկ Ամարասը գտնվում էր մինչև այսօր պահպանված հայտնի վանքի տեղում:

Ապա՝ եթե Մյուս Հաբանդը Ամարասն էր շրջակայքով (այժմյան Լեւնային Ղարաբաղի Մարտունու շրջանի հարավարևելյան և Հաղուրթի շրջանի արևելյան տարածքը), ապա պարզ է, որ այն չէր կարող Մյունիքի Հաբանդի մասը կազմել, քանի որ Մյունիքի Հաբանդն ընդգրկում էր հետագայի Զանգեզուր գավառը: Ապա թե ոչ, Ադոնցի ասածով այնպես է ստացվում, որ Զանգեզուրը ևս տրված է եղել Աղվանքին:

Եվ, վերջապես, Մյուս Հաբանդը (Մյունիքի Հաբանդն էլ հետք գուժարած) Արցախի ուրիշ գավառների հետ միասին, չէր կարող վերաբերել Աղվանքին, քանի որ Փավստոսն այս տեղեկությունը հաղորդում է Աղվանքի մազքութ Արշակունի թագավոր Սանեսանի արշավանքի առիթով (330-ական թթ.), իսկ այն ժամանակվա սահմանի մասին պատմիչը շատ կոնկրետ խոսք ունի՝ «...սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր»:

կողմում Կուրի ու Երասխի միջագետքը, Ուտիքի ու Արցախի բնած տարածքը՝ իր հայրենակալությանը և հայ (Հայկի ժառանգներից սերված) իշխանական հարստությանը:

Այս առթիվ հանդամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, «Աղվանք», «Ալբանիա» և «Առան» տեղանունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3, էջ 115—126, Նույնի՝ Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, «Երաբեր հաս. գիտ.», 1971, № 7, էջ 53—66:

²⁷ ԻՖԿ. Աղոնց. նշվ. աշխ., էջ 223:

Ամարասին վերաբերող տեղեկությունից ևս չի կարելի այլ եզրակացություն հանել, քանի որ գավառը մտնում էր Հայաստանի մեջ:

Ինչի՞ մասին է խոսվում այստեղ: Հայոց արևելից կողմանց (Կուրի ու Երասխի միջագետքի) եպիսկոպոս Գրիգորիսը, իր երկրամասում եկեղեցական գործերը կարգավորելուց հետո, միսիններական գործունեության է գնում Աղվանք և հեթանոս աղվանցիների ձեռքով նահատակվում Վատնյա (Վատաց) դաշտում: Գրիգորիսի հետ գնացած սարկավագները նահատակի մարմինը բերում են իրենց Հաբանդ գավառը և թաղում Ամարասի վանքում. «Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին ի գաւառն իրեանց ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարազ: Եւ եղին զնա առ եկեղեցան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետի մեծի աշխարհին Հայաստան երկրին»²⁸:

Հավանաբար Ադոնցին թյուրիմացություն մեջ է գցել «գաւառն իրեանց ի կողմանս Աղուանից» արտահայտությունը, որ իրականում նշանակում է ոչ թե Աղվանքում, այլ Աղվանքի կողմերում, Աղվանքին մոտիկ: Հեղինակը Հայաստանի միջնաշխարհից է և իր երկրի արևելյան նահանգները (Աղվանքին հարևան) կոչում է նաև Աղվանից կողմանք, ինչպես որ ուրիշներն էլ կոչում էին Արևելից կողմանք: Այլ կերպ չի կարելի հասկանալ Փավստոսին, մանավանդ, որ նա այս արտահայտությունից անմիջապես հետո առավել ճշգրտում ու կոնկրետացնում է իր տեղեկությունը՝ «ի սահմանս Հայոց ի Հաբանդ» տեղագրությամբ, որը ոչ թե նշանակում է Հայոց սահմանների վրա գտնվող Հաբանդ, այլ Հայոց սահմաններում, Հայոց սահմաններից ներս գտնվող Հաբանդ:

Ավելացնենք, որ նույն տեղում պատմիչը մի այլ կետ է նշում որպես Հայաստան երկրի արևելյան սահման. «Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց... սփռեցան, տարածեցան զսահմանօք, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքին Սատաղու, և մինչև ի Գանձակ սահմանս Ատրպատական»²⁹:

Եթե հյուսիսային սահմանն անցնում էր Կուր գետով, իսկ արևելյանը՝ Ատրպատականի Գանձակի մոտով, մի՞թե կարելի է կասկածել Ամարասի ու Հաբանդի հայկական պատկանելության վրա:

Այսպիսով, Նիկ. Ադոնցի տեսակետը չի հաստատվում նաև Մյուս

²⁸ Յուզեպե, էջ 23—24:

²⁹ Անդ, էջ 24:

Հարանդի փաժստոսյան տեղադրութեամբ, մեկ՝ այն պատճառով, որ Փաժստոսի երկում այդ գավառը մտնում է Հայաստանի մեջ, մեկ էլ՝ որ այս փաստը վերաբերում է ավելի վաղ ժամանակի՝ IV դարի 30-ական թվականներին, երբ Ուտիքն ու Արցախն աներկբայորեն գտնվում էին Մեծ Հայքի կազմում:

Նիկ. Աղոնցի վկայակոչած երրորդ և վերջին ավյալը Բուզանդի այն հայտարարութունն է, որ ասում է՝ 337 թ. Հայաստանը երկու մասի բաժանելուց հետո էլ՝ այս մասերից «բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անդր, և մնաց սակաւ մասն յաշխարհաց առ երկոսեան թագաւորսն»:

Ո՞վ հատեց: Պարզ է, նրանք, որ դրութեան տեղն էին և մինչև հատելը, կամ՝ հատելու հետ միաժամանակ, Հայաստանը երկու մասի բաժանեցին: Պարսկաստանը և Բյուզանդիան:

Ո՞ր գավառները հատվեցին: Որպես այս հարցի պատասխան՝ Փաժստոսը մի արժեքավոր տեղեկություն ունի. «...Միւնքն գաւառքն մնացին թագաւորութեանն Հայոց երկօցունց կողմանց ի մեջ իւրեանց, և երկոքեան թագաւորքն Արշակունիքն ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութեամբ...»³⁰:

«Միւնքն գաւառքն» Ստ. Մալխասյանցի կողմից իրավացիորեն բացատրված է որպես «աշխարհի սյունները՝ հենարանները կազմող, հիմնական գավառները»³¹: Տրամաբանությունը հուշում է, որ հիմնական գավառներ ճանաչվեն Մեծ Հայքի 15 աշխարհները, և անշատված համարվեն այն գավառները, որոնք գտնվում էին այդ աշխարհներից (սահանգներից) դուրս, և որոնք Արտաշեսի ու Զարհհի ժամանակներում գրավվելու անշատվել էին հարևաններից: Այդպիսիք կարող էին ճանաչվել, օրինակ, Կամբեճանը, Խորձանեն՝ Կուրի ձախափնյակում, Պարսկահայքը, թերևս նաև Փայտակարանը՝ Պարսկաստանի սահմանի մոտ և այլն:

Այսքանից հետո կարելի կլիներ մտածել, որ եթե Հայաստանի գավառները կրճող-հատողները Պարսկաստանն ու Բյուզանդիան էին, ապա պիտի հատեին իրենց երկրներին անմիջապես սահմանակից գավառները: Ուտիքն ու Արցախը, ինչպես հայտնի է, սահմանակից չէին ո՛չ Պարսկաստանին, ո՛չ էլ Բյուզանդիային: Այստեղ մենք, իհարկե, վերանում ենք այն փաստից, որ մեր հետազոտողները կրճված-հատված գավառները տալիս են ոչ թե վերոհիշյալ բունատիրություններին, այլ Վիր-

քին ու Աղվանքին, չգիտես ինչի՞ հիման վրա մտածելով, որ Հայաստանի բաժանումից պետք է օգտվեին ոչ թե բաժանողները, այլ նրանց հպատակ Վիրքն ու Աղվանքը:

Ինչպես սկզբում տեսանք, Ն. Ալիևյանն այնպես էր բացատրում, թե բաժանողները, Հայաստանը թուլացնելով, մտածում էին ուժեղացնել Աղվանքն ու Վիրքը՝ ընդդեմ հյուսիսային վայրենաբարո ցեղերի: Եվ այս նվիրաբերումները, իբր թե, կատարվել էին Վիրքին ու Աղվանքին սիրաշահելու նպատակով: Տեսանք, որ այս պնդումը չի հաստատվում պատմական ոչ մի աղբյուրով: Իսկ հակառակը՝ որ Պարսկաստանն ամեն կերպ ջանում էր սիրաշահել իրեն հպատակ մնացած Արևելյան Հայաստանին, որոշակիորեն հաստատում են աղբյուրները: Փաժստոսը վկայում է, որ Պարսից արքան Արևելյան Հայաստանում թագավոր կարգված Խոսրով Արշակունու հետ ամուսնացրել էր իր թույր Զրվանդուխտին³²: Ինչպես այս Վոսաթ Քերմանշահը, այնպես էլ նրա հաջորդ Հազկերտ Ա-ը (390—420) Արևելյան Հայաստանին վերաբերվում էին այնքան զիջողաբար, որ այստեղ մայրենի գրի ու դպրութեան տարածումը կատարվեց իշխանավորների Պանմիջական մասնակցությամբ, անկաշկանդ ու արագ: Հայերի նկատմամբ այս զիջողական քաղաքականությունը, ընդմիջվելով մուսուլմանական Հազկերտ Բ-ի օրոք, վերականգնվեց Վաղարշի ձեռքով (V դ. վերջ):

Սրանք, իհարկե, այլ հարցեր են, որ պահանջում են հատուկ և առավել հանգամանալից քննություն:

Քննություն կարոտ է մնում Փաժստոսի «կրծեալք-հատեալք» արտահայտությունը:

Այս խոսքի ստուգության և նրա հիմքի վրա ստեղծված կարծիքի իրավացիության աստիճանի մասին խոսելուց առաջ մենք կարող էինք տալ այսպիսի հարցեր. օրինակ, ինչպե՞ս է, որ այսքան վերացական մի արտահայտություն դառնում է անքննելի հիմք երկրի նոր ու կոնկրետ սահմանները որոշելու համար, ի՞նչպես է, որ «կրծեալք-հատեալք»-ի տակ են առնվում հատկապես Փայտակարանը, Արցախը, Ուտիքը, նույնիսկ Գուգարքը, կամ ինչ՞ու՞մ միայն սրանք:

Այս և նման հարցերին պատասխանել չի լինի, քանի որ աղբյուրների տեղեկություններով, ինչպես քիչ հետո կտեսնենք, հաստատվում է հակառակը:

Զի կարելի մոռանալ, որ մեր հայրենասեր պատմիչ Փաժստոս Բու-

30 Անդ, էջ 393:

31 Տե՛ս Փաժստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, 1968, էջ 341, ծանոթ. 205:

32 Բուզանդ, էջ 293:

վանդը, կոնկրետ փաստերն ու իրողութիւնները պատմական հավաստիութեամբ ներկայացնելով հանդերձ, իր երկի հոետորական հատվածներում չէր խորշում գեղարվեստական խոսքի առանձնահատկութիւններին, որոնց մեջ վերջին տեղը չէին բռնում շափաղանցութիւնները: Միանգամայն հիմնավոր է վաստակաշատ բանասեր-փափստոսագետի այն բնութագրութիւնը, թե մեր պատմիչը «հավասար լրջութեամբ ու մանրամասնութեամբ զետեղում է իրար կողքի ճշմարիտ պատմականը և անհավատալի սուտը»³³, եվ եթե վերոհիշյալ հոետորական արտահայտութիւնը չի կարելի համարել «անհավատալի սուտ», քանի որ այն իր հիմքում ունի կոնկրետ պատմական փաստ՝ Հայաստանի բաժանումը և թուլացումը, այսուհանդերձ, անհնար էլ է նրա վրա կառուցել շատ թեքիչ հաստատուն որևէ տեսակետ, ամենից առաջ այն պատճառով, որ նրա ղեմ խոսում են նույն շրջանի մեր մատենագրութեան բազմաթիվ փաստերը: Օրինակ, Կորյունի ու Խորենացու հաղորդած տեղեկութիւններով դժվար չէ ցույց տալ, որ մարզպանութիւնից առաջ (մինչև 428 թ.) Հայաստանի ու Աղվանքի միջև դարձյալ սահման էր մնում Կուր գետը:


Չծավալվելու համար՝ քննութեան առնենք միայն աղբյուրագիտական առավել անառարկելի փաստերը:

Ժամանակակից, ականջալուր, թերևս նաև ականատես Կորյունը պատմում է, որ Արևելյան Հայաստանում մայրենի գրի ու դպրութեան տարածման ընթացքին Մեսրոպ Մաշտոցը գնաց նաև Աղվանք, եղավ նրանց մայրաքաղաքում (Չոզում), թագավոր Արսվաղենի ու եպիսկոպոս Երևմիայի հյուրամեծար հպատակութեամբ ու աջակցութեամբ այնտեղ ևս նույն գործը կատարեց: Ապա իջավ Բաղասական աշխարհը, — որ Աղվանքի հարավային մասն էր կազմում, Կուրի ձախափնյակը³⁴, — այնտեղ էլ գործն ավարտեց, «հրաժարէր ապա և ի թագաւորէն և յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից»... Եվ այսքանից հետո արդեն Մաշտոցը «հանդէպ հասեալ գայր Գարգմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարգմանից, որում անունն Խուրս կոչէին, և ասպնջական

33 Փալստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, 1968, ներածութիւն, էջ 54: նույնը նաև՝ Մ. Աբելյան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին, 1944, էջ 170—173:

34 Ն. Աղտեցը, Ս. Երեմյանը և մեր մյուս հետազոտողները հիշյալ Բաղասականը տեղադրում են Կուրի աջափնյակում: Թերևս այս ևս դարձել է նրանց սխալ տեսակետի հիմքերից մեկը: Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Բ. Աւարբաբյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 177—182:

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔԸ V-VII ԴԱՐԵՐՈՒՄ



եղեալ նմա աստուածաւոր երկիրդաժուժեամբ, որաչի դնէր զանձն վար-
դապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով»³⁵:

Պատմական իրադրութիւնը լավ պատկերացնելու համար հիշենք,
որ Աղվանք մարզի ստեղծումով պիտի միավորվեին Չողի (Արսվաղենի
երկրի), Լիփիքի (ձախափնյակի արեւմտյան մասի) ու աշափնյա հայկա-
կան երկու նահանգների հոգևոր թեմերը, և պիտի ստեղծվեր մեկ միաս-
նական Աղվանից կոչված եկեղեցի՝ հայոց միաբնակ եկեղեցու հովանու
տակ: Եթե 387 թ. աշափնյա երկու նահանգները միացված լինեին Աղ-
վանքին, ապա հենց այդ ժամանակ էլ Արցախի և Ուտիքի թեմերը պետք
է անցնեին Աղվանից եկեղեցուն, և վերջինս պետք է ընդգրկեր նաև հայ-
կական այս թեմերը: Սակայն այդպիսի բան տեղի չէր ունեցել: «Աղվա-
նից» էր կոչվում միայն ձախափնյակի եկեղեցին: Մաշտոցը ձախափ-
նյակում էր հրաժեշտ տվել «յամենայն եկեղեցուն Աղուանից»: Ավե-
լին, այս ձախափնյակի «ամենայն եկեղեցին Աղուանից» դեռևս
միասնական չէր. Երեմիա եպիսկոպոսը առաջնորդութիւն էր անում
Արսվաղենի Չող-Աղվանքում, իսկ Բաղասական կողմերի եկեղեցու
տնօրենն էր մի այլ եպիսկոպոս՝ Մուշեղը: Եթե սրան էլ գումարենք
Յոյշեի այն տեղեկութիւնը, որ Բաղասական ուներ իր առանձին թա-
գավորը³⁶, ինչպես իր սեփական թագավորն ուներ նաև Աղվանքի մի այլ
մասը՝ Լիփիքը³⁷, այն ժամանակ հասկանալի կլինի, թե ի՞նչ վարչաբա-
ղաբական վիճակ էր Աղվանքում, և ի՞նչ հրաշքով պետք է այս բաժան-
բաժան Աղվանքը Հայաստանից կրժեք-հատեր Արցախ և Ուտիք նա-
հանգները:

Ուշագրավ է, որ Կորյունն ասում է՝ Մաշտոցը Բաղասական կողմե-
րում (Կուրի ձախ ափին) Աղվանքին ու նրա ամենայն եկեղեցուն հրա-
ժեշտ տալուց հետո եկավ Գարդմանք (աչ ափը): Սա լի՞ նշանակում, որ
Գարդմանքը (Ուտիքի իշխանութիւն կենտրոնը) չէր մտնում Աղվանքի
մեջ: Իսկ եթե սահմանամերձ Գարդմանքը չէր մտնում, պա՞րզ չէ,
որ Աղվանքի հետ սահմանակցութիւն չունեցող, համեմատաբար Հա-
յաստանի խորքում գտնվող Արցախը մտած չէր կարող լինել:

Կա նաև մի այլ պարագա, որ իր արտացոլումն է գտել V դարի մա-
տենազիրների երկերում և դարձյալ խոսում է մեր կարծիքի օգտին: Ինչ-
պես վերն ասացինք, մարզպանութիւնից առաջ Աղվանք էր կոչվում այն
երկիրը, որ տարածված էր Կուրից հյուսիս, իսկ Կուրի աչ ափի հայկա-

35 Կորյուն, էջ 72:

36 Տե՛ս Նղիշէ, էջ 76:

37 Անդ, էջ 77:

կան նահանգները միայն իրենց ավանդական անուններով էին հայտնի՝ Ուտիք կամ Գարդմանից իշխանություն և Արցախ կամ Մավզիից իշխանություն:

Տեսանք, որ Աղվանքի մասին 420-ական թվականների առումով խոսող Կորյունը³⁸ գաղափար իսկ չունի պարսկահայատակ մարզից, և նրա համար Աղվանք է բացառապես Կուրի ձախափնյակը:

Հարկադրված ենք առավել հանգամանորեն խոսել խորենացու պատմության համապատասխան ավյալների մասին: Պատմահայրը շատ էլ հեռու չէր քննության ենթակա ժամանակից, որը մասամբ նրա պատանեկության ու երիտասարդության շրջանն էր հղել, և շատ երեմյանների մասին պատմիչը խոսում է որպես ականատես: Այսքանին էլ եթե գումարենք նրա վկայակոչած փաստաթղթերը, որոնց արժանահավատությունը կասկածից վեր է, ապա բավական կլինեի հենց միայն խորենացու տեղեկությունների քննությամբ էլ հարցը փակել:

Խորենացին պատմում է, որ, երբ Հայաստանը երկու մասի բաժանվեց, նրա թագավոր Արշակը գերադասեց տեղ մնալ երկրի արևմտյան մասին՝ «...ժառանգել քրիստոնեայ թագաւորին, քան յոլովից իշխել և մտանել ընդ լծով հեթանոսաց»³⁹:

Արշակի հետ Արևմտյան Հայաստան էին տեղափոխվել արևելյան մասի մի շարք իշխաններ: Այս իմանալով՝ Շապուհը թողթ գրեց վերջիններին, բացատրեց, որ իրեն ենթակա Հայաստանում նոր թագավոր է նշանակել «զնորով ոմն ի դենէ ձերմէ և յազգէ բնիկ ձերոյ տերութեանդ», և հեռացածները պետք է վերադառնան իրենց տիրույթները, տեղ կանգնեն իրենց ունեցվածքին: «Գարձեալ ձեր յիրաքանչիւր արարս իշխեցէք որպէս և ցայժմ»⁴⁰: «Որպէս և ցայժմ», այսինքն՝ ուզում էր հավատացնել, որ բաժանումով ոչինչ չի փոխվել պարսկահայատակ մասում և երզնում էր զի հուր և ի ջուր և ի փառս անմահից» իր նախնիներին: Իսկ ովքեր չէին վերադառնա, սպառնում էր՝ հարքունիս գրավել «զտունս նոցա հանդերձ դիւզօք և դաստակերտօք»: Այս «չարքունիսը» վերաբերում է Հայաստանի արքունիքին, որովհետև, ինչպես հետո երևում է պատմության մեջ, հայ թագավոր խոսքովն իրեն հպատակ նախարարներին նվիրաբերություններ է անում հարքունիս գրավված տիրույթներ:

38 Հր. Ահառյանը Մաշտոցի Աղվանք գնալն ու լուսավորելը գնում է 423 թ. տակ (տե՛ս նրա «Հայոց գրերը», 1968, էջ 399):
39 Խորենացի, էջ 310:
40 Անդ:

րից. «...տայ նոցա դիւզս և դաստակերտս բնտիրս և յարմարս յայնոցիկ ժառանգութենէ, որք ի բաժնոյն Պարսից մնացին առ Արշակայ»⁴¹:

Ո՛չ մի խոսք հատված-բաժանված գավառների մասին: Ընդհակառակը, երբ Հայաստանի արևմտյան մասը տեղափոխված նախարարներն իրենց հայրենիքները վերադառնալու ցանկություն են հայտնում, արքայից արքան խոստանում է ետ վերադարձնել նրանց սեփական տիրույթները և նույնիսկ պակասորդները լրացնել արքունի հարստությունից. «այլ փոխանակ ընդ այնր յարքունուստ ընումք և զձերոյն պակասութիւն»⁴²:

Խորենացին վկայում է, որ արևմտյան մասի հայ թագավոր Արշակի մահից հետո ամբողջ Հայաստանի վրա արդեն իշխում էր խոսրովը՝ արևելյան մասի հայ թագավորը. «տիրեաց խոսրով ամենայն նախարարացն Հայոց»⁴³: Պատմիչը խոսրովի հաջորդ Վոսմշապուհի մասին հետևյալն է ասում. «Եւ Վոսմշապուհ ունէր զաշխարհս մեր, և ծառայէր երկոցունց թագաւորացն, տալով հարկս, զմասինն Պարսից՝ Վոսմայ, և զմասինն Յունաց՝ Արկադեայ»⁴⁴:

Գարձյալ ո՛չ մի խոսք, ո՛չ մի ակնարկ հատված գավառների մասին: Կարող են ասել՝ այդքանը քիչ է, պետք է բառացի տեղեկություն լինի այն մասին, որ Գարդմանից (Ուտիքի) ու Մավզիից (Արցախի) իշխանությունները հենց այս ժամանակ գտնվել են Հայոց թագավորության մեջ:

Կա նաև այսպիսի տեղեկություն: Խորենացին պատմում է, որ Պարսից Հազկերտ արքան, խոսրովի մահից հետո, Հայաստանի թագավոր էր դարձրել իր որդի Շապուհին (415—419): Հայ նախարարները չէին հպատակվում սրան, ծաղր ու ծանակի էին ենթարկում, արհամարհում: Իսկ մի անգամ էլ Հայոց արքունիքում կերուխումի հավաքված հայ նախարարներից խոսքով Գարդմանացին Շապուհի աչքի առաջ ջնարահար կնոջը տուխածում է. Շապուհը կարգադրում է բունել ու պահել հանդուգն նախարարին, իսկ սա աջը թրի վրա դրած՝ խրոխտորեն դահլիճը թողնում, գնում է իր տունը, և ոչ ոք չի համարձակվում ձեռք տալ նրան («Գարձեալ երբեմն ի խնջոյս ուրախութեան խոսրով Գարդմանացի ի

41 Անդ, էջ 315:
42 Անդ, էջ 319:
43 Անդ: Այս հանգամանքը մինչև այժմ անուշադրության է մատնվել հետազոտողների կողմից, և տիրական է այն կարծիքը, թե 387-ից հետո բյուզանդահայատակ Հայաստանն աչևս հայ թագավորի իրավունքի տակ չի մտել:
44 Անդ, էջ 324:

գինեղ զեղխեալ առաջի Շապհոյ՝ զօրէն սեղիխի տոսիեցելոյ զհետ ջնա-
րահար քաջամատն կնոջ կրթէր: Ընդ որ ցասուցեալ Շապհոյ՝ հրամայէ
ունել զնա և ի դահլիճին պահել. այլ նա ի վազակաւորն հաստատեալ
զաջն... յիւր տունն անցեալ զնայր, և ոչ ոք ի սպասաւորացն արքունի
համարձակեալ արկանել ի նա ձեռն, յառաջագոյն, գիտելով զփորձ
առնն»⁴⁵:

Այստեղ հիշված խոսքովը տերն էր այն Գարդմանք-Ուտիքի, որն,
իրբև թի 387-ից պետք է պատկաներ Աղվանքի թագավորներին: Վերըս-
տին հիշեցնում ենք, որ Գարդմանքը հյուսիսարևելյան Հայաստանի
ծայրամասային գավառն էր, սահմանակից Աղվանքին: Եթե Շապուհի
օրոք այն Մեծ Հայքի հետ էր, ապա Աղվանքի տերերն Ուտիք-Գարդման-
քի վրայով չէին կարող տիրել Արցախին:

Կարելի էր ուրիշ փաստեր ու վկայութիւններ ևս բերել: Սակայն
կարծում ենք՝ այսքանն էլ բավական է հարցի մասին պարզ պատկերա-
ցում կազմելու համար, եթե ասվածին էլ զումարենք հայոց հայտնի
Գահնամակի ու Զորանամակի տվյալները:

Գահնամակը Հայոց նախարարական տների դիրքի ու պատմի փաս-
տաթուղթն է՝ ստեղծված V դ. առաջին քառորդում, Արևելյան Հայաս-
տանի վերջին թագավոր Արտաշեսի (422—428) օրոք և Սահակ կաթողի-
կոսի ձեռքով: Այն ներկայացվել է Պարսից Վռամ արքային (420—438):
Գահնամակի հեղինակը՝ Սահակ Պարթևը, այդ փաստաթղթի ստեղծման
պարագան այսպես է բացատրում. «Իմ Սահակայ խնդիր արարեալ ի
զբան արքունի յԱրտաշէսի թագաւորի, զոր ի Տիսպոնն խաւսեցեալ եթէ
ես զումականն զնամա զոր Արտաշրի ի դիւանին տեսի ի քաղոց ամսոյ
ժն: Եւ Վռամայ արքայից արքայի և բարերարի և գիր արարի ես Սահակ
կաթողիկոս, թէ որպէս ձեր բարերարութիւնդ հրաման տացէ Հայոց ազա-
տաց և տանուտերանց որպէս յառաջ առ հայոց ազգին, նոյնպէս և ի ձե-
րում դիւանի շահհամարին առնել, որ յայսմ հետէ Հայոց ազատաց և
տանուտերանց գահ ի յայտ լինէր»⁴⁶:

Ազոնցին է պատկանում Գահնամակի առաջին և լուրջ քննութիւնը՝
մեզ հասած այն եզակի օրինակի վրա, որը, ճիշտ է, ունի գրչական թե-
րութիւններ (հավելումներ, բացթողումներ, անունների ազավազում-
ներ), ինչ-որ սովորական է գրչագրերում, սակայն իր հիմքում արժա-
նահավատ ազբյուր է: Գիտնականը հանդամանալից քննութիւնը հաստա-

տում է, որ V դարի մեր մատենագիրները (և հատկապես Խորենացին)
իրենց ձեռքի տակ ունեցել են Գահնամակը, նրա վրա են հենվել Հայաս-
տան երկրի նախարարական տների և սրանց իշխանապետական հզորու-
թյան ու արտոնութիւնների մասին խոսք ասելիս: Եվ այս վերջին հան-
գամանքն էլ, ինչպես իրավացիորեն եզրակացրել է Ազոնցը, «նշանա-
կալից կերպով բարձրացնում է Գահնամակի արժեքը՝ որպես պատմա-
կան փաստաթղթի»⁴⁷:

Գահնամակի, ապա և նրա հիման վրա կազմված Զորանամակի
հավաստիութիւնը հավատում է նաև Ս. Տ. Երեմյանը՝ համոզված, որ
այդ փաստաթղթերը V դարի սկզբին են ստեղծվել և, որ նրանցով «վե-
րականգնվում էին հայ նախարարների կալվածատիրական իրավունք-
ները և նրա (զբանց— Ք. Ու.) հետ կապված ժառանգական պատիվներն
ու զործակալութիւնները և այլ դասային արտոնութիւնները»⁴⁸:

Եվ ահա Հայոց «ազատաց և տանուտերանց» Գահնամակում, ինչպե-
սաև նշանավոր Զորանամակում, իրենց տեղն ունեն և «Գարդմանա-
տէրը» (Ուտիքի իշխանը), և Երկրորդ կամ Փոքր Սյունիքի (Մաղէէից)
իշխանը⁴⁹, Զորանամակում «Ուտէացին» ու «Մաղէէացին» իրար կողքի
են և Հայոց հեծելազորին ներկայանում են հազարական (Ռ) հեծյալով⁵⁰:

Խորենացու Պատմութեան մի հատվածից երևում է, որ Գահնամակն
անփոփոխ կիրառվել է նույնիսկ մարզպանութեան ժամանակներում՝
428-ից հետո. Պարսից Վռամ թագավորը, Արևելյան Հայաստանի Արշա-
կունի թագավորութիւնը վերացնելուց հետո, փորձում է մեծամեծ նվեր-
ներով կաշառել Սահակ Պարթևին: Հայոց կաթողիկոսն արհամարհում է
այդ նվերները, պահանջելով, որ արքան կարգադրի հայոց նախարարնե-
րի գահը պահպանել այնպես, ինչպես սահմանվել էր Արտաշեսի օրոք
և անխախտ մնում էր մինչև այդ ժամանակ. «Զգահ նախարարացն Հա-
յոց, որպէս կարգեալ յԱրտաշրէ վարէցան մինչև յայժմ՝ նորին օրինա-
կաւ հրամայեսցէ և առ յապայ»⁵¹:

47 Անդ, էջ 271 (ընդգծումը մերն է—Ք. Ու.):

48 «Աշխարհացոյց», էջ 23:

49 Նիկ. Ազոնց, եջվ. աշխ., էջ 249—251: Ն. Ազոնցի այն նկատողութիւնը, թե
«Գահնամակում վերցվում է միայն մարզպանական շքանք» (տե՛ս. եջվ. աշխ., էջ
622), թյուրիմացութիւն է, քանի որ, ինչպես վերը տեսանք, Գահնամակը կազմվել է
Արևելյան Հայաստանի թագավոր Արտաշեսի (422—428) օրոք, իսկ մարզպանութեան
սկզբը հայկական թագավորութեան վախճանի տարին էր՝ 428 թվականը:

50 Անդ, էջ 251:

51 Խորենացի, էջ 352:

45 Անդ, էջ 331—332:
46 Նիկ. Ազոնց, եջվ. աշխ., էջ 249:

Գահնամակի և Զորանամակի հետազոտողները համոզված են, որ Հայաստանի ազատական կարգի այս անգնահատելի փաստաթղթերը հիմք են հանդիսացել Ազաթանգեղոսի ու Բուզանդի, Նդիշի ու Խորենացու այն ցանկերի համար, որոնք վերաբերում են Արշակունյաց ու մարզպանական շրջանների հայկական նախարարական տներին⁵², Նվ ուշագրավն այն է, որ Մավդեից (Արցախի) ու Գարդմանից (Ուտիքի) տերերը Գահնամակից էլ անցել են մատենագիրների երկերի մեջ՝ դիմանալով այն բժախնդիր ստուգումներին, որ կատարում էին պատմիչները, նախքան կկազմեն իրենց ցանկերը: Օրինակ, Խորենացին պատմում է, թե ինքն ինչպես է դուրս թողել իշխանական շատ անուններ՝ «վասն ոչ յայտնի լինելոյ մեզ և է ինչ՝ որ վասն աշխատութեան, ի վաստակելն խոյս տալով, երրորդ, զի և անհաստատութիւնն բազմաց՝ կարծիս ի ներքս ածէ ընդ բնան անցանել... այլ միայն զորս հաւաստին դիտեմք զկնիսն: Զի որչափ էր հնար՝ փախեաք յաւելորդ և ի պաճուճեալ բանից, և որ ինչ յանհաւաստին հայէր բանն և մտածութիւնն, միայն զհետ երթալով ըստ կարողութեան՝ որ ինչ այլուստ և կամ ի մէնջ՝ զարդարոյն և զճըշմարիտ»⁵³:

Այսօրինակ քննությամբ է, որ Պատմահայրը կազմել է իր ցանկերը և նրանցում Գուգարքի, Գարդմանքի ու Մավդեից տերերն իրենց տոհմական անուն են Հայկյան Սիսակից ու միշտ էլ կան հայոց նախարարների շարքում: Զորանամակում Հայաստանի հյուսիսային դուռը պաշտպանող նախարարական խմբի մեջ են մտնում «Ուտէացիին» ու «Մաւդէացիին» Ռ (1000)-ական հեծյալով, իսկ խմբի ղեկավարն է «բղեշխն Գուգարաց ՏԵ (4500) հեծյալով»⁵⁴:

Ազաթանգեղոսի ցանկում միասին են՝ «Լշխանն Գուգարացոց աշխարհի, որ միւս անուանեալ բղէաշխն», «Իշխանն Մաւդէից աշխարհին», «Իշխանն Ուտիացոց աշխարհին»⁵⁵:

52 Ն. Ադոնցը Մավդեի և Ուտիքի նախարարական տների զոյւթյունն Ազաթանգեղոսի պատմության մեջ (Ազաթանգեղոս, էջ 404) փորձում է չհամարել քննության առարկա ժամանակի արտահայտություն: Ենչու ներկայացուցչությունները, — դրում է նա, — արտացոլում են 6-րդ դ. իրադրություն՝ համապատասխանելով Հայոց երկրի բաժանումին՝ Աշխարհազոյցից առաջ» («Армения в Эпоху Юстиниана», с. 294): Սակայն քննության անված հարակից նյութերն ազատցուցում են, որ այս տեղեկությունը հավաստի է և անպայման գտնվել է Ազաթանգեղոսի երկի ընդգրկում:

53 Խորենացի, էջ 198:

54 Տե՛ս Ադոնց, նշվ. աշխ. էջ 251:

55 Ազաթանգեղոս, 1914, էջ 404: Ինչքան էլ զարմանալի, Ադոնցն այսօրինակ հետաքննում է, որ Գուգարքը, Ուտիքը, Մավդեքը և հարավային մի քանի նահանգներ չէին կարող մտած լինել Գահնամակի մեջ, որովհետև փաստաթուղթն ստեղծվել է V դարի

Պարզ է, թե խնդրո առարկայի մասին խոսող գիտնականներն ինչպես անուշադրություն են մատնել պատմիչների այսքան աներկմիտ տեղեկությունները և Գահնամակի ու Զորանամակի անառարկելի տվյալները՝ ստեղծելով մի տեսություն, որի հիմքը միայն Փափստոսի մի հեռուորական-հուզական արտահայտությունն է:

Կարծում ենք՝ քննության անված փաստերը բավարար հիմք են տալիս եզրակացնելու, որ սխալվում են հետազոտողները՝ պնդելով, թե Ուտիքն ու Արցախն Արևելյան Հայաստանից կտրվել և Աղվանքին են միացվել 387 թ., և առավել հիմնադրով է այն հայտարարությունը, թե այդ թվականից հետո «Աղվանքի թագավորներին հաջողվեց իրենց տիրույթներին միացնել Արցախ (Ղարաբաղ) և Ուտիք մարզերը»:

Արցախ և Ուտիք նահանգները (ինչպես և նրանց բախտակից Գուգարքը) Հայաստանի կազմում մնացել են ընդհուպ մինչև 428 թվականը: Դրանից հետո էլ նրանք ո՛չ թե գրավվել են Աղվանքի կողմից և նույնիսկ՝ ո՛չ թե բռնակալ Պարսկաստանը նրանց տվել է Աղվանքին, այլ պարզապես Ուտիքից, Արցախից ու Աղվանքից կազմել է մի հարկատու մարզ՝ «Հարկատուն» ընդգծում ենք, որովհետև այդ մարզը միայն և միայն հարկային նոր քաղաքականության արգասիք էր. մի կողմից՝ Աղվանքի, մյուս կողմից էլ՝ Արցախի և Ուտիքի միասնությունն արտահայտվում էր միայն նրանով, որ երկուսը միասին Չոզում (460-ական թթ. հետո էլ՝ Պարտավում) նստող մարզպանի միջոցով հարկ էին վճարում Պարսից արքունիքին և 552 թ. հետո էլ պետք է մտնեին Հայոց կաթողիկոսական կենտրոնին ենթակա մեկ եկեղեցու ոլորտի մեջ: Մնացած բոլոր պարագաներում նրանք իրարից անկախ էին ու ինքնուրույն: Մեր այս կարծիքը հաստատելու համար կարող ենք հիմք ընդունել երկու շատ կարևոր հանգամանք:

ա) Դեպքերի ժամանակակից ու ականատես Նդիշի հետևյալ վկայությունը, ըստ որի՝ Արևելյան Հայաստանում վերջին հայ Արշակունի թագավորի վերացումից հետո «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն, զի թէպէտ և դանձն յարքունիս Պարսից երթալը, սակաւն

սկզբին, երբ, իր կարծիքով, իբր թե, այս նահանգները «գտնվում էին Պարսկական (պարսկաճառատակ—Ք. Ու.) Հայաստանի սահմաններից դուրս» (նշվ. աշխ., էջ 256):

Գահնամակի ու Զորանամակի մեջ այս նահանգների առկայությունը գիտնականին պիտի ստիպեր վերանայելու իր այնպիսի կարծիքը (այդ նահանգները «Հայաստանի սահմաններից դուրս» հայտարարելը), որն իր հիմքում լուծի Գահնամակին համապարկում առհասարակ որևէ շատ թե քիչ վտանգի աղբյուր: Սակայն, դժբախտաբար, այս բանը տեղի չի ունեցել ո՛չ Ադոնցի, ո՛չ էլ նրան հետևողների քննության ընթացքում:

այր ու ձին Հայոց բովանդակի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»⁵⁶: Սա ուրիշ բան չէր, քան՝ որ այն ժամանակ հարկահան մարդպանի կողքին ամեն մի նախարար ի՛նքն էր տերն ու տնօրենն իր նահանգի, ի՛նքն էր զլխավորում իր նահանգի ներքին գինական, քաղաքական ու մշակութային կյանքը:

բ) Որպես Եղիշեի այս վկայության (ինչպես նաև վերը քննության առած Խորենացու տվյալների) հաստատումն և իրեղեն ցայտուն ապացույց՝ Հայոց արևելից կողմանց (Արցախ և Ուտիք) տարածքի վրա V դարի վերջում Վաչագան Բարեպաշտի կողմից ստեղծված Առանշահիկ թագավորությունը: Սա, ինչպես ռուս գիտնականն է ճիշտ նկատել, ուրիշ բան չէր, քան հինավուրց հայոց թագավորության՝ Կովկասում երբեմնի գոյություն ունեցած խոշոր պետության մի բեկորը⁵⁷:

⁵⁶ Եղիշե, էջ 6:

⁵⁷ Տե՛ս С. В. Юшков, К вопросу о границах древней Кавказской Албании, с. 137.

Գ Ր Վ Ա Գ Հ Ի Ե Գ Ե Ր Ո Ր Կ

ԱՌԱՆՇԱՀԻԿ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մովսես Խորենացին հայոց Աղվանքի վրա Վաղարշակ թագավորի կողմից կուսակալ կարգված Առանից է սերել տալիս երկրամասի իշխանական տները: Առանը Միսակի ղավակներից էր¹, Միսակը՝ Հայկի²: Պատմահայրը ծագումնաբանական այս ճյուղագրությունը տալիս է՝ հաստատելու համար, որ Հայոց արևելից կողմանց իշխանությունը հնուց ի վեր հայազուն է եղել: Խորենացին այս երկրամասի անունն էլ է սերված համարում Առանից. «Աղուանք» (նրա «աղու» բարբրից), «Առան» (հենց նրա անունից): Այստեղից էլ, Հայոց արևելից կողմանց կամ Առան աշխարհի վրա իշխող հարստությունը, պարսկական տիրապետության ժամանակներից սկսած, պարսկերենի ազդեցությամբ, կոչվել է Առանշահիկ:

Առանշահիկների հայկական ծագման մասին Խորենացու վկայությունը բնզունում են նաև մեր մյուս պատմիչները: Կաղանկատվացին Առանից սերված և Հայոց արևելից կողմանց վրա իշխող տոհմը համարում է «գնախնական ազգս Հայկազնեայց զԱռանշահիկս»³, իսկ Կիրակոս Գանձակեցին՝ «ի զարմից Հայկայ՝ յազգականութենէն Առանայ»⁴:

Այս կուսակալական-իշխանական տունը ճյուղավորվում է Հայոց արևելից կողմանց նահանգներում՝ հանդիսանալով այդ երկրամասի տերն ու տնօրենը, մինչև որ VII դարի սկզբին Պարսկաստանից զալիս է Միհրական տոհմի մի շառավիղը, գավով ու նենգությամբ կոտորում Ուտիքի Գարգման գավառի տեր Առանշահիկների տասնյակ տղամարդկանց և գրավում նրանց տիրույթները: Այսպես է սկսվում բնիկ հայազուն Առանշահիկների ու եկվոր հայացած Միհրանյանների դաժան մըր-

¹ Խորենացի, էջ 113:

² Անդ, գիրք Ա, գլ. ԺԲ (էջ 37—41):

³ Կաղանկատուացի, էջ 196:

⁴ Գանձակեցի, էջ 193:

ցակցութիւնը, որը տեսնու է մինչև IX դարի սկիզբը: Մրցակցութեան պատճառով համարյա սպառված Միհրական տոհմի վերջին ներկայացուցչուհի օրինորդ Սպարամն ամուսնանում է Առանշահիկ Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեսի հետ՝ իր տոհմական արջան հռչակվելը գոնե այս կերպ շարունակելու համար:

Վերջին պարագան, ինչպես էլ տարօրինակ լինի, պատմիչը գնահատում է որպես խաղաղ մի գործարք. «ընդ Հայկազնեայց արանց խնամատրիլ Միհրական տոհմին, և պատուաստութեամբ այսուիկ զոյգ ունել ջպետութիւն արևելից կողմանցս Աղուանիցս»⁵:

Ինչևէ. այս է Առանշահիկ տոհմի կենսագրութեան ուրվագիծը, որի հանգամանակից քննությունը մենք պետք է սկսենք նրանց ստեղծած թագավորութեան ժամանակից: Նախընթացը մեր խնդրից դուրս է: Դուրս էլ չլիներ, մենք չէինք կարող այդ առթիվ կոնկրետ խոսք ասել, որովհետև այնտեղ մանրամասները լուծված են Մեծ Հայքի միասնական պետական կյանքի ոլորտների մեջ:

Սակայն Առանշահիկների հարստութեան այս ետնազույն ժամանակները մասին խոսելուց առաջ անհրաժեշտ ենք համարում քննել պատմագիտութեան կողմից մինչև այժմ ընդունված Աղվանից թագավորութեան հարցը: Սա այն թանձր վարագույրն է, որի ետև շեն երևում կամ մշուշոտ ու խառնակ են նշմարվում արևելյան Անդրկովկասի հին պատմական իրադարձությունները: Հետևապես, հարցի լուրջ քննությունն անհրաժեշտ է ո՛չ միայն Հայոց արևելից կողմանց պատմական իրականության պարզաբանման տեսակետից, այլև բուն Աղվանքի պատմության համար, որը միշտ էլ խառնվել է առաջինի հետ:

Աղվանից քաղաքական տան հարցը.— V դարի սկզբին (428) Պարսկական պետությունն արևելյան Անդրկովկասում ստեղծեց մի մարզպանություն, որի մեջ պիտի մտնեին Աղվանքը և հայկական Ուտիքը⁶: Արցախ մարզերը:

Մարզպանական վարչակարգի ստեղծումով վերացվեցին հայ Արշակունյաց և աղվանական (բուն Աղվանքի) միասնական թագավորությունները: Սակայն նախարարական ներքին կյանքում, ինչպես արդեն նկատվել է պատմագիտության մեջ, սկզբնական շրջանում արտակարգ փոփոխություններ տեղի չունեցան⁶: Եղիշեի վկայությամբ՝ Արևելյան Հայաստանի Արշակունի թագավորության վերացումից հետո էլ երկրի տեր էին

մնում տեղացի նախարարները, որոնցից ամեն մեկն իր նահանգի ինքնակալ իշխանապետն էր, ուներ իր զորքը, ինքնահատուկ ներքին կարգ ու կանոնը և մարզպանի միջոցով միայն հարկ էր տալիս Պարսկաստանին: Այս մասի վերջին թագավորն էր Արտաշեսը,— գրում է Եղիշեն: — Երբ պարսից արքունիքը «զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ գանձն յարունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»⁷:

Եվ պատահական չէ, որ մարզպանության շրջանում էլ, Չոգում նրստած Աղվանից մարզպանի կողքին, վերստին դուրս էին բարձրացրել աղվանական հին մանր թագավորությունները, որոնք ոչ այլ ինչ էին. եթե ոչ նախկին ցեղային միավորումների զլխավորները⁸: Իսկ Ուտիքի և Արցախի Առանշահիկներն էլ ձեռք բերեցին վարչական որոշակի ինքնուրույնություն, ստեղծեցին թագավորություն, որն իր ամենաբուն վերիքն ապրեց Վաչագան Բարեպաշտի օրերում:

V դարից սկսած հայկական աղբյուրներն Արցախ և Ուտիք նահանգները ևս կոչում են Աղվանք⁹: Այս վերանվանման մեջ որոշակի դեր պետք է ունենար մարդի եկեղեցին, որը վարչական նոր վիճակի պատճառով առանձնացվել էր, սակայն նվիրապետական տեսակետից ենթակա էր մնում հայոց լուսավորչական եկեղեցուն:

Մարդի «Աղվանք» (պարսիկների, հետո էլ արաբների կողմից «Առան կոչված») անունն աստիճանաբար մոռացության տրվեց անդրկուրյան երկրի առումով, որովհետև պարսկական տիրապետության օրոք, ինչպես ասացինք, վերակենդանացել էին նախկին ցեղային միավորումները, և բաժան-բաժան երկիրը հենց այս միավորումների անուններով էլ կոչվում էր. հյուսիսարևելյան մասը՝ Մասքթաց կամ Չոգա աշխարհ, հարավային մասը՝ Բաղասական աշխարհ, արևմտյան մասը՝ Լփնիք և այլն: Իսկ արաբական տիրապետության օրոք այս ամբողջ տա-

7 Եղիշէ, էջ 6:

8 Անդ, էջ 76. Լոփնաս (Ալազան) գետի ափին Հայոց զորքերի գեծ կռուվ էին Բաղասական արքայի սրբանիքը: Իսկ Բաղասականն Աղվանքի զլխավոր մարզերից մեկն էր. անդ, էջ 77. Արշավիր Արշարունին «սաստակեր զՎուրին քաջ՝ զեղբայր թագաւորին Լփնաց»: Լփնիքն էլ նույն բուն Աղվանքի մյուս խոշոր մարզն էր: Եվ այս բոլորը տեղի է ունեցել Ավարայրի ճակատամարտի նախօրին:

9 Այս առթիվ տես Կիբակոս Գանձակեցի, Առաջարան, էջ Ը—Թ: Նաև՝ Աս. Մեղացիական, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1900, էջ 5:

5 Կաղանկատուցի, էջ 386:

6 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 286:

րածքի վրա կաղամվորվեցին վարչական նոր միավորումներ՝ Գերբենդի, Շիրվանի, Շաքիի ամիրայությունները:

Պարզ է, թե ինչու «Աղվանք» անունով հետագայում կոչվեցին միայն Արցախ և Ուտիք նահանգները, իսկ նրանց տեղը Առանշահիկները՝ Աղվանքի (գրաբարում՝ Աղուանից) իշխաններ, թագավորներ:

X դարի պատմիչ Մովսես Գախուրանցին (կամ Կազանկատվացին, ինչպես ընդունված է հայագիտության մեջ), հիմք ընդունելով այս հայաշխարհ Աղվանքի մասին VII դարում ստեղծված պատմությունը, նրան է միացնում հետագա ժամանակներին վերաբերող նյութեր, ժամանակագրություններ, ինչպես նաև հին դարերից եկող տեղեկություններ ու ալանդություններ: Նա, իր հայրենիքի պատմությունն առավել հարուստ ու շքեղ ներկայացնելու նպատակով Պատմության մեջ է մտցնում նաև այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերում են բացառապես անդրկուրյան Աղվանքին: Այս եղանակով կազմվում է նաև Աղվանքի իշխանական-թագավորական տան ճյուղագրությունը, որի մեջ իրար են խառնելով միմյանց հետ կապ չունեցող վարչական միավորումների ու տարբեր տոհմերի ներկայացուցիչներ:

Թվարկելով հայոց ավանդական թագավորներին, պատմիչը գրում է. «ի սոցա ծննդոց կարգեցաւ Առան նախագահ՝ Աղուանից: Եւ թիւ արորցն յԱռանայ մինչև ցՔաջ Վաչական, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց՝ չէ յայս: Եւ զսոցայն ստույգն, թէ յորմէ տոհմէ են, չունիմ ասել: Իսկ որք քստ կարգի կային թագաւորք տանս Աղուանից՝ անուանք են այսորիկ. Վաչական, Վաչէ, Ուռնայր, Վաչական, Մրհաւան, Սատոյ, Ասայ, Եսուաղեն, Վաչէ, ապա Բարեպաշտն Վաչական արքայ Աղուանից»¹⁰:

Ուրեմն, քստ պատմիչի խոստովանությունը՝ հայտնի է, որ քաջ Վաչականն Արշակունյաց տոհմից է սերված, իսկ թե ցանկի մեջ մտած մյուսները «յորմէ՞ տոհմէ են», ծածկված է պատմության քողով:

Պահպանվել են թագավորացանկի որոշ անունների համար նյութ հանդիսացած պատմական հիմնական աղբյուրները, և նրանց հանդամանակից քննությամբ հնարավոր է պարզել, թե ցուցակը ո՞ր չափով է համապատասխանում պատմական իրականությունը:

Այդ քննությանն անցնելուց առաջ ասենք, որ վերոհիշյալ ցուցակի սխալ ելակետից շարժվելով, որոշ դիտնականներ ավելի են շփոթել պատմական իրականության պատկերը: Օրինակ, ակադեմիկոս Ա. Ս.

Արիմսկին արեւելյան Անդրկովկասում հնագույն ժամանակներից մինչև որոշակյան արքայատոհմի անկման օրերը հանդես եկած բոլոր թագավորների ու իշխանների միջև ոչ մի տարբերություն չէր տեսնում՝ ո՛չ կենդանական, ո՛չ էլ վարչական պատկանելության տեսակետից¹¹:

Իսկ Կ. Վ. Տրեբերը, տեսնելով, որ հայկական աղբյուրներն իրենց Աղվանքում տիրող իշխանապետական նախնի Առանին համարում են հայ թագավորի նշանակած կուսակալ, հայտարարում է, թե «Հայաստանի ու Ալբանիայի շահերի մերձեցման նպատակով կարող էր ստեղծվել ստասպել հայկական հողերի ավանդական կարգավորիչ Վաղարշակի անմիջական ազդեցությամբ ալբանական թագավորություն կազմելու մասին»¹²:

Ա. Տ. Երեմյանը մի տեղ Առանշահիկներին ու մասջուր-Արշակունիներին նույնացնում է¹³, իսկ մի այլ տեղ Արշակունյաց տոհմի թագավորության հիմնադրությունը հաշվում 338 թ.¹⁴:

Փորձենք քննության առնել վերը մեջ բերված թագավորացանկը:

Ուշադրավ է Մխիթար Այրիվանեցու փորձն այս ցուցակի հիման վրա ներկայացնելու Աղվանից թագավորական տան ճյուղագրությունը: Սակայն այս պատմիչն էլ իր հերթին մի շարքի վրա է դրել Աղվանից աշխարհի պատմության մեջ կուսակալ (նախագահ), թագավոր, իշխան կոչումներով հանդես եկող անունները, նրանց բոլորին համարել «թագավորք Աղուանից» և ստեղծել մի այսպիսի տախտակ. «Առան, Ուռնայր, Վաչական..., Վաչէ, Յաւազան, Միրհաւան, Սատոյ, Եսուաղեն, Միհր, Արմայել, Վարդ, Վարդան, Վարազման, Վարազ Գրիգոր, Զուանշէր Քաջ, Վարազ Տրդատ, Վարդան, Ներսես, Գագիկ, Ստեփանոս, Վարազ Տրդատ, Սուսիանոս, Ատրնեբուհ, Գրիգոր, Սևադայ, Յովհաննէս թագ, Զայսյափ գտաք՝ երեսուն թուով»¹⁵: Այստեղ առաջին ինն անունները շփոթված են, մի բան, որ Այրիվանեցու թարգմանիչ Ք. Պատկանյանը գրական ազգավազում է համարել¹⁶, Սակայն անկախ դրանից, Այրիվանեցու

11 А. Е. Крымский, Страницы из истории Северного или Кавказского Азербайджана (классическая Албания). Сборник С. Ф. Ольденбургу, Л., 1934, с. 290, 291, 295.

12 К. В. Тревер, *ibid.*, т. 2, с. 145.

13 «Очерки истории СССР III—IX вв.» М., 1958, с. 314.

14 Ս. Ս. Երեմյան, *Հայաստանը...*, էջ 88:

15 «Մխիթարայ Այրիվանեցու Պատմութիւն ժամանակագրական», Ս.—Պ., 1867, էջ 23:

16 Տե՛ս «Хронологическая история, составленная отцом Мхитаром вардапетом Айриванецким», пер. К. Патянова, СПб., 1861, с. 348.

ցուցակը և հարցը պարզելուն ոչնչով չի օգնում, քանի որ այստեղ բացակայում է քննական այն հարցը, որ պիտի պարզեր, թե որտեղից է ի՛նչ հիմունքով են իրար կողք բնկել այդ անունները:

Ոչ ոք կասկածի չի ենթարկել Աղվանքի թագավորացանկի հավաստիությունը¹⁷: Սակայն Վ. Ֆ. Մինորսկին գտնում էր, որ «թեպետ և թագավորների անունները մտցված են Մովսես Կաղանկատվացու ժամանակագրության մեջ, նրանց մասին տվյալները կցկտուր են ու խառնակ»¹⁸, Կասկածի հավասար այս վերաբերմունքին ևս, դժբախտաբար, չի հետևել ցանկի անունների պատմաքննական վերլուծությունը:

Հայ մատենագիրներն ու հետազոտող պատմաբանները քննվող ցանկի անունները կրողներին միշտ էլ համարել են Աղվանքի թագավորներ, իսկ ոչ հայ կովկասագետները՝ ալբանական թագավորներ:

Բայց հետաքրքիրն այն է, որ այս դեպքում ուսումնասիրողները ցանկի հավանական ու անհավանական թագավորներին և նրանց շուրջը ստեղծված պատմություններն ընդունելով պատմական ճշմարտության տեղ, միաժամանակ մոռանում են հենց այդ անուն-թագավորների էթնիկական բնութագրությունները, որ պահպանվել են Աղվանից աշխարհի պատմության մեջ: Եվ դա այն ժամանակ, երբ հենց այս բնութագրություններն են, որ հաստատվում են ուրիշ աղբյուրներով:

Աղվանից թագավորական տան պատմականորեն իրական պատկերը որոշելու նպատակով անհրաժեշտ է ցուցակը քննել օգտագործված աղբյուրների տեղեկություններով: Իսկ այդպիսի փորձ մինչև օրս չի արվել:

Այս քննությունն առավել ևս անհրաժեշտ է, քանի որ հենց ինքը՝ «Աղվանից աշխարհի պատմություն» հեղինակն իր գրքում քանիցս խոստովանում է, որ այս ցուցակի թագավորների մասին իր գրածից ավելի ո՛չ ինքը տեղեկություն ունի, ոչ էլ կարողացավ այդպիսիք գտնել հին աղբյուրներում: «Պատմութիւն ճշմարիտ առաւել քան զնախադահիւն Առանայ ի Վաղարշակայ տանս Աղուանից այլ ինչ ոչ գտաք մինչև

17 Բացառություն է կազմում միայն Ն. Ակինյանը, որն աշխատել է ցուց տալ, թե Կաղանկատվացու (կամ Դասխուրանցու) թագավորացանկի անուններից որոնք են իրական-պատմական և որոնք՝ հորինված: Սակայն նա էլ չի անդրադարձել այն հարցին, թե այդ իրական-պատմական թագավորներից ու իշխաններից որոնք են առնչվում անդրկուրյան Աղվանքի հետ և որոնք՝ Հայոց արևելից կողմանց. տե՛ս նրա՝ «Մովսես Դասխուրանցի (կղզուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից», Վիեննա, 1970, էջ 80—98, 96—142 և այլն:

18 В. Ф. Минорский. История Ширвана и Дербенда X—XI веков, М., 1963, с. 29.

դժաշն Վաչական, որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»¹⁹, — պարզասրտորեն գրում է պատմիչը, Կամ՝ «ըստ կարգի գրուցք յԱռանայ մինչև ցլուռայր Աղուանից արքայ և ցՏրդատ Հայոց արքայ ոչ գտաք, այլ հարևանցի գրեցաւ, որ ինչ ի պէտս էր տեղեակ լինել»²⁰:

Աղվանք աշխարհի միասնական պատմությունը հյուսող պատմիչն ինքն է խոստովանում, որ մի դեպքում պատմական աղբյուր է ընդունում «վԱղաթանգեղոյ Պատմութիւն ցանկալի», մի այլ տեղ՝ «...այսմ վայրի նպաստաւորէ մեզ Քերթողահայրն Մովսէս»: Իսկ ուրիշ տեղերում էլ առանձին գրույթներ է արտագրում Եղիշից ու Փալստոս Բուզանդից, առանց նրանց անունները տալու:

Իհարկե, այլ հարց է, թե պատմիչն ինչպես է մեկնաբանում Քերթողահայր Մովսեսից ու մյուսներից քաղած տեղեկությունները: Այդ հարցը պարզելու համար մենք նախ և առաջ պետք է դիմենք իր իսկ վկայակոչած աղբյուրներին:

Հարցի քննությունը պահանջում է, ամենից առաջ, նկատի առնել կրկրամասի վարչաքաղաքական կյանքի երեք փուլերը:

ա) Նախամարդպանական շրջան, երբ իրարից ազատ գոյություն ունեին բուն Աղվանքը՝ իր Արշակունյաց թագավորությամբ և Մեծ Հայքի կազմի մեջ մտնող Ուտիք ու Արցախ նահանգները՝ իրենց Առանշահիկ իշխանական տներով:

բ) Մարդպանական շրջան (428 թ. հետո), երբ Աղվանքն ու հայկական հիշյալ նահանգները մտնում էին պարսկահպատակ մեկ մարզի մեջ. ընդհանուր առմամբ պարտավոր էին ենթարկվել պարսից մարդպանին, սակայն, ըստ էության, ունեին ներքին ինքնուրույնություններ, և յուրաքանչյուր կողմը յուրովի էր օգտվում այդ հնարավորությունից:

գ) Ետմարդպանական շրջան, երբ բուն Աղվանքում աստիճանաբար կազմավորվում են վարչական նոր միավորումներ, իսկ Արցախում անրնդմեջ տիրություն էին անում Առանշահիկները, Ուտիք թագանցած Միհրանյան իշխաններն էլ, շուրջ մեկ դար տիրություն անելուց հետո, աստիճանաբար հեռանում են ասպարեզից, իրենց դիրքերը զիջելով նահանգի բնիկ տեղի Առանշահիկներին:

Այս պարբերացման հիմունքով էլ քննենք վերոհիշյալ թագավորացանկը:

Սկսենք Առանից՝ ցանկի առաջին անունից: Այստեղ, ի՛նչ խոսք, որ

19 Կաղանկատուացի, էջ 16:

20 Անդ, էջ 19:

Աղվանքի պատմիչին «նպաստաւոր է Քերթողահայրն Մովսէս» և ուրիշ ոչ ոք: Իսկ Քերթողահայր Մովսէսի Առանք ոչ թէ թագավոր է, այլ Մեծ Հայքի թագավոր Վաղարշակի կողմից Հայաստանի հյուսիսարեւելյան մասի (Ուտիք, Արցախ) վրա կարգված կուսակալ²¹: Առանից էր, որ սերվեցին այս նահանգների իշխանական տոհմերը, որոնք հետագայում պետք է կոչվեին Առանշահիկներ:

Խորենացու այս տեղեկությունն Առանի մասին վերաբերում է մ. թ. ա. II դարին, երբ Մեծ Հայքի միասնական պետության ներքին կարգ ու կանոնի նախանձախնայիք ավանդական Վաղարշակ թագավորն աշխատում էր իր երկրի ծայրամասերն ամրապնդել նախարարական տների իշխանությունը:

Ցուցակի երկրորդ անունը Քաջ Վաչագանն է, «որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»²², և «որ էր ի մեծ աղղէն Արշակունեաց»²³, Պատմիչ-շարահարողն Առանից մինչև Քաջ Վաչագանը եղածներից տեղեկություն չունի: Զի էլ ասում, թէ վերջինիս մասին այս երկու շատ կարևոր տեղեկությունը որտեղից է բաղել: Սակայն հենց միայն այս տեղեկությունները բավական են՝ որոշելու համար, որ Վաչագան Քաջը բուն Աղվանքի այն առաջին թագավորն էր, Պարթև Արշակունիների մի շառավիղը, որ մ. թ. I դարում աղվանական ցեղախմբերը միավորեց ու ստեղծեց միասնական թագավորություն («միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»):

Մյուս անունը, որ դարձյալ վերցված է նախորդ շրջանի մատենագիրներից, և որի մասին եղած տեղեկությունները կարող ենք ի մի բերել ու քննել, Ուռնայրն է:

Խորենացուն²⁴ և Բուզանդին²⁵ հայտնի Ուռնայրն անդրկուրյան Աղվանքի թագավորն էր և չէր կարող պատկանել հայաշխարհ Աղվանքի կամ Ուտիքի ու Արցախի իշխանական տանը, քանի որ Ուռնայրի ժամանակ (IV դար) Ուտիքն ու Արցախը գտնվում էին Մեծ Հայքի թագավորության կազմում:

Հաջորդ անունը Սալաղենն է կամ Արսվաղենը, նա, որ Մեսրոպ Մաշտոցին օգնեց գիր ու դպրություն տարածելու Աղվանքում:

Արսվաղենը, հավանաբար, վերջին ներկայացուցիչն էր բուն Աղ-

վանքի Արշակունի թագավորական տան, քանի որ նրա մահվանից հետո Աղվանքում այլևս միացյալ թագավորություն չկար: Եվ, սրանից բացի, Վաչագան Բարեպաշտի օրոք այդ երկիրն այնքան թուլացած էր, որ որոշ առումով կախյալ վիճակում էր գտնվում նույնիսկ Վաչագանի հուշակած Առանշահիկ թագավորությունից:

Որ Արսվաղենը եղել է Ալբանիա-Աղվանքի թագավորը, պարզ երկվում է Կորյունի տեղեկություններից: Հստ նրա պատմության՝ Մաշտոցը լրացավոր Արսվաղենին ու եպիսկոպոս Երեմիային հանդիպելու համար, գնում է Անդրկուրյան Աղվանք. «և հասաւ ի թագաւորական տեղիսն», նրանց գործուն օժանդակությամբ դպրություն տարածում երկրում, հետո իջնում Բաղասական աշխարհը, որ անմիջապէս Կուրի ձախափնյակն էր, այնտեղ ևս կատարում իր առաքելությունը: «Հրածարէր ապա և ի թագաւորէն և եպիսկոպոսացն և յամենայն եկեղեցոյն Աղուանից», գալիս է Գարդմանք (Ուտիք), որ նրան դիմավորում է նահանգի իշխան Խորսր: «Եւ հանդէպ հասաւ զայր Գարդմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում անուն Խորս կոչէին»²⁶:

Այսքանից չի կարելի չեզրակացնել, որ Կորյունի հասկացած Աղվանքը Կուրի ձախափնյակն է: Աջափնյակի՝ Հայոց արևելից կողմանց առաջին դաժառ (Գարդմանք) մտնելու համար Մաշտոցը հրածեշտ պետք է տար Աղվանքի թագավորին, եպիսկոպոսին և «յամենայն եկեղեցոյն Աղուանից»: Վերջին արտահայտությունը հստակ որոշում է նաև գործողության ժամանակը՝ նախամարդպանական շրջանը, որովհետև, եթե մարդպանությունից առաջ «ամենայն եկեղեցին Աղուանից» ձախափնյակում էր, ապա մարդպանության օրոք Աղվանից եկեղեցու իրավասության տակ էր մտնում նաև աջափնյակը:

Պարզվեց, որ Արսվաղենն Ալբանիա-Աղվանքի թագավորն է եղել: Ուրևն՝ նրա անունը ևս շուտօք է մտնեք Հայոց արևելից կողմանց տների ցանկը:

Թագավորացանկի մյուս անունները՝ Վաչագան II, Վաչե I, Մրհափան, Սատոյ, Ասա, անհնար է ստուգել, քանի որ պատմական աղբյուրները լուրջ են նրանց մասին, իսկ «Աղվանից աշխարհի պատմության» մեջ նրանք միայն ցանկի բաղադրիչներ են: Պատմիչը, չհայտնելով, թե որտեղից է բաղել այդ անունները, խոստովանում է, որ նրանց մասին տեղեկություններ չի գտել ո՛չ հին աղբյուրներում, ո՛չ էլ գրույցներում:

Ընդհանրացնելով վերև ասածները, կարելի է հաստատել, որ Աղ-

21 Խորենացի, էջ 111—113:

22 Կաղանկատուցի, էջ 16:

23 Նույն տեղում, էջ 51:

24 Խորենացի, էջ 304:

25 Բուզանդ, գլուխ Ե, գլ. Գ:

26 Խորենացի, էջ 72:

վանից թագավորական տան ներկայացուցիչների ցուցակի մեջ տեղ գտած անուններից Առանը իշխանական տան ավանդական նախահայրն է, այն առաջին մեծը, որից, ըստ խորհնացու, սերվել են Հայոց արևելից կողմանց իշխանական տները. «Ի սորա զաւակաց՝ ասեն սերեալ... Գարդմանացոց և Մարդեացոց և Գուղարացոց իշխանութիւնսն»²⁷:

Ըստ ավանդութիան՝ այս Առանից է «Առան» տեղանունը, ինչպես նաև այդ աշխարհը՝ նույն նախնուց սերված իշխանական տան «Առանշահիկ» («Առանի տիրակալ») տիտղոսը:

Մեր պատմիչներն այս բոլոր ավանդական տվյալները հաստատուն հիմքի վրա են դնում Առանի ու նրանից սերված Առանշահիկների ազգադրական հատկանիշով: Առանը Միսակի սերունդներից էր, իսկ Միսակն էլ սերված էր Հայկից (խորհնացի, Կաղանկատվացի ու հետագաներ): Գասխուրանցու օգտագործած մի կոնկրետ աղբյուրը՝ Ջիվանշիրի ժամանակագիրը (VII դ.) ճանաչում է «գնախնական ազգս Հայկազնեայց զԾոանշահիկս»²⁸: Իսկ Կիրակոս Գանձակեցին Հայոց արևելից կողմանց տեղերին գիտն որպես «ի զարմից Հայկայ՝ յազգականութենէն Առանայ»²⁹:

Թագավորացանկի հաշորդ անունը Վաչեն է: Նա, որ Վարդանանց ապստամբությունից հետո ըմբոստացավ պարսից դեմ, երկարատև ճակատամարտերի վերջում էլ թողեց իր գահը, ձեռքն ազնուարան առավ ու գնաց ապաշխարելու: Ազգանքի պատմության շարահարողն այս ամբողջը վերջրել է Եղիշեից, որի Պատմության մեջ Ազգանքի թագավորն անուն չունի: Եղիշեից արտագրածին ավելացրել է Վաչն անունը և մեկ էլ նրա եղբոր՝ Հազկերտ անունը (այս Հազկերտից, իբր թե, ծնվել է ապագա թագավոր Վաչագանը): Պատմիչը չի ասում, թե իրեն որտեղից են հայտնի Վաչն ու Հազկերտ անունները:

Ներսես Ակինյանն այն կարծիքն է հայտնել, թե Վաչեի մասին այս ամբողջ պատմությունը հորինված է Հռոմի թագավորի որդու վարքի նմանություններ, որն աղքատություն հանձն առնելով, մի ավետարան է վերցնում և առանձնանում Եգիպտոսի անապատում ապաշխարելու: Պատմությունը հայերեն է թարգմանվել 873-ին, Ատոմավանքի առաջնորդ Գաղիկի ձեռքով³⁰: Հետևապես, IX դարում պետք է մուծված լիներ

Եղիշեի Պատմության մեջ, նրանից էլ փոխանցված Ազգանքի պատմությունը:

Նախապես կլինեք ընդունել ն. Ակինյանի կարծիքը, եթե հավատալինք, թե մեր պատմիչը Վաչեին համարում էր բուն Ազգանքի թագավոր, և եթե Վաչեի անուն տարբերակը բուն Ազգանքի հետ կապված լինեք գտնե Եղիշեի պատմում: Սակայն այսպես չէ իրականում: Եղիշեն ևս, Մովսես խորհնացու պես, Ազգանք ասելով հասկանում էր Հայոց արևելից կողմանքը: Այս հանգամանքը դժվար չէ պարզել հաղխաղի օրինակով: Եթե հին իրողություններին քաջածանոթ Ազգանքեղոսի կարծիքով՝ հաղխաղը վերաբերում էր Մեծ Հայքին («...յուտի դաւառի, ի հաղխաղ քաղաքի՝ ի ձմերոցս արքայութեանն Հայոց»)՝³¹, ապա Եղիշեի համար արդեն Ազգանքի մեջ էր գտնվում նույն քաղաքը («...հաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Ազոուանից»)՝³²:

Հետազոտողներից ոմանք փորձել են այս անախրոնիզմը բացատրել բազմաբանական վիճակի այնպիսի շրջադարձով. որն, իբր, հաղխաղը Մեծ Հայքից խլել և տվել է Ազգանքին³³, Սակայն Վարդանանց պատերազմի ժամանակ չկար բուն Ազգանքի մի այնպիսի միացյալ թագավորություն, որն ի վիճակի լինեք Հայաստանից կորզել հաղխաղը և պահել յբրն իր թագավորանիստ-ձմերոցը: Այս ժամանակ տրոհված էր բուն Ազգանքը:

Եղիշեի Պատմության մեջ, օրինակ, այն ներկայացված է իր բազմակցուցիչ երկրամասերով, և, որ ամենակարևորն է, այս երկրամասերի տերերը կոչվում են Վարդանանց դեմ: Այսպես, Լուսինաս գետի ափին հայոց զորքերը ճակատամարտ են տալիս Բաղասական զորքերի դեմ, նրանց թագավորագույնները ծանր վնասներ են հասցնում հայ զորապետներին³⁴:

³¹ Ազգանքեղոս, էջ 26:

³² Եղիշե, էջ 75: Ղազար Փարպեցին ևս Ազգանքին է համարում հաղխաղը «...ի պտի, որ կոչի հաղխաղ, երկրն Ազոուանից» (Վաղար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1904, էջ 65):

³³ H. Adont, Armenia в эпоху Юстиниана, с. 223. Այսուհի հաղխաղը տեղադրված է ժամանակակից Ջեզան գետի վրա, Կուրի աջափնյակում: Այդ կարծիքին էր նախնած նաև Լեոն (տե՛ս Լեո, Երկրի ժողովածու, հատ. II, 1967, էջ 75, ծան. 11), որ նկատի ուներ Փարպեցու իսկապես իրական տվյալը (Փարպեցի, էջ 65):

Ինչպես Եղիշեն պատմում է, որ Հայոց զորքը «փութանակի անցանք ընդ մեծ գետն Կուր անուն, և սրատակը նմա (իշխանուն) մերձ ի սամանս Վրաց նանգեպ հաղխաղ քաղաքի» (Եղիշե, էջ 75): Այս տեղեկությունը, հավանաբար, սխալ է, քանի որ նախամարզպանական շրջանում ձախափնյակի բնակավայրը չէր կարող լինել Հայոց թագավորների ձմերոց:

³⁴ Եղիշե, էջ 76:

27 խորհնացի, էջ 113:

28 Կաղանկատուացի, էջ 196:

29 Կ. Գանձակեցի, էջ 193:

30 Ն. Ակինյան, Մովսէս Գասխուրանցի..., էջ 89:

Քշնամի բանակների մեջ էր Լինիքը, որի թագավորի եղբայր Վուրկին ու շատ զինվորների կոտորում է Արշավիր Արշարունին³⁵:

Մասքութներն էլ, ըստ այս պատմության, Վաչիի համար օտարներ էին, որոնց հետ նա պետք է դաշնակցեր Պարսից զեմ կոչելու համար:

Պարզ է, որ Կուրի ձախափնյակում վարչական այսպիսի կազմավորումներ ճանաչող Եղիշեն, Փարպեցին ու Խորենացին Աղվանք ասելով հասկանում էին աջափնյակը՝ Հայոց արևելից կողմանքը և այնտեղ գլուխ բարձրացրած հզոր իշխանության մեջ պիտի տեսնեին այն թագավորությունը, որի ձմերոցն է եղել Խաղխաղը: Մանավանդ, որ Ազաթանդեղոսի համար ևս դա բուն հայկական երկրամաս էր ու եղել էր Հայոց թագավորների ձմերոցը:

Եվ պատահական չէ, որ այս տարածքի թագավորը (Կաղանկատվացու Վաչեն) ապստամբում է Պարսից զեմ՝ համերաշխելով Վարդանանց հետ, մինչդեռ բուն Աղվանքի կամ Լինաց, Բաղասականի ու Չողա տերերը կոչում էին հայոց զեմ:

Մի՞թե սա չի խոսում այն մասին, որ Վաչիի թագավորությունը Կուրի ձախափնյակում՝ անհնար ու անտրամաբանական է: Իսկ աջափնյակի հետ Վաչիին կապում է նաև ավանդությունն այն մասին, թե զահից հրաժարվելուց հետո նա ապաշխարել է Ավետարանոց գլուղում³⁶:

Հաջորդ անունը Վաչագան Բարեպաշտն է³⁷:

Բարեբախտաբար Աղվանքի պատմության մեջ է մտել ականատես ժամանակագրի գրածը Վաչագանի մասին: Եվ թվում է՝ դժվար չէ որոշել, թե Պատմության մեջ նրա գործունեությունը պատմող գլուխների տեղեկություններից որո՞նք են ժամանակագրինը և ի՞նչն է ետնամույժ, որ չի կապվում պատմական ճշմարտության հետ:

✕ Հայտնի է, որ 428 թ. Պարսից արքունիքը վերացրել է Արշակունյաց թագավորությունն Արևելյան Հայաստանում: Կոնկրետ տեղեկություն-

³⁵ Նույն տեղում, էջ 77:

³⁶ Ս. Ջալալանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ. Տիֆլիս, 1858, էջ 248: Հեղինակն այստեղ Վաչիի փոխարեն գրում է Վաչագան, սակայն մեջ է բերում Աղվանքի Պատմության՝ Վաչիին վերաբերող հատվածը և Գլուտ կաթողիկոսի թղթերը:

³⁷ Ն. Ակիբյանը վերահիշյալ ուսումնասիրության մեջ, ամեն ինչ շնչելու հախուռն տենելով, այն կարծիքն է հայտնել, թե Վաչագանը ևս ոլատմական անձնավորություն չէ (տե՛ս Ն. Ակիբյան, նշվ. աշխ., էջ 126—127 և հտգ.): Մենք արգեն ցույց ենք տվել, որ այս կարծիքն անհիմն է, և Վաչագանի պատմականությունն ապացուցել ենք աղբյուրների քննությամբ (տե՛ս «Պարճյալ Աղվանի ժողովի գումարման տարեթվի մասին». «Երաբեր հասարակական գիտությունների», 1969, № 6, էջ 51—60):

ները բացակայում են, սակայն պետք է ենթադրել, որ միաժամանակ վերացել է նաև Աղվանական (Մասքթաց) Արշակունիների թագավորությունը: Սա միակ տրամաբանական ելքն է, որովհետև Պարսից Մասանյանք Արշակունիների տոհմական հակառակորդներն էին: Եթե իրենց նպատակ Հայաստանում վերացրել էին հակառակորդին, չէր կարող պատահել, որ նույնը չանեին նաև հարևան Աղվանքում: Ապա. Աղվանք մարդպանության մեջ էր մտնում նաև բուն Աղվանքը, նշանակում է՝ այն այլևս չէր կարող ունենալ ինքնուրույն միասնական թագավորություն:

Ժամանակագրի վկայությամբ՝ Վաչագանին թագավոր է ձեռնադրել Պարսից Վաղարշ արքան (484—488)³⁸:

Պատմաբանները մինչև այսօր էլ անհիմն կերպով Վաչագանին համարում են Ալեքսանդրի թագավոր, նույնիսկ մասքուտ և Արշակունի: Սակայն ըստ աղբյուրների ընձեռած տեղեկությունների՝ նա Հայոց արևելից կողմանց Առանշահիկ տոհմի ներկայացուցիչն է, այս երկրամասի պետական միավորման ղեկավարը:

Վաչագանի թագավորությունը ժամանակով առնչվում է Խորենացու պատմության ստեղծման հետ, իսկ այդ ժամանակից սկսած հայկական աղբյուրները Աղվանք են ճանաչում հիմնականում Սրապի ու Կուրի միջագետքը³⁹: Աղվանքի պատմության հիմքում ևս այս ըմբռնումն է ընկած⁴⁰:

Արցախում էին գտնվում ինչպես Վաչագան Բարեպաշտի կառուցած արքայանիստ Գլուտական գյուղը⁴¹, այնպես էլ ամարանոց Աղվանք⁴²:

Պարտալին սկզբնապես կառուցվել էր պարսից մարդպանների համար: Այդ պատճառով էլ Վաչագանն առնչություն չունի այդ քաղաքի ու շրջակայքի հետ: Նրա ամբողջ գործունեությունը ծավալվում է Արցախական աշխարհում, Ուտիքի արևմտյան մասում և Անդրկուրյան հինավուրց հայկական Կամբեճան դավառում:

Ժամանակագիրն ասում է. «...Ըստ թուոց աուրոց տարւոյն եկեղեցիս միայն Բարեպաշտն Վաչական շինեաց յԱրևելս»⁴³: Մի ուրիշ տեղ.

³⁸ Կաղանկատուացի, էջ 55, 57:

³⁹ Խորենացի, էջ 113:

⁴⁰ Կաղանկատուացի, էջ 14:

⁴¹ Նույն տեղում, էջ 150: Ս. Ջալալանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Բ մաս, էջ 348—349: Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 230:

⁴² Ս. Տ. Մեմյան, Հայաստանը ըստ Անշարհացոյց-ի, էջ 34:

⁴³ Կաղանկատուացի, էջ 230:

«Ն. կարգեալ տեղեաց-տեղեաց եպիսկոպոսս և հայեցողս ի Կամբեճս, ի Եղուանս...»⁴⁴,

Նվ, վերջապես, Վաչագանին հպատակ աշխարհը կամ նրա տիրույթը հենց Արցախն էր. «Հրաման տայր (Վաչագանը)... Արցախամուր աշխարհին իւրում ծառայութեանն...»⁴⁵,

Որ Վաչագանի ծառայության տակ հիմնականում միայն Հայոց արևելից կողմանքն էր գտնվում, դա պարզ երևում է նաև նրա կազմակերպած Աղվեհնի ժողովի մասնակիցների ցուցակից: Ծիշոտ է, մասնակիցների մեջ հողերակալներ կային «Աղվանից, Լիմսաց և Զողալ» երեք աշխարհներից, սակայն աշխարհիկ տերեր կային միայն Արցախից («ազատ մարդիկ և նահապետք Արցախայ») ⁴⁶ և Ուտիքից ⁴⁷:

Ասացինք, որ Վաչագանին թագավոր էր ձեռնադրել պարսից Վաղարշ արքան: Պետք է կարծել, որ Վաղարշը նրան լիազորել էր նաև անդրբևեռյան գավառների վերահսկողության իրավունքով, քանի որ ժամանակագրերը վկայում է, թե ինչպես Ալբանիայի նախկին թագավոր Արսավազանի հոճկորիկ անունով որդին Վաչագանի կողմից կուսակալ էր կարգված ձախափնյակի Յբի քաղաքում ⁴⁸: Այս իստոր հիմք է հանդիսանում ենթադրելու, որ համանման կուսակալներ կարգված են եղել նաև ձախափնյակի մյուս քաղաքներում ու գավառներում: Ձախափնյակի վրա վերահսկելու այս լիազորությունը հետագայում էլ իրականացնում էր Գարդմանքում նստած Միհրանյանների ամենահզոր ներկայացուցիչ Զիվանշիրը: Վերջինս տերն էր միայն Գարդմանքի ⁴⁹, բայց վերահսկում էր նաև անդրբևեռյան գավառների վրա ⁵⁰:

Կա պատմիչի մի ընդհանրացնող դիտողությունը, ըստ որի՝ երկրի հայազուններին խառնվել է պարսից Միհրանյաններից մի շառավիղ (Առանշահիկ Սահլի որդի Ասրներսեհն ամուսնացել է Միհրանյան տոհմից մնացած միակ ուղիղ Սպարամի հետ): Այս պատմաստից առաջացած իշխանությունն էլ շարունակել է տեր մնալ Աղվանքում. «Ստուգաբանությունը այսպես ծանեաք,— գրում է Պատմության վերջին խմբագիրը,— ընդ Հայկազնեսայց արանց խնամաւորիլ Միհրակուն տոհմին, և

պատուաւստութեամբս այսուիկ զոյգ ունել զպետութիւնս Արեւելից կողմանցս Աղուանից» ⁵¹:

Ուրեմն, մինչև Միհրանյանների Գարդմանքում երևալը աջափնյակի տերն են եղել միայն հայկազուն Առանի հաջորդները: Նրանք նախարարներ էին մարզպանության ստեղծումից առաջ: Մարզպանության ներքում Առանշահիկ իշխանազուն Վաչագանն ստեղծեց թագավորություն, որը ձեռնդրումով գոյատևեց մինչև Համամ Բարեղաշտի թագավորությունը՝ որան հաջորդած նաչների իշխանությունը և հետագաները:

Յուցակի մյուս անուններից աղբյուրների օգնությամբ կարողացանք պարզել միայն Վաչագան Քաջի, Ուտնայրի և Արսավազանի ինքնությունը: Մյուսք էլ եղել են միասնական բուն Աղվանքի թագավորական տան ներկայացուցիչները:

Ի Բայց և՛ որ է ստեղծվել Աղվանից Արշակունի թագավորությունը: Այս առթիվ կա՞ն հավաստի տեղեկություններ, թե՞ մնում է կառել Կաղանկատավացու անորոշ ու հեղհեղուկ վարկածից և կատարել եզրակացություններ ⁵²:

Հայ մատենագիրներից առաջինն Ազաթանդեղոսն է, որ խոսում է Ալբանիա-Աղվանքում Արշակունի թագավորություն հիմնելու հանդամանքների մասին: Նրա պատմության հունական օրինակում պահպանված մի հատված, որ հին, լիակատար բնագրից է մնացել, այսպես է ներկայացնում Պարթև Արշակունիների ճյուղագրությունը. «Պարթևք՝ իբրև դեպք ի բարի յաջողէին նոցա, զթագաւորութիւն Պարսից, զՀայոց և զՀնդկաց՝ որ սահմանակից են արևելեալ Պարսից, նա և զխստալուծ զազգն Մաղքթաց յինքեանս կորզեալ ժառանգէին, այսպիսի իմն կար-

51 Անդ. էջ 386:

52 Ս. Տ. Երեմյանի կարծիքով՝ 338 թ. հետո «պարսիկների ստորանքով մատուցներ իրենց թագավոր Սանատրուկ Արշակունու պիսավորությամբ ներխուժեցին Մեծ Հայք, տիրեցին Փայտակարան նահանգին և սկիզբ գրին Աղվանից երկրի Արշակունյաց հարստությանը» (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 88):

Այս թյուրիմացության հիմքը Ս. Տ. Երեմյանի պատմաաշխարհագրական այն սխալ կոնցեպցիան է, որի համաձայն՝ Մասքթաց կամ Զողա աշխարհը չի մտել բուն Աղվանքի կազմի մեջ, հետևապես, նրա թագավորության տիրապետությունը հետագայում (338 թ. հետո) է տարածվել Աղվանքի վրա:

Վերջերս այս նույն սխալ վարկածը մի ամբողջ հողվածի տեսքով հրատարակել է Հ. Սիլադյանը (տես Հ. Սիլադյան, Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը. «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1977, № 3, էջ 158—170): Սակայն հայտնի է, որ սխալը կրկնվելով ճշմարտություն չի դառնում:

44 Անդ. էջ 60.
45 Անդ. էջ 57.
46 Անդ. էջ 98.
47 Անդ. էջ 103.
48 Անդ. էջ 66, 67, 85.
49 Անդ. էջ 208.
50 Անդ. էջ 209.

զաւ. երիցագոյնն ի Պարթևաց տոհմէ, որ ապա գԱրշակունի ընկալան անուն, հասակաւ և արութեամբ շքեղ, գէր ի վերոյ քան զայլս երեւալ, նա կալաւ զիշխանութիւն արքայութեանն Պարսից: Եւ որ երկրորդն էր զկնի նորա, զՀայաստանեայց անոյր յինքն զթագաւորութիւն. իսկ որ երրորդն էր՝ զՀնդկացն կալաւ գտերութիւն, զհպատորն սահմանաց Պարսից: Իսկ չորրորդն ի նոցանէ՝ զՄազքթացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորութեանն»⁵³, *Ասքե արմաւէ Տաւրթից / որ*

Այսպիսով, պարզվում է, որ/բուն Աղվանքում Արշակունյաց թագավորություն է հիմնադրվել հայ Արշակունյաց հարստության հետ միաժամանակ և երկու հարստությունների հիմնադիրներն էլ արյունակիցներ են եղել, նույն տոհմի ներկայացուցիչները, նույնիսկ եղբայրները /

Ազաթանգեղոսի հաղորդած տեղեկությունը հաստատվում է հունահռոմեական աշխարհի հեղինակի վկայությամբ, որն այս դեպքերի ժամանակակիցն է (55—120), որը ոչ միայն խոշոր պատմաբան ու աշխարհագետ էր, այլև Հռոմեական կայսրության մեջ զբաղեցնում էր Ասիական շրջանի պրոկոնսուլի պաշտոնը: Գա Տակիտոսն է, որը պատմում է Պարթև Արշակունի Վաղարշի (Վուրգեզ) գործադրած ջանքերը՝ ի նպաստ իր գահակից եղբայրների գլուխներն արքայական թագերով զարդարելուն: Սա միայն եղբայրներին արքաներ դարձած տեսնելու ցանկությունից չէր: Չնայած դա ևս չի կարելի երկրորդական խնդիր համարել, քանի որ ինքն այլևս ազատ կլինեք գահակից եղբայրների հավանություններից: Հզոր Պարթև արքան ուզում էր հարևան տերությունների միասնական-բարեկամական կապերի միջոցով իր հայրենի Պարսկաստանն անխոցելի դարձնել հյուսիսային և արևելյան կողմերից:

Վաղարշ-Վուրգեզն ասում է. «Տրդատը՝ ծնված այն հորից, որից և ինքս, լինելով տարիքով ինձնից փոքր, առաջնությունը զիջեց ինձ, և ես նրան սովի Հայոց թագավորությունը, որը մեր տոհմի մեջ համարվում է տիրակալության երրորդ ստափնանք, քանի որ մարաստանցիներին դրանից առաջ իր ձեռքի տակ էր առել Պակորը» (Բակուր)⁵⁴:

Տակիտոսը հին քմբոնումով է խոսում Բակուրի երկրի մասին: Այս ժամանակ Պարսկաստանի հյուսիսային մասն այլևս Մարաստան չէր, այլ կոչվում էր Ատրպատական (մ. թ. ա. IV դարում պարսից կողմից այնտեղ կուսակալ կարգված Ատրոպատի անունից): Ազաթանգեղոսն էլ Տակիտոսի «մարերին» «Տնդիկներ» է կոչում: Սակայն սա քննվող հարցի

համար երկրորդական նշանակություն ունի: Ազաթանգեղոսի կարծիքով Վաղարշի երրորդ կամ կրտսերագույն եղբայրը թագավոր է Մասքթաց աշխարհում, որն Ալբանիա երկրի հյուսիսարևելյան մասն էր, ժովամերձ շրջանները՝ Չոզից սկսած: Սա էր, որ, այբանական ցեղերի միությունն ստնելով իր տիրապետության տակ, հիմնադրեց Մասքթաց կամ ալբանական Արշակունի թագավորությունը:

Թագավորացանկում Վաչագան Քաչը համարվում է Արշակունի և ընդմիջումից հետո հաջորդում է Առանին. «Եւ թիւ ատուրցն յԱռանայ մինչև ցՔաչն Վաչական, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց՝ չէ յայտ»⁵⁵: Հեղինակն ուզում է ասել՝ Վաչագան Քաչն առաջին Արշակունին է իր ցանկի մեջ: Եթե այսպես է, ուրեմն՝ սա պետք է լինեք Պարսից թագավոր Վաղարշ Ա-ի և հայ Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատի (թագավորեց 66 թվականից) կրտսեր եղբայրը, որ «զՄասքթացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորութեան» (Ազաթանգեղոս): Այս պարագային իրավացի է Աղվանքի պատմիչը, երբ համոզված է, որ Առանից (II դ. մ. թ. ա.) մինչև Քաչ Վաչագանն ընկած ժամանակաշրջանում ուրիշներն էլ են եղել: Սակայն իրավացի չէ, երբ Մասքթաց (ալբանական) թագավորին ու Մեծ Հայքի արևելյան նահանգների կուսակալ Առանին դնում է միևնույն շարքի մեջ:

Ար Ալբանիայի (Մասքթաց) միասնական թուղավորության ներկայացուցիչներն իսկապես եղել են Արշակունի ու ցեղակից հայ Արշակունիներին, դա հաստատվում է նաև Փավստոսի հանգամանայից տեղեկություններով: Մ. թ. IV դ. առաջին կեսին Մասքթաց թագավոր Սանեսանն իր տիրապետության տակ ուներ անդրկուրյան երկրի (Ալբանիայի) բոլոր ցեղերին, և երբ Հայոց դեմ մղած ճակատամարտում ընկավ Հայոց թագավոր Խոսրովը հանձին նրա՝ ճանաչեց իր ազգակցին՝ Պարթև Արշակունի հինավուրց տոհմի ներկայացուցիչն⁵⁶:

Ահա Բուղանդի Պատմության այդ հատվածը. «Յայնմ ժամանակի թագաւորն Մասքթաց Սանեսան անհնարին նիթեաց զսլոմտութիւն

55 Կաղանկատուացի, էջ 51:

56 Վ. Յ. Միքսուկին, Փավստոսի ու Խորենացու՝ Սանեսան-Սանատրուկին վերաբերող նամակներից ենթադրել է, թե «հայ Արշակունի Սանեսանն իր համար ձեռք գրեց թագավորություն կուրից հյուսիս, Կասպից ծովի մոտ (այն շրջանում, որ հետո կոչվել է Մարսում) և հակադրեց իր եղբորը (կամ ազգականին)՝ Հայաստանի թագավոր Խոսրովին (316—325)»։ տե՛ս նրա «История Ширвана и Дербенда», стр. 37.

Ինչպես վերը տեսանք, Սանեսանը Հայաստանի հետ կապ չունի, իսկ Խոսրովը՝ թագավորն էլ գահակալել է ոչ թե 316—325 թթ., այլ 330—338 թթ.:

53 Գ. Չարդեանյան, Պատմութիւն հայ հին պարութեան, Վենետիկ, 1932, էջ 212:

54 К. Тацит, Сочинения, т. I, Л., 1969, с. 218 (кн. 15, § 2).

որոշված ընդ. իրում ազգակցին նորոգում արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց, և Փոխաց, և Քաւասպարաց, Հնճմատակաց, Իժմախաց, Գաթաց և Գղուարաց, Գուգարաց (Կարդալ) Գարգարաց— Բ. Ա.), Շչբաց և Ճղբաց և Բաղասճաց և Եգերսուանացն և այլոց խառնազանճ բազմութեամբ անթիւ անընակ վաչկատուն զօրութեանց, որում միանգամայն ինքն իշխէր զօրացն բազմաց: Եկն անց բատ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ զերկիրն Հայոց աշխարհին»⁵⁷:

Սույն պատմութիւնը մտել է նաև Խորենացու դրքի մեջ՝ փոքր ինչ այլ խմբագրութեամբ: Մինչև վերջ հստակ է Բուզանդի պատումը, որովհետև նրա հաղորդած մանրամասներն ստուգելի են ու ճշգրտում են վերոհիշյալ աղբյուրներով: Բուզանդը ցույց է տալիս Սանեասնի դորանիստը, որը նաև նրա աթոռանիստն է եղել, և զա համապատասխանում է երկրի մայրաքաղաք Չոզին: Այս՝ Գրիգորիսի նահատակութեան վայր՝ Վատնյա գաղտը, որը Չոզի մոտ էր, նրանից հարավ: Թվարկում է Սանեսանի հայտնակ ցեղերը, և դրանք բոլորն էլ ալբանական միութեան բաղկացուցիչներն էին: Յույց է տալիս Սանեսանի երկրի հարավային սահմանը, որ Կուր գետն է: Եվ երբ այսբանից առաջ ասել էր⁵⁸ ու այսբանից հետո էլ կրկնում է, թե Սանեսանը Մասքթաց Արշակունի թագավորներից է⁵⁹, մեզ այլևս ոչինչ չի մնում, քան հավատալ, որ խոսքն ի դարում պարթևներից սերված այն տոհմի մասին է, որը եկավ Ալբանիա, դարձավ նրա տարալեզու ցեղերի գլխավորը և իր տիրապետութիւնը պահեց մինչև մարզպանական շրջանը:

Ալբանական (Մասքթաց) մյուս Արշակունի թագավորը, որի մասին հայկական աղբյուրները (Կսրյուն, Խորենացի, ապա Կաղանկատուացի և այլք) պահպանել են որոշակի վկայութիւններ, ինչպես տեսանք, Արսավաղենն է, որով և սպառում է Մասքթաց Արշակունիների թագավորութիւնը:

Ամփոփելով Աղվանից աշխարհի պատմութեան մեջ տեղ դրած թագավորացանկի բնութիւնը, եզրակացնենք, որ այս ցանկի մեջ միևնույն շարքում թվարկված թագավորներն ու իշխաններն իրականում բախտովին էլ միևնույն երկրի տերերը չեն եղել: Այստեղից.

ա) «Աղվանից աշխարհի պատմութեան» մեջ ներկայացվող իշխողների Առանը, Վաշագան Բարեպաշտը և վերջինիս հաջորդած Առանշահիկ-

ներն ու Միհրանյանները Հայոց արևելից կողմանց տերերն են եղել և վարչաքաղաքական առնչութիւն չեն ունեցել անդրկուրյան կամ բուն Աղվանքի հետ:

բ) Վաշագան Քաջը, Սանեսանը, Ուոնայրը և Եսվաղենը թագավորել են անդրկուրյան Աղվանքում (Ալբանիա):

գ) Վաչե Ա-ի, Վաշագան Բ-ի, Մրհավանի, Մատոյի ու Ասայի մասին սյինչ ասել հնարավոր չէ, քանի որ նրանց վերաբերող հավաստի ոչ մի ուղեկութիւն հայտնի չէ: Պարզ է միայն մի բան՝ նրանք Աղվանից աշխարհի պատմութեան նկարագրած միջավայրի (Հայոց արևելից կողմանց) տերերը չէին կարող լինել, որովհետև թագավորներ են հայտարարված այնպիսի ժամանակների համար, երբ այս միջավայրում տեր են եղել Առանշահիկ իշխանները:

Արդ. ե՞րբ և ի՞նչ նպատակով է կազմվել քննութեան առնված ցանկը:

Նրիկ. Ազոնցը գտնում էր, որ Աղվանից աշխարհի համահավաք պատմութիւն ստեղծելու շարժառիթ են հանդիսացել X դ. հայոց կյանքում ծայր առած կենտրոնախույս տրամադրութիւնները: «Մովսես Կաղանկատուացին կազմել է իր Պատմութիւնը գրեթե նույն ժամանակ, ինչ Նովանենս կաթողիկոս և Թովմա Արծրունի՝ Ժ դ. առաջին կեսին, այսպես ասած՝ հատվածական կամ տեղական հայրենասիրութեան շրջանին: Նովանենս կաթողիկոսը գրել է Բագրատունիների պատմութիւնը, Թովման՝ Արծրունիների, Կաղանկատուացին նրանց հետեւելով՝ Աղվանից կամ Արցախի իշխանների: Մերձավոր առիթն է, հավանորեն, Աղվանից իշխանի՝ Սահակ Սեադա զորավոր իշխանի՝ իր որդի Գրիգորի հետ ճակատելը Սմբատի և Աշոտ Երկաթի դեմ և կարողանալը պաշտպանել իր տնկախութիւնը, և Գրիգորի որդուն՝ Սեադա Բ իշխանիկին արքայական թագ կապելը...»⁶⁰:

Ականավոր գիտնականն իրավացի է: Դրա ապացույցն է նաև այն խառնուրդ բազմականութիւնը, որով հեղինակը Սահակ Սեադայի անչտոտղական գործունեութիւնն է նկարագրում կամ նրա թոռ Նովանենս-Աենքերիմի թագադրութեան փաստը: Գառնուրանցին (Կաղանկատուացի) իսկապես կազմել է (ոչ թե գրել) այս պատմութիւնը՝ ի մի խմբելով V—X դարերում հյուսված ժամանակագրութիւններն ու բազմահարուստ նյութերը: Թագավորացանկը նրա համար մի երջանիկ գլուտ է, եղել՝ ցույց տալու իր երկրի իշխանական տոհմի փառավորակունքները:

⁵⁷ Բուզանդ, էջ 24:

⁵⁸ Բուզանդ, գլուխ. երրորդ, գլ. 2:

⁵⁹ Նույն տեղում, գլ. 1:

⁶⁰ Ն. Ազոնց, Խորենացիական հարցն ու Տ. Վարդան Հացունի (տե՛ս «Անահիտ», 1948, N 1—3, էջ 86—87):

Յանկի վրա կարելի է տեսնել այն կազմելու ժամանակի դրոշմը: Յանկը նախորդում է Վաշագան Բարեպաշտին վերաբերող պատումին: Պատումի հեղինակը ցանկի անունները թվարկելուց հետո հիշատակում է նաև Վաշագանին և նրան բնութագրում այսպես. «Մակայն ոչ ումեք ի նոցանէ (թվարկվածներից— Յ. Ա.) այսպիսի աստուածային և հոգևոր ծածկեալ գանձ յայտնեալ ընձեռեցաւ՝ որպէս վերջինս Վաշականայ Բարեպաշտ Աղուանից արքայի»⁶¹:

Այստեղից երևում է, որ ցանկը կազմվել է Վաշագանի ժամանակագրի ձևով: Առանշահիկ թագավորության հիմնադրի մասին պատմողը, այդ թագավորության հետ կապելով իր հայրենիքի ազատության ու ծաղկումի հույսերը, միաժամանակ փորձում է դարդարել նրա տոհմաբանությունը՝ ակունքի մտա դնելով Արշակունիներին, նույնիսկ Սասանյաններին⁶²: X դարում երկի վերջնական խմբագրողի տրամադրությունը շատ համահունչ է եղել այս ցանկն իր սնիրական ու իրական հիմքերով:

Դասխուրանցու տեսած Աղվանքն Արցախն էր՝ հարևան Ուտիքի մի շարք գավառներով հանդերձ: Այստեղ էր գտնվում նաև հոգևոր կենտրոնը. Արցախի Մեծառանք դավառի Թերզակուր ավանն էր կաթողիկոսանիստը: Դասխուրանցին մի արտակարգ ծագումնաբանություն է հորինում նաև այս կաթողիկոսության համար: Նա 552 թ. Պարտավում հիմնադրված կաթողիկոսության սկիզբը տանում է մ. թ. առաջին դարը, և պնդում, թե, իբր, այն ժամանակ Չոզում հիմնադրված կաթողիկոսությունից պիտի հաշվել հոգևոր նվիրապետությունը: Եվ, սրբան էլ տարորինակ, նա այս կաթողիկոսության հիմնադիր համարում է մեկ՝ Եղիշե առաքյալին, մեկ էլ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսին, որը, ինչքան հայտնի է հենց պատմիչի վկայակոչած աղբյուրներից, հիմնել է միայն եպիսկոպոսություն, ապա՝ նրա աթոռը գտնվում էր ոչ թե Չոզում, այլ Արցախի Հաբանդ գավառի Ամարաս ավանում, որտեղ և այն մնաց մինչև 552 թ.: Պարտավում կաթողիկոսություն ստեղծելը⁶³:

61 Կաղանկատուայի. էջ 51:

62 Անգ. էջ 57:

63 Աղվանքի քրիստոնեացման և Աղվանից կաթողիկոսության սկզբնավորման հանգամանալից քննությունը տե՛ս Յ. Ա. Ուրտաբյան, Հայոց եկեղեցու Աղվանից թևի սկզբնավորման նարրը (սելմիածինս, 1976, Գ, էջ 57—61, և, էջ 38—44), նույնի՝ Աղվանից կաթողիկոսության ստեղծման հանգամանքների նարրի շուրջը («Հայկազյան հայագիտական հանդես», հատ. է, Պեյրուֆ, 1972, էջ 35—56):

Ահա այս է պատմական իրականությունը: Մինչդեռ պատմիչին անհրաժեշտ է եղել իր երկրամասը բարձրացնել, ցույց տալ նրա առանձնահատուկ ու արտասովոր արժանիքները:

Այս ամենի հետ միասին, հնարավոր է նաև, որ Դասխուրանցուն իր պատմության մեջ այդպիսի ցուցակ մտածելու է մղել Աղվանքի եկեղեցու վիճակը: Եվ այս բոլորից դրված՝ Աղվանից աշխարհի պատմության շարահարողը ղեկավարվել է «Աղվանք» անվան հետ կապված հին ու նոր բոլոր փաստերն ու տեղեկությունները մի տեղ ժողովելու սկզբունքով: Մասամբ թյուրիմացությամբ, մասամբ (թերևս՝ ավելի շատ) պարզապես իր հայրենիքի պատմությունը շքեղ հյուսելու դիտավորությամբ, նա հավաքել ու միևնույն «Աղվանք» անվան տակ է դրել այն բոլոր տեղեկությունները, որոնք հինավուրց աղբյուրներում կային ու վերաբերում են միայն անդրիտրյան Աղվանքին, և ավելի ուշ շրջանի տեղեկություններ, որոնց մեջ «Աղվանք» նշանակում էր բացառապես Կուրի աջափնյակը: Հետևանքն այն է եղել, որ մի շարքի մեջ են մտել ձախափնյակի հին տղվանական կամ Մասքութ-Արշակունի թագավորները և աջափնյակի Առանշահիկ իշխանական-թագավորական տան ներկայացուցիչները:

Նր. Աճառյանը ճիշտ նկատել է, որ «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը քննական կարողությունից ղուրկ մարդ է եղել և իր իսկ հավաքած շատ արժեքավոր նյութերից զուլս շահնելով՝ արտագրածները՝ լածններն ու սեփական մուծումներն իրար է հյուսել՝ առանց ներքին տրամաբանության, որի պատճառով էլ ղեպքերն ու դեմքերը դարձել են «անկարգ, պակաս, խառնակ և ուսումնհերով»⁶⁴, Եվ, իսկապես, կարողանալով նույնիսկ իր հավաքած նյութերի մեջ Արշակունիների ու Առանշահիկների ազգային պատկանելության մասին եղած կոնկրետ վկայություններն արժեքավորել, Կաղանկատուացին երկուսի համար էլ հորինում է մի նոր ծագումնաբանություն՝ պարթև Արշակունի ակունքով, որը, եթե Մասքութ Արշակունի թագավորների համար իբրև ճշմարիտ է, ապա անհեթեթ է՝ ի սկզբանե հայկազուն Առանշահիկ տոհմի վերաբերությամբ:

Այստեղ էլ նա պատմական ճշմարտությունը դարձյալ զոհարելի է տեղային հայրենասիրական իր տրամադրությանը՝ որքան կարելի է հայտնի ու մեծ տոհմի հետ կապելու իր հայրենիքի վրա իշխող տոհմի ծագումնաբանությունը: Իսկ հայոց մեջ Արշակունի տոհմանունը պետև գտնվում էր հին փառքի լուսապսակի մեջ: Գծվար չէ նկատել, որ

64 Նր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 437:

սա միաժամանակ նեղ հայրենասեր պատմիչի խուլ մարտահրավերն էր իր ժամանակի քաղաքական ասպարեզում իրոխտորեն բարձրացող Բաղրատունիների տան համահայկական նկրտումներին:

Առանշահիկ թագավորական հարստությունից միայն երկուսին էր վիճակված լինելու մատենագիրների ուշագրություն կենտրոնում, վարդարվելու հայրենասիրության ու սրբակրոն առաքինության լուսապսակով: Գրանք էին Վաչե թագավորը և Վաչագան Բարեպաշտը:

Ք Վաչե՝ թագավոր Հայոց արևելից կողմանց.—Սա առաջին Առանշահիկն է, որին մատենագիրը թագավոր է կոչում: Վաչեի մասին, իրեն հատուկ շեղումով և ու համակրանքով, գրել է Եղիշեն: «Վարդանանց պատմության» մեջ այս հերոսն անուն չունի, միայն Աղվանից թագավոր է, որ, հավատարիմ հայոց սրբազան ուխտին, ապստամբում է Պարսից բռնապետության դեմ, ջարդում նրանց բանակները, վերստին դառնում իր նախնիների քրիստոնեական կրոնին: Այս հրամարվելով զահից՝ ավետարան է վերցնում, միայնակյացների հետ մի կողմ քաշվում, գբաղվում աստվածառաք աղոթքներով. «Եւ այնպէս հանապազորդեաց զինքն յաստուածային պաշտամանն, զի և շիշէր ամենեին, թէ և թագաւոր լեալ իցէ յառաջ»⁶⁵:

Կաղանկատվացին Եղիշեի գրած այս պատմությունը հագեցրել է լրացուցիչ մանրամասներով և դարձրել իր գրքի գլուխներից մեկը⁶⁶, Որո՞նք են այդ մանրամասները և որքանո՞վ են նրանք արժանահավատ: Նա Աղվանքի թագավորին անուն է տվել, որ է Վաչե, ապա այս գլխից առաջ և հետո հաղորդել է տեղեկություններ, որոնք միայն ինքը զիտե, իսկ թե որտեղից՝ այդ թիշ հետո կպարզվի:

Մենք Կաղանկատվացուց ենք իմանում, որ այս հերոսն Աղվանքի տեր Առանշահիկ հայկական տոհմի ներկայացուցիչն է, Պարտավ մայրաքաղաքի կառուցողը, հայոց կաթողիկոս Գլուխի գրած երկու նշանավոր թղթերի հասցեատեր «սուրբն Վաչե»-ն:

Վաչեի մայրը պարսկուհի էր, մոգական կրոնի հետևորդ: Հայկերտի բռնությունների վարդանանց հետ կեղծ ուրացություն էր զնացել նաև Վաչեն: Նա արգեն մոգ էր, հավանաբար, իրականում: Գրությունը բարդացել էր նրանով, որ նա ամուսնացած էր Հայկերտի քրոջ աղջկա հետ, այս Աղվանք էին լցվել կառուցողների հորդանները, և փաստորեն սրանք էին տնօրինում երկրամասի հոգևորական գործերը:

Սակայն 457 թ. մեռնում է Հայկերտը: Պարսկաստանում խոտվություն է բնկնում: Հանգամանքից օգտվելով՝ Վաչեն իրենից թոթափում է մոգությունը, դառնում իր նախնյաց քրիստոնեական-լուսավորչական կրոնին: Ապա պարսիկներին ջշում է իր երկրից, հարմար համարելով մեռնել սպտերաշմով, քան ուրացությունը ապրել որպես թագավոր:

Շուտով Պարսկաստանում կարգավորվեցին գործերը, և գահ բարձրացավ Հայկերտի որդի Պերոզը (458/9): Սա Վաչեին հպատակեցնելու համար մեծ զորք ուղարկեց Աղվանք: Վաչեն անցավ անդրկուրյան Աղվանք, դաշն կնքեց ալթանական ցեղերի հետ և նրանց ուժերով պարբերաբար հարձակվում էր պարսից զորակայանների վրա, այս ու այնտեղ կոտորում իր հայրենիքը խուժած բռնակալներին:

Պերոզն ստիպված էր նամակներով խաղաղություն առաջարկել Վաչեին: Ենդրեց դադարեցնել արյունահեղությունը: Սակայն սպասամբ թագավորն անգրգվելի էր: Նա արքայից արքայի առաջարկներին պատասխանում էր հանդիմանությամբ՝ այն բոլոր շարագործությունների համար, որ պարսիկներն էին արել Հայոց դեմ: Նա «գրով և պատգամալանդիմանէր զնա վասն ի զուր աւերելոյն զաշխարհն Հայոց, յիշեցուցանէր և դմահ նախարարացն և զլարչարանս կապելոցն, որոց փոխանակ զկեանս տալոյ տիրոյն և վաստակոցն՝ պարեան հատիք. լաւ լիցի ինձ շարչարանօք մեռանել, քան ուրացութեամբ կեալ»⁶⁷:

Պերոզը հիմա էլ մեծ կաշառքով Աղվանքի վրա է ուղղում հյուսիսական խալսանդուրների և հոների խաժամուժը: Մի ամբողջ տարի տևում է օրհասական պատերազմը: Զարգվում են պարսից զորքերը: Սպառվում են Վաչեի ու նրա դաշնակիցների ուժերը: Սակայն Վաչեն ետ չի կանգնում պարսիկների դեմ մինչև կյանքի վերջ մարտնչելու վճռից:

Պերոզն արգեն անկարող էր զսպել նրան: Եվ հիմա էլ գրում է, թե՛ «աշխարհդ բեղ լինի, Պարսկաստան վերադարձրու քրոջս և իմ քեռորդուն (քրոջս աղջկան), որոնք առաջ մոգ են եղել, և դու քրիստոնյա ես դարձրել»: Վաչեն կատարում է Պերոզի այս ցանկությունը, իսկ այնուհետև աշխարհիկ կյանքը լքելով՝ ավետարանն առնում, գնում է միայն բարոզելու: Եվ հետո իրեն այնպես էր պահում, ասես չէր էլ հիշում, թե երբևէ թագավոր է եղել:

Սարգիս Զալայանցը հին մեղիքանիստ Ավետարանոց ավանում լսել է մի ավանդություն, ըստ որի՝ Վաչե թագավորը ճղնել է հենց այստեղ. «Ղևևետարանն Քրիստոսի ընկալեալ ի գիրկս իր՝ եկն աստանօր առանձնացեալ ի խստակրօն վարս ճգնութեան. ուստի և անուն տեղույս

⁶⁵ Եղիշե, էջ 199:

⁶⁶ Կաղանկատվացի, հատ. Ա, գլ. Ժ,

⁶⁷ Կաղանկատվացի, էջ 23:

կոչեցաւ Աւետարանոց, զուցէ և աստ ընկալաւ բարեպաշտ արքայն զթուղթ օրհնութեան ի Գիւտ երանելի կաթողիկոսէ Հայոց...»⁶⁸:

Խոսքը վերաբերում է հայոց Գյուտ կաթողիկոսի երկու հայտնի նամակներին՝ ուղղված Վաչե Բ-ին, որոնք պահպանվել են Կաղանկատվացու պատմության մեջ, սակայն, անկախ այդ պատմությունից, կան նաև հնագույն ձեռագրերում⁶⁹:

Հավանաբար Կաղանկատվացին Եղիշեի տեղեկությունների փակ կետերը բաց է արել Գյուտ կաթողիկոսի հղած թղթերի մանրամասներով, որոնք հավաստի են թեկուզ այն պատճառով, որ ժամանակակից գրածն են և սրա պաշտոնական վավերագրերի բուն էությունն են կազմում:

Գյուտ Ա. Արահեղացին հոգևոր առաջնորդի իր հարգելից խոսքն է հղում ժամանակի հերոսին ու հայրենասերին, ցույց տալով նրա սրբաբանքի անգնահատելի նշանակությունը Արևելից աշխարհի ու նրա ժողովրդի համար: Ապա խորհուրդ է տալիս շքնկծվել, շերկնել, շուտահատվել և միշտ զգոն լինել. «Հաստատուն կաց ի յոյսն, անհատ լեր ի սիրոյն և համբերող լեր ի հաւատս ճշմարտութեան, զի մի վիշապն մեռեալ զտոտն շարժեսցէ ի վերայ կենացդ քոց»⁷⁰:

Երկու նամակն էլ աչքի են ընկնում արամաբանության ուժեղ լիցքով, կուռ լեզվով ու գեղարվեստական մի այնպիսի մակարդակով, որ կարող են պատիվ բերել ամեն մի անվանի մատենագրի: Ուղում ենք մի հատվածով ցույց տալ, թե գեղարվեստական ինչ որակ ունի Գյուտի խոսքը. «...դհամատարած ծովն շարժեցին և յուզեցին գրավութիւն այնաց նորա: Սկսաւ մրմուռ, ելանել, տարածանել և ապականել զղաշտս և

68 Ա. Ջալալեանց, Հանապարտորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 248: Ուրիշ ոչ մի տեղեկություն չկան Վաչեի կյանքի վերջին շրջանի մասին: Այդ պատճառով էլ անհասկանալի է Ս. Ս. Երևմտյանի այսպիսի հայտարարությունը. «Վաչե Բ-ն... թողի է Աղվանքի սահմանները և վերադարձել իր նախնիների հողը՝ Չողի Եղիշեն այս երկվույթը նշում է 462 թվականով» («Очерки истории СССР III—IX вв.», с. 313—314):

Իսկ, Եղիշեն չի ասում, թե Վաչեն գահը թողեց 462 թ., այլ պատմում է Աղվանքի ու Պարսից աշխարհի ներքոն տեղի ունեցած խռովությունները, ապա թձ. «Են այս ամենայն յերկար խռովութիւնը, որ եղեն մինչև ի ՚ինչերորդ ամն Պերողի արքայից արքայի...»: Պերողը դահակայն է 459—484 թթ.:

Ապա, Եղիշեն ո՛չ նախնիների հողի անուն է տալիս, ո՛չ էլ նստկապես Չողի Եղիշեն է կարող տալ, որովհետև Վաչեի նախնիները Հայոց Աղվանքի տեղ Առանշահիկներն են եղել: Իսկ այդ Առանշահիկները, ինչպես արդեն տեսանք, Չողի հետ կապ չունենին:

69 Կաղանկատուացի, էջ 25—36: Մասնակի կրճատումներով՝ Մատենագրանի ձեռ. Ձ Ձ 2966, 3062, Տե՛ս նաև՝ «Յոճակ ձեռագրաց», Ա, էջ 912, 931:

70 Կաղանկատուացի, էջ 34:

ղերինս: Եկն եհաս ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց, ահաւոր գազանօք, խառնագրողն նշանօք, բազմաձայն փոռովք, գալարափող կոշմամբ, անտառախիտ նիզակօք, ճառագայթաւոր սուսերօք, ոսկեկմբեայ վահանօք, թանձր և ստուար մկնդակօք. հողեղէնքն զհողեղէնսդ երկեցուցանէին, ապականացուքն զանապականսդ կամէին կորուսանել, և անասուածքն զաստուածային շառավիղդ կամէին յարմատոյ կտրել...»⁷¹:

Ի՛նչ արժեն հենց միայն այս մակդիրները՝ «անտառախիտ նիզակօք», «ճառագայթաւոր սուսերօք»: Կամ՝ «Հողեղէնքն զհողեղէնսդ երկեցուցանէին»:

Գյուտ եպիսկոպոսի (հետազոտողների կողմից կաթողիկոս կոչված) թղթերը կողմնակի կերպով մեզ հնարավորություն են տալիս պարզելու Վաչեի՝ գահից հրաժարվելու և մի շարք ուրիշ տարեթվերը:

Մեր պատմագիտության մեջ տարբեր թվեր են ընդունվել որպես Վաչեի՝ գահից հրաժարվելու տարի: Մ. Բարխուտարյանցն այդպիսին համարում է 457 թվականը⁷², Ս. Ս. Երևմտյանը, ինչպես վերը տեսանք, 462-ը:

Կաղանկատվացին Վաչե Բ-ին է համարում Պարտավի կառուցողը, երևի հիմնադիրը. «Ի հրամանէ Պերողի, Պարսից արքայի՝ շինեցաւ ի Վաչէ Պերողապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ»⁷³: Իսկ Պերողը գահ է բարձրացել 459-ին: Եթե քաղաքի հիմնադրումը հենց այդ տարին սկսած լինի և այն էլ «ի Վաչէէ» (որ նշանակում է՝ նա դեռ թագավոր է եղել), պարզ է, որ մեշտեղից պիտի վերանա Բարխուտարյանցի հաշիվը:

Եղիշեն վկայում է, որ Վաչեի խռովությունները տևել են մինչև Պերողի գահակալության 5-րդ տարին, այսինքն 464 թվականը: Պարզ է, որ Վաչեն թագավոր էր անվազը մինչև այս տարին, որովհետև նա դահը թողեց խռովությունը դադարեցնելուց հետո:

Գյուտ կաթողիկոսի թղթերով մի փոքր խառնվում է հաշիվը: Հայտնի է, որ Գյուտ Ա. Արահեղացին կաթողիկոս է դարձել 461-ին⁷⁴: Իսկ

71 Անդ, էջ 28—29:

Աս. Մնացականյանն այս նամակներից ստանձին հատվածներ մեջ է բերել ըստ արտագրության, և ընթերցողի վրա նրանք թողնում են իսկական բանաստեղծական խոսքի տպավորություն (տե՛ս նրա «Աղվանից աշխարհի գրակ. հարցերի շուրջը», էջ 116—117):

72 Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հատ. Ա, էջ 80:

73 Կաղանկատուացի, էջ 52:

74 Մ. Օրմանեան, Աղգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 417:

երկու թղթերն ստորագրված են եպիսկոպոս Գյուտի կողմից: Կաղանկատվացին այսպես է հիշում նրա տիտղոսը. «Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչե լի երկնատը շնորհօք»⁷⁵:

Մ. Օրմանյանն ուզում է հավատալ, որ շնայած այդ պարագային, Գյուտն այս թղթերը գրած պետք է լինի կաթողիկոս եղած ժամանակ. «Վաչեի թե մակագիրին և թե գրության մեջ Գյուտ պարզապես իբր եպիսկոպոս հիշված է, սակայն կաթողիկոսության ատեն գրված լինելը ոճեն ալ կըհայտնվի»⁷⁶:

Իսկապես Գյուտի թղթերի բովանդակությունը մեզ հուշում է, որ դրանք գրվել են Հայաստանի և նրան ենթակա Աղվանքի եկեղեցու վահագուն տիրոջ անունից, հոգևոր հայրապետի, հոր ու տիրակալի խորհրդատու տոնով: խնամակալի մեծահոգությամբ: Եվ եթե թյուրիմացություն կա առաջին թղթի վերնագրի մեջ («Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի...»), ապա սրա մեղքը պետք է փնտրել X դարի շարահարողի մեջ, որը նման աղավաղումներ շատ ունի:

Համենայն դեպս, եթե ընդունում ենք, որ Վաչեն է հիմնադրել Պարտավը և այն էլ Պերոզի հանձնարարությամբ, նշանակում է՝ պետք է ընդունենք նաև, որ դա կատարվել է 459-ից հետո: Եվ եթե ընդունում ենք, որ Գյուտն իր թղթերը գրել է, երբ արդեն կաթողիկոս էր նստած, ուրեմն՝ դա էլ կատարվել է 461-ից հետո:

Իսկ եթե նկատի առնենք նաև Նդիշեի վկայությունը Պերոզի գահակալության Ծ տարվա մասին, ապա՝ 464-ին, և ո՛չ մի դեպքում սրանից առաջ:

* * *

Վարդանանց ապստամբությունն ու Ավարայրի ճակատամարտը, ապա Վաչեի խիզախ ընդվզումը պարսիկների դեմ, սրանից հետո էլ նոր խոտովություններն անդրկովկասյան հպատակ մարդերում և, վերջապես, դրանցից ամենամեծ պոռթկումը, որ սկսվեց 481 թ. սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ՝ Պարսից արքունիքին ստիպեցին փոխել իր քաղաքականությունը հպատակեցված երկրների նկատմամբ. Պարսիկներն ուրիշ կերպ էլ չէին կարող, քանի որ այդ ընդվզումներին գումարվել էին իրենց երկրի ներսում բորբոքված խոտովությունները: Ինչպես Փարպեցին է վկայում, 484 թ. դահ բարձրացած Վաղարշ ար-

քայից արքան հայ նախարարների պատգամավորության պահանջները բավարարում է, ասելով. «...ամենայն զոր ինչ խորհեալ է ձեր և իմացեալ, և խոսեցաւ առաջի մեր ձեր Վահանն՝ տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով զամենայն խնդիրդ ձեր այսօր մինչև ցլախտեան»⁷⁷:

Վաղարշի գահակալության առաջին տարիներից էլ պարսկահպատակ Հայաստանում և Անդրկովկասյան մյուս երկրներում աշխուժանում են ներքին ուժերը: Հավաստի տեղեկություններ չկան այն մասին, թե ինչ էր կատարվում Աղվանք մարզի անդրկուրյան մասում: Իսկ հարավում հայ Առանշահիկները վերստին բարձրանում են, փորձելով վերականգնել նախնիների ավանդական իրավունքները:

✓ Վաչագան Բարեպաշտի թագավորությունը.— Շուրջ երեսուն տարվա անիշխանությունից հետո Հայոց արևելից աշխարհում թագավոր է դառնում Վաչեի Հազկերտ եղբոր որդի Վաչագանը:

Մատենագիրը սրան հենց այն գլխից ներկայացնում է ամենավեճաբարեմասնություններով. «քաջարութեամբ իմաստուն և վարժ խոհակա-նութեամբ, բարձր և վայելուչ հասակա»⁷⁸:

Սա էլ այն մեծատուններից էր, որոնք բռնակալների կողմից մոզու-թյան էին դարձվել, սակայն գաղտնի պահում էին իրենց հարազատ հավատը. «Ընդ նոսին և Վաչական առ բոսն սաստիկ շարութեան թագաւորին ակամայ հաւանէր մոզութեանն, այլ դադտ յաղօթս և ի պահս և ի Քրիստոսի խոստովանութիւնն կանխէր հանապաղ»⁷⁹:

Գահ բարձրանալով՝ Վաչագանը հրաժարվում է պարսից հավատից, վերստին ընդունում իր պապերի լուսավորչական կրոնը և դառնում նրա պաշտպանն ու եռանդուն տարածողը, իր երկրի աննախադեպ լուսավորիչն ու շինարարը: Եվ այս մեծ ծառայությունների ու բարձր արժանիքների համար էլ ժողովուրդը նրան կոչում է Բարեպաշտ, Վաչագան Բարեպաշտ:

Ծիշտ են ասել, թե ժամանակը ծնում է իր հերոսին:

Վաչագանը գահ բարձրացավ իր երկրի բաղամայա անիշխանությունից ու ավեր-ավարից հետո: Արևելից կողմանց հայությունն ավելի քան դար ու կես առաջ քրիստոնեություն էր ընդունել մայր Հայրենիքի հետ, իր լեռներն ու խորածորները, դաշտերն ու անտառները կնքել հայաշունչ եկեղեցիներով ու վանքերով: Սակայն պարսից տիրապետության

77 Փարպեցի, էջ 174:

78 Կաղանկատուացի, էջ 57:

79 Անդ, էջ 53:

75 Կաղանկատուացի, էջ 25:

76 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 120:

մեկ դարու մղձավանջը երկիրը 19րդ էր կուսպաշտների սանձարձակ ասի-
միլյատորներով: Գլուխ էին բարձրացրել նաև հին հեթանոսական դա-
վանությունների տարատեսակները: Երկիրը գտնվում էր ճակատագրական
ճամփաբաժանի առաջ և կարիք ուներ հզոր մի առաջնորդի, որը պիտի
կարողանար ընտրել ճիշտ ճանապարհը, աննահանջ քայլել առջևում ու իր
ետևից տանել ժողովրդի զանգվածները:

Շուրջ մեկ դար առաջ Հայոց արևելից կողմանց հայություն
ձեռքն էր տրվել նրա ազգային ինքնապաշտպանության հզորագույն
զենքը՝ մեսրոպատառ գիրը: Բացվել էին առաջին դպրոցները, սկիզբ էր
դրվել լուսավորական-կրթական մի հզոր գործի: Սակայն ապստամբու-
թյուններն ու օտարների ասպատակությունները, դարձյալ պարսից ասի-
միլյատորական խորշակները կանգնեցրել էին նրա առաջընթացը և կա-
րող էին հա տալ ու տանել ուրիշ ուղղությամբ...

Իշխանների ու դավառապետների, ազատների ու հողատերերի
տեղաշինական նեղ ու մանր շահերն էլ մի երրորդ կողմից էին հյուսիս
երկիրը: Անհրաժեշտ էր հզոր մի ձեռք, որ կարողանար նրանց միավորել,
ղեկ պետական կարգ ու կանոնի տակ, ստեղծել կայուն օրենքներով
գործող իշխանություն, որպեսզի ամեն մի գյուղացու կամ տերտեր,
գլուխ բարձրացնող ամեն մի պատահական ուժ այլևս չկարողանար շա-
րիք դառնալ երկրի ու ժողովրդի գլխին:

Մի խոսքով՝ ժամանակը հրամայական պահանջ էր դնում, և պետք
է ծնվեր այդ պահանջների կատարողը: Վաչագան թագավորը դարձավ
ժամանակի պահանջով ասպարեզ եկած այս խոշոր գործիչը:

Անկախ պետականության ժամանակներում թագավորը (Արշակունի
Պապը) իր ձեռքն է հստակում երկրի ուժն ու իրավունքները, եկեղեցուն
տալով գործունեության և իրավունքի սահմանափակ ոլորտ:

Վաչագանը համոզվել էր, որ օտարի տիրապետության տակ գտնվող
երկրում անհրաժեշտ է ստեղծել ուրիշ ուժեր, հզորացնել դիմադրության
ու ազգային ինքնապաշտպանության ուրիշ կովմաններ: Նա տեսել էր, թե
պարսկացու ղեկավարն էր նաև անհաղթահարելի ուժ է կրոնը, որն իր հոգում
ունեցող շարքային նիզակակիր ռազմիկը գնում է գրահապատ փղերի
ղեմ, նա զգում էր, որ վտանգի տակ է իր պապերի լեզուն, և այն արմա-
տավորելու, դրահապատելու ամենալավ միջոցը մայրենի դպրության
տարածումն է: Եվ իր հայրենասիրական գործունեությունն սկսեց եկե-
ղեցու շինացումից ու դպրության խանդավառ տարածումից:

Նախ և առաջ նա վերացրեց երկրի անմատչելի վայրերում և հատ-
կապես Կուրի ափերին բուն դրած մոլի ազանդները՝ սմատնահատնե-

րին», «խեղդողներին» ու «կուրացնողներին»: Հրաման ստացավ վերացնել
Արցախամուր աշխարհի խորքերում գեռես պահպանվող հեթանոսական
տաճարական հավատալիքները՝ «զգիսպաշտության կարգս-կարգս գաղ-
տեղի դիցն զոհամատուց պաշտամունս»⁸⁰: Անհաշտ պայքար սկսեց
կուսպաշտության դեմ՝ քարոզներով, հաճախ էլ բռնություններ քրիստո-
նեական հավատին վերադարձնելով բոլոր նրանց, ովքեր անիշխանու-
թյան տարիներին ենթարկվել էին մոգացման: Այդպես էր վարվում հատ-
կապես իր տերության մեծավորների նկատմամբ. «Քանզի զիւրոյ աշ-
խարհին նախարարս, որք միանգամ մոգութեամբն աղտեղացուցեալ էին
զհոգոյն խոհականութիւն զիցն գարշելի պաշտամամբ և զմարմինս
պղծալից պոռնկութեամբ խենեշացեալ, յորդորական խրատու անէր ի
խոստովանութիւն Քրիստոսի ճշմարտութեանն...»⁸¹:

Այսքանից հետո նա ցնծում էր ոչ այնքան իր թագավորական փառ-
քի ու պատվի համար, որքան սկսած գործի հաջող ընթացքի և հատկա-
պես նրա համար, որ նախարարները համակամ վերադառնում էին
նախնայաց հավատին, միաբանվում իրար հետ, եկեղեցու և թագավորի
շուրջը. «Եւ ինքն յոյժ ցնծացեալ ուրախանայր ոչ այնչափ ընդ թագաւո-
րութիւնն, որչափ ընդ բոլոր նախարարաց աշխարհին միաբանութեամբ
հաւասարել ուխտի եկեղեցու...»⁸²:

Ապա կառուցում է բազմաթիվ եկեղեցիներ, բառ ժամանակագրի
վկայության՝ տարվա օրերի թվով, այսինքն՝ 365 կամ 366 («բստ թուոց
աւուրց տարւոյն եկեղեցիս միայն Բարեպաշտն Վաչական շինեաց յԱրե-
վելս»)՝⁸³: Առաքինի ու բարեշնորհ մարդիկ են նշանակվում հոգևոր
օջախներում. «Եւ կարգեալ տեղեաց տեղեաց եպիսկոպոսս և երիցունս և
հայեցողս ի կամբնս, ի յկողանս... բոլոր իսկ ոսխտ եկեղեցույ մեծարեալ
էին յամս թագաւորութեան բարեպաշտ արքային Վաչականայ»⁸⁴:

Քրիստոնեական հավատի մի բուն վերելք է ստեղծվում այդ եկե-
ղեցիներում ու վանքերում: Սուրբ մասունքների գյուտերով ու փառա-
բանություններով ծայր է առնում համաժողովրդական մի խանդավա-
րություն, որով բռնկվում է ամբողջ երկիրը: Սրբացման ու փառաբանու-
թյունների կենտրոն են դառնում ազգային եկեղեցու այնպիսի գործիչ-
ներ, ինչպես Գրիգոր Լուսավորիչն ու նրա թոռ Գրիգորիսը, Պանդալեոն

80 Անդ, էջ 57:
81 Անդ, էջ 56:
82 Անդ, էջ 56—57:
83 Անդ, էջ 387:
84 Անդ, էջ 60:

բծիշկն ու Գիգամփայտի նահատակները, հայոց գրի մեծ արարիչ Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները: Ուշագրավ է, որ Մաշտոցն այստեղ սրբացվում է, գրեթե հիմնադիր լինելուց բացի, նաև որպես հայ քրիստոնեական կրոնի մեծ ռահվիրա:

Քաղաքները ոչ մի առիթ բաց չի թողնում ժողովրդի կրոնական շերտ-ետնադուրբները բորբոքելու համար: Այդ նա էր, որ իր ներկայությունը ու անմիջական մասնակցությունը բարձրացնում էր եկեղեցական ծեսերի հարգը: Տեղական սրբություններին գումարվում էին նաև բերովիները: Հավանաբար ո՛չ առանց թագավորի հանձնարարության՝ Հայաստանի կենտրոնից Արցախի Գարահոջ գյուղն են բերվում սուրբ Գրիգորի և Հռիփսիմե ու Գայանե կույսերի նշխարները: Եվ իր Գյուտական⁸⁵ արքունի գյուղից այստեղ է շտապում թագավորը՝ թագուհու հետ, երկրի բոլոր նախարարներով ու մեծամեծներով, հոգևոր պետերով ու ծառայողներով:

Քաղաքների ու երկրի մնացած մեծամեծների մասնակցությամբ այսպիսի ցնծալից արարողություններ են լինում նաև Արցախի ուրիշ վայրերում, հատկապես նշանավոր Ամարասում, ուր թաղված էր երկրամասի առաջին եպիսկոպոս Գրիգորիսը: Քաղաքները հրովարտակներով իր տերությունն ամեն մի բնակչի պարտականությունն է դարձնում պաշտել այս սրբերի մասունքներն ու հիշատակները, լինել քրիստոնեական կրոնի շերտետանգ պաշտպանը:

Ժամանակագիրն առանձնահատուկ շերտությամբ է նկարագրում Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի նշխարների գյուտն ու նրանց շուրջը տեղի ունեցած ցնծալից արարողությունները:

Քաղաքները հին պատմագիրներից տեղեկացել էր Աղվանից աշխարհի առաջին լուսավորիչ Գրիգորիսի նահատակության մասին և զիտեր, որ նա թաղված է Ամարասում⁸⁶: Բայց որովհետև Ամարասի եկեղեցու շուրջ շատ կային գերեզմաններ, ու անհնար էր նրանցից ջոկել սուրբ նահատակին, Վաչագանը հրովարտակ է հղում «բնդ աշխարհս տերութեան իւրոյ առ եպիսկոպոսս, երիցունս, անապատականս, և առ ամենայն ուխտաւորս եկեղեցոյ»՝ խոնարհաբար տղաշել աստծուն, որ նա իրենց պարզեի նահատակի նշխարները: Եվ ապա եկեղեցական բոլոր մեծավորները հավաքվում են «ի սեպհական գյուղն արքունի՝ յանուանե-

⁸⁵ Պետք է նկատել, որ սա հենց «գյուտ» բառից է, որովհետև գյուղը կառուցվել է գտնված մասունքների տեղում կամ նրանց վրա:

⁸⁶ Փ. Բուզանդն ու Մ. Խորենացին են պատմում այս պատմության մանրամասները:

այն Գյուտական»⁸⁷: Ապա Արցախի Գարահոջ գյուղից այստեղ են տեղափոխում Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմե ու Գայանե կույսերի մասունքները՝ բերված Հայոց մայրաքաղաքից, կնքված ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննի մատանիով: Վաչագան թագավորը և թագուհին, հոգևորականներն ու աշխարհականներն ընդառաջ են ելնում, աղոթքներ հղում: Սուրբ նշխարները, տանում Գյուտականում գտնվող Պանդալեոն ու Զաքարիա երանելիների մասունքների մոտ:

Գարնանային անձրևոտ օր էր («ժամանակն գարնանային էր և յուրովսթիւն անձրևացն բերման սաստկանայր երկիր»): Սակայն թագուհին մնում է մինչև վերջ և ինքն էլ աղոթում է «մեծաւ փափագանօք»:

Հինգ սրբերի մասունքներն էլ թագավորական հանդերձներով պատած, «ենկօք և անուշահոտ ծաղկօք հանդերձ դնէր ի գեսպակի, զոր շիկակարմիր մորթով կազմեալ և սպիտակ կտաւով ի վերայ յարմարեալ, և ոսկի խաչ ի պատուականագոյն սկանց բանդակեալ ի վերայ դեսպակին հարեալ...»: Այս բոլորը տանում էին արքայական ճերմակաթույր նժույգները՝ կարմիր ներկված պոչերով և պսակավոր բաշերով: Ինքը՝ թագավորը գնում էր այս սուրբ երթի հետ և «երգակից էր սաղմոսաց օրհնութեան»:

Ապա թագավորը հրաման է տալիս ամբողջ օրը ոչինչ չճաշակել. «իսկ յերեկոյին լոկ հացիս գօրանալ»:

Երեք օր շարունակ այսպես աղոթելուց ու պաղատելուց հետո նրանք արժանանում են աստծու ողորմածությանը. մի սուրբ ձայն Գարահոջի արժանանում է մասունքների տեղը: Քաղաքները, հավաքված բազմության հետ միասին, Գյուտականից շարժվում է դեպի Ամարաս: Հասնում է Արածանս գյուղը⁸⁸, եվ այնտեղ արքունի դռան սարկարազ Հովհեր պատմում է իր տեսիլը Գրիգորիսի նշխարների մասին: Ապա արքայական թափորը հասնում է Ամարասի մոտ գտնվող Քարունեճ

⁸⁷ Մ. Զաչարյանցն այս թագավորներիս գյուղի մասին գրել է. «Շնոր ի Կաղանկաղայ երբ մղտնաւ դեպ յարեմոտս հարստոյ յեղր թարթառ գետոյ շրջապատն թաւիտփ անտառ և մացառուպատ, ի վերս ունի զգոգր բուր, յորոյ վերայ է եկեղեցին, զոր կառուց արբայն Աղուանից Վաչական և ամփոփեաց ի նմա զոսկերս սրտոյն զոր կառուց արբայն Աղուանից Վաչական հրովարտակիս, մասն Բ, էջ 348»: Կաղանկատույցը եղել է Գրիգորիսի...» («Ճանապարհորդութիւն, մասն Բ, էջ 348»): Կաղանկատույցը եղել է Մարտիրոսի կողմից Վաչականից նրանից երեք մղտն դեպի արեմոտք էր, ապա այն ապահովապես Արցախում էր գտնվում: Մ. Բարխուդարյանցն այն տեղագրում է այժմյան Թալիշ և Մատաղիս գյուղերի արանքում (տե՛ս ԱԱրցախ, էջ 230):

⁸⁸ Մ. Զաչարյանցի համոզմամբ՝ այժմյան Աջան գյուղն է (տե՛ս նրա՝ «Ճանապարհորդութիւն», մասն Բ, էջ 339—340):

փոքրիկ գյուղը⁸⁹ Այստեղ են կատարում առաջնայան ազոթքը (ցայգա-
պաշտոն)։ Իսկ երբ թափորը հչնում է Քարուեհից, Ամարաս գյուղաքա-
ղաքի կանայք գալիս են ընդառաջ։ «Յորդուխին անձրեաց անդադար
հոսմամբք իջանէր երկիր», իսկ բազմութունը զնալով շատանում էր, և
բաց տարածութեան վրա փոփում է սաղմոսանվագ երգը «յորդագոյն
բաղցր ձայնի»։

Ամարասի կողքով հոսում էր փոքրիկ մի գետ, որի վրայով կամուրջ
էին գցել «յարթունի պողոտային»։ «Ըն արքայն առ յոյժ սիրոյն, զոր առ
սուրբան ունէր՝ ոչ հաւանէր զգեսապակ սրբոյն յայլ թողուլ. այլ ինքն թա-
գաւորական զգեստիքն հանդերձ ազելուն անցանէր ընդ գետն»։

Եվ ահա ժողովրդայն այսպիսի հանդիսավորութեամբ նրանք հաս-
նում են Ամարաս ու գտնում են նշխարները։ Թագավորի կարգադրու-
թեամբ շուրաքանչուր եպիսկոպոսի մասունք է տրվում նշխարներից՝
«թագավորական կնքովն կնքեալ»։ Նշխարների մեծ մասը հենց Ամարա-
սում էլ թողնվում է։ «Ըն արքան ի վերայ գերեզմանին հրամայէր հիմն
արկանիլ մատռան և փութապէս աւարտել և անուանել մատռուն սրբոյն
Գրիգորիսի»⁹⁰։

Ապա հավատացյալների թափորը բռնում է վերադարձի ճամփան։
Գոհ ու երջանիկ են բոլորը, և բոլորից շատ՝ Բարեպաշտ արքան։ Ժողո-
վուրդն ու թագավորը դանդաղաբայլ գնում են, «նման խաղաղացեալ
ժովու»։ «Ըն ի քաղցրաձայն հնչմանց և ի ճառագայթարձակ նշողից փող-
փողելոց օդն զուարճացեալ և հրեշտակք իսկ երգակիցք, թուէր թէ եր-
կիրս երկիրք վերերեւէր»⁹¹։ Քարուեհի մոտ սրտառու էրկրպագութեամբ
բաժանվում են բազմականներն ու թագավորը։ Վաշագանն ու Շուփհա-
ղիշո եպիսկոպոսը շարունակում են իրենց ճամփան, և ուր որ գյուղ պա-
տահեր, թագավորն իջնում էր ձիուց ու հեղաբայլ ազոթք էր անում սրբ-
րերի համար՝ «իբրև զկիրթ՝ յոյժ հմուտ կարգի» մի հավատացյալ։

Այսպես նրանք հասնում են թագավորանիստ ավանը՝ Գյուտական,
և Վաշագան Բարեպաշտ արքան շարունակում է աշխարհաշեն իր գործը։
Վաշագան Բարեպաշտի հոգածութեան կենտրոնն էր դարձել դպրոցը։

89 Երևի այս անունն է պահպանվել այժմյան Քարահունջ փոքրիկ գյուղի անվան
մեջ (Աեռնային Վարազդի Մարտունու շրջանում)։

90 Այս մատուռն իր նախաստեղծ վիճակում այժմ էլ կանգուն է և գտնվում է
Ամարասի ետրաշեն տաճարի բեմի տակ։ Մատուռի ճարտարապետական նկարագրու-
թյունը տե՛ս Մ. Մ. Հատարյան, Ամարասի ճարտարապետական համալիրը («Երաբեր
հաս. գիտութուններ», 1976, № 5, էջ 35—52)։

91 Կաղանկատուացի, էջ 91։

Պատմիչն ասում է՝ նա առաջին հերթին դպրոցներ էր բացում այն երե-
խաների համար, որոնց ծնողները նախկինում աղանդավորներ են եղել։
«Հրամայէր ժողովիլ զմանկունս կախարդաց և դիւթաց և քրմաց, և մատ-
նահատաց և դեղատուաց. հրամայէր ի դպրոցս սնել և ուսուցանել
զաստուածեղէն ուսումն, և տեղեկացուցանել վարուց քրիստոնէութեան
առ և հաստատել»⁹²։

Թագավորն այնպես իր սրտին մոտ էր պահում դպրոցն ու երեխա-
ների դաստիարակութունը, որ երբ որևէ գյուղ էր գնում (նույնիսկ սրբե-
րի հիշատակը հարգելու համար), անպայման մտնում էր դպրոցատունը,
իր շուրջն էր հավաքում մանկանց, առաջարկում բարձրաձայն կարգալու-
ծի նրանց՝ առաջադիմութեամբ ուրախանում էր ավելի, քան եթե մեծա-
զույն հարստութուն գտներ։

Մատենագիրը խանդավառութեամբ է նկարագրում Վաշագան թա-
գավորի լուսավորական շեմեռանդ գործունեությունը, նրա հայրական
հոգածությունը դպրոցական մանկանց նկատմամբ։ Այդ նկարագրու-
թյունից մեր առջև հառնում է Բարեպաշտ թագավորը՝ նվիրված իր երկրի
հասունացող սերնդի կրթության ու դաստիարակության մեծ գործին։
Ահա նա դպրոց է գալիս, իր շուրջն է հավաքում երեխաներին և մեկի
ձեռքը գիրք տալով, մյուսին՝ պնակիտ⁹³, առաջարկում է միասին, միա-
բան ու բարձրաձայն կարգալու։ Երեխաներն իրենց անարատ շուրթերով
հեղում են ոսկեղենիկ հայերենը, և նրանց ինքնավստահ ու մեծաձայն
ընթերցանությունն արձագանք է տալիս Արցախամուր աշխարհի բոլոր
անկյուններում, հնավանդ լեռնաստանը լցնելով արդեն գրի ու դպրու-
թյան փոխված մայրենի խոսքի հզոր ելևէջներով։

Կարևոր է, որ Վաշագան Բարեպաշտի լուսավորական-կրթական
գործը դատարկ տեղում չէր ծավալվում։ Նրանից առաջ ևս Ուտիք ու Ար-
ցախ աշխարհներն ընդգրկված էին դարակազմիկ այն հոգևոր վերափո-
խությունների ոլորտներում, որոնց հեղինակներն էին հայոց առաջին
կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչն ու նրա թոռ Գրիգորիսը, Մեսրոպ Մաշ-
տոցն ու նրա աշակերտները...

Մեսրոպ Մաշտոցը, Արևելից կողմանք գալով, դպրոցներ էր հիմնել
ու անխոնջ պայքարել հեթանոսության վերջին մնացուկների և օտար
հավատալիքների դեմ։ «Աղվանից աշխարհի պատմութեան» հաղորդած

92 Անդ, էջ 60։

93 Հր. Ահառյանը «պնակիտ» (նաև «պնակ») բացատրում է «գիր գրելու կամ
նկարելու տախտակ», «այլուրեք սովորելու տախտակ» (տե՛ս նրա՝ «Հայերէն արմա-
տական բառարան», հատ. 6, Երևան, 1931, էջ 1091)։

պատասխանին յոյժ ի ճահ և ուղիղ լուծմամբ»⁹⁷, ինչպես նաև ձեռագիր հնագույն մատյաններում⁹⁸, որոնցից է նաև պահպանված թղթյա ամենահին ձեռագիրը 981 թվականից⁹⁹:

Հալանարար, նաև ուրիշ ականավոր մարդկանց էր դիմել վաշազան թագավորը: Նրա թղթերը հարցումներ էին եկեղեցական ու աշխարհիկ բովանդակությամբ: Բարեպաշտ թագավորին մտահոգում էին տասնյակ ու տասնյակ հարցեր, որոնց պատասխանները նա ուզում էր իմանալ ոչ թե մեկ, այլ մի քանի մարդուց, որպեսզի սրանք իրար կողքի դնի, համեմատի ու գտնի ամենաճիշտն ու ամենաօգտակարը: Նա ցանկանում էր իր երկրի համար օրինքներ հրապարակել և ուզում էր, որ այդ օրենքներն անթերի լինեն:

Եվ ահա գարնանային մի օր («յամսեանն Մարբրի՝ որ օր երեքտասան էր ամսոյն»)՝¹⁰⁰ Վաշազան թագավորի կամբով Աղվեն ամարանոցում գումարվում է «բազմամբոխ ատեան», որը պետք է քններ և բնդուներ «սահմանադրութիւն կանոնական ի վաշականայ Աղուանից արքայէ եղևալ»:

Ժողովին ներկա էին.

«...վաշական Աղուանից արքա,

եւ Շուփհաղիշայ արքեպիսկոպոս (կարգալ՝ եպիսկոպոս—
Ռ. Ա.) Պարտառայ,

Մանասէ Կապաղա(կա)յ եպիսկոպոս,

Անանիա և Սահակ և Ուտոյ քորեպիսկոպոսը,

Յովսեփ Կաղանկատուց երէց,

Մատթէ Պարտառայ երէց,

Թոմայ թագաւորի դրան երէց,

Պօղոս Գեգաճայ երէց,

Շմառն Յուոյ քորեպիսկոպոս,

Մատթէ Դարահոճոյ երէց,

Աբիկաղ Բեթայ երէց,

97 Մա. Օրբևան. Պատմութիւն ետնանգին Սիսական, էջ 89—90:

98 Մատենագարան, ձեռ. № 3074, էջ 110բ. № 4381, էջ 17ա, № 6228, էջ 141ա: Տե՛ս նաև՝ Ռ. Մարգարյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի վենետիկ, Ռ. վենետիկ, 1924, էջ 284—285:

99 Մատենագարան, ձեռ. № 2679, էջ 195 ա: Հարց ու պատասխանները վերնագրված է. «Հարցմունք յաղագս մարմնաբոլորեանն տեառն դանազանք՝ վաշազանի Աղուանից իշխանի բնդ Պետրոսի Սիսեաց եպիսկոպոսի և իմաստասիրին»:

100 Կաղանկատուցի, էջ 98:

Ուրբաթ Այրմանուշաց երէց,

Յովել և Պարպ և Միքէ և Յակոբ երիցունք,

և ազատ մարդիկ և նահապետք Արցախայ,

և Բակուր Կաղանկատուց նահապետ,

և այլք բազումք...»¹⁰¹:

Ինչպես պարզ երևում է այս ցուցակից և հարակից նյութերից¹⁰², ժողովին մասնակցում էին հիմնականում Ուտիքի և հատկապես Արցախի աշխարհիկ տերերը՝ ազատ մարդիկ (տղնվականներ) և նահապետները: Հոգեորականներն էլ մեծ մասամբ այսրկուրյան Աղվանքից էին: Անդրկուրյան Աղվանքի հայտնի բնակավայրերից ներկայացուցիչներ ունեին միայն Կապաղակը՝ Ալբանիայի առաջին մայրաքաղաքը, և Յոի քաղաքն իր քորեպիսկոպոս Շմավոնով:

Ղ Աղվենի ժողովի գումարման տարեթվի հարցը.— Պատմությունը չի նշում Աղվենի ժողովի գումարման տարեթիվը: Այն պետք է ենթադրել վաշազանի գործունեությանը վերաբերող ժամանակագրական մյուս սովյալներից: Վաշազանը թագավոր է դարձել վաշե Բ-ի՝ գահից հրաժարվելուց (464) երեսուն տարի հետո: Հետազոտողները գտնում են, որ վաշազանը գահ է բարձրացել 484 թ, ոչ վաղ, որովհետև նրան թագադրել է Պարսից վաղարշ արքան, իսկ վաղարշի գահակալության առաջին տարին 484 թվականն է:

Պատմադիտական դրականության մեջ ընդունված է Աղվենի ժողովի գումարման տարի համարել 488 թվականը¹⁰³, Եղել են, սակայն, ուսումնասիրողներ էլ, որոնք այս կանոնախումբը համարել են VII դարի արտահայտություն: Հ. Մանանդյանը, օրինակ, գտնում էր, որ Աղվենի ժողովը գումարվել է «հավանորեն յոթերորդ դարի սկզբներում»¹⁰⁴: Յոթերորդ դարում գումարվելու կողմ էր նաև Խ. Սամվելյանը¹⁰⁵, որը, հավանաբար պատահմամբ, մի տեղ էլ 488-ն է նշել որպես ժողովի տարի¹⁰⁶:

Կաղանկատուցին ժողովը գումարված է համարում «յամսեանն

101 Անդ, էջ 98:

102 Անդ, էջ 103:

103 Մ. Չամչեան. Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 219: Լեոն գտնում էր, որ ժողովը գումարվել է «5-րդ դարի վերջում կամ 6-րդ դարի սկզբում» (տե՛ս նրա «Պատմութիւն», հատ. 2, Երևան, 1967, էջ 153):

104 Հ. Մանանդյան, նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, II էջ 50:

105 Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 190:

106 Անդ, էջ 51:

Մարերի՝ որ օր երեքտասան էր ամսոյն»¹⁰⁷, ներսես Ակինյանի հաշվում-
ներով՝ մարերի 13-ը համապատասխանում է 460—579 թթ. հուլյան
տոմարի ապրիլի 30—մայիսի 1-ին¹⁰⁸,

Ակինյանը միաժամանակ գտնում է, որ եթե ժողովը գումարվել է
ամարանոցում, իսկ ապրիլի 30—մայիսի 1-ը վաղ է, ապա պետք է գրա-
նել մարերի 13-ի այնպիսի դրսևորում, որ հարմար լինի ամարանոց
բարձրանալու համար: Եվ հաշվում է, որ 336—459 թթ. ժամանակը հար-
մար է, որովհետև այդ թվականներին մարերի 13-ը մայիսի 30—հունիսի
1-ին էր համապատասխանում: Ուրեմն, «հարկադրված պիտի ըլլանք
415—459 տարիներեն մին ենթադրել ժողովին տարին»¹⁰⁹,

Այս եղանակով նա ժողովը գումարված է համարում V դարի առա-
ջին կեսին: Եվ քանի որ հաստատում է նաև, որ ընդունված կանոնների
վրա առկա է Շահապիվանի կանոնախմբի (ընդունված 443-ին) խիստ
ազդեցությունը, ուստի. «Կենթադրեմ, թե Աղվենի ժողովը գումարված
ըլլա անկե (Շահապիվանից— Բ. Ու.) ոչ շատ ուշ: Հոս քանիցս կհիշվի
կանոնագիրք մը (առպես ի կանոնսն գրեալ է՝ պատուհաս դիցենն».) ԺԾ
«Կանոնիւք դատեսցինն».) ԺԶ. «որ ի կանոնս գրեալ է».) որուն հա-
մաձայն կառաջնորդվին»¹¹⁰:

Ճիշտ ու տեղին է նկատել. իսկապես այս բոլորը ցույց են տալիս,
որ Աղվենում կանոններ ընդունողներն իրենց ձեռքի տակ ունեցել են մի
հեղինակավոր կանոնախումբ, որով առաջնորդվել են, և այդպիսին կարող
էր լինել միայն Շահապիվանին: Բայց ինչո՞ւ մտածել, թե Շահապիվա-
նի կանոններն Աղվենում կարող էին լինել ընդունվելուց առ շատ ուշ՝
և ոչ թե, օրինակ, մի հիսուն-վաթսուն տարի հետո:

Անհնար է այս հարցին պատասխանել:

Ն. Ակինյանի այս հաշիվներն իրար են խառնվում հատկապես Վա-
չագանի հարցում: «Վաչական պետք է ծնած ըլլա իբր 460-ին (ինչո՞ւ,
ինչպե՞ս: Չէ՞ որ, ըստ պատմիչի, նրան ևս բունություն մոգություն էին
ընդունել տվել դարակիսին— Բ. Ու.)».) գահակալած իբր 485-ին, վախճա-
նած իբր 570-ին»¹¹¹, Ո՞վ է ասել: Ինչո՞ւ: Որովհետև «Հովհաննես Բ կա-
թողիկոս Գարեղենից (557—574) իր թուղթին մեջ առ Աբբաս կաթողի-
կոս, գրված իբր 568-ին, որևէ ակնարկություն չունի Վաչական Բարե-

պաշտ արքայի մասին»¹¹²: Որ «ակնարկություն չունի», նշանակո՞ւմ է,
թե Վաչագանը նրանից հետո պիտի վախճանվեր: «Ակնարկություն չը-
նի», որովհետև հնարավոր է, որ նա նույնիսկ չի էլ իմացել Վաչագան
Բարեպաշտի, ինչպես և Աղվենի կանոնների մասին: Միանգամայն հնա-
րավոր է, որ Վաչագանի կյանքի ու գործի (իմա՞ նաև ընդունած կանո-
նախմբի) նկարագրությունը ժամանակագրի ձեռքով՝ պահված լինի
որևէ վանքում և հայտնվեր տասերորդի սկզբին, երբ շարահարող Դաս-
խուրանցին արդեն փնտրում ու հավաքում էր այդպիսի ժամանակագրու-
թյուններ ու հիշատակարաններ իր կազմելիք գրքի համար:

Սակայն՝ ն. Ակինյանը ժողովի թվականի տեղաշարժով ու վարչագա-
նի շուրջն ստեղծած այս պատմությունը չի բավարարվում: Մեկիկ-մեկիկ
հանում է ժողովի բոլոր հիմքերը, և այն մնում է օդում կախված, կամ՝
մեկ գումարված հինգերորդ դարի առաջին կեսին, մեկ՝ յոթերորդում և
մեկ էլ... առհասարակ չգումարված:

Ահա նրա մյուս փաստարկներից «ամենազորավորները».

ա) «Քաջն Վարդան ի Միհրան տոհմէն» եթե նախագահն եղած է
Աղվենի ժողովին, կենթադրե՞ն այդ ժողովը գումարված է է դարու
կեսին»¹¹³,

բ) «Մատթէ երէցն Գարահոջոյ» շեմ կարող պատմական անձնավո-
րություն համարել, — հայտարարում է Ակինյանը, դրա համար հիմք
ընդունելով Մատթեի՝ մասունքներ բերելու մասին Պատմության մեջ
եղած տեղեկություն, իբր թե, կեղծ լինելը. «Կհիշվին ս. Գրիգորի և
ս. Հռիփսիմյանց նշխարները, որոնք Հայաստանեն Աղվանք բերված են
618-ին, երբ Կոմիտաս կաթողիկոս բացավ ս. Հռիփսիմեի դամբանը,
գտավ նշխարները կնքված ս. Գրիգորի և ս. Սահակի կնիքներով: Ավել-
ցուց անոնց վրա իր ալ կնիքը: Ուստի 618-են առաջ չէր կրնար Մատթե
երեց նշխարներ տարած ըլլալ Աղվանք»¹¹⁴, Ապա. «Մատթէ երէց Գարա-
հոջոյ» կհիշվի նաև Բերդո վանքի մեջ գումարված ժողովին մեջ,
705-ին»¹¹⁵:

Չի հավատում Վաչագանի թղթակցություններին: Աբրահամ Մամի-
կոնեից հայիսկոպոսի՝ առ Վաչագան գրած թղթի մասին գրում է. «Թե
հատվածս Աբրահամ հայիսկոպոսի գրչին է, շեմ ուզեր կասկածի ենթար-

107 Կաղանկատուացի, էջ 98:

108 Ն. Ակինեան, Մովսես Դասխուրանցի, էջ 138:

109 Անդ:

110 Անդ, էջ 129:

111 Անդ, էջ 126:

112 Անդ, էջ 127:

113 Անդ:

114 Անդ:

115 Անդ, էջ 128:

կել: Բայց չկա որևէ կովան գրվածքս «Յուդիթ» (նամակ— Բ. Ա.) և «Յուդիթ» Վաչազան թագավորի ուղարկած ըլլալու համար»¹¹⁶:

Այսպես, Ակինյանն ամեն ինչ ժխտում է՝ հասնելով նաև Վաչազան թագավորին. «Այն ամենը, ինչ որ կպատմվի Աղվենից պատմության մեջ լայնորեն՝ վիպական նկարագիր կկրել: Չեմ գտներ հոն պատմական կորիզ»¹¹⁷: Հետևապես, — մտածում է ն. Ակինյանը, — X դարի մատենագիր-խմբագիրը ձեռք է ձգել Աղվենի կանոնները և նրանց հիման վրա հորինել մի Վաչազան Բարեպաշտ թագավորի կերպար, սրա շուրջը հյուսել այն բոլոր զեղեցիկ, բայց անհավաստի գրույցները, որ մեզ են հասել կաղանկատվացուն վերագրվող Պատմության մեջ:

Թե ն. Ակինյանը որքանով է իրավացի, այդ կտեսնենք ստորև: Աղվենի ժողովի գումարման տարեթվի հարցի քննությունը հանգամանորեն զբաղվել է նաև Ս. Հ. Հովհաննիսյանը: Աղվենի, Շահապիվանի և Աշտիշատի ժողովների աղերսների առիթով Հովհաննիսյանը հայտնում է այն միտքը, թե առաջինի կանոնները, որ իրենց վրա, իբր թե, կրում են Աշտիշատի գրողը, կարող էին ստեղծվել միայն Աշտիշատի ժողովից անմիջապես հետո: Ս. Հ. Հովհաննիսյանը գիտե, իհարկե, որ «...մեզ չեն հասել Աշտիշատի ժողովի կանոնները, մենք չգիտենք՝ բանիսն են եղել դրանք, ներգործության ինչպիսի միջոցներ են սահմանել: Աշտիշատի ժողովի կանոնների մասին տեղեկությունները պահպանված են միայն Բուզանդի պատմության մեջ»¹¹⁸ և «Աշտիշատում ընդունված կանոնների բովանդակության մասին Բուզանդի հաղորդած տեղեկությունները կցցկառուր են, հաճախ՝ մեկ բառով արտահայտված...» և այլն¹¹⁹:

Նվ, այսուամենայնիվ, նա գտնում է, որ Աղվենն անմիջապես հաջորդել է Աշտիշատին և կանոնական հիմք է ունեցել նրա՝ մեզ համարյա անհայտ կանոնները:

Անշուշտ, Վաչազան Բարեպաշտը ծանոթ է եղել Փավստոս Բուզանդի պատմությանը: Ժամանակագիրը վկայում է, որ նա «տեղեկացել էր ի հնազարացն պատմութենէ, եթէ ի Վատնեայ դաշտին կատարեցաւ երանելին Գրիգորիս, և բարձեալ աշակերտաց ոմանց՝ բերին յԱմարաս գիւղն

և եղին յեկեղեցոյն, յորում հիմնարկեալ էր մեծին Գրիգորի...»¹²⁰: Իսկ այսպիսի տեղեկություն չի հնազարացն՝ միայն հորհնացին ու Բուզանդն են հաղորդում: Բայց չէ՞ որ Բուզանդն էլ Աշտիշատի մասին Վաչազանին սովորեցնել էր կարող հաղորդել, քան մեզ է հաղորդում: Էլ Վաչազանն ինչպե՞ս պիտի հիմք ընդուներ «կցկառուր, հաճախ՝ մեկ բառով արտահայտվածը», երբ գրա կողքին ուներ Շահապիվանի կանոնները՝ իրեն այնքան հարազատ, իր շահերին ու նպատակներին այնպես համահնչուն, որ երբեմն ասես բառացիորեն կրկնում է, կամ այնպես է վերաշարադրում, որ բովանդակությունը մնա, սակայն ձևով լինի տարբեր:

Նկատի առնելով Հայաստանի 387-ի բաժանումին հաջորդած ժամանակաշրջանը և հատկապես V դարի կեսերը, պիտի մտածել, որ Շահապիվանի կանոնները կարող էին Վաչազանին հասած լինել: V դարի վերջին, և հենց այդ ժամանակ էլ նա կլիներ Շահապիվանի ազդեցության տակ:

Ս. Հ. Հովհաննիսյանը, Աղվենի ժողովի տարեթիվը որոշելու համար և ն. Ակինյանի հաշվումը Ջզրտելու նպատակով, տոմարական նոր հաշվումներ է անում, պարզում, թե ո՞ր դարում մարերի 13-ը ո՞ր ամսի քանիսին էր համապատասխանում: Սակայն այս հաշվումներով հարցը բոլորովին էլ չի լուծվում, որովհետև, եթե պարզվում է, որ Վաչազան Բարեպաշտի ժամանակ մարերի 13-ը համապատասխանել է ոչ թե ապրիլի 30-ին, այլ մայիսի 1—5-ին¹²¹, միևնույն է, Ս. Հ. Հովհաննիսյանը բացառում է «Բարեպաշտի օրոք ժողովի հրավիրումը»¹²²: Իսկ այդ դեպքում էլ ինչի՞ համար էին հաշվումները:

Ս. Հովհաննիսյանի համոզմամբ՝ Աղվենի սահմանագիր ժողովը հրավիրվել է 372—375 թթ. կամ՝ «Վաչազան 2-րդի թագավորության և Եուփհաղիշայի հայրապետության օրոք, ամենայն հավանականությամբ՝ 372—387 թթ. հունիսի առաջին օրերից մեկում»¹²³, Հովհաննիսյանն իր այս տեսակետի օգտին խոսող փաստեր է համարում Եուփհաղիշայի հայրապետության ժամանակը, որ համապատասխանում է IV դարին, մի քանի հոգևորականների անունների ու կոչումների մեջ նկատվող տարբերությունները և, հատկապես, Աղվենի կանոնների մեջ Վաչազան Բարեպաշտի ժամանակաշրջանի արտացոլված շինելը: Հետադրոտողը, օրինակ, հիշում է, որ Վաչազան Բարեպաշտը համառ պայ-

116 Անդ, էջ 133:

117 Անդ, էջ 126:

118 Ս. Հ. Հովհաննիսյան, Աղվենի սահմանագրի ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ. Հայկական ՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 271:

119 Անդ, էջ 272:

120 Կաղանկատուացի, էջ 74:

121 Ս. Հովհաննիսյան, նշվ. հոդվածը, էջ 270—271:

122 Անդ, էջ 271:

123 Անդ, էջ 260 և 274:

քարով վերացրել է կոապաշտութեան ու հեթանոսութեան մնացորդները. «տարածված է եղել նաև մատնահատութեան անհավոր աղանդը, որը Բարեպաշտի անողոր ջանքերով վերացվում է»¹²⁴։ Սրանք իսկապես եղել են, բայց ժողովի ժամանակ արդեն վերացված էին։ Մատենագիրն Աղվենի ժողովի կանոնները ներկայացնում է որպես հայրենի երկրի հետագա ժամանակների օրենսդրական ծրագիրը։ Իսպառ վերացված աղանդներն ու հանցանքներն ինչո՞ւ պիտի մանեին այդ կանոնների մեջ։

Իսկ եթե մի պահ ընդունենք, թե ժողովը տեղի է ունեցել 372—387 թթ., ապա աղանդների ու հեթանոսութեան վերապրուկների հարցն առավել սրութեամբ կդրվի, քանի որ դրանք այն ժամանակ այնքան շատ էին տարածված, որ քառորդ դար հետո Մեսրոպ Մաշտոցը, Հայոց արևելից կողմանք գալով, ստիպված եղավ գրի ու դալրութեան հետ միասին տարածել նաև քրիստոնեական հավատը։

Ս. Հովհաննիսյանն իր օգտին խոսող ոչ այնքան հավաստի փաստերը շարադրելիս չի ուզում տեսնել այն արժանահավատ վկայությունները, որոնք անառարկելիորեն հաստատում են իր տեսակետի հակառակը։ Այսպես, օրինակ, նա գտնում է, որ Աղվենի ժողովը գումարվել է «ամենայն հավանականությամբ 372—387 թթ.», և որ ժողովի ընդունած կանոնները համապատասխանում են հենց այդ ժամանակի ոգուն։ Բայց ինչպիսի՞ն էր Հայոց արևելից կողմանց պատկերը 372—387 թթ.։ Աղվենը գտնվում էր Արցախում։ Իսկ Արցախը, ինչպես հայտնի է, 360-ականներին, Արշակ Երկրորդի դեմ բռնկված դժգոհությունների ժամանակ, ապստամբվել-անջատվել էր Հայոց միացյալ պետությունից, սակայն շատ շանցած՝ Պապ թագավորը շուտով Ուտիքն ու Արցախը (ծայրամասային մյուս գավառների հետ միասին) վերամիացրեց Հայաստանին։ Ինչպես այս ժամանակ, այնպես էլ Հայաստանի 387-ի քաժանումից անմիջապես հետո Հայոց արևելից կողմանց (իմա՝ Կաղանկատվացու նկարագրած Աղվանից աշխարհի) վիճակն այնպիսին չէր, որ ինքնուրույն թագավորություն ունենար, և այս թագավորությունն էլ վերջներ ու իր երկրի համար սահմանադրական կանոններ ստեղծեր։

Ուրեմն, Ս. Հովհաննիսյանի պնդումը խոցելի է հենց իր հիմքում, և այս պատճառով էլ բացառվում է Աղվենի ժողովի գումարումը IV դարի վերջին։

Կա նաև մի այլ շատ կարևոր հանդամանք, որը եթե նկատի առած լինեք Ս. Հովհաննիսյանը, ապա Աղվենի ժողովը V դարի երկրորդ կեսից ետ տանելու մասին չէր էլ մտածի։ Դա Պարտավի փաստն է։ Ժողովի

մասնակիցներից են՝ «Շուփհաղիշայ արքեպիսկոպոս Պարտաւայ», «Մաթէ Պարտաւայ երէց»։ Պարտավը V դարի երկրորդ կեսին է կառուցվել, 459 թ. ոչ վաղ, որովհետև «...ի հրամանէ Պերոզի, պարսից արքայի՝ շինեցաւ ի վաշէէ Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ»¹²⁵։ Իսկ Պերոզը գահ է բարձրացել 459-ին։ Հետևապես Պարտավի գոյությունից առաջ Պարտավի հետ կապված մարդկանց մասնակցությունը ժողով գումարելու հնարավորությունն իսպառ բացառվում է։

Եվ, այսուհանդերձ, փորձենք քննել մյուս փաստարկները, ավելի ճիշտ՝ նրանցից ամենակարևորները։

«Աղվանից աշխարհի պատմություն» տվյալներն ու պատմական ժամանակաշրջանի բնութագիրը ցույց են տալիս, որ Աղվենի ժողովը գումարվել է Վաչագան Բարեպաշտի նախաձեռնությամբ և այն էլ V դարի վերջին։

Ենթադրվում է, թե Հայոց արևելից կողմանց թագավորի ամարանոց Աղվենը գտնվելիս է եղել «հետագա Գյուլիստան մելիքանիստ գյուղի տեղը»¹²⁶։ Ամարանոցի մոտ, բնգամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում նաև արքունի Գյուլատական գյուղը¹²⁷։ Վաչագանի աթոռանիստն այս Գյուլատականն էր, շնչյաժ նրա ժամանակ արդեն կառուցված էր Պարտավը, ուր պարսից մարդպաններն էին նստում։ Թագավորի աթոռանիստն ու ամարանոցը կլիմայական համարյա նույն պայմաններն ունեին. հետևապես ավելորդ է մտածել, թե ե՞րբ հնարավոր կլինեք բարձրանալ ամարանոց՝ այրիի վերջի՞ն, մայիսի՞ն, թե՞ հունիսին։ Եվ եթե մարերի 13-ը ն. Ակինյանի հաշվումներով համապատասխանում էր 460—579 թթ. հուլյան տոմարի ապրիլի 30—մայիսի 1-ին, իսկ Ս. Հովհաննիսյանի հաշվումներով՝ մայիսի 1—5-ին, ապա այս ժամանակներից և ոչ մեկը չէր խանգարի, որ Վաչագանն իր աթոռանիստից գնար (ոչ թե բարձրանար) մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող ամարանոցն ու այնտեղ ժողով գումարեր։

Քննենք այն տեղեկությունները, որ ընձեռում է «Աղվանից աշխարհի պատմությունը»։

ա) Շուփհաղիշան, որի ժամանակը Ս. Հովհաննիսյանի կողմից օգտագործվում է որպես իր տեսակետի հիմնական ու հիմնավոր կովան,

125 Կաղանկատուացի, էջ 52։

126 Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34։

127 Տե՛ս Կաղանկատուացի, էջ 150. «Առ հեղեղատոմն Տրսուայ մօտ ի գիւղն Գյուլատական»։ Գյուլատականի ավերակները գտնվում են այժմյան Լոնային Ղարաբաղի Թալիշ գյուղի մոտ, Թարթարի արևին (Մ. Բարթուղուտեանց, Արցախ, էջ 230)։

Վաչագան Բարեպաշտի ժամանակակիցն է, Աղվենի ժողովի մասնակիցը, բայց ո՛չ հայրապետ-կաթողիկոս այն Շուֆհաղիշան, որը, ըստ ավանդության, պետք է հաջորդած լիներ Աղվանից առաջին եպիսկոպոս Գրիգորիսին և, ըստ Ս. Հովհաննիսյանի պնդման, լիներ IV դարում գումարված Աղվենի ժողովի մասնակիցը.

Մենք արդեն առիթ ունեցել ենք տեսելու, որ Վաչագան Բարեպաշտի կյանքին ու գործին, նրա ժամանակի անցքերին նվիրված գլուխները Պատմության մեջ են մտել՝ որպես ժամանակակիցի ու ակնատեսի գրածները: Այդ հաստատվում է պատմի նկարագրական անմիջականությունը և հեղինակի մի շատ կոնկրետ միջամտությունը. «Եւ տարաւ զիս ի տեղին զոր ցուցեալն էր յառաջ»¹²⁸: Սակայն այս բոլորը հետագայում խմբագրվել ու «շտկումների» են ենթարկվել: «Աղվանից աշխարհի պատմության» ուշադիր քննությունը դժվար չէ վերականգնել ակնատեսի գրածների նախատեղծ վիճակը: Հեղինակը երկու անգամ խոսում է Շուֆհաղիշայի մասին. մեկ՝ կրք նա թագավորի հետ մասնակցում էր ս. Գրիգորիսի նշխարների գլուխի առթիվ կազմակերպված արարողություններին, մեկ էլ՝ Աղվենի ժողովին նրա մասնակցությունն արձանագրելիս: Առաջին դեպքում Շուֆհաղիշան ավագ եպիսկոպոսապետ է («Եւ առեալ թաղաւորին ընդ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուֆհաղիշոյ զնայր»), երկրորդ դեպքում արքեպիսկոպոս («և Շուֆհաղիշայ արքեպիսկոպոս Պարտաւայ»): Բերված հատվածներից երևում է, որ առաջինի «պետ» մասն ու երկրորդի «արք»-ը հետագայի հավելումներ են՝ կատարված միանգամայն անհմուտ ձեռքով, որովհետև «աւագ եպիսկոպոսը» հասկանալի է; իսկ «աւագ եպիսկոպոսապետը»՝ թյուրիմացություն: Այդպես էլ՝ «արքեպիսկոպոս Պարտաւայ»-ը: Արքեպիսկոպոսը կլիներ «Աղվանից» և ոչ թե «Պարտաւայ»: Իսկ եթե նկատի առնենք նաև, որ V դարում Պարտավում արքեպիսկոպոսություն (կաթողիկոսական աթոռ) չի եղել, որովհետև, — ինչպես հայտնի է, «յորժամ սկիզբն հայ թուականին եղև, ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Զողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ», — այն ժամանակ այլևս ոչ մի հիմք չի մնա մտածելու, թե Պարտավում նստող Շուֆհաղիշան եղել է կաթողիկոս:

Ուրեմն, Վաչագան Բարեպաշտի ժամանակակից Շուֆհաղիշան կաթողիկոս (իմա՝ հայրապետ, եպիսկոպոսապետ) չի եղել և ոչ մի կապ չունի IV դարի Աղվանից ենթադրյալ կաթողիկոս Շուֆհաղիշայի հետ: Նա միայն Պարտավի եպիսկոպոսն է եղել, թերևս թագավորից որոշ ար-

տոնություններ վայելած, որի համար էլ պատմիչը նրան «ավագ» տարբերանշանով է պատվել: Հետագայում Պատմության հավաքող-խմբագիրը կամ ձեռագրի նկատմամբ իրեն որոշակի ազատություն վերապահած, սակայն քննական նվազագույն կարողությունից զուրկ մեկը, Շուֆհաղիշայի անվանը հանդիպելով՝ այն իրեն ծանոթ Շուֆհաղիշա «կաթողիկոսի» տեղ է ընդունել և կոչումն «ուղղել»¹²⁹:

բ) Վաչագան Բարեպաշտն Աղվենի ժողովին նախապատրաստվելիս հարցումներ է արել ժամանակի նշանավոր մարդկանց, նրանցից ստացել պատասխաններ, որոնց նյութն էլ հիմք է հանդիսացել ընդունված կանոններից մի քանիսի համար: Այս հանգամանքն ընդունում են ն. Ակինյանը և Աս. Մնացականյանը¹³⁰: Իսկ Ս. Հովհաննիսյանը լռում է այս առթիվ: Սակայն, այսպես թե այնպես, պահպանվում են Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի և Դարասոջի երեց ու գիտնավոր Մատթեի թղթերը, որոնք հասցեագրված են Վաչագան թագավորին: Ի դեպ կազանկատվացու Պատմությունից զուրս է մնացել, սակայն զանազան ձևագրերում պահպանվել է նաև Պետրոս եպիսկոպոս Սյունեցու թուղթը «Հարցմունք յաղագս մարմնատուրությանն Տեառն զանազանք, Վաչականի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սինեաց եպիսկոպոսի և իմաստասիրի»¹³¹:

Չէր կարող պատահել, որ սրանք բոլորը, խոսքները մեկ արած, մի Վաչագան Բարեպաշտ թագավոր հնարեին և նրան վերագրեին մեկ զարկամ դար ու կես առաջ ապրած մի ուրիշ Վաչագանի ստեղծած կանոնները: Եթե նրանց համար կարևորը Բարեպաշտ անուն հռչակիլը լիներ,

129 Շուֆհաղիշայի անվան հետ կապված այս մոտրությունը վաղուց (սկսած Միխայիլ Գոշից) նկատվել է ինչպես մատենագիրների, այնպես էլ հետազոտողների կողմից: Սակայն ոչ որ նարքը պարզելու փորձ չի արել: Ֆ. Ջաֆարովան իր հոդվածում ընդհուպ մոտենում է հանգույցին գրիով. «Заслуживает особого внимания тот факт, что он (Шуфхагша—У. Б.) назван архиепископом Партава в 487—488 гг., хотя известно, что патриарший престол только в VI в. был перенесен из г. Чога в столицу Партава в связи с нашествием хазар» (տե՛ս «Из истории раннефеодальных отношений в Кавк. Албании», Изв. АН АЗССР, серия истории, 1968, № 2, с. 89). Եվ, գծրախաբար, հետպոստորը հատուկ ուշադրության կոչ անելով՝ չի պարզում, թե այս դեպքում Շուֆհաղիշան ինչո՞ւ է կոչվել արքեպիսկոպոս, կամ 551-ից ստույգ առհասարակ եղե՞լ Աղվանից կաթողիկոսություն:

130 Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրակ. հարցերի շուրջը, էջ 118—130, «առկապիտ» էջ 123: Օրբէլեան, էջ 89—90: Մատենադարանի ձեռ. № 3074, Բ. 110ր.—112ր:

131 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 558: Նաև Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 125:

այդ անվամբ կկոչին նախորդ Վաչագանին, և գրանով էլ հարցը կփակվեր:

Կա մի այլ կարևոր հանգամանք ևս, որը ջնջում է ն. Ակինյանի վարկածը Վաչագանի վիպական-հորինած կերպար լինելու մասին և անառարկելիորեն հաստատում է, որ X դարի հեղինակ-շարահարողը Վաչագան թագավորի մասին գրելիս օգտվել է միայն իր ձեռքն ընկած հին ու արժանահավատ պատմությունից և իր կողմից ոչինչ չի ավելացրել այդ պատմությանը:

Կաղանկատվացու գրքում Վաչագան Բարեպաշտին վերաբերող ամեն ինչ կա՝ սկսած նրա ազգաբանությունից, առերես մազդեզանց կրոնն ընդունելուց ու հետո էլ հրաժարվելուց՝ մինչև նրա հայրենաշեն գործունեության բոլոր մանրամասները, կանոնական Սահմանադրություն ընդունելը և այլն: Չկա միայն մի բան. թե ի՞նչ վախճան ունեցավ այդ մեծ գործիչն ու հայրենասերը: Մի՞թե մի այսպիսի կերպար ստեղծող պատմիչը, իր վիպական պատմությունը կատարյալ դարձնելու համար, չէր կարող սարքել նաև իր հերոսին պատշաճ մի վախճան, որպեսզի ընթերցողին այլևս շտանջի այն անպատասխան հարցը, թե ի՞նչ կատարվեց, վերջապես, այս մարդու հետ, ինչո՞ւ այսպես միանգամից ու անսպասելի ընդհատվեց պատմությունը մի գործիչի մասին, որն ապրում էր լայն գործունեությամբ. իր երկրի կյանքն էր առաջ տանում, և որի մասին պատմիչը խոսում էր զերագույն քաջատեղյակությամբ:

Պատասխանը մեկն է. որովհետև X դարի շարահարողն իր ձեռքի տակ ունեցել է միայն այդքան պատմություն-ժամանակագրություն: Շարահարողն իրեն իրավունք չի վերապահել կամայական սրեկ մուծում գումարելու այն պատմությանը, որ կտակել է Վաչագան Բարեպաշտի կենսագիր-ժամանակակիցը: Իսկ թե ժամանակագիրն ինչո՞ւ իր պատմությունը հենց այստեղ է ընդհատել, դա այսօր նույնքան անլուծելի մի առեղծված է. որքան Վաչագան Բարեպաշտի մահվան թվականն ու հանգամանքները:

Սակայն այս բոլորով հանդերձ և, միաժամանակ, անկախ այս բոլորից, Վաչագանի կերպարի պատմական հավաստիությունն են հաստատում բոլոր այն կոնկրետ պատմական անունները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են նրա հայրենաշեն գործունեությանը: Եթե ընդունում ենք, որ նրանք իրոք գործակցել են Վաչագան Բարեպաշտին, պատասխաններ են գրել նրա կողմից հղված թղթերին, ապա պարզվեք նրանց ժամանակը, որ կլինի և ժամանակը նորին թագավորություն Վաչագանի:

Մամիկոնեից Աբրահամը «եպիսկոպոս է նստել 489 թվին», — գրում է Շր. Ահառյանը¹³², կրկնելով Բ. Սարգիսյանի եզրակացությունը, որ շարտրված է վերջինիս «Աբրահամ Մամիկոնեից թուղթ առ Վաչական և պատմություն վասն ժողովոյն Եփեսոսի»-ի մեջ (Վենետիկ, 1899, արտատպված «Բազմավէպի» նույն տարեթվից):

Պետրոս Սյունեցին «Դվինի 554 թվի եկեղեցական ժողովի դիտավորանքներից էր»¹³³, հավանաբար արդեն ծերունազարդ: Հենց նրա խոր ձերբությունը նկատի ունի Աղվանքի պատմիչը, երբ այս ժամանակների մասին գրում է. «հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց (Սիւնեաց) առ-րինոյն Պետրոսի, որ հասեալ ի վախճան՝ պատուէր ետ վիճակին իւրում օտնույ ձեռնադրութիւն յԱղուանից»¹³⁴, Վաչագանին իր թուղթը նա հղել էր երիտասարդ տարիներին, երբ նույնիսկ եպիսկոպոս էլ չէր, այլ գիտնական: «Եպիսկոպոսը» ձեռագրերում հետո են ավելացրել: Ուշագրավ է, որ այս եպիսկոպոսը, տեսնելով Դվինի կաթողիկոսության պառակտված վիճակը, առաջարկել էր, որպեսզի Սյունյաց եպիսկոպոսներն Աղվանից մայր աթոռից ստանան մեռոնն ու ձեռնադրությունը¹³⁵: Նշանավոր կենտրոններին, մանավանդ, որ ինքն էլ վաղնջուց սերտորեն կապված էր նրա աշխարհիկ տերերի հետ:

դ) ն. Ակինյանը չի հավատում Մատթե երեցի գոյությանը, որովհետև, իբր թե, ճիշտ չէ նրա՝ նշխարներ բերելու պատմությունը: Հ. Հովհաննիսյանը հարցի այս կողմով չի զբաղվել: Մինչդեռ, ըստ Մ. Կաղանկատվացու, Արցախի Դարահոջ գյուղի երեց ու գիտնավոր Մատթեն Վաչագան թագավորի եկեղեցանպատ գործունեության ականատեսն է, Դվինից սրբերի նշխարներ բերողը, ինչպես նաև Աղվանի ժողովի մասնակիցը¹³⁶:

Նրա բերած նշխարների շուրջն էր, որ թագավորը կազմակերպեց համաժողովրդական ծեսեր ու տոնախմբություններ:

ն. Ակինյանը փորձում է ապացուցել, թե Մատթեն Դվինից սուրբ Դրիդորի և սուրբ Հռիփսիմյանց նշխարները չէր կարող բերած լինել, բանի որ դեռևս 618 թ. Կոմիտաս կաթողիկոսը, այդ սրբերի դամբանը բացելով, գտավ նշխարները կնքած ս. Գրիգորի և ս. Սահակի կնիքներ:

¹³² Շր. Ահառյան. Հայոց անձն. բառարան, հատ. Ա, էջ 30:

¹³³ Մ. Օսմանյան. Ազգապատում, § 368:

¹³⁴ Կաղանկատվացի. էջ 311: Օրբելյան, էջ 90—91:

¹³⁵ Անդ.

¹³⁶ Կաղանկատվացի. էջ 98:

րով»¹³⁷, Ակինյանը չի նկատում, որ այստեղ հակասություն կա. սուրբ Գրիգորը չէր կարող կնքած լինել իր իսկ նշխարները պարունակող դամբանը: Սակայն, անկախ այս հակասությունից էլ, ավյալ պարագային մեզ համար երկրորդական նշանակություն ունի նշխարների իսկություն հարցը: Կարևորն այն է, որ պատմական անձնավորություն էր Գարահոջի գիտնավոր երեց Մատթեն՝ ժամանակակիցը Վաշազան թագավորի, ականատեսը նրա եկեղեցաշեն գործերի և մասնակիցը Աղվենի ժողովի: Իսկ եթե այսքանն ընդունում ենք, նշանակում է՝ պետք է հավատանք նաև, որ Վաշազան Բարեպաշտը հեղինակն է Աղվենի ժողովի ու նրա ընդունած կանոնների: Կաղանկատվացու Պատմության մեջ այս բոլորը կա: Եվ Մատթե երեցի գոյությունն է հաստատվում նաև Մ. Չամչյանի հիշած մի վկայությամբ, որի համաձայն՝ Մատթեն էր «աշակերտ երանելուն Յովհաննու Մանդակունուցն»¹³⁸

դ) Ինչպես ն. Ակինյանը, այնպես էլ Ս. Հովհաննիսյանը անտեսում են հոգևորականների ու աշխարհականների այն կոնկրետ անունները, որ կան Վաշազան Բարեպաշտի գործունեությունը ներկայացնող գլուխներում և, միաժամանակ, Աղվենի ժողովի մասնակիցների ցուցակներում: Սա չի կարելի հասկանալ այլ կերպ, քան՝ որ նրանք նույն մարդիկ են երկու դեպքում, որով մի անգամ ևս հաստատվում է, որ Աղվենի ժողովի հեղինակը Վաշազան Բարեպաշտն է: Այդ անուններից են՝ Յովել հոգևորականը (մասունքների գյուտերի նշանավոր կազմակերպիչ) և Աղվենի ժողովի մասնակից, Հաշվա (Հողվա) եպիսկոպոս Հունանը, որ «ի Մազթթաց աշխարհէն էր»¹³⁹, ապա վանացերեց Հակոբը¹⁴⁰:

Աղվենի ժողովի մասնակից աշխարհիկ մեծավորների մեջ ն. Ակինյանի ուշադրությանն է արժանացել Վարդան Քաշը, որի առիթով նա գրում է. «Քաջն Վարդան ի Միհրան տոհմէն» կթև նախագահ եղած է Աղվենի ժողովին, կենթադրե այդ ժողովը գումարված է է դարու կեսին»¹⁴¹:

137 Ակինյանը գրում է, թե, իբր, Կաղանկատվացու երրորդ գրքի ԺԳ գլխում «Մատթե երեց Գարահոջու» կհիշվի նաև Բերդ վանքի մեջ գումարված ժողովին մեջ, 705-ին» (նշվ. աշխ., էջ 555): Սակայն Կաղանկատվացու գրքում արդյուր անդեկություն չկա. և Շամբորի Բերդի վանքում գումարված ժողովի մասնակիցների անունների էլ չեն հիշատակվում (տե՛ս Կաղանկատվացի, էջ 360, իսկ սուս. թարգմ. մեջ՝ էջ 255):

138 Ն. Մ. Չամչյանից, Պատմություն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785., էջ 219: Հովան Մանդակունիի կաթողիկոս է եղել 478—490 թթ.:

139 Կաղանկատվացի, էջ 66, 98:

140 Անդ:

141 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 140:

Պետք է նկատել, որ դեպքերի ժամանակակից, ինչպես վերև ասացինք, նաև մասնակից մատենագիրը չի ասում, թե քաջ Վարդանը Միհրանական տոհմից է: Եվ չի էլ կարող ասել, որովհետև այս տոհմն Աղվանքում ոտք է դրել VII դարի սկզբին¹⁴²: Ապա ժողովի նախագահը, դեպքի ժամանակակից մատենագրի վկայությամբ, ինքը՝ թագավորն է եղել: Հետագայում Միհրանական տոհմը ևս Վարդան Քաջ կոչված ներկայացուցիչ է ունեցել, որի մասին նրա ժամանակակիցը գրել է. «որ շինեաց զբերդն Կարդմանայ զերիս ամս»¹⁴³: Խմբագիր շարահարողը «Պատմության» մեջ երկու Քաջ Վարդան տեսնելով՝ նրանց միացրել է ու ներկայացրել այսպես. «Քաջն Վարդան ի Միհրանական տոհմէն, որ յաւուրս Վաշականայ Աղուանից արքայի յԱղուէն ժողովոյն յարքայէն նախագահ եղեալ...»¹⁴⁴:

Այս երկու «Քաջ Վարդան»-ները նույնը լինել չէին կարող, որովհետև իրարից բաժանված էին ավելի քան մեկ հարյուրամյա ժամանակով: Նաև այն պատճառով, որ Միհրանյան տոհմը նստել էր Գարդմանքում, իսկ Աղվենի ժողովի մասնակից Քաջ Վարդանը կապ չունեք Գարդմանքի հետ: Այն ժամանակ Գարդմանքի տերն էր ժողովի մի այլ մասնակից՝ Խուրսը: Եվ միանգամայն իրավացի էր ն. Ակինյանը¹⁴⁵ (նրան նույնիսկ էլ՝ Ս. Հովհաննիսյանը), երբ Պատմության մեջ սղագագղված «Վարդան Քաջ Գարդմանատէր Խուրս» սխալ կապակցությունն ուղղում-դարձնում էր «Վարդան Քաջ, Գարդմանատէր Խուրս»¹⁴⁶, Վերջինս Գարդմանքի իշխանն այն Խուրսն էր, որ Աղվենի ժողովից ավելի քան կես դար առաջ Մեսրոպ Մաշտոցին դիմավորել էր իր տիրույթում. «ընդ առաջ լինէր նմա ((Մաշտոցին— Ս. Ու.) իշխան Գարդմանից, որում Խուրս կոչէին. և ասպնջական եղեալ նմա աստուածատէր երկիրաժոռութեամբ, ասացի զմեր պանծն վարդապետին, հանդերձն իշխանութեամբն իւրով»¹⁴⁷:

142 Միհրանյանները ծագումով, իբր թե, պարսիկներ էին և Գարդմանք էին ժողովի իրենց թագավոր Խուրսով Փարվեզի վրեժխնդրությունից, իսկ Խուրսովը գահակալել է VII դարի սկզբին (տե՛ս Ան, Հայոց պատմ., հատ. 2, էջ 212—214, 2. Մանուկյան, Քննական տեսություն..., հատ. Բ, Բ մասի նյութիք, էջ 18 են):

143 Կաղանկատվացի, էջ 196:

144 Անդ, էջ 348:

145 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 562. «Գարդմանատէր Խուրս Գերմանուտան, իմացիք Խուրս որդի Գերմանուտի, տեր Գարդմանից: Այս վերականգնումով նորս անգամ երևան կուգա Կորյունի գովությունը իշխանական «իշխան Գարդմանից, որում Խուրսն կոչէին» (ն. Ակինյան):

146 Ս. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 269:

147 Կորյուն, էջ 72:

Խուրսի մասին՝ տե՛ս նաև Խորենացի, Պատմություն Հայոց, էջ 340: Վերջ շարադրածից պարզ է, որ սխալվում էր Կ. Վ. Տրեւերը, երբ հանձին Աղվենի ժողովի

Չմոռանանք նաև պատմական իրականության ամենակարևոր կողմը. մինչև V դարը Ուտիքն ու Արցախը եղել են Հայոց միասնական թագավորության մեջ և ո՛չ կարիք ունեին, ո՛չ էլ կարող էին ինքնուրույն սահմանադրական կանոններ ստեղծել իրենց համար: Այդ կանոնների կարիքը կենսական դարձավ, երբ նրանք պարսկահպատակ մարզի ներսում ստեղծեցին իրենց թագավորությունը և սկսեցին ապրել շատ թեքիչ ինքնուրույն պետական կյանքով:

Այսբանից հետո մնում է եզրակացնել, որ Աղվենի ժողովը զումարվել է V դարի վերջին կամ VI-ի սկզբին, և կանոններն էլ ընդունել է վաշազան Բարեպաշտ Առանշահիկը:

Աղվենի կանոնները՝ երկրամասի սոցիալ-տնտեսական ճարտարապետության հիման վրա Աղվանքի վաղ միջնադարյան հասարակական կյանքի հանգամանքները բացահայտելու փորձեր շատ են եղել: Լեոյի և հատկապես Հ. Մանանդյանի համար Աղվենի կանոնները բանալի էին վաղ միջնադարի հայ ավատական կյանքի փակ դռներից շատերը բացելու համար¹⁴⁸: Այս կանոնների ավելի լայն քննության փորձեր արվել են Ք. Ավդալբեգյանի, Ս. Նրեմյանի, Կ. Տրևերի և այլոց կողմից:

Դատելով կանոնների մեջ գործածված բառերից ու տիտղոսներից և կանոնները քննելով հայկական կյանքի համայնապատկերի տեսանկյունից, Ս. Նրեմյանը գտնում է, որ V դարի Աղվանքն արդեն ավատական կարգերի հաստատման ու ամրապնդման մի թատերաբեմ էր, ուր դեռևս իրենց դիրքերը չէին զիջել ստրկատիրական կարգը, նույնիսկ նախնադարյան համայնական կացութաձևերը, և հիմնական արտադրողներն էլ ստրուկներն էին¹⁴⁹:

Կ. Տրևերն էլ Աղվանքի հասարակական կյանքը պատկերացնում էր որպես ավատական կարգերի տիրապետություն՝ համարյա այնպիսի կացութաձևերով, ինչպիսիք հաստատված էին հարևան Հայաստանում

մասնակից Քաչ Վարդանի տեսնում էր Միհրանի նախնիներից մեկին, որն, իբր թե, ապրել է V դարում (տե՛ս նրա աշխ., էջ 236):

148 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, էջ 153—155 և հոգ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժող. պատմության, հատ. Բ, Բ մասի նյութեր, էջ 252—254 և հոգ. Նրա՝ «Տեղադրված հին Հայաստանում», Երևան, 1934, նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, II (Պետական համալսարանի տեղեկագիր, 1928, № 4) և այլն:

149 Ս. Դ. Երեյան, Экономика и социальный строй Албании III—VII вв., տե՛ս «Очерки истории СССР III—IX вв.», с. 306—307.

ու իրերիսյում, սակայն առանձնահատուկ նրանով, որ, իբր, այնտեղ դեռևս կային տոհմական ու ցեղային միավորումներ¹⁵⁰: Տրևերը քննության ենթակա հասարակության խորքում տեսնում էր նաև գյուղացիական ըմբոստացումներ և դրանք գնահատում իբրև դասակարգային անհամերաշխության դրսևորումներ¹⁵¹: Հետազոտողն, անշուշտ, չափազանցում էր՝ պատմիչի խոսքերի մեջ տեսնելով այնպիսի երևույթ, որի մասին ակնարկ անգամ չկա: Պատմությունը վկայում է միայն այն հակառակությունների (վեճերի) մասին, որոնք գոյություն ունեին «ի մէջ աշխարհականաց և եպիսկոպոսաց և քահանայից, ազատաց և ռամկաց»:

Աղվենի կանոնների ընձեռած տվյալները տարբեր առիթներով իրենց աշխատություններում քննության են ենթարկել նաև Խ. Սամվելյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ:

Նվ, միանգամայն վերջերս այդ կանոնների ու նրանց առնչությամբ՝ ժամանակի հասարակական կյանքի որոշ կողմերի հանգամանալից քննությամբ հանդես է եկել Տ. Զ. Մամեդովան¹⁵²:

Մամեդովայի քննությունն այն առավելությունն ունի, որ ընդհանրացնում է նախորդ հետազոտողների փորձերը և ինքն էլ ջանում է ամբողջական ու սպառիչ խոսք ասել հասարակական այն կարգի մասին, որն իր արտացոլումն է գտել «Աղվանից աշխարհի պատմության» մեջ մեզ հասած՝ վաշազան Բարեպաշտին վերաբերող հատվածում: Ցավոք, այս հետազոտողը ևս, վերջին հաշվով, չի կարողանում հաղթահարել նախորդների սխալ պատկերացումները վաշազանի երկրի և այդ երկրի քաղաքական ու էթնիկական կյանքի մասին: Չնայած ինքը՝ Տ. Մամեդովան, ուսումնասիրության ընթացքում բանիցս զալիս-դեմ է առնում այնպիսի վիճակների, երբ ուզած-չուզած պետք է հօդս ցնդեր հին մուրթությունների ավանդական ծխածածկույթը: Օրինակ, Մամեդովան մեկ առ մեկ քննում է Աղվենի ժողովի մասնակիցներին ու կանոնները հաստատողներին վերաբերող տվյալները և համոզվում, որ այնտեղ ներկա եղած աշխարհիկ տերերն Արցախից են եղել և մեկ էլ Ուտիքից¹⁵³:

Թվում է սրանից էլ ելնելով՝ հետազոտողը պիտի քննության առներ

150 К. В. Тревер, *նշվ. աշխ.*, էջ 185—186:
151 Անդ, էջ 186:
152 Փ. Դժ. Мамедова, Из истории раннефеодальных отношений в Кавказской Албании (на основе материалов церковной истории). «Известия АН Аз. ССР», серия истории, философии, права, 1968, № 2; նույնի՝ Агуэнские каноны 487—488 гг. как источник по социально-экономической истории Кавказской Албании. «Известия АН Аз.ССР», серия истории..., 1964, № 4.
153 Փ. Դժ. Мамедова, Агуэнские каноны, с. 29.

այն հարցը, թե ինչո՞ւ ձախափնյակից կամ բուն Աղվանքից ոչ որ ներկա չէր: Իսկ եթե ներկա չէր, ապա նախորդ հետազոտողների կողմից այս կանոններն ինչո՞ւ են համարվել ալբանական:

Տ. Ջ. Մամեդովան գիտե, որ ինչպես Ստրաբոնի, այնպես էլ Փավստոս Բուզանդի տեղեկությունների համաձայն, դեռ շատ հեռոտ էլ Հովհաննես Դրասխանակերտցու և հատկապես արաբ պատմաբանների վկայություններով՝ ձախափնյա Ալբանիան բազմալեզու ցեղերի մի խառնարան է եղել, ցեղային միությունների երկիր: Մինչդեռ Աղվանքի համար ընդունված Աղվենի կանոնների մեջ այս դրույթունը ոչ մի արտահայտություն չի գտել: «Աղվենի կանոնները չեն վկայում Ալբանիայում բազմակարգութեամբ, տոհմացեղային միությունների, նախնադարյան համայնական կարգի մասին...», — իրավացիորեն եզրակացնում է Տ. Մամեդովան¹⁵⁴:

Ինչո՞վ բացատրել այս ամենը: Թվում է՝ այս հարցը պետք է քննություն անվեր ամբողջ խորությամբ ու լայնությամբ, և այն ժամանակ հետազոտողը չէր կարող շտեմել ու չիմանալ, որ ձախափնյակը ոչ մի բաժին չունի Աղվենի կանոններից, քանի որ կապ էլ չունի այդ կանոններն ընդունողների և նրանց երկրի հետ:

Հետազոտողն այս հարցը քննելու փոխարեն մի այլպիսի խուսափողական պատասխան է տալիս. «...Աղվենի կանոնները, հավանաբար, արտացոլել են տնտեսապես առավել զարգացած այն մարզերի կյանքի առանձին կողմերը, որոնց հասարակական կարգը եղել է առաջատար»¹⁵⁵:

Այնպես է ստացվում, թե Աղվենում բուն Աղվանքի (Կուրի ձախափնյակի) համար օրենսդրական կանոններ են մշակել աշափնյակի տերերը, բայց այնպես են մշակել, որպեսզի այդ կանոնները ո՛չ արտացոլեն ձախափնյակի վիճակը, ո՛չ էլ համապատասխանեն նրա առաջ կանգնած խնդիրներին:

Ահա այսքանից հետո արդեն բոլորովին էլ զարմանալի չէ, կրթ. Տ. Ջ. Մամեդովան սխալ է համարում Ս. Երեմյանի կողմից Վաչագան Բարեպաշտի Աղվանքի և կենտրոնական Հայաստանի հասարակական ու սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների մեջ նկատված համանմանությունները: Մամեդովան գտնում է, որ այսօրինակ քննությամբ՝ Հայաստանի պայմանները տեղափոխվում են Ալբանիա¹⁵⁶, Իսկ այս առթիվ հրատարակված գրքում էլ ցանկանում է իր ընթերցողներին հավա-

տացնել, թե «Աղվանից աշխարհի պատմությունը» նվիրված է «V—VIII դդ. Աղբրեջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կառուցվածքին»¹⁵⁷:

Ո՞ր Ալբանիա: Այն ո՞վ է ասել, թե Վաչագանի աշխարհն Ալբանիա է: Բայց մենք փորձենք ստուգել՝ իսկապե՞ս սխալվում է Ս. Երեմյանը, երբ կենտրոնական Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմանները տեսնում է փոխանցված Հայոց արևելից կողմանք և վերջինիս վիճակն աշխատում է բացահայտել առաջինի օգնությամբ:

Ճիշտ է նկատել ն. Ալիկյանը, թե Աղվենում ընդունած կանոնների մեջ «քանիցս կհիշվի կանոնագիրը... որուն համաձայն կառաչնորդվին»¹⁵⁸,

Իսկապես, ժՆ կանոնում ասվում է՝ «որպես ի կանոնս գրեալ է՝ պատուհաս դիցեն», ԺԶ-ում՝ «կանոնիք դատեսցին», ԻԱ-ում՝ «որ ի կանոնս գրեալ է»:

Այս ի՞նչ կանոնների մասին է խոսքը, որոնք այնքան համապատասխանում են Աղվենի կանոններն ընդունողների պահանջներին, որ նրանք երբեմն պահանջում են հենց նրանցով էլ առաջնորդվել:

Կենտրոնական Հայաստանում, կամ ինչպես մի այլ առիթով ինքը՝ Կաղանկատվացին է ասում՝ «ի միջոցս Հայոց», Աղվենից առաջ եկեղեցական ժողով է գումարվել Շահապիվանում (443 թ.): Այս ժողովի ընդունած կանոնախմբի ու Աղվենում ընդունվածի համեմատությունը ցույց է տալիս, որ նրանց միջև եղածը հասարակ նմանություն կամ ազդեցություն չէ, այլ Աղվենի կանոններից շատերը պարզապես կրկնությունն են Շահապիվանի. երկուսն էլ արդելում են մերձամուսնությունը, եղբոր կնոջ հետ ամուսնանալը, տղամարդու բժաշահ ամուսնալուծությունը, նշխարներ տեղադրելը, մեռելների վրա կոծ դնելը, կախարհություն անելը ու կախարհներին դիմելը, հոգևորականների (քահանայից մինչև եպիսկոպոս) վատ վարքը՝ սովորական գալթանից (մուրովել, սխալանք թույլ տալ) մինչև զոդությունն ու անբարոյականությունը:

Շահապիվանի կանոններից բացի, Վաչագանը նաև հիմք է ընդունել, ինչպես արդեն նշել ենք, պատասխաններն իր այն հարցումների,

157 Փ. Дж. Мамедова, «История албан» Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977. Այս գրքի լակագիտական ու հակադատական էությունը քննությունը տես Բ. Ա. Մլածյան, «Еще одна произвольная интерпретация армянской «Истории страны Арванк» (Ռեմերիք Հայաստանի արխիվները», 1979, № 2, էջ 219—232).

158 «Հանդես ամսօրեայ», 1953, էջ 561:

154 Անդ, էջ 37:

155 Անդ, էջ 36:

156 Անդ, էջ 35—36:

որ հղել էր Մատթե երեցին, եպիսկոպոսներ Աբրահամ Մամիկոնյանին ու Պետրոս Սյունեցուն:

Կանոնների մեջ օգտագործված բոլոր տերմինները հայկական են և արտացոլում են հայ իրականությունը՝ նախարար, ազգապետ, նահապետ, թագավորազն, տանուտեր, ազատ, շինական, աշխարհական, անաշխարհիկ, շեն, ազարակ, վանք, եկեղեցի, սակ, հաս, պտուղ, տասանորդ:

Սա հայ կյանքն է մի երկրամասում, որը, ճիշտ է, բռնի կտրվել է մայր երկրից, սակայն համառ դիմադրողական ուժով ու անհաղթահարելի կենսաստիքով դարձել է մի ինքնուրույն ամբողջական մարմին, որի մեջ անաղարտ պահպանվել են նախկին ամբողջի բոլոր գծերն ու հատկանիշները: Կտրվելուց հետո այն կորցրե՞լ է աղգ-ամբողջի որևէ հատկանիշը: Երբե՞ք: Իսկ այս դեպքում՝ առավել ևս, որովհետև այսպիսի պայմաններում այն ստեղծել է իր թագավորությունն ու օրենքները և ապրում է ինքնահատուկ պետական կյանքով:

Մի՞թե հնարավոր է քննել այս նոր մարմնի օրինաչափությունները՝ առանց հաշվի առնելու նրան ծնունդ տվող համազգային միջավայրն ու ավանդները:

Եվ Ս. Երեմյանը իրոք իրավացի է, երբ Վաչագանի կանոնների մեջ տեսնում է հայկական մի ուրույն աշխարհի հասարակական կյանքի արտացոլումը:

Արդարամտությունը պահանջում է կանգ առնել նաև Աղվենի կանոնների մեջ մտած միակ ոչ հայկական բառի վրա, որը հայագիտության վաղուց է ծանոթ: Սա «խոստակն» է, որի ճիշտ ստուգաբանության առաջնությունը պատկանում է Հ. Հյուբշմանին: Գերմանացի խոշոր հայագետն է, որ սուղյին անգամ «խոստակը» ճանաչել է որպես պարթևական բառ՝ «կալվածք», «ստացվածք» իմաստով, իսկ «խոստակդարը»՝ «ժառանգ», «կալվածառու», այսինքն՝ «կալվածատեր»¹⁵⁹:

Այս փորձից հետո Հ. Մանանդյանը հանգամանորեն որոշել է «խոստակի» մեջ արտահայտություն գտած սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Ըստ Մանանդյանի՝ «խոստակը» համապատասխանում է «Ֆեոդին» և «խոստակդարը»՝ «Ֆեոդալին» (ավատառու, ավատատեր)¹⁶⁰: Միաժամանակ Մանանդյանը համեմատության մեջ է դնում

Աղվենի Զ ու Շահապիվանի Բ կանոնները, գտնում, որ Աղվենի «խոստակը» նույնն է, ինչ Շահապիվանի «հայրենիքը»: Սակայն և այնպես համարում է, որ «հայրենիք» և «հայրենի» տերմինների նշանակության ճշտումը կարոտ է հատուկ ու ավելի մանրամասն քննության:

Ի. Սամվելյանը, համաձայնելով այս բոլորի հետ, միաժամանակ իրավացիորեն ենթադրում է, որ պարսկերեն «խոստակը» նախ մտել է Հայոց արևելից կողմանք, այնտեղից էլ՝ Սյունիք¹⁶¹: Չի կարելի չընդունել այս նկատողությունները, որովհետև «խոստակն» իսկապես առաջին անգամ գործ է ածվել Վաչագանի կողմից, ապա միայն շորս անգամ՝ Սյունիքի IX—X դդ. վավերագրերի մեջ՝ արդեն «խոստակդար» ձևով¹⁶²: Այս ներմուծությունը պիտի բացատրել պարսկական գերիշխանության այն շրջանով, երբ Հայոց արևելից կողմանքը մտնում էր «Աղվանք» պարսկահայատակ մարզի մեջ: Ըստ երևույթին «խոստակը» հենց այս ժամանակ էլ մտել է Հայոց արևելից կողմանք, «այստեղից արձագանք տվել հարևան Սյունիքում, շտաբածվելով այլևս Հայաստանի մյուս մասերում»¹⁶³:

Հայոց արևելից կողմանց հասարակական կազմն ըստ կանոնների.— Աղվենի ժողովին մասնակցել են երկրի աշխարհիկ ու հոգևոր տերերի բարձր ներկայացուցիչները. աշխարհականներից՝ թագավոր և ազատ մարդիկ (ազգապետը, նահապետը), հոգևորականներից՝ եպիսկոպոսներ, բորնպիսկոպոսներ, Լրեցներ: Կանոններում նշված անուններից են՝ դարձյալ ազատները, թագավորազուները (թագատրազն), տանուտերները, շինականները և անաշխարհիկները:

Աշխարհականները բաժանվում էին երկու մասի՝ ազնվականներ (ազատներ) և աշխատավոր ժողովուրդ՝ շինականներ:

Վերջ նշված «ազգապետ» և «նահապետ» բառերի տակ չի կարելի հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ տեսնել: Նրանք, ամենայն հավանականությամբ, ազնվական գերդաստանների զլխավոր-

վածքն է. «...ամենայն արհեստի ստեղծողներն արհեստեցի դեղ յա(մենայն) աշխարհիս՝ տամբ և տեղոք, դարմաք և դաւակօք, դաշտաք և խոստակօք և ամենայն դուրք. ամէն» (տե՛ս «Կանոնագիրք հայոց», Ա, Ե., 1964, էջ XXIV, ծան. № 3):

161 Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 190—191:

162 Ստ. Օրբելյան, էջ 206, 297, 219, 233:

163 Խ. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 191 (ընդգծումը մերն է.—Ր. Ու.): նախորդ էջատակում վկայակոչված ձեռագրական տվյալն սպառնույթ է, որ «խոստակը» ապրածվել է նաև օձայատանի մյուս մասերում, բանի որ այն վկայվել է նաև արևմտահայկական մարզում (Խիզան) ստեղծված ձեռագրի մեջ:

159 H. Hübbschmann, Armenische grammatik, Leipzig, 1895, s. 161 և հոգ.:

160 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, 1934, էջ 104—117: Վ. Լա-

կորյանն իր աշխատասիրած «Կանոնագիրք հայոց»-ում, ի լրումն Հ. Մանանդյանի կարծիքի, վկայակոչում է Մատենադարանի № 4779 (XIV—XV դդ.) ձեռագրում պահպանված մի խոսք, որից կտրելի է եզրակացնել, թե խոստակն անպայման հող-կալ-

ներն էին, որոնք, ըստ ավանդական կենցաղավարության, ներկայացնում էին իրենց գերդաստանների շահերը և հասարակության կողմից էլ քննարկվում որպես այդ գերդաստանների լիիրավ տերեր:

Նախարարները Վաչագանի թագավորության մեջ չեն ներկայանում Արշակունյաց հայ պետության ներսում խաղացած իրենց ազդեցիկ դերով: Այստեղ նրանք միայն թագավորի գործակալներն են տարբեր գավառներում ու քաղաքներում: Այս իրողությունն է վիճարկում հետևյալ տեղեկությունը. «Երթ ի Յոի և ասա գործակալի քաղաքին, որ է հոնկորիկ անուն՝ նախարար յԱղուանից աշխարհէն»¹⁶⁴: «...Գնայր ի քաղաքն Յոի: Եւ գտանէր պետկորիկ, որ էր գործակալ ի քաղաքին»¹⁶⁵: «Նախարարն հոնկորիկ և երկու ևս այլ երիցունքն՝ որք էին ընդ գործակալին»¹⁶⁶:

«Տանուտերն» այստեղ այլ բան չէ, քան գյուղապետը, շենի զխավորը, ժժ կանոնը մեռելի վրա կոծ դնելու համար պարտադրում է՝ գուսաններին և տանուտերին (մեռելատան տիրոջը) կապուտած տանել արքայի դուռը և դաժանորեն պատժել:

Աղատները սեփականատիրական տարբեր մակարդակների վրա էին կանգնած՝ փոքր հողամասի տերերից մինչև գավառների իշխաններն ու նախարարները: Այդ պատճառով էլ կանոնները (Գ, Ե, ԻԱ) թելադրում են, որ նրանցից ամեն մեկը եկեղեցուն նվիրաբերություններ անի իր կարողությունների շահով: «Աղատ» էին կոչվում իշխանները, նահապետները, տանուտերերը, տերերը, նախարարները, մի խոսքով՝ երկրամասի բոլոր ազնվականները, որոնց հողային սեփականությունը ժառանգական էր:

Վիճարկելով Ս. Երեմյանի այն անհամոզիչ վարկածը, ըստ որի՝ «ազատները հեծյալների խավից էին և դաստակերտներ էին ստանում ժամանակավորապես տիրելու համար»¹⁶⁷, — Ց. Մամեդովան էլ իր հերթին է սխալվում, կարծելով, թե, Վաչագանի երկրում, այնուամենայնիվ, եղել են ազատ-հեծյալներ, որոնց տրվող հող-սեփականությունը ժառանգական չէր¹⁶⁸:

Օրկու դեպքում էլ մենք գործ ունենք մի թյուրիմացության հետ, որով հետագա ժամանակների իրողությունը վերագրվում է V դարի Աղ-

վանքին: Հեծյալ-ազատների, ավելի հիշո՞ւ՝ «զինուոր մարդկանց հեծելուց» մասին խոսվում է միայն VII—VIII դարերի սահմանում, Աղվանքի կաթողիկոս Սիմոնի կանոններում:

Վաչագանի կանոնները քննողներից ոմանք գտնում են, որ V դ. Աղվանքում ստրուկներ էլ են եղել՝ որպես հասարակական խավ: Օրինակ, Ս. Երեմյանի կարծիքով՝ կանոններում նշված ազարակները հենց ստրուկների բնակավայրերն էին, ի տարբերություն շեների, որոնց բնակիչներն ազատ հողագործներ էին¹⁶⁹:

Ազարակի ու շենի մասին խոսողը Վաչագանի Թ կանոնն է. «Երէց որ զչէն մեծ պահեսցէ, զայլ շէն մի՛ պահեսցէ. և որ մօտ երկու ազարակի են՝ զմի երէց պահեսցէն, և այնչափ հովուեսցէ երէցն, որչափ առաջնորդել կարիցէ»:

Այստեղից կարելի է եզրակացնել միայն, որ «շենը» մեծ գյուղն է, «ազարակը»՝ փոքր:

Ստրուկների դասի կամ նրանց բնակավայրերի համար հիմք չի կարող հանդիսանալ նաև Վաչագանի ժամանակագրի միակ այն խոսքն ստրուկների մասին, թե երբ կախարդներն ու քուրմերը, մեկ-երկու անգամ խրատվելուց հետո, ձեռք չէին քաշում իրենց զիվային արարքներից, ապա «շարաշար կապանօք և դանիւք ի դուռն արքունի հասուցեալ մեծագոյն պատուհասիւ պատժէր՝ զոմանս խեղդելով, զոմանս շկօթակս առնելով և զոմանս ի ստրկութիւն սղկանելով և պլուովս խրատելով...»¹⁷⁰:

Այստեղ «ստրկությունը» գործ է ածված ոչ իր բուն իմաստով, այլ թերևս՝ բանտարկելու կամ կալանավորելու, որովհետև «ստրկութիւն արկանելով» շատ խրատ են տալիս, որպեսզի ուղղեն:

Շեների ու ազարակների կողքին հիշվում է նաև դաստակերտը, որը, հավանաբար, նշանակում է թագավորի ու խոշոր հողատերերի կալվածք: Դաստակերտների բնակիչները շինականներն էին՝ ավատական հասարակության արտադրողական հիմնական ուժը:

Պետք է կարծել, որ կալվածք-դաստակերտի բնակիչ շինականները հիմնականում կախում ունեին կալվածատեր ազատից, և այս կախումը պետք է զիտել որպես ճորտական իրավունքի դրսևորման մի ձևը:

Այս իրավունքի առկայությունն ավելի ցայտուն արտահայտված է

164 Կաղանկատուացի, էջ 66:

165 Անդ, էջ 67:

166 Անդ, էջ 68:

167 С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении. «ВДИ», 1950, № 1, с. 16.

168 Ф. Мамедова, Агуэские каноны, с. 35.

169 С. Т. Еремян, Экономика и социальный строй Албании, с. 308.

170 Կաղանկատուացի, էջ 60:

Վաչե թագավորին վերաբերող պատմության մեջ: Վաչեն գահը լքելով՝ «հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ՝ հազար երգ»¹⁷¹:

Բնակավայրերում հարկ հավաքողները հատուկ անձնավորութիւններ էին, ըստ երևույթին՝ շինականների ազգեցիկ ներկայացուցիչները, որոնք կոչվում էին «ավագ»։ ՓԳ կանոնում՝ «աւագ շինին կալցէ զմարդոյն (հանցավորի) եղն մի և յերկէցն սացէ»:

Գատելով Աղվենի կանոններից՝ շինականները պետք է որ զանվեին ունեցվածքային տարբեր մակարդակների վրա: Գ կանոնը աշխատավորներին ժողովուրդ է կոչում: Իսկ ժողովրդի մեջ կան ունեւորներ, որոնք պետք է եկեղեցուն տան սահմանված «պտուղ» հարկի տեսակները: Պակաս ունեւորները կարող էին տալ սահմանվածի կեսը: Կային նաև այնպիսիները, որոնք արտ ու այդի չունեին և ազատվում էին «պտուղ» հարկից: Երևի սրանք այն աղքատներն էին, որոնք երբևէն եկեղեցուց էին նյութական օժանդակութիւն ստանում և մեկ էլ թագավորից, երբ սա իր առստ սեղաններից «մատակարէր աղքատաց»¹⁷²:

Վաչագանի ժամանակ հասարակական մի հետաքրքիր խավ էր դոյացել և կոչվում էր «թագաւորագունք», այսինքն՝ թագավորածիններ, թագավորի տոհմի սերունդ: Այս խավին էին պատկանում, ըստ ավանդութեան, Առանից սերվածներն ու նրանց ժառանգները, որոնք ունեին Առանշահիկ տոհմանունը: Նրանք այնքան էին ճշուղավորվել, որ արդեն ամեն մի ճյուղն իր համար ունեւոր և նոր ազգանուն-տոհմանուն. օրինակ, VIII դարի սկզբին այս ճյուղերի մեջ կային Քարոյաններ, Քուրդակյաններ, որոնց անունները տալիս պատմիչն անպայման նշում է, թէ նրանք են «յազգէ թագաւորաց»¹⁷³: VIII դարում Սիոն հայոց կաթողիկոսը՝ Պարտավում գումարած հայտնի ժողովին մասնակցած այդ թագավորագուն Առանշահիկներից հիշում է հետևյալներին՝ «Վարաղ Քուրդակ Վաչագանեան, Վարդան Սատոյեան, Տիրակ Քարոյեան՝ այլովք ազատովք ձերովք»¹⁷⁴:

171 Անդ, էջ 24:

172 Անդ, էջ 73:

173 Անդ, էջ 344: Ն. Ակինյանը, անտեսելով այս բոլորը, կործում է, թն «յազգէ թագաւորաց» պիտի նշանակէ՝ «պարսիկ պարթևներից»: Այդ պատճառով էլ մատենագիրը քաժք (Պարսիկի ի Քարոյեան՝ յարթայից դարմից») դարձնում է «Պարսիկի ի Քարոյեան նախնիք սորա ի յարթայից Պարսից», որ աղավաղում է Առանշահիկների տոհմաբանութիւնը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 559):

174 ՏԵ՛ս «Կանոնի Պարտաւի պաղպիւն ժողովի Սիոնի կաթողիկոսի», աշխատասիրեց Արսեն վ. Այաճեան, Վաղարշապատ, 1905, էջ 13:

Առանշահիկ թագավորագուններն այնքան էին շատացել, որ VII դ. սկզբին Ուտիքի Գարգմանքում բուն դրած Միհրանյանները նրանց տղամարդկանցից նենդութեամբ կոտորեցին՝ նախ տասներկու հոգու, հետո էլ վաթսուներեք միանգամից, և էլի նրանք մնացին իրենց հողի ու երկրի տերը:

Աղվենի կանոնների մեջ թագավորագուններն ազատների շարքում են և նույնիսկ պարտավոր են, մյուսների պես, կատարել իրենց հողու պարտքը՝ նվիրաբերել «ձի թամբօք և սանձիւ, և դինչ կարողութիւն իւր»: Իսկ եթէ կենդանութեան ժամանակ նրանք չեն կատարել իրենց հողու պարտքը, ապա այդ պարտավոր են անել նրանց ընտանիքի անդամները (Կանոն Գ):

Սա ևս այն կամավոր-պարտադիր նվիրաբերութիւններից է, որ աստիճանաբար վեր է ածվում հարկի:

Վաչագան Բարեպաշտի հարկային փառակաւութիւնը և հասարակական կարգապահութեան օրենքները.— Աղվենի կանոնները Հայոց արեւելից կողմանց սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների քննութեան համար բացառիկ արժեք են ներկայացնում: Նրանց մեջ անմիջական արտահայտութիւն են գտել V դարի Արցախի և Ուտիքի հայ բնակչութեան հասարակական կյանքի տարբեր բնագավառներն իրենց ապրկայական դրսևորումներով:

Վաչագանի կանոնները հաստատուն կարգ ու կանոնի սահմանների մեջ են դնում եկեղեցական դասի տարբեր աստիճանների ներկայացուցիչների փոխհարաբերութիւնները: Ընդունվում են պարտադիր հասարակական նորմեր բոլոր մարդկանց համար՝ թագավորագուններից սկսած մինչև ընչազուրկ շինականն ու անաշխարհիկը:

Հասարակարգի կյանքի մասին խոսող ոչ մի փաստաթուղթ չի կարող այնքան առարկայական ներկայացնել այս հասարակարգի ներքին էությունը, որքան ժամանակի հարկային քաղաքականութիւնն արտացոլող փաստաթուղթը:

Վաչագանի կանոններին այդ տեսանկյունից նայելով, նրանց մեջ տեսնում ենք ժամանակի համար զարմանալի մի մտահոգութիւն՝ այնպիսի անել, որպէսզի հասարակական բոլոր խավերն էլ զոհ մնան իրենց վիճակից: Ի՞նչ արժեք հենց միայն շինականից ըստ կարողութեան հարկեր դանձելու կարգը (կանոն Գ), եթէ նկատի առնենք, որ այս ամենն արվում էր Սասանյան Պարսկաստանի հարկային դաժան քաղաքականութեան, կրոնական անլուր հալածանքներին հաջորդած տարիներին, երբ նրանք մի կարճ դադարից հետո վերստին պետք է կրկնվեին, իսկ այնու-

հետև համաճարակի պես պիտի տարածվեր արաբական տիրապետության շուրջ երեքդարյա մղձավանջը:

Վաշազանը, ինչպես քիչ հետո կտեսնենք, փաստորեն հարկատու էր դարձնում նաև ազնվական խավերի ներկայացուցիչներին, նույնիսկ արքայական տոհմից սերվածներին (կանոններ 9, 6):

Հիմա՝ այս հարկերի տեսակների և գանձման եղանակների մասին: Կանոններն սկսվում են եկեղեցուն հատուցվող հարկերով, որոնք, ինչպես ասացինք, պարտադիր են հասարակության բոլոր խավերի համար, բայց նախ և առաջ՝ ցածրաստիճան հոգևորականների, որոնք պարտավոր էին տարեկան մեկ անգամ ընծա տանել այն եպիսկոպոսին, որի քեմում իրենք գտնվում են (կանոն 11):

Եկեղեցու ծառայողին (հոգևորականներին) տալիք հարկը, որ կոչվում է պտուղ, վճարվում է այս կարգով. թվանիկից (կարող մարդուց)՝ տարին «չորս գրի ցորեան, վեց գրի գարի և վեշտասան փաս քաղցու» (շիրա)¹⁷⁵: Աղքատը կարող է տալ հացահատիկի կեսը, գինի՝ որքան կարող է: Իսկ ով արտ ու այգի չունի, նրանից պտուղ չառնել: Նրանք, որ վերը նշածից ավելի կտան, բարության կանեն իրենց հոգու համար, ինչպես Պողոսն է ասում. «Ով առատ ցանի, առատ էլ կհնձի»: Ով ոչխար ունի տանը՝ ռոչխար մի և երեք գզաթ բուրդ և մեկ պանիր», ով ձի ունի տանը՝ «մին յովանակ» (երկի հովատակ), իսկ ով տավար ունի՝ մի հորթ¹⁷⁶:

«Պտուղը» նախապես մեկն էր հավատացյալների ինքնակամ այն ընծայաբերություններից, որոնք եկեղեցուն ու հոգևորականին էին մատուցվում առաջին բերքից (ըստ Աղվենի կանոնի՝ նաև մրգահասից, խնչպես նաև անասուններից): Ժամանակի հետ այս ընծայաբերությունը դարձավ պարտադիր տուրք¹⁷⁷: Ըստ երևույթին Վաշազան Բարեպաշտի ժամանակն անցման այն փուլն էր, երբ, ինչպես հեզնող ժողովուրդն է ասում, նվիրագործվում էր ընծայաբերության կամավոր-պարտադիր լինելը:

Այնպատվորներից գանձվող այնպիսի հարկատեսակներ, ինչպես հասը, սակը, տասանորդը, պտուղը, այս կանոններում շոշափելիության շափ առարկայական են ու ընթերցողի առաջ բաց են անում հասարակու-

¹⁷⁵ «Թվանիկ» պարսկերենում նշանակել է՝ լիիրավ, կարող, հարկընդունակ (տե՛ս А. Перихаян, Сасанидский судебник, с. 49):

¹⁷⁶ Կաղանկատուացի, էջ 99:

¹⁷⁷ Տե՛ս «Армянский судебник Мхитара Гоша», Ереван, 1954, с. 246 (ժանոթագրություն 152):

թյան շահագործական մեքենայի օգակները, պարզորոշ խոսում շահագործման եղանակների ու ձևերի մասին:

Թագ. Աղվալբեգյանը, «Հայոց կանոնագրքի» և Վաշազանի կանոնների հիմքի վրա հանգամանորեն ուսումնասիրել է «հաս» հարկը՝ գալով այն եզրակացության, որ, չնայած այն տրվում էր հիմնականում եկեղեցուն, ըստ էության «միայն եկեղեցական տնտեսության չի վերաբերում: Անկասկած այն մտել է աշխարհիկ տնտեսությունից... «Հասը» «հասնել» բայի արմատն է»¹⁷⁸, և «...հաս կարող է կոչվել ոչ միայն եկեղեցուն հասանելիքը, այլև այն, ինչ որ հասնում է պետությանը: Եվ որովհետև պետությանը բարիքներ ու արժեքներ հասնում են գլխավորապես հարկերի ձևով, ուստի պետության հասերը գլխավորապես հարկերն են: Սրևույթների ու գաղափարների այս կապակցությամբ հաս ու հարկ բառերը գործ են ածվում իբրև եթի ոչ նույնանիշ, գոնե հոմանիշ»¹⁷⁹:

Մեզ թվում է՝ ականավոր հայագետը, միանգամայն ճիշտ սկսելով «հասի» բացատրությունը, վերջում անտեղի է նույնացնում «հասն» ու «հարկն» առհասարակ, որովհետև, եթե նրանք նույնական լինեին, այն ժամանակ «հասի» կողքին այլևս չէին թվարկվի հարկի մյուս տեսակների անունները: Եվ ապա՝ չէ՞ որ ներկա դեպքում Աղվենի կանոններից համաձայն «հաս» տվել են միայն եկեղեցուն (կանոն 6 է): Պետք է կարծել, որ «հասը» եղել է միայն հողից գանձվող հասանելիք-հարկը:

Աղվենի կանոններով նյութական ու բարոյական ապահով, արտոնյալ վիճակ է ստեղծվում եկեղեցու և եկեղեցականների համար, սակայն միայն այն դեպքում, եթե նրանք իրենց կոշման բարձրության վրա են: Ապա թե ոչ, ժողովրդին իրավունք է տրվում ձեռք առնել խստագույն միջոցներ: Օրինակ, եթե վարդապետը կամ վանականը կատարի անբարոյական որևէ քայլ («գայթանք առնէ»), և այդ քայլը բացվի, ժողովրդին իրավունք է տրվում խայտառակել նրան, դուրս քշել պաշտոնից և խոստակ-կալվածքն էլ վերադարձնել եկեղեցուն¹⁸⁰:

Այս կանոնից պարզ է դառնում, որ խոստակ-հող-կալվածքը, որքան էլ տրվի հոգևորականին, մնում է եկեղեցու սեփականությունը: Պարզապես այն հոգևոր պաշտոնի վերադրի պես մի բան է. նրա հետ միասին տրվել է, նրա հետ էլ ետ կվերցվի, եթե հոգևորականն անարժան գտնվի իր պաշտոնին: Այլ խոսքով, խոստակը տրվում էր օգտագործման՝ ո՛չ

¹⁷⁸ Թաղևուս Աղվալբեգյան, Հաս, Սակ ու Բաժ. տե՛ս նրա՝ «Հայագրական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 369:

¹⁷⁹ Անգ, էջ 370:

¹⁸⁰ Կաղանկատուացի, էջ 99:

ժառանգարար տիրելու իրավունքով, հետևապես՝ խոստակը ժառանգական սեփականություն չէր¹⁸¹։

Հասարակական կյանքի համար ընդունված նորմերից հետաքրքիր են ամուսնական հարաբերություններին վերաբերող կանոնները, որոնք արգելում են ամուսնանալ մերձավոր ազգական աղջկա (մինչև երրորդ սերունդը) կամ եղբոր կնոջ հետ (կանոն Ժ), մահվան են դատապարտում նրանց, ովքեր առանց որևէ պատճառի կնոջը լքում են կամ անպսակ ամուսնանում, մարդ են սպանում կամ դիմում են վճռակներին։ Ահա այդ կանոնը (ԺԱ)։ «Եւ որ զկին թողու առանց պատճառանաց, և որ առանց պսակի կին առնէ, և որ անօրեն և մարդասպան է, կամ զգէտս հարցանէ, զաչնպիսին կապեալ ի դուռն արքունիս տարցեն և դառն մահ ի վերադիցեն»։

«Ով կնոջը թողնում է առանց պատճառների, և ով կին է առնում առանց պսակի, ով անօրեն ու մարդասպան է կամ դիմում է կախարդներին, պետք է այգպիսինին (այգպիսիններին) կապոտած տանել թագավորի դուռը և տանջամահ անել»¹⁸²։

Մաղաքիա Օրմանյանը գտնում էր, որ այստեղ «կնաթողությունը և ապօրեն կենակցությունը արտաքին դատարանի կենթարկվելու «Առանց պատճառանաց» բացատրությունը, թեպետ անորոշ, հարկավ չի կրնար անձնական դատողությունն կախում ունեցող պատճառանքի վրա մեկնրվել, քանի որ ամեն առիթի մեջ կրնան այսպիսի պատճառանքներ ստեղծվիլ։ Հետևաբար մենք այդ կանոնի մեջ լուեյլայն ենթարկված կտեսնենք եկեղեցական ատյանի քննությանը և որոշմամբ կատարված ամուսնալուծության դրությունը»¹⁸²։

Դժվար է համաձայնել հայոց եկեղեցու և նրա պատմության քաջ գիտակի այս դատողության հետ։ Օրմանյանը մոտանում է, որ այս ու նման ուրիշ կանոններով Վաչագանը ոչ թե նպատակ ուներ կնաթողության ու ապօրեն կենակցության համար արդարացուցիչ պատճառներ հորինելու հնարավորություն տալ մեղսագործներին կամ նրանց կարեկցողներին, այլ այս ծանրագույն հանցանքների քննությունը վերապահում էր գերագույն դատավորին՝ երկրի թագավորին։

Կանոնների մեջ կարգ է սահմանվում եկեղեցի հաճախելու համար,

181 Հատ Ա. Փերիխանյանի բացատրության՝ պարս. «xvastac»-ը նշանակել է անարկա, սեփականություն, ունեցվածք (նույնիսկ փող) անհասարակ (տե՛ս «Сасанидский судбник», с. 546—547)։

182 Մ. աղԲ. Օրմանյան, Ազգայնագիտություն, § 347։

որի համաձայն՝ տերն ու ծառան միայն կիրակի օրերը կարող են միասին աղոթքի գնալ։

Փէ կանոնն արձանագրում է հոգևորականների ու աշխարհիկ մեծավորների վեճը՝ եկեղեցիները վանքերի վերածելու վերաբերյալ։

Այս վեճը, ինչպես Նեոն է բացատրում, «ցույց է տալիս... թե Աղվանից երկրում այն ժամանակներն արդեն վանքերը կազմում էին աշխարհականների սեփականություն և նրանց համար արդյունքի (եկամտի—Վ. Ու.) աղբյուր էին, մի դրություն, որ գոյություն ուներ ընդհանուր եկեղեցու ծոցում... Որ այս գանգատը հենց այդ դրությունն էր մատնանշում, ցույց է տալիս ժողովի վեճը.— թողնել վանք դարձրած եկեղեցիներն իրենց նախկին դրության մեջ, իսկ նրանցից ստացած արդյունքները հատկացնել գլխավոր եկեղեցուն»¹⁸³։

ԺԹ կանոնը, ի միջի այլոց, խոսում է հասարակական մի դասի մասին, որ այդ ժամանակներում արդեն նորություն էր՝ անաշխարհիկների դասը կիրակի օրերին «տէրն և ծառա ի վսամ յեկեղեցին երթիցեն յաղօթս», և նրանց հետ էլ՝ «անաշխարհիկն զհոգեցատուրն յեկեղեցին տացէ»։

Մինչև հիմա ուսումնասիրողները զանազան բացատրություններ են տվել «անաշխարհիկ» բառին։ Ք. Պատկանյանն այն թարգմանել է որպես «օտարական» («чужестранец»)՝¹⁸⁴։ Ն. Վ. Պիգուլևսկայան¹⁸⁵ ու Ա. Փերիխանյանը¹⁸⁶ բացատրել են որպես «ստրուկներ» — «տաղմագերիներ», որոնք արդեն կտրված են իրենց նախկին հողից և կապված մի նոր հողի ու երկրի՝ որպես այս հողի տիրոջ սեփականությունը։ Ֆ. Զ. Մամեդովան մեղծում է վերջին բացատրությունը և ճիշտ է համարում Ք. Պատկանյանի թարգմանությունը, գտնելով, որ «անաշխարհիկն», ըստ Աղվանի կանոնների, Աղվանից աշխարհում պարտավոր է հաճախել գլխավոր եկեղեցին և իր հանգուցյալների հոգեցատուրը մատուցել այստեղ։ Գլխավոր եկեղեցին էլ այսպիսի հոգեցատուրներին նայում էր որպես մի հավելյալ եկամտի¹⁸⁷։

Այս բոլորը, իհարկե, առանձին-առանձին կարող էին հետադուստ-

183 Ան, Հայոց պատմություն, հ. II, էջ 155։

184 «История Агван», с. 342.

185 Н. В. Пигулевская, зарождение феодализма в Иране, М., 1965, с. 12—14.

186 А. Периханян, К вопросу о рабовладении и землевладении в Иране Парфиянского времени, ВДИ, 1952, № 2, с. 16—18.

187 Ф. Мамедова, Из истории раннефеодальных отношений в Кавказской Албании, с. 94.

կան հետաքրքրություն ներկայացնել, եթե չլիներ «անաշխարհիկի» հանրահայտ այն իմաստը, որով բանն օգտագործված է այստեղ. «աշխարհից՝ աշխարհական կյանքից հրաժարված: Անաշխարհիկ կրոնավոր»¹⁸⁸. Ք. Պատկանյանն ու Յ. Մամեդովան «անաշխարհիկի» մեջ տեսել են պարթևական «անաշխարհիկի» («օտարական», «պանդուխտ», «երթդեհ») աղավաղված ու հենց այսպես էլ տարածված ձևը, որ խորթ չէ հայերենին¹⁸⁹. Բայց օտարականը որտեղից՞ պիտի հոգեցատուր մատուցեր եկեղեցուն և այն էլ՝ սպասելով կիրակի օրվան:

Ոչ մի կերպ չի կարելի համաձայնել նաև Ն. Պիպուկևիկայայի ու Ա. Փերիխանյանի հետ՝ այն պատճառով, որ «անաշխարհիկը» հայերենում երբեք «ստրուկ» իմաստ չի ունեցել, «ռազմագերի»՝ հատկապես: Մանավանդ, որ վաշագան Բարեպաշտի երկրում տոհմասարակ ռազմագերիներ չէին կարող լինել, որպեսզի նրանց մասին էլ թագավորն օրենք ընդուներ:

Վաշագանի ընդունած օրենքի մեջ խոսքը վերաբերում է «անաշխարհիկ» կրոնավորներին, որոնք, ամենայն հավանականությամբ, արդեն այնքան շատ էին, որ առանձին դաս էին կազմում: Մրանք ճղնավորները, անապատականներն ու միայնակյացներն էին, որոնց մասին ուրիշ առիթներով շատ է խոսում Վաշագանի ժամանակագիրը: Նրանք չէին կապված առանձին եկեղեցիների հետ, մանավանդ այն եկեղեցիների, որոնք պատկանում էին աղատներին: Այդ պատճառով էլ թագավորն անաշխարհիկներին պարտավորեցնում է կիրակի օրերը հաճախել «վսամ (զլխավոր, կենտրոնական) եկեղեցին»¹⁹⁰ և հոգեցատուրը մատուցել նրան:

Վերջում արժև ուշադրություն դարձնել նաև մի կարևոր հանգամանքի վրա: Մինչև վերջին ժամանակներս հայազիտության մեջ իշխում էր այն կարծիքը, թե միջնադարի հայ եկեղեցիի երկրում տնօրինելիս է եղել դատական բոլոր գործերը, թե ղերագույն դատավոր է եղել հայրապետ-կաթողիկոսը, իսկ աշխարհիկ տերերը կամ դատական իշխանություն չեն ունեցել, կամ էլ դա այնքան թույլ է եղել, որ, իբր, աղբյուր-

ները չեն էլ հիշել: Այսքանը համարվել է եկեղեցու համար ոչ միայն բարոյաքաղաքական վեհագույն հեղինակություն ապահովելու հարց, այլև հակայական եկամուտների աղբյուր¹⁹¹:

Վերջերս հետազոտող Խոսրով Քորոսյանը մատենագրական ու այլ հարուստ փաստերի հիման վրա ցույց է տվել, որ դատավարությունը միջնադարյան Հայաստանում բոլորովին էլ հոգևոր դասի առանձնաշնորհը չի եղել, ավելին՝ որ «եկեղեցական զատարանը ղբաղվել է գերազանցապես եկեղեցու և հոգևորականության հետ կապված գործերով: Աշխարհական գործերի խիստ նեղ ընդգրկումն է ընդդատյա եղել նրան, սահմանափակված առավելապես ընտանիքի ու ամուսնության իրավունքով և քաղաքացիական իրավունքի մի մասով»¹⁹²:

Վաշագան Բարեպաշտի կանոնները կսաստատում են Խ. Քորոսյանի արժեքավոր ուսումնասիրության եզրակացությունը: Ինչպես հայոց միջնաշխարհում ընդունված օրենքները (Գվինի, Շահապիվանի և Պարտավի ժողովների կանոնները), այնպես էլ VIII դարի սկզբին Ազգանքի կաթողիկոս Սիմոնի ընդունածները, հիմնականում ուղղված էին եկեղեցու այդ իրավունքներն ու ներքին կարգն ամրապնդելուն և հաստատ պահելուն:

Վաշագան Բարեպաշտի կանոնները, ճիշտ է, օրինականացնում էին եկեղեցու և նրա տնօրենների իրավունքները, բայց և միաժամանակ ընդգծում էին աշխարհիկ տերերի պարտականություններն ու իրավունքները երկրի կառավարման և օրենքների պահպանման գործում: Եվ այսքանից հետո էլ արքունիքին էին վերապահում երկրի ներքին կյանքի ամենակարևոր գործոնը՝ դատելու ղերագույն իրավունքը:

Վաշագանի կանոնների համաձայն՝ հոգևորականներն իրավունք ունեն իրենց հոտի ներկայացուցիչներին միայն հասարակական սյրատավանքի ենթարկել մանր զանցանքների համար¹⁹³: Ծախսկոպոսներին է վերապահվում անարյուն պատիժներ տալու իրավունքը¹⁹⁴ («Քրիստոնյա մարդ, որ կուռի և արիւն հեղու, տարցնն սուաշի կախկոպոսին և

188 Ստ. Մախաչյանց, Հայերեն բուցատրական բառարան, հ. Ա, էջ 88.
189 Այս առիթով բնագրակ տե՛ս Շր. Անտոյան, ՀԱԲ, հ. Ա, էջ 285—286; Տե՛ս նաև՝ Ա. Периханян, Сасанидский судейник, с. 436: «раб, рабыня»... букв. «чужестранец».
190 «Վսամ» Ն. Ազոնցր բացատրում է որպես «փեմ», «բարձր», «բուն», «մեծ» (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», էջ 402): նկատի առնելով, որ կանոններում այդ բառերն իսկապես փոխարինում են միմյանց, պետք է ընդունել այս մեկնաբանությունը:

191 Այս կարծիքին են եղել Վ. Բաստամյանցը, Ա. Գարագաշյանը, Ն. Ազոնցր, Խ. Սահակյանը (աշխատությունների ցանկը տե՛ս Խոսրով Քորոսյան, Բնագրատությունը միջնադարյան Հայաստանում. «Բանբեր Մատենադարանի», 1967, № 8, էջ 79), Ինչպես նաև՝ Լուանդ Ք. Արմեն, Հայկական Գերագույն ատեան, Վսամի Սիւնի (ամբաստանակալ), Պեյրութ, 1969, էջ 58 և հոգո:
192 Խ. Քորոսյան, նշվ. հոգվածը, էջ 91:
193 Կազանկատուացի, էջ 100, կանոն ԺԳ:
194 Անդ. տե՛ս նաև՝ կանոն ԺԾ, Ի, ԻԿ:

ըստ օրինացն պատուհասեցեն»¹⁹⁵։ Սակայն ծանրագույն պատիժները վճիռներ կարող է հանել միայն թագավորը։ Այսպիսի պատիժների ենթականերին «կապեալ՝ ի դուռն արքունի տարցեն և դառը մահ ի վերայ դիցեն»¹⁹⁶։

Թագավորն էր օրենքներ սահմանողը, և երկրի ներսում բոլոր ազատներն ու արքայազունները, հոգևորականներն ու աշխարհականները պարտավոր էին խոնարհարար ենթարկվել արքունիքի ընդունած ամեն մի վճռին։

Ուշագրավ է նաև, որ այս կանոններն ընդունում են ժողովի բոլոր մասնակիցները, ինչպես աշխարհական դասերի, այնպես էլ հոգևորականության ներկայացուցիչները («Ձայս պայմանս արարին եպիսկոպոսն և քահանայք և ազատ մարդիկ առաջի արքային»), սակայն իրենց մատանիներով հաստատում են միայն երկրի աշխարհիկ տերերը. «Եւ զայս հրամանս մատանեցին Մուծիկ՝ արքայի հրամանատար, Միրհաւրիկ հազարապետ, ազգապետք Մարութ, Տիրազգ, Ասպրակոս, Շամայ, Բակուր, Առատան, Արշէս (երևի Արտաշէս), Վարդան Քաջ, Գարդմանատէր Խուրս Գերմանոսեան, Խոսրոսեան Փիրոզ նահապետ, և ամենայն ազատք Աղուանից։ Վասն առաւել (հաստատութեան) գրոյս Վաշականայ արքային Աղուանից մատանին եղաւ ի վերայ»¹⁹⁷։

* * *

Ո՞րն էր, այսքանից հետո, V դարի վերջին Հայոց արևելից կողմանց պետական ու սոցիալ-տնտեսական կյանքի մոտավոր պատկերը։

Վաշազան Բարեպաշտի ժամանակագիրը մեզ շատ է օգնում, և Աղվենի կանոններն էլ բացառիկ հարուստ նյութ են տալիս՝ այդ պատկերն իր ընդհանուր գծերով ներկայացնելու համար։

Փոքրիկ մի թագավորություն, որի միապետն իր երկրի տնտեսական ու լուսավորական առաջընթացի եռանդաշատ կազմակերպիչն է։ Նա պատրաստ է խստադույնս պատժել կարգադանցներին ու մանկան անմիջականությամբ երջանկանալ իր երկրի ամենափոքր հառաջադիմությունները։

Բնակչությունը՝ շար բախտով զատված մայր ամբողջից, մեծ փոթորիկների ու մակընթացությունների դադարին փարվել է կարճատև մի

տեղատվության, լծվել մայրենի գրի ու լուսավորության խանդավառ գործին, մայրենի լեզվով աղոթում է իր աստծուն և երկնառաք պարզ և համարում հարազատ արքայի ստեղծած կարգ ու կանոնը՝ դրսից դարեր շարքիված, ներսից կոշտ ու անհանգիստ իր երկրի վրա։

Եթե շատ են հարկերը, ապա իրեն սփոփում է նրանով, որ աստուծոց է սահմանված կարգը՝ բոլորն են հարկատու, թագավորազուններից մինչև վերջին շինականը։

Գաժա՞ն են պատիժները։ Գարձյալ կա սփոփիչ մի բան՝ պատժողների առաջ բոլորը մեկ են ու հավասար, իշխանավոր թե շինական։

Ուրիշ հարցեր դեռ չի քննում աստվածավախ նրա միտքը։

Բանակի մասին խոսք չկա այս երկրում։ Կարծես հովվերգական մի անկյունն է աշխարհի, ուր կարելի է ապրել՝ միայն հողի վրա բերք ու բարիք աճեցնելով, Ամարասի ու Հոռեկա, Ջրվշտիկի ու Գյուտականի վանքեր կառուցելով, դպրատներում մայրենի բարբառը հեզելով և հարսպատ աստծուն ջերմեռանդ աղոթելով։

Երջանիկ հեքիաթի է նման այս բոլորը։

Եվ այստեղ լուռ է ժամանակագիրը, որովհետև նրա պատմածը հեքիաթ չէր, որ ավարտվեր քաղցրիկ մի խաբկանքով...

Իսկ Վաշազան Բարեպաշտի թագավորությունն ընկած էր մեծ ու փոքր գիշատիչների ճամփաբաժանի վրա։

* * *

Աղվենի ժողովի կանոնների մեջբերումով էլ Աղվանից պատմությունն ավարտում է իր խոսքը Վաշազան Բարեպաշտի թագավորության մասին։ Պիտի ենթադրել, որ Աղվենի ժողովից հետո երկրում ավելի խաղաղ ու բարվոք վիճակ է եղել, որովհետև չկային արտաքին հարձակումներ, և ներքին խլրտումներն ու տրտուներն էլ վերացված էին Աղվենում ընդունված օրենքներով։

Վաշազան Բարեպաշտը Հայոց Աղվանքի հայկազուն Առանշահիկ տերերի լավագույն ներկայացուցիչն էր, այն քաջամիտ ու հայրենասեր իշխողը, որ կարողացավ երկրի ազգային ոգին աննախընթաց բարձրության հասցնել, ըստ ամենայնի օգտվելով և՛ նախնիների թողած ավանդներից, և՛ իր ժամանակի բարենպաստ պայմաններից։

Նա դաստիարակվել էր Պատմահայր Խորենացու և Փափստոս Բուզանդի մատյանների վրա, նրանց հայրենասիրական կրակներից ջերմացել և նրանցից առել իր գործունեության ծրագիրը։ Այդ նրանց լուռ թելա-

195 Անդ, Կանոն Ը։

196 Անդ, Կանոն ԺԱ։

197 Կաղանկատուացի, էջ 103։

դրությամբ էր, որ Բարեպաշտ թագավորը վեր հանեց իր հայրենիքի առաջին լուսավորիչ Գրիգորիսի փառքը, շնորհակալով նաև նրա մեծանուն պապին, հայոց մյուս սրբերին ու սրբությունները: Եվ այս ամենով բորբոքեց լուսավորչական հավատի համաժողովրդական կրակը, ամենուր հայալեզու դպրոցներ բացեց, թղթերով ու անձնական-անմիջական կապերով անբաժան մնաց մայր հայրենիքի հասարակական-կրոնական կյանքից և, ազգակից իմաստուններից դասեր առնելով, իր երկիրը դեկավարեց որպես ժամանակի ամենաառաջավոր պետական գործիչներից մեկը:

Մատենագրական վկայությունների մեջ, հանձին Վաչագան թագավորի, չի կարելի շտեմել հավասարակշիռ դիվանադեմոստրացիոն նա իր երկրի ներքին կյանքը կարգավորելիս չէր մոռանում նաև հարաբերությունները դրսի հետ: Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններից իմանում ենք, որ Վաչագան թագավորն իր աղջկան կնություն էր տվել Պարսից թագավորի եղբոր Արլ-Աբաս որդուն: Սա սրդեն քրիստոնեություն էր բնորոնել և ապրում էր Մեծ Սյունյաց նահանգում, «երկրորդ Երուսաղեմ» կոչված վանքի մոտ: Վաչագան թագավորի խնդրանքով Սյունիքի իշխանը հինգ գյուղ էր տվել նրան ու նրա փեսային: Հենց այստեղ Բարեպաշտում (Քաշունիք) մահանում են Վաչագանն ու փեսան: Ապա «թոռն վրամ-Շապուհ» գալ բազում զորք և յանկարծ մտան էլ ի վանքն յառաւօտուն, և կոտորէ վկրոնաւորսն. և զաւագագոյնսն կապեն, քանզեն դեկեղեցին և յատակեն, և զքարն արկանեն ի գետն»¹⁹⁸:

Այստեղ, Վաչագան թագավորի ու նրա փեսայի՝ մինչև հիմա անհասկանալի մնացած մահվան մեջ, հուվանաբար, դարձյալ առկա է Պարսից արքունիքի դիվային քաղաքականության շրջափուլը: Այս պարագան առավել հասկանալի է դառնում, հենց որ նկատի ենք առնում ժամանակը: Պարսից արքունիքը ոչ մի դեպքում չէր կարող հրաժարվել հյուսիսային կողմերի հպատակ երկրների հանդեպ դարեր փայփայած իր հավակնություններից: Այդ հավակնությունների դեմ, պարզ է, որ բարձրանում էր Վաչագան թագավորն իր լուսավորչական ու լուսավորչական խոշոր միջոցառումներով, ազգապաշտպան լայնահուն գործունեությամբ ու վիթխարի հեղինակությամբ:

Պարսկական բռնապետությունը հպատակ երկրում չէր հանդուրժի Վաչագան Բարեպաշտի նման մի թագավորի, ինչքան էլ որ նախապես խոստացած լիներ լմիջամտել նրա հավատին ու ներքին գործերին: Մի

դար հետո նա գործի գրեց իր նպատակների իրագործման նոր եղանակը. Աղվանից աշխարհ ուղարկեց պարսիկ մի գաղթականություն, որի խընդիրն էր մեկընդմիջտ վերջ դնել երկրի հարազատ տերերին, որպեսզի իրանից հետո Պարսկաստանը կարողանա անարգել կերպով իրականացնել ապիմիլլատորական ու քաղաքական իր նպատակները:

Սակայն Առանշահիկ հայկազուն թագավորական տոհմը, ինչպես հետագայում կտեսնենք, որքան էլ զոհեր տվեց, որքան էլ ճնշվեց հարավից ու հյուսիսից պարբերաբար եկող օտարներից, մնաց անզրգվելի իր լեռնաստանում՝ ինչպես արժատները հարազատ հողի մեջ խրած դարավոր կաղնիք:

Նրա ձեռքում մնաց սովանդական Արցախամուր աշխարհը: Առանշահիկների կենտրոնն էր սա: Ինչպես տեսանք, Վաչագանն ու նրա նախորդները, թեպետ Հայոց արևելից կողմանց լիիրավ տերերն էին, այնուամենայնիվ, առավելապես Արցախի հետ էին կապված իրենց ողջ գործունեությամբ, Արցախն էր նրանց օրրանն ու քաղաքական մշակութային միջոցառումների կենտրոնը: Հայտնի է, որ V դարի հիսնականների վերջին Վաչեն մարզպանի համար կառուցել էր Պարտավ մայրաքաղաքը, որը շատ շուտով դարձավ Անդրկովկասի խոշորագույն կենտրոններից մեկը: Սակայն երկրի տեր Վաչագան Բարեպաշտն, այդ մայրաքաղաքը թողած, ապրում էր Արցախական աշխարհում գտնվող իր Գյուտական գյուղում: Նա Արցախում կառուցեց ամենանշանավոր վանքերն ու եկեղեցիները¹⁹⁹, մատուռներն ու սրբավայրերը: Եվ, առաջին հերթին, դարձյալ այստեղ ծավալեց սրբազան մասունքները փառաբանելու, դպրատներ ստեղծելու իր ջերմեռանդ գործունեությունը: Պատահական չէ, որ նա թաղված է հենց Արցախում իր կառուցած վանքերից մեկի կողքին (Զրվշտիկ կամ Եղիշառաբյալ), իր հիշատակին կառուցված մատուռի մեջ. «Մատրան մեջ... կա Աղուանից Գ. Վաչագան թագավորի գերեզմանը, որի վրա ձգված է մի եռանկյունի տապանաքար, որ պատրաստված է մի առանձին խնամքով և հղկված... — գրում է Մ. Բարխուտարյանցը — Մատրանս... դրան ճակատակալ քարի վրա քանդակված է. «Այս է հանգիստ Վաչական թագաւորին: Աստուած ողորմի Հայրապետայ և ոչր (յուր) ծնողացն, որ շինեց զեկեղեցիս առաջնորդութիւն տէր Աիմանի թիւ ԶԼԵ (1286) էր»²⁰⁰,

Պարզ է, որ մատուռ-եկեղեցին կառուցվել է Վաչագան Բարեպաշտի զերեզմանի վրա՝ նրա մահից ավելի քան վեց ու կես դար հետո:

¹⁹⁹ Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հատ. Ա, էջ 193:

²⁰⁰ Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 235—236:

VI ԳԱՐԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Վ. Յուշկովն Առանշահիկների պատական իշխանությունը համարում էր հայոց երբեմնի մեծ ու հզոր պետության մի բնկորը, որը, թեևուզ և կախյալ վիճակում, ապրում էր պետական ինքնահատուկ կյանքով՝ և ամեն պարագայի փորձում էր իր ոգորումի ջերմությունը խառնել համազգային անշեշ կրակին: Այդ իշխանական-թագավորական տան զոյությունը նման էր նաև մոխիրների տակ պահված կրակի, որը պատրաստ է ամեն մի մեղմ քամուց վերստին բորբոքվել:

Սակայն դաժան ժամանակներն ալելի շատ ջուր ու կարկուտ էին թափում պատահական այդ մեղմ քամիներից հետո:

Վաչագան Բարեպաշտի թագավորության առեղծվածային վախճանին հաջորդեց նույնչափ առեղծվածային մի ամբողջ դար, որն այսօր մշուշի պես նստած է Հայոց արևելից կողմանց պատմության այդ հատվածի վրա, և հետազոտողը ոչ մի հնարավորություն չունի բաց անելու մեկ դարու պատմության ծալքերը:

Ճիշտն ասած, համարյա նման վիճակ է տիրում նաև ամբողջ հայ ժողովրդի, հատկապես նրա արևելյան մասի VI դարի պատմության քննազավառում: Քիչ տեղեկություններ կան ժողովրդի կյանքի, նրա մղած ազատամարտերի և ստեղծած մշակութային միջավայրի մասին: Եվ այդ քիչն էլ մեծ մասամբ ներկայացվում է եկեղեցական կյանքում տեղի ունեցած ճակատագրական միջոցառումների հետ ունեցած աղերսների մեջ:

«Աղվանից աշխարհի պատմության» X դարի շարահարողը ծանր կացության մեջ է եղել իր երկրամասի VI դարի իրականության վերաբերմամբ: Նրա ձեռքի տակ եղել են ժամանակագրություններ V դարի վերջի—VI-ի սկզբի մասին (Վաչագան Բարեպաշտի գործունեությունը) և

մեկ էլ VII դարից՝ Վիրոյի ժամանակագրությունն ու Միհրանյանների տոհմի մասին խոսող վավերագրերը: VI դարը նրա համար թերևս ալելի մութ է եղել, քան այսօր մեզ համար: Այդ պատճառով էլ նա, V դարի հետ իր հաշիվները փակելուց հետո, ստիպված էր գնալ նախորդ դարերը, ժամանակագրական ճեղքը լցնել եկեղեցական հին պատմությամբ (Դիզափայտի նահատակների մասին, IV դար), վերստին պատմել Մաշտոցի գործունեությունը (V դար), խաղրաց արշավանքներից (VII դար) խոսելիս կցկտուր տեղեկություններ վերագրել VI դարին...

Այսպիսին էր հայոց պատմագրության վիճակը: Քաղաքական հեղհեղուկ դրությունը, օտարների պարբերական ասպատակություններն ու ավեր-ավարը թույլ չէին տալիս, որ սերունդ-սերնդի վրա անընդմեջ շարունակվի երկրի ու ժողովրդի՝ կյանքից խոսող գրական ու մատենագրական հոլովույթը:

Բայց ի՞նչ իմանաս՝ ո՞ր քարայրում, ո՞ր քարի տակ թաքցրած պահվելուց հետո է կորել կամ գերեվարվել, փտել կամ հրի ճարակ դարձել Հայոց արևելից կողմանց VI դարի հատվածի ժամանակագրությունը:

Մի՞թե ոչինչ չի գրել զիտնավոր Մատթե երեցը: Կամ այն Վեհիկը, որ VI դարի կեսին «ամի հայրապետութեանն Աբասայ» իր տեսիլքը պատմեց մազադաթին: Մի՞թե նրա սահուն ու հրաշապիր գրիչը ուրիշ ոչինչ արժանի չի համարել հետնորդներին հաղորդելու՝ այս տեսիլքից բացի...

Այս և նման ուրիշ հարցերի առաջ X դարի շարահարողը նույնքան անզոր էր ու անօգնական, որքան մենք հաղարամյա մեր հեռվում:

Մենք հակված ենք կարծելու, որ արևելյան Անդրկովկասում VI դարը կատարել է մեծ տեղաշարժեր, որոնց մասին հետազայի պատմիչները մեծ մասամբ խոսում են ավանդական դրույցների հանգույն: Այս դրույցների մեծ մասը վերաբերում է Պարսից երկարակյաց արքաներից մեկին՝ Խոսրով Անուշիրվանին: Անուշիրվան արքան, ըստ այդ դրույցների, եղել է մի շատ խելամիտ ու բարի կառավարող, որն իր երկրի աննախորնթաց բարեկարգումների ու հզորացման հետ միասին չի մոռացել և հպատակ երկրները: Ուշագրավ է նրա համբերատարությունն այլ հավատների հանդեպ: Անդրկուրյան երկրամասի կառուցումների ու վերակառուցումների մի երկար շարք է կապվում այս արքայի անվան հետ՝ Դերբենդի մեծ քերդապարսպի հիմնահատակ վերակառուցումը, Շամախու և շատ ուրիշ քաղաքների հիմնադրումը: Հավանաբար նա այս նոր, ինչպես և հին, քաղաքների համար մեծաթիվ բնակչություն է տեղափոխել իր երկրի խորքերից: Եվ պատահական չէ, որ երկրամասը հենց այս

1 C. B. Юшков, Եղվ. աշխ., էջ 137.

ժամանակներից սկսեց կոչվել նրա անունով՝ Շիրվան², որը միայն նոր անվանակոչություն չէր, այլև երկրի քաղաքական ու ազգագրական կյանքի վերափոխումի հաստատումը:

Զի կարելի մտածել, թե խոսքով Անուշիրվանի այս արտաբնական քաղաքականությանը ոչ մի ազդեցություն չի ունեցել Հայոց արևելից կողմանց և առհասարակ Արևելյան Հայաստանի վրա: Հայտնի է, օրինակ, որ հենց այդ քաղաքականությամբ գալթակղզված Սյունիքի Վահան իշխանն իր նահանգը նետեց բռնակալի գիրկը: Սերետուն այսպես է պատմում այդ ուրացողի արարքը. «...ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զգիւան աշխարհին Սիւնեաց ի Դրնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահմար Ատրպատականի, զի մի՛ ևս կոչեսցէ անուն Հայոց ի վերայ նոցա: Եվ կատարէր հրամանն»³:

Գիտնականներից ոմանք հակված են Վահան Սյունեցու այս քայլը բացատրել՝ որպես պարսիկ մարդպան Սուրենի բռնություններից ազատվելու միջոց⁴:

Սուրեն մարդպանն իսկապես մի զարհուրելի բռնակալ էր՝ կարգված հայ նախարարական տները վրա, և նրա դաժանությունները ոչ մի շափ չէին ճանաչում: Սակայն դաժանություններից ազատվելու տարբեր միջոցներ կային. Վահանի այս խայտառակ ուրացությունը, մեկ էլ՝ այն վճռական քայլը, որին գնացին հայ ապստամբ խիզախները (Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ), որոնք կտրեցին այդ նույն արյունարբու մարդպան Սուրենի գլուխը և պարսիկ զորքն էլ ջարդելով՝ դուրս վանդեցին երկրից (572 թ.):

Վահանը ո՛չ հայ առաջին ուրացողն էր, ո՛չ էլ վերջինն էր լինելու: Եվ նրա ուրացության պատճառով չէ, որ հայ ժողովուրդը երկփեղկված էր, ենթակա մեկը մյուսից շար ու խարդախ երկու բռնապետությունների:

Սակայն նրա ազգուրացությամբ նոր մի ճեղք տվեց Արևելյան Հայաստանը: Եթե դրանից առաջ Հայոց արևելից կողմանց նահանգները, այսպես թե այնպես, իրենց թիկունքում անմիջապես զգում էին Հայաստան աշխարհը, ապա հիմա կտրվում էր այդ թիկունքը: Մի հսկայական տարածություն բռնող, իր պատմությամբ ու առօրյայով հայ պետական կյանքի ամենակարևոր օղակներից մեկը եղած Սյունիքը կտրվում, տըր-

վում էր Ատրպատականի շահմարությանը, որպեսզի կծծի Վահանը ենթարկվի ոչ թե Հայաստանի մարդպանին, այլ արքայից արքային՝ Ատրպատականի կուսակալի միջնորդությամբ:

Այս դիպվածով ճեղք էր տվել նաև հայ եկեղեցին: Սյունյաց թեմը կտրվել էր մայր կաթողիկոսությունից և պարարտ հող դարձել զանազան հերձվածների համար:

Բարեբախտաբար այս ժամանակ Աղվանք մարդպանությունն ստեղծում է իր կաթողիկոսությունը, և առաջին կաթողիկոսն է դառնում Մեծառանք զավառի եպիսկոպոս Աբասը (551—595), որի երկարամյա գործունեությունը հայոց եկեղեցու ամրապնդման էր ծառայում և նշանավոր էր նաև նրանով, որ Աղվանքի կաթողիկոսական աթոռի հիմնադիրը կարգ ստեղծեց, որպեսզի իր հաջորդները ձեռնադրվեն Ամենայն հայոց հայրապետների կողմից:

Այս ժամանակներում քրիստոնեական եկեղեցու ներսում սկսվում է մի բոբբոբուն վեճ Քրիստոս աստծու էության շուրջը: Վիճողները երկու մասի են բաժանվում: Մեկը գտնում է, որ Քրիստոսը միայն աստված է եղել, այսինքն՝ մեկ բնույթ է ունեցել: Մյուսը պաշտպանում էր Քրիստոս-մարդու և Քրիստոս-աստծու (նրա երկու բնույթի) միասնությունը: Տիեզերական ժողովներ են գումարվում: Այն ժողովը, որ տեղի էր ունեցել Քաղկեդոն քաղաքում, անցել էր երկաթեակ (դիոֆիզիտ) թևի ճնշման տակ, և ժողովից հետո երկաթեակ թևը կոչվեց նաև բողկեդոնական: Վիճող կողմերը տաք ճառերից ու վեճերից անցնում են փոխազարժ հալածանքներին ու բռնություններին: Կրոնական վեճը դառնում է քաղաքական ահավոր պայքար:

Հայկական եկեղեցին այս վեճի հենց սկզբից աներեր միաբնակ էր (մոնոֆիզիտ), Հռոմի ու բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցու համոզված հակառակորդը: Եվ քանի որ եկեղեցին այն դարում իր ետևից տանում էր նաև իր հոտը, ուրեմն, հայ ժողովուրդը ևս կտրվում էր արևմուտքի իր հարևաններից և փաստորեն կանգնում նրանց հոգևոր ու քաղաքական հակառակորդի դիրքում:

Բայց եթե սա նորօրյա երևույթ էր այն ժամանակ, ապա նույն հայ ժողովուրդը շուրջ երկու և կես դար առաջ էլ իրեն ավելի ամուր պատնեշով անջատել էր մյուս հզոր հարևանից՝ Պարսկաստանից, երբ որդեգրվել էր քրիստոնեությունը, կենաց ու մահու կոնիվ հայտարարելով մագդեկանց կրոնի ու հեթանոսության դեմ:

Պարզ է, որ այս երկու ճակատագրական քայլերով հայ աշխարհն իրեն անդարձ բաժանել էր հարևաններից, մեկուսացել և պարտավոր էր

² Ան. Հայոց պատմություն, հ. II, էջ 158:

³ Սեբեոս, էջ 27:

⁴ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, մասն Բ, 1959, էջ 538:

ոչ թե առհասարակ ապրել մեկուսի, իր կղզիացած կյանքով, այլ իր կյանքի ամեն մի նոր օրը պարզապես պետք է նվաճեր իր ամենակույ հարեաններին:

Պարսկաստանը, հատկապես նրա արքա Խոսրով Անուշիրվանը, Հայաստանի նոր մեկուսացման կողմն էր, նույնիսկ խրախուսում էր, պաշտպանում նրա անողոր պայքարը քաղկեդոնականության դեմ: Այս աշակցության էությունը պետք է հասկանալ. Հայաստանի մի մասի տիրոջը (նաև մյուս մասի հավակնորդին) շատ էր ձեռնառու, որ այդ երկիրը, որքան կարելի է, հեռու մնա արևմուտքի իր մեծ մրցակցից: Սա ճանաչվում էր հարմար միջոց ամբողջ Հայաստանը կլանելու համար:

Ահա այս պայմաններում հայ եկեղեցին, համարյա միայնակ մնալով միաբնակ քրիստոնեության ուղրատում, իրեն մեկրնդմիշտ կտրեց արտաքին քրիստոնյա աշխարհից:

Վճռական քայլը կատարվեց Դվինի երկրորդ եկեղեցական ժողովում, 554 թվականին, ներսևս Բ կաթողիկոսի ղեկավարությամբ: Այս թվականից, Լեոյի խոսքով ասած, «Հայ ժողովուրդը վերջնականապես և անդառնալի կերպով հաստատում էր իր ազգային ինքնորոշումը մի կատարյալ կղզիացման մեջ, որ այնուհետև նրա ճակատագիրը դարձավ քրիստոնյա աշխարհում: Այնուհետև երկար դարերի ընթացքում, մինչև նույնիսկ մեր օրերը, նրա առջև կանգնած էր իբրև հզոր խոչընդոտ, իբրև արյունարբու ոսոխ, նրա սեփական գործը՝ Դվինի երկրորդ ժողովը...»

«Մենք պարտավոր ենք ասել, որ այս մեծ վճռի մեջ միայն դավանական տեղումնությունը չէր խոսում, ոչ էլ միայն սզգի հոգեբանությունը, նրա հավաքական ըմբռնումը, որ առանձնահատկություններ, կուլտուրական ինքնուրույնություն է դարբնում ամեն մի ժողովրդի կյանքի համար: Սաստիկ խոշոր դեր էր կատարում և մի այլ շատ մեծ հրամանատար ու՞՞ քաղաքական միջավայրը: Հենց այն պատճառով, որ վճիռը կայանում էր պարսիկների պատկանող հողի վրա՜ նա միանգամայն պիտի համապատասխաներ պարսկական այն քաղաքականության, որի առաջին հոգսն էր անջատել պարսկահայատակ քրիստոնյաներին Պարսկաստանի դարավոր ոսոխ Բյուզանդիայից»⁵:

Սերեռսը պարզամիտ հիացմունքով նկարագրում է Պարսից արքայի հրավիրած այն ժողովը, որի քննությանն էր ներկայացված քրիստոնյա հավատի տարատեսակների հարցը, և ի վերջո արքան հավանեց ու հո-

վանավորեց հայկականը, կարգադրելով, որ իր հպատակ քրիստոնյաները միայն հայկական թևին մնան⁶:

Դառնալով Աղվանքի եկեղեցուն, պետք է վերստին հիշել, որ ինչպես Հայոց արևելից նահանգներում, այնպես էլ բուն Աղվանքում մինչև VI դարի կեսը տիրապետողն էր Ամենայն հայոց կաթողիկոսական գավազանը: Սկսած Գրիգորիոսից՝ այս գավառների եպիսկոպոսներ էին ձեռնադրվում Հայոց կաթողիկոսի կողմից⁷, Հայտնի է, որ սկզբնապես հայ եկեղեցու մի թևն էր նաև Վիրքի եկեղեցին: VI դարի սկզբին, ինչպես վկայում են աղբյուրները, Աղվանքի ու Վրաց եկեղեցիների միջև վեճ է առաջանում այն հարցի շուրջը, թե իրենցից ո՞րն է նախաթուր: Քանի զնում, վեճը տաքանում էր և կարող էր երկուսին էլ հեռացնել հայկականից: Վերջինս ստիպված եղավ դնալ զիջումների, որոնցից հիմնականը Վրաստանում ու Աղվանքում կաթողիկոսական աթոռներ հիմնելն էր, միայն այն պայմանով, որ այս աթոռակալներն անպայման ձեռնադրվեին Հայոց կաթողիկոսից:

Աղվանքի կաթողիկոսության հիմնադրությունը համընկնում է հայոց թվականության սկզբի հետ, և, ինչպես ասացինք, առաջին կաթողիկոս ձեռնադրվեց Մեծառանք գավառի եպիսկոպոս Աբասը: Ինչպես Աբասի, նույնպես և նրա հաջորդների գործունեությունը սերտորեն կապված էր Հայոց կաթողիկոսությանը, պայմանավորված նրանց ընդհանուր շահերով ու ձգտումներով: Հենց Աբասի գահակալության առաջին տարիներին Հայոց արևելից կողմանց գավառներն է թափանցում նեստորական աղանդավորների մի խումբ⁸: Աբասը Հովհաննես Բ Գաբեղյան կաթողիկոսի մոտ է ուղարկում երեք եպիսկոպոսի՝ իմանալու, թե ինչպե՞ս պիտի վարվել աղանդավորների հետ («հաճոյ թուեցաւ գալ ի ձէնջ այսր եպիսկոպոսաց երից... լսել ի ձէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն»)՝ իր նամակում այս եպիսկոպոսների մասին է հիշեցրել Հովհաննես կաթողիկոսը⁹:

Հովհաննես կաթողիկոսն Աբասին գրած թղթի մեջ հանձնարարում է և հետու քշել հերձվածք. «զայնպիսին ի սահմանաց ձերոց հալածեսցիք»:

⁵ Սերեռս, դ. XLIV;
⁶ Կաղանկատուացի, էջ 22, 345 էն.
⁷ Նեստորականությունը ևս երկարակության կողմնակից էր: Տե՛ս Կաղանկատուացի, էջ 141. «...մեր նղովմեք Պողոս Սամաստացի, զմանի, և զՄարկիոն, զնեստոր... որք լրբարար յանդեկեցան ասեկ երկու բնութիւնս և երկու զմա ի վերա միոյ Քրիստոսի Աստուծոս»:
⁸ Կաղանկատուացի, էջ 142:

⁵ Ան, Հայոց պատմություն, հ. II, էջ 160:

և զմահաբեր վարդապետութիւն նորա ամենեկին ոչ լսել»¹⁰։ Աբասն այդպես էլ անում է. հերձվածի վարդապետներին հալածում է, զուրս քշում իր երկրից և հետագայում ինքն էլ անողոք պայքարում է քաղկեդոնականութեան ամեն մի դրսևորման դեմ։

Մենք արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ Աղվանքում հիմնադրված աթոռը կողմում էր «կաթողիկոսութիւն Աղվանքի, Լիւնաց և Չողա», ըստ որում՝ «Աղվանք» անվան տակ հասկացվում էր միայն Հայոց արևելից կողմանքը, «Լիւնիքը» անդրկուրյան երկրի արևմտյան մասն էր, իսկ Չողը կամ Մազքթաց աշխարհը՝ արևելյան։ Որ կաթողիկոսութեան մեջ մտնում էին այս երեք աշխարհների թեմերը, դա կարելի է տեսնել նաև Հովհաննես Բ-ի՝ Աբասին գրած նամակից, որի մեջ թվարկված են թեմերի անունները «...Մովսիսի, Բախաղատոյ եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղակայ եպիսկոպոսի, Հոռմկայ Ամարասայ եպիսկոպոսի, Տիմոթէի Բաղասականայ եպիսկոպոսի, Ամբակումայ Շաբույ եպիսկոպոսի, Յոհաննայ Գարդմանայ եպիսկոպոսի, Ղևոնդեայ Մեծկողմանց եպիսկոպոսի»¹¹։ Ամարասը, Մեծկողմանքը՝ Արցախում, Գարդմանքը՝ Ուտիքում, Շաբեն, Կապաղակը և Բաղասական Լիւնաց աշխարհում, Բախաղատը՝ երևի Չողում¹² կամ Մազքթաց աշխարհում։

Աղվանքի հայրապետութիւնը, ճիշտ է, նվիրապետական տեսակետից, իր հիմնադրման օրից սկսած, ենթակա էր Հայոց կաթողիկոսութեանը։ Սակայն, միաժամանակ, ուներ և մեծ իրավունքներ, արևելյան Անդրկովկասի բնակչության հոգևոր կենտրոնն էր, թագավորազուրկ երկու ափերի հոգևոր-մշակութային, նույնիսկ քաղաքական հավակնութիւնների արտահայտիչը։

Այս կաթողիկոսութիւնն սկզբից ևեթ վիթխարի հեղինակութիւն ուներ ոչ միայն իր հավատացյալների շրջանում, այլև հարևան նահանգների աջում։ Նա այնքան վարկ ուներ արդեն և այնպես դիտվում էր իբրև հայկական հայրապետարան, որ, երբ Սյունյաց իշխան Վահանն իր նահանգի վարչական ղեկավարութիւնը հանձնեց Ատրպատականին և, հատկապես, երբ բուն Հայաստանի կաթողիկոսութեան կողքին՝ բյուզանդահայատակ մասում, ստեղծվեց հակաթոռ մի նոր կաթողիկոսութիւն, Սյունիքի եպիսկոպոս հռչակավոր Պետրոսն իր թեմը միացրեց Աղվանքի

աթոռին, որոշելով այդպես մնալ այնքան ժամանակ, մինչև որ «սուրբ Գրիգորի աթոռը դառնա միասնական»։ Ահա այդ կարևոր տեղեկութիւնը. «Նու զՀայս Պարսիկք և Յունք բաժանեալ էին, և տէր Մովսէս էր յաթոռն սրբոյն Գրիգորի ի Գունին. և կողմանք Յունաց յակառակ նմա նստուցին զՅովհանն ոմն մերձ առ նա։ Իսկ զերկուանալն հայրապետութեան խոտեցին տեսարքն Սիւնեաց, և ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն՝ հրամանաւ եպիսկոպոսին իրեանց առաքինուցն Պետրոսի, որ հասեալ ի վախճան՝ պատուէր ետ վիճակին իրում առնուլ ձեռնադրութիւն յԱղուանից և զմեռոն օրենութեան՝ մինչև միացցի աթոռն սրբոյն Գրիգորի»¹³։

Հասարակական-քաղաքական կյանքի մասին ուրիշ տեղեկութիւններ չկան, բացի մի շատ էական տվյալից, որն ընդհանուր խոսքով հաստատում է, թե VI դարի վերջին Հայոց արևելից կողմանց իշխաններն ապստամբել են պարսից բռնակալութեան դեմ և ենթարկվել դաժան պատժի։ Պատմիչ-ժամանակագիրը դառնակսկիծ սրտով հիշում է «մեծամեծաց իշխանաց աշխարհին Աղուանից, որք ապստամբեցան յարքային Պարսից և կորեան անկան բազումք ի նոցանէ՝ ոմանք ի սուր, ոմանք ի խեղութիւնս անդամոց և ոմանք տարագրեալք յաշխարս հեռաւորս»¹⁴։

Յավոք, այս ըմբոստ պոռթկումի և արյունոտ հաշվեհարդարի մասնաճանաչների մասին աղբյուրները լռում են։ Սակայն արդյունքը, — երկրի անտեղութիւնն ու անիշխանութիւնը, սրանից օգտվելով էլ՝ պարսիկ մի տոհմի Գարդմանք թափանցելն ու գավառին տեղ դառնալը, — այս բոլորը լայնորեն արտացոլված է «Աղվանից աշխարհի պատմութեան» մեջ՝ որպես ահանատեսի ու դեպքերի մասնակցի հավաստի ժամանակագրութիւն։

¹³ Կաղանկատուացի, էջ 310—311։ Նաև՝ Օրբելեան, էջ 90—92։

¹⁴ Կաղանկատուացի, էջ 171։

¹⁰ Անդ։

¹¹ Անդ, էջ 137—138։

¹² Որ Չող քաղաքում կաթողիկոսութիւն չի եղել Պարտավից առաջ, դա երևում է նաև այս նամակից։ Չողը (քաղաքը) նույնիսկ չի ներկայացված որպես եպիսկոպոսութիւն։

ԽԱԶԱՐՆԵՐՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑՆԵՐ

Մեր թվականության առաջին դարերից սկսած՝ Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս բնակվող ցեղերն իրենց պարբերական ասպատակություններով պատուհաս էին դարձել Անդրկովկասի բնիկների և նույնիսկ նրանց հարավային ու հարավարևմտյան հարևանների համար: Այս բազմալեզու լեռնաստանցիներն իրենց կողոպտչական արշավանքներով հաճախ հասնում էին մինչև Պարսկաստանի խորքերն ու Միջերկրական ծովի ափերը: Իրենց ճանապարհին նրանք թալանում էին շեն քաղաքներն ու գյուղերը, ապա հրի ճարակ դարձնում, կոտորում էին դիմազորողներին: չխնայելով ծերերին ու մանուկներին: Նրանք Անդրկովկաս էին թափանցում երկու ճանապարհով՝ ձորա կամ Կասպից անցքով և Ալանաց դռնով: Առաջինը Կովկասյան լեռնաշղթայի եզրի ու Կասպից ծովի միջև ընկած այն նեղ ձորն էր, որի վրա հետագայում հարավցիները պիտի պահակեին՝ ավազակաբարո հյուսիսականներին դիմադրելու համար:

Մեծ Հայքի հզոր թագավորության ժամանակներում, երբ նրան դեռևս ենթակա էր ամբողջ Անդրկովկասը, ձորա դռան հսկողությունը դրված էր հայոց հյուսիսային նախարարությունների, հատկապես Գուգարաց բզեշի վրա: Այս պատճառով էլ հարևան պետությունները մինչև իսկ պարտավորվել էին նյութական օժանդակություն ցույց տալ Հայաստանին: Հայտնի է, օրինակ, որ Հռոմեական կայսրությունը Սեպտիմոս Աներոսի (193—221) օրոք որոշել էր դրամական նպաստ վճարել Հայոց թագավորներին՝ ձորա դռան հսկողությունը հոգալու համար:

Հայաստանի Արշակունի թագավորության վերացումից հետո, Աղվանից մարզպանության ստեղծմամբ՝ ձորա կամ հետագայի Գերբենդի դռան հսկողությունն իրականացնում էր Պարսկաստանը, որն ստիպված էր անցքի ամբողջ լայնությամբ կառուցել (ավելի ճիշտ վերակառուցել) անանցանելի պարիսպ՝ երկաթե վիթխարի դարպասներով. «Աղվանից աշխարհի պատմությունն» այդ պարսպի կառուցումը այսպես է ներկա-

յացնում. «բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ զումարելով ճարտարապետս և հնարելով ազգի-ազգի նիւթս ի շինուածս մեծասքանչ գործոյն, որով փակեցին աղիսեցին ընդ լեռնս Կովկաս և ընդ մեծ ծովն արեւելից»¹:

Արաբ մատենագիրները (Բալաձորի, Իբն-Նորդադրեհ, Թարաբի, Մասուդի, Մուբարադասի) ձորա կամ Գերբենդի պարսպի կառուցումը կապում են խոսքով Անուշիրվանի անվան հետ՝ VI դարի կեսին: Օրինակ, Իբն ալ-Ցակիհը գրում է, թե խոսքովը բարից ու արճճից կառուցել է պարիսպ, այն հասցնելով մինչև սարի գագաթը, ապա մյուս ծայրը շարունակել է ծովում և պատի մեջ երկաթե դարպասներ է կանգնեցրել»²:

Ամենայն հավանականությամբ՝ խոսքովը վերակառուցել է պարիսպները, քանի որ սկսած մ. թ. I դարից, հույն ու հռոմեացի պատմիչները (Տակիտոս, Գիոն Կասսիոս, Պտղոմեոս և այլք) հիշատակում են Ալբանական (Կասպիական) պատնեղը կամ դուռը: Հովսեպոս Փլավիոսը (մ. թ. I դար) գրում է, թե դա «այն անցքն էր, որ Ալեքսանդր թագավորը (Մակեդոնացին) փակեց երկաթե դարպասներով»³:

Հայ մատենագիրների երկերում ձորա անցքն արդեն դուռ է կոչվում կամ պարսպապահակ: Դազար Փարպեցին (V դարի վերջ), օրինակ, ճանաչում է պահակ որմոյն, որ է ընդ մէջ իշխանութեանն Աղուանից և Հոնաց»⁴:

Եվ, այսուամենայնիվ, հյուսիսային ցեղերը շարունակում էին նորանոր արշավանքներ ձեռնարկել՝ կամ իրենց սեփական նախաձեռնությամբ ձեղքելով պարիսպն ու նրա զինակազմ պաշտպանությունը, կամ էլ կաշառված հարավի տերերի շքեղ խոստումներով, որովհետև հիմա արդեն Պարսկաստանն ու Բյուզանդիան փոխնիփոխ իրար դեմ էին հրահրում հյուսիսականներին: Պատմությունը հիշում է ղեպքեր, երբ Պարսկաստանն իր հակառակորդ Բյուզանդիային կամ ապստամբ անդրկովկացիներին հյուժելու նպատակով՝ բաց է արել ձորա դուռը, կաշառքով նրանց դեմ ուղարկել հոներին ու մյուս լեռնաքնակ ասպատակողներին: Եվ քանի՜-քանի՜ անգամ Բյուզանդիան ավերել է Պարսկաստանի գավառներն ու պարսից հպատակության տակ եղած երկրները՝ դարձյալ հյուսիսականների խառնիճաղանջ ուժերով:

¹ Կաղանկատուացի, էջ 153.

² СМОНІК, вып. 32, Тифлис, 1903, с. 13, 17.

³ Հովսեպոս Փլավիոս, գիրք VII, դ. 7, § 4 կամ՝ К. Ган, Известия древних греческих и римских писателей о Кавказе, ч. I, Тифлис, 1884, с. 113.

⁴ Դազար Փարպեցի, էջ 66:

Իզուր չէ, որ այսրկովկասյան տերութիւններէց ամեն մեկն իր հա-
կառակորդին զսպելու համար սպանում էր բաց անել ճորա դռները և
օգնութեան կանչել կովկասյան բարբարոս ցեղերին:

Այդ ցեղերի մեջ ամենառազմաշունչները, որոնք մեր թվականու-
թեան առաջին դարերում հանգիստ չէին տալիս անդրկովկասցիներին,
հայտնի էին մեկ ընդհանրական անունով՝ հոներ: Այդ նրանք էին, որ
մեկ հայտնվում էին ճորա պահակի կողմից, մեկ էլ խուժում էին Ալա-
նաց զոնով և իրենց հուկից սփռում մահ ու ավերածութիւն:

VII դարի սկզբներին Պարսկաստանի ու Բյուզանդիայի ռազմական
մրցակցութիւնից և բռնադրամութիւնից բղկաված Անդրկովկասում
հայտնվում է մի նոր ավերիչ ուժ: Այն գալիս է հյուսիսից, «խազար»
անունով և դանում ահաւոր մի շարքի ո՛չ միայն վարչաքաղաքական
ինքնուրույնութիւնը կորցրած անդրկովկասցիների համար, այլև այս
երկրամասում տիրութիւն անող Պարսկաստանի ու Բյուզանդիայի:

Մովսէս Կաղանկատվացու գրքի ամենասրտառու էջերից են այն
կտորները, որոնք պատմում են Բյուզանդիայի թելադրանքով խազար-
ների՝ Աղվանքում կատարած ասպատակութիւնները, ավերածութիւն-
ներն ու անլուր շարագործութիւնները: Կտն այս էջերը շատ բարձր է
գնահատում «մասնավորապես հենց այն պատճառով... որ նրանք մեր
գրականութեան մեջ առաջինն են ըստ ավագութեան, որոնք կենդանի
զույներով ներկայացնում են սարսափները, որ այդ թափառական ձիա-
վորները տարածում էին ամեն տեղ իրենց տեսքով, կենցաղով, կատարի
վայրագութիւններով»⁵:

«Աղվանից աշխարհի պատմութեան» այն գլուխները, որոնք վի-
պական զույներով նկարագրում են խազարների արշավանքները, մրտ-
նում են Աղվանքի կաթողիկոս Վիրոյի հեղինակութեամբ վաղուց հայտնի

⁵ Կեո, Հայոց պատմութիւն, 5. II, էջ 262: «Պատմութեան այս հատվածը նույն դիա-
հատական է արժանացել նաև հայտնի արևելագետ Մ. Ի. Արամանովի կողմից: «С большей подробностью и яркостью, чем в византийских источниках расска-
зано о союзе Ираклия с хазарами в армянском историческом сочинении—Исто-
рии Агван Монсея Каганкатваци. Хотя это сочинение и относится в целом к X в.,
несомненно, что оно представляет компиляцию более древних литературных про-
изведений. Для многих частей его источники заимствования можно указать,
другие, в частности, те страницы, на которых рассказывает о походах хазар-
в Закавказье, могли быть написаны только современником, настолько они пере-
полнены подробностями и насыщены чувством автора: его ужасом перед вар-
варами и скорбью о страданиях родной земля» (М. И. Артамонов, Очерки
древнейшей истории хазар, Л., 1936, с. 50).

հատվածի մեջ: Պատմիչը լալահառաչ վկայում է, որ խազարները մոր-
թոտում են անմեղ ու անպաշտպան քնակիչներին, հրդեհի հարակ գարձ-
նում սրբութիւնները: Իհարկե, մինչև Վիրոյի պատմածը՝ խազարների
մասին երկու անգամ էլ է հիշատակվում «Աղվանից աշխարհի պատմու-
թեան» մեջ, առաջինը՝ քաղված մի հին գրույցից, երկրորդը, հավանա-
բար, վերջին խմբագիր-բանաքաղոդի կողմից մուծված: Առաջինին մենք
դեռևս կանոնադառնանք: Երկրորդը նշում է, որ «... գերեցաւ ի խազրաց
աշխարհս Աղուանից, հրկէզ եղէն եկեղեցիք և կտակարանք»: Ետ ու առաջ
եղած տեղեկութիւնների համաձայն՝ սա տեղի է ունեցել VI դ. կեսին
կամ դրանից մի քանի տարի առաջ, որովհետև այդ ավերածութիւններից
հետո էր, որ «չորժամ սկիզբն հայ թուականին եղև, ի սոյն ամի փոխե-
ցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Չողայ քաղաքէն ի մայրա-
քաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին
Քրիստոսի»⁶:

Ասում ենք՝ այսքանը հետագայի մուծում է, որովհետև ամենակա-
րևորը՝ կաթողիկոսական աթոռի տեղափոխութիւնը, ինչպես արդեն
նկատել ենք, չի համապատասխանում իրականութեանը: Հնարավոր է,
որ այս ժամանակ հյուսիսականներն ասպատակած լինեին Աղվանքը:
Սակայն հենց ըստ վերոհիշյալ վկայութեան՝ նրանք Կուրից հարավ չեն
իջել, որովհետև հայրապետական աթոռը հիմնել են Պարտավում՝ որպես
ապահով մի տեղ:

Այսքանից հետո խազարների անունը կապվում է Անդրկովկասի
հետ, սակայն մեծ մասամբ այս երկրամասի համար իրար հետ մրցող
երկու հին բռնակալութիւնների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի՝ հրա-
հրումներով: խազարները մեկ առաջինի զորումով են արշավում դեպի
Անդրկովկաս, մեկ երկրորդի, իսկ հաճախ՝ հենց սեփական նախաձեռ-
նութեամբ, թալանելու և հարկատու դարձնելու նպատակներով:

VII դ. սկզբին Բյուզանդիայի Հերակլ թագավորը մեծ զորախմբով
ասպատակում է Պարսկաստանի հյուսիսային շրջանները, ավերում Ատրը-
պատականը, ապա կամենում է ձմեռել Անդրկովկասում: Նրա հրամանով
Հայոց, Վրաց ու Աղվանքի տերերը պետք է ընդառաջ ելնեին հպատակու-
թիւն հայտնելու և բյուզանդական զորքերի ձմեռումի պետքերը հոգա-
լու: Այս հրամանի հետ միաժամանակ Անդրկովկաս է հասնում նաև
Պարսից արքա Խոսրովի հրամանը՝ բյուզանդական զորքերին լրնգունելու
մասին: Աղվանքը դեռ Պարսից գերիշխանութեան տակ էր: Այդ պատճա-
րով էլ սիրբե լուան գայս ամենայն պետք և իշխանք աշխարհիս Աղուա-

⁶ Կաղանկատուացի, էջ 133:

նից... թողնալ զմեծ քաղաքն Պարտաւ, ելեալ զնայցին ամրացան ի տեղիս-տեղիս»⁷;

Բյուզանդացիները ոտքի տակ տվին Ուտիքն ու Արցախը: Պատմիչի կցկտուր տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ բունագրավիչներն անցել են Պարտավով, ապա Ուտիքի Կաղանկատույց գյուղի հեղեղատը կտրելով, «Բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ մօտ ի գիւղն Գիւտական»⁸: Նրանք անցած ամբողջ ճանապարհին տրորում էին այգեստանները, ավերում գյուղերը. «Կոխեցին, քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստաննայց և գեղատաննայց ընդ որս անցանէին»⁹:

2. Մանանդյանը, աղբյուրների մանրակրկիտ քննութեամբ, պարզել է, որ Հերակլի ու պարսիկների այս հանդիպումը տեղի է ունեցել 624 թվականին¹⁰:

Հերակլի զորարանակը, ինչպես տեսանք, տեղավորվել էր Ուտիքի Գարգման գավառում և փոփել Տրտու-Ռարթատի ավազանում:

Սերեոսը հաղորդում է, որ այս մասին լուր առնելով՝ պարսիկները որոշում են վրա հասնել ու բյուզանդացիներին ջարդ տալ հենց այստեղ: Պարսից մի զորաբանակ, Շահր-Վարազի գլխավորութեամբ, գալիս, նըստում է Ուտիքի Տիգրանակերտում և փակում Հերակլի ճանապարհը դեպի Վիրք: Մի այլ բանակ էլ 30 հազարանոց զորքով, Շահենի գլխավորութեամբ, բռնում է նահանջի ճանապարհը՝ Արցախի Տիգրանակերտ ավանում:

Հերակլը, ուրիշ էլը շղանելով, ճեպով հարձակվում է թիկունքը փակած Շահենի զորքի վրա, կոտորում, ապա, հավանաբար, Արցախի Բերդաձոր գավառով (այժմյան՝ Շուշվա լեռնանցքով) անցնում Սյունիք, Նախիջևանի վրայով մտնում կենտրոնական Հայաստան:

Առաջներում Թեոֆանեսի մի տեղանվան վրիպակի պատճառով (Սյունիքի փոխարեն՝ Հունների երկիր) Հերակլի վերադարձի ճանապարհը զգվել է հակառակ ուղղությամբ՝ Գարգմանքից դեպի հոների (կամ սավիրների) երկիրը¹¹: Սակայն Մանանդյանը, համադրելով Սերեոսի ու Թեոֆանեսի տեղեկությունները, պարզել է Հերակլի անվիճելի երթուղին՝ Գարգմանքից Արցախի Բերդաձորի վրայով դեպի Սյունիք-Նախիջևան:

Ահա այդ երկու վկայությունները. «Իբրև ետես Երակլոս, հթէ ի մէջ արկին զնա (շրջապատեցին իրեն Շահր-Վարազն ու Շահենը— Ք. Ու.)՝ դարձաւ ի վերայ զարուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճեպ զարուժեամբ և հար զնա և խորտակեաց և զնայ ընդ Մղուկս. և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախճուանն ի ձմերուն ժամանակի»¹²:

«Այս կողմների ժամանակ և կալ Սաինը (Շահենը) իր զորքով, և նրան Հերակլը ջարդեց, նրա զորքից շատերին ոչնչացրեց, իսկ մյուսներին փախուստի մատնեց և նրանց գլխավոր զորը վերցրեց: Սարվարազանը (Շահր-Վարազը), միանալով Սաինին, հավաքեց ազատված զինվորներին և մտածում էր նորից զնալ Հերակլի դեմ: Բայց կայսրն անցավ Հունների երկիրը» (Մանանդյանն իրավամբ կարդում է «Սաինի»-Սյունյաց երկիր— Ք. Ու.)¹³:

Բյուզանդիան նպատակ չունեի այսքանով հանգիստ թողնել պարսիկներին ու Անդրկովկասը: Հաջորդ անգամ նա հյուսիսական ցեղերին մեծամեծ խոստումներով գրավում է իր կողմը և սկսում մի արշավանք, որի մոտ թեթև խաղ էր նախորդ ասպատակությունը:

«Սաստիկ ամբոխիւ ելին ետդիրք ասպատակել յաշխարհս մեր հրամանաւ Հերակլի»,— այս նոր արհամիիրքի նկարագրությունն այսպես է սկսում Աղվանքի պատմիչը¹⁴:

Աղբյուրների հաղորդած տեղեկությունների քննութեամբ կարելի է եղրակացնել, որ սա հյուսիսային վայրենաբարո ցեղերի առաջին խոշոր ու ավերիչ բախումն էր Անդրկովկասի հետ, որ տեղի ունեցավ 627 թվականին:

Այստեղից սկսած՝ «Աղվանքի պատմության» հեղինակն արդեն խազարներին նկարագրում է որպես մի ականատես, որի աչքերի առաջ տեղի են ունենում այդ բարբարոսների անլուր վայրենությունները, և հայրենի երկիրը նրա բերանով հեծում է արյան ու ավերի, սովի ու մահի նիրաններում:

Հեղինակի խոսքն այստեղ վրիպական դույներ է ստանում, պատմական ճշմարտությունը հաղորդելով զգայացուցնց մի ոճով, որով մեր առաջ կենդանի հառնում են հին օրերի ահավոր պատկերները: Ահա խազարները «տոհմից-տոհմից և ազգաց-ազգաց, լեռնականաց և դաշտա-

7 Անդ, էջ 149:

8 Անդ, էջ 150:

9 Անդ:

10 Լ. Մանանդյան, Քնն. պատմ., հ. Բ, Բ մասի նյութերը, էջ 151:

11 Անդ, էջ 153—154:

12 Սերեոս, գլ. ԻԶ:

13 «Летопись византийца Феофана от Диоклетиана до царей Михаила и его сына Феофилакта», перев. В. П. Оболенского и Ф. А. Терновского, М., 1890, с. 250.

14 Կաղանկատուայի, էջ 151:

կանաց, հարկարնակաց և բացօթեկաց, ծովամխաց և ցամաքայնոց, զըլխագերծաց և գիսաւորաց» ահաւելի մի բաղմութիւն, իրենց Ջերուխաքանի¹⁵ գլխավորութեամբ, Չողա պահակը ճեղքելով՝ խուժում են Չող քաղաքը:

Ճեղքնակն այս հրեշավոր խաժամուժի արտաքին նկարագիրը տալիս է նկարչական գունագեղութեամբ. «Ժանտատեսիլ, ժպտերես, լայնահեմ, անարտևանուն... ի ձև իգտկան դիսարձակս...»¹⁶: Եվ ահա նրանք մտնում են Չող, «իբրև գայլք գիշարանձի անամօթացեալ դիմէին ի վերայ նոցա (բնակչաց) և անխնայ կոտորէին յանցս և ի փողոցս քաղաքին: Եւ ո՛չ խնայէր ակն նոցա ի գեղեցկատես պայծառազեղ մանկահասակս արուի կամ իղի, և ոչ յանպիտանս և յանօգուտս, ոչ թողուին զհաշմս կամ զձերս և ոչ զթացին կամ գալարէին աղիք նոցա ի խանդաղատանս տղայոց, որ վկոտորեալ մարբքն փարէին և գիէին զարիւն ստեանց նոցա իբրև զկաթն. ալ իբրև հուր վառեալ չեղևն մտանէին ընդ գուռն և ելանէին ընդ միսն, գործ գազանաց և թռչնոց թողեալ ի նմա»¹⁷:

Սրանից հետո է, որ ավերիչ ալիքը շարժվում է դեպի պատմիչի երկիրը («Ապա տակաւ շարժէին ալիքն ընդդէմ մեր»):

Այս ժամանակ, հավանաբար, Հայոց Աղվանքում տեղացի իշխաններ կա՛մ չկային, կա՛մ էլ այնպես դիմադրկված էին նախորդ դարի վերջի մեծ ապստամբութեանից հետո, որ ոչ ոք չփորձեց կաղմակերպել՝ մինչ այդ և դրանից հետո էլ իր ազատագրական հերոսամարտերով հայտնի լեռնական բնակչութեան դիմադրութիւնը: Չպետք է մոռանալ, որ խաղարներից անմիջապէս առաջ Ուտիքի Գարդման էին եկել պարսիկ միհրանյանները և դավով կոտորել այն վաթսուն իշխանագուն Առանշահիկներին, որոնք այս երկրի օրինական ու հինավուրց տերերն էին: Եվ ահա համարյա անտեր ու անիշխան բնակչութեան բախտը «տնօրինում է խաղարների սարսափից Պարտավում ծվարած պարսից Գայշաք մարզպանը, որին պատմիչը «ամենայն պէտ իշխան» է կոչում: Սա փորձում է քաղաքի բերդում հավաքված բաղմութեանը հանգստացնել ու կարգադրել անելիքը, սակայն չեղուն պատ չի գալիս, որովհետև երկյուղից «թափե-

ցաւ սիրտ և դողումն կալաւ զնա յտից մինչև ցդուխ, և ծունկք նորս դիմեանս բաղխէին»¹⁸:

Ժողովուրդը, ունեցած-չունեցածը թողնելով, քաղաքի շուրջ դարբասներով դուրս է հորդում՝ լեռնային Արցախի ամուր վայրերում պատսպարվելու համար: Խաղարները հետապնդում են փախչողներին՝ նրանց մի մասին հասնում են Կաղանկատուչք մեծ գյուղի հանդիպակաց լեռան ստորոտում: Բայց որովհետև արդեն գիշերը վրա էր հասել, կարողանում են փախչողների միայն մի՛ մասին բռնել, որոնցից շատերին կոտորում են, մնացածներին էլ, դրաստների ու թալանած իրերի հետ միասին, տանում իրենց բանակը:

Ուտիքից փախած բնակիչներն ամրանում ու փրկվում են Արցախում: Իսկ խաղարները գնում են Վրաստան, Տփղիսում (Քքիլիսի) Հերակլ արքայի զորքերին միանալու և Պարսկաստանի դեմ ճակատամարտելու համար:

Այս անգամ Տփղիսը, բռնագրավիչներին ենթարկվելու փոխարեն, ճակատ տվեց նրանց և պաշտպանվեց հերոսաբար: Հերակլն ու խաղարների խաբանն ստիպված էին ձեռնունայն իրենց երկրները վերադառնալու որոշում ընդունել: Այս տեսնելով՝ տփղիսցի պաշտպանվողներն այսպես են ծաղրում նրանց. հսկայական մի զոում նախշում են խաբանի պատկերով և հանում բերդապարսպի վրա¹⁹. «զտեղի արտևանաց աշացն յօտ մի (խաղողի մատ — Ք. Ու.) ծրագրեալ, որ ոչ կարէր նշմարել. և զտեղի մարուացն՝ լերկս ժպիրհս. և զտեղի շնչաւոր քթիցն թիզ մի լայն թուով մազից պէրեշտէից, զոր թէ ոք կարելի ճանաչել: Եւ բիրեալ կգեալ ի վերայ պարսպին յանդիման նոցա՝ ազաղակէին առ զօրսն և ասէին. «Ահաւասիկ կայսր թագաւոր ձեր, զարծարուք երկրպագէք սմա՝ Ջերուխաքան է սա»: Եւ առեալ գեղարդ ի ձեռն՝ ծակտէին յանդիման նոցա զդրումն՝ զնմանեցուցեալն ի պատկեր նորս: Նոյնպէս և զմիւս թագաւորս ձաղէին, ծաղր առնէին, այլանէին, պիղծ և արուազեղծ կարդային»: Ծաղրված ու ստորացած երկու թագավորները հեռանում են Տփղիսից՝ որոշելով հաջորդ տարին գալ թարմ ուժերով, հիմնահատակ խորտակել քաղաքը, կոտորել բնակիչներին:

Նրանք, իհարկեւ, հետագայում պետք է կատարեին իրենց որոշումը:

¹⁵ «Խաբան» նշանակում է խաղարական թագավորների ընտրյալ, ուրիշ խոսքով՝ արքայից արքա: «Ջերուն», բառ Մ. Բ. Արտամանովի, աղագրված «յարգուն» է, որ խաղարական արքայական բարձրագույն տիտղոսն է (տե՛ս «История хазар», стр. 143-146): Ուրեմն Ջերուխաքան՝ արքայից արքա: Այս անգամ արշավանքի եկած Ջերուխաքանի անունն է եղել Տուն-շեխու: (անդ, էջ 146):

¹⁶ Կաղանկատուացի, էջ 154:

¹⁷ Անդ:

¹⁸ Անդ:

¹⁹ Պատմիչն բառ երևույթին իրարից այնքան էլ չի տարբերում խաղարներին ու Նոներին, որովհետև այստեղ Ջերուխաքանին կոչում է նաև թագավոր Հոնաց (տե՛ս Կաղանկատուացի, էջ 158):

Եվ պատահական չէ, որ Աղվանքի պատմիչը տփղիսցիների այս քայլը համարում է «պատճառ կորստեան իրեանց»:

Հաջորդ տարին, 628 թ., Հերակլն ու խաղարական խաբանը վերըստին պաշարում են Տփղիսը: Երկու ամսվա ծանր դիմադրությունից հետո ընկնում է հերոս քաղաքը, ավերվում դազանացած բանազրավիչների ոտքերի տակ, թալանվում մինչև վերջին իրը: Հերակլն ու խաբանը գիվային վրիժառուությամբ կոտորում են պարտված տփղիսցիներին, փորում վրաց մեծ իշխանի ու պարսից կուսակալի աչքերը՝ ի պատասխան անցած տարվա դոլմ-ձաղրանկարի, որի վրա խաբանը կույր էր նկարված եղել: «Նու դառն շարչարանօք հեղձամահ արարեալ ղնոսա ողջէն՝ վարեցին ղմորթ նոցա յանդամոց նոցա և պրկեալ կանգնեալ լցեալ ղնոսա խոտով կախեցին ի վերուստ զայսրսպեն»:

Տփղիսի աղետից անմիջապես հետո երկու ավերիչները շարժվում են դեպի Աղվանք: Հերակլը կանգ է առնում Գորդմանրում՝ այլ զավառի նորաթուխ տեր Վարազ-Գրիգորին մկրտելով²⁰: «Աղվանքի պատմություն» տեղեկություններ՝ Վարազ-Գրիգորն Ուտիրում հիմնավորված պարսկական Միհրանյան կամ Միհրական տոհմի առաջին ներկայացուցիչն էր, որ քրիստոնեություն էր բնդունել և այն էլ Վիրո կաթողիկոսից: Վիրոն միաբնակ էր, լուսավորչական: Այդ պատճառով էլ երկաթնակ Հերակլը Վարազ-Գրիգորին նորից կնքում, դարձնում է իր աղանդին, ամենայն հավանականությամբ՝ համոզված, որ աղանդի նույնությունը նրան կստիպի հավատարմորեն ծառայել Բյուզանդիային:

Վարազ-Գրիգորի քաղկեդոնացման մասին վկայում են վրացական աղբյուրները: Երանդ համաձայն՝ Հերակլը միաժամանակ նույն քաղկեդոնական աղանդին է դարձնում նաև Վարազ-Գրիգորի տիրույթը դարձած Գարդմանքի լուսավորչական բնակիչներին և հիմնադրելով սուրբ աստվածամոր տաճարը՝ նրա շինարարությունը հասցնում է մինչև գմբեթ²¹:

«Աղվանքի պատմությունը» լուսում է Վարազ-Գրիգորի նոր մկրտության մասին: Մ. Ի. Արտամոնովն այս հանգամանքն իրավացիորեն բացատրում է նրանով, որ Պատմության այդ հատվածի հեղինակ Վիրո կաթողիկոսը պարզապես շրջանցել է այդ փաստը, որպես իր՝ լուսավորչական կրոնավորի համար վերին աստիճանի տհաճ մի երևույթ²²:

Խաբանը, ավարն առած, վերադառնում է իր երկիրը, Շաթ որդուն կարգադրելով 40 հազար զորքով շարժվել Աղվանքի վրա²³: Նա որդուն և զորքի մյուս մեծավորներին պատվիրում է. «Եթէ ևլցեն մեծամեծք և առաջնորդք աշխարհին ընդ առաջ որդույն իմոյ և տացեն ի ձեռս զանշխարհն ինձ ի ծառայութիւն և ընդարձակեսցեն զբաղաքս և զամրոցս իւրեանց և զվաճառս առաջի զօրաց իմոց, թողացուցէք և զուք նոցա կեալ և ծառայել ինձ. ապա եթէ ոչ, մի՛ խնայեսցէ ական ձեր ի նոսա յամենայն հասակ արուի. և զմատաղատունկս արուացն և զագաս իգականացն պահեսցէք ինձ և ձեզ ի ծառայութիւն և յաղախութիւն»²⁴:

Շաթը հոր պատվերի համաձայն պատգամադրեր է ուղարկում Աղվանքի պարսիկ նոր մարզպան Սեմա Վշնասպին ու կաթողիկոս Վիրոյին: Մարզպանը, խաղարների հոսն առնելուն պես. «առեալ զաղխն իւր ընդ իւր՝ յափշտակեալ և զբազումս ինչ յաշխարհէս աստի», փախավ գնաց իր Պարսից երկիրը: Եվ մնացին դեմ-հանդիման «գազանն ապականիչ», մեկ էլ նրա որսն անպաշտպան ու անօգնական:

Ահա այս ճակատագրական պահին էլ հանդես է գալիս Պարսից դեմ Աղվանից իշխանների կազմակերպած ապստամբության մասնակից, Պարսից 25-ամյա գերությունից հենց նոր վերադարձած Աղվանից աշխարհի կաթողիկոս Վիրոն: Նա սկզբում փորձում է Շաթի բանագնացներին կաշառել, ձգձգել սպասվող հարձակումը, մինչև որ Պարսկաստանից կգար իր խնդրած ռազմական օգնությունը: Սակայն պարսիկները գիտեին միայն թալանել, բայց ո՛չ օգնություն հասցնել նեղյալ հայատակին: Շաթը հասկանում է կաթողիկոսի պլանը և իր վայրենի խաժամուժով հարձակման անցնում: «Յանկարծակի պատեաց մէգն և մատախուղն զամենայն երեսս երկրիս մերում առ հասարակ, զդաշտս և զգլուխս լերանց, զբլուրս և զխորս ձորաց, և ոչ ուրեք մնաց քայլ մի ոտին յամենայն սահմանս երկրի մերում, ի շէնս և յագարակս, ի տունս և յանցս ճանապարհաց, բերան ամենեցուն կարգայր վա՛յ, վա՛յ: Գոչիւն բարբարոսացն ոչ լուր, և չէր՝ ուր ոչ: Ելանէր սատակիչ բարբառ շար թշնամեացն, և այն ի միում աւուր և ի միում ժամու: Քանդի բաժանեցին յառաջագոյն վիճակաւ ըստ զնպից զգաւասս և զշէնս զհեղեղատս և զգետս, զաղբիւրս և զմօրս, զլերինս և զդաշտս՝ յամենեսին միապէս ըստ ժամադրին սփռեալ զասպա-

է եղել: Այդ զեպում քաղկեդոնական կաթողիկոսից մկրտման ինչո՞ւ պիտի երկրորդ անգամ բնդուներ քաղկեդոնականություն (տե՛ս Յ. Մ. Բունյաթով, Ազերբայձան в VII—IX вв., с. 49):

²³ *Феофан* Византиец, *Летопись византийца Феофана от Диоклитяна до царей Михаила и сына его Феофилакты*, с. 235--236.

²⁴ *Կաղանկատուացի. էջ 175:*

²⁰ Е. Такайшвили, *Источники грузинских летоисей*, т. II, *Жизнь и известия о Багратидах*. СМОМПК, вып. 28, с. 128.

²¹ *Անդ. էջ 135—137:*

²² М. И. Артамонов, *Очерки древнейшей истории хазар*, с. 59—60. *Իրավացի չէ Ձ. Բունիաթովը, երբ կարծում է, թե Վիրոն քաղկեդոնական—գրեթե իրոս*

տակս աշխարհակալ. և ի ծագաց մինչև ի ծագս դողացին սահմանք մեր»²⁵.

Հալածական ու հետապնդվող ժողովրդին փրկել շին կարող նույնիսկ Արցախամուր աշխարհի բերդակուռ ժայռերն ու խորածոր պատասպարանները, որովհետև վայրենասուն ասպատակողները սովոր էին մաղցել անմատչելի ժայռերն ի վեր, և նրանց ձիերն էլ անարգել ընթանում էին «ի վերա գլխոց լեռանց»:

Կաթողիկոս Վիրոն Կողթ-ագարակ կոչված գյուղից փախում և Չարաբերդ (Ջրաբերդ) ամրոցն է հավաքում երկրի բոլոր մեծավորներին՝ «զամենայն գլխավորս. դորդիս թագաւորացանց և մեծաց աշխարհիս. զգաւաւանս և զգիւղապետս, զերիցունս և զսարկաւագունս, և զգրպիրս...», սուպ գիմելով նրանց, ամբողջ ահագնությունը ներկայացնում է պարագայի ահավորությունն ու դաժանությունը: Նա խորհուրդ է տալիս հայաստակություն հայտնել խաղրաց խաբանին և շահել նրա սիրտը մեծ նվերներով. «Իւրաքանչիւր սր ի ձէնց ըստ կարի իւրում բերցէ արծաթ և ոսկի և հանդերձս»:

Վիրոն Աղվանքի բոլոր մեծամեծների հետ միասին, հարուստ նվերներով ներկայանում է Պարտավից հյուսիս՝ բաց դաշտում բանակած Շավի խաբանորդուն, պաշտօտապին հայտնում իր երկրի հպատակությունը, նվերները բաշխում Շաթին ու նրա մերձավորներին, ճարտար խոսքերով այնքան քաղցրացնում գազանի սիրտը, որ նա նույնիսկ համաձայնում է սուլատ արձակել զերի վերցվածներին, միայն թե ստանար «զաշխարհս գալստիկ երեսին՝ Աղուանից, Լրփնաց և Չողալ չիւր սեպհական ժառանգութիւն յախտենական»²⁶:

Պատմիչը բոլոր մանրամասնություններով ու զեղարվեստական բարձր շնչով նկարագրում է խաղարների ճաշը: Ահա այդ տեսարանը. «Անդ տեսար զբազմոցս նոցա ի գուճս ի վերայ ծնոցաց ըստ նմանութեան փաղանդաց ծանրաբեռն ուղտոց. իւրաքանչիւր կոնք մի լցեալ մսով յանսուրբ անասնոց, ըստ նմին և սկսեղբ, յորում թանաչին յուտին իրեանց

²⁵ Անդ, էջ 177:

²⁶ Անդ, էջ 184: Ինչպես արդեն յուր է արվել, Աղվանք, Չող և Լփիքը աշխարհներն արևելյան Անդրկովկասի վարչաբազմաբան միավորներն են, որոնք ընդունվում են նույնիսկ խաղարական խաբանի կողմից: Աղվանքը Կուրից հարավ տարածված հայաշխարհն է (Արցախ և Ուտիք): Չողը ձախափնչարի արևելյան մասը՝ Չող մայրաքաղաքի անունից, իսկ Լփիքը՝ նույն ձախափնչարի արևմտյան մասը՝ մինչև Ալագան գետը: Եվ շփոթում է Մ. Ի. Արտամունովը, երբ կարծում է, թե Լփիքը լեռնային Կովկասի հարավարևելյան մասն է (տե՛ս «История хазар», с. 153):

չաղացուր, և զբաժակս. և զըմպելիս արծաթեղէնս քանդակունս յոսկի համակեալս, զորս բերեալ էին յաւարէն Տփխեաց. ընդ նմին և զըմբոցս եղջիրեղէնս և զշորմաձևս փայտեղէնս մեծամեծս, որով պարզանակն յափէին. և նովին պարարտական սաղոցց անլուա աղտիւքն՝ յարխուն յանզգայս, ի միոյ բաժակէ՝ երկու երկու կամ երեք երեք ի նոցանէ զանապակ գինին, կամ զկաթն ուղտուց և ձիուց յանյագ որովայնս իրեանց իբրև ի տիկս ուռուցիկս շափէին...»²⁷:

Վիրոյին ու նրա ուղեկիցներին ևս հրավիրում են անսուրբ այս ճաշկերույթին, սակայն նրանք թաքուն զզվանքով հրաժարվում են: պատճառաբանելով, թե իրենց մեծ պասի օրերն են: Սակայն, այնուամենայնիվ, մի-մի կտոր միս են վերցնում, կտոր հացի հետ ուտում, զբազմելով հյուրընկալների համակրանքը: Վիրոն ուրիշ էլք չի գտնում, քան իր երկրի անունից Շաթին տալ հպատակություն հրդում, որը միաժամանակ և խելուք խրատ էր՝ ուղղված ավերող դադանին. «...մի խոպանացեալ անսպատասցի երկիրն, առաքեսցես ի քէն գործակալս արս հաւատարիմս յամենայն տեղիս՝ ի շէնս և յագարակս, ի բերդս և յաւանս, զի դարձցին բնակիչք երկրիս և դործեսցեն առանց երկիւղի և պահեսցին նոքօք յամենայն բռնութենէ զորաց քոց...»²⁸:

Հաշտություն է կնքվում: Խաբանորդի Շաթը խոստանում է այլևս չհարձակվել Վիրոյի երկրի վրա, այլ բավարարվել միայն հարկեր վերցնելով:

Սակայն այս պարհուրելի շարիքը շնոսացված՝ վրա է հասնում առավել մեծ մի արհավիրք. գայիս է մուկը, սպառ-սպուռ ուտում բույս ու կանաչ: Եվ ժողովրդի վրա հարձակման են անցնում երեք անողորմ զորավարները՝ սովը, սուրն ու մահը: Պատմիչն աղիողորմ հառաչով հայտնում է, որ «...Սոսկալի զօրաւարրն երեքին՝ սովն. սուրն ու մահն դործակից նոցա զոյգրնթացեալ ընդ միմեանս խուճապէին, անխնա վիրաւորէին և դիաթաւալ տարածանէին. ոչ արժանի լեալ հաղորդութեան յետին թուշա-

27 Անդ էջ 182: «Շորմաձևս բառը, ըստ Ն. Յա. Մառի, կազմված է իրերական «շորմ»-ից, որ բույսի անուն է: նրա պտղի ներք մաքրելուց հետո կեղևը դառնում է շերտիաձև խոշոր՝ այնպես, ինչպես դարբարոյան կարկածը, թերևս հենց նույն բույսն է: Դառնալով «Սաղոցց»-ին (ձեռագրերում՝ նաև «սառոցց», իսկ № 2646-ում, 6520-ում և Մ. էմինի հրատարակության մեջ՝ «սաղոց») Մառը դիտարկ նկատել է, որ գա ալավորական «սալոն» է («слово «сало»—русское, это факт бесспорный»)՝ փոքր ինչ ձևափոխված (տե՛ս նրա՝ «По поводу русского слова «сало» в древнеармянском описании хазарской трапезы VII века» (Избранные работы, т. 5, Л., 1935, с. 67—113):

²⁸ Անդ, էջ 185:

կին քառութեան. զի արգելոյր սուրն, հեղգայր սովն և հեղձուցանէր մահն»²⁹,

Մարդիկ ստիպված են լինում ուտել ինչ որ պատահի՝ սատկած անասունների միս, ծառերի ճյուղեր, հին կաշի, ծխաթակ կաշեպարկեր, կոշիկներին հին կապիշներ, իսկ սվ գոտներ պատուղ ու կորիզ, կաղար ու կուտեր: Պատմիչի ասելով՝ նույնիսկ մեռածների միս էին ուտում...

Այսբանից հետո էլ մարդկանց վրա խելացնորություն եկավ, որով հիվանդները երկու ամիս անդգա ընկնում էին, սևանում. կորցնում մարդկային տեսք ու կերպարանը: Սակայն կատարվեց և դրանից ավելի վաթարը. զարնան առաջին կանաչի հետ կենդանի մնացածները դաշտ էին դուրս գալիս խոտով սնվելու: Եվ դրանից էլ բաղձապատկվում էր մահացողների թիվը: Աշխարհն ասես համատարած գերեզմանոց էր անթաղ մեռելների: «Կոխեյաք գդիսկոնս սովամահաց՝ ահացեայս և ուտուցեայս ընդ երեսս դաշտաց իրրն զքարինս հեղեղատի».— դառնակսկիծ պատմում է Աղվանքի, Լվնաց և Չոլա կաթողիկոս Վիրոն:

Սրանով էլ ավարտվում է խաղարների ամենահաճավոր արշավանքի ու նրա հետևանքների նկարագրությունը «Աղվանից աշխարհի պատմություն» մեջ:

«Պատմությունը» վկայում է նաև խաղարների հաջորդ արշավանքը, որ տեղի ունեցավ 630-ին («Յերկրորդ ամի Արտաշրի որդույ Կալատայ Պարսից արքայի») և հարկատու դարձրեց ոչ միայն Աղվանքը, այլև ամբողջ Հայոց աշխարհը՝ սահմանակից երկրներով հանդերձ:

Պատմագիտության մեջ արդեն նկատվել է, որ «Աղվանից աշխարհի պատմությունը» միակ աղբյուրն է, որը հանդամանորեն նկարագրում է խաղարների հարկային քաղաքականությունը³⁰:

Աղվանքում խաղար բռնապարավիշներին վճարվելիք հարկերը հետևյալները պետք է լինեին՝ մաքսատուրքեր արհեստների համար, ինչպես նաև ձկնորսությունից ու առհասարակ վաճառականությունից ստացվող եկամուտներից, ապա պարսկական դիստրաբմա կոչված տուրքը: Պատմիչը վկայում է, որ խաղարն «առաքեաց գործակալս ի վերայ ազգի-ազգի արուեստագործաց, որք ղգիտութիւն ոսկէծնութեան՝ արծաթահալութեան և երկաթահալութեան և պղնձագործութեան ունէին. նաև զանցս վաճառաց և վկարթնկէցս ձկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ և Յրաս-

²⁹ Անդ, էջ 187:

³⁰ М. Н. Артамонов, Взд. ашх., էջ 145:

խայ՝ զամենայն ճշդիւ պահանջէր, և դիտարաքմայսն ըստ սովորութեան աշխարհագրի Պարսից թագավորութեանն»³¹:

Ըստ երևույթին հարկերը հավաքելիս խաղարներին աջակցում էին տեղական մեծատունները, որոնք ժամանակին պարսիկների ծառայության մեջ բավականին փորձառություն էին ձեռք բերել, որպեսզի ոչ ոք ոչինչ չկարողանա ծածկել հարկահաններին: Եվ այս ամենի մեջ իր հրեշտակով զարն ուներ այսպիսի աշխարհագիրը, որի համաձայն էլ գործում էին նոր բռնակալները: Միայն պետք է կարծել, որ այս նորերն ավելի շատ էին թալանում, քանի որ, եթե հարկ էին պահանջում ըստ պարսիկների սարքած աշխարհագրի, ապա նրանից հետո սովը, սուրն ու մահը քշերին էին կենդանի թողել, և այս բան էլ հիմա պարտավոր պետք է լինեին հարկ տալ նաև մեռածների տեղ:

Այնուհետև պատմիչը հյուսիսական այդ հորդանների մասին խոսում է մշուշոտ ակնարկներով ու այլաբանությամբ: Իհարկե, սրանից առաջ պատմվում է նաև խաղարց մի այլ խոշոր ճակատամարտը, որով նրանք Սևանի ափին գլխովին ջարդել էին պարսից բանակները:

Եվ հանկարծ՝ «...Բայց անդէն դարձուց զերեսս իւր կաթսայն հիւսիսոյ յեաս ընդդէմ որդոցն իւրոց, սկսաւ ոգորիլ իւրովի բնդ ինքն, ցտնել զեռանդն բարկութեան իւրոյ ի վերա կորեանց իւրոյ և տուժիլ ընդ միոյ զհազարս և ընդ Լրկուցս պրիւս»³²:

Մ. Ի. Արտամունովին հաջողվել է այս և հաջորդ մանվածապատ նուխադասությունների միտքը մեկնաբանել շինական աղբյուրի օգնությամբ, որը հաղորդում է հենց այդ ժամանակ խաղարական պետության մեջ բռնկված ներքին պայքարի ու խժոճությունների մանրամասները³³: Պարզ է, որ այս ամենի հետևանքով խորտակվող խաղարանքն այլևս չպետք է կարողանար խառնվել Անդրկովկասի գործերին:

Խաղարները մեկ էլ Աղվանքում երևացին Զիվանշիրի օրերին: Նրանք այս անգամ էլ ապստամկեցին անդրկուրյան Աղվանից դավաճանները և բանակ դրին Կուրի ափին: Զիվանշիրը նրանց հտ քշեց, տարավ, անցկացրեց Դերբենդի լոնով, ապա հանձնարարեց՝ այլևս չանցնել այս կողմ:

Մի քանի տարի անց խաղարների հարևան հոները եկան անապատի խորշակի պես: Եվ Զիվանշիրը, երևի հասկանալով, որ պատերազմով նրանց հետ չափվել չի լինի, փորձեց հաղթել բարեկամությամբ. խաղարնի աղջկա ձեռքը խնդրեց: Այս բարեկամությունը մնաց մինչև Զիվանշիրի

³¹ Կաղանկատուացի, էջ 190:

³² Անդ, էջ 194:

³³ М. Н. Артамонов, Взд. ашх., էջ 154:

Հաջորդի՝ Վարազ Տրդատի տիրապետության առաջին տարին՝ 684 թվականը:

* * *

Խաղաղ արշավանքների աննշանությամբ ավելորդ չի լինի անդրադառնալ ևս երկու հարցերի, որոնք վերջին ժամանակներս հետազոտողների կողմից ստացել են կամայական ու իրարամերժ մեկնաբանություններ: Այդ հետազոտողներից ոմանք, իբրև թե, հիմք ընդունելով հայկական աղբյուրները, հայտարարում են, թե խաղարները թուրքեր են և սկսած իրենց՝ ղեպի Անդրկովկաս կատարած առաջին արշավանքներից, մնացել են այստեղ, դարձել տեղաբնիկներ³⁴:

Պատմաբան Զ. Բունիաթովը խաղարներին թուրքեր է համարում՝ հենվելով Թեոֆանեսի հաղորդած հետևյալ տեղեկության վրա. «Հերակլ կայսրը Սասանյանների դեմ կովկասի դաշն էր կնքել արևելյան թուրքերի հետ, որոնց կոչում են խաղարներ»³⁵:

Սակայն Բունիաթովը մոռանում է, որ Թեոֆանեսը IX դարի հեղինակ է, որը VII դարի իրողությունը վերաբերող իր այս տեղեկությունը հաստատող ոչ մի աղբյուր չի վկայակոչում, հետևապես և հավաստիություն չի կարող ներշնչել:

Խաղարներին թյուրքյուտ (= թուրք) է համարում նաև Լ. Ն. Գումիլևը: Տարորինակ է, որ նրա կողմից այս աղգագրական անվանափոխությունը կատարվում է հենց Կաղանկատավացու Պատմության մեջ խաղարների արշավանքին վերաբերող ըննության ժամանակ, երբ աղբյուրը ոչ մի հիմք չի տալիս նման վարկածի համար³⁶: Սակայն Գումիլևի զբոսում նկատվում է նաև խաղարների ու թյուրքյուտների տարբեր ցեղային պատկանելության ըմբռնում. իբր թե. Աղվանք ու Անդրկովկաս եկած խաղարների հետ էին և թյուրքյուտները, որոնք վճռական ուժն էին այդ արշավանքի³⁷: Այսուհանդերձ, Աղվանից աշխարհի պատմությունը տեղեկություն շունի ո՛չ «թուրք», ո՛չ էլ «թյուրքյուտ» կոչված ցեղերի մասին:

Հայտնի արևելագետ Վ. Վ. Բարտոլդը խաղարներին ու թուրքերին տարբերում է իրարից, գտնելով, որ առհասարակ մինչև VIII դարը «թուրք» անուն գոյություն չի ունեցել, VIII—X դարերում այն գործ է

ածվել վարչաքաղաքական միավորի անվան նշանակությամբ և միայն X դարից է, որ դարձել է որոշակի ընդհանրություններ ներկայացնող աղգագրական միության անուն³⁸:

Այս կարծիքը բաժանում էր նաև Նիկ. Մառը³⁹:

Տեսանք, որ վաղ միջնադարում Անդրկովկաս թափանցած ցեղերին թուրք հայտարարելիս ոմանք չեն խորշում հակադիտական, նույնիսկ առաջին հայացքից ոչ մի արժանահավատություն չեն բերել աչնպիսի պնդումներից, ինչպես «խաչանդուրք»—«ընտիր թուրք»—ն է:

Ուշագրավ է, որ X դարի հեղինակ Թեոֆանեսի մի հատիկ հայտարարությունը խաղարների ու թուրքերի նույնությունը մասին՝ չի հաստատվում հատկապես նրա ժամանակի այնպիսի աղբյուրներով, որոնք ավելի մոտիկից գիտեին խաղարներին ու թուրքերին և կտրականապես մերժում էին նույնիսկ վերջիններիս նմանությունը: Այսպես, արաբ խոշոր մատնագիր ալ-Իսթախրին (X դ.) գրել է. «Խաղարները նման չեն թուրքերին. նրանք թխահեր են և բաժանվում են երկու դասի. մեկը կոչվում է «կարախաղարներ», որոնք թուխ են, նույնիսկ սև. նման հնդկացիներին. մյուս դասը սպիտակ է՝ երևելի՝ ղեղեցկությամբ ու արտաքին արժանիքներով»⁴⁰: Նույնն է հաղորդում նաև ալ-Իսթախրիի ժամանակակից իբն-Հուկայը⁴¹:

Արաբ հեղինակներն իրենց այս տեղեկությունն առավել կոնկրետացնում են խաղարների ու թուրքական լեզուների հարցում, «Խաղարների լեզուն նման չէ թուրքերի ու պարսիկների լեզուներին և առհասարակ այն նման չէ (մեզ ծանոթ) որևէ ժողովրդի լեզվի,— դրել է ալ-Իսթախրին: Եվ նրա տեղեկությունն է հաստատել իբն-Հուկայը՝ պնդելով որ «մաքուր խաղարների լեզուն նման չէ թուրքերի լեզվին, և նրան չի համապատասխանում (մեզ) հայտնի ժողովուրդներից որևէ մեկի լեզուն»⁴²:

Այս իրողությունը հայկական մատենագրությունը հայտնի էր ավելի վաղուց: Գեոևս «Աշխարհացոյցի» հետագա խմբագիրները գիտեին, որ թուրքաստանը և խաղարիան միմյանցից տարբեր են: Խաղարիան Վուրգալի գետաբերանն էր ընդգրկում՝ տարածվելով ղեպի արևմուտք, իսկ թուրքաստանը նրա արևելյան հարևանն էր. «Եւ յարևելից բնակեն Սաւիրք յԱթլ գետ, որ մեկնէ ընդ Ասիական Սարմատք եւ ընդ Սկիւթիա աշ-

34 ՏՃ՝ 3. М. Буниятов, ԿՂՎ. աշխ., էջ 44—45: В. Гукасян, К освещению некоторых вопросов истории Азербайджана в монографии «Азербайджан в VII—IX вв.».

35 3. М. Буниятов, ԿՂՎ. աշխ., էջ 49:

36 Л. Н. Гумилев, Древние тюрки, М., 1967, с. 200—203 и сл.

37 Л. Н. Гумилев, ԿՂՎ. աշխ., էջ 194 և հազ.

38 В. В. Бартольд, Сочинения, т. II, ч. I, М., 1963, с. 553—554.

39 Н. Я. Марр, Избранные работы, т. 4, Л., 1937, с. 93.

40 СМОМПК, вып. 29, с. 49.

41 СМОМПК, вып. 38, с. 113.

42 Անգ.

խարհ, որ են Ապախթարք, այսինքն թուրքաստանը»⁴³, «Աշխարհացոյցը» գիտեր նաև թուրքերի լեզվի մասին. գետը «Ճօթնասնավտակեան, զոր կոչեն թուրք Աթլ դետ»⁴⁴.

Ուշագրավ է, որ մեր մատենագրության մեջ հետագայում ևս այդ տարբերակումը գիտակցվում էր. Օրինակ, ամենահավաստի ու խորագեղ հեղինակներից մեկը՝ Կիրակոս Գանձակեցին, խաղարներին հաստատապես տարբերում էր ազգագրական այն խոշոր միավորից (թաթար-մոնղոլներ), որին ևս փորձում են նույնացնել թուրքերի հետ. Գանձակեցին վկայում է, որ Զինգիդ-խանի որդի Հոթթախաղանը (խաքանը) զորք է գումարել «գիր սեպհական՝ ազգն, զոր մուղալ-թաթարն անուանեն և զխազրաց, և զհոնաց, և զղատիացիս, և զանկիտանս, և զայլ բազում ազգս բարբարոսաց»⁴⁵.

Գանձակեցին թուրքերին գիտե առանց միջնորդության և չի շփոթում խաղարների հետ. «...ազգն հիւսիսոյ արևելից, որ թաթարն անուանէր», կամ՝ «կուտեաց իր զոր անթիւս ի պարսից և ի տաճկաց և ի թուրքաց և եկն յաշխարհս Հայոց»⁴⁶.

Պարզ երևում է, որ պատմիչը ո՛չ խազուրին է թուրք ճանաչում, ո՛չ էլ թուրքին՝ խազար: Հակառակ դեպքում նա այս անուններից մեկն ու մեկը կփոխարիներ մյուսով կամ կբացատրեր, որ խաղարին թուրք էլ են ասում, ինչպես որ նշում է. թե «զոր մուղալ-թաթարն անուանեն»:

Նույն պատկերն է նաև Ստ. Օրբելյանի երկում: Օրբելյանն անպայման ճանաչում է թուրքերին: Այդ նրա Պատմությունն է, որ կոնկրետ վկայում է X դարում Սյունյաց աշխարհ եկած առաջին թուրք վրանաբնականների մասին: Սյունիքի գահերեց իշխան Սմբատն իր զորքի հետ խառնել էր նաև «զԱկիւթացի թուրքն, որք խորանօք բնակեալ յաշխարհի նորա»⁴⁷. Սակայն որովհետև վերջիններս տեղաբնակ չէին, և ոչինչ նրանց չէր պարտավորեցնում մնալ գահերեցի բանակում, առաջին իսկ ձախորդության պահին թողնում-փախչում են. «Անդ ապա զօրն թուրքաց ... խորհուրդ իմն դիւաբախ ի մեջ առեալ... դիաթաւալ երկիր ընկենուին. և ինքեանք դէմ եղեալ փախչէին զկողմամբքն նախշաւանու»⁴⁸.

XI դարի իրողությունների մասին (1049) գրելիս Օրբելյանն ասում

43 «Աշխարհացոյց», էջ 103.

44 Անդ, էջ 202.

45 Գանձակեցի, էջ 223.

46 Անդ, էջ 224.

47 Օրբելյան, էջ 195.

48 Անդ, էջ 196.

է. «ժողովեցան բազմութիւնք պարսից և խազրաց, խորազմաց և արաբկաց, ևս և սկիւթացի թուրքաստանեայց»⁴⁹.

Նվ այսքանից չի կարելի շեղրակացնել, որ Օրբելյանը ևս խաղարներին չի խառնում թուրքերի հետ:

Ուրեմն, հայկական աղբյուրները գիտեին, թե ո՛րն է թուրքաստանը, և ո՛րն է այնտեղ ապրող թուրքերի լեզուն: Սրանից էլ հետևում է, որ, եթե այսքանից հետո խաղարներին որոշակիորեն տարբերակում են, ցույց տալով նրանց աշխարհը («Աշխարհացոյց»), կենցաղը: բարքերը և այլն (Կազանկատվացի), նշանակում է՝ անհիմն է այն պնդումը, թե խաղարները թուրքեր են:

Բանն այն է, որ հայկական աղբյուրները, բացառութեամբ «Աշխարհացոյցի», հյուսիսական ցեղերից գիտեն միայն նրանց, որոնք Անդրկովկաս են արշավել, կամ էլ որևէ կերպ առնչվել են հայոց հետ: Այս ցեղերից չուրաքանչյուրին նրանք ճանաչել են. ամենայն հավանականութեամբ, այն անունով, որով ինքը՝ այդ ցեղն է իրեն կոչել, այլապես անհնար է բացատրել այն անմերձեցնելի տարբերությունը, որ նկատելի է հայկական ու օտար աղբյուրների միջև ամեն մի նման անվան հարցում:

Նվ եթե աղբյուրներն այն կամ այն ձևով Անդրկովկաս թափանցած ցեղերից ոչ մեկին «թուրք» չեն կոչել, այդ նշանակում է, որ նման անունով ցեղ Անդրկովկաս չի եկել ընդհուպ մինչև X դարը, այսինքն՝ այն ժամանակը, երբ արդեն հայ մատենագիրներն արևելքից եկող վրանաբնակ ռազմատեղի ցեղերին կոչում են «թուրք» (Ստ. Օրբելյան, Գանձակեցի և այլք) և ոչ թե խազար, հոն կամ խայլանդուր:

Հետաքրքիր է նկատել, որ հենց «Աղվանից աշխարհի պատմության» մի գլուխը, որը խոսում է Ուտիքում ու Արցախում Մեսրոպ Մաշտոցի սշակերտների քարոզչական գործունեության ու հյուսիսականների կողմից նրանց նահատակվելու մասին (V դ. կես), հյուսիսականներին կոչում է կամ «հոներ» ընդհանուր անունով, կամ բերլիական տարբերակումներով, «Ընդ այն ժամանակս թագաւորն Թոսմոսոքեան իրովք զօրօք և թուրքիական գնդին գումարեալ ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և էանդ յայսկոյս Կուրական գետոյն»⁵⁰.

Այստեղ ղկան հյուսիսականների ցեղային այն կոնկրետ ու իրական անունները, որոնք գործածական պիտի գտնային հետագայում, սկսած VI դարից:

49 Անդ, էջ 373.

50 Կազանկատուացի, էջ 108.

Մի բան պարզ է. կամ հյուսիսականներն ավարառութեան նպատակով այնպես թուցիկ եկել-գնացել են, որ այսրկուրյան բնիկները նրանց հետ հանգամանորեն ծանոթանալու հնարավորություն չեն ունեցել, կամ էլ՝ սա կրօնական մի ավանդությունն է, որ կարող էր բավարարվել միայն հյուսիսական ցեղերի բերրիական «Ռոս», «Մոսոր» և «Քորել» անուններով⁵¹:

• • •

Կարևոր է նաև պարզել խաղարների՝ Անդրկովկաս կատարած առաջին արշավանքի ժամանակի հարցը: Վերը կեոյից՝ մեջբերված այն կարծիքը, թե Կաղանկատվացու Պատմությունը մեր մատենագրության մեջ առաջինն է ներկայացնում խաղարների ասպատակությունների ու ավերածությունների կենդանի պատկերը, չի կարելի այնպես հասկանալ, թե լեռն հենց Կաղանկատվացուն է համարում խաղարների մասին դրած առաջին հեղինակ: Պատմաբանը չէր կարող չհիշել, որ Աղվանքի պատմության այդ հատվածի հեղինակ Վիրտից շուրջ երկու դար առաջ խաղարներին հիշատակել է Մովսես Խորենացին: Պատմահայրը, խոսելով Հայոց Վաղարշ թագավորի (176—196) դրածների մասին, պատմում է, որ «... սորա աւուրս միաբանեալ ամբոխու-

թիւն հիւսիսականաց, զեազրաց ասեմ և զբասւաց, արտաքս քան զզուռն Ճորա ելանեն, առաջնորդ և թագաւոր ունելով ինքեանց զՎնասեպ ոմն Սուրճապ, որք անցեալ վտարին այսր զԿուր գետով: Որոց պատահեալ Վաղարշ ամբոխի մեծաւ և արամբք մարտեօք՝ ցիր դիաթաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս զաշտին, և ծիգ զհետ եղեալ՝ անցանէ ընդ կապանն Ճորայ»⁵²:

Խաղարներին չեն ճանաչում V—VI դդ. մեր մյուս մատենագիրները:

Լ. Մելիքսեթ-Քեկը, որն զբաղվել էր խաղարների մասին հայկական աղբյուրներում հղած տեղեկությունների հետազոտությամբ գտնում էր, որ խաղարները VII դարից առաջ անհայտ էին հայ հեղի-նակներին⁵³: Այս պատճառով էլ գիտնականը ենթադրում էր, թե՛ կամ Խորենացին է ու շրջանի մատենագիր, կամ էլ խաղարների մասին նրա Պատմության մեջ եղած տեղեկությունն է հետագայի մուծում՝ կատարված «գրիչների ու խմբագիրների կողմից»⁵⁴:

Առաջին վարկածը վաղուց հերքված է: Իսկ երկրորդը միանգամայն հավանական է, եթե նկատի առնենք հետևյալ հանգամանքները:

Նախ «խաղարների» ու «բասիլների» անուններն իսկապես միջանկյալ են: Մատենագրի նախադասությունը կտրվում է, որպեսզի իր մեջ առնի «զեազրաց ասեմ և զբասւաց» կտորը⁵⁵: Ապա՝ պատմության հատվածի համար Խորենացին աղբյուր է հայտարարում էղեսացի Բարդաժանին («Զրուցէ մեզ զայս Բարդաժան»⁵⁶, «Յայսմ (Բարդաժանի) պատմութենէ առեալ մեք երկրորդեցաք քեզ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու») ⁵⁷: Բարդաժանն իրոք այդ ժամանակի պատմիչ է համարվում (II դարի II կես) և, ըստ Խորենացու, նա իր պատմությունը թարգմանել է ասորերեն, ապա հունարեն: Սակայն ինչո՞ւ այդ լեզուներով խաղարների մասին ցայսօր ոչինչ չի հայտնաբերվել: Սա հարց է, որ չի կարող երկրորդական համարվել: Եվ, ապա, Խորենացու Պատմության մեջ երկու անգամ «խաբան»

51 «История Агван», с. 311—312: «Росмосок—библейское название народов, живших к северу от Кавказа. В книге Бытия между сыновьями Иафета мы читаем: Иован, Тубал и Мосох. У пророка Иезикиела эти три названия удержаны в том же порядке. В главе о Гоге и Магоге пророк говорит: «Обратись к Гогу, который в стране Магог и который есть князь в Рос и в Мосох и Тубаль». «Тубаль»-ը հայերեն զարձեղ է Քովալ Քորալ-Քորել: «Рос-Мосохы—библейские названия»,—գրել է Ն. Յա. Մալը (տե՛ս «Избранные работы», т. 5, с. 97): Հենց «Աղվանի աշխարհի պատմության» առաջին էջերում էլ Քորելն ու Մոսորը կան՝ որպես տարրեր ցեղական նախահայրերի բերրիական անուններ:

«Յասան և ի նմանէ Հելլենք և Յոյնք, Քորել և ի նմանէ Քէտաղք, Մոսոր և ի նմանէ Լուրիկացիք... (Կաղանկատուացի, էջ 10): Այստեղ Քորելն ընդունվում է որպես թեաղների (թեաղացիք) նախահայր, Մոսորը՝ լուրիկացիների:

Ե. Բորեն «Արամոսոքեան»-ը բացատրել է իրրև «ռուս» և «Մոսկովո անունների միացումը» (տե՛ս E. Bore, histoire des Aghovans..., 1948, p. 76): Կ. Վ. Տրևերը դրանք համարում է պատմությանը քիչ ծանոթ ցեղերի անուններ (տե՛ս «Очерки...», стр. 226):

Միայն է բացատրված նաև Վ. Առաքելյանի կողմից, ըստ որի՝ «Ռոսմոսոր» հոնների թագավորի՝ գրական ճանաչարձով հորինված անունն է («Պատմ. Աղվանից աշխարհի», Երևան, 1969, էջ 281):

52 Խորենացի, էջ 200:

53 Л. М. Меликсет-Бек, Хазары по древнеармянским источникам в связи с проблемой Моисея Хоренского. Сборник «Исследования по истории культуры народов Востока» в честь акад. И. А. Орбели, М.—Л., 1960, с. 117.

54 Անդ, էջ 118:

55 Անդ, էջ 200:

56 Անդ, էջ 201:

57 Անդ, էջ 202:

կոչում է հիշվում՝ «արևելյան» ածականի հետ. «Քանզի լուեալ էր զինամենայն Շապուհոյ ընդ Հնդկաց թագաւորին և ընդ արևելեանն խաբանայ»⁵⁸, Շապուհոյից (Պարսկաստանից) արևելք միջինասիական տափաստաններն են, ուր այն ժամանակ պետք է բնակվելիս լինեին «խաբան» (թագավոր) ունեցող ժողովուրդները:

Բասիլենքի մասին (որպես Նյուախից եկող ասպատակիչների) հորենացին մի քանի անգամ խոսում է: Պատմում է նաև Տրդատի մեծ ճակատամարտը նրանց դեմ (գիրք Բ, գլ. 26), սակայն ոչ մի անգամ չի հիշում խաղարների:

Այս բոլորը բավարար հիմք են՝ կարծելու, որ հորենացին չէր ճանաչում խաղարներին, ավելի ճիշտ՝ ձորա դանից այն կողմ ապրող «ամբոխութիւն հիւսիսականացի» մեջ չէր տեսել խաղարներին: Հետեւապես խաղարների մասին եղած հիշատակութիւնը նրա գրքում՝ Տեւտագայի մուծում է:

«Աղվանից աշխարհի պատմութեան» մեջ հիշվում է խաղարների մի ասպատակութիւնը, որն, իբր թե, կատարվել է IV դարի կեսերին: Սա հայտնի գրույցն է Պարսից արքայից վիրավորված Անդոք Սյուսեցու մասին, այն Անդոքի, որը հարձակվեց և արբայանիստ Տիգրանը թալանեց, երբ Շապուհը կովելու էր գնացել Նյուախական ցեղերի դեմ, որովհետև լուր էր առել, թե «նապիրք բազմամբոխ գնդիւք ելին ընդ Դուսն Չոդայ յաշխարհս մեր»⁵⁹:

Բայց Կաղանկատացին որտեղի՞ց է քաղել նման տեղեկութիւն: Այս հարցին ինքը՝ պատմիչն է պատասխանում. «Գտանին զրոյցք Արեւելից կողմանց, որք ոչ են անկեալ ի գիրս հնագիր պատմագրաց, զորս պատշաճ վարկաք մակագրել ի տառս տողաշարութեան մերում»⁶⁰: Եվ այնուհետև շարադրում է վերոհիշյալ պատմութիւնը:

Ուրեմն, VII դարի սկզբին Վիրոն պատմում է իր օրերում տարածված մի գրույց, ըստ որի՝ խաղարները IV դարում, ձորա պահակը ճեղքելով մտել են Անդրկովկաս: Եվ չի կարելի կասկածել, որ պատմողներն Անդրկովկաս մտած Նյուախական ցեղերին կոչել են իրենց օրերում արդեն հայտնի խաղարների անունով: Այս ենթադրութիւնը հավանական է նաև այն պատճառով, որ Անդոքի պատմութիւնն արված է խաղարների արշավանքների նկարագրութեանը նախորդող

58 Անդ, էջ 239.

59 Կաղանկատացի, էջ 120—121:

60 Անդ, էջ 119:

գլուխներից մեկում, այն հատվածում, որը ճանաչվում է որպես Վիրոն կաթողիկոսի գործ:

Հետաքրքիրն այն է, որ այս գրույցը վերարտադրող մեր մյուս պատմիչը՝ Ստ. Օրբելյանը, խաղարների կողքին շրջանառութեան մեջ է գնում «տաճիկներին», որոնք IV դարում շինեցին կարող լինել, քանի որ նախ աղբյուրներում սկզբնապես «տաճիկ» էին կոչում իսլամական կրոնի հավատացյալներին, իսկ այդ կրոնը ծնունդ է VII դարի:

Այսպես. Կաղանկատացու երկում՝ «Իսկ Անդոկայ շար խորհեալ տնձին և աշխարհի իւրում՝ խրոս հատաներ տանն արքունի և ... հազար և եօթն հարիւր արամբք, ժիր և քաջազնաց երիտարք հասանէր ի քաղաքն Տիգրոն»⁶¹:

Ստ. Օրբելյանն ասում է. «Իսկ Անդոկայ հազար և եօթն հարիւր արամբք՝ ընտրելովք ժիր և քաջ նժուգօք զինքն կողման տունալ...»⁶²:

Ճիշտ է, Օրբելյանի երկում ևս Չոդա պահակը ճեղքողները խաղարներն են («... նապիրք բազմամբոխ գնդօք հասին՝ արտաքս ելեալ ընդ զրոնս Չոդայ յաշխարհս մեր»)՝⁶³ Ասկայն որտեղի՞ց է մեջտեղ բեկել «տաճիկ» ժամանակավրեպ անունը:

Մտնեայն հավանականութեամբ՝ այստեղ Սյուսիքի պատմիչը հին իրականութեան մասին խոսելիս ակամա շրջանառութեան մեջ է դրել իր ժամանակում արդեն լայն տարածում գտած «տաճիկ» անունը:

Մտնում է «Աղվանից աշխարհի պատմութեան» միայն մեկ հատվածը, որի համաձայն խաղարները պիտի Աղվանքն ասպատակած լինեին VI դարի կեսին. «Յետ այսորիկ գերեցաւ ի խաղրաց աշխարհս Աղուսից... Ասլա յերկրորդ ամին հոսարովու արքայից արքային, չորժամ սկիզբն հայ թուականին եղև, ի սոյն ամի փոխեցին զաթոս հայրապետութեան Աղուսից ի Չոդայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարոտա վասն հինահայած արշաանաց թշնամեաց խաչին Քրիստոսի»⁶⁴:

«Սկիզբն հայ թուականին» կլինի 552 թվականը, իսկ հոսարով արքայից արքան եթև Անուշիրվանն է, ասլա քահակալ է 531—579 թթ., հոսարով Բ-ը կամ Փարվեզը՝ 590—628 թթ.: Սրանցից ոչ մեկի գահակալութեան երկրորդ տարին չի բռնում հայոց թվականութեան սկզբի հետ⁶⁵:

61 Անդ, էջ 121:

62 Օրբելյան, էջ 32:

63 Անդ:

64 Կաղանկատացի, էջ 133:

65 Այս թյուրիմացութիւնը եկաւ ես նաև Մ. Ի. Արտամոնովը («Очерки древнейшей истории хазар», с. 130) և Կ. Վ. Տրեկերը («Очерки», с. 231).

Այսպիսի սխալ թույլ չէր տա Խոսրով Ա -ի ժամանակակից հեղինակը Երկրորդի ժամանակակիցը՝ հատկապես, քանի որ նա հայ թվականության սկզբից հետո պետք է լիներ շուրջ քառասուն տարով: Հետևապես, այս հատվածը ևս հետագայի մոծում է, որի հեղինակը հյուսիսից եկած ավարառուներին ու ամերիկյաներին կոչել է իր ժամանակ այդպիսի վարքով հայտնի հյուսիսականների՝ խաղարների անունով:

* * *

Վերջերս Ն. Ա. Շահնազարյանը, անդրադառնալով հայ մատենագիրների երկերում խաղարների մասին եղած վկայություններին, հակադրվել է Գ. Խալաթյանցին, Մելիքսեթ-Ֆեկին ու Մ. Ի. Արտամոնովին, որոնք իրավացիորեն համոզված են, որ խաղարները մինչև VI դարը հայտնի չէին Կովկասին, և նրանց մասին Խորենացու ակնարկը չի համապատասխանում պատմական իրականությանը: Հիշյալ հետազոտողներն իրենց տեսակետի կովաններից մեկն են ճանաչում այն հանգամանքը, որ հունահռոմեական աղբյուրները VI դարից առաջ չգիտեին խաղարներին: Ն. Ա. Շահնազարյանը գրում է, թե «Հունահռոմեական պատմաբանները ծանոթ չէին (մինչև VI դարը — Ք. Ա.) խաղարներին, բասիլներին և ուրիշ ժողովուրդների», որովհետև նրանց չէին տեսել, նրանց հետ առնչություն չէին ունեցել, և զբանի որ այդ ժողովուրդները (խաղարները, բասիլները և այլք — Ք. Ա.) չեն առնչվել հին հեղինակներին ծանոթ ժողովուրդների հետ»⁶⁶:

Թերևս հնարավոր լիներ ընդունել նման մի պատճառաբանություն: Չնայած գիտենք, որ հունահռոմեական հեղինակները քաջ ծանոթ էին այն ժողովուրդներին (Անդրկովկասում ապրող), որոնց հետ, իբր թե, մինչև VI դարը պետք է առնչություն ունեցած լինեին խաղարները:

Սակայն Ն. Ա. Շահնազարյանն ավելի հևուուն է գնում, հայտարարելով, թե ոչ միայն ճիշտ է Խորենացու Պատմության մեջ II դարում խաղարների՝ Հայաստան գալու մասին եղած տեղեկությունը, այլև հավանական է, որ խաղարները հայոց բանակների մեջ կոված լինեին այն պատերազմում, որ հայերը մղում էին պարսից դեմ՝ 338—363 թթ.⁶⁷: Այդ պատերազմն էլ նկարագրել է Փավստոս Բուզանդը, առանց որևէ տեղ խաղարների անունը տալու: Բայց Շահնազարյանն ինչի՞ վրա է հենում իր այս ենթադրությունը: X դարի արաբալեզու հեղինակ Թա-

⁶⁶ Н. А. Шахназарян, Свидетельства армянских матенагиров о каврахах («Բանբեր Հայաստանի արիւմներէ», 1969, № 2) с. 144.

⁶⁷ Անդ, էջ 145—146:

րարիի այն ենթադրության, ըստ որի՝ III դարում խաղարները Հուլիանոս կայսեր բանակների մեջ կովում էին սրբոսից դեմ⁶⁸:

Այսբանից առաջ էլ Ն. Ա. Շահնազարյանը բավական վստահելի էր համարել Մակար Բարխուտարյանցի այն վարկածը, որի համաձայն՝ «արշավանքով Անդրկովկաս եկած խաղարների մի մասը նստել է աղվանական գավառ Քուստայում, որի հետևանքով այդ գավառը վերանվանվել է Խաղար, իսկ հետո՝ Խաղա կամ Կաղախ»⁶⁹:

Այս ենթադրությունն ինչի վրա է հիմնված, Կամ ո՞վ է ասել, թե Արցախի Քուստի գավառն աղվանական է: Ո՞ր մատենագիրն է վկայել, թե խաղարները եկել-նստել են Քուստի գավառում, որպեսզի Քուստին դառնա Կաղախ⁷⁰: Ո՞չ ոք: Այստեղ ամեն ինչի հիմքը ենթադրությունն է: Մեկը ենթադրաբար մի բան է ասել, մյուսն էլ ենթադրում է, որ նրա առածը «բավականին վստահելի» է, որպեսզի նրանից պատմություն ասիրքվի: Ի՞նչ այսպես էլ փաստերի ու փաստաթղթերի պատմությանը փոխարինելու է գալիս ինքնահնար պատմությունը:

Թվում է վկայակոչված պատմական աղբյուրների արժանահավատ տեղեկությունները բավականաչափ հիմք են տալիս եզրակացնելու, որ խաղարները թուրք կամ թուրքալեզու ժողովուրդ չեն եղել: Ապա նրանց Անդրկովկաս կատարած առաջին արշավանքները եղել են VI դարի վերջին ու VII դարի սկզբին: Ինչպես այս, այնպես էլ հետագայի արշավանքները կրել են կողոպտչական ասպատակությունների բնույթ, և խաղարների տիրապետությունն Անդրկովկասում երբեք էլ տևական չի եղել: Առավել ևս. ասպատակություններից հետո նրանց՝ Անդրկովկասում զանգվածաբար մնալու և մշտական բնակություն հաստատելու մասին պնդումները զուրկ են որևէ հիմքից:

* * *

Խաղարների ասպատակությունների շրջանին վերաբերող մյուս հարցը, որը չի կարելի անուշադրության մատնել, Աղվանքի կաթողիկոս Վիրոջի անձնավորության ու գործունեության մեկնաբանությունն է պատմագիտության մեջ:

Այս հարցով հանգամանորեն զբաղվել է Ն. Ակինյանը՝ հիմք ունենալով պատմական հավաստի աղբյուրները:

⁶⁸ Անդ, էջ 145:

⁶⁹ Անդ, էջ 142: Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, հատ. Ա, Վաղարչապատ, 1902, էջ 29:

⁷⁰ «Քուստի գավառանուն լիս: Գավառը կոչվել է «քուստ-ի Փանեա», որ նշանակում է՝ «Փանեյա գավառ»: հետագայի Փառխուսը:

Վիրոյի անձն ու գործն արժանացել են նաև Զ. Բունիաթովի քնն-նութեանը: Սակայն այս դեպքում պատմական աղբյուրները կամ անտեսվել են, կամ մեկնաբանվել այնպես, ինչպես հարմար է գալիս հետազոտողի կամքին:

Բունիաթովը գտնում է, որ շատ մեծ է «Վիրոյի դերը Առանի ժողովրդի ձեւավորման ու համախմբման պրոցեսի պատմութեան մեջ», և նրան համարում է «միջնադարյան Ազրբեջանի խոշորագույն դեմքերից մեկը»⁷⁰: Դժբախտաբար, հեղինակն այս որակումներն այնքան պարզ ու հասկանալի է համարում, որ փորձ անդամ չի անում բացատրելու, թե Առանի ո՞ր ժողովրդի ձեւավորումն է զլխավորել Վիրոն, և նույն Վիրոն ի՞նչ կապ ունի միջնադարյան Ազրբեջանի հետ, որպեսզի հանդիսանա նրա խոշորագույն դեմքերից մեկը: Այսքանը երկրորդական ու անկարևոր համարելով, Բունիաթովը հետո էլ պնդում է, թե 603/4 թ. հակապարսկական ապստամբություն է եղել Վիրոյի զլխավորությամբ, և նույնով Բ-ը անշեւ է արդ ապստամբությունը, Վիրոյին 25 տարվա բանտարկության տարել որպես ապստամբության ղեկավարի⁷¹:

Բունիաթովը գիտե, որ Աղվանքի ապստամբության մասին, «Աղվանից աշխարհի պատմությունից» բացի, ոչ մի աղբյուր գոյություն չունի⁷²: Իսկ այդ պատմությունն էլ, ինչպես վերը տեսանք, վկայում է միայն, որ Վիրոն համարվել է ապստամբների մեղսակից և ոչ թե ղեկավար. «յանցական գտնալ ընդ ապստամբողս մեծամեծաց իշխանաց աշխարհին Աղուանից»⁷³:

Այո՛, միայն այսքա՛նը: Սակայն, քանի որ Վիրոն արդեն ճանաչվել է «միջնադարյան Ազրբեջանի խոշորագույն դեմքերից մեկը», Զ. Բունիաթովին անհրաժեշտ է ապացուցել, որ նաև ապստամբության պարագլուխն է եղել, այլև՝ հայոց եկեղեցու ռիսկին թշնամի, հայ միաբնակության դեմ, իբր թե, տեղի ունեցած Աղվանից եկեղեցու հուժկու ապստամբության կազմակերպիչը⁷⁴: Բայց այսքանի համար փաստ է հարկավոր: Եվ Զ. Բունիաթովը «փաստն» էլ է սարքում Ուխտանես եպիսկոպոսի պատմության տեղեկություններից:

Ուխտանեսի պատմության երկրորդ հատվածը բացառապես պատմում է Վիրքի կաթողիկոս Կյուրիոնի ձեռքով վրաց եկեղեցու անջա-

տումը հայկականից: Այնտեղ ոչ մի խոսք չկա Աղվանքի եկեղեցու մասին, քանի որ առավել հավաստի աղբյուրները հայտնում են, որ Աղվանքի եկեղեցին միշտ հայոց եկեղեցու հետ է եղել և այժմ խառնակ ժամանակներում անհողողող մնացել է նրա հետ. «... ի ժամանակս Աբրահամու Հայոց կաթողիկոսի բաժանեցան Վիրք ի Հայոց միաբանութենէ ի ձեռն Կիրիոնի, այլ և Յոյնք և Իտալիա ընդ՝ նոսա: Իսկ Աղուանք ոչ քակտեցան յուղղափառութենէ և ի միաբանութենէ Հայոց»⁷⁵,— սա Կաղանկատուացի է, Աղվանից աշխարհի և նրա եկեղեցու իրողութունների միակ ամենավստահելի աղբյուրը:

Այս խառնակ ժամանակների մասին օտար աղբյուրն էլ նույնն է վկայում. «և կողմանքն Վասպուրականի և Սասնոյ և Աղուանք և Սիւնիք և Յակոբիկ ասորիք էին ի մի դաւանութիւն առաքելական հիմամբ»⁷⁶:

Զ. Բունիաթովն Ուխտանեսի պատմությունից մի հատված է քաղում այսպիսի հավելումներով. «606/7 թ. Վրաստանի կաթողիկոս՝ Կյուրիոնը Գլինում գտնվող Սմբատ Բագրատունուն՝ Վրկանի (Իբե-րիայի) մարզպանին գրել է նամակ, որի մեջ մենք կարդում ենք. «Յուրտավի եպիսկոպոս Մովսեսը, իր շար գործերի պատճառով, դիշերով թարուն փախել է (ալբանական) ապստամբների մոտ, ներկայացել Վահրամին (Վիրո) և այնպես շարութեամբ է վարվել, որ մեծ վնաս է հասցրել Արիաց երկրին»: Բայց եպիսկոպոս Մովսեսը, արդարանալով, Սմբատին գրում է. «Ես Վահրամի մոտ շեմ եղել: Սակայն հաղորդում եմ քեզ՝ Տիրոջը, այն, ինչ Վահրամն էր գրել ինձ. «Եկեղեցուց քո հեռա-նալը մեծ բան է, բայց երբ դու հեռացել ես, պիտի գայիր մեզ մոտ: Այստեղ (Ալբանիայում) եկեղեցին ունի մեծ բաժին, որը կարող էր ապահովել և քեզ»: Ես այդ նամակը ցույց եմ տվել կաթողիկոս Աբրահամին (607—615 թթ.), ցույց եմ տալիս և քեզ՝ տիրակալիդ, եվ ես իսկույն պատասխանել եմ: Ես ասել եմ (Վահրամ-Վիրոյին), էլ ինչո՞ւ եմ նրանցից հեռացել, որպեսզի գամ ձեռք մոտ, չէ՞ որ ձեր (ալբանե-րիդ) և նրանց (վրացիների) հավատը մեկ է»⁷⁷:

Վահրամ-Վիրո, ապստամբների-ալբանական, այստեղ—Ալբանիա-յում, ձեր—ալբանեներիդ, նրանց—վրացիների «բացահայտումները», ստանց բացառության, կատարել է Զ. Բունիաթովը, իսկ թե ինչի՞ հի-

70 Յ. Բунятов, նշվ. աշխ., էջ 46:

71 Անդ, էջ 47:

72 Անդ:

73 Կաղանկատուացի, էջ 171:

74 Յ. Բунятов, նշվ. աշխ., էջ 47—48:

75 Կաղանկատուացի, էջ 306:

76 Միխայիլ Ասուրի, Ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1871, էջ 338:

77 Յ. Բунятов, նշվ. աշխ., էջ 47—48:

ման վրա, ինչպե՞ս, այդ մետոմ է իր գաղտնիքը: Միայն պարզ է «ինչո՞ւ»-ն, որպեսզի ապացուցի, որ այսքանը կատարվել է Ազվանք—Ալբանիայում, Վիրոյի գլխավորությամբ և հայերի դեմ:

Այժմ տեսնենք՝ փաստերն ինչ են ասում:

Յուրտալի⁷⁸ եպիսկոպոս Մովսեսը, վրաց քաղկեդոնացած (609 թ.) Կյուրիոն կաթողիկոսից փախչում է Հայաստան, սուրբ Հովհաննու վանքը⁷⁹, որ գտնվում էր Արագածոտն գավառում, Կարբիում⁸⁰, Կյուրիոնը մեքատ մարզպանին զրած թղթում Մովսեսին մեղադրում է, թե, իբր, նա փախել է դիշերով («պղտ ի դիշերի փախստական զնաց») և ճանապարհին էլ եղել է ապստամբների գլխավոր Վահրամի մոտ, այն ապստամբների, որոնք ուղում էին շատ քաղաքներ հանձնել թշնամուն և «Արեաց (այսինքն՝ Վրաստանին, որ հպատակ էր պարսիկներին) աշխարհիս մեծ վնաս հասուցանէր»:

Մի՞թե Զ. Բունիաթովի կարծիքով՝ Ալբանիան գտնվում էր Բուխարեսաշենի ու Կարբիի արանքում, և այստեղի ապստամբ Վիրոն էլ պետք է թշնամուն (բյուզանդացիներին) հանձներ Վրաստանի քաղաքները:

Բյուզանդահայատակ Հայաստանում պարսկական տիրակալության դեմ ապստամբած, նաև սահմանակից վրացական գավառներն աստղատակող Վահրամը հայ իշխան է եղել: Մ. Բրոսսեն նրա տիրույթները դնում է Թիֆլիսի ու Կարբիի արանքում, Վահրամին ճանաչելով որպես հայ իշխանի, որը բյուզանդահայատակ էր, հետևապես և քաղկեդոնական: Իսկ ն. Ակիևյանը հաստատում է, որ «Արարատյան հունական բաժնի հայր ընդ առաջնորդությամբ Վահրամա հայու կասպատակեին սահմանակից վրացական գավառները և սրանով մեծ «ղիան» կհասցնեին վրաց ու «Արեաց արքային»⁸¹:

Եվ պատահական չէ, որ Մովսեսն այս Վահրամին դրել էր, թե ինքը նրա մոտ շէր կարող գնալ, որովհետև նա էլ այնպիսի քաղկեդոնական է, ինչպես վրացիները:

Զ. Բունիաթովին չի զգուշացրել նույնիսկ այն հանրահայտ իրողությունը, որ Կյուրիոնի ու Մովսեսի (ուրեմն և Վահրամի) այս աղմուկը տեղի է ունեցել շուրջ 609 թվականին (քանի որ վրաց եկեղեցին այդ ժամանակ է բաժանվել հայերից), իսկ Վիրոն այն տարիներին Պարսից արքայի բանտում էր գտնվում՝ բանտարկյալի 6—7 տարվա ստամով: Նա 628-ին նոր միայն հայրենի Ազվանք հասավ 25 տարվա բանտարկությունից հետո:

Վիրոյի քաղկեդոնականության հարցին դառնալով՝ ասենք, որ այդ մասին խոսող միակ աղբյուրը Աբրեսի պատմությունն է, որը Պարսից արքայի հրավիրած ժողովի հանգամանքները պատմելիս նյութանցիկ հիշում է՝ «Իսկ որք զՔաղկեդոնին՝ զՎիրոյ զԱղուանից կաթողիկոսն, և այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, և իշխանք...»⁸²:

Հնարավոր է, որ ժողովի ընթացքում Վիրոն քաղկեդոնության է հարել: Սակայն ամենայն հավանականությամբ, նա հենց այդ ժողովում էլ հրաժարվել է իր սխալից, այլապես տնհար է բացատրել միաբնակ մեծ դշխոյի (Խոսրով Բ-ի հայունի կնոջ) և հենց իր՝ Պարսից արքայի հետագա բարյացակամությունը Վիրոյի նկատմամբ: Հատկապես այն արքայի, որի հրամանով իր տիրապետության տակ եղած բոլոր բրիստոնյաները պարտավոր էին լինել հայոց (միաբնակ) հավատին. «...հրաման ետ արքայ Խոսրով, եթէ ամենայն բրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կայցին»⁸³:

⁸² Անգլոս, էջ 124: Ասողիկը կրկնում է Աբրեսին և ազգագրում, Ազվանից կաթողիկոսին նստեցնում Փայտակարանում (տե՛ս նրա՝ «Պատմությունը», էջ 25):

⁸³ Անգլ, էջ 125:

⁷⁸ Յուրտալը Վիրոյի հարավային հայրենակ մասի մայրաքաղաքն էր և գտնվում էր այժմյան Բուխարեսաշենի տեղը, Թիֆլիսի մոտ, Լալվար լեռների շրջանում (Ան, Հայոց պատմություն, հատ. 2, էջ 103):

⁷⁹ Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 165—177:

⁸⁰ M. Brosset, Deux historiens Armeniens. Kuracos de Gandtrac, St. Petersburg, 1871, p. 334. Հայտնի է, որ Հայաստանի բյուզանդահայատակ մասի բնակիչները ոչ միայն քաղկեդոնականության էին դարձվել, այլև արդեն ունեին իրենց կաթողիկոսությունը:

⁸¹ Ն. Ակիևյան, Կյուրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 33—34:

ՄԻՆԵՐԱՆՅԱՆ ՏՈՂՄԸ ՌԻՏԻՔԻ ԳԱՐԳՄԱՆ ԳԱՎԱՌՈՒՄ

Շուրջ 600 թ., իբր թե, Պարսկաստանի Խոսրով Բ Փարվեզ արքայի վրեժխնդրությունից փախչող ինչ-որ Միհրան պարսիկ, որն իր հետ էր առել հպատակ ազգակիցներից շուրջ 30000 ընտանիք, նպատակ ունեւր անցնել խաղարնների երկիրը և վրիժառություն պատրաստվել իր ազգական Խոսրով Բ-ի դեմ: Միհրանը խառնված էր արքայի հոր սպանությունը: Սակայն Խոսրով Բ-ը, հետագա գլխացավանքից ազատ մնալու համար, թուղթ է ուղարկում Միհրանի ետեից՝ առաջարկելով իր բարեկամությունը և այն երկիրը, որ կկամենա ապրել ու իշխել Միհրանը. «Եղբայր իմ և հարազատ՝ մի՛ լիցի բեզ հեռանա յինէն թշնամութեամբ. և եթե ոչ հաճեցար ընդ իս բնակել, ուր հրովարտակո իմ հասանէ, երկիրդ այդ բեզ լիցի ի բնակութիւն, որչափ և հասանէն փնացք ոտից քոց»¹:

Հրովարտակը Միհրանին է հասնում: «Ի սարոտն գաւառին Գարգմանայ» Միհրանն ընթերցում է այն և հավանելով զավատի բնությունը, որոշում է ապրել հենց Գարգմանում: Այստեղ էլ նա քաղաք է կառուցում ու իր անունով կոչում Միհրավան: Կաղանկատվացին պատմում է, որ այստեղ Միհրան պարսիկը հիմք է դնում իշխանական մի տոհմի, որը պետք է Հայոց արևելից կողմանց Առանշահիկ տերերի դեմ պարբերաբար նյութած զավերով ու շարագործություններով փորձեր տարածել իր ազդեցությունների ոլորտը:

Կ. Վ. Տրևերը քիչ է հավատում Միհրական տոհմի այս ծագումնաբանությունը և այն համարում է հետագայի մոլծում կամ առասպելաբանական մի տեղեկանք, որին հեղինակը գումարել է համազիչ տրվյալներ, մատրել իր պատմության մեջ²:

Քաղ. Ավդալբեգյանն էլ, խոսելով հայոց Միհր աստծո պաշտամունքի մասին (Միհրը կամ Միթրան լույսի, արևի ու կրակի աստվածն էր), այս աստծուն նվիրված քաղաք է համարում Գարգմանքի Միհրավանը³:

Նկատի առնելով, որ Միհրական տոհմի ծագումը իսկապես թաղված է խորհրդավորության մշուշի տակ, և որ պատմիչի 30000 ընտանիքն ակնհայտ շափազանցություն է, մենք հիմնավոր ենք համարում Կ. Վ. Տրևերի թերահավատությունը:

Միհրանյան կոչված տոհմի, ավելի ճիշտ՝ Զիվանշիրի գործունեության ժամանակահիշտ, որ ապրել է Զիվանշիրի օրերում ու իր ժամանակագրությունը հորինել հենց նրա պատվերով, պատվիրատուի (իր արիոջ) տոհմի համար փառավոր արմատ պիտի հայթայթեր, Իսկ այդպիսի արմատ էր պարսիկ Սասանյանների տոհմը, որի մի ճյուղն էին Միհրանյանները:

Գուցե թե ճիշտ է կեռի ենթադրությունը, որի համաձայն՝ Միհրանյան տոհմանվամբ հռչակված այս նախահայրը եկել է ոչ թե Պարսկաստանից, այլ Չոզից: Չոզի կամ Գերբենդի հռչակավոր դոնների պահպանության համար Պարսից արքան մեծաքանակ զորքեր էր պահում: Ահա սրանցից հատվածվելով, պարսիկ խմբեր են գալիս դեպի հարավ, մի մասը մնում է Շիրվանում և հիմնում մի փոքրիկ թագավորություն... Իսկ մյուս հատվածը զնաց դեպի արևմուտք, կանգ առավ Կուրի հովտի այն մասում, ուր Պարտավ քաղաքն էր գտնվում, բայց այդ երկրում տեղ չգտնելով իր համար, շարունակեց իր շարժումը Կուրի հովտով և վերջնականապես կանգ առավ Գարգման լեռնազավատի ստորոտում:

«Սակայն գավառը, ինչպես գիտենք, հնուց հայերին էր պատկանում և հայկական գծի միջնաբերդն էր ներկայացնում: Միհրանյան տոհմն այդ հանդամանքն իր համար արգելք չի համարում և սկսում է մրցություն Գարգմանի հայ ազնվական տոհմի հետ, որ կոչվում էր Առանշահիկ կամ Առանշահիկ»⁴:

Թե մրցությունն ինչով ավարտվեց, այդ մենք պիտի տեսնենք հետո: Իսկ այստեղ նկատենք, որ Աղվանքի պատմության հեղինակը պարսիկ զաղթականների այս մուտքը Գարգմանք՝ միամտորեն ներկայացնում է որպես թագավորից դժգոհների տեղահանություն: Սակայն, ինչպես մի անգամ ասել ենք, այստեղ անհրաժեշտ է տեսնել պարսիկ ար-

¹ Կաղանկատացի, էջ 196:
² К. В. Тревер. Вздл. աշխ., էջ 235—236: Կես էլ Միհրանյանների տոհմաբանությունը համարում է պարզ «մի առասպել» (տե՛ս նրա՝ «Հայոց պատմություն», Կ. 2, էջ 326):

³ Քաղ. Ավդալբեգյան. Միհրը հայոց մեղ, Հայագիտական Նետադրություններ, Երևան, 1969. էջ 13—14:

⁴ Ան. Հայոց պատմություն, հատ. 2, էջ 327:

քաների հին քաղաքականության նոր, առավել ճկուն գրանորումը: Արքունիքը տեղացիներին պարսիկների հետ ձուլելու նպատակ հետապնդելով՝ միաժամանակ ուզում էր վստահելի հենարան ունենալ Անդրկովկասում և այն էլ ռազմագիտական տեսակետից մի այնպիսի կարևորագույն խաչմերուկում, ինչպես Գարդմանքն էր: Եվ պատահական չէ, որ շատ շանցած՝ 624 թ., բյուզանդացիների հետ ճակատամարտ տալիս պարսից զորաբանակներն այստեղ հանդիպեցին ոչ թե իրենց թագավորից փախածների թշնամությանը, այլ նրանց իշխանած Գարդմանքը դարձրին կարևորագույն հենակետ՝ բյուզանդացիների դեմ վճռական ճակատամարտի նետվելու համար:

Կաղանկատվացին այս ճակատամարտը և ասպատակությունները նկարագրելիս անհուն ատելությամբ է խոսում Հերակլի ու նրա զորքերի մասին: Եվ, ընդհակառակը, լուսնյան է մատնում մյուս բռնագրավիչ՝ պարսից զորքի ավերածությունները: Այստեղ ևս ակնբախ կերպով արտահայտվել է Միհրանյանների ազդեցությունը. ինչ էլ որ լինի, նրանց ազգակիցներն էին: Իսկ պատմիչը գրել է Միհրանյան Ջիվանշիթի պատվերով:

Գարդմանքում նստելուն պես, հենց առաջին գարնանը, պարսիկ Միհրանը լծոները բարձրացավ ու, իր մոտ հրավիրելով դավառի 12 գլխավորներին (հավանաբար՝ իշխանական տան ներկայացուցիչներին), կոտորեց նրանց. «ի գալ գարնանային ամուրցն ելանէ ի վերկոյս Գարդման գաւառին, գաւով առ ինքն կոչէ ի գլխաւորացն արս երկոտասան, սրով բառնայ զնոսա և տիրէ աշխարհին»⁵:

Սակայն, ըստ երևույթին, այս միջոցառումը Միհրանին ու նրա հետևորդներին՝ Արմայելին, ապա սրա որդի Վարդին, չկարողացավ ապահովել տիրապետող դիրք ու ազդեցություն՝ Գարդմանից աշխարհի և առավել ևս շրջակա գավառների վրա: Երկրի հայ բնակչությունը և հայ միջավայրը խորթ են մնում պարսիկ եկվոր այս տոհմին: Այդ պատճառով էլ Վարդի հաջորդ Քաջ կոչված Վարդանը դիմում է ավելի մեծ խարդավանքի, սրան խառնելով նաև հավատափոխության վստահելի միջոցը: Այս Քաջ Վարդանն է, որ քրիստոնեություն է ընդունում⁶,

⁵ Կաղանկատուացի, էջ 196:

⁶ Ընդ ընդ քրիստոնեություն ընդունած առաջին Միհրանյան է ճանաչում Վարդ-Գրիգորին՝ Քաջ Վարդանի թոռանը (ըստ Կաղանկատուացու առաջին վկայության, էջ 197): Մինչդեռ Պատմության հետազոտություններից մեկում (էջ 387) ուղղվում է այս տեղեկությունը. «Քաջ Վարդան, որ հաստացեալ ի Քրիստոս, և ոչ շինոյն Գարդման բերդոյ»:

ապա խնամիություն կապվում Հայոց Աղվանքի տեր Առանշահիկների հետ, իր տոհմին փեսայացնելով Առմիհր Առանշահիկին: Հետո էլ մի անգամ ճաշի է հրավիրում Առանշահիկներից 60 հոգու, թունավորում, կոտորել տալիս բոլորին. «Եւ նենգելն ի սիրտ իւր զնախնական ազգս Հայկազնեայց զՍոանշահիկս... կոչէ որպէս ի ճաշ. և հայ կորստեան զործեալ տալ նոցա ուտել. և ի ճաշի անդ արեամբ նոցա արար դիսատումն արանց վաթսընից. միայն թողոյր ի նոցանէ զփեսայեացեալն իւրում ցեղին զԱրմիհրն Սոանշահիկ»⁷:

Առանշահիկները, Միհրանի խարդավանքից հետո, չկարողացան զորշանալ նրա թոռան՝ Քաջ Վարդանի, նոր ու դաժան դավից, որովհետև նա արդեն քրիստոնյա էր, հայերի հետ նույն գրիգորյան եկեղեցուն էր մատուցում հավատացյալի իր աղոթքները, խնամիացել էր երկրի Առանշահիկ իշխանների հետ:

Սակայն այսքանով չի ավարտվում Աղվանքի հայ տերերի և այնտեղ թափանցած այս օտար տարրի պայքարը: Նրանց միջև արդեն բորբոքվել էր արջան վրիժառուությունը, որը կարող էր մարել միայն նրանցից մի կողմի սպառնելով: Եվ իրականում հենց այսպես էլ պիտի լիներ:

Միհրանյանները տիրանում են միայն Գարդմանքին և, ըստ երևույթին, մի կողմից՝ կարողանում են անմիջապես կապվել պարսից արքունիքի հետ, մի տեսակ զառնելով նրանց մշտական ներկայացուցիչները, մյուս կողմից էլ՝ հայ քրիստոնեություն ընդունում, տեղի բնակչության հայոց լեզվին որդեգրվելով՝ խառնվում են միջավայրին, տեղաբնիկների վստահությունն այնքան նվաճում, որ վերջիններս, հատկապես՝ մտավորականները, Քաջ Վարդանի ծոռ Ջիվանշիթին արդեն ընդունում են որպես իրենց հարազատ իշխանը, և նրա եղբրական մահը վեր է ածվում համաժողովրդական սգի:

Հայոց արեւելից կողմանց Առանշահիկ բնիկ տերերը ժառանգական իշխողներն էին երկրի նրանք թագավորներ էին կոչվում: Մինչդեռ Միհրանյան տոհմի ներկայացուցիչներից ոչ մեկը չհասավ այդ տիտղոսին և, ինչպես հայտնի է, չկարողացավ տիրանալ Գարդմանից դուրս մնացած հայկական դավառներին:

Միհրանյան տոհմի առաջին ներկայացուցիչը, որ սպակվեց իշխանի տիրադատով, Վարազ-Գրիգորն էր: Եվ նա տերն էր համարվում միայն Գարդմանքի՝ Ուտիքի յոթ դավառներից մեկի («յիշխանութեանն Աղուանից Վարազ-Գրիգորի Գարդմանա տեառն»)⁸:

⁷ Կաղանկատուացի, էջ 196—197:

⁸ Անդ, էջ 318:

Միհրանյանները, ճիշտ է, սկզբից և եթ խարդավանքով ու սպանութ-
յունաների ճանապարհով Գարդմանն իրենց ձեռքն էին ձգել, սակայն
դեռևս չէին օգտվում իշխանական տիտղոսից, մինչև ասպարեզ եկավ
Քաջ Վարդանի թոռ Վարազ-Գրիգորը:

Այսօր դժվար է որոշել, թե որքան են հավաստի սրա իշխանադրու-
թյան հանգամանքները՝ կցկտուր ակնարկների ձևով տիտղոսի «Աղվա-
նից աշխարհի պատմություն» մեջ: Այս ակնարկներից այն տպավորու-
թյունն է ստացվում, թե Վարազ-Գրիգորն իշխանություն հասնելու հա-
մար դիմել էր ավելի մեծ խորամանկության, քան իր նախորդները
Քրիստոնեություն ընդունելով Վիրո կաթողիկոսից՝ նա իր նպատակնե-
րին էր լծել այս շատ ձեռններից, Պարսից արքունիքում հարգ ու կշիռ
ունեցող կաթողիկոսին: Վիրոն 25 տարի նյահվել էր արքունիքում, իր
խելքով ու ճարտարախոսությունը արժանացել ըրիստոնեական ծագում
ունեցող թագուհու բարեհաճ վերաբերմունքին⁹. «Իսկ նա փախստեայ
անկան էր ի դուռն արքունի, և յաշողեցաւ առաջի նորա. զի շնորհք սրբ-
բոյ նշանի նորա յորդեցին նմա ճանապարհ ի դուռն թագուհոյն, որ մե-
ծաւ ջանիւ կարաց զտանել ի պարզի զկեանս նորա ի թագաւորէն»: Եվ
թագավորն էլ, Վիրոյին իր մոտ պահելով, «ոչ արգելոյր ի նմանէ զհասս
իշխանութեան աթոռոյ նորա և ոչ զանուն կաթողիկոսութեան եբարձ ի
նմանէն...»¹⁰,

Ահա այս Վիրոյի միջոցով է, որ Միհրանյան Վարազ-Գրիգորը փոր-
ձում է Պարսից արքայից ստանալ իշխանական տիտղոս, Վիրոն խոս-
քով թ արքայից խնդրում է այդ տիտղոսը. «և սա խնդրեաց ի խոսքովայ
պարսից արքայէ գրել ի պատիւ Գարդմանայ տեսնն իշխանացն Աղու-
նից ի վերայ թղթոց «առ կուսակալս աշխարհին», զոր դեռևս գրեն»¹¹:

Այս տեղեկությունները քիչ են վստահելի, որովհետև հորինված են
X դարի շարահարողի կողմից, իսկ VII դարից մնացած ժամանակա-
գրություն մեջ նման ոչինչ չկա: Դեռ ավելին. ժամանակագիրը, քայլ առ
քայլ նկարագրելով խաղարների առաջին ու երկրորդ ասպատակություն-
ները (մինչև 628 թվ.), ցույց է տալիս, որ Ուտիքում լիակատար անտե-
րություն է. պարսիկ մարդկանք փախել է իր երկիրը, տեղական ոչ մի

⁹ Նիզամի Գյանջևիի «Խոսքով և Շիրին» պոեմում Շիրինը Պարտավի տիրուհու
կամ Մեծ տիկնոջ ազգականուհին է, այն շնաշխարհիկ զեղեցիկուհին, որը հետո
պիտի դառնար խոսքով Փարվեզի կինն ու Պարսից արքայուհին (տե՛ս Низами Гянджеви,
Пятъ поэм, М., 1945, с. 74—84).

¹⁰ Կաղանկատուացի, էջ 171:

¹¹ Անդ, էջ 392:

իշխան չկա, որ ժողովրդի դիմադրությունը կազմակերպի, և սարսափա-
հար եղած քնակչությունը մնացել է նորեկ կաթողիկոս Վիրոյի հույսին:

Պարզ է, ուրեմն, որ, եթե Վարազ-Գրիգորն Աղվանքի կուսակալի
կամ իշխանի տիտղոս է ստացել, դա եղել է Վիրոյի հայրենազարծից
(628) հետո: Իսկ եթե նրա կողմից մկրտվել և նոր է տիտղոսի արժանա-
ցել, առավել ևս, քանի որ Վիրոն նրան լուսավորչական կարող էր մկր-
տել միայն 628-ից հետո և ոչ նախընթաց 25-ամյա պարսկական բան-
տարկություն մեջ¹²:

Պատմագիտության մեջ Վարազ-Գրիգորի իշխանության սկիզբ են
համարվում տարբեր թվականներ: Կ. Տրեմբլը գրել է. «սկսեց իշխել
մինչև 628 թվականը»¹³, իսկ Ս. Երեմյանի կարծիքով՝ «...Աղվանքի
առաջին իշխան ճանաչվեց Սասանյան արքունիքի կողմից Վարազ-Գրի-
գոր Միհրանյանը (591—636)»¹⁴:

Երկու թվերն էլ սխալ են, որովհետև եթե այս բոլորի հիմքը Կա-
ղանկատուացու Պատմությունն է, ապա նրա տեղեկությամբ Վարազ-Գրի-
գորը «Սասանյան արքունիքի կողմից» իշխան ճանաչվեց Վիրոյի խընդ-
րանքով, իսկ Վիրոն 25-ամյա պարսկական բանտարկությունից հայրե-
նիք էր վերադարձել խոսքով Բ-ի սպանությունից (628) հետո, Կավատի
ներման շնորհիվ. «Ապա ի գտանել ամենեցուն զթողութիւն յանցանաց
իւրեանց ի նորընծայ թագաւորէն Կաւատայ... Հեղ որս էր և կաթողի-
կոսն մեծ իշխանութեան Աղուանից, Վիրոյ անուն նորա»¹⁵,

Հնարավոր է, որ այսքանը կատարվել է անմիջապես 628-ին, բայց
երբեք նրանից առաջ: Իսկ առավել հավանականն այն է, որ Վարազ-
Գրիգորի իշխանադրությունը և լուսավորչական ըրիստոնեություն ըն-
դունելը կատարվել է խաղարների երկրորդ խոշոր ասպատակությունից
հետո, քանի որ ո՛չ առաջին և ո՛չ էլ երկրորդ ասպատակությունների
ժամանակ երկրամասն ընդհանուր իշխան չունեի:

Կաղանկատուացիի Ջիվանշիրի իշխանության սկիզբը հաշվում է

¹² Ինչպես տեսանք, ըստ վրաց տարեգրության՝ Վարազ-Գրիգորը 628 թ. Բյու-
զանդական կայսր Հեղեկի ձեռքով քաղկեդոնական էր մկրտվել Գարդմանքում: Եթե
ուս իրողությունն է, ուրեմն, Վարազ-Գրիգորի մկրտությունը Վիրոյի կողմից ավելի պետք
է ուշանալ, իսկ իշխանական տիտղոս նա կարող էր ստանալ արդեն ոչ թե խոսքով
Բ-ից, որը սպանվեց 628-ին, այլ նրա որդի ու հաջորդ Կավատ Բ-ից:

¹³ К. В. Тревер, Взд. аշխ., էջ 244:

¹⁴ Ս. Ս. Երեմյան, Հայաստանը..., էջ 75—76:

¹⁵ Կաղանկատուացի, էջ 170:

637 թ. «Եւ ի քսաներորդ ամի Յազկերտի... և տեառն իմոյ Ջիվանշիրի տասն և հինգ ամ»¹⁶,

Հազկերտը (Գ) գահ է բարձրացել 632-ին¹⁷, Ջիվանշիրը՝ նրանից 5 տարի հետո՝ 637-ին:

Մատենագիրը մի անզուսպ խանդավառությամբ է պատմում Աղվանից աշխարհի նոր իշխանի կենսագրությունը, իր հերոսին ներկայացնելով որպես մարդկային ու գերմարդկային ամենաբարձր արժանավորություններով օժտված մի կատարելություն: Պատմիչը նրան է վերագրում աշխարհիկ ամենավսեմ փառքերը: Դեռ պատանեակ՝ նա արդեն պաշտելի մի հերոս էր. «նրոխտ և սիգոզաճեմ՝ շքնադագեզ ունելով... տիպ... պատրաստ ի սպառազինութիւն, քաջասնոյց իբրև զարծուի, վրստահ եղեալ հօրն յամենայաջողն Ջիվանշիր՝ հաստատէր ի միտս իբր լինել նմա հնարաւոր ի կեանս աշխարհիս, հաւասարել զինքն ի մեծամեծս և կալ առաջի թագաւորաց»¹⁸: Նա Աղվանից աշխարհի զորքով պարսից բանակներին է միանում՝ արաբների դեմ կռվելու համար, և Հազկերտը նրան տեսնելուն պես «կոշիաց զնա առպարապետ Աղուանից»¹⁹: Նա անօրինակ հերոսություններ է կատարում ռազմի դաշտում: Թշնամիները նրա զարկից թափվում են որպես հնձված խոտ: Քանի՜ քանի՜ գծնգակ վերքեր է ստանում, բուժվում, ապաքինվում: Հազկերտն ըստ արժանվույն գնահատում է նրա ռազմական ծառայությունները. «ըստ զորաւարաց կարգի տայր նմա նշանակս և փողս ազգեցութեան, երկուս նիզակս ոսկիս (ոսկի նիզակներ—Ու. Ք.) և երկուս վահանս ոսկեքանդակս. զորս միշտ առաջի նորա շրջեցուցանէին. և նախամեծարքան զամենեանն առնէր զնա՝ ընդ մէջ ածեալ զօտի ոսկի ընդելուզեալ մարգարտով, և սուտեր ոսկեստրեայ, և ապարանջանս բազկացն, և պսակ ցանկալի ի գլուխ նորա»²⁰, Եվ այլն, և այլն:

Նորից է մարտի նետվում, նորից է հաղթում՝ «տասն և մի դժնդակ» վերքերի գնով: Նոր փառքեր ու պարգևներ են տեղում նրա վրա: Պարսից զորապետն իր քրոջը կնության է առաջարկում նրան: Իսկ նա հրաժարվում է. «վասն շկամելոյ զոք յանօրինաց առնել կին՝ դիմեալ զայր եր-

կիր իւր»²¹: Եվ սա այն Միհրանյանն էր, որի երակներում, իբր թե, հոսում էր պարսկական արյուն:

Աղվանքը ցնծությամբ է ընդունում իր հերոս գավակին: Ապա պարսիկները գալիս են նրա վրա՝ որպես ապստամբի: Եվ Ջիվանշիրը մի քանի մարտերի մեջ հաղթում է պարսիկներին, ջարդում, կոտորում: Հետաքրքիր էր այն ճակատամարտը, որ նա տվեց «ի հայրենի վիճակին իւր սահմանս՝ յայնկոյս գետոյն Կուրայ ի Կապիճանն գաւառ»²², պարսիկների կողմից գերի տարված հորն ու եղբայրներին փրկելու համար: Այստեղ է, որ նա կոտորում է թշնամիներին՝ մինչև վերջին զինվորը. «մինչև ոչ միոյ առն մնալ ի թշնամեացն որ ոչ սատակեցան»²³:

Հայոց և վրաց երկրները հիացած են Ջիվանշիրի քաջագործություններով: Վրացիները փորձում են նրան զարձնել իրենց փեսան: «Իսկ նա յԱրուեծան տոհմէն առնոյր կին՝ զզուտոր իշխանին Սիսական աշխարհին»²⁴:

Ինչքան էլ որ Կաղանկատվացին բարձրացնում է Ջիվանշիրին, նրան դարձնում հզոր ու անկախ մի ինքնակալ, հավասարեցնում թագավորներին ու տիեզերակալներին, մենք նրա Պատմության իսկ կոնկրետ վկայություններից տեսնում ենք, որ Ջիվանշիրը միշտ էլ օտարներին հպատակ Աղվանից աշխարհի իշխանն է: Սկզբում նա պարսից տիրապետությանն էր ենթարկվում և կռվում էր արաբների դեմ: Ապա թուղթ է գրում բյուզանդական կայսրին, խնդրում նրա հովանավորությունը և նույն դիվանագիտական խաղը կատարելու համար հորդորում է Հայոց սպարապետին:

Շատ շուտով դրությունը փոխվում է. պատմական թատերաբեմ են բարձրանում արաբները, որոնց բեմիլը խառնում է հարեան երկրների հաշիվները: «Աղվանից աշխարհը, արաբների երևալու հետևանքով, երկու հարվածների միջև էր գրված, Հյուսիսից, լեռներից, նրա վրա կախված էր մշտական մղձավանջը՝ հոն և խաղար անուններով հայտնի ... ցեղերը, իսկ հարավից, Պարսկաստանն ու Հայաստանը ոտի տակ տալով, գալիս, հասնում էր իսլամի սուրբ»²⁵:

Ջիվանշիրը հեշտությամբ լեզու է գտնում հյուսիսականների հետ: Երբ խազարները սև լավայի պես Կուրի ափը բռնեցին, նա, ճակատա-

16 Անդ, էջ 208:

17 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Հավելված, էջ 404: Կ. Վ. Տրեկորը, Ղզիսեա՝ ԻՆԷՀիստորիզ, Ջիվանշիրի իշխանության սկիզբ է համարում 636 թվականը (տե՛ս նրա՝ Եզվ. աշխ., էջ 236), որ սխալ է:

18 Կաղանկատուացի, էջ 198:

19 Անդ, էջ 199:

20 Անդ, էջ 200:

21 Անդ, էջ 202:

22 Անդ, էջ 203:

23 Անդ:

24 Անդ, էջ 204:

25 Լեռ, Հայոց պատմություն, հ. 2, էջ 330:

մարտի դուրս գալու փոխարեն, իր բանագնացների հետ գետն անցավ, խոնարհություններ խնդրեց խաղարների խաբանի (թագավորի) ազդեցական ձեռքը և ստացավ այն, նրա հետ էլ՝ խաղարների բարեկամությունն ու զինակցությունը:

Խաղարների բարեկամությունը նրան շագատեց արարների տիրապետությունից: Գրա համար էլ նա անձամբ գնաց Գամասկոս, իր հպատակությունն առաջարկեց խալիֆին, նվերներ ստացավ նրանից և վերադարձի ճանապարհին այցելեց Հայոց զորավար Գրիգոր Մամիկոնյանին ու Անաստաս կաթողիկոսին, որոնք նրան ընդունեցին պատվով ու բարեկամությամբ:

Պետր է ուշադրություն դարձնել. ամեն անգամ որեւէ կարևոր գործ ձեռնարկելուց առաջ կամ հետո Ջիվանշիրը Հայոց երկրի տերերի հետ է՝ և Բյուզանդիային հպատակության գիր ուղարկելիս, և արաբ խալիֆի մոտից վերադառնալիս, և, ինչպես հետո կտեսնենք, նույն արաբ խալիֆին երկրորդ անգամ այցելելուց անմիջապես հետո: Նրանք միշտ էլ երկուստեք համաձայնությունների էին գալիս, պայմանավորվում բռնելիք դիրքն ու անելիքները և համոզված էին, որ մեծ բռնակալների ճանապարհների խաչմերուկում ցնկած հին Մեծ Հայք բզկավում երկրի բեկորները պահել-պահպանել կարելի է միայն շրջահայաց զիվանագիտությամբ:

* * *

Ջիվանշիրի ժամանակ, նրա անմիջական մասնակցությամբ էլ տեղի են ունենում սրբազան մասունքների գյուտեր և դրանց մեծարման փառավոր արարողություններ, որոնք զրուկորվում են որպես հայկական ոգու հզոր թևաբախումի նոր փաստեր: Առաջինը Արցախի Մեծ-կողմանց փավառի հին եկեղեցիներից մեկում պեղված սրբազան մասունքն է՝ գրված արծաթեղեն կողովի մեջ՝ «կապարի կնիք ի վերա եղեալ. յոր տախտակ մի ոսկեձոյլ հաստահեղոյս բեկեռեալ, և ի նմա գրեալ ասորերէն և հայերէն գրով»²⁶:

Մեծաբանակ բազմություն է հավաքվում գյուտի վայրում: Համաժողովրդական ցնծություն է լինում: Գյուտի մասնակից եպիսկոպոսները թղթով հայտնում են իշխանին ու կաթողիկոսին, որ գտնվել է ռզամենակնցոյց խաչին մասն և այլ բազում սրբութեանց, զորոց դիրն (ասորի և հայ) ասաց, թե «Ծրուսողէմեան են մասունք սրբութեանց

տեան»²⁷, Իշխանն ու կաթողիկոսն էլ պատասխան գրով պահանջում են իրենց հասցնել գյուտը. «առ մեզ հասուցէք մեծաւ զգուշութեամբ, զի և մեք երկրպագեսցուք երանաւետ համբուրիւ հանդերձ տիեզերական ժողովովս»²⁸, Մասունքը բերում են պալատ, և այստեղ Ջիվանշիրն ու կաթողիկոս Ռախանեսը, «ամենայն նախարարք» և «ամենայն աշխարհակոյտ ամբոխիւն», սրբազան հանդեսով ու երկրպագությամբ նշում են գյուտը: Ապա մասունքը վերադարձնում են «ի վերնակողմ զաւառն Մեծկունից»՝ ի բարձրաւանդակ լեանն, ի տեղի մենաստանի նորա ի Գլխոյ վանս»²⁹:

Հաջորդ գյուտը տեղի է ունենում հայկական մյուս նահանգում՝ Ուտիքում: Եվ սա էլ գյուտն է այն խաչի, որ հետապնդողներից փրկվելիս Գիս ավանում թաղել էր սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Գարձյալ գրեր կան խաչի հետ և այդ գրերը «առհասարակ հայ, հոռոմ և ասորի» էին: Նորից համաժողովրդական ցնծություն: Այս անգամ սրբությունները տարվում են «ի սուրբ եկեղեցին և ինքնին մեծ իշխանն և սուրբ հայրապետն ամենայն մեծամեծօքն անդ հասանէին, և ակն յայտնի գնորդափառլ խաչն Քրիստոսի տեսանէին, որ սրբոյ Մաշտոցի իւր իսկ ձեռացն լեալ էր, որով դարձուցանէր գաշխարհս Աղուանից ի կոոցն մոլորութենէ...»³⁰:

Որ այս սրբազան մասունքների գյուտերն ու շռայլաշուք արարողությունները, մաշտոցյան սրբազան զործի մեծարումներն ու հայաշունչ ոգու նոր բորբոքումը կատարվել են նախապես ծրագրված պլանով, և այդ պլանն էլ գծվել է Ջիվանշիրի թելադրանքով կամ թերևս նրա անմիջական մասնակցությամբ, հաստատվում է մի շատ կարևոր հանգամանքով:

671 թ. Ջիվանշիրը՝ արդեն երկրորդ անգամ՝ գնաց «առ բռնակալն հարաւոյս», այսինքն՝ արաբ խալիֆի մոտ³¹, Պատմիչը միամտորեն այս երթը և վերադարձը ներկայացնում է որպես Ջիվանշիրի համար սրտապարար մի այցելություն, նվերների, փառք ու պատվի արժանանալու

27 Անդ, էջ 241:

28 Անդ, էջ 242—243:

29 Անդ, 243:

30 Անդ, էջ 251:

31 Պատմիչն այս երթի ստիժով ասում է. «Արդ այս երբեակ տասներեակր և տարիք երեք են, զոր սկսաւ Տէր բազմամեծար զարեկաթ իշխանն Աղուանից ասնել...» (Պատմիչատուցի, էջ 230): Ուրեմն, 33 տարի է, ինչ նա իշխում է: Իսկ եթե հաշվենք, որ նա իշխում էր 637-ից, ապա 33 տարի հետո կլինի 670-ին:

26 Կաղանկատուցի, էջ 236:

հերթական, պարտադիր արարողություն: Մեծաշուք պատիվների արժանացնելուց հետո, — գրում է պատմիչը, — արքայավայել մեծարանքի ու սիրո խոսքերից հետո, խալիֆը Ջիվանշիրին անթանակ ու անգնահատելի նվերներ է տալիս, շնորհակալով նույնիսկ իր մեծ տիկնոջ (զըշ-խոյի) անունից արևելից տիկնոջն առաքելիքը: Եվ նոր միայն սկսում է իր կարևոր առաջարկությունը. «և ընդ ձեռամբ նորա փակէր զՍիւնեստանեայցն իշխանութիւն»³²: Այլ և ստիպէր զնա թագաւորն, զի առցէ յանձն և յայնկոյս գետոյն Ատրպատականացն իշխել»³³: Ջիվանշիրը հրաժարվում է այս առաջարկությունը կատարել:

Նախ, չի կարելի պատմիչի այս խանդավառությունը բաժանել, կարծելով, թե Ջիվանշիրն իսկապես հենց այս պարզենների ու հյուրամեծար պատիվների համար էր կանչվել (կամ ինքն էր գնացել) «առ բանակալն հարաւոյ», և նրա երթի ու վերադարձի ճանապարհը երկնառաք փառքի ճանապարհ էր: Այդ նույն ճանապարհն ընտրել էր նաև Ջիվանշիրի մյուս մեծ ժամանակակիցը՝ Թեոդորոս Ռշտունին, և Հայաստանի պահպանման միակ ելքը գտել էր արարներից հպատակվելու մեջ:

Ապա՝ չի կարելի մոռանալ, որ դա արարների աշխարհակալության ժամանակն էր, երբ նրա՛նք էին աշխարհին թիւղորում իրենց կամքը:

Ջիվանշիրի աչքի առաջ Քաղեսիայի ճակատամարտում 637 թ. փշրվել էին Պարսկաստանի ուժերը, և դրանից մի տարի առաջ էլ Յարմուկ գետի մոտ Բյուզանդիային ծնկի բերած արարներն այս նոր հաղթանակով աշխարհին ասում էին իրենց տիրակալութան դաժան խոսքը:

VII դարի 40-ականներին Անդրկովկասն արդեն իրենց ոտքերի տակ

³² Մ. Էմինը և Ք. Պատկանյանը սա հասկանում են որպես Սյունիք-Սիսական Այգալու է թարգմանել նաև Վ. Գ. Առաքելյանը՝ «Սյունիքի իշխանությունը» (էջ 255): Պատմիչը Սյունիքի կամ Սիսականի բնակիչներին կոչում է «սիսականացն» (Կաղանկատուացի. էջ 252) և ոչ թե «Սիւնեստանեայցն»:

«Սիւնեստանեայց» անունը (ձեռագրերում նաև՝ «Սիւնեստանեացն», «Սիւնաստանեացն») ոչ մի կապ չունի «Սյունիք»-ի հետ: Այստեղ խոսքը վերաբերում է մի երկրի, որը գտնվում էր Ատրպատականից արևելք, և VII դարի «Աշխարհացոյցն» այն կոչում էր «Սիւնիկիս»։ «աշխարհ Ասիոյ Սիւնիկիս է, որ է ձենք...», «Աշխարհ Ասիոյ Սիւնիցոյցն է, առ երկ ձենաց» («Աշխարհացոյց Մովսիսի նորինացոյց յաւելլածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 46): Որ խոսքն իսկապես Ատրպատականից արևելք, «առ երկ ձենաց» «Սիւնիկէցոյց» — «սիւնեստանեացն» է վերաբերում, պարզ երևում է Կաղանկատուացու տեղեկությունից: Սկզբում խալիֆն ուզում էր «ընդ ձեռամբ նորա (Ջիվանշիրի) փակել զՍիւնեստանեայցն իշխանութիւն», ապա՝ «առցէ յանձն և յայնկոյս գետոյն Ատրպատականացն իշխել» (Կաղանկատուացի, էջ 227):

³³ Կաղանկատուացի. էջ 227:

էին տուել արարական զորքերը: Եվ եթե դրանից հետո հպատակները փորձում էին ըմբոստություն ձայն բարձրացնել, այդ ձայնը խլանում էր արյան ու ավերի մղձավանջի մեջ:

Ճիշտ է, արար տիրողները գիտեին նաև նվերներ տալ, դիջումներ անել իրենց հպատակներին: Սակայն նման դեպքերում նրանք չէին մոռանում պահանջել հատուցումը, որ բազմապատիկ մեծ պետք է լիներ տվածից:

Արտոնություններ նրանք տալիս էին հատկապես իսլամի համար ճանապարհ հարթելիս: Իսլամն ընդունողներն ազատվում էին մի շարք հարկատեսակներից: Դեռ ավելին. իսլամն ընդունող գյուղացին, Օմար Ա խալիֆի օրենքով, բավական ժամանակ արբունի գանձատնից ստանում էր դրամական վարձատրություն³⁴:

Դատելով այն եռանդուն կրոնական ու հայապաշտական քաղաքականությունից, որ խալիֆի մոտից վերադառնալուց հետո ծավալեց Ջիվանշիրը, չի կարելի շատածել, որ խալիֆի ու նրա զրույցների ժամանակ արժարժվել են նաև կրոնական հարցեր, հատկապես իսլամի տարածման կոնկրետ առաջարկություններ:

«Եւ սկսեալ այնուհետև զթողութիւն ծանրաբեռն իւրոյ վիճակին խնդրել հարկաց, զոր ախորժելով յանձն էառ թագաւորն հարաւոյ և հրամայեաց երկակիսեալ զհարկացն լուծ թեթեացուցանել յառաջին երրեակ շափուց զմասն մի»³⁵:

Ջիվանշիրը որպես շրջահալաց գործիչ ու դիվանագետ, օգտվելով հարկերի ժամանակավոր թեթեացման հնարավորությունից, երևի խոստացել էր դիջումներ կատարել կրոնական գծով: Սակայն հայրենիք վերադառնալով, ծավալեց քրիստոնեական-գրիգորյան հարվատի ու հայկական ազգային սրբությունների բարոյների մի այնպիսի շարժում, որի նմանը մեկ էլ եղել էր Վաչագան Բարեպաշտի օրոք: Այս տեսակետից էլ՝ պատահական չէր նրա այցը Սյունիք, որ տեղի ունեցավ Արարիայից վերադառնալուն պես, երբ նրա հանձնարարությամբ Ազվանից հոփոնրականությունն ու աշխարհական զանգվածները շտեմնված երկյուղաբույծությամբ ու խանդավառ հավատով օժտված էին գտնված «մասն ի սրբոյ խաչէն Մաշտոցի»: «Եվ յայնժամ իշխան մեծ շուխալ էր ի կողմանս հարաւոյ ի Սիսականացն գաւառ»: Ըստ երևույթին, նա այստեղ Սյունիքի տերերի հետ խորհրդակցում էր՝ սպասվող արաբական արհամիրքների

³⁴ Տե՛ս А. Е. Крымский, Страницы из истории, с. 133.

³⁵ Կաղանկատուացի, էջ 227—228:

և առանձնապես իսլամի հաղթարշավին դիմագրավելու խնդիրների շուրջ:

Պատմարանները մինչև հիմա այն կարծիքին են, թե Ջիվանշիրը, ինչպես նաև նրա նախորդներն ու հաջորդները իշխել են ամբողջ Աղվանք—Ալբանիայի վրա, և նրանց տիրապետությունը տարածվել է Արարսից մինչև Կովկասյան լեռները: Սա սխալ է և ոչ մի եզրով չի առնչվում պատմական իրողության հետ: Առհասարակ պետք է նկատի առնել, որ ո՛չ Միհրանյանները, ո՛չ էլ նրանցից առաջ և նրանցից հետո հայ Առանշահիկները, նման տիրապետություն չեն ունեցել: Նրանց իշխանությունն ամենաբարձրագույնը չէր: Դրանք Կուր գետի սահմանով և անդրկուրյան Կամբեճան դավառի ընդգրկումով: Եթե Ջիվանշիրի իշխանությունն ամենաբարձրագույնը մեկն էր հիշած տոհմերի իշխանների տերություններից, ապա տեսնենք, թե որո՞նք են այդ իշխանության սահմանները: Բյուզանդական կայսրի՝ Ջիվանշիրին հղած թղթի մեջ նա Գարգմանի տերն է և Աղվանից իշխան³⁶, Իսկ այդ Աղվանքը սահմանափակվում է Կուր գետով և Կուրից հյուսիս միայն Կամբեճան դավառունի. «ի հայրենի վիճակին իւր սահմանս՝ յայնկոյս գետոյն Կուրայ ի Կապիճունն դաւառ»³⁷: Հյուսիսականների հետ նա ճակատամարտ է տալիս Կուրի ձախ ափին. «Եւ առեալ ղգունդս իւր էանց յայնկոյս գետոյն մեծի Կուրայ և ետ ընդ նոսա պատերազմ»³⁸: Այդ նույն հյուսիսականները նրա երկիրն են խուժում՝ անցնելով Կուր գետը. «Սակայն ասպատակաւորք շոնաց յայնկոյս գետոյն Կուրայ...»³⁹:

Վերստին դառնալով Ջիվանշիրին, պետք է ասել, որ մատենագիրը նրան ներկայացնում է որպես ոչ միայն մեծ ռազմավարի ու դիվանագետի: Ջիվանշիրը բարեպաշտ քրիստոնյա-լուսավորչական է. կառուցում է տաճարներ և ինքն է իր ժողովրդին տալիս ճշմարիտ հավատացալի օրինակ: Նա խոհուն այր է և ճարտասան, այնպես, որ նույնիսկ հեռու հեռավոր երկրներից («ի Վրաց աշխարհէն մինչև ի Հնդկաց») գալիս են նրա «բազմահանճար խորհրդականութեանն» ունկնդրելու:

Երկրի հայ մշակույթի բուռն զարգացման նախանձախնդիրն է ու կազմակերպիչը: Նրա բարեկամությունն ու ազգակցությունը Սյունյաց իշխանների հետ՝ դարձան հայրենի ճարտարապետության, դպրոցի ու գրականության նոր վերելքի խթանիչները:

Ջիվանշիրն իրեն զգում էր որպես, հին խոսքով ասած, կողմնակալ հայոց ծայրագավառներից մեկի վրա: Եթե նա, մերժելով պարսիկ ու վրաց իշխանազուն օրիորդների ձեռքը, ամուսնացել էր Սյունիքի իշխանի դստեր հետ որպես իր հավատակցի և արդեն ազգակցի, ապա քրոջը՝ Հնդինին կնության էր տվել Հայոց սպարապետ Գրիգոր Մամիկոնյանին: Հնդինինի միջնորդությամբ էր, որ հետագայում Գրիգոր Մամիկոնյանն ու կաթողիկոսը համաձայնեցին Աղվանքին նվիրել Գրիգոր Լուսավորչի ծննդի մասունքը, որը բերվեց ու դրվեց Արցախի Գլխո վանքում⁴⁰: Այս դեպքի մանրամասները մի քիչ այլ կերպ են արձանագրված Վարդան Վարդապետի գրքում. «Եւ գուրք Գրիգորի նշխարն ասեն բերեալ ի Հայս Գրիգորոյ Մամիկոնոյ... Եւ զծնոտն տայ Աղուանից ի խնդրոյ Ջուանշիրայ և քեռ իւրոյ, որ էր կին Գրիգորի»⁴¹, «...զծնոտ Լուսավորչին տարեալ եղ ի Գլխոյ վանս կոչեցեալ տեղուր»⁴²:

Այստեղ հարկ է նշել, որ Ջիվանշիրն իր եկեղեցանպաստ գործունեությունները, դպրոցականն ու մշակութային մյուս մարզերին մատուցած ծառայությամբ ամեն կերպ ընդօրինակում էր Վաչագան Բարեպաշտին: Նրա ժամանակ, հավանաբար, շատ էր տարածված վերջինիս կյանքի ու գործի պատմությունը, և հեղինակությունն էլ անչինչ էր ժողովրդի հիշողության մեջ: Այս բոլորն ստիպում էին Ջիվանշիրին, ժողովրդի համակրանքին ու վստահությանն արժանանալու համար, նմանվել Վաչագանին, շարունակել նրա դործը:

Ըստ երևույթին, Պատմության մեջ երկու մեծ գործիչների կենսագրությունների միջև եղած նմանությունը մի ուրիշ պատճառ էլ ունի: Մենք ցույց էինք տվել, որ Բարեպաշտ Վաչագանի ժամանակագիրը նրա ժամանակակիցն ու զնայքերի ականատեսն է եղել: Կտեսնենք, որ Ջիվանշիրի մասին պատմողը ևս ժամանակակից մեկն է, ամեն ինչով իր տեր իշխանին նվիրված մի գրագետ: Կասկածից դուրս է, որ վերջինս

36 Անդ, էջ 208:

37 Անդ, էջ 203:

38 Անդ, էջ 213:

39 Անդ, էջ 218:

40 Անդ, էջ 267—269:

41 Վարդան վարդապետ, էջ 67:

42 Անդ, էջ 68: Երկրորդ վիճարկության մեջ մատենագիրը կրկնում է Կազանկատվացու տեղեկությունը, Աղվանից իշխան համարելով Վարագ-Տրդատին, փոխանակ Ջիվանշիրի:

իր ձեռքի տակ ունեցիլ է նախորդի գրածը և ազդվել է նրա գրական պատումից:

Ճիշտ է, Կաղանկատվացու փառաբանության մեջ որոշիչ դեր է խաղում պատմիչի վերաբերմունքը. պատմագիտության մեջ վաղուց ընդունված է, որ Կաղանկատվացին «Ջիվանշիրի պալատական դպիրներից ու գործիչներից էր՝ կապված նաև երկրի հոգևոր կենտրոնի հետ... Այդ իշխանի գիտությունը էր, որ նա գրեց «Աղվանից աշխարհի պատմությունը»՝ այնքան մեծ տեղ տալով Ջիվանշիրի կյանքին, գործին ու փառաբանությանը: Եվ այդ բոլորը՝ հայոց լեզվով, որը հեղինակի մայրենի լեզուն լինելով, նաև Աղվանից արքունիքի ու Ջիվանշիրի լեզուն էր»⁴³: Պատմիչը Ջիվանշիրին իր տերն է համարում («և տեսնեմ իմոյ Ջիվանշիրի»)՝⁴⁴, և դա էլ հիմնական պատճառն է այս միայն փառաբանության: Սակայն չպետք է մոռանալ, որ պատմիչն ամենից շատ ոգևորված է իր տիրոջ աշխարհաշեն գործով, մշակութային հայաշունչ մեծագործություններով և ոչ մի դեպքում չի մոռանում նրա տոհմի վատ արարքները, որոնք ուղղված էին երկրամասի հայության ու սրա Առանշահի տերերի դեմ:

Ինչպես վերը հանդամանորեն տեսանք, Ջիվանշիրի ժամանակ Հայոց Աղվանքի մշակութային կյանքը մի նոր վերելք էր ապրում: Նույնիսկ Գարդմանը, որ դարձել էր Պարսկաստանից եկած Միհրանյանների օրրանն ու տիրույթը, այս տոհմին բերեց քրիստոնեացում, հայացում, ձուլում շրջապատի հայկական հզոր ու անհաղթահարելի միջավայրին: Դեռևս Միհրանի թոռան՝ Քաջ Վարդանի օրոք այս պրոցեսն ուժեղ թափով սկսված էր, և շի կարելի կասկածել, որ Ջիվանշիրին էր հասել այնքան ավարտված, որ սա արդեն պայքարում էր ոչ միայն պարսկական բռնատիրության, այլև այն ամենի դեմ, որ պարսկական էր՝ կրոնը և մշակութային մյուս մարզերը: Ջիվանշիրը հայկական միջավայրի ծնունդ էր և ապրում էր այդ միջավայրում, իշխում էր այդ միջավայրի վրա, ամեն կերպ աշխատում էր բարձրացնել այդ միջավայրը:

Աս. Մնացականյանը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե «Ջիվանշիրի ժամանակ վերարժարծված հայկական ոգին գնում էր անմիջապես շարունակելու Վաչագան Երրորդի (Բարեպաշտի— Բ. Ու.) ավանդները...», ավելին, ժամանակի ընթացքում կուտակված և շուրջ մեկ դար դսպված ազատասիրական տրամադրություններն ավելի քան

հախուն տեսք էին ստացել: Ջիվանշիրը մերվել էր հայերին, և նրա հզորությունը՝ վերջիններիս զարթոնքն ու հզորությունն էր»⁴⁵:

* * *

683 թ. աշնանային մի երեկո Պարտավի իր զոյակի պարտեզում սպանվում է Ջիվանշիրը: Կաղանկատվացին այնպես մշուշոտ է ներկայացնում սպանության պարագան, որ այսօր դժվարությամբ կարելի է գուշակել, թե ինչ պատճառներ են դեկավարել դավադիրներին:

Հետազոտողները փորձում են այդ սպանության մեջ տեսնել «դասակարգային պայքարի պոսթկոմունիստներից մեկը»⁴⁶, կամ «Առանի՝ բյուզանդասիրությամբ տոգորված իշխանների դավադրության արդյունքը»⁴⁷:

Լեոն, ելնելով Կաղանկատվացու պատմության տվյալներից, գրում է, որ «այդ մի դավադրություն շէր քաղաքական կամ փառասիրական նպատակներով», այլ հետևանք էր Ջիվանշիրի զեղխ ու ցոփ կյանքի»⁴⁸:

Իսկապես, պատմիչն իր սիրած հերոսի կենցաղը նկարագրելիս հազորդում է այսպիսի մանրամասներ. Ջիվանշիրն ամռան շոգերին թողնում էր Պարտավի իր ապարանքը և նաժիշտների ու գուսանների հետ բարձրանում երկրի հովասուն լեռները, ճաշակում աշխարհի բոլոր վայելքները («յուրովոր զաւուրս բարեկեցիկ յզփութեամբ»): Իսկ աշնանամուտին իջնում էր լեռներից, տարվա մնացած մասը Պարտավի իր դըզյակներում աշխարհի բոլոր այդ վայելքներն ըմբռնանելու համար: Թերևս հենց այս վարքի հետևանքով էլ մեծ զորավարն ու իշխանը զրկվել էր իր վաղեմի փառքից, և ամեն ինչ սարդոստայնի պես հյուսվել էր նրա շուրջը. «Թայց ապա ըղձալի հոշակավորն այն, դի ի ձեռն խարդավանող ախտին ընդդեմ Աստուծոյ երկասիրէր պատուիրանին, թափուր և ունայն ի նորայն փառաց երեսեր և ամենայն ինչ սարդի ոստայն եղեալ վաղվազակի շքնաղն այն քակտէր վայելչութիւն»⁴⁹:

Եվ մի գիշեր էլ շարամիտները նրան համոզում են պալատից ելնել ու տրվել սղեղ վայելքի («հրապուրեալ զնա ի պատճառս բղջախոհութեան՝ փաստապատիր բանիւք հաւանեցուցանէր պնա ելանել ի զքո»:

45 Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 146:

46 К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 349:

47 З. М. Бухартов, նշվ. աշխ., էջ 102:

48 Լեո, Հայոց պատմություն, հ. 2, էջ 330—331:

49 Կաղանկատվացի, էջ 253:

43 Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 143:

44 Կաղանկատվացի, էջ 206:

սանս խոհերականս»⁵⁰, Հենց այստեղ էլ տեղի է ունենում սպանությունը:

Ապա սպանողը, որ պատմիչի կողմից «տիրասպան» է կոչվում, թողնելով Պարտավի իր տունը, նժույգ է նստում, փախչում դեպի Արցախյան լեռնաշղթան: Հետապնդողները չեն հասնում նրան: Արցախում կողոպտում են նրա հոր ունեցվածքը, հրդեհում տունը. «և գտուն հոր նորա աւարեալ քանդէին հրդեհաբոց կիզմամբ, և գմետաբսառէչ և զկերպասանիւթ դիպակս, և զգոյնագոյն կապերոս, զոսկի և զարծաթ և զքնտիր կահուց և սպասուց աւար առեալ...»⁵¹:

Դավադիրներին պատժելու մասին ուրիշ տեղեկություն չի հաղորդվում: Ընդհակառակը, խոտվություն է քննարկում, զինված բազմություններ են իրար խառնվում. «Յայնմ ժամանակի ոչ սակաւ խոտվութիւն լինէր աշխարհիս. զի կուտեալ զինեալ խուռն կաճառացն, և մեծամեծ նախարարացն ժողովեալ, և ամենայն երկիրն առհասարակ վայիւք լի եղեալ՝ ողբային զիշխանն կահանաւոր և զժնդակ գոյմամբ»⁵²:

Այսբանից դժվար չէ ենթադրել, որ սպանողը շարքային մարդ չի եղել, այլ իշխանին ենթակա մեծահարուստ մեկը, որ Պարտավում ապրելով, Արցախում հայրական տուն է ունեցել՝ լեցուն մի արտասովոր հարստությամբ, որ նկարագրված է այն կողոպտելու կապակցությամբ: Հատկապես՝ որ Զիվանշիրի «բղջախոհությունը» կարող էր շոշափած լինել նրա պատիվը և նրան մղած տիրասպանության: Ապա թե ոչ, էլ ինչո՞ւ շսպանեցին տիրասպանին, կամ ի՞նչ նպատակով, ինչի՞ համար էին զինվել խուռն բազմությունները:

Այսուհանդերձ, համաժողովրդական սուգ է իջնում Ազգանից աշխարհի վրա: Եվ Դավթակ բանաստեղծը, որ շատ օրեր առաջ ժամանել էր պալատ («Յուղով աւուրբք յառաջ ժամանէր ի դրան արքունի»)՝⁵³, հայոց այրուբենով արքոստիքոս-ողջ է երգում «ի վերա բարեացապարտին Զիւանշիրի»:

Ի լրումն այս զլիսի՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի երկու հարցի, նպատակ ունենալով ամփոփել մեր խոսքը Ազգանից

50 Անդ, էջ 254: «Բղջախոհ» նշանակում է պղծասեր, ցանկասեր (տե՛ս Նո. Անտոնյան, Հայերեն արժատական բառարան, հ. Ա, էջ 1117), «բղջախոհի» հակառակը:

51 Անդ, էջ 256—257:

52 Անդ, էջ 257:

53 Անդ, էջ 257: Այստեղից երևում է, որ Դավթակն ուրիշ տեղից եկած էր և Զիվանշիրի պալատական երգիչը չէր, ինչպես պնդում են բանասերիներից ոմանք:

աշխարհի պատմության մեջ Միհրանյան տոհմի խաղացած դերի մասին:

Կարծում ենք՝ ավելորդ է վերստին արժարժել Միհրանյանների պարսկական ծագման հարցը: VII դարի սկզբին պարսկական մի գաղթականություն հասավ Հայոց արևելից կողմանք, իջավ Ուտիքի Գարդման գավառում, տիրացավ նրան՝ դավադրաբար կոտորելով տեղի հայ իշխողներից սկզբում տասներկու, ապա վաթսուն հոգու: Սակայն, ինչպես պետք էր սպասել, տերերին կոտորելով՝ նրանք չկարողացան իրենց զգալ լիիրավ տերը մի աշխարհի, որի բնիկները հայեր էին՝ իրենց քրիստոնեական կրոնով, հայերեն լեզվով, դպրություններ ու մշակույթի մյուս ձևերով: Այդ պատճառով էլ Միհրանի հաջորդները քրիստոնեություն ընդունեցին, ձուլվեցին տեղի հայկական միջավայրին:

Հնարավոր է, որ այս հանգամանքին նպաստած լինի պարսկական տիրապետության անկումը: Զե՞ որ Միհրանյաններից առաջինը իշխանական տիրոջ արժանացավ Վարագ-Գրիգորը: Իսկ նրա ժամանակ արդեն պարսկական բանակները զլիսովին ջարդվեցին արաբների հուժկու հարվածներից, և Պարսկաստանն ինքն էլ զարձավ արաբ խալիֆայությունից կախյալ մի երկիր: Այս պայմաններում դժվար թե նրա մի բեկորը հեռավոր Ազգանքում կարողանար պահել պարսկական բունատիրության ներկայացուցչի իր կշիռը: Պարզ է, որ սա պետք է հարմարվեր միջավայրին: Իսկ այդ միջավայրը հայկական էր, գրիգորյանքրիստոնեական:

Պատմական իրողությունների այսպիսի հիմքի վրա էլ միանգամայն անհիմն ու անառարկա է այն պնդումը, թե Միհրանյան տոհմի իշխաններն ալբաններ էին, ալբանական իշխաններ, և թե Առանշահիկների հայկական հինավուրց տոհմի ու Միհրանյանների փոխհարաբերությունների մեջ «մենք գործ ունենք ֆեոդալական Ալբանիայի վրա գերագույն իրավունքներ նվաճելու համար՝ հայացած ալբանների և հայկական ֆեոդալական տոհմերի միջև եղած պայքարի արձագանքների հետ»⁵⁴:

Այս կարծիքի հեղինակ Կ. Վ. Տրեքերը մի ուրիշ տեղ առարկում է Վ. Վ. Բարտոլդի այն առավել անհիմն տեսակետի դեմ, որի համաձայն՝ հանձին Միհրանյանների պետք է տեսնել «ալբանական ազգային, սակայն պարսկական ծագում ունեցող դինաստիայի վերականգնումը»⁵⁵, Կ. Վ. Տրեքերը Վ. Վ. Բարտոլդին իրավացիորեն պատասխանում է. «Հազիվ թե «պարսկական ծագում ունեցող» դինաստիան կարելի լինի կոչել

54 К. В. Тревер, *Узл. узл.*, էջ 235:

55 В. В. Бартольд, Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, с. 25.

ազգային և ալքանական»⁵⁶։ Հետո էլ Միհրանյան տոհմի ճյուղագրության անհարկի հաշվումներից գալիս է այն եզրակացության, թե պետք է վերանայել նրանց Աղվանք թափանցելու թվականը, որովհետև «Իբր թե 600 թ. Ալքանիայում իշխել սկսած Միհրանից մինչև Ջիվանշիրը (636—669) յոթ իշխողներ են փոխվել, որ քիչ հավանական է թվում... Հակառակ դեպքում Ալքանիայում Միհրանի պատմական թատերաբեմի վրա հայտնվելու ժամանակը պետք է ետ տանել կես դարով, իսկ թերևս նաև ավելի»⁵⁷։

Աս. Մնացականյանն իրավամբ սա համարում է քիչ կարևոր մի առարկություն, որովհետև տվյալ դեպքում ամեն ինչ կհարթվի «...ժամանակի մասնակի տեղաշարժով կամ սերնդահաշվի մեջ մուծվելիք որոշ ուղղումներով»⁵⁸։

Տրևերի առարկությունը, սակայն, գալիս է նրանից, որ հետազոտողը չի կարողանում որոշել Ջիվանշիրի իշխանության ու սպանության տարեթվերը։ Ըստ նրա հաշվումների՝ Ջիվանշիրն սպանվել է 669 թ., սակայն 684 թ. խազարներն արշավեցին Ալքանիայի վրա։ Խազան Ալփ-իլիթվերն ավերիչ հարձակումների ենթարկեց Կուրի ձախափը, Կովկասի նախալեռները և Կաբալայի մարզը՝ «որպես վրիժառույթուն Ջիվանշիրի սպանության համար»⁵⁹, որովհետև Ջիվանշիրի երկրորդ կինը խազարների խաբանի դուստրն էր։

Որ խազարները, Ջիվանշիրի վրեժը լուծելու համար, 684 թ. են հարձակվել Ալքանիայի վրա, դա ճիշտ է։ Բայց արդյոք շա՞տ չէ այսքան երկար ժամանակ վրեժ մոմտալը։ Սպանությունից ուղիղ տասնհինգ տարի անց։

Ջիվանշիրի սպանությունից հետո «տեսարք տոհմից» կուսակալք, մեծամեծք, նախարարք և ամենայն իշխանք աշխարհացն այնոցիկ ժողովեալք առ մեծ արքեպիսկոպոսոքն Եղիազար... հաճեցան առժամայն ընտրել հաւանությամբ զնախարար ոմն... որոյ անուն Վարազ-Տրդատ, որդի Վարազ Պերոժի՝ եղբոր Ջիվանշիրի»⁶⁰։

«Աղվանից աշխարհի պատմության» ընձեռած տվյալներով՝ Եղիա-

զարը կաթողիկոս է դարձել 683 թվականին⁶¹, երբ դեռևս կենդանի էր Ջիվանշիրը։ «...պարկեշտ այն Եղիազար ի նոյն ժողովոյ անու զառաքելական պատին, մինչդեռ բարեբաստիչն Ջուանշիր զաշխարհական տերութիւնն վարէր»⁶²։

Եթե Ջիվանշիրը հենց նույն տարին էլ սպանված լիներ, նշանակում է՝ Վարազ-Տրդատը ամենավաղը 683-ին կարող էր քնտրվել նախարար։ Սրան հաջորդում է խազարների հարձակումը Ալքանիայի վրա։ Խազարների թագավորը մտածում էր, որ նորընտիր Վարազ-Տրդատ նախարարի մատը խառն է Ջիվանշիրի սպանության մեջ։ Եվ այս հարձակումից ու երկրի ավեր-ավարից հետո է, որ Վարազ-Տրդատը կաթողիկոս Եղիազարի գլխավորությամբ պատգամավորություն է ուղարկում թագավոր-խաբանի մոտ՝ «ցուցանելով ի ձեռն նորա զիր միամիտ հաւատարմութիւն և զսէրն, զոր ունէր առ նա մտերմաբար իբրու եղբոր սիրելւոյ, և թէ շեղաքմեք հաղորդ սպանմանն Ջիվանշիրի...»⁶³։

Ինչ վերաբերում է Միհրանյանների Աղվանք թափանցելու ժամանակը «կես դարով, իսկ թերևս նաև ավելի» ետ տանելու մասին Տրևերի առաջարկությանը, ապա դա ևս նորություն չէ։ Դեռևս ակադեմիկոս Բրոսսեն է նկատել, որ անհնար է 600—640 թթ. միջև տեղադրել Միհրանյանների վեց սերունդը՝ Միհրան նախնուց մինչև Ջիվանշիր։ Նույն կարծիքն է հայտնել նաև Բ. Պատկանյանը⁶⁴։ Սակայն նրանք, ինչպես նաև Կ. Վ. Տրևերը, այս դեպքում, ըստ երևույթին, մոռանում են այն կոնկրետ մանրամասները, որոնց ուղեկցությամբ պատմիչը Միհրանին բերում է Աղվանք, և չեն ուզում կասկածել վեց սերնդի մասին հղած հայտարարության վրա, երբ իրականում պատմական գործերին մասնակցում են երեքը՝ Քաջ Վարդան, Վարազ-Գրիգոր, Ջիվանշիր։

Միանգամայն անհիմն է նաև Միհրանյանների Աղվանք թափանցելու ժամանակը Վաչագան Բարեպաշտի տիրապետությունից հաշվելը, որովհետև ինչպես վերը տեսանք, Աղվանի ժողովի մասնակից Քաջ Վարդանը ոչ մի առնչություն չունի Միհրանյան Քաջ Վարդանի ու Գարգամանից գավառի հետ։

Շուրջ երկու դար Միհրանյաններն իշխեցին Գարգաման գավառին, հավանաբար, առանց դառնալու ամբողջ այսրկության Աղվանքի տրևորենները։

⁶¹ Եղիազարի զահակությունը 683-ից է հաշվում նաև Մ. Բարխուտարյանը («տե՛ս նրա՝ «Պատմություն Աղվանից», հատ. Ա, էջ 110)։

⁶² Կաղանկատուացի, էջ 245։

⁶³ Անդ, էջ 263—264։

⁶⁴ «История Арван», с. 341։

⁵⁶ К. В. Тревер, ԵՂՎ. աշխ., էջ 235։

⁵⁷ Անդ, էջ 235—236։

⁵⁸ Աս. Մնացականյան, ԵՂՎ. աշխ., էջ 73։

⁵⁹ К. В. Тревер, ԵՂՎ. աշխ., էջ 249։

Ջիվանշիրի մահվան, Վարազ-Տրդատի նախարարության սկզբի ու Եղիազարի ձեռնադրության տարեթվերի հարցում ավելի մեծ խառնաշփոթություն է Զ. Բուխոբովի գրքում (էջ 102—103)։

⁶⁰ Կաղանկատուացի, էջ 261—262։

Կաղանկատվացին նրանց փառքը (հատկապես Ջիվանշիրին) բարձրացնում է մինչև երկինք: Նա Ջիվանշիրին փառաբանում է որպես Արեվելից բաղձամեծար իշխանին ու տիրակալին, նրան հզոր ու առավել է համարում, քան «թագաւորն հարաւոյ» (արար խալիֆ), քան «կայսրը Հոռոմոց...»: Սակայն մենք տեսնում ենք, որ իրականում նա մի կախյալ իշխան է՝ հարկատու երեք տիրողների: Եվ չնայած պատմիչը նրան համարում է տեր «ի սահմանացն Վրաց մինչև ի Գրունս Հոնաց միահեծան ճոխութեամբ»⁶⁵, դրա կողքին մեղբերված պաշտոնական գրության մեջ մենք տեսնում ենք միայն «Քեզ տեառն Ջիվանշիրի՛ Գարգմանայ տեառն և Աղուանից իշխանի...»⁶⁶: Որ Ջիվանշիրի իշխանությունը Հայոց արևելից կողմանց գավառների վրա տարածվել է հարկադրաբար, երևում է Կաղանկատվացու հետևյալ վկայություններից: Բյուզանդական կայսեր թղթում Ջիվանշիրը կոչված է Աղվանից իշխան և Արեվելից կուսակալ⁶⁷: Իսկ ինքը՝ Ջիվանշիրն իրեն կոչում է «սպարապետ և իշխան Աղուանից հանդերձ Արևելիցս ծառայական աշխարհա»⁶⁸:

Եթե հավատարյու լինենք Ջիվանշիրի մասին պատմիչի շոտլած խոսքերին, պիտի տեսնենք Աղվանից աշխարհի մի անմրցակից թագավորի, որը չէր կարող չզրավել ժամանակակիցների ու հետնորդների ուշադրությունը: Մինչդեռ Ջիվանշիրին ժամանակակից բյուզանդական գրողներից ոչ ոք չի խոսում նրա մասին... Արար գրողները ևս խոր լռություն են պահպանում նրա քաջագործությունների ու անվան առթիվ: Լռում են նույնիսկ Ջիվանշիրին ժամանակակից հայկական մյուս աղբյուրները (Ղևոնդ, Սեբեոս), որոնք լայնորեն արտացոլել են Աղվանքի հարաբերությունները սարսից, արտերևի, խաղարների ու բյուզանդացիների հետ:

Այս բոլորն, իհարկե, չեն բացառում Ջիվանշիր անունով պատմական անձնավորության գոյությունը: Սակայն ստիպում են զգուշավոր լինել պատմիչի հաղորդած փրուն տեղեկությունների հանդեպ և նրանց մեծ մասն ընդունել քննական մաղով անցկացնելուց հետո:

* * *

Պարսկական տիրապետության ժամանակների մասին ասված մեր խոսքն ամփոփելու նպատակով անհրաժեշտ ենք համարում անդրադառ-

65 Կաղանկատվացի, էջ 209.
66 Անդ, էջ 208:
67 Անդ:
68 Անդ, էջ 207:

նալ նաև մի կարևոր հարցի՝ Հայոց արևելից կողմանց աշխարհացույցյանը մրոնումը և նրա մեկնաբանությունները:

Պատմաաշխարհագրական քննության ընթացքում մենք հանգամանորեն ցույց ենք տվել, թե «Աշխարհացույցն» ինչպես է պատկերացնում Մեծ Հայքի հյուսիսարևելյան երեք նահանգները, նրանց սահմանները, գավառների թիվը և այլն: Գալով այս նահանգների վարչաքաղաքական վիճակներին, «Աշխարհացույցն» Ուտիքի ու Արցախի գավառները թվարկում, ապա ավելացնում է. «ղայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց»⁶⁹: Աղվանքի գավառներն էլ արդեն գումարել էր՝ «եւ այլ քսան գաւառս զորս ի Հայոց հանեալ է»⁷⁰, իսկ Փայտակարանի մասին խոսելիս չի մոռանում հիշեցնել, որ այն «գաւառս ունի երկուտասան, զոր այժմ Ատրպատական ունի»⁷¹:

Այս նշանակում է՝ «Աշխարհացույցն» այս նահանգների հին հայկական պատկանելության համոզմունքով՝ նշում է, որ նրանցից երկուսը (Արցախ, Ուտիք) իր ժամանակ գտնվել են Աղվանքի տիրապետության տակ, մեկը (Փայտակարանը)՝ Ատրպատականի:

Այսքանը հետազոտողների համար հաստատուն հիմք է դարձել, որպեսզի նրանք, մի կողմ թողած պատմական մյուս բոլոր աղբյուրները, հայտարարեն, թե «Մեզ հայտնի է, որ 387 թվից հետո Արցախ, Ուտիք և Փայտակարան նահանգները միացվեցին Աղվանքին»⁷²: Որտեղից է հայտնի «Աշխարհացույցն» իր ժամանակի համար Փայտակարանի մասին ասում էր՝ «Ատրպատական ունի»: Պարզ է, որ 428-ից հետո այն միացվել է Ատրպատական մարզին, և, քանի որ նրա հայ-աղգագրական վիճակը բավական հեղհեղուկ է եղել, ապա՝ կարվել է հայկական ընդհանուր միջավայրից, մտցվել պարսկական կյանքի ու հավատի ոլորտը, — հասկանալի է, որ շուտով ձուլվել է պարսից: Բացի այն հոծ զանգվածներից, որոնք հեռացել են դեպի Արցախ, Ուտիք և ավելի հեռուները:

Բայց ի՞նչ է նշանակում «387 թվից հետո Արցախ, Ուտիք... նահանգները միացվեցին Աղվանքին»:

«Աշխարհացույցը», ըստ հետազոտողների, «7-րդ դարում ապրող

69 «Աշխարհացույց», էջ 109.
70 Անդ, էջ 105.
71 Անդ, էջ 109:
72 Մ. Տ. Երևմյան, «Մուղհացուց իշխանութիւնը», էջ 48:

(ապրած— Ռ. Ու.) հեղինակի գործ է նա գրված է Հայաստանն արաբական խարիֆաթի զորքերից վերջնականապես չնվաճված ժամանակ»⁷³։

Ս. Ս. Նրեմյանը 1963 թ. հրատարակած իր «Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի» աշխատության մեջ գտնում է, որ այդ հանձարեղ հուշարձանն ստեղծվել է VII դարի սկզբին և «արտացոլում է Հայաստանի վարչատեղիտորիալ բաժանումը 591—610 թվականների միջև»⁷⁴։

Մ. Մ. Խաչատրյանը ևս մոտավորապես նույն տարիներին հորինված գործ է համարում «Աշխարհացոյցը», համոզված, որ այն «գրված է մարզպանական ժամանակաշրջանում, որը տևել է մինչև VI դարի վերջերը, բայց ոչ ոչ, քան Հերակլի արշավանքները»⁷⁵։

Դժբախտաբար «Աշխարհացոյցը» քննող գիտնականներից և ոչ մեկը հարց չի տալիս, թե այս ինչպե՞ս է, որ մարզպանական ժամանակաշրջանում Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհները գտնվում էին Աղվանքի կազմում կամ, ինչպես «Աշխարհացոյցի» հեղինակն է կրկնում ու երեքիկում՝ «դայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց»։

Մարզպանական շրջանն է այս «այժմը»։ Եվ մարզպանության ժամանակ էր, որ Աղվանքը գրաված ուներ Ուտիքն ու Արցախը։

591 թ. բաժանումը, ինչպես Սերբոսն ու Հովհաննես կաթողիկոսն են նկարագրում, Բյուզանդիային տեր դարձրեց Հայաստանի ամբողջ արևմտյան ու կենտրոնական նահանգներին՝ մինչև Հրազդան գետը և Պարսկաստանի հպատակության տակ թողեց միայն հյուսիսարևելյան նահանգները՝ Սյունիք, Արցախ, Ուտիք, Շարուրը՝ Գլխին հետ, հարավարևելքում՝ Վասպուրական գավառը։

Այս բաժանմանը հաջորդած շուրջ մեկ տասնամյակի մասին Արցախի և Ուտիքի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չկան։ «Աղվանից աշխարհի պատմության» առաջին ժամանակագրից (Վաչագան Բարեպաշտին նկարագրողից) հետո պատմությունն ընդմիջվում է մինչև Վերո կաթողիկոսի ժամանակագրությունը, որը հիմնականում VII դ. առաջին քառորդի խազարական դեպքերով էլ պետք է սկսեր իր պատմը։ «Պատմության» մեջ մտած մյուս ժամանակագրությունը, որ վերաբերում է Զիվանշիրին, սկսվում է Միհրանյան տոհմի Գարդմանքում հաստատվելու ժամանակից, որը տեղի է ունեցել դարձյալ VII դարի առաջին տասնամյակում։

Մակայն հենց այս երկու ժամանակագրությունների մեջ էլ կան առանձին այնպիսի մանրամասներ, որոնցով կարելի է մոտավոր դադափար կազմել նախորդ տասնամյակի վիճակի մասին։ Միհրանյանները Գարդմանքում հաստատվելով՝ հենց սկզբից ևեթ դավով ու նենգություններ կոտորում են երկրամասի բնիկ իշխանական Առանշահիկ տոհմի ներկայացուցիչներից շատերին, որպեսզի տիրանան Գարդման գավառին։ Նշանակում է՝ դրանից առաջ երկրամասի տերերը Առանշահիկներն են եղել։

Մյուս ժամանակագիրը՝ Վիրոն, պատմում է, որ, երբ խազարները հարձակվում են Չող երկրի (բուն Աղվանքի կամ Այրանիայի) վրա, տեղացիները ոչ մի դիմադրություն ցույց չեն տալիս։ Իսկ Պարտավում նստող պարսիկ մարզպան Գալաքը սարսափահար փախչում է իր երկիրը⁷⁶։ Գալաքին հաջորդում է պարսից մի այլ մարզպան՝ «կուսակալ իշխանն Պարսից, որ էր մարզպան Աղուանից աշխարհիս՝ Սեմա Վշտնասանուն»⁷⁷։

Այն էլ ասելք, որ բուն Աղվանքն այնքան անտեր ու ձվատված էր, հյուսիսական վայրենաբարո ցեղերի ասպատակություններից այնքան խեղճացած, որ ոչ միայն չէր կարող հայկական դավառներ նվաճել կամ նվաճած պահել, այլև ինքն էր օտարների ոտքի կոխան դարձել ու այլևս վարչաքաղաքական դեմք չուներ։ VII դարի հայ հեղինակը և իրողությունների ժամանակակիցը՝ ինչպե՞ս կարող էր այսքանը շիմանալ։

Տեսանք, որ VII դարից առաջ, մարզպանության ամբողջ ընթացքում, հայկական նահանգները երբեք բուն Աղվանքի տիրապետության տակ չէին եղել, քանի որ իրար հետ մեկտեղ ենթարկվում էին պարսից մարզպանին։ Բայց տեսանք նաև, որ առանձին շրջաններում, օրինակ, Վաչագանի թագավորության օրոք, եղել է հակառակը՝ անդրկուրյան երկիրը ենթարկվել է Հայոց արևելից կողմանց թագավորին։

Այս պարագայում «Աշխարհացոյցի» հեղինակն ինչպե՞ս է ասում, թե աջափնյակի հայկական դավառներն Աղվանքի ձեռքում են («Աղուանք ունին»)։

Հայտնի է, որ «Աշխարհացոյցի» մեջ շատ քան աղավաղված կամ մոծված է հետագայում, կան տեղեկություններ, որոնք կրկնված են և

73 Աշ. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 251։

74 Ս. Ս. Նրեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի, էջ 7։

75 Մ. Մ. Խաչատրյան, VII դարի «Աշխարհացոյցի»-ի մասին (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 4), էջ 98։

76 Կաղանկատուացի, հատ. II, գլ. ԺԱ։

77 Անգ, էջ 175։

այն էլ իրար հակասող ավյալներով: Ս. Տ. Երեմյանը նման մի փաստի առթիվ գրում է՝ «բանասերների համար անհասկանալի է մնացել, թե ինչո՞ւ այս երկրները (Հայաստան, Վիրջ, Աղվանք, Բաղասական, Սի- սական — Ք. Ու.) բնագրում հիշվում են երկու տեղ»⁷⁸, Իսկապես, ինչի՞ արդյունք է այս կրկնությունը: Պարզ է, որ հետագայի հավելումի: Հավելողը, առանց փոխելու կամ կրճատելու բնագրում եղած փաստն այդ երկրների մասին, իր գտած օտար աղբյուրի՝ նույն երկրներին վերաբե- րող նյութն էլ է մտցրել բնագրի մեջ:

Բայց ինչպե՞ս թե աշափնյակի հայկական գավառները «Աղուանք ունին»: Սա՞ ինչ տեսակ մուծում է կամ հավելում:

Մեր հաստատ համոզմամբ՝ հետագայում մուծված այսօրինակ նախադասությունների հեղինակը խղճուկ պատկերացում է ունեցել երկ- րամասի պատմական աշխարհագրությունից և, հենց «Աշխարհացոյ- ցում» կարդալով, որ բուն Աղվանքն «ընդ մէջս է մեծի դետոյս Կուրայ և Կովկաս լեռինն», ապա տեսնելով, որ աշափնյակը ևս կոչվում է Աղ- վանք, մտածել է, թե կա-չկա, սա գրավումի արդյունք է, և հենց իր այդ սխալ պատկերացումն էլ մուծել է «Աշխարհացոյցի» մեջ:

Որևէ պատմական աղբյուրի հաղորդած տեղեկությունը լիովին ար- ժանահավատ է համարվում միայն այն դեպքում, երբ հաստատվում է հարակից աղբյուրներով կամ նյութական մշակույթի հուշարձանների ավյալներով, այլ խոսքով՝ երբ այդ տեղեկության իսկությունն ստուգե- լու լրացուցիչ միջոցներ կան, և վերջիններս էլ իսկապես հաստատում են: Տեղեկությունը կարելի է նույնիսկ այն դեպքում բնորոշել, երբ ո՛չ հարակից աղբյուր կա, ո՛չ էլ ստուգելու լրացուցիչ որևէ միջոց... Միայն թե հակառակը հաստատող աղբյուրներ չլինեն: Բայց «Աշխարհացոյցի» այս տեղեկությունը միակն է իր բովանդակությամբ, և հակառակ իր- ղությունն են հաստատում ոչ միայն հայ, այլև օտար բոլոր աղբյուր- ները: Այս դեպքում նման տեղեկությունն ի՞նչ իրավունքով է ներքում այդ աղբյուրների տեղեկությունները:

Պարսկական տիրապետության շրջանը ծանրագույն քննություն էր Մեծ Հայքի Արևելից կողմանց գավառների համար:

Պարսկաստանը Հայոց երկրի հետ խաղացել էր բոլոր ասիմիլյա- տորների սերտած հայտնի խաղը. բաժանիր, որ հեշտ լինի ձուլել: Հա- յաստանը երկու մասի բաժանելուց հետո իրեն բաժին ընկած մասն էլ էր բաժանել, և այս վերջին բաժանումով ամենազաժան բախտը վիճակ-

վել էր Փայտակարանին, ապա Ուտիքին ու Արցախին, որովհետև սրան- ցից առաջինն առանձնացվել և կցվել էր պարսկական հյուսիսային մարզին, իսկ վերջին երկուսը բազմալեզու Ալբանիա-Աղվանքի հետ կազմում էին մի այլ մարզպանություն:

Սակայն ամեն մի մարմին էլ ունի ինքնապաշտպանության իր մի- ջոցները: Եվ ձեռնամբ հակադեցուցություն է ծնում:

Նախընթացի բազմադարյան կյանքում Մեծ Հայք երկրի կազմում լինելը Հայոց արևելից կողմանց և հատկապես Ուտիքի ու Արցախի հա- մար այն նշանակությունն էր ունեցել, որ այս նահանգներում, Ստրա- բոնի վկայությամբ, դեռևս մեր թվականությունից առաջ հայերեն խո- սող ժողովուրդը ձեռք էր բերել ազգային անտրոհելի ամբողջությունն ապահովող ևս երկու կարևորագույն գործոն՝ քրիստոնեական-լուսավոր- շական կրոնը և ազգային գիրն ու դպրությունը: Այդ պատճառով էլ, մայր երկրից կտրված, պարսկահայաստակ այլազգի գավառների հետ միասին մեկ վարչական միավորի մե՛ջ անգամ նրանք (Արցախը և Ուտիքը) պահպանում էին իրենց անխաթար ամբողջությունը, ունեին իրենց իշխանությունը՝ «գնախնական ազգյ Հայկազնեայց Յուանշա- հիկա», որի ներկայացուցիչները կոչվում էին թագավորներ: Այս հայ- կազուն թագավորների մեծագույն արժանիքն էր, որ հասկացան իրենց դերը՝ ամենից առաջ մտածեցին ազգապահպանության միջոցների մա- սին: Նրանք մաքրեցին ազգային միասնական հավատի ճանապարհը, իսպառ վերացնելով ինչպես հեթանոսական հավատի մնացորդները, այնպես էլ արդեն ներս սողոսկող կրակապաշտության առաջին շոշա- փուկները: Նրանք աշխատում էին ամեն կերպ անխախտ պահել կապը մայր երկրի հետ և դրա համար օգտագործում էին բոլոր հնարավոր մի- ջոցները՝ կրոնական թղթակցությունից մինչև ռազմական ու քաղաքա- կան բանագնացությունները և դաշինքները: Իսկ տեղում մշտաբորբոք էին պահում ազգային ոգին՝ հայկական ավանդների ու սրբությունների յանդամառ վերհանումով, հայկական ազգային գրով ու դպրությամբ:

Այս ամենի շնորհիվ Հայոց Աղվանքը դարձել էր ազգագրորեն այն- քան միաձույլ ու անխաթար միջավայր, որ VII դարի արշալույսին նրա կենտրոններից մեկում՝ Գարգամաքում, հայտնված Միհրանյան տոհմն ու սրան հպատակ մեծաթիվ գաղթականությունն ստիպված եղան ըն- ղունել քրիստոնեություն ու հայանալ: Աղվանք թափանցելուց երկու- երեք տասնամյակ հետո այս տոհմի ամենահզոր իշխան Զիվանշիրն արդեն հանդես էր գալիս որպես Հայոց արևելից կողմանց հայության ազգային-մշակութային շահերի պաշտպանն ու տարածողը: Եվ եթե

78 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը..., էջ 26:

նրանց ու Առանշահիկների միջև դեռևս բորբոք էին մնում մրցակցությունն ու թշնամանքը, դրա պատճառն արդեն ոչ թե ազգային հատկանիշն էր, այլ հնորյա բարքերով սրբազործված արյան վրիժառուությունը:

Այսքանից հետո արդեն անհիմն ու անհեթեթ են Միհրանյաններին ու նրանց տիրույթներին կայցրած «ալբան», «ալբանական» ածականները: Որովհետև, եթե, մի կողմից, Միհրանյանները պարսիկներ էին, և «ալբանական» ածականը ոչ մի կերպ չի կաշում նրանց, ապա, մյուս կողմից, որ և ամենակարևորն է, նրանց միջավայրը հայկական էր, ու նրանք ոչ մի ազդեցություն չկարողացան գործել այդ միջավայրի վրա, բացի նրանից, որ իրենք հայացան:

Բյուզանդական գահի վրա հայ թագավորներ են բաղմել: Նրանք հայաշեն գործեր են կատարել և հաճախ ունեցել են հայ զորագնդեր... Սակայն դրանով Բյուզանդիան չի դադարել Բյուզանդիա լինելուց:

Ճիշտ այդպես էլ Հայոց արևելից կողմանքը մնաց հայկական աշխարհ, իր մեջ առավ ու յուրացրեց եկվոր տարրը և հաջորդ՝ արաբական դարաշրջանը ոտք դրեց ազգազրական տեսակետից մի այնպիսի միաձուլվիճակում, որ արաբ իշխողներն ու նրանց մատենագիրներն իրենց հույատակ Առան վարչական միավորի մեջ տեսնում էին ազգագրորեն իրարից միանգամայն տարբեր, նույնիսկ վարչականորեն սահմանազատվող երկու Առան-Աղվանք՝ Հայոց Առան (Հայոց արևելից կողմանք) և անդրկուրյան Առան (Ալբանիա)⁷⁹:

79 СМОМПК, вып. 38, с. 99, 100, 105 (Ибн-Халкан.). См. также ут.-Заманли. Вշխարհազրական բաղիրք («Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965), էջ 12; А. Е. Крымский, О Кабале, с. 291, В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, с. 29, 38 и след. «Очерки истории СССР III—IX вв.», с. 534. З. М. Буниятов, Азербайджан..., с. 140.

Գ Բ Վ Ա Գ Ի Ե Ն Ն Ե Ր Ո Ր Գ

ԱՐԱՐԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

VII դարի սկիզբը նշանավորվեց իսլամի վարդապետության ծնունդով: Արաբիան էր այդ նոր դավանության օրրանը: Սակայն շատ շուտով իսլամական կրոնը տարածվեց հարևան երկրներում և սկսեց իր հաղթական արշավը շոքս կողմերի վրա:

Աղվանքի պատմիչն իր հայրենիքի սահմանների վրա լսեց արաբական խառնիճադանչ հեծելազորի սմբակների դոփյունը, հենց որ Պարսկաստանում մեռավ Սասանյան հարստության վերջին ներկայացուցիչը, և երկիրն ընկավ «ի ձեռս որդուցն Իսմայելի»:

Մենք տեսանք, թե ինչպես արաբների դեմ պարսիկների հետ միասին կռվում էին նաև հայերն ու իրերները, թե ինչպես Աղվանից աշխարհի զորքերի զուլխն անցած Ջիվանշիրն իր երիտասարդ ուժն էր շափում աշխարհակալության իրենց ճամփան բռնած արաբների հետ, և թե ինչպես Ջիվանշիրի աշքերի առաջ Քաղեսիայի մոտ գլխովին ջախջախվեցին պարսից բանակները:

Ջիվանշիրը հայրենիք վերադարձավ, Պարտավից քչեց պարսիկ բռնակալներին և որոշեց այլևս չենթարկվել օտար ոչ մի ուժի. «Ղնէր ի մտի դիշխանութիւնն իւր և զսիրոյ վիճակ ոչ ումեք ընդ ձեռամբ»¹:

Սակայն շատ շուտով համոզվեց, որ այս աշխարհում փոքրը պետք է կամ ապավինի որևէ մեծ ուժեղի, կամ էլ հզորների ոտքի տակ տրորվի: Եվ խոնարհաբար հպատակություն հայտնեց Բյուզանդիային ու նույնն էլ հորդորեց Հայոց զորավար Թեոդորոս Ուտունուն. «Ընդ զորաւարին Հայոց զնէր ուխտ և քաջալերէր դառնալ ի հնազանդութիւն կայսերն Հռոմոց»²:

Սակայն այս միջոցառումը ևս փրկություն չէր հարավից եկող անկասեցնելի ստրկացումից: VII դարի երկրորդ կեսին անդրկովկասյան

¹ Կաղանկատուայի, էջ 205:

² Անդ, էջ 206—207:

երկրներն արդեն արարական տիրապետութեան տակ էին: Այս անգամ Ջիվանշիրն ստիպված եղավ իր ոտքով գնալ արար խալիֆի մոտ՝ ի նշան հպատակութեան և այնտեղ հանդիպեց նույն նպատակով ժամանած բյուզանդացիներին. «Ջի ճոխք քաղաքին Բիզանդիոյ եկեալ էին յանձն առնուլ հարկատուութեան որդուցն Հազարու»³:

Բռնակալների դիրքերի այս արտասովոր փոփոխութիւնը սրամիտ պատկերով է բնորոշվում Աղվանքի պատմութեան մեջ: «Ջի իբրև ետես քօշն արևմտեան, թէ դարձոյց Տէր զօգնականութիւն ի սրոյ նորա ժամանակին ըստ կանխասաց մարգարէութեանն և խոստմանն Աբրահամու. «Եթէ ձեռք Իսմայելի յամենեսին և ձեռք ամենեցուն ի նա». և եթէ՝ «Առաջք նորա հուր ծախիչ և վերջ նորա բոց բորբոքեալ». — յայնժամ առեալ կայսերն Հոռոմոց զսինըորն զօրացն՝ աճապարէր ընդ ծով և ընդ ցամաք անցանել ի սահմանս հեռաւորս կղզեացն արևմտից»⁴ («Երբ արևմտյան ալժը (Բյուզանդիան—Ա. Մ.) տեսավ, որ ետ է վերցվել Տիրոջ օգնութիւնն իր սրից, և վայրենի վարագը (Արաբիան) զազանացած փշրում է իր եղջյուրները, հասկանալով, որ եկել է Աբրահամի կանխատես մարգարեութեամբ խոստացած ժամանակը՝ թի՛ «Իսմայելի ձեռքն ամենքի վրա է, ամենքի ձեռքը՝ նրա», և՛ թի՛ «Նրա առջև հուր է ավերիչ, ետև՝ բոց բորբոքուն».— այնժամ հոռոմների կայսրն առավ իր զորքերի սինըորներին և ծովով ու ցամաքով շտապեց արևմտյան կղզիների սահմանները»):

Կաղանկատվացիի արաբներին պատկերացնում է որպէս դժոխային շարիք. «Խրոխտ և ահեղ յուլովութեամբ յերկրէ հեռաստանէ դիմեալ զան իբրև մրրիկ ընդ անապատ երկիր»⁵: Պատմիչն արդեն երբեք չի մոռանում «տիեզերամարտութիւնը Հազարացուց»:

Կաղանկատվացիի համարյա ոչինչ չի հազորդում արաբների առաջին ասպատակութիւնների մասին: Ըստ երևույթին, դա պետք է ընթերցողի աչքում իջեցնել նրա փառաբանած հերոս Ջիվանշիրի վարկը: Մինչդեռ արաբ մատենագիրներն ու Սեբեոսն ալջ արշավանքները նկարագրում են հանգամանորեն: Օրինակ, Բալաձորին պատմում է, թե ինչպէս արաբները մեկը մյուսի ետևից նվաճում են Հայաստան երկրի քաղաքները՝ Դվինից մինչև Պարտավճ, Սեբեոսի վկայութեամբ՝ դեռևս

³ Անդ էջ 225—226: Այստեղ «ճոխ» նշանակում է իշխանավոր (տե՛ս ԸՄ. Աճառյան, Հայ արմատական բառարան, հ. Դ, էջ 876):

⁴ Անդ, էջ 221:

⁵ Անդ, էջ 197:

⁶ Բալաձորի, էջ 5—6:

652 թ. Հայոց մեծ իշխան Թեոդորոս Ռշտունին Դամասկոս է գնում, բանակցում խալիֆի հետ: Ապա քաջ զորավարը վերադառնում է մեծ նվերներով ու լիազորութիւններով: Մտավիան նրան է վստահում ամբողջ Անդրկովկասի իշխանութիւնը. «Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՄիւնիս, մինչև ցալահակն Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա տայման էր եղեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»⁷:

Սակայն խաղաղութիւնը շատ կարճ է տևում: Երկու տարի անց արաբական մի սովար բանակով գալիս է Հարիբ իբն-Մարալմա զորավարը: Նրան հանձնարարված էր հրով ու սրով հպատակեցնել Անդրկովկասի ժողովուրդներին: Արաբ բռնազրավիչներն իրենց ճանապարհին հրի են մատնում բարեշէն քաղաքներն ու գյուղերը, կողոպտում բնակիչներին, գերեվարում ու կոտորում. «Եւ կողոպտեաց զամենայն երկիրն Հայոց, և զԱղուանս, և զՄիւնիս, և մերկացոյց զամենայն կկեղեցիս»:

Եւ կալաւ պատանդ զղլխաւոր իշխանս աշխարհին և զկանայս և զուստերս և զզստերս բաղմաց», — դառնացած հաղորդում է Սեբեոսը⁸:

Այստեղ պատմագիրը նկատի ունի միայն հայոց աշխարհին (Հայք, Սյունիք, Աղվանք հայոց) հասած աղետը, որովհետև տվյալ դեպքում արաբները միայն Հայաստան աշխարհի վրա էին փորձել իրենց ավերիչ ուժը:

Հաջորդ արշավանքը զլխավորում էր Սալման իբն-Ռաբիան, որն Առան էր մտել հարավից, նախ նվաճել Բալլականը, ապա Պարտավը և շրջակայքը: Այդ արշավանքը մանրամասն նկարագրված է Բալաձորու և Ցակուրիի գրքերում:

«Երն-Սամանի (խալիֆի) հրամանով Սալման իբն-Ռաբիա ալ Բախիլին շարժվեց Առանի վրա և Բալլականը գրավեց խաղաղութեան պայմանագրով, որով ապահովում էր նրա բնակիչների կյանքը, ունեցվածքը և նրանց քաղաքի պատերը՝ նրանց պարտավորեցնելով վճարել հողային հարկ և գլխահարկ, — պատմում է Բալաձորին: — Ապա Սալմանը եկավ Բերդա և բանակ դարկեց Տուրտուր (Տրտու-Քարթառ) գետի ստին, որը քաղաքից հեռու է մեկ փարսախից էլ պակաս: Բնակիչները նրա դեմ փակել էին քաղաքի դարբասները, և նա ստիպված էր քաղաքը տաշարած պահել մի քանի օր: Այդ ընթացքում նա հարձակումներ

⁷ Սեբեոս, էջ 146:

⁸ Անդ, էջ 153:

էր գործում քաղաքի շրջակայքի գյուղերի վրա, որոնցում հունձն արդեն ավարտված էր: Այդ նրանց (քաղաքի բնակիչներին) ստիպեց կնքել այնպիսի պայմանագիր, ինչպիսին կնքվել էր Քալաականի բնակիչների հետ: Նրանք բաց արին քաղաքի դարբասները, և նա մտավ քաղաք ու այնտեղ անցկացրեց (որոշ ժամանակ): Այստեղից էլ նա շարժեց իր այրուձին, որը գրավեց Շակշինի (Շակաշեն), Մեսկեանի (Մեծկվենք), Ուղի (Ուտիք), Մեսիրանի (Մեծառանք), Խերխիլյանի (Հարջլանք), Տաբարի (Քերես՝ Հաբանդ) գավառների գյուղերը և Առանի ուրիշ վայրեր: Նա Բալասաջանի քրդերին առաջարկեց ընդունել իսլամ, սակայն նրանք սրան պատասխանեցին պատերազմով, բայց նա հաղթեց և նրանց մի մասին ստիպեց գլխահարկ վճարել, իսկ մյուսը՝ աննշան մասը, ընդունեց իսլամ...»⁹:

Արաբական բռնապետությունն Անդրկովկաս էր մտել իր անողոք պլանով, որի առաջին կետը հպատակեցումն էր, երկրորդը՝ մահմեդականացումը: Նվաճած երկրներում իսլամի ներկայացուցիչներն սկզբում հայտարարում էին, թե իրենք չեն հալածում այլադավաններին, ոչինչ չունեն ուրիշի պաշտամունքի հետ: Սակայն իսլամն ընդունող հպատակներին սալխա էին վանաղան արտոնություններ, որոնցով և գրավում էին հարկ ու տուրքի տակ անբացող աշխատավորներին: Իսլամն ընդունող գյուղացին ոչ միայն աղատվում էր գլխահարկ կոչված աղետից, այլև նույնիսկ որոշ ժամանակ պետական գանձատնից ստանում էր դրամական վարձատրություն¹⁰: Արատնություններ էին սրվում նաև իսլամացող ազնվականներին ու արհեստավորներին:

Խալիֆայությունը նվաճած երկրներում հրապարակել էր այսպիսի օրենք. «Իսկական մուսուլմանները, քանի կենդանի են, ապրում են նրանց (հպատակեցված ժողովուրդների) հաշվին: Իսկ երբ մենք մեռնենք, և նրանք էլ մեռնեն, ապա մեր որդիները պետք է ապրեն նրանց որդիների հաշվին, և այդպես մինչև դարերի վերջը»¹¹:

Եվ զարմանալի չէ, որ ժամանակակիցները միաձայն վկայում են իսլամացման դանդաղացման գեղարվեստի մասին:

Իսլամն անհազուրդ ախորժակով Անդրկովկաս էր խուժել և կլանում էր տեղաբնիկ ցեղերին ու ժողովուրդներին: Իսլամը միայն կրոնափոխություն չէր: Այն նաև արաբացում էր նշանակում, որովհետև նոր

հավատի հետևորդը կապվում էր արաբների խոսքին ու գրին, բարքերին ու կենցաղին:

Անդրկուրյան Աղվանքի բնիկ շատ ցեղեր արդեն կուլ էին գնում մահմեդականությունը՝ ճաշակելով նոր կրոնն ընդունելու համար իրենց սրված առաջին գայթակղիչ արտոնությունները և ապա այն սարգ պատճառով, որ քրիստոնյաների համեմատությամբ արտոնություններ ստանալով՝ նրանք ոչինչ չէին կորցնում. ո՛չ իրենց ինքնուրույն մշակույթն ունեին, ո՛չ դիր ու գրական լեզու և ո՛չ էլ նույնիսկ ինքնուրույն եկեղեցի: Ժիշտ է, նրանք ընդգրկված էին հայոց դրիգորյան-լուսավորչական հավատի շրջանակների մեջ, սակայն նոր հավատն առավել գրավիչ էր՝ թեկուզ և հենց գլխահարկ շտալու արտոնությամբ: Մեսրոպ Մաշտոցը նրանց գիր էր պարզել, տալով հնարավորություն գրականության և մշակույթի լայն զարգացման համար: Սակայն, ինչպես արդեն տեսանք, այդ գիրը պիտանի չեղավ նրանց, որովհետև հարմարեցված էր գարգար ցեղի շափաղանց անհրապույր լեզվին: Իսկ այս գարգարները երբեք չէր կարող և չզարձավ ընդհանրական՝ հարեան մյուս ցեղերի համար, և սրանք մինչև արաբական տիրապետության ժամանակը շարունակում էին մնալ անգիր ու անմշակույթ:

Միանգամայն սուր էր գրությունը Հայոց արևելից կողմանց նախնիներում և հասկապես նրա լեռնային մասերում: Այստեղ անհիշելի ժամանակներից ապրում էր միաձույլ հայ բնակչություն, որը միշտ էլ տերն է եղել իր երկրի և իր ճակատագրի նույնիսկ սարսկական տիրապետության տակ, Հայաստանից կտրվելուց հետո անմիջապես տեղի հայկազուն իշխանական սան Առանշահիկ ներկայացուցիչներն իրենց թագավորներ հայտարարեցին և այդ բարձր տիրազուտով էին վարում երկրի ներքին ու արտաքին գործերը: Այս հայությունն անցել էր IV—V դդ. մշակութային մեծազորությունների բովով, այնպես թրծվել ու ջրդեղվել, որ այլևս նրան չէին կարող ենթարկել ազգագրական կամ կրոնական նոր կերպափոխումների, սրբան էլ սրանք դայթակղիչ լինեին կամ սպառնական:

Մյուս կողմից էլ, թշնամին այնքան ահավոր չէր, որքան ներկայացնում են պատմագիրները: Արցախում և Ուտիքի լեռնային գավառներում պարսիկներն այնպես էլ երբևր սուր դենի չկարողացան: Զկարողացան նաև արաբները, և թե չհաշվենք մանր-մունր ասպատակությունները, որոնց բնթացքում նրանք սվելի շատ կորցնում էին, քան ձեռք էին բերում: Արաբ մասենագիրներից մեկն անկեղծ անմիջականությամբ բնութագրել է իր ցեղակից բռնագրավիչներին. թե Արաբները

⁹ Թալանդի, էջ 13:

¹⁰ А. Е. Крымский, История арабов и арабской литературы, М., 1918, с. 133.

¹¹ Абы-Юсуф, Книга о земельном налоге, Л., 1941, с. 242.

սովոր են հարձակումներ գործել հարթավայրերի վրա և ոչ թե լեռնա-տանների, որովհետև այս ժողովուրդն իր վայրենի բնույթով սիրում է կողոպուտ ու ավերածություն և լեռնոտ վայրերում հեշտ չի հասնում իր նպատակին»¹²։

Սակայն քնած չէր Բյուզանդիան։ Հինավուրց այդ բռնակալը չէր, որ պետք է հաճույքով իր դիրքերը գիշեր նոր մրցակցին։ Նրան շատ էին անհանգստացնում Անդրկովկասյան երկրները։ Այդ զգացվում է հատկապես Հուստինիանոս II-ի գահակալության (685—695) օրոք։ Այս դաժան տիրակալը փորձեց ամրապնդել իր կայսրության դիրքերը և մի ահռելի բանակ ուղարկեց դեպի Հայաստան։ Պատմիչների վկայությամբ՝ բյուզանդական զորքերն անխնա կոտորում էին բնակչությանը, քարուքանդ էին անում քաղաքներն ու գյուղերը, ավերում եկեղեցիներն ու ճարտարապետական մյուս կառույցները։ Հայոց Աղվանքում նրանք նույն վայրագ դաժանություններով էին խեղդում արաբական հպատակությունն ընդունած ժողովրդին։ Վերադարձին նրանք հայ նախարարական տներից տանում են բազմաթիվ պատանդներ, որոնց հետ էր նաև Միհրանյան տոհմի ներկայացուցիչներից Վարազ-Տրդատն իր Գագիկ և Վարդան որդիների հետ։

Հետաքրքիրն այն է, որ բյուզանդական կայսրությունն այս ժամանակներում վարում էր նաև քաղկեդոնության բռնի տարածման քաղաքականություն։ Կայսրը համոզվել էր, որ հայերի գրիգորյան կամ միաբնակ կրոնը ժողովրդին անջրպետում է բյուզանդահպատակ երկրներում տիրող քաղկեդոնիկ կամ երկաթնակ կրոնից (իմա՝ Բյուզանդիայից)։ Հայերին քաղկեդոնության դարձնելը նա համարում էր այն հզոր միջոցը, որով պետք է իր երկրի ազդեցությունը մեծապես տարածեր ու պահպաներ ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Հայոց Աղվանքում ու Աղվանից եկեղեցու շրջանակների մեջ ընդգրկված ոչ հայկական գավառներում։

Նվաճված երկրամասի բնակչության քաղկեդոնացումը Հուստինիանոսի նորամուծությունը չէր։ Նրանից առաջ էլ Հերակլին էր նույն քաղաքականությունը վարում։ Իսկ Հերակլից առաջ էլ Մորիկ կայսրն էր բյուզանդական բոլոր ուժերը գործի դրել 591-ի դաշնագրով Պարսկաստանից խլված հայկական գավառներում հաստատելու քաղկեդոնական հավատը՝ որպես իր կայսրության ամենահուսալի հենարան։ Նա Պարսկաստանի տիրապետության տակ մնացած կաթողիկոսությունն կողքին, բյուզանդահպատակ Հայաստանի արևելյան ծայրում՝ Հրազ-

դան դետի վրա գտնվող Ավանում, հիմնել էր մի նոր հայրապետարան՝ կաթողիկոս նշանակելով քաղկեդոնություն ընդունած Հովհաննես Բագրևանդցուն։ Եվ այստեղից էլ սկսել էր քաղկեդոնական վարակը տարածվել դեպի Հայաստանի արևելյան գավառները։ «Այս հիմնարկությամբ,— ինչպես իրավացիորեն գրել է Լեոն,— բյուզանդական քաղաքականությունը կարծում էր անդամալուծել Գլխի կաթողիկոսարանը, ոչնչացնել նրա համազգային նշանակությունը և փութացնել հայերի կրոնական միացումը հույների հետ»¹³։

Շուտով (608—609 թթ.) վրաց եկեղեցին անդարձ անջատվում է հայկականից, որդեգրվում քաղկեդոնականության։ Հավանաբար այս միջոցառման հեղինակ Կյուրիոն կաթողիկոսը ամենից առաջ մտածում էր ոչ միայն իր ժողովրդի հոգևոր ինքնուրույնությունն ապահովելու մասին, այլև նկատի ուներ բյուզանդական հուժկու հարևանությունը, որի հովանու տակ նա հույս ուներ ապահովել իր երկրի խաղաղությունն ու բարեկեցությունը։ Եվ շախալվեց։

Հայոց եկեղեցին մնում էր մեկուսացած բյուզանդականից և թըշնամի՝ ինչպես պարսիկ հին կրակապաշտությանը, այնպես էլ աշխարհակալության հավակնություններով ասպարեզ մտած նորաթուխ իսլամին։

Բյուզանդական կայսրության կողմից բռնությամբ քաղկեդոնացման քաղաքականությունն իր սուր ծայրով խրվում էր Հայոց արևելից կողմանց սիրտը։ Ո՛չ առանց բյուզանդական միջամտության՝ գործի է անցնում Աղվանքի իշխանուհի Սպարամբը, որի ամուսինն ու երկու տղաները պատանդ էին Բյուզանդիայում։ Սպարամբը պատրաստ էր կատարել բյուզանդական գործակալների ամեն մի հանձնարարություն, միայն թե ազատ արձակվեին իր ամուսինն ու որդիները։ Եվ 689-ին նա, Աղվանից կաթողիկոս Սեդիազարի մահից հետո, նախ ապօրինի կերպով կաթողիկոս է դարձնում Գարգմանքի եպիսկոպոս Ներսես Բակուրին, ապա փորձում նրա միջոցով քաղկեդոնական դարձնել Աղվանից աշխարհի եկեղեցին։

Կաղանկատվացին Սպարամին ու Ներսես Բակուրին մինչև այս պարագան էլ քաղկեդոնական է համարում. «...Ոմն երկարնակ կրոնէն, Բակուր անուն, երբեմն եղեալ եպիսկոպոս Գարգմանայ և Ներսես յորչորչեալ՝ ուխտադրեալ ընդ Սպարամայ Աղուանից տիկնոջ Վարազ Տրդատայ, որ էր ի նոյն կրոն հետեեալ, կնքէր դաշինս վասն փառա-

12 Իրն-Խաղտն, էջ 125; ՀՄՄ. 3. БУХАЯТОВ, ԿՂՎ. աշխ., էջ 87։

13 Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, էջ 221։

մու տիրողութեանն, ասելով. «Նթե կամ է քո կոչել ի հայրապետութիւն Աղուանից՝ ես արարից զամենայն Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի»¹⁴,

Թերևս այս գաղտնի դավադրությունը գուշակելով, կամ՝ այդ օրերին բյուզանդական տիրապետության սովորը դարձած քաղկեդոնություն վերահաս վտանգը նկատի առնելով, հենց ձեռնադրության ժամանակ էլ Մեծառանք զավառի եպիսկոպոս Հովելը, իր պաշտոնակիցների հովանավորությամբ, նորընծա կաթողիկոսից վերցնում է երդմնաթուղթ, որով սա դատապարտում է քաղկեդոնությունը և երդվում է միշտ անխախտ պահել հայ լուսավորչական քրիստոնեության կարգն ու օրենքները:

Ըստ Կաղանկատացու՝ տասնչորս տարի (քանի դեռ կենդանի էր Հովելը, և նրա մոտ էր գտնվում երզմնաթուղթը) Ներսես Բակուրը հնազանդ ծառայում է իր կարգին Սակայն Հովելի մահից հետո անմիջապես ձեռքն է ձգում երզմնաթուղթը; ոչնչացնում, ասլա սկսում քաղկեդոնական իր մոլորությունները: Նա հալածում է քաղկեդոնական կրոնի երզվյալ հակառակորդ Մեծկողմանց Իսրայել հռչակավոր եպիսկոպոսին, Գարգմանքի եպիսկոպոս Նդիանգարին և փորձում է Աղվանից եկեղեցին կտրել Հայաստանից, կապել բյուզանդական քաղկեդոնական հավատին:

Ըմբոստանում են Աղվանից աշխարհի հոգևորականները, զայրանում են Բյուզանդիա տարված Վարազ-Տրդատին փոխարինող իշխան Եերոն ու մյուս աշխարհիկ տերերը և, Պարտավում հավաքվելով մեծ ժողովի, նամակ են գրում Հայոց կաթողիկոսին: Ահա այդ նամակը.

«Տեսան Սդիայի Հայոց կաթողիկոսի ի միաբան ժողովոյս Աղուանից երկրպագութիւն:

«Վասն զի զմի հաւատ ուղիղ հարքն մեր ընդ հարս ձեր ունէին և զմիմեանց հոգային զհոգւոյ փրկութիւն, ի ներել Տեսան Աստուծոյ զօրացեալ կրօնն Քաղկեդոնի՝ ելից զտիեզերս, և մեր կողմանքս մինչև ցայսօր ժամանակի անխառն յայնմանէ էր մնացեալ: Իսկ այժմ զոր կարծէաք զոյ հովիւ բարի մեզ զՆերսէս, սա գալլ եղեալ՝ օձտել սկսաւ զբանաւոր հօտս Քրիստոսի. վասն որոյ կամեցաք յուշ առնել սրբութեան ձերում յայց ելանել մեզ որպէս ձերոց անդամոց և բժշկել զբեկումն մեր: Ողջ լերուք ի տէր»¹⁵:

14 Կաղանկատացի, էջ 335:

15 Անգ, էջ 337:

Ի՞նչ պետք է աներ Հայոց կաթողիկոսը: Թուղթը հաղորդում էր շոր ու ցամաք մի տեղեկություն, որի տակ, սակայն, նա տեսնում էր ժողովրդի մի վիթխարի հատվածի ազգային ինքնության վերահաս կոտուտը:

Զկար միասնական հայ պետություն, որ մի ապահով ընտանիքի մեջ պահեր իր ժողովրդի տարբեր հատվածները: Զկային այդ հատվածները միավորող ու անտրոհ պահող ուրիշ գործոններ: Մի եկեղեցի էր միայն, որի հովանու տակ դեռ բարխում էր հինավուրց միասնության կենդանի զարկերակը և այդ բարախյունը հայերեն խոսքն էր, սրբազան Կվանդուցյանների, ազգային-հայրենասիրական ոգու անլուչի քարոզը:

Իսկ հիմա մի ոմն Ներսես Բակուր, դաշնակցած իշխանուհի Սպարամի հետ, կտրում էր ազգային միասնության վերջին կապը՝ եկեղեցին, և Աղվանից բովանդակ հայությունը նետում բյուզանդական քաղկեդոնությանն ի կեր:

Հովհաննես Գրասխանակերտցին ևս հաղորդում է, թե Աղվանից աշխարհից Դվին էին գնացել բազմաթիվ թղթեր, որոնք բոլորն էլ պաղատագին խնդրում էին միջոցներ ձեռք առնել Ներսեսի մոլորությունը կանխելու համար. «Իսկ նախարարք աշխարհին իմացեալք զեկուցին մեծի հայրապետին Նդիայի, որոյ ի վերայ գործեալ ոգով շափ և բազում նամակս... առաքեալ երկիցս և երիցս անգամ...»¹⁶:

Կաթողիկոսը կանգնած էր դժվար հարցի առաջ:

Աշխարհիկ թագավորը գնեք ու զորքով կլուծեք իր ժողովրդի մի մասին սպառնացող վտանգը: Դիվանախոսը կզիմեր տերությունների ղեկավարներին և ելք կգտնեք իր ժողովրդի ճակատագրի համար:

Կաթողիկոս Նդիան գնեք ու զորք շունեք, սակայն կարող էր դիմել տերությունների ղեկավարներին: Եվ նա դիմում է այդ ժամանակի համար միակ ճիշտ քայլին. թուղթ է հղում արարական խաչիՖի՝ Պարտավում նստող ներկայացուցիչ Արղմեիլից էմիր Մումինին: Ահա այդ թուղթը.

«Տիեզերակալ Աբգալահի էմիր Սումինոյ լճիայէ Հայոց եպիսկոպոսապետէ:

«Յամենակալէն Աստուծոյ ունիմք զժառայական աշխարհս հնազանդ ձերոյ տերութեանդ. և մեք և Աղուանք զմի հաւատ պաշտել ունիմք զՔրիստոսի աստուածութեանն: Իսկ այժմ որ Աղուանից ի կաթողիկոս նստեալ ի Պարտաւ, խորհուրդ արարեալ ընդ կայսերն Յունաց՝ զնա քարոզէ յաղոթս և զաշխարհն ստիպել, զի ի հաւատ և ի միաբանութիւն նմա եկեցեան: Արդ գիտութիւն ձեզ լիցի, և մի անփոյթ արացես վասն

16 Յովհաննէս Գրասխանակերտցի, էջ 99 (ընդգծումը մերն է— Ք. Ո.):

այդորիկ. զի կին մի մեծատուն խորհրդակից է նորա, զորս պատուհասակոծ հրամայեցէք աննել մեծ իշխանութեամբ ձերով՝ ըստ արժանի իրեանց գործոց, զոր առ Աստուած կամեցան մեղանշել»¹⁷:

Յղիան խնդրում է պատժել մեղավորներին և կասեցնել Աղվանից եկեղեցու անջատումը: Նա պատժի ոչ մի ձև կամ շափ չի հուշում: Խաչիքի գործակալն է, որ կարգադրում է՝ ներսեսին ու Սպարամին կապտած ներկայացնել կառավարչի դուռը, ապա հրապարակորեն խայտառակել: Այդպես էլ անում են: Յղիայի ներկայութեամբ Պարտավում պատժում են մեղավորներին: Հետո կաթողիկոս է ձեռնադրվում Սիմեոնը, որը ներսեսի հերձվածողական գրքերը արկղների մեջ լցրած թափում է Տրտու գետը:

Այնուհետև այս արարողությունների մասնակիցները Հայոց և Աղվանից անխախտ միաբանության՝ երգմնաթուղթ են տալիս Յղիային: Այս թղթով («ձեռնարկ») վերստին հիշվում է երկու եկեղեցիների ավանդական միաբանությունը, դատապարտվում են ոչ-լուսավորչական բոլոր քրիստոնեական ուղղությունները, բազիկոտնությունը՝ հատկապես, որոշում են խտաբազույնս պատժել հերձվածողության հետագա ամեն մի փորձ, ում կողմից էլ որ այն կատարվի, և վերջում վճռակալներն գրում են, «պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, զի ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոցն լիցի՝ միաբանութեամբ աշխարհիս՝ որպէս և ետն ի սրբոյն Գրիգորայ անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն. և ճշմարտութեամբ գիտեմք, զի զոր դուք ընտրէք՝ հաճոյ Աստուծոյ է և մեզ: Եւ չայսմ պայմանէ մի՛ լիցի իշխանութիւն ումեք արտարոյ ելանել և նորաձեռութեամբ ինչ առնել. ապա եթէ ոչ՝ անուանի և ունայն լիցի և մի համարեցի ձեռնադրութիւնս այն ընդունելի»¹⁸:

Այս երգմնաթղթի տակ ստորագրում են.

Աթմէոն Աղուանից կաթողիկոս,
Յովհաննէս Կապադակայ եպիսկոպոս,
Սիմէոն Հոշույ եպիսկոպոս,
Մահակ Ամարասայ եպիսկոպոս,
սրբասեր Քշիկ ներսեսի վանաց տանուտէր բոլոր
ուխտին իւրով...

¹⁷ Կաղանկատուացի. էջ 336

¹⁸ Անդ, էջ 345—346:

Գտշայ վանաց տանուտէր¹⁹,
Կատարոյ վանաց տանուտէր,
Յովսեփայ վանաց տանուտէր,
Դաւիթ Կաղանկատուոց վանական,
Պետրոս Տկոսկերտոյ վանական,
Պողոս Աղածորայ վանական,
քրիստոսաւերն Շերոյ Աղուանից իշխան²⁰,
Ջուանքոյ Աղուանից սպարապետ,
Վարդան պատրիկ և նորին եղբայր Գագիկ,
Բաբ ի Հրահատեան (ազգէ),
Վախտանկ ի Վարազմանեան,
Պատրիկ ի Քարոյեան ազգէ թագաւորաց,
Վահան ի Վարազ-Յոհանեան,
Թեոդորոս ի Յանաստոյեան,
Ռոստոմ ի Վարազ Արոյեան,
Ջարմիրճ ի Վարազ Քուրդաքեան ազգէ թագաւորաց,
Մահմատ ի Շերոյեան
և այլ ամենայն ազատք աշխարհիս...²¹:

Սրանք էին երկրի բոլոր տերերը, որոնք միահամուռ դատապարտեցին քաղկեդոնականությունը, սրա կողքին լծված ներսես Բակուրին և երդվեցին միարան ու միաձույլ մնալ Հայաստանի եկեղեցու հետ, ինչպես իրենց պապերն ու ապուպապերն են եղել:

Դարձյալ ուզում ենք շեշտել մի կարևոր հանգամանք. անդրկերպան Ազվանքից ներկա էր միայն մեկ հոգևորական՝ Կապադակի Հովհաննէս եպիսկոպոսը: Պատմության հազորդ գլուխը, որ պատմում է, թե ինչպես Արղմնելիքի պահանջով ներկայացվում է Ազվանից իշխան-

¹⁹ Բնագրում տրված է «Գտայ վանաց», մենք դարձրինք «Գտշայ», համոզված, որ հայտնի Գտիշ վանքի անունն է աղավաղված: Մեր կարծիքի օգտին է նաև կողքի «Կատարոյ վանաց-ը», որովհետև թվարկումը կատարելիս Չաշվի են առել վանքերի տեղանքը: Կատարո վանքի (Դիղավայտ լիտան վրա) կողքին էր Տողի մոտ գտնվող Գտիշ վանքը:

²⁰ Անոն Յյուրիմացաբար Շերոյին տանում է VI դարը և մասնակից դարձնում մարզպան Սուրենի դեմ Վարդան Մամիկոնյանի կազմակերպած ապստամբությանը (տե՛ս նրա «Հայոց պատմություն», հատ. 2, էջ 203): Նույն սխալը կրկնել է նաև Ա. Գ. Արբահամյանը (տե՛ս նրա՝ Հայաստանը VI դարում. «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Երևան, 1963, էջ 362):

²¹ Կաղանկատուացի. էջ 343—344:

ների ցուցակը՝ սրանց երդումով հանդերձ՝ մինչև վերջ հետև մնալու քաղկեդոնիկ ազանդից, — դարձբայ անդրկուրյան Ազվանքից Կապազակի իշխանի անունն է միայն (այն էլ եկվոր), «Պապ ի Հրահատեան, որք յԱտրպատականիս իշխանացն են՝ բնաւորեալք ի Կապազակ և ի Կողթ»²², և մեկ էլ՝ Կամբեճանի տերը. «Վահան ի Վարազ—Յոհանեան ի Մադիանացոցն՝ զարմից՝ յակոբիկ (ասորական) հաւատով, որք եկեալ ի Կամբեճան բնակեցան»²³:

Ըստ երևույթին, այս ժամանակ արդեն Ազվանից եկեղեցու շրջանակների մեջ էին միայն բուն հայկական բնակավայրերը, որոնք համառոտվամբ իրենց հետև էին պահում իսլամացման ընթացքից:

Սակայն երկրի տափաստանային մասերում արաբներն արդեն հաստատապես նստած էին որպես դաժան տերեր: Նրանք VIII դարի սկզբին, հաշ բազմաթիվ իշխանների հետ միասին, Սիրիա քեցիին Միհրանյան տոհմի ներկայացուցիչ Շերոյին: Եվ դրանից հետո Պարտավում միայն արաբական խալիֆի ներկայացուցիչներն էին նստում: Իսկ լեռնային զավառներում, հատկապես Արցախամուր աշխարհում Առանշահիկները կծկված պահում էին հինավուրց իշխանական տոհմի ավանդներն ու հավակնությունները: Այո՛, նրանք կծկված էին: Բայց դա զսպանակի կծկումի պես էր, որովհետև հենց նույն VIII դարի վերջին նրանք նորից բարձրացան օտար բռնակալության դեմ և իրենց ետեվից խիզախ պայքարի տարան Հայոց արևելից կողմանց ազատաբազմ բնակչությանը:

Ավելորդ չի լինի այստեղ խոսել վերջ շարադրված զեպրեբի տարեթվերի մասին, որոնք տարբեր հետազոտողների մոտ տարբեր են: Այսպես, Մ. Բարսիլուտարյանցի հաշվումներով՝ ներսեսին գահընկեց անելու համար Սղիա կաթողիկոսը Պարտավ է եկել 700 թվականին²⁴, և 704-ին էլ Շերոյին կալանավորած տարել են Արաբխա²⁵: Ըստ Կ. Վ. Տրեբերի՝ Շերոյին Արաբխա են տարել 705-ին²⁶, Չ. Բունիաթովը կարծում է, որ ներսես Բակուրին գահընկեց են արել 704-ին²⁷, նույն

թվականին էլ Վարազ—Տրդատը վերադարձել է բյուզանդական գերութունից, ապա «Շուտով խալիֆի ներկայացուցիչները Սիրիա են տարել Շերոյին և Առանի շատ իշխանների ու ազատները»²⁸: Բունիաթովի գրքի էջատակին, որպես այս վարկածը հաստատող կամ լրացնող խոսք, մեջբերված է Կաղանկատվացու հետևյալ վկայությունը Աբդուլ-Իբի մոտ պահվող Ազվանից իշխանների ցուցակի առթիվ. «Այսք (իշխանները) ամենեքան գրեցան ի գիւանին Աբդուլ-Իբի ամիր Մումինոյ սակս այսորիկ, զի եթէ որ ի սոցանե գտանիցի երկարժեակ եղեալ՝ սրով և գերութեամբ սպանենցի»²⁹:

Վերոհիշյալ թվերի միակ ճիշտ հիմքը ներսես Բակուրին դատապարտելու համար գումարած մողովի արձանագրությունն է (երդմնաթուղթը), որը կարևորագույն փաստաթուղթ է, մեջ է բերված մատենագրի կողմից, ամենայն հավանականությամբ, անփոփոխ: Իսկ մյուս վկայությունները մատենագրին են, որոնք կարող են ճշգրտված չլինել: Ժողովի ներկայացրած երդմնաթղթի մեջ հիշվում է. «Գրեցաւ գիրս... ի հաշ թուականիս հարիւր քառասուն և ութն յամսեան հրոտից»³⁰, «Հրոտիցը» հուլիսն էր³¹, Հայոց թվ. 148-ն էլ 411-նի քր. 699-ը: Ուրեմն, ներսես Բակուրը գահընկեց է արվել 699-րդ Բայց քանի որ նույն Կաղանկատվացու վկայություններով՝ ներսեսի նախորդ հղիագար կաթողիկոսը գահակալել էր մինչև 689 թվականը, և ներսեսն էլ նրանից հետո կաթողիկոսական աթոռն զբաղեցրել է 77 ու կես տարի. «Եւ ներսես կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս ատասն և շորս, և զլարափառութեանն ամս երեք և կես»³², պետք է բնորոշել, որ այս վերջին տեղեկությունն է սխալ:

Բունիաթովի շարադրանքից այնպես է ստացվում, թե Շերոյին և Ազվանից մյուս իշխաններին Սիրիա են քշել քաղկեդոնության հարելու պատճառով: Մինչդեռ հենց ինքը՝ Բունիաթովն է իր գրքում Շերոյին ու մյուս իշխաններին համարում «քաղկեդոնության կատաղի թշնամիներ»³³, Եվ ճիշտը սա է:

Ճշմարտությունն այն է, որ արաբներն այս զեպրում իս պործել են՝

22 Անգ, էջ 348: Կողթն Արցախի ծայրագավանն էր, որով սահմանակցում էր Ռատրի և Գոգարաց աշխարհի հետ:
23 Անգ, էջ 349: Կամբեճանն անմիջապես Կուրի ափին էր տարածված և սահմանակից էր Ռատրին: Նրան սահմանակից էր Կապազակը: Երկուսն էլ հայաբնակ հնագույն զավառներ էին:
24 Մ. Բարսիլուտարյանց, Պատմություն Ազվանից, հատ. Ա, էջ 121:
25 Անգ, էջ 124:
26 Կ. Վ. Գրեբեր, նշվ. աշխ., էջ 250:
27 Չ. Բունյատով, նշվ. աշխ., էջ 86:

28 Անգ, էջ 97:
29 Կաղանկատուացի, էջ 349:
30 Անգ, էջ 346:
31 Չ. Անարյան, Արմատական բառարան, հ. Գ, էջ 443. «Հայկական տարվոս վերջին ամիսը, որ ըստ անշարժ տոմարի սկսվում է հուլիսի 7-ից»:
32 Կաղանկատուացի, էջ 340:
33 Չ. Բունյատով, նշվ. աշխ., էջ 106:

ինչպես բռնակալների ու տիրողների սովորույթն է. նախ Շերոյի ու նրա կողմնակիցների միջոցով ոչնչացրին ամենամեծ վտանգը՝ բյուզանդասիրտությունը (քաղկեդոնական հերձվածի հետ միասին), ապա տեսան, որ Շերոն ու նրա համախոհներն իսկապես մեծ ուժ են ներկայացնում Աղվանքում, նրանց էլ վերացրին մեջտեղից: Սա տեղի ունեցավ 704-ին. «Յետ այսորիկ զՇերոյ Աղուանից իշխանն ազատօքն հանդերձ տարան ի Տարօն և անտի յԱսորիս. և հայ թիւն լինէր հարիւր յիսուն և երեք (ամ տեառն 704): Եւ ի միւսում ամի զՇիրակայ տէրն տարան յԱսորիս»³⁴:

Սա արարների նոր արշավանքի և վարած նոր քաղաքականության հետևանքն էր: Հայոց և Աղվանից տերերին քշեցին տաժանակրության, որպեսզի երկրի տնօրենն իրենք մնան և անպատիժ իրականացնեն իրենց շարամտությունները: Այսբանից հետո է, որ Վարազ Տրդատը՝ Միհրանյան ղինաստիայի իշխան-ներկայացուցիչը, վերադառնում է Բյուզանդիայից և, տեսնելով իր երկրի խայտառակ վիճակը, այն գրեթե խոզին հանձնում է արարներին. «Եկն (Վարազ-Տրդատը) եհաս յաշխարհն իւր, և յայնմհետէ ետ զաշխարհս Արևելից ի Տաճիկս»³⁵:

Եվ դարձյալ այս Վարազ-Տրդատի օրոք էր, որ եղավ «սով անտանելի», որի մասին ժողովուրդը խոսում էր առակով. «Ես կորեակ ի Շակաշէն գաւառի ծածկեալ կայի ի վայրին Կակուայ, և գանց առնէին զինև բազմութիւնք զնոզաց և ոչ գնէին զիս. եկն ժամ բարի, որ եղբայրն իմ Սով տիրանայր. և ահա գտա ես երևելի՝ ի սեղանիս Վարազ Տրդատայ իշխանի և Նղիազարու կաթողիկոսի: Եւ որք կերանն զիս՝ արինաբերք եղեն, անմեղազիր լերուք»³⁶:

[«Ես կորեկ էի, թաքնված Շակաշէն գավառի Կակվա վայրում: Կողքովս շատ զնորդներ էին անցնում և չէին գնում ինձ: Եկավ բարի ժամանակը. իմ եղբայր Սովը տեր դարձավ (երկրին): Եվ ահա ինձ երևելի ճանաչեցին Վարազ-Տրդատ իշխանի ու Նղիազար կաթողիկոսի սեղանի վրա: Ովքեր ինձ կերան, արյուն թափեցին: Չմեղադրեք ինձ»]:

Այսպիսով, Հայոց արևելից կողմանց գավառները, բովանդակ Հա-

34 Կողանկատուացի. էջ 367:

35 Անդ, 357:

36 Անդ, էջ 357—358: Եղիազարը գահակալել է 683—689 թթ., Վարազ-Տրդատի արտորվելուց առաջ. ուրեմն, կամ սովն է այն ժամանակ եղել, կամ էլ բանահյուսող ժողովուրդն է նորոքյա զեպքը կապել նախորդ կաթողիկոսի անվան հետ:

յաստան արշարհի և ամբողջ Անդրկովկասի հետ միասին, VIII դարը մտան արաբական խալիֆայության տիրապետության ներքո: Ժողովուրդը տնքում էր հարկերի ծանրությունից: Հազարացիք սպառ-սպառ տիրել-բռնել էին արշարհը: Երկրի տերերը շղթայակապ մեռնում էին հեռավոր Արաքիայի զնդաններում: Սակայն կենդանի էր ժողովուրդը, որի ազատաբաղձ մոխիրների ներքո պահպանվում էին զայիք ընդվզումների կայծերը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Պետական ամեն մի կազմավորում, եթե ներմուծված չէ, ապա իրեն ենթակա ցեղային հանրության քաղաքական կյանքի ծնունդն է հանդիսանում և, միաժամանակ, իր սեփական գորշին է դնում այդ հանրության հետագա պատմության, նրա քաղաքական ու քաղաքակրթական կյանքի զարձագրծումների վրա: Հին Հայաստանի Արշակունյաց թագավորությունն իր գոյության շրջա դարերում զլիսավորեց երկու վիթխարի միջոցառում՝ հայ ժողովրդի քրիստոնեացման գործը շորրորդ դարի սկզբին և հայերեն գրերի ստեղծումն ու սեփական դեպքության սկզբնավորումը նույն դարի վերջում, որոնք և որոշեցին հայ ժողովրդի ազգային ու մշակութային ինքնություն, ինքնատիպ կյանքի պատկերը հետագա բոլոր դարերում:

Իր հափառը, սեփական գիրը, դպրությունն ու մշակութային կերպարանքն ունեցող ժողովրդի համար այլևս սարսափելի չէին գալիք արհավիրքները, նույնիսկ պետական անկախության կորուստը և աշխարհակույ հարևանների ամենադաժան տիրապետությունը:

Հինգերորդ դարի սկզբին (428) դահրնկեց արվեստ Արշակունյաց հարստության վերջին ներկայացուցիչ Արտաշեսը, և մինչև այդ էլ շրջա տանամյակ պարսկական գերիշխանության տակ գտնված Արևելյան Հայաստանն անզամահատվեց՝ կորցնելով Գուգարք, Ուտիք, Արցախ, Փայտակարան նահանգները, որոնցից Գուգարքը միացվեց Վիրքի մարդպանությանը, Փայտակարանը՝ Ատրպատականին, իսկ Ուտիքն ու Արցախը՝ Աղվանքի մարդպանությանը:

Աղբյուրների հանգամանալից քննությունը ցույց է տալիս, որ նախորդ դարերում Արցախ և Ուտիք նահանգների տարածքի վրա իշխած Առանշահիկ նախարարական տան ներկայացուցիչները մարդպանական շրջանում ևս մնացին իրենց երկրամասի տերը, ձեռք բերեցին որոշակի ինքնությունություն և ստեղծեցին փոքրիկ մի թագավորություն, որը պարբերական ծեղծեգումներով իր գոյությունը պիտի պահեր նաև հետագա պատմաշրջաններում:

Ուտիք-արցախյան այս հայաշխարհը, ամփոփված լինելով հիմնականում մեկ պետական կազմավորման սահմաններում, հինգերորդ դարից սկսած կոչվում էր Աղվանից կողմանք, որովհետև գտնվում էր Աղվանք մարդպանության մեջ, նաև՝ Արևելք, Արևելից կողմանք, Հայոց արևելից կողմանք, որովհետև կազմում էր հին Հայաստանի արևելյան երկրամասը:

Հայոց արևելից կողմանց կամ Արցախ-ուտիքյան հայաշխարհի տարածքն ընդգրկող Առանշահիկ թագավորության վերելքը կապված է Վաչագան Բարեպաշտի անվան հետ, որի լայնահուն գործունեության մասին խոսող իրապատում ժամանակագրությունը մեզ է հասել «Աղվանից աշխարհի պատմության» համահավաք բնագրի մեջ: Այստեղ հաղորդվող բազմաբնույթ տեղեկությունները Վաչագանի թագավորության շինարարական ու լուսավորական եռանդուն ջանքերի վերաբերյալ, հատկապես Վաչագանի ընդունած ու կիրառած «Սահմանագրություն կանոնականը», թանկագին վավերագրեր են վաղ-միջնադարյան հայ ավատական կյանքի մասին և վկայում են, որ պարսկական արքունիքի վարած քաղաքական, ստատիստիկական ու կրոնական ծանր հալածանքների պայմաններում անզամ կայրդանում էր իր ազգային պետական և մշակութային ինքնություն կյանքը պահպանել ու զարգացնել Հայոց երկրի մի հատվածը, ուստի գիտնականի խոսքով՝ Անդրկովկասում գոյություն ունեցած երբեմնի խոշոր սրբություններից հայ առողջ բնկորը:

Առանշահիկները գլխավորեցին Հայոց արևելից կողմանց բնակչության ազատագրական պայքարը պարսից ու բյուզանդական բռնատիրությունների դեմ, ըստ հնարավորին երկիրը ղեկավարեցին հյուսիսային վայրենարարոց ցեղերի, հատկապես խաղարների անլուր ասպատակություններից: Արաբական տիրապետության հաստատումն էլ նրանք ընդունեցին մի շրջանում, երբ, Ուտիքի Գարդմանք զավառը թափանցած լինելով՝ այնտեղ տիրություն էին անում հայացած պարսիկ Միհրանյան տոհմի պայազատները: Արաբական խալիֆայության լծի դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի պատմության մեջ Առանշահիկները, Եսայի Աբու-Մուսեի ու Սահլ Սմբատյանի գլխավորությամբ, գրեցին պանծալի բազմաթիվ էջեր:

Յ Ա Ն Կ

ՍԿՂՔՆԱԳՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅՆԵՐԵՆ

- Արեգյան Մ. Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, 1944, հատ. Բ, Երևան, 1946:
- Աբրահամյան Ա. Գ. Աղվաններն համարվող մի քանի արձանագրությունների վերլուծությունը. «Երևանի համալսարան», 1956, մարտի 31:
- Աբրահամյան Ա. Գ. Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:
- «Ազարանգեղալ Պատմութիւն Հայոց», Քիֆլիս, 1914:
- Ազոնց Երկ. Բագրատունյաց փառքը. «Պատմական ուսումնասիրություններ», Պարիս, 1949:
- Այոնց Երկ. Խորենացիական հարցն ու հ. Վարդան Հացունի. «Անահիտ», 1938, № 1—3:
- Ազոնց Երկ. Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում. «Պատմական ուսումնասիրություններ», Պարիս, 1948:
- Ազոնց Երկ. Քննություն Մովսես Կաղանկատվացու. «Անահիտ», 1939, № 3, 4—5, 6:
- Ալիշան Ղ. Այրարատ քաջխարհ Հայաստանեայց. Վենետիկ, 1890:
- Ալիշան Ղ. Հայապատում. Վենետիկ, 1901:
- Ալիշան Ղ. Միսական, Վենետիկ, 1893:
- Ալիշան Ղ. Տեղագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1855:
- Ալպաշանյան Արշակ. Պատմական Հայաստանի սահմանները, Գալիբ, 1850:
- Ակիեյան Ն. Կյուրիոս կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910:
- Ակիեյան Ն. Կարմիր Վարդան և Ավարայրի ճակատամարտը. «Հանդես ամսօրեայ», 1951, մարտ-նոյեմբ:
- Ակիեյան Ն. Մովսես Գառնուրանցի (կոչված Կաղանկատվացի) և լուր Պատմությունն Աղվանից, Վիեննա, 1970:
- Ակիեյան Ն. Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949:
- «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացոյ յանիլուածովք նախնեաց», Վենետիկ, 1881: «Արարատ», 1897, էջ 161—163:
- Հր. Անատյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, հատ. Բ, 1944, հատ. Գ, 1946, հատ. Ծ, 1962:
- Անառյան Հր. Հայերեն արմատական բառարան, հատ. Ա—Զ, Երևան, 1927—1932:
- Անատյան Հր. Հայ բարբառագիտություն. «Հմիկյան ազգագրական ժողովածու», հատ. Ը, Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911:
- Անատյան Հր. Հայերեն նոր բառեր Մ. Կաղանկատվացու պատմության մեջ. «Բազմա-վէպ», 1913, էջ 230—240, 249—252:
- Անատյան Հր. Հայոց գրերը, Երևան, 1968:
- Անատյան Հր. Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940, II մաս, Երևան, 1952:
- Անատյան Հր. Մովսես Կաղանկատվացի. քննություն անոր գրություն ժամանակին վրա. «Բազմավէպ», 1897, էջ 370—371:
- Անատյան Հր. Ուսումնասիրություններ հայկական բարբառագիտության, մաս Գ (քրն-նություն Ղարաբաղի բարբառի), Վաղարշապատ, 1901:
- Կույր՝ «Արարատ» հանդեսի 1899—1901 թթ. համարներում:
- Անանիա Մոկացի. Տեսնո Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս պատասմբեան տանն Աղուանից... («Արարատ», 1897, էջ 129—144):
- Առախեյան Հ. Հանրամատչելի հանրագիտական բառարան, Քիֆլիս, 1912:
- Առախեյան Ա. Գ. Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատ. առաջին, Երևան, 1959, հատ. երկրորդ, Երևան, 1964:
- Ասողիկ տե՛ս Մտեփանոս Տարսնեցի:
- Ավգալըբեյյան Թալ. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969:
- «Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1956:
- Արիսուակես Լաւալվերուցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1963:
- Բառարան անգղիերէն եւ հայերէն, աշխ. ի հ. Հարութիւն վ. Ազեբեհան, Վենետիկ, 1868:
- Բառարան պարսկերէն, Պոլիս, 1826:
- Բարխուդարյան Ս. Նյութեր հայ ժողովրդի էթնիկական կազմի մասին. Ուղիների ծագումը (ՀեՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք II, 1937, էջ 195—221):
- Բարխուդարյան Ս. Տապանագիր Համամ իշխանի անունով. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1964, № 11:
- Բարխուդարեանց Մ. Ազուանից երկիր և դրացիք, Քիֆլիս, 1893:
- Բարխուդարեանց Մ. Արցախ, Բազու, 1895:
- Բարխուդարեանց Մ. Պատմութիւն Աղուանից, հատ. Ա, Վաղարշապատ, 1902:
- Բարխուդարեանց Մ. Պրլը-Պուղի, Քիֆլիս, 1883:
- Դավրյան Կ. Ս. Լեոնային Ղարաբաղի բարբառային բարտեղը, Ե., 1966:
- Դուրյան Ծ. Պատմություն հայ մատենագրութեան, Նրուսաղէմ, 1933:
- Գաբրելեան Հ. Տիեզերական պատմութիւն, հատ. Բ, Վիեննա, 1852:
- «Ենպոքի արար պատմագիրը և հայերը» (Թարգմանություն քննադրիչ Հ. Ա. Աղամյանի), «Բազմավէպ», 1957, էջ 262—266, 1958, էջ 96—104:
- «Շղիշի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», աշխատասիրությամբ Ծ. Տեր-Մինասյանի, Երևան, 1957:
- Ծալի Հասան-Չալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Նրուսաղէմ, 1868:
- Ծալի Նշեցի. Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966:
- Սեւմյան Ս. Տ. «Մաղեացոյց իշխանութիւն» (Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1960, № 6—7, էջ 41—52):
- Սեւմյան Ս. Տ. Հայաստանը բոս «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:
- Սեւմյան Ս. Տ. Ն. Մառը և 7-րդ դարի հայոց «Աշխարհացոյց»-ը. «Մառը և հայագիտութեան հարցերը», ժողովածու, Երևան, 1968, էջ 75—91:
- Ջարվիանալեան Գ. Հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897:
- Ջարվիանալեան Գ. Պատմութիւն հայ հին դպրութեան, Վենետիկ, 1932:
- Էփրիկեան Ս. Քնաշխարհիկ բառարան, հատ. Ա, Վենետիկ, 1902:

Քովմա Արժուհի, Պատմութիւն տանն Արծրուհեաց, Քիֆլիս, 1917:
Ինքնիշխան Ղ. Հնարարութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատորներ
Ա—Գ, Վենետիկ, 1835:
Ինքնիշխան Ղ. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:
Իշխանյան Ռ. Յավալի անճշտութիւն կարևոր հրատարակութեան մեջ. Հայկական ՍՍՀ
ԳԱ «Էրարեր» հասարակական գիտութիւններ, 1966, № 3, էջ 108—113:
Լեռ (Երկրի ժողովածու, առաջին հատոր), Հայոց պատմութիւն, հատ. I, Երևան, 1966:
Լեռ, Հայոց պատմութիւն, հատ. II, Երևան, 1976:
Լեռ, Խորայական կապիտալ, Երևան, 1934:
Լեռ. Պատմութիւն Ղարաբաղի հայոց բնական հողեր գարոցի, Քիֆլիս, 1914:
Խալաբանց Բ. Արարացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919:
Խաչատրյան Մ. VII դարի «Աշխարհացոյց»-ի մասին. «Պատմա-բանասիրական
հանդես», 1968, № 4:
«Կանոնգիրը հայոց», աշխատասիրութեամբ Վ. Հակոբյանի, հատ. Ա, Երևան, 1964:
Կանայանց Առ. Անճալտ գավառներ հին Հայաստանի, Էջմիածին, 1914:
«Կանոնը Պարտալի սղոյալի, ժողովի (Միովն կաթողիկոսի)», աշխատասիրեց Արսեն
Վ. Ղլտնան, Վաղարշապատ, 1905:
Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհան-
ջանյանի, Երևան, 1961:
Կոստանյան Կ. Համամ Արենցի, Էջմիածին (Վաղարշապատ), 1896:
Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941:
«Համառոտ պատմութիւն վրաց» քննադատ Ջոանշէրի պատմիչ», Վենետիկ, 1884:
Համբարձեան Հ. Գարգարացիքը թի՛ Գուգարացիք. «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 241—242:
«Հայ ժողովրդի պատմութիւն», հատ. I, Երևան, 1963:
«Հեթում պատմիչ թաթարաց», Վենետիկ, 1951 (եռև 1842 թ. իրատարակութիւնը):
Հլուրճման Հ. Հին Հայոց տեղույ անունները, թարգմ. Հ. Պիլեգրիկեան, Վիեննա, 1907:
Հլուրճման Հ. Հետադարձութիւնը, Վիեննա, 1894:
Հովանէնիսյան Ալ. Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք I, Երևան,
1957, գիրք II, Երևան, 1959:
Հովանէնիսյան Ս. Հ. Ազգային սահմանագիր ժողովի կանոնները և նրանց ազդեցը
Աշտիշատի կանոնների նկատ. Հայկական ՍՍՀ ԳԱ «Պատմաբանասիրական հան-
դես», 1967, № 4:
Հովանիսյան Գարեգին կարողիլոս, Խաղրակյանը կամ Պոռշյանը հայոց պատմութեան
մեջ, Անիփլիս, 1969:
Հրանդ Ք. Ամեն. Պատմական քննարկումներ, Պելրուս, 1968:
Վազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:
Վարիբյան Ար. Հայ յարրառագրութիւն, Երևան, 1953:
Վարիբյան Ար. Հայերն յարրառոնների մի նոր էջուղ. «Երևանի պետական համալսարանի
գիտական աշխատութիւններ», հատ. II, 1939:
Վափանցյան Գր. Ռարարտի պատմութիւնը, Ե., 1940:
Ղևոնդ վարդապետ, Պատմութիւն, Ա.—Պ., 1887:
Մայիսայանց Սո. Մատենագիտական գիտողութիւններ, Երևան, 1961:
Մանանցյան Հ. Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936:

Մանանցյան Հ. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմութեան, II,
«Տեղեկագիր» պետական համալսարանի, Երևան, 1928, № 4:
Մանանցյան Հ. Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հատ. Ա, Երևան,
1944, հատ. Բ, մասն Ա, Ե., 1957, հատ. Բ, Բ մասի նյութեր, Ե., 1960:
Մանանցյան Հ. Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934:
Մատթեոս Ոսկանյեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
Մարկարտ Յ. Հայ Բագրատունեաց ճյուղավորութիւնը (թարգմ. Հ. Հապոյան),
Վիեննա, 1913:
Մարկարտ Յ. Պատմութիւն հայերն նշանագրերու և վարուց օ. Մաշտոցի, Վիեն-
նա, 1913:
Միխայիլ Աստի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1971:
Մեծազանյան Ա. Շ. Ազգային աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, Երևան, 1966:
«Միսթար Աշխատանցույ Պատմութիւն ժամանակագրական», Ա.—Պ., 1867:
Մխիթար Գոշ, Դատաստանագիրք. Վաղարշապատ, 1880:
Մխիթար Գոշ, Կաթողիկոսը և զեպր Աղուանից աշխարհի ի մէջ ժի դարու. (Ալիշան,
Հայապատմ., Վենետիկ, 1901):
Մովսէս Կաղանկատվացի, Պատմութիւն Աղվանից աշխարհի, թարգմանութիւնը, առ-
ջարանը, ժանդարմութիւնները Վարդ Առաքելյանի, Երևան, 1969:
«Մովսէսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Քիֆլիս, 1912:
«Մովսէսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից», երկու հատորով, Փարիզ, 1860:
«Մովսէսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860:
Մովսէս Խոնէնացի, Հայոց պատմութիւն, Երևան, 1968:
Մովսէս Խոնէնացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
«Մովսէսի Խոնէնացույ Մատենագրութիւնը», Վենետիկ, 1865:
Մարտիկան Ա. Հունարն գրոցը և նրա զերը հայերնի քերականութեան տեքմիկաբ-
ուութեան ստեղծման գործում, Ե., 1971:
Մուրատեանց Մ. Պատմութիւն Հայաստանեայց ստորկական սուրբ եկեղեցույ,
Յերուսաղէմ, 1872:
Յովաննէս կարողիկոս Դրասխանկերացի, Պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1912:
Պաղանց Մ. Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, հատ. Բ, Վենետիկ, 1785:
Պողոսյան Ա. Մ. Հարրութի յարրառը, Երևան, 1965:
Ջալալեանց Ս. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842,
մասն Բ, Տփղիս, 1858:
Ջանուսյան Գ. Քերականական և ուղղագրական աշխատութիւնները հին և միջնադար-
յան Հայաստանում, Ե., 1954:
Մամուլյան Խ. Հին Հայաստանի կուլտուրան, հատ. Ա, Ե., 1931, հատ. Բ, Ե., 1941:
Մամուլյան Խ. Հին հայ իրավունքի պատմութիւն, Երևան, 1939:
Սարգիսեան Բ. Արրուսում Մամիկոնից եպիսկոպոսն և իր տա Վաչական գրած թուղթն,
Վենետիկ, 1829:
Սարգսյան Գ. Խ. Մովսէս Խոնէնացու «Հայոց պատմութեան» ժամանակագրական հա-
մակարգը, Երևան, 1965:
«Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939:
Ստեփաննու Օրբէլեան, Ժամանակագրութիւն, Երևան, 1942:
Ստեփաննու Օրբէլեան Պատմութիւն նահանգին Միսական, Քիֆլիս, 1910:

«Սանիտանոսի Տարանեցոյ Ասողիւն Պատմութիւն տիղիբրական», Պետերբուրգ, 1885:
 Վարդան Վարդապետ, Հայագրութիւն պատմութեան, Վենետիկ, 1862:
 Ալարարյան Բ. Ա. «Աղվանք», «Ալրանիա» և «Առան» տեղանունները. «Պատմա-բա-
 նասիրական հանդես», 1971, № 3:
 Ալարարյան Բ. Ա. Աղվանից Բագավորական տան հարցի շուրջը. «Արարիկ հասարա-
 կական գիտութիւններ», 1971, № 7:
 Ալարարյան Բ. Ա. Աղվանից կաթողիկոսութեան ստեղծման հանգամանքների հարցի
 շուրջը. «Հայկազյան Հայագիտական հանդես», հատ. Ծ, Պէտրոբ., 1979:
 Ալարարյան Բ. Ա. Դարձյալ Աղվանի ժողովի գումարման տարեթիվ մասին. «Արարիկ
 հասարակական գիտութիւններ», 1969, № 6:
 Ալարարյան Բ. Ա. Խաչերի իշխանութիւնը X—XVI դարերում, Ե., 1975:
 Ալարարյան Բ. Ա. Հայոց եկեղեցու Աղվանից թեմի սկզբնավորման հարցը. «Էքզիազիս»,
 1976, Դ—Ե:
 Ալարարյան Բ. Ա. Հայոց լեզվի հյուսիս-արեւելյան եզրի, եղբարսյան Արցախային
 քաղաքի և հարակից հարցերի մասին. «Արարիկ հասարակական գիտութիւն-
 ներ», 1968, № 1:
 Ալարարյան Բ. Ա. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ. «Բանբեր Երևանի հա-
 մալարանի», 1971, № 1:
 Ալիստանէս Եսթիկապոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1971:
 «Փայլակ» 1917, № 20:
 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմութիւն, Երևան, 1947:
 «Փաստաւոր Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913:
 Քյուրտեան Հ. Բարակ և Սաճի իսկ Սմբատ. «Բազմալէզ», 1958:
 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Ասորական աղբյուրներ, Ա,
 Թարգմ. րնագրից, առաջարան և ծանոթագրութիւններ Հ. Գ. Մելիքիանի, 1976:

ՌԱՍԻԵՆ

Абрамян А. Г. Дешифровка надписей кавказских агван. Ереван, 1964.
 Абу-Юсуф, Книга о земельном налоге. Л., 1941.
 Адонц Н. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908.
 Адонц Н. Дионисий Фракийский и армянские толкователи, СПб., 1915.
 «Армянский судебник Мхитара Гоша», Ереван, 1964.
 Артамонов М. И. История хазар, Л., 1962.
 Артамонов М. И. Очерки древнейшей истории хазар, Л., 1936.
 Бакиханов Абас-Кули-Ага, Гюлистан и Ирам, Баку, 1926.
 Баладзори, Книга завоевания стран, Баку, 1927.
 Бартольд В. В. Место прикаспийских областей в истории мусульманского ми-
 ра, Баку, 1925.
 Бартольд В. В. Сочинения, т. II, ч. I, М., 1963.
 Ган К. Известия древних греческих писателей о Кавказе, Тифлис, 1884.
 Ган К. Опыт объяснения географических названий, Тифлис, 1909.
 Грен А. Албания греков и Агвалли армянских авторов. «Кавказ», 1886, № 15.
 Еремян С. Т. Идеология и культура Албании III—VII вв. «Очерки истории
 СССР», III—IX вв., М., 1958.

Еремян С. Т. Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-
 Трдата к хазарскому хакану Алп-Илитверу. «Записки института Восто-
 коведения АН СССР», т. VII, Л., 1939.
 Еремян С. Т. О рабстве и рабовладении в Армении. ВДИ, 1950, № 1.
 Еремян С. Т. Экономика и социальный строй Албании III—VII вв. «Очерки
 истории СССР III—IX вв.», М., 1958.
 Ибн-ал-Асир, Тарих-ал-Камиль, Баку, 1940.
 «История Агван Моисея Каланкатуйца, писателя X в.», перевод с древнеар-
 мянского К. Патканова, СПб., 1861.
 «История епископа Себеоса», перевел Ст. Малхасян, Ереван, 1939.
 «История религии древнего мира, Персия», т. III, СПб., 1883.
 Капанцян Гр. О двух социально-политических терминах древнего Ближнего
 Востока. «Историко-лингвистические работы», Ереван, 1956.
 Капанцян Гр. Суффиксы и суффиксированные слова в топонимике древней Малой
 Азии. «Историко-лингвистические работы».
 Капанцян Гр. Хайаса—колыбель армян. «Историко-лингвистические работы».
 Климов Г. А. К состоянию дешифровки агванской (кавказско-албанской) пись-
 менности. «Вопросы языкознания», 1967, № 3.
 Корнелий Тацит, Сочинения, т. I, Л., 1969.
 Крымский А. Е. История арабов и арабской литературы, М., 1918.
 Крымский А. Е. Страницы из истории Северного или Кавказского Азербайджа-
 на (классическая Албания). Кабала. Сб. «С. Ф. Ольденбургу», Л., 1934.
 Крымский А. Е. Страницы из истории Северного или Кавказского Азербайджа-
 на (классическая Албания). Шеки. Сб. «Памяти акад. Н. Я. Марра»,
 М.—Л., 1938.
 Латышев В. В. Известия древних писателей греческих и латинских о Скифии
 и Кавказе, т. I, СПб., 1890.
 «Летопись византийца Теофана от Диоклитяна до царей Михаила и его сына
 Феофилакта», перевод В. И. Оболенского и Ф. А. Терновского. М., 1890.
 Мамедова Ф. Дж. «История албан» Моисея Каланкатуйского как источник по
 общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977. *
 Марр Н. Я. Кавказские племенные названия и местные параллели, Пгт., 1922.
 Марр Н. Я. Кавказский культурный мир и Армения, Пгт., 1915.
 Марр Н. Я. По поводу русского слова «сало» в древнеармянском описании ха-
 зарского талезы VII века. «Избранные работы», т. 5, Л., 1935.
 Меликшивили Г. А. Урартские клинообразные надписи, М., 1960.
 Меликсет-бек Л. М. Хазары по древнеармянским источникам в связи с пробле-
 мой Моисея Хоренского. Сб. «Исследования по истории культуры наро-
 дов Востока», в честь И. А. Орбея, М.—Л., 1960.
 Моисей Хоренский, История Армении, М., 1893.
 Низами Гянджеви, Пять поэм, М., 1945.
 Патканов К. Исследования о диалектах армянского языка, СПб., 1869.
 Периханян А. К вопросу о рабовладении и землевладении в Иране Парфянско-
 го времени. ВДИ, 1952, № 2.

Периханян А. Сасанидский судебник, Е., 1973.
 Пигулевская З. Н. Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941.

Пиотровский Б. Б. Ванское царство, М., 1954.
 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК),
 вып. 26, Тифлис, 1900, вып. 29, Т., 1901, вып. 31, Т., 1902, вып. 32, Т., 1903.

Страбон, География, М., 1964.
 Тревер К. В. К вопросу о культуре Кавказской Албании, Л., 1960.
 Тревер К. В. Очерки по истории и культуре Кавказской Албании, Л., 1959.

Улубабян Б. А. Еще одна произвольная интерпретация армянской «Истории страны Агванк». «Բանբեր Հայաստանի արիւնքներ», 1979, № 2.

Улубабян Б. А. О границах древнего Агванка. «Բանբեր Երևանի Համալսարանի», 1979, № 1.

«Хронологическая история, составленная отцом Мхитаром вардапетом Айриванским», перевод К. Патканова, СПб., 1861.

Шанидзе А. Новоткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938.

Шопен И. Исторический памятник состояния Армянской области, СПб., 1852.

Шопен И. Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб., 1866.

Юсифов Ю. Б. О наименованиях «Албания» и «Арран». «Известия АН Аз. ССР», серия истории..., 1961, № 10.

Юшков С. В. К вопросу о границах древней Албании. «Исторические записки АН СССР», т. 1, М., 1937.

Яновский А. О древней Кавказской Албании. Журнал МНП, 1846, ч. 52.

Ց Ա Ն Կ Ե Ր

Ա Ն Ձ Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

| | |
|---|--|
| Արաւ, Արբաւ, կաթողիկոս Աղվանքի 13, 165, 199, 201, 203, 204 | 74—78, 96—99, 103, 104, 122, 149, 161, 175, 192, 230, 262, 273 |
| Արղւմեիք Էմիր Մումին 269, 271, 273 | Ամրակոմ, եպիսկոպոս 204 |
| Արեղյան Մ. 12, 73, 120 | Ամմիանոս Մարկելիկոս 41 |
| Արիկազ, Երեց 164 | Անանիա, եպիսկոպոս 164 |
| Արլ-Արաւ 196 | Անանիա Մոկացի, կաթողիկոս Հայոց 14. 16 |
| Արրահամ մարզարև 262 | Անանիա Շիրակացի 9, 26, 36 |
| Արրահամ, կաթողիկոս Հայոց 231 | Անանիա Սյունեցի 94, 99 |
| Արրահամ Մամիկոնեից, եպիսկոպոս 163, 167, 173, 175, 182 | Անանուհ, մեկնիչ Քերականի 76 |
| Արրահամյան Ա. 9. 28, 36, 100, 105, 106, 256, 271 | Անաստաս, կաթողիկոս Հայոց 242 |
| Ազաթանդուկոս 7, 33, 70, 84, 115, 126, 135, 139, 140, 143—145 | Անդր Սյունի 226, 227 |
| Աբու-Յուսուֆ 264 | Անախորոս 43. |
| Աղոնց նիկ. 12, 13, 26, 27, 33, 73, 74, 77, 110—118, 120, 124—127, 139, 147, 192, 193 | Աշոտ Երկաթ 147 |
| Աղրիանն, հիշատակագիր 12, 14 | Առան, առասպելական եահապետ Հայոց- արևելից կողմանց 17, 46—48, 51, 68, 69, 100, 129, 132—136, 138, 143, 145, 146 |
| Աղինի Կվարբատոս 30 | Առանշահիկներ, եպիսկոպոսական-թագավո- րական տոհմ 40, 51, 128, 129, 131— 133, 135—138, 143, 146, 149—151, 155, 186, 187, 195, 197, 198, 212, 234, 235, 237, 246, 248, 251, 257, 259, 260, 265, 272, 275, 277 |
| Ալեքսանդր Մակիդոնացի 207 | Առատան 194 |
| Ալիշան Ղևոնդ 11, 16, 23, 233 | Առաքելյան Առ. 11 |
| Ալ-Իսթահարի 72, 221 | Առաքելյան Վ. 224, 244 |
| Ալ-Համադի 53 | Առաքիչ Առանշահիկ 237 |
| Ալ-Մուքադդասի 72, 207 | Ասա, ազանդական թագավոր Աղվանից 132, 137, 147 |
| Ալյուսյանյան Ա. 24, 33 | Ասկերլի Մ. 31 |
| Ալի-Ելիթվեր, խազարական խաբան 20, 50, 252 | Ասողիկ 10, 233 |
| Ախմանովա Օ. Ա. 44 | Ասպրակոս 194 |
| Ակինյան Ն. 24, 25, 71, 92, 93, 104, 111, 112, 114, 119, 134, 138—140, 166— 169, 171, 174—177, 181, 186, 229, 232 | Ավգերյան Մ. 44, 104 |
| Աճառյան Հր. 12, 13, 26, 54—57, 69, 72, | |

Ավգարեգյան Ք. 178, 189, 235
Ասրուպատ, կուսակալ Պարսից 144
Արամ, թագավոր Հայոց 66, 67
Արդիշտի, թագավոր Նաիրյան երկրի 5
Արծրամարզ 65
Արծրունիներ 147
Արկադիոս, կայսր 123
Արմաշիլ, ավանդական իշխան Աղվանքի 133, 236
Արշակ Բ, թագավոր Մեծ Հայքի 45, 66, 113, 170
Արշակ Գ, թագավոր Հայոց 122, 123
Արշակունիներ Հայոց 51, 90, 96, 113, 125—127, 130, 140, 144, 145, 156, 184, 206, 276
Արշակունիներ Մազքեաց 65, 96, 116, 132, 133, 135, 137, 141, 143, 145, 146, 149
Արշակունիներ Պարթևաց 136, 143—145, 148, 149
Արշավիր Արշարունի 131, 141
Արշնս (Արտաշես) 194
Արսվադ տե՛ս Արսվազեն
Արսվազեն, Արշակունի թագավոր Մազքե-
թաց 96, 98, 120, 121, 132, 133, 136, 137, 142, 143, 147
Արվենտան, Մյունյաց իշխանական տո՛հմ 241
Արտարան 65
Արտամունդ Մ. Ի. 208, 212, 214, 216, 218, 219, 227, 238
Արտաշես Ա, թագավոր Մեծ Հայքի 30, 32, 63—65, 68, 112, 118
Արտաշես, վերջին հայ Արշակունի թագա-
վոր 124, 125, 131, 276
Արտաշիր, արքայից արքա Պարսից 124, 125, 218
Արտավազդ, թագավոր Մեծ Հայքի 225
Բաբգեն, կաթողիկոս 102, 103
Բար Հրահատյան 271
Բազրատունիներ 67, 147, 150
Բայաձորի 207, 282, 263
Բակուր, Մարաստանի թագավոր 144
Բակուր, նահապետ 165, 194

Բաստամյանց Վ. 193
Բարգածան նշանացի 225
Բարխուտարյանց Մ. 11, 25, 35—37, 57, 141, 152, 159, 171, 197, 229, 253, 272
Բարտուղ Վ. Վ. 220, 221, 251
Բաքիխանով Արաս Կուլի-աղա 31, 41
Բենիամին, աշակերտ Մեսրոպ Մաշտոցի, 92, 99
Բորն Ե. 11, 224
Բրոսես Մ. 232, 253
Բունիաթով Ջ. 20, 214, 215, 220, 230—233, 249, 252, 260, 266, 272, 273
Գագիկ, Ատոմավանքի առաջնորդ 138
Գագիկ իշխանազն, Միհրանյան 266, 271
Գամեր 43
Գայանե, նահատակուհի 158, 159
Գալշար, յարզպան 212, 257
Գան Կ. 27, 49
Գերմանոս 177
Գյուտ, կաթողիկոս Հայոց 140, 150, 152—154
Գրիգոր, եպիսկոպոս Կապադակի 204
Գրիգոր, իշխան իսլանի 14, 133
Գրիգոր, իշխան Ուտիքի 147
Գրիգորիս եպիսկոպոս, թոռ Գրիգոր Լուսավորչի, 46, 116, 117, 146, 148, 157, 158
Գրիգոր Լուսավորիչ 70, 84, 85, 92, 119, 117, 148, 157—159, 161, 163, 167, 169, 175, 176, 205, 247, 270
Գրիգոր Մամիկոնյան, զորավար Հայոց 242, 247
Գումիլև Լ. Ն. 220
Դավթակ Քերթոզ 22, 250
Դավթյան Կ. 58
Դավիթ, եպիսկոպոս 270
Դավիթ, յեկնիչ Քերականի 76
Դարեճ Ա. Վրաստայան 64, 65
Դիոկղետիանոս, կայսր 111, 114
Դիոնիսիոս Քրակացի 73, 74
Դիոն Կասիոս 7, 30, 113, 207
Դուրյան Եղ. պատրիարք 24, 85

Եղիա, կաթողիկոս Ամենայն հայոց 268—270, 272
Եղիազար, կաթողիկոս Աղվանքի 252, 253, 273, 274
Եղիշ 9, 44, 61, 62, 108—110, 115, 121, 126—128, 130, 131, 135, 138—140, 148, 150, 152—154
Եռանշահիկներ տե՛ս Առանշահիկներ
Եսայի Աբու-Մուսե 10, 277
Եսայի Հասան-Ջալալյանց, կաթողիկոս և պատմիչ 16
Եսայի Նշեցի 29, 80
Եսվազեն տե՛ս Արսվազեն
Երեմիա եպիսկոպոս 96—98, 120, 121, 137
Երեմյան Ս. Տ. 7, 9, 20, 28, 32, 33, 35, 36, 39, 41, 50, 59, 111, 113, 114, 120, 125, 133, 141, 143, 152, 171, 179, 180—182, 184, 185, 239, 255—257
Զարրահնայան Գ. 11, 144
Զարեհ, թագավոր Հայոց 30, 32, 63—65, 68, 112, 118
Զարմիրճ Վարդ-Քուրդակյան 271
Զաքարիա Հոստոր, Միտիլենացի 69—71
Զաքարիա, նահատակ 159
Զրվանզուխտ 119
Էմին Մկրտիչ 11, 17, 48, 244
Էվստաթիոս 30
Էփրեկյան 23
Քարբարի 207, 228, 229
Քաղիոս առաքյալ 70
Քաղալըվիլի Ե. 214
Քեոզորոս Անաստոյան 271
Քեոզորոս Ուշունի 244, 261, 263
Քեոֆանես 210, 215, 221
Քորեյ, աստվածաշնչյան ցեղանուն 223, 224
Քովմա Արծրունի 10, 147
Քովմա Մեծոփեցի 115
Քորոսյան Խ. 193
Քուրալ տե՛ս Քորեյ

Իրն-ալ Ֆակիի 207
Իրն-խալզուն 266
Իրն-կորդարեհճ 207
Իրն-Հասմալ 53, 221
Իրն-Սուման, խալիֆ 263
Ինսան Ա. Ա. 33
Ինճեճյան Ղուկաս 24, 33, 34, 35—36, 81
Իսրայիլ, եպիսկոպոս Մեծկղևեց 268
Լատիշև Վ. Վ. 6, 30, 113
Լեո 10, 11, 19, 26, 49, 50, 56, 59, 81, 82, 93, 139, 165, 177, 178, 191, 202, 208, 224, 235, 236, 241, 249, 267, 271
Խալաթյան Բ. 72
Խալաթյանց Գր. 228
Խաչատրյան Մ. 256
Խաչերյան Լ. 79
Խաչիկ, կաթողիկոս 15
Խոչկորիկ, որդի Արսվազենի 142, 184
Խոսրով Անուշիրվան 190, 200, 202, 207, 209
Խոսրով Արշակունի, թագավոր Մեծ Հայ-
քի 119, 122, 123, 145, 146, 225
Խոսրով Գարգանացի, նախարար 123, 124
Խոսրով Փարվեզ 177, 227, 230, 233, 234, 238, 239
Խուրս, նախարար Գարգանեց 120, 137, 177, 194
Կաղմյան նախարարական տուն 67
Կանայան Սու. 26, 36
Կասիոս Դիոն տե՛ս Դիոն Կասիոս
Կամատ, արքա Պարսից 218, 239
Կարազոռյան Հ. Հ. 5
Կիրակոս Գանձակեցի 15, 22, 52, 129, 131, 138, 222, 223, 240
Կլիմով Գ. 20, 100
Կյուրիոն, կաթողիկոս Վիրքի, 230—233, 287
Կովիտաս կաթողիկոս 167, 175
Կորյուն 7, 8, 91, 95—98, 102, 103, 120—122, 137, 146, 177
Կրիմսկի Ա. Ե. 133, 245, 260, 264

Հաբիր իրն-Մասաժա 263
Հազկերտ Ա, Պարսից արքա 119, 123
Հազկերտ Բ, Պարսից արքա 119, 150, 151
Հազկերտ Գ. 240
Հազկերտ, հայր Վաչագան Բարեպաշտի 138, 155
Հակոբ Երեց 165
Հակոբյան Քաղ. 110
Հակոբյան Մ. 179
Հակոբյան Վ. 163, 182
Համաձ Բարեպաշտ, Թաղավոր Առանշահիկ 143
Համբարյան Հ. 48
Հալի, հայոց առասպելական եպիսոպոս 68, 100, 116, 126, 129, 138
Հայրապետ 197
Հասրաթյան Մ. Մ. 160
Հասրաթյան Մ. Ս. 9
Հացունի Վարդան 27
Հեթում Պատմիչ, 102, 104, 105
Հեղինե 247
Հերակյ կայսր 208—211, 213, 214, 236, 239, 256, 266
Հերոզոտոս 6, 64, 65, 76
Հյուրշման Հ. 75, 76, 93, 110, 182
Հովել Եպիսկոպոս 268
Հովել հողերական 176
Հովել սարկավազ 159
Հովհան Ծրղնկացի 89
Հովհան, կաթողիկոս տԵՄ Հովհաննես Բ Գաբրիլյան
Հովհան (Հովհաննես Ա Մանգակունի), կաթողիկոս Հայոց 159, 176
Հովհաննես Բագրևանդցի 267
Հովհաննես Բ Գաբրիլյան, կաթողիկոս Ամենայն Հայոց 163, 166, 203
Հովհաննես, Եպիսկոպոս Կապազակի 270, 271
Հովհաննես, Թաղավոր Առանշահիկ 133
Հովհաննես կաթողիկոս Գրասխանակերտցի, պատմիչ 10, 15, 147, 180, 256, 269
Հովհաննես-Սենեբերիմ 147
Հովհաննիսյան Լ. Ե. 58

Հովհաննիսյան Ս. Հ. 168—173, 175—177
Հովհան Ոսկերերան 14
Հովսեփոս Փլավիտոս 207
Հովսեփի անապատական 12, 13, 16
Հովսեփի Երեց 164
Հորթա-խարան 222
Հոփոփոմե, նահատակուհի 158, 159
Հոփոփոմյանք 167, 175
Հրանդ Ք. Արմեն 8, 84, 193
Հուլիանոս, կայսր Բյուզանդիայի 229
Հուլիոս Սուրիս 30
Հունան, Եպիսկոպոս 176
Հուստինիանոս Բ կայսր 266
Հազար Փարպեցի, 9, 34, 108—110, 139, 140, 154, 155, 207
Հարբեյան Ար. 55, 57, 58, 83
Հափանցյան Գր. 5, 31, 38
Հյուճյան Ար. 186
Ղեռնդ, Եպիսկոպոս Մեծկվեկերի 204
Ղեռնդ Պատմիչ 254
Ղեռնդ վարդապետ 10
Ղուկասյան Վ. 20, 44, 75, 220
Մագոզ 43
Մալխասյանց Ստ. 11, 72, 97, 99, 119, 192
Մահմատ Շերտյան 271
Մամեղովա Յ. 20, 173, 179, 180, 184, 191, 192
Մամիկոնյան Մուշեղ, սպարապետ Հայոց 36, 45, 66
Մանանդյան Հ. 12, 26, 33, 48, 110, 111, 114, 130, 165, 177, 178, 182, 210, 211
Մանասե, Եպիսկոպոս 164
Մանի 203
Մառ Նիկ. Յակ. 41, 59, 83, 106, 217, 221, 224
Մասուրի 207
Մատթե Երեց 159, 163, 164, 167, 171, 173, 175, 176, 182, 199
Մարկիոն 203
Մարկվարտ Յո. 44, 48, 84, 89, 109, 111, 115
Մարտի 194

Մելիթիմի Գ. Ա. 5
Մելիթսեթ-բեկ Լ. 225, 228
Մելիթ-Օհանջանյան Կ. 15
Մելրոնյան Հ. Գ. 70
Մեյե Ան. 57
Մեսրոպ Մաշտոց 8, 24, 84, 91—98, 101, 102, 120—122, 136, 137, 158, 161, 162, 170, 177, 199, 223, 243, 245, 265
Միթրա, Միհր, աստված 235
Միթրաչի Ասորի 231
Միհրանյաններ, իշխանական տոհմ 15, 36, 129, 130, 135, 142, 143, 147, 167, 176, 177, 199, 214, 234—239, 241, 246, 248, 251, 252, 256, 259, 260, 272, 274, 277
Միհրան, նահապետ 234, 236, 248, 251—253
Մինորսկի Վ. Յ. 41, 134, 145, 260
Միրոսրիկ 194
Միրե Երեց 165
Միսիթար Այրվանեցի 75, 133
Միսիթար Գոշ 15, 22, 173, 188
Մկրտչյան Ն. 55
Մյուլլեր Վ. Կ. 44
Մոավիա, խալիֆ 263
Մոսլեմ Քեռոզր 112
Մովսես Դասխուրյանցի 12, 15, 16, 24, 95, 99—101, 132, 134, 138, 147, 148
Մովսես Եպիսկոպոս 204, 231—233
Մովսես Խորենացի 7—9, 12, 16, 18, 26, 33, 40, 43, 46, 47, 49, 51, 52, 66, 67, 76, 79, 91, 95, 98, 99, 102, 108, 115, 120, 122, 123, 125, 126, 129, 129, 135, 136, 138—141, 146, 158, 169, 177, 195, 224—226, 228, 244
Մովսես կաթողիկոս 205
Մովսես Կաղանկատվացի 7, 11—13, 15—27, 38, 43, 49—51, 93, 115, 129, 130, 132, 134, 135, 138, 141, 143, 145—155, 160, 162—166, 168—177, 181, 184, 185, 188, 193, 203, 205, 207—209, 211, 213, 215, 219, 220, 223, 224, 226, 227, 230, 231, 234, 236, 238—243, 247—249, 253, 254,

257, 261, 262, 267, 268, 270, 271, 273, 274
Մորիկ կայսր 266
Մրհավան, ավանդական Թաղավոր Աղվանից 132, 137, 147
Մուծիկ 194
Մուշեղ, Եպիսկոպոս Բաղասականի 121
Մուրադյան Ա. 73
Յարեթ 43
Յակուբի 263
Յակուտ ալ-Համափի 52, 260
Յամպուլիկ Զ. 20, 21
Յանովսկի Ա. 27
Յովել Երեց 165
Յուզով Ս. Վ. 18, 19, 28, 49, 50, 128, 198
Յուսիֆով Յո. 41, 42, 52
Նալբանդյան Հ. 52
Նասր 52
Նեստոր 203
Ներսես Բակուր 267—273
Ներսես Բ կաթողիկոս 202
Նիզամի Գյանչլի 238
Շաթ իսթանբուղի 215—217
Շահնե, Պարսից զորավար 210, 211
Շահինյան Լ. 67
Շահնազարյան Կար. 11, 17
Շահնազարյան Ն. Ա. 228
Շահր-Վարազ, պարսից զորավար 210, 211
Շամա 194
Շապուհ Գ, արքայից արքա Պարսից 122, 226
Շապուհ, Թաղավոր Հայքի, զրաժո 123, 124
Շերո, իշխան Միհրանյան 268, 271—274
Շիրին, պարսից Թաղուհի 238
Շմափոն, քրեպիսկոպոս 165
Շոպեն Իվ. 27, 41, 49, 50
Շուփհաղիշա, Եպիսկոպոս, 160, 164, 169, 171—173

Հաճւյան Միք. վարդապետ 22, 165, 176
Զինգիզ-խան 222

Պակոր տե՛ս Բակուր
Պանդալեոն 157, 159
Պապ, թագավոր Մեծ Հայքի 45, 66, 156, 170

Պապ Հրահատյան 272
Պատկանյան Բ. 12, 17, 19, 57, 89, 133, 181, 192, 244, 253

Պատրիկ Քարոյան 271
Պարպ Երեց 165
Պետրոս, եպիսկոպոս 270
Պետրոս Սյունեցի 95, 99, 163, 164, 173, - 175, 182, 204, 205

Պերոզ, Պարսից արքա 151, 153, 154, 171

Պիղոպեակայա Ջ. Ն. 69, 70, 191, 192
Պիոտրովսկի Բ. Բ. 6
Պյինիոս Ավագ 6, 7, 30, 33
Պյուտարբոս 6. 7. 30

Պոլիբիոս 6
Պոզոս առաքյալ 188
Պոզոս եպիսկոպոս 270
Պոզոս Երեց 164
Պոզոսիկ 12, 16
Պոզոսյան Ա. 58
Պոզոս Սամոսատադի 203
Պոմպեոս 30
Պտղոմեոս Կլավդիոս 7, 30, 70, 113, 207

Ջալալյան Մարգրս արքեպիսկոպոս 22, 23, 34, 140, 141, 151, 152, 159

Ջահուկյան Գ. 73
Ջերու-խարան 212, 213
Ջիվանշիր, իշխան Միհրանյան 138, 142, 219, 235—237, 239—250, 252—254, 256, 259, 261, 262

Ջվանշեր, պատմիչ վրաց 51
Ջվաներ 270

Թոսմոսոր, աստվածաշնչյան ցեղանուն 223, 224

Թոստոմ վարազ-Աբրոյան 271

Սալման իրն-Ռարիա 263
Սահակ եպիսկոպոս 164, 270
Սահակ Պարթև, կաթողիկոս 98, 124, 125, 167, 175

Սահակ Սևադա 147
Սահլ Սմբատյան 130, 142, 277
Սամվելյան Ն. 165, 179, 183, 193
Սանատրուկ 143, 145

Սանեսան, թագավոր Մազքթաց 65, 113, 116, 145—147
Սասանյաններ 141, 148, 187, 220, 235, 239, 261

Սատո, ավանդական թագավոր Աղվանից 132, 137, 147

Սարգիսյան Բ. 163, 164, 175
Սարգսյան Գ. 67
Սարդուրի Բ, թագավոր Նաիրիի 5, 6
Սեբեոս 10, 200, 202, 203, 210, 211, 233, 254, 256, 262, 263

Սեհրով Մ. 44
Սեմա-Վշնասպ 215, 257
Սեպտիմոս Սենթոս 206
Սիմեոն, եպիսկոպոս 270
Սիմոն, եպիսկոպոս 197
Սիմոն, կաթողիկոս Աղվանքի 185, 193, 270

Սիմոնով Յու. 43
Սիոն կաթողիկոս 186

Սիտակ, Սիտական նախարարական տոհմի ավանդական նախնի 46—48, 68, 126, 129
Սիսական տոհմ, Սիսակյաններ 17, 67, 68, 76

Սմբատ Բագրատունի 147, 231, 232
Սոմայան Սուքիաս 11

Սպարամ, ղուսար Միհրանյան տոհմի 130, 142

Սպարամ, իշխանուհի, Միհրանյան 267, 269, 270

Սվազյան Է. 143
Ստեփան Բյուզանդացի 7, 30, 113
Ստեփանեսոս Սյունեցի 52, 73—75, 77—80, 82

Ստեփանեսոս Տարոնեցի տե՛ս Ասողիկ
Ստեփանեսոս Օրբելյան 15, 16, 52, 95,

99, 163, 164, 173, 175, 183, 190, 205, 222, 223, 227

Ստեփանեսոս, իշխան Միհրանյան տոհմից 133

Ստրաբոն 6, 7, 29, 32, 35, 45, 49, 63—65, 68, 76, 108, 113, 180, 259

Սուրեն Մարզպան 200
Սևադա, Առանշահիկ իշխան 133
Սևադա Բ 147

Վախտանգ Վարազմանյան 271
Վահան Ամատունի, Նահապետ 43
Վահան, իշխան Սյունյաց 200, 201, 204

Վահան Մամիկոնյան 154, 155
Վահան Վարազ-Նոհանյան 272
Վահրամ 231—233

Վաղարշակ, թագավոր Մեծ Հայքի 17, 47, 67, 68, 76, 129, 133, 134, 136

Վաղարշ, թագավոր Մեծ Հայքի 224, 235
Վաղարշ Ա, Պարսից արքայից արքա, Արշակունի, 144, 145

Վաղարշ, Պարսից արքա 119, 141, 142, 154, 155

Վաղինակ, իշխան Սյունյաց 91
Վաչագան Ա Քաջ, թագավոր բուն Աղվանքի 132, 133, 135, 136, 143, 145, 147

Վաչագան 147
Վաչագան Բարեպաշտ, Առանշահիկ թագավոր 93, 100, 128, 131, 133, 137, 138, 140—143, 146, 150, 155—164, 166—169, 171—174, 176—181, 183—190, 192—197, 245, 247, 248, 253, 256, 257, 277

Վաչե Ա. 147
Վաչե, Առանշահիկ թագավոր 132, 133, 138—140, 150—153, 155, 165, 171, 186, 197

Վարազ-Նրիգոր, Միհրանյան իշխան 133, 214, 236—239, 251

Վարազման, Միհրանյան իշխան 133
Վարազ-Պերոմ 252
Վարազ-Տրդատ 20, 50, 133, 220, 247, 252, 253, 266—268, 273, 274

Վարազ-Քուրդակ Վաչագանյան 136

Վարդանանք 61, 115, 138—140, 150, 154

Վարդան Մամիկոնյան, սպարապետ Հայոց 110, 115, 200, 271

Վարդ, Միհրանյան իշխան 133
Վարդ, Միհրանյան իշխանազն 15, 236
Վարդան, Միհրանյան իշխանազն 266
Վարդան, Միհրանյան իշխան 15

Վարդան Պատրիկ 271
Վարդան Սատոյան 186
Վարդան Վարազ-Նոհանյան 271

Վարդան Վարդապետ, պատմիչ 10, 52, 95, 99, 247

Վարդան Քաջ, Առանշահիկ 253
Վարդան Քաջ, Միհրանյան 133, 167, 176, 177, 194, 236—238, 248, 253

Վասակ Սյունի 193
Վեհիկ 12—14, 16, 199
Վիրո, Աղվանքի կաթողիկոս 12, 13, 16, 199, 208, 209, 214—218, 226, 227, 229, 230, 232, 233, 238, 239, 256, 257

Վեասեպ Սուրճազ, թագավոր Տյուսիսականաց 225

Վոլոգեզ տե՛ս Վաղարշ
Վոսմիապուրճ, թագավոր Հայոց 123
Վոսմ Քերմանշահ, Պարսից արքա 119, 123—125

Վուրկ, Կինաց թագավորազն 131

Տակիտոս 144, 207
Տեր-Նրիգորյան Տ. Ի. 20, 60
Տիգրան Մեծ 113
Տիմոթե, եպիսկոպոս 204

Տիրազ 194
Տիր, աստվածաթյուն 38
Տիրակ Քարոյան 186

Տրդատ Ա. Հայոց արքա 144, 145
Տրդատ Գ, թագավոր Մեծ Հայքի 84, 85, 135, 226

Տրնկեր Կ. Վ. 27, 28, 33, 41, 46, 47, 64, 100, 109, 133, 177, 178, 179, 224, 227, 234, 235, 239, 240, 249, 251, 252, 253, 272

Տուն-շեխու տե՛ս Զեբու-խարան

Ուխտանէս եպիսկոպոս, պատմիչ 15, 16, 230, 231, 243

Ուլուրարչյան Բ. 38, 46, 116, 120, 148

Ուսնայր, Թագավոր Աղվանից 132, 133, 135, 136, 143, 147

Ուրբաթ երեց 165

Փափաստո Բուզանդ 7, 8, 36, 45, 46, 66, 110, 111, 113—120, 126, 127, 135, 136, 145, 146, 157, 158, 168—180, 194, 228

Փերիխանյան Ան. 188, 190—192

Փիրոս Խոսրոյան 194

Քչիկ, եպիսկոպոս 270
Քսենոփոն 6

Օմար Ա. խալիֆ 245

Օրբելի 2. Ա. 225

Օրմանյան Մաղաբիա արքեպիսկոպոս 23, 70, 153, 154, 175, 190, 200

Տ Ե Ղ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

Ազախունի, Աղախ, Արզախ 6, 14

Աղբրեջան 30, 42, 230

Աթլ գետ, տե՛ս Վոլգա

Ալազան, գետ 19, 27, 31, 131, 216

Ալանաց դուռ 111, 114, 206, 208

Ալանիա 50

Աղզամ, քաղաք 34

Աղձնիք, նահանգ Մեծ Հայքի 78, 112

Աղվանից դաշտ 68

Աղվանից դուռ (տե՛ս նաև՝ Զոզա դուռ) 111, 114

Աղվն, գավառ Ուտիքի 34

Աղվն, արքայական ամարանոց 140—142, 162, 164, 165—172, 175, 177, 180—183, 186—189, 191, 194, 195

Ամարաս, ավան 34, 38, 46, 92, 110, 116, 117, 148, 158—160, 162, 168, 195, 204

Ամարասի գավառ 38

Ամարասի վանք 270

Ալտն 54

Այրարատյան նահանգ 74

Այրմանուշք (վա՛նք) 165

Անդրկովկաս 8, 43, 45, 63, 71, 90, 130, 206, 208, 209, 211, 219—221, 223, 224, 226, 228, 229, 244, 263, 264, 275

Անթալյա 55

Աշան գյուղ (Լեոնային Ղարաբաղում) 159

Աշտիշատ 168, 169

Ապախթարք 222

Ապշերոնյան թերակղզի 32

Ասանձակ, գավառ Ուտիքի 51

Ատանոտ, գավառ Ուտիքի 34, 37, 51

Ատանոտ գետ 37

Առաչին Հայք 112

Առաս տե՛ս Երասխ գետ

Ասիա 244

Ասորիք, Ասորեստան 67, 274

Ավարայրի դաշտ 131

Ավետարանոց գյուղ (ՂԽՄ-ում (այժմ՝ Զանաղի) 140, 151, 152

Ատումվանք 138

Ատրպատական, նահանգ 43, 52, 109, 110, 117, 144, 200, 201, 204, 209, 244, 255, 272, 275

Արարիա 261, 262, 274

Արագածոտն, գավառ 232

Արածանս գյուղ 159

Արաքս տե՛ս Երասխ

Արիաց Էրկիր տե՛ս Պարսկաստան

Արկուլիինի, Արկուլյան Էրկիր 5, 6

Բազդուն տե՛ս Բաղասական

Բալասոփիտ 111

Բալասաչան տե՛ս Բաղասական

Բալկանյան թերակղզի 43

Բախազատ 204

Բաղասական 39, 61, 70, 97, 98, 120, 121, 131, 137, 139, 140, 204, 257, 264

* Ցանկի մեջ չեն մտնում «Հայաստան», «Մեծ Հայք», «Արցախ», «Ուտիք», «Հայոց արևելից կողմանք», «Աղվանք», «Ալբանիա», «Ատան» տեղանուններն ու նրանց տարրերահաները, որոնք սփռված են զբոքի համարյա բոլոր էջերում:

Բալլադան 33, 34, 52, 263, 264
 Բարկուշատ 196
 Բարձր Հայք 78
 Բազու 31, 55
 Բեթ (վաճիկ) 164
 Բերդակուր 148
 Բերդաձոր, գավառ Արցախի 210
 Բերդ ավան 37
 Բերդո վանք 167
 Բյուզանդիա 118, 201, 202, 207—209, 211, 214, 244, 246, 256, 260, 261, 266, 268, 274
 Բուխու-հալեն 232
 Բոլո 55
 Գաղատիա, պետություն 43
 Գանձակ Ասորպատականի 117
 Գանձակ (այժմ՝ Կիրովաբադ) 35, 52, 105
 Գանձակի գավառ 35
 Գանձասարի վանք 14, 107
 Գասարա 55
 Գարգարացոց, Գարգարացվոց դաշտ 25, 39
 Գարդման, բերդ 15, 35, 177, 236
 Գարդման (ք), գավառ 26, 34, 35, 48, 91, 98, 120—126, 129, 137, 138, 142, 162, 177, 204, 205, 210, 212, 214, 234, 235—239, 246, 248, 251, 257, 258, 267, 268, 277
 Գարդմանաց ձոր 35, 36, 120, 137
 Գարթմանիկ տե՛ս Գարդման գավառ
 Գեգաճ (վաճիկ) 164
 Գեղամա գավառ 12
 Գերան գետակ տե՛ս Առանտոս
 Գիս ավան 243
 Գիրդիման գետ 35
 Գլխավանք 243, 247
 Գլուտական, արքայանիստ գյուղ 141, 158—160, 171, 195, 197, 210
 Գուլա վանք 270
 Գուգարք, նահանգ Մեծ Հայքի 48, 92, 108, 110, 111, 114, 127, 138, 206, 272, 275

Գուրգան տե՛ս Վիրք
 Դադեստան 52
 Դամասկոս 242, 263
 Դարահոջ, գյուղ Արցախում 158, 159, 163, 167, 173, 175, 176
 Դերբենդ, Դարբանդ 22, 104, 105, 199, 208
 Դերբենդի ամիրայություն 52, 132
 Դերբենդի դուռ տե՛ս Չոլա դուռ
 Դիզափայտ, սար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանում 158, 199, 271
 Դիլիջան 55
 Դիլիսար 55
 Դովբեկ 55
 Դվին 170, 175, 193, 200, 202, 205, 231, 256, 262, 267
 Դրունք Հոնաց տե՛ս Չոլա դուռ
 Դուզե 55
 Եգիպտոս 138
 Ելիզավետպոլի (այժմ՝ Կիրովաբադ) նահանգ 27
 Եկեղյաց գավառ 112
 Եղիշտաբլա վանք տե՛ս Զրվչտիկ
 Երասխ, գետ 5, 6, 17, 18, 26, 31—33, 38, 40, 47—49, 51, 52, 68, 76, 111, 116, 141, 218, 246
 Երևան 54, 102
 Եփեսոս 175
 Զարդեկենա տե՛ս Մավղեք
 Զակամ գետակ 35
 Զանգեզուր 55, 80, 116
 Զարափանդ, Զարխանդ, գավառ 111
 Զեգամ գետ տե՛ս Զակամ գետակ
 Զմյուռնիա 54
 Զոդ 7
 Թալիշ գյուղ, ԼՂԻՄ-ի Մարտակերտի շրջանում 34, 159, 171
 Թառնադուռ տե՛ս Տիգրանակերտ
 Թավրիզ 54, 55
 Թարթուս գետ 37, 159, 171, 210, 263, 270

Թիֆլիս տե՛ս Տիգրա
 Թովուզ տե՛ս Տուս-բառակ
 Թուրքաստան 221—223
 Թուրքիա 78
 Թուրքմենստան 55
 Իրերիա տե՛ս Վիրք
 Ինգիլենա տե՛ս Եկեղյաց, Եկեղյաց գավառ
 Իտալիա 43, 231
 Լալվար 232
 Լքնիա տե՛ս Լիփնք
 Լեռնային Ղարաբաղի ինքն. մարզ 6, 171
 Լիանա, թաղ Թավրիզում 55
 Լսինա գետ 131, 139
 Լուերուխի երկիր 6
 Լիփնք, Լիփնաց աշխարհ 26, 50, 51, 121, 131, 140, 142, 204
 Խաղարիա 221
 Խազուք 62
 Խաղիսաղ ավան 34, 109, 115, 116, 140
 Խայլանդրաց աշխարհ 44
 Խաչենադետ 37
 Խաչեն գավառ 14
 Խիզան 183
 Խորհենե գավառ 118
 Խուլթ, գավառ Մեծ Հայքի 73, 74, 79
 Մավղեք (Սոդք), Մավղեք 7, 8, 26, 48, 112, 122, 123, 125, 126, 138
 Մուղլ գավառ 211
 Մովակ գյուղ 5
 Մովիկարի ամրոց 5
 Կարալա տե՛ս Կապադակ
 Կակու (") 274
 Կաղանկաղ տե՛ս Կաղանկատույք
 Կաղանկատույք գյուղ 13, 159, 164, 165, 210, 213, 270
 Կամրեճան 31, 63, 118, 141, 142, 157, 241, 246, 272
 Կամրեճենա տե՛ս Կամրեճան
 Կապադակ, թաղաք 164, 165, 204, 252, 270—272

Կապան 55
 Կասպիկի երկիր տե՛ս Փայտակարան
 Կասպիանա տե՛ս Փայտակարան
 Կասպից դուներ տե՛ս Չոլա դուռ
 Կասպից ծով 19, 22, 31, 54, 64, 81, 145
 Կատարո վանք 371
 Կարբի, գյուղ 232
 Կարին 54
 Կարիս, գետ 25, 26
 Կիրովաբադ, թաղաք 35, 56
 Կիրովաբադի շրջան 55
 Կուլիսիա 30—31
 Կողթ-ապարակ, գյուղ, 216
 Կողթ, գավառ 272
 Կոմիտենա տե՛ս Կամրեճան
 Կովկասյան լեռներ 18, 26, 31, 39, 40, 44, 99, 246, 258
 Կովկաս 45, 54, 83, 128, 224, 228, 259
 Կորդուեն-Կորդուր 112
 Կորճալթ, գավառ Մեծ Հայքում 73—75, 77
 Կուր, գետ 6, 17—19, 22, 25—33, 36, 38—40, 42, 45, 47—52, 64, 68, 71, 76, 89, 98, 105, 109, 111, 113, 115—118, 120, 121, 137, 138—141, 145, 146, 149, 156, 180, 209, 216, 218, 219, 223, 225, 235, 241, 246, 252, 258
 Կուրական գետ տե՛ս Կուր գետ
 Լարանդ, գավառ Արցախի տե՛ս Մյուս Հարանդ
 Լարանդ, գավառ Սյունիքում 116
 Լադրութ, շրջան ԼՂԻՄ-ում 58, 116
 Լաթիդք 37
 Լաշտյանք գավառ 111
 Լաշու, Լոշու 176, 270
 Լարլյանք, գավառ 284
 Լարուխյունա սար 35
 Լեռ, գավառ 111
 Լյուսիսային Կովկաս 55, 78
 Լեարակերտ, բերդ 17, 34, 47—49, 68, 99
 Լեղիստան 226, 246
 Լոնաց երկիր 70

Հոսեկա վանք 34, 195
Հովհաննավանք 232
Հովսեփա վանք (Մեծառանքում) 270
Հոռմ 43
Հոռմեական կայսրություն 110, 112, 144, 206
Հրազդան գետ 256, 266, 267
Հույնք տե՛ս Հունաստան
Հունաստան 231, 269
Հուրեկ, Հուրեկա վանք տե՛ս Հոսեկա վանք
Ղազարի շրջան 35, 36
Ղարաբաղ 27, 54, 56, 58, 60, 79, 81, 86, 87, 89
Ղարաբաղյան լեռնաշղթա 35
Ղարաբաղ 55, 115
Ճենք, Ճենաստան 244
Ճորա պահակ տե՛ս Չոզա դուռ
Մազքուժք, Մազքթաք աշխարհ (նահանգ բուն Աղվանքում) 45, 46, 50, 51, 71, 176, 204
Մատաղիս, գյուղ լեռ. Ղարաբաղի Մարտակերտի շրջանում 159
Մարաստան 7, 65, 108
Մարտակերտի շրջան լՂԻՄ-ում 34
Մարտունու շրջան լՂԻՄ-ում 38, 116, 160
Մեծառանք, զավառ Արցախի 37, 51, 148, 162, 201, 203, 264, 268
Մեծ-Կողմանք զավառ տե՛ս Մեծկվենք
Մեծկվենք, զավառ Արցախի 162, 204, 242, 243, 264, 268
Մեծ Սյունիք տե՛ս Սյունիք
Մինգեչաուր 105
Միջերկրական ծով 206
Միջին Ասիա 81
Միգրա տե՛ս Մարաստան
Միհրավան 234, 235
Մյուս Հաքանդ, զավառ Արցախի 38, 46, 92, 110, 116, 117, 148, 162
Մոկք, Մոկայ զավառ 78

Մուսվյան լեռնաշղթա 35
Մուծումբար 55
Մուխանք, զավառ 38, 39
Մուխանք դաշտ տե՛ս Մուղանի դաշտ
Մուղանի դաշտ 26, 27, 38, 39
Ցարմուկ գետ 244
Նախիջևանի նահանգ 210, 211, 222
Նախճուան, Նախջավան տե՛ս Նախիջևան ներսիհերի վանք 270
Շակաշեն, զավառ Ուտիքի 6, 34, 35—37, 63, 105, 274
Շահապիվան 166, 168, 169, 181, 183, 193
Շամախի քաղաք 199
Շամախու նահանգ 35, 55
Շամշազինի շրջան 37, 55
Շամքոր գետակ 35
Շամքոր քաղաք 34, 52, 72, 176
Շամքորի շրջան 35, 36
Շարուր զավառ 256
Շաքիի ամիրայություն 52, 132
Շաքիի նահանգ 27, 204
Շիրակ 274
Շիրվանի ամիրայություն 52, 132
Շիրվանի նահանգ 22, 27, 31, 200, 235
Շոտլանդիա 43, 45
Շուշի 210
Չարսերդ տե՛ս Չարսերդ ամրոց
Չոզ, Չոզա երկիր 50, 121, 131, 140, 142, 143, 145, 257
Չոզ, մայրաքաղաք բուն Աղվանքի 51, 71, 86, 90 120, 127, 131, 146, 148, 152, 172, 173, 204, 209, 212, 227, 235
Չոզա դուռ, Չոզա պարսպապահակ 44, 70, 71, 206, 207, 212, 219, 225, 226, 227, 235, 254, 263
Չոր տե՛ս Չոզ
Չորրորդ Հայք 73, 74, 79
Պաղկանք, զավառ Արցախի 38, 93
Պարսկահայք, -նահանգ Մեծ Հայքի, նահ

Պարսկահայաստակ Հայք 70, 78, 110, 118
Պարսկանք տե՛ս Պաղկանք
Պարսկաստան 39, 65, 102, 103, 108, 110, 115, 118, 119, 123, 127, 130, 131, 140, 150, 153, 154, 165, 187, 197, 197, 201, 202, 205—209, 213, 215, 219, 225, 231, 234, 235, 239, 244, 251, 256, 261, 266
Պարտավ, քաղաք 34, 38, 52, 71, 72, 90, 127, 141, 148, 150, 152—154, 164, 170, 171—173, 186, 193, 197, 204, 209, 210, 216, 227, 235, 249, 257, 261—263, 269, 272
Պերդապատ տե՛ս Պարտավ
Պոնտական դիոցեզ 112
Ջանդա տե՛ս Դանձակ
Ջոնգուդաղ 55
Ջրաբերդ ամրոց 216
Ջրաբերդի զավառ 37
Ջրվշտիկ վանք 195, 197
Թոս-պարսյան, զավառ Ուտիքի 37, 39
Թուսաստան 55
Սակառին, Սակասենա տե՛ս Շակաշեն
Սամուր գետ 19
Սասուն 231
Սատաղ, քաղաք Ատրպատականի ու Մեծ Հայքի սահմանում 117
Սիրիք 52
Սիսական նահանգ 52, 70, 241
Սիսական տե՛ս Սիսական նահանգ
Սիրիա 272, 273
Սկյութիա 221
Սյունիկիա, Սյունեստան 244
Սյունիք 8, 25, 26, 33, 47, 55, 56, 73—76, 79, 80, 90—92, 96, 99, 114, 183, 196, 200, 201, 204, 210, 211, 222, 227, 231, 244, 245, 247, 256, 263
Սոփենա 112
Սպեր, զավառ Մեծ Հայքում 74, 79
Սուղադիան 105, 106

Սևանա լիճ 5, 47, 52, 54, 219
Սեանի ավազան 113
Վասպուրական նահանգ 78, 231, 256
Վասպ, Վասիյա դաշտ 117, 146, 168
Վարդենիսի շրջան 5
Վիրք, Վրաստան 30, 31, 70, 92, 94, 101, 102, 109—111, 115, 118, 119, 139, 203, 210, 213, 230—232, 241, 246, 254, 258
Վոլդա 221, 222
Վրաստան տե՛ս Վիրք
Վրկան 231
Տայք, նահանգ Մեծ Հայքում 73, 74, 79
Տաշկիստան 55
Տավրոսի լեռներ 6
Տավուշ, դեռ 37
Տավուշ տե՛ս Տուս-քստակ
Տարն 274
Տիգրանակերտ Արցախի (այժմյան Շահ-բուլաղի տեղում) 34, 210
Տիգրանակերտ Ուտիքի 37, 210
Տիգրն 226, 227
Տիգրն, Տիգրն 124
Տմորիք 162
Տոզ գյուղ 271
Տրի, զավառ Ուտիքի 37, 38
Տրոս տե՛ս Քարթառ գետ
Տուս-քստակ (Տավուշ զավառ) 34, 36
Տուս կամ Տավուշ բերդ 37
Տիգրիս 213, 214, 217, 232
Յրի, Յոի, քաղաք բուն Աղվանքում 142, 164
Յուրտավ 231, 232
Ռելիկիուսի 6
Ռուբենիստան 55
Ռուրարտու 5
Ռուրտեիական աշխարհ 5
Փայտակարան 6, 7, 19, 22, 29, 31—39, 52, 56, 64—66, 78, 89, 90 92, 108—111, 118, 143, 200, 233, 255, 259, 276

Փառիսոս դավառ 229
 Փառիսոս քաղաք 34
 Փալինա 63
 Փոքր Ասիա 43, 54, 55
 Փոքր Հայք 112
 Փոքր Այուներք 19, 91, 92, 96, 125

Քաղեսիա 244
 Քաղկեդոն 201

Քաղունիք դավառ 196
 Քարահունջ, գյուղ լՂ-ի Մարտունու շրջա-
 նում 160
 Քարունե գյուղ 160
 Քյուրակ-չայ տե՛ս Կուրակ
 Քուստ-ի Փառնես տե՛ս Փառիսոս դավառ

Օրենկալա տե՛ս Բայլախան
 Օրխիստինա (Արցախ) 7, 31, 63, 64

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| Գրվազ առաջին | |
| Պատմական աղբյուրները և պատմագիտական գրականությունը | 5 |
| Գրվազ եկրոսդ | |
| Պատմական աշխարհագրությունը | 29 |
| Գրվազ երոսդ | |
| Հայոց լեզվի հյուսիսարևելյան եզրը, եզերապահ արցախային բարբառը և հարա- կից հարցեր | 54 |
| Գրվազ շոբոսդ | |
| Հայոց արևելից կողմանց նախամարդպանական շրջանի վարչաքաղաքական վիճակը | 108 |
| Գրվազ հինգերոսդ | |
| Առանշահիկ հարստությունը | 129 |
| Գրվազ վեցերոսդ | |
| V1 դարի իրողությունները | 196 |
| Գրվազ յոթերոսդ | |
| Խաղարներն Աղվանքում և հարակից հարցեր | 206 |
| Գրվազ ութերոսդ | |
| Միհրանյան տոհմը Ոստիքի Գարդման դավառում | 234 |
| Գրվազ իններոսդ | |
| Արարական տիրապետության հաստատումը | 261 |
| Ամփոփում | 276 |
| Ցանկ սկզբնաղբյուրների և գրականության | 278 |
| Ցանկեր | 285 |

ԲԱԳՐԱՏ ԱՐՇԱԿԻ ՈՒՂՈՒԲԱՐՑԱՆ

ԴՐՎԱԳԵՆԵՐ ՀԱՅՈՅ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (V—VII ԴԴ.)

Հրատ. խմբագիր Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Նկարիչ Կ. Կ. ՂԱՅԱԳԱՐՅԱՆ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐՄԱԿԱՆՆԻՍՅԱՆ
Տեխ. խմբագիր Է. Ա. ԽԱՉԻԿՅԱՆ
Սրբագրիչ Ա. Ա. ՂԱՓԼԱՆՑԱՆ

ИБ 581

Հանձնված է շարվածքի 20. 01. 1981 թ.: Ստորագրված է տպագրության 10. 06. 1981 թ.:
ՎՋ 03635: Զախը 60X84¹/₁₆: Թուղթ № 1: Տառատեսակ՝ «գրքի սովորական», բարձր
տպագրություն: Պայմ. 17,5 մ., տպագր. 18,75 մամուլ+1 ներդիր: Հրատ.—Հաշվարկ 17,6
մամուլ: Տպարանակ 2000: Պատվեր № 59: Հրատ. № 5441: Գինը 3 ռ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24:

Издательство АН АрмССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.

Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.